ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2010

9(47.925)
Ս-88

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳ ՄՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

4570

ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

(ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
57

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
57

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ГЕВОРГ СРАПИОНОВИЧ СТЕПАНЯН

АРМЯНЕ БАКИНСКОЙ ГУБЕРНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX В.
(ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

ЕРЕВАН 2010

NATIONAL ACADEMY OF SCIENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

GEVORG SRAPION STEPANYAN

THE ARMENIANS OF THE BAKU GUBERNIA IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY
(HISTORICAL - DEMOGRAPHIC RESEARCH)

YEREVAN 2010

ԽՈՆԱՐՀԱԲԱՐ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԾՆՈՂՆԵՐԻՍ՝
ՍՐԱՊԻՈՆ ԵՎ ԱՐՄԱՆՈՒՇ ՍՏԵՓԱՆՅԱՆՆԵՐԻ
ԽՆԿԵԼԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ս 887

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ՝

պ. գ. դ. Է. Ա. Կոստանդյան

ԳՐԱԽՈՍՆԵՐ՝

պ. գ. դ. պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան
պ. գ. թ. Ա. Ա. Հակոբյան

Սույն աշխատությունը ներկայացնում է Բաքվի նահանգի հայ բնակչության XIX դարի երկրորդ կեսի պատմաժողովրդագրական համահավաք պատկերը: Համակողմանի ուսումնասիրության է ենթարկվել հայկական բնակավայրերի տեղագրությունը, հայ բնակչության տեղաբաշխումն ըստ գավառների: Աղյուսակների տեսքով տրվել է հայ բնակչության թվաքանակը և շարժընթացը: Մատենագրական և վիմագիր աղբյուրների համալիր ուսումնասիրությամբ հիմնավորվել է Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում հայերի տեղաբնակ և մշակութակերտ լինելը:

Աշխատության հավելվածում զետեղված են Բաքվի նահանգի հայկական բնակավայրերի ու պատմաճարտարապետական հուշարձանների տեղաբաշխման քարտեզները, Շամախիի հայոց թեմի եկեղեցիների, վանքերի, մատուռների, գրչության կենտրոններում ստեղծված ձեռագիր մատյանների և եկեղեցական-ծխական դպրոցների ցանկերը և մի վավերագիր:

Մենագրությունը կարող է օգտակար լինել պատմաժողովրդագրության, հայագիտության և կովկասագիտության հարցերով զբաղվողներին, պատմաբաններին, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնությանը:

Շապիկին պատկերված է Շամախիի հայոց թեմի՝ Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա առաջնորդանիստ վանքը:

ISBN 978-99941-73-25-9

ԳՄԴ 63.3 (2Հ)

©ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010
©Գևորգ Ստեփանյան, 2010

Գևորգ Ստեփանյանի «Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» աշխատությունն ունի գիտական և քաղաքական կարևոր նշանակություն: Օգտագործված սկզբնաղբյուրների համապարփակ քննությունը և նրանց վրա հիմնվող եզրակացությունների հավաստիությունը թույլ են տվել հեղինակին Բաքվի նահանգի հայության XIX դարի երկրորդ կեսի պատմությունը ներկայացնել հայոց պատմության լայն հետնախորքի վրա, այն դիտարկելով ոչ թե որպես գաղթաշխարհի, այլ՝ պատմաժողովրդագրական առումներով Արևելյան Հայաստանի հետ անխզելի միասնության մեջ գտնվող՝ Կուրի ձախափնյակի հնաբնակ հայության միասնական պատմության անբաժանելի մաս: Բրտնաջան ուսումնասիրության արդյունքում Գ. Ստեփանյանին հաջողվել է արխիվային վավերագրերի, տեղագրական աշխատությունների, վիճակագրական նյութերի և մամուլում տեղ գտած հրապարակումների հենքի վրա ներկայացնել Բաքվի նահանգի հայ բնակչության XIX դարի պատմաժողովրդագրական ամբողջական պատկերը: Այս ամենի արդյունքում Բաքվի նահանգի հայության պատմությունը մեզ է ներկայացվում իր գյուղերով, վանքերով, եկեղեցիներով ու դպրոցներով դարեր շարունակ միևնույն տարածքում բնակված, իսկ XIX դարի երկրորդ կեսին Այսրկովկասում դրամատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով նահանգում եվրոպական քաղաքակրթության ձեռքբերումների տարածման առաջամարտիկի դերը ստանձնած՝ հայերի մշակութաստեղծ գործունեության ամբողջական պատկերը:

Վլադիմիր Բարխուդարյան
ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի
ակադեմիկոս-քարտուղար, ԳԱԱ պատմության ինստիտուտի
«Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության» բաժնի վարիչ

* * *

Պատմագիտության զարգացմանը զուգընթաց փոխվում են հրապարակվող ուսումնասիրությունների՝ գիտությանը բերելիք նպաստի նկատմամբ ակնկալությունները:

Գևորգ Ստեփանյանի «Բաքվի նահանգի հայությունը ԺԹ դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» աշխատությունը համանման ուսումնասիրություններից առանձնանում է ժողովրդագրության բնագավառին առնչվող տվյալների աննախադեպ ծավալով, և մանավանդ անտիպ նյութերի շրջանառմամբ: Մոտեցում, որ նախապայմանն է որևէ աշխատության գիտական կշռի բարձրացման: Ակնհայտ է, որ հեղինակը գործին մոտեցել է պատասխանատվությամբ և նվիրումով:

Ի նպաստ գիտության, ի մխիթարություն հազարամյակներով հայաբնակ ու պատմության մեջ 1988-1989 թվականներից ի վեր առաջին անգամ իսպառ հայաթափ և հանիրավի մոռացության մատնված և աշխարհով մեկ սփռված Բաքվի նահանգի հայ բեկորների՝ ընթերցողի սեղանին է երկրամասի XIX դարի երկրորդ կեսի պատմաժողովրդագրությունը համապարփակ ներկայացնող մի աշխատություն, որը վեր է հանում և լուսավորում մեր ժողովրդի պատմության բազմաթիվ չթերթված էջեր: Միևնույն ժամանակ աշխատությունը գալիս է հակակշռելու մեր օրերում ադրբեջանցի վայ-գիտնականների իրար հաջորդող այն «ուսումնասիրություններին», որոնք քաղաքական նկատառումներով կեղծում են երկրամասի հայերի պատմությունը:

Սամվել Կարապետյան
«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող (RAA)
հասարակական կազմակերպության հայաստանյան գրասենյակի» տնօրեն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բաքվի նահանգի հայության պատմությունը դարեր շարունակ գոյատևած մի մեծ ու ինքնատիպ հայաշխարհի ժողովրդագրության, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքի բազմաղան հիմնահարցերի ամբողջական հանրագումարն է: Այն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 1990 թվականը, երբ սոսկ XX դարի երկրորդ տասնամյակի վերջում Այսրկովկասի («Անդրկովկաս»)[1] արևելյան հատվածում ստեղծված «Ադրբեջան» արհեստածին պետական միավորը հայրենի օջախներից փուլ առ փուլ վերջնականապես դուրս մղեց երկրամասի զարգացման ու առաջընթացի մեջ վճռորոշ դեր խաղացած հայությանը՝ բռնազավթելով ժամանակի ընթացքում նրա ստեղծած անհելի հարստությունը:

Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում, հայերը բնակվել են վաղնջական ժամանակներից: XIX դարի կեսերին ստվարաթիվ հայ բնակչություն կար նախալեռնային և բարձր լեռնային շրջանների ավելի քան 100 բնակավայրերում՝ սկսած Շամախիից մինչև երկրամասի հյուսիս-արևմուտքում գտնվող Զաքաթալա[2] քաղաքը[3]: Այդ բնակավայրերից շատերը գոյատևել են մինչև XX դարի վերջերը և նշանակալից հետք են թողել երկրամասի պատմության մեջ:

Որպես երկրամասի հնաբնակ և մշակութաkիրտ ժողովուրդ՝ հայերը մասնակցել են այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծել հարուստ պատմություն: Նշանակալից էր հայերի դերը արհեստագործության, գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության (մասնավորապես՝ նավթարդյունաբերության սկզբնավորման գործում) բնագավառում: Օգտվելով տնտեսական և քաղաքական նպաստավոր պայմաններից՝ Շամախիի, Բաքվի հայ առևտրականներն արդյունավետ գործունեություն են ծավալել ոչ միայն Այսրկովկասի սահմաններում, այլև եվրոպական և արևելյան երկրների հետ կատարվող առևտրում: Հայերը նկատելի առաջադիմության էին հասել նաև հոգևոր-մշակութային կյանքում: Հայկական գրեթե բոլոր գյուղերում կառուցվել են եկեղեցիներ, հիմնադրվել և արգասավոր կյանք են ունեցել եկեղեցական-ծխական բազմաթիվ դպրոցներ:

Երկրամասում հայ բնակչության աճին զուգընթաց աստիճանաբար հայաշատ խոշոր կենտրոններ էին դարձել Շամախի, Ղուբա, Նուխի և Բաքու քաղաքները: Սակայն XIX դարի 70-ական թվականներից սկսած՝ Արևելյան Այսրկովկասի հայության ամենախոշոր կենտրոնը առևտրաարդյունաբերական քաղաք Բաքուն էր: Իրենց ստեղծագործ աշխատանքով և գիտամշակութային բարձր մակարդակով Բաքվի հայերն ուրույն տեղ էին զբաղեցնում քաղաքի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում: Հանրահայտ է, որ հենց Բաքվի հայությունն է կազմակերպել նավթարդյունաբերությունը և մեծ դերակատարություն ունեցել այդ քաղաքի կառուցման գործում: Հայ առևտրականների ու արդյունաբերողների (Ալեքսանդր Մանթաշյանց, Փիթոյան եղբայրներ, Պողոս, Հակոբ, Աբրահամ և Արշակ Ղուկասյան եղբայրներ, Հովհաննես Միրզոյան, Գևորգ Լիանոսյան, Առաքել Ծատուրյանց և շատ ուրիշներ) հիմնած հայանուն ընկերությունները («Արամազդ», «Սյունիք», «Որոտան», «Մասիս», «Աստղիկ», «Արարատ» և այլն) մեծ դեր են խաղացել Ապշերոնյան թերակղզու նավթի արդյունահանման և վաճառքի կազմակերպման, Բաքվում ֆինանսավարկային և բանկային համակարգերի կազմավորման գործում: Հսկայական էր Բաքվի հայության դերը մինչև XIX դարի կեսերը խիստ հետամնաց այդ բնակավայրի սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային կյանքի բուռն վերելքն ապահովելու ուղղությամբ: Սոցիալ-դասային կառուցվածքի առումով նահանգի հայ բնակչությունը բաղկացած էր ազնվական, քաղքենիական, վաճառական, պատվավոր քաղաքացիների և գյուղացիական դասերից: Պատվավոր քաղաքացիներն ընդգրկվում էին վարչական կառավարման մեջ՝ բարձրաստիճան պաշտոններ բազեցնելով պետական գրասենյակներում:

Բաքվի նահանգի հայության պատմաժողովրդագրության գիտական ուսումնասիրությունն ունի արդիական և քաղաքական կարևոր նշանակություն: «Ինտերնացիոնալ» Բաքվի մասին կեղծ մտակաղապարների պատճառով այդ քաղաքի ու շրջակա գավառների հայության XIX դարի և XX դարի առաջին տասնամյակների պատմությունն անուշադրության է մատնվել խորհրդային շրջանում: Կոմունիստական կուսակցության մենատիրության տարիներին լռության ու մոռացության անթափանց քողով է պատվել XX դ. սկզբներին քաղաքական հանգամանքների բերումով Բաքվի նահանգի հայ բնակչության հետ տեղի ունեցած ժողովրդագրական աղետը, անտեսվել է տնտեսական, հասարակական ու կրթամշակութային կյանքում հայության ունեցած առանձնահատուկ դերը, ինչպես նաև հայկական կապիտալի մեծ ներդրումը մինչև XIX դարի կեսերը խիստ հետամնաց այդ բնակավայրի տնտեսական բուռն վերելքն ապահովելու գործում: Նույն շրջանում սկիզբ էր առել երկրամասի հայության պատմության միտումնավոր նենգափոխումը, որն էլ ավելի մեծ հետևողականությամբ սկսեց իրականացվել Ադրբեջանի անկախացումից հետո: Ուստի Բաքվի նահանգի հայության XIX դարի պատմության տարբեր դրվագների գիտական ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել ժամանակակից ադրբեջանական պատմագրության կողմից հայ ժողովրդի հասցեին հետևողական-

[1] «Անդրկովկաս» (Закавказье) տերմինը ռուսական ծագում ունի, որն առաջացել է XVIII դարում (տե՛ս **Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ստ.**, **Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), հ. 1, Երևան, 1986, էջ 260, տե՛ս նաև **Գաբրիելյան Հ.**, Կովկասի ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1979, էջ 7): Այն նշանակում է «Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ» (**Ավետիսյան Կ.**, Աշխարհագրական անունների բացատրական բառարան, Երևան, 1969, էջ 30): Սույն շարադրանքում գործածել ենք համարժեք պատմաաշխարհագրական ընդգրկմամբ Այսրկովկաս անվանումը:

[2] Զաքաթալան պատմական Կամբեճան գավառն է, որը նախկինում եղել էր Մեծ Հայքի թագավորության կազմում: Գտնվել է Կուր գետի և Կապ-կոհ լեռնագոտու միջև, Կամբեճ (Իորի) և Աղվան (Ալազան) գետերի ստորին հովտում: Ըստ Ստրաբոնի՝ «Հայաստանի... գավառներից Խորզենան ու Կամբիսենան (Կամբեճան - Գ. Ս.) ամենահյուսիսայիններն են և բոլորից շատ են ծածկված ձյունով: Նրանք սահմանակից են Կովկասյան լեռնաշղթային, Իբերիային և Կոլխիդիային» (**Страбон**, География, пер., статья и коментарии **Г. А. Стратановского**, Москва, 1964, кн. XI, гл. XIV, § 4, стр. 497, տե՛ս նաև **Հիւբշման Հ.**, Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմանեց՝ Հ. Բ. Պիլէզիկեան, Վիեննա, 1907, էջ 18-19, տե՛ս նաև Ստրաբոն, քաղեց և թարգմանեց **Հ. Աճառյան**: Օտար աղբյուրներ հայերի մասին. հունական աղբյուրներ, № 1, Երևան, 1940, էջ 35-57: Կամբեճանին հետագայում տրվել է Ճար, այնուհետև՝ Զաքաթալա անվանումները: Ավանդության համաձայն՝ վերջին անունն առաջացել է Զաքար և Թալա երկու եղբայրների անունների միացումից: Ինչպես գրում է Ս. Էփրիկյանը. «...ժամանակաւ Զաքար և Թալայ անուն երկու եղբարց մին՝ Զաքար, հիւսիս արեւելեան կողմը Ճար գիւղի մէջ կը բնակի եղեր, իսկ Թալայ՝ հարաւակողմը Թալայ գիւղի մէջ, և թէ այս երկու անուանց միացմամբ յորջորջուեր է երկու գիւղից մէջ գտնուած քաղաքն՝ Զաքարթալայ, և հետզհետէ գործածուելով՝ ր տառն ոչնչացեր է» (**Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, գիրք Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 767):

[3] Տե՛ս **Карапетян С.**, Памятники средневековой архитектуры в гаварах Шаки и Капалак собственно Албани, «Кавказ и Византия», вып. 6, Ереван, 1988, стр. 224.

րեն տարածվող հերյուրանքները: Ադրբեջանական պաշտոնական պատմագրությունը (Ա. Ալեքպերով[4], Զ. Բունիաթով[5], Ֆ. Մամեդովա[6], Ռ. Գեյուշև[7], Ռ. Մելիքով[8], Ա. Սումբատզադե[9] և ուրիշներ), Բուն Աղվանքի և Շիրվանի պատմությանը նվիրված աշխատություններում, առաջնորդվելով ժամանակակից ադրբեջանցի ժողովրդի պատմությունը հնագույն դարձնելու մտասևեռումով, խեղաթյուրել է վերջինիս կազմավորման էթնիկական արմատները, «ադրբեջանցիներ», «ադրբեջանական ցեղեր» կամ «ադրբեջանական ռասա» փնտրելու նպատակով շարունակաբար փորձել է յուրացնել Արևելյան Այսրկովկասի էթնոմշակութային և քաղաքական պատմությունը:

Ադրբեջանական պատմագրությունը Բուն Աղվանքի և Շիրվանի միջնադարյան պարսկալեզու հեղինակներին ադրբեջանցի հայտարարելուց բացի, հետևողականորեն քողարկել է երկրամասում հնուց ի վեր, ինչպես նաև XIX դարում և XX դարի սկզբներին ստվարաթիվ հայության գոյության փաստը: Ադրբեջանցի պատմաբանների հրապարակումներում առաջ է քաշվել այն թեզը, թե իբր հայերը երկրամասում հաստատվել են ընդամենը 1826-1828 թթ. ռուս-իրանական պատերազմից հետո տեղի ունեցած գաղթի հետևանքով: Հակապատմական այս հայեցակարգը ցայտուն է դրսևորվել հատկապես Ֆ. Մամեդովայի՝ «Աղվանքի քաղաքական պատմությունն ու պատմական աշխարհագրությունը (մ. թ. ա. III - մ. թ. VIII դդ.)» աշխատության մեջ, որտեղ հեղինակը, առաջնորդվելով փաստերի կեղծման և աղավաղման հակագիտական հայեցակարգով, գրում է. «Հայերի բնակավայրերն Ադրբեջանի տարածքում հայտնվել են ավելի ուշ շրջանում՝ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին»[10]: Պատմական իրականությունը, սակայն, անհաշտ է իր նկատմամբ մտահայեցողական մոտեցման հետ: Կեղծարարության ճիշտ նույն եղանակն է կիրառել վերջինիս գործընկեր Գ. Գեյբուլաևը՝ Ադրբեջանի տոպոնոմիկային նվիրված աշխատությունում[11]: Փորձելով կասկածի տակ դնել երկրամասում հայերի հնաբնակ լինելը, ինչպես նաև աղավաղելով մի քանի գյուղերի (Կարմախան, Ջարլու, Քարքանջ, Դարա-Քարքանջ և այլն) անունների ստուգաբանությունը՝ հեղինակը, նպատակադիր չիմացությամբ խուսափելով այդ տեղանունների պատմաաշխարհագրական և լեզվաբանական-ստուգաբանական պարզաբանումից, վաղ ժամանակներից հայաբնակ գյուղերի գոյության, դրանցում հարյուրավոր հայերեն արձանագրություններ ունեցող միջնադարյան եկեղեցիների, խաչքարերի ու մատուռների փաստը քողարկելու անկասելի մոլուցքով հայտարարում է, թե իբր էթնիկ պատկանելության առումով այդ գյուղերը ադրբեջանական են[12]: Մինչդեռ պատմական իրականությունն այն է, որ սկսած ամենավաղ ժամանակներից, հատկապես միջնադարում, երբ Շիրվանում կար ստվար հայ բնակչություն, պատմությանը հայտնի չէր և չէր էլ կարող հայտնի լինել «ադրբեջանցի» անվամբ ժողովրդի գոյության մասին: Իսկ հայկական որոշ գյուղերի իրանական կամ թյուրքական անունները հիմնականում պայմանավորված էին օտար տիրապետությունների բացասական ազդեցությամբ, որի հետևանքով դրանցից մի քանիսը ժամանակի ընթացքում կորցրել էին տեղանունների ազգային-ավանդական անվանումները: Ուստի մերժելի է վերոնշյալ տեղանունների մահմեդական ծագման վարկածը: Հայկական մի շարք գյուղե-

[4] **Алекперов А.**, Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960.
[5] **Буниятов З.**, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.
[6] **Мамедова Ф.**, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э.-VIII в.н.э.), Баку, 1986; Кавказская Албания и албанцы, Баку, 2005.
[7] **Геюшев Р.**, Христианство в Кавказской Албании, Баку, 1984.
[8] **Меликов Р.**, Этническая карта Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н.э.), Баку, 2003.
[9] **Сумбатзаде А.**, Азербайджанцы-этногенез и формирование народа, Баку, 1990.
[10] **Мамедова Ф.**, նշվ. աշխ., стр. 40.
[11] **Гейбуллаев Г.**, Топономика Азербайджана, Баку, 1986, стр. 119-120.
[12] Նույն տեղում, стр. 120.

րի (Վանք, Ավանաշեն, Գանձակ, Խաչմաս, Գիրք, Նորշեն և այլն) տեղանունների հայակերտ լինելը և հայերեն բացատրություն ունենալը միանգամայն բավարար է՝ երկրամասում հայերի տեղաբնակ լինելը փաստելու համար:

Հարազատ մնալով փաստերն աղավաղելու և ննենգափոխելու այս յուրօրինակ «սկզբունքին»՝ Մ. Նեյմատովան երկրամասի պատմահնագիտական հուշարձաններին և վիմագրերին նվիրված աշխատության մեջ (խմբագիրը իր կեղծարարություններով հայտնի Զ. Բունիաթովն է) շրջանցել և լռության է մատնել երկրամասում հայերեն բազմաբնույթ արձանագրություններ ունեցող միջնադարյան հարյուրավոր խաչքարերի ու տապանաքարերի գոյության փաստը[13]: Շամախի, Ղուբա, Լենքորան և Բաքու քաղաքների սոցիալ-տնտեսական, առևտրական հարաբերություններում ու կառուցապատման գործում հայերի ունեցած ծանրակշիռ դերակատարությունը ևս միտումնավոր կերպով լռության քողով է պատվել կամ էլ ծայրահեղ դեպքում խիստ նվազեցվել ադրբեջանցի այլ հեղինակների՝ Հ. Ջիդդիի[14] և Ս. Աշուրբեյլիի[15], Շ. Ֆաթուլաևի[16], Ա. Սալամզադեի[17] և այլոց գործերում: Դա այն դեպքում, երբ ներկայիս Շամախին և հատկապես Բաքուն զարդարում են հայ ճարտարապետների կողմից հայկական ազգային մշակույթի լավագույն ավանդույթներով կառուցված բազմաթիվ շենքեր: Ավելին՝ ներկա Ադրբեջանում պետական մակարդակով տարվող հակահայկական քարոզչության պայմաններում համացանցի ադրբեջանական կայքէջերը ոչ միայն ողողվել են հակահայկական և հակագիտական դրույթներով, այլև ադրբեջանական կեղծարարներն առաջնորդվում են Այսրկովկասի հայկական մշակույթը յուրացնելու նկրտումներով, հայկական հուշարձանները «աղվանական», իսկ քրիստոնյա աղվանցիներին իրենց նախնիները հայտարարելու և նման այլ թյուրիմացություններով[18]: Աղբյուրների հաղորդած տեղեկությունների համալիր քննությունը ցույց է տալիս, որ վիճարկման ենթակա չէ այն փաստը, որ 1930-ական թվականների կեսերից «ադրբեջանցի» անվանված թյուրքական լեզվաընտանիքի օղուզական խմբին պատկանող ժողովրդի կազմավորումն ընթացել է նոր ժամանակներում՝ XI-XII դդ. եկվոր միջինասիական թյուրքալեզու օղուզական քոչվոր ցեղերի հետնորդների հիման վրա[19], և աղվանցիների հետ էթնիկական որևէ կապ չի ունեցել[20]: Այս տեսակետը, փաստորեն «թաղվեց» հենց Ադրբեջանի իշխանությունների կողմից, երբ պետական մակարդակով 2005 թ. դեկտեմբերին բարբարոսաբար ոչնչացվեցին և գետնի երեսից ջնջվեցին «աղվանական» համարվող Հին Ջուղայի միջնադարյան հայկական գերեզմանոցի վերջին խաչքարերը[21]:

[13] **Нейматова М.**, Мемориальные памятники Азербайджана XII-XIX вв., Баку, 1981; О некоторых эпиграфических памятниках Кубинского, Хачмасского и Кусарского районов, АН АзССР. Труды института истории, т. XIII, Баку, 1958, стр. 305-344.
[14] **Джидди Г.**, Средневековой город Шемаха (IX-XVII вв.): историко-археологическое исследование, Баку, 1981.
[15] **Ашурбейли С.**, Очерк истории средневекового Баку (VIII-начало XIX вв.), Баку, 1964; Государство Ширваншахов (VI-XVI вв.), Баку, 1983.
[16] **Фатуллаев Ш.**, Градостроительство и архитектура Азербайджана XIX-нач. XX века, Ленинград, 1986.
[17] **Саламзаде А.**, Архитектура Азербайджана XVI-XIX вв., Баку, 1964.
[18] Alakbarli A., Les Monuments d'Azerbaidjan d'Ouest, Bakou, 2007; **Мамедов И., Мусаев Т.**, Армяно-азербайджанский конфликт: История, право, народничество, Тула, 2006.
[19] Արևելյան Այսրկովկաս օղուզական ցեղերի ներթափանցման և դրա հետևանքների մասին հանգամանալից տե՛ս **Бартольд В.**, Краткий обзор истории Азербайджана. Сочинение, т. II, ч. I, Москва, 1963, стр. 75-783; նույնի՝ Работы по истории и филологии тюркских и монгольских народов. Обзор истории тюркских народов. Сочинение, т. V, Москва, 1968, стр. 425-437; **Новосельцев А., Пашуто В., Черепнин Л.**, Пути развития феодализма (Закавказье, Средняя Азия, Русь, Прибалтика), Москва, 1972, стр. 56-57.
[20] Տե՛ս **Акопян Ал., Мурадян П., Юзбашян К.**, К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.-VIII в. н. э.)», ՊԲՀ, Երևան, 1987, № 3, էջ 189, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Արևելյան Այսրկովկասում «ադրբեջանցի» էթնանվան գործածման հարցի շուրջ, ՄԱ, պր. V, Երևան, 2008, էջ 137-144:
[21] Տե՛ս Julfa, The Annihilation of the Armenian Cemetery by Nakhiejevan's Azerbaijani Authorities, Beirut, Lebanon, 2006.

Բաքվի նահանգի պատմական ժողովրդագրության ուսումնասիրությունն ունի քաղաքական կարևոր արժեք և նշանակություն: Վերջին ժամանակաշրջանում ադրբեջանական պատմագրությունը մեծ տեղ է հատկացնում Բաքվի նահանգի և Ադրբեջանի՝ XIX-XX դդ. էթնոժողովրդագրության հիմնահարցերին: Հետապնդելով պատմական իրականության հետ կապ չունեցող քաղաքական նպատակներ՝ ադրբեջանցի «ժողովրդագիրների» հրապարակումները լի են թերի հաշվառումներով և խիստ աղավաղված ցուցանիշերով, որոնք մեկնաբանվում են ազգայնական դիրքերից: Ավելին՝ նրանք չեն խորշում անգամ միտումնավոր կերպով պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում նահանգի էթնոժողովրդագրական պատկերին վերաբերող նյութերը կեղծելուց: Հարկ է հիշատակել հատկապես Տ. Ալիխանովայի աշխատությունը[22]: Սահմանափակվենք միայն մեկ-երկու վկայակոչումներով: Տ. Ալիխանովան «Ադրբեջանի ազգային և էթնիկ փոքրամասնությունները XX դ.» ուսումնասիրության մեջ աղյուսակի տեսքով տալով երկրամասի ժողովուրդների՝ 1897-1999 թթ. շարժը և անտեսելով այն հանգամանքը, որ մահմեդական կրոնին պատկանող ղըրղըզները, բաշկիրները, չուվաշները, կումիկները, թյուրքերն ու թաթարները 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերում նշված են «թուրք-թաթարներ» անունը կրող աղյուսակում՝ վերը նշված էթնիկ խմբերը և նրանց թվաճը հանիրավի նշել է մարդահամարի հարցաթերթիկներում և աղյուսակներում ընդհանրապես բացակայող «ադրբեջանցի» էթնանվան տակ: Միանգամայն անընդունելի պետք է համարել հեղինակի կողմից XIX դարավերջին «ադրբեջանցի» հասկացությունը գործածելու նորամուծությունը: Այս նույն հիմունքներով Տ. Ալիխանովայի կողմից կազմված աղյուսակում աղավաղվել են նաև հայերին և այլ ազգությունների (լեզգիներ, թաթեր, թալիշներ և այլն) վերաբերող պաշտոնական վիճակագրական նյութերը[23]:

Ադրբեջանական պաշտոնական շրջանների և նրանց կրկնող պատմության կեղծարարների տվյալները հեռու են իրականությունից: Նրանք խեղաթյուրում են պատմական փաստերը, ծուռ հայելու մեջ են ներկայացնում իրական պատկերները[24]: Ուստի ներկա ուսումնասիրության հիմնական նպատակն է ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի, վիճակագրական սկզբնաղբյուրների, մամուլի և թեմայի առնչությամբ լույս տեսած գիտական գրականության հենքի վրա ներկայացնել Բաքվի նահանգի հայ բնակչության XIX դարի երկրորդ կեսի պատմաժողովրդագրական գործընթացների համահավաք պատկերը: Մատենագրական և վիմագիր աղբյուրների համալիր ուսումնասիրությամբ ցույց տալ, որ այդ տարածաշրջանում հազարամյակներով բնակված հայությունը (ի տարբերություն ներկա ադրբեջանցիների), պատկանում է Արևելյան Այսրկովկասի հնագույն և մշակութակերտ ժողովուրդների թվին:

[22] **Алиханова Т.**, Национальные и этнические меньшинства Азербайджана в XX веке, Археология (IV) и этнология (III) Кавказа (международная научная конференция). Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2002.

[23] Նույն տեղում, стр. 197-199.

[24] Ադրբեջանցի պատմաբանների հակագիտական հայեցակարգը ժամանակին լուրջ հակահարված է ստացել հայ պատմաբանների և բանասերների կողմից: Մանրամասն տե՛ս **Мнацаканян А.**, **Севак П.**, По поводу книги З. Буниатова «Азербайджан в VII-IX вв.» (Баку, 1965), ՊԲՀ, Երևան, 1967, № 1, էջ 177-190, **Мелик-Оганджанян К.**, Историко-литературная концепция З. Буниатова, ԲՀԱ, Երևան, 1968, № 2, էջ 169-170, **Улубабян Б.**, Еще одна произвольная интерпретация армянской «Истории страны Агван» (По поводу книги Ф. Мамедова «История албан» Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977), ԲՀԱ, 1979, № 2, էջ 219-232, **Акопян Ал.**, **Мурадян П.**, **Юзбашян К.**, նշվ. աշխ., էջ 166-189, **Арутюнян Б.**, Когда отсутствует научная добросовестность, ԼՀԳ, Երևան, 1987, № 7, էջ 33-56, **Свазян Г.**, Пример использования исторической науки в экспансивных целях, ԲԵՀ, № 2, Երևան, 1989, էջ 46-56, **Мурадян П.**, История-память поколений. Проблемы истории Нагорного Карабаха, Ереван, 1990; **Смбатян Ш.**, Замечания по поводу книги Р. Геюушева «Христианство в Кавказской Албании (К освещению проблем истории и культуры Кавказской Албании (сборник статей), сост. **П. Мурадян**, т. I, Ереван, 1991, стр. 206-227; Ստեփանյան Գ., Ընդդեմ Արևելյան Այսրկովկասի պատմության ադրբեջանական կեղծարարների, «Վէմ», Երեւան, 2009, ապրիլ-մայիս, № 1, էջ 133-143 և ուրիշներ:

Հիմնահարցի համապարփակ քննության նպատակով քննության են առնվել նաև երկրամասում ապրող մյուս ժողովուրդների և էթնիկ խմբերի (ուդիներ, լեզգիական խմբի լեզուներով խոսողներ, թաթեր, թալիշներ, ռուսներ, վրացիներ, թյուրքալեզու էթնիկ խմբեր և այլն) տեղաբաշխումն ու շարժընթացը, որքանով այն առնչվում է հետազոտվող թեմային:

Միաժամանակ, նկատի ունենալով հետազոտվող հիմնահարցի արդիական և հրատապ լինելը, երկրամասի պատմաժողովրդագրական գործընթացների մասին ավելի խորը պատկերացում կազմելու համար շարադրանքի սկզբում նպատակահարմար ենք գտել առանձին գլխով հակիրճ անդրադառնալ երկրամասի հայության պատմությանը՝ վաղնջական ժամանակներից մինչև Բաքվի նահանգի կազմավորումը (1867 թ.): Նման մոտեցումը, անշուշտ, պայմանավորված է ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու անհրաժեշտությամբ և հիմնահարցի գիտաքաղաքական կարևորությամբ:

Աշխատությունը շարադրված է արխիվային տարաբնույթ նյութերի, հայ և օտար մատենագիրների գործերի, հատկապես՝ աշխարհագիրների, ճանապարհորդների երկերի ու վիճակագրական տեղեկագրերի քննական հետազոտության և վերլուծության հիման վրա:

Ուսումնասիրության գիտական մշակման համար բացառիկ կարևորություն ունեն արխիվային նյութերը, որոնք նոր լույս են սփռում հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա: Ներկա ուսումնասիրության համար իբրև սկզբնաղբյուր են ծառայել Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում (Մատենադարան), Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (ԳԱԹ) պահվող նյութերը:

Մեր օգտագործած սկզբնաղբյուրներում կարևոր նշանակություն ունեն միջնադարյան հայ պատմիչների և պատմագիրների երկերը[25], հայերեն ձեռագրերի հիշատակարանները[26] և

[25] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Սարգսեանի, Երևան, 1991 (այսուհետ՝ Մովսէս Խորենացի), Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփխիս, 1909 (այսուհետ՝ Ագաթանգեղոս), Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մ. Աբեղյանի, Երևան, 1941 (այսուհետ՝ Կորյուն), Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957 (այսուհետ՝ Եղիշէ), Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանեանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասեանի, Երևան, 1987 (այսուհետ՝ Փաւստոս Բիւզանդ), Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904 (այսուհետ՝ Ղազար Փարպեցի), Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979 (այսուհետ՝ Սեբէոս), Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983 (այսուհետ՝ Մովսէս Կաղանկատուացի), Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898 (այսուհետ՝ Մատթէոս Ուռհայեցի), Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 192 (այսուհետ՝ Կիրակոս Գանձակեցի), Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն Տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861 (այսուհետ՝ Ստեփաննոս Օրբէլեան), Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999 (այսուհետ՝ Թովմա Մեծոփեցի), Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868 (այսուհետ՝ Եսայի Հասան-Ջալալեանց), Զամբռ, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյ, և իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար եւ վշտակոծ կաթողիկոսէ, Վաղարշապատ, 1873 (այսուհետ՝ Սիմէոն Երեւանցի), Աբրահամ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թթ., պատ. խմբագիր՝ պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Երևան, 1938 (այսուհետ՝ Աբրահամ Երեւանցի), Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Գ., Երևան, 1984 (այսուհետ՝ Միքայել Չամչյանց), Աբրահամ կաթողիկոս Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870 (այսուհետ՝ Աբրահամ Կրետացի):

[26] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, մասն երկրորդ (1451-1480 թթ.), Երևան, 1958, մասն երրորդ (1481-1500 թթ.), Երևան, 1967, Հայերեն ձեռագրերի ԺԷ

մանր ժամանակագրությունները[27]: Երկրամասի հայ բնակչության մասին աղբյուրագիտական կարևոր տեղեկություններ է պարունակում «Դիվան Հայոց պատմության» ժողովածուն[28]:

Քննության առարկա հիմնահարցի լուսաբանմանը նպաստ են բերում նաև վրացական աղբյուրները, որոնցից օգտագործել ենք Լ. Մելիքսեթ-բեկի[29] և Պ. Չոբանյանի[30] քաղվածո թարգմանությունները: Մեր ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն արաբ պատմագիրների հաղորդած տեղեկությունները[31]: Աշխատության շարադրման ընթացքում օգտվել ենք նաև Ա. Սաֆրաստյանի հրատարակած հատորներից, որոնցում ամփոփված են թուրք ուղեգիրներից և պատմագիրներից քաղվածաբար թարգմանված հատվածներ[32]:

Մեզ հետաքրքրող հարցերի կապակցությամբ ուշագրավ նյութ են պարունակում նաև XVII-XVIII դդ. եվրոպացի ճանապարհորդ-ուսումնասիրողների, առևտրականների և կաթոլիկ միսիոներների թողած ճանապարհորդական նոթերը[33]: Եվրոպական աղբյուրների շարքում առանձնապես կարևոր են Հ. Հակոբյանի[34] և Մ. Զուլալյանի աշխատությունները[35]:

Հայկական սկզբնաղբյուրներում պակասող նյութը լրացնելու են գալիս ռուսական աղբյուրները: Այս առումով առանձին հիշատակության է արժանի «История, география и этнография Дагестана XVIII-XIX вв.» արխիվային փաստաթղթերի ժողովածուն[36], որում կան հայկական բնակավայրերի և բնակչության թվի մասին արժեքավոր հիշատակություններ:

դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), h. Բ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, h. Գ (1641-1660 թթ.), կազմեց **Վ. Հակոբյան**, Երևան, 1984:

[27] Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց **Վ. Հակոբյան**, h. Ա, Երևան, 1951, h. Բ, Երևան, 1956:

[28] Դիւան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, Դիվան Հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, **Ղուկաս Կարնեցի**, h. Ա (1780-1785), աշխատասիրությամբ **Վ. Գրիգորյանի**, Երևան, 1984, Դիվան Հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, **Ղուկաս Կարնեցի**, h. Բ (1786-1792), աշխատասիրությամբ **Վ. Գրիգորյանի**, Երևան, 2003:

[29] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, h. Ա (Ե-ԺԲ դդ.), թարգմանեց **Լ. Մելիքսեթ-բեկ**, Երևան, 1934, h. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Երևան, 1955:

[30] **Չոբանյան Պ.**, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981:

[31] **Баладзори**, Книга завоевания стран, вып. III, текст и перевод с арабского проф. **П. К. Жузе**, Баку, 1927 (այսուհետ՝ **Баладзори**); Сведения арабских писателей IX и X вв. о Кавказе, Армении и Адербейджане, перевод и примечания **Н. Караулова** (Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետ՝ СМОМПК), Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց **Հ. Նալբանդյան**, Երևան, 1965, Արաբական աղբյուրներ, Գ: Արաբ մատենագիրներ Թ-Ժ դդ., ներածությունը և բնագրից թարգմանությունները **Ա. Տեր-Ղևոնդյանի**, Երևան, 2005, Համառօտ Պատմութեան Հայաստանի, քաղեալք յարաբացի պատմագրաց ի ձեռն տորք. **Մորթմանայ** արեւելագետի, թարգմանեալ ի հայ **Կարապետ Ս. Իւթիւճեան**, տետր Ա, Կ.Պոլիս (այսուհետ՝ **Մորթման**):
Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց **Հ. Նալբանդյան**, Երևան, 1965:

[32] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 4, Թուրքական աղբյուրներ, Գ, Էվլիյա Չելեբի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Ա. Սաֆրաստյանի**, Երևան, 1967, էջ 93-94 (այսուհետ՝ **Էվլիյա Չելեբի**), Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով կազմեց **Ա. Սաֆրաստյան**, Երևան, h. Ա, 1961, h. Բ, 1964:

[33] Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах, составленное секретарем посольства **Адамом Олеарием**, Москва, 1870; Voyage de Corneille Le Brune, par la Moscovie, en Perse, et aux Indes Orientales. t. I-V, Rouen, NDCCXXV (1725); Estat de la Perse en 1660, par le pére Raphaël du Mans, supéricur de la mission des capucins. Publiée avec notes et appendice par Ch. Schéfer. Paris, 1890; Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères. Nouvelle édition. Mémoires du Levant. t. III, Paris, 1780; Philippe Avril, Voyage en divers etats d'Europe et d'Asie. Paris, 1962.

[34] **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ, աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, h. Ա, ԺԳ-ԺԶ դդ., Երևան, 1932:

[35] **Զուլալյան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների (XIII-XVIII դդ.), գիրք Ա. քաղաքական պատմություն, Երևան, 1990:

[36] История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. (архивные материалы), под редакцией **М. О. Косвена** и **Х. М. Хашаева**, Москва, 1958 (այսուհետ՝ ИГЭД).

Խիստ արժեքավոր են նաև Կովկասյան հնագրական հանձնաժողովի հրատարակած 12 հատոր կազմող արխիվային նյութերը[37]: Նույնպիսի կարևոր նշանակություն ունեն նաև Ս. Բրոնևսկու[38], Օ. Եվեցկու[39], Յու. Գագեմեյստերի[40], Ի. Բերեզինի[41], Պ. Բուտկովի[42] և այլոց աշխատությունները:

Բաքվի նահանգի հայկական և հայաբնակ գյուղատեղերի տեղագրությունը և բնակչության տարբեր տարիների թվակազմը ճշտելու համար աղբյուրագիտական և պատմագիտական մեծ արժեք են ներկայացնում այդ վայրերով ճամփորդած հայ տեղագիր-հեղինակների աշխատությունները, որոնք համադրել ենք արխիվային փաստաթղթերում ու պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում պահպանված նյութերի հետ: Երկրամասում առաջինը շրջագայած հեղինակը Էջմիածնի սինոդի որոշմամբ 1838 թ. փետրվարին Շամախի Հայոց թեմի Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա առաջնորդանիստ վանք այցելած սինոդի անդամ Հովհաննես եպս. Շահխաթունյանցն է, որը թեմի տարածքում հավաքել և առաջին անգամ հրատարակել է մի շարք վիմական արձանագրություններ[43]: Հիմնահարցի քննությանն արժանի նպաստ բերող մյուս հեղինակը Սարգիս արքեպ. Ջալալյանցն է, որը Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու հանձնարարությամբ եկեղեցական հասույթները հավաքելու նպատակով 1850 թ. ամռանը շրջագայել է Շամախի Հայոց թեմում[44]: Նրա աշխատությունը երկրամասի հայկական մի շարք բնակավայրերի հայ բնակչության թվի մասին տեղեկություններ տվող հայերեն առաջին սկզբնաղբյուրն է[45]: Մեծ արժեք են ներկայացնում նաև Շամախի Հայոց թեմի 1863-1868 թթ. առաջնորդ Դանիել արքեպ. Շահնազարյանցի (Տարոնեցի) ուղեգրական նոթերը: Թեմակալը 1865 թ. օգոստոսի 3-ից սեպտեմբերի 6-ը շրջագայել է թեմի գրեթե ողջ տարածքի հայկական գյուղերում և ստացած տեղեկությունները հաջորդաբար տպագրել «Արարատ» ամսագրում[46]: Արժեքավոր մյուս սկզբնաղբյուրը բժիշկ, մանկավարժ, գրող ու հասարակական գործիչ Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերունի) հեղինակած տեղագրական բնույթի ուսումնասիրությունն է[47]: Հեղինակը Բաքվի նահանգում բժիշկ աշխատած տարիներին՝ 1894-1900 թթ., շրջագայել է Շամախի և Գյոքչա գավառներում և իր ճամփորդական նոթերում տվել հայկական գյուղերի տեղագրությունը, դրանց պատմությունը, յուրաքանչյուր գյուղում ապրող հայ բնակչության զբաղմունքը, նկարագրել պատմաճարտարապետական հուշարձանները և այլն:

---

[37] Акты, собранные Кавказскою археографическою комиссиею, под ред. Ад. Берже, т. VI, ч. I, Тифлис, 1874, т. VII, Тифлис, 1878, т. X, Тифлис, 1885, т. XII, Тифлис, 1904 (այսուհետ՝ АКАК).

[38] **Броневский С.**, Новейшие географические и исторические известия о Кавказе, ч. I-II, Москва, 1823.

[39] **Евецкий О.**, Статистическое описание Закавказского края, ч. I-II, СПб., 1835.

[40] **Гагемейстер Ю.**, Закавказские очерки, СПб., 1845.

[41] **Березин И.**, Путешествие по Дагестану и Закавказью, Издание 2-е пополненное, Казань, 1850.

[42] **Бутков П.**, Материалы для новой истории Кавказа, сь 1722 по 1803 годь, ч. I, СПб., 1869, ч. II, СПб, 1869.

[43] **Շահխաթունեանց Յովհ.**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, h. Բ, Էջմիածին, 1842:

[44] Նամակ **Տ. Սարգսի արք եպիսկոպոսի Ջալալեանց** գրեալ առ յարգոյ ազգին ոմն, Կ. Պոլիս, 1867, էջ 7-8:

[45] **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858:

[46] **Դանիէլ արքեպ. Շահնազարեանց**, Այցելութիւն եկեղեցեաց, գիւղօրէից վիճակին Հայոց Շամախւոյ, «Արարատ», 1870, № ԺԱ, էջ 229-231, № ԺԲ, էջ 257-263, 1871, № Բ, էջ 257-263, № Գ, 318-323: Ի դեպ, Դանիել արքեպ. Շահնազարյանցի № ԺԱ, էջ 229-231... վերը նշված ուղեգրական նոթերի 72 էջից բաղկացած ձեռագիրը 1950-ական թվականների կեսերին Կ.Պոլսում գրավաճառ ոմն Պիմեն Զարդարյանից գնել է Հակոբ Քյուրտյանը և «Շահեկան վիճակագրական ուղեգրութիւն մը Շամախիի հայոց մասին» վերատառությամբ տպագրել Բեյրութում լույս տեսնող «Հասկ» տարեգրքի երկու համարում (տե՛ս «Հասկ», Անթիլիաս (Պէյրութ), 1960, ԻԹ տարի, № 11-12, էջ 446-452, 1961, Լ տարի, № 1, էջ 17-24):

[47] **Քաջբերունի Գ.**, Բազմամիլիոն ժառանգութիւն, ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 1-70 (այսուհետ՝ **Քաջբերունի Գ.**):

Վերջապես, խնդրո առարկա հարցի մասին զգալի փաստական նյութ է պարունակում երախտաշատ գիտնական Մակար եպս. Բարխուտարյանցի աշխատությունը[48]: Հեղինակը 1889 թ. մինչև 1890 թ. ապրիլը Շամախիի Սբ. Աստվածածին մայր եկեղեցում վարել է քարոզչի պաշտոն, որը թողնելուց հետո շրջագայել է երկրամասում: Նա առաջինն էր, ով, շրջելով Կուրի ձախափնյակում, տեղի ազգագրական և վիմագրական նյութը հավաքել է գրեթե սպառիչ ամբողջությամբ: Փաստագրական այդ տվյալները, որոնք մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց պատմագիտական և աղբյուրագիտական նշանակությունը, անփոխարինելի հիմք են երկրամասի հայության պատմության առնչվող բազմազան հարցերի, մասնավորապես՝ հայկական գյուղերի, ծխերի, բնակչության թվի և տեղաշարժերի լուսաբանման համար: Տեղագիր-ուսումնասիրողների գործերից կարևոր է նաև 1887-1894 թթ. Շամախիի հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի աշխատությունը[49]: Հեղինակը թեմակալության տարիներին պարբերաբար շրջագայել է երկրամասի հայկական գյուղերում և ուսումնասիրել եկեղեցիները, վանքերն ու սրբատեղիները՝ մեծ տեղ հատկացնելով նաև Շամախի, Ղուբա, Բաքու և Դերբենդ քաղաքների պատմության և էթնոժողովրդագրության առանձին դրվագների հետազոտությանը: Աշխատությունում առկա տեղեկությունները օգնում են լուսաբանելու հիմնախնդրին առնչվող բազում կարևոր հարցեր: Հարկ է նշել, որ Մակար եպս. Բարխուտարյանցի և Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի՝ 1890 թ. ծխերի և շնչերի վերաբերյալ բերած տվյալների մեջ կան հակասական թվեր: Թերևս տարբերության պատճառն այն է, որ երկու հեղինակները վիճակագրությունն անցկացրել են թեև նույն թվականին, սակայն տարբեր ամիսների: Այսպես՝ Մակար եպս. Բարխուտարյանցն իր աշխատության նախաբանում գրում է, որ երկրամասում շրջագայությունն սկսել է Դաղստանի մարզից ապրիլի սկզբներին, որտեղից վերադառնալուց հետո յոթ ամիս շարունակ զբաղվել է Դերբենդ, Ղուբա, Բաքու, Շամախի, Շաքի և Զաքաթալա քաղաքների ու գավառների ուսումնասիրման աշխատանքներով[50]: Եթե ընդունենք, որ Բարխուտարյանցը Դաղստանի մարզում մնացել է մինչև ապրիլ ամսվա վերջերը, ապա նահանգում շրջագայած պիտի լիներ մայիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Եվ քանի որ հեղինակը որոշակի չի նշում ամեն գավառում իր գտնվելու ամիսը, ուստի դժվար է կռահել նաև վիճակագրության անցկացման ստույգ ժամանակը: Ինչպես նշում է Բարխուտարյանցը. «Հաւաքագրեցի… միայն հայ բնակչաց այժմեան (1890 թ. - Գ. Ս.) ծխաթիւը, արականաց և իգականաց քանիութիւնը, միամեայ ծնելոց, պսակելոց և ննջելոց թիւը՝ ճշտելով հոգևոր և մարմնաւոր կառավարութեանց տետրակներից և քահանաների չափաբերականներից»[51]: Հակառակ դրան՝ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը որոշակիորեն նշում է, որ 1890 թ. վիճակագրությունն անցկացվել է հոկտեմբերի 20-ին[52]:

Նշված տեղագիր-հեղինակների աշխատանքը շարունակեցին նաև Մխիթարյան միաբաններ Ղևոնդ Ալիշանը[53] և Սուքիաս Էփրիկյանը[54], որոնց հավաքած պատմական և աշխար-

---

48 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893:

49 Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896:

50 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 5, 43:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 44:

52 Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 138:

53 Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855:

54 Էփրիկեան Ս., Պատկերազարդ Բնաշխարհիկ բառարան, հ. Ա, գիրք Ա, Վենետիկ, 1903-1905, հ. Բ, գիրք Ա, Վենետիկ, 1907:

հագրական մեծածավալ նյութերի մեջ տեղեկություններ կան Բաքվի նահանգի հայկական բնակավայրերի տեղաբաշխման և պատմության որոշ դրվագների վերաբերյալ:

Հիմնահարցի լուսաբանման նպատակով օգտագործել ենք տվյալ ժամանակաշրջանի մամուլը, որում ամփոփված են բազմաթիվ տեղեկություններ Բաքվի նահանգի էթնովիճակագրության, հայկական գյուղերի, հայ բնակչության տեղաշարժերի մասին[55]:

Բաքվի նահանգի հայերի թվակազմը և նրանց շարժը ճշգրտելիս բացառիկ կարևորություն ունեն վիճակագրական տեղեկագրերն ու ժողովածուները: Ռուսական տիրապետության հաստատումից հետո Արևելյան Այսրկովկասում առաջին ընտանեկան ցուցակագրությունն անցկացվել է 1831 թ.: Սակայն այդ մարդահամարի նյութերը դեռևս չեն տալիս ճշգրիտ ու ստույգ տվյալներ երկրամասում հայ բնակչության թվաքանակի մասին: Նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ (ըստ դավանանքի, սեռատարիքային, սոցիալ-դասային կազմի, գյուղական և քաղաքային բնակչության հարաբերակցության) հարուստ տվյալներ են պահպանվել «Ռուսաստանյան կայսրության բնակավայրերի ցուցակները» վիճակագրական բնույթի պաշտոնական ժողովածուներում: Նյութերի հավաքումը XIX դարի 50-ական թթ. ձեռնարկեցին Ռուսաստանյան աշխարհագրական ընկերությունը և Ներքին գործերի մինիստրության վիճակագրական կենտրոնական կոմիտեն: Կովկասի վիճակագրական կոմիտեի կողմից Բաքվի նահանգում բնակավայրային և ընտանեկան ցուցակագրությունն անցկացվեց 1859-1864 թթ. ընթացքում[56]: Թեև, ըստ տեղեկագրի, ցուցակագրությունն սկսվել է 1859 թ. հունիսից և շարունակվել ներառյալ 1864 թ., սակայն իրականում հաշվառումներն ավարտվել, ընտանեկան ցուցակներն ամբողջացվել և կազմվել են 1863 թ.[57], որն էլ ընդունվել է որպես հիմք:

Բաքվի նահանգի էթնոժողովրդագրության, բնակավայրերի տեղագրության և սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ արժեքավոր նյութեր են պարունակում Ռուսական աշխարհագրական ընկերության կողմից, ռուս ականավոր աշխարհագրագետ Պ. Սեմյոնով Տյան-Շանսկու ղեկավարությամբ հրատարակված «Ռուսաստանյան կայսրության աշխարհագրական-վիճակագրական բառարանը»[58]: Աշխատությունը շարադրելու համար կարևոր նշանակություն են ունեցել հատկապես 1873 թ. բնակավայրերի[59] և 1886 թ. ընտանեկան ցուցակագրության[60] հաշվառումները: Ընդհանուր առմամբ, «ցուցակների» հիմնական բաժնում տեղեկություններ են հրապարակվում նահանգի պատմության, յուրաքանչյուր գյուղի բնակչության թվի, գյուղից մինչև գավառի և նահանգի կենտրոնն ընկած տարածության, գյուղացիական տնտեսությունների թվի վերաբերյալ: Նշված են եկեղեցիները, ուսումնական, բարեգործական կազմակերպությունները և այլն:

---

55 «Արարատ» (Վաղարշապատ), «Արձագանք» (Թիֆլիս), «Առավոտ» (Երևան), «Գործ» (Թիֆլիս), «Երկրապահ» (Երևան), «Թատրոն» (Թիֆլիս), «Կովկաս», (Տփխիս), «Հանրապետական» (Երևան), «Հայրենիք» (Պօսթըն), «Հայաստան» (Թիֆլիս), «Հասկ» (Անթիլիաս, Պէյրութ), «Հովիւ» (Թիֆլիզ), «Հովիտ» (Թիֆլիզ), «Հորիզոն» (Թիֆլիս), «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), «Մշակ» (Թիֆլիս), «Նոր-դար» (Թիֆլիս), «Վտակ» (Թիֆլիս), «Տարազ» (Թիֆլիս), «Тифлисский листок» (Тифлис):

56 Списки населенных мест Российской империи по Кавказскому краю. LXV-Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 г. Сост. глав. ред. ком. **Н. Зейдлицем**, Тифлис, 1870 (այսուհետ՝ СНМ-1859-1864).

57 Տե՛ս նույն տեղում, стр. 99.

58 Географическо-статистический словарь Российской империи, сост. П. Семеновь, т. I, СПб., 1863, т. II, СПб., 1865 (այսուհետ՝ ГССРИ).

59 Список населенных мест по сведениям 1873 г.: Бакинская губерния: Сост. глав. ред. ком. **Н. Зейдлицем**, Тифлис, 1879 (б. с., այսուհետ՝ СНМ-1873).

60 Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Бакинской губернии, Тифлис, 1893 (б. с., այսուհետ՝ ССДНЗКИПС-1886).

Թեմայի մշակման համար խիստ արժեքավոր նշանակություն ունեն հատկապես 1897 թ. հունվարի 28-ին (հին տոմարով) անցկացված համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերը, որոնք երկրի բնակչության թվի, կազմի, սոցիալ-տնտեսական իրավիճակի ամբողջական ուսումնասիրման առաջին փորձերից էին[61]: Դա հնարավորություն ընձեռեց նաև մանրամասն ներկայացնել հայ բնակչության բաշխվածությունն ըստ սեռի, տարիքի, դավանանքի և մայրենի լեզվի և այլ հատկանիշների: Մարդահամարի թերություններից էր այն, որ բնակչության ազգային կազմի հաշվառումն անտեսվել էր, որը լրացուցիչ դժվարություններ ստեղծեց ուսումնասիրողների շրջանում: Այսօր էթնիկ կազմը որոշելու համար հենվում են մայրենի լեզվին ու դավանանքին վերաբերող տվյալների վրա: Վիճակագրական բնույթի ժողովածուների շարքում ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն առանձին ժողովածուները: Այս առումով հարուստ նյութեր է պարունակում 1846-1917 թթ. հրատարակված «Կովկասյան օրացույցը»[62]:

Բաքվի նահանգի ժողովրդագրական հիմնախնդիրների քննության տեսանկյունից աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն Ս. Գուլիշամբարովի[63], Պ. Յագոդինի[64], Պ. Կոտլյարևի[65], Ն. Աբելյանի[66], Դ. Կիստենևի[67], Ս. Ալիֆինի[68], Ս. Զելինսկու (Ստեփան Մկրտչյան)[69], Պ. Նադեժդինի[70], Մ. Շապշովիչի[71] և Ա. Ստոպանու[72] ուսումնասիրությունները: Թեմային առնչվող գրականության շարքում արժեքավոր են հատկապես Բ. Իշխանյանի ուսումնասիրությունները[73], որոնք Այսրովկասի ժողովրդագրական պատկերի վերլուծության լավագույն փորձերից են: Նա առաջինն էր, որ, անդրադառնալով համառուսաստանյան առաջին մարդահամարի (1897 թ.) նյութերին, փորձեց ներկայացնել Այսրկովկասի, այդ թվում նաև Բաքվի նահանգի հայ բնակչության սոցիալական կազմը, թվաքանակը և այլ հիմնահարցերը՝ այդ ամենը համադրելով տարածաշրջանի այլ ժողովուրդների մասին համանման տվյալների հետ: Նախախորհրդային շրջանի ուսումնասիրություններից հատկապես առանձնանում է Մխիթար վրդ. Տեր-Մկրտչյանի աշխատությունը[74]: Իր ձեռքի տակ եղած բազմաբնույթ նյու-

---

[61] Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI-Бакинская губерния. под ред. **Н. А. Тройницкаго**, СПб., 1905, т. 61 (այսուհետ՝ ПВПНРИ-1897).

[62] Кавказский календарь на 1846-1917 гг., Тифлис, 1845-1916 (այսուհետ՝ КК).

[63] **Гулишамбаров С.**, Население Закавказья и его распределение по полах (б. м. и г.).

[64] Экономический быт государственных крестьян Бакинского уезда Бакинской губернии, исследование **П. Н. Ягодынскаго** «Материалы для изучения экономическаго быта государственных крестьян Закавказскаго края» (այսուհետ՝ МИЭБГКЗК), т. I, Тифлис, 1885, стр. 473-558:

[65] Экономический быт государственных крестьян северной части Кубинского уезда Бакинской губернии, исследование **П. В. Котляревскаго**, МИЭБГКЗК, т. II, ч. I, Тифлис, 1886, стр. 289-446.

[66] Экономический быт государственных крестьян Геокчайскаго и Шемахинскаго уездов Бакинской губернии, исследование **Н. А. Абелова**, МИЭБГКЗК, т. VI, ч. II, Тифлис, 1887, стр. 1-140; **Աբելեան Ն.**, Արբունական հայ գիւղացին Անդրկովկասում (II). Բաքուի նահանգ, «Արձագանք», Թիֆլիս, 1887, օգոստոսի 16, № 30, էջ 442-444:

[67] Экономический быт государственных крестьян Ленкоранскаго уезда Бакинской губернии, исследование **Д. А. Кистенева**, МИЭБГКЗК, т. VII, Тифлис, 1887, стр. 535-764.

[68] Экономический быт государственных крестьян Джеватскаго уезда Бакинской губернии, исследование **С. К. Алифина**, МИЭБГКЗК, т. VII, Тифлис, 1887, стр. 289-363.

[69] **Зелинский С.**, Описание города Шемаха, Тифлис, 1896.

[70] **Надеждин П.**, Кавказский край (природа и люди), Тула, 1901.

[71] Весь Кавказ. Промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья. Составил и издал **М. С. Шапшович**, Баку, 1914.

[72] **Стопани А.**, Нефтепромышленный рабочий и его бюджет, Баку, 1916.

[73] **Իշխանեան Բ.**, Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրօֆեսիօնալ խմբաւորումը եւ հասարակական շերտաւորումը, Թիֆլիս, 1914, նոյնի՝ Վիճակագրական ուսումնասիրութիւն Անդրկովկասեան ժողովուրդների. ժողովուրդների տերիտորիական բաժանումները եւ նրանց աճումը Անդրկովկասում, Ա մաս, Բագու, 1919:

[74] **Մխիթար վարդապետ**, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906:

թերի օգտագործմամբ հեղինակը տալիս է Հայաստանյայց առաքելական եկեղեցու թեմերի, այդ թվում նաև Շամախիի հայության XIX դարավերջի և XX դարասկզբի ժողովրդագրական պատկերը, վիճակագրական տեղեկություններ հաղորդում թեմապատկան վանքերի, եկեղեցական հասույթների ու վանքապատկան կալվածքների վերաբերյալ: Թեմային առնչվող առանձին հիմնահարցեր քննվել են Դ. Անանունի աշխատությունում[75]: Դրանցում կան վիճակագրական և փաստական հարուստ նյութեր Բաքվի նահանգի հայ բնակչության, սոցիալական կառուցվածքի, ժողովրդագրության և, ընդհանրապես, հասարակական-քաղաքական բնագավառների վերաբերյալ:

Հիմնահարցի գիտական ուսումնասիրման համար փաստավավերագրական մեծ արժեք ունի գրող Ալ. Շիրվանզադեի «Կյանքի բովից» հուշագրական աշխատությունը[76], որը Շամախի և Բաքու քաղաքների XIX դ. և XX դ. սկզբների պատմության առանձին դրվագների լուսաբանման համար նույնիսկ սկզբնաղբյուրի նշանակություն ունի: Մեծ գրողը Բաքվում անընդմեջ ապրած տարիներին (1875-1883 թթ.) խորապես ուսումնասիրել է նավթարդյունաբերության վիճակը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Այս տեսակետից փաստական արժեք է ներկայացնում գրողի՝ 1885 թ. «Արձագանք» շաբաթաթերթում տպագրված «Բաքու» ակնարկաշարը[77]: Թեմային վերաբերող ուսումնասիրություններից առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հր. Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» աշխատությունը: Մեզ համար կարևոր էր հատկապես «Աղուանք» (Արևելյան Կովկաս) բաժինը, ուր հեղինակը ներկայացնում է Արևելյան Այսրկովկասի հայ բնակչության ամփոփ պատմությունը՝ վաղ ժամանակներից, մինչև XX դ. երկրորդ տասնամյակի սկզբները (1912 թ.)[78]:

Խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի պատմագրության մեջ Բաքվի նահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական գործընթացներին նվիրված հատուկ և ամբողջական ուսումնասիրություններ չկան: Աշխատության թեմային իրենց հետաքրքրած ընդհանուր խնդիրների շրջանակներում անդրադարձել են Զ. Կորկոտյանը[79], Ա. Համբարյանը[80], Մ. Ադոնցը[81], Ա. Սիմոնյանը[82], Գ. Առաքելյանը[83], Հ. Սարգսյանը[84], Վ. Խոջաբեկյանը[85], Վ. Թունյանը[86] և ուրիշներ: 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերի քննության տեսանկյունից որոշակի արժեք է ներկայացնում Լ. Առյանի ուսումնասիրությունը[87]:

---

[75] **Անանուն Դ.**, Ռուսահայոց հասարակական-քաղաքական մտքի զարգացումը, հ. Բ (1870-1900), Էջմիածին, 1922, հ. Գ (1901-1918), Վենետիկ, 1926:

[76] **Շիրվանզադե Ալ.**, Կյանքի բովից, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1961:

[77] **Ա. Մ. [Ալեքսանդր Մովսիսյան]**, Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1885, հուլիսի 28, (I) № 4, էջ 52-53, օգոստոսի 4, (II) № 5, էջ 67-71, օգոստոսի 6, (III) № 6, էջ 81-84, սեպտեմբերի 1, (IV) № 9, էջ 124-126:

[78] **Աճառյան Հր.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 43-58:

[79] **Կորկոտյան Զ.**, Երևան քաղաքի ժողովրդագրությունը, հարյուրամյա անման պատկերը (1830-1930)՝ համադրված Անդրկովկասի մեծ քաղաքների հետ, Երևան, 1931:

[80] **Համբարյան Ա.**, Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության մասին, ԼՀԳ, Երևան, 1985, № 8, էջ 24-29:

[81] **Ադոնց Մ.**, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968:

[82] **Симонян А.**, Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX-начале XX вв. (историко-статистический анализ), Ереван, 1995.

[83] **Առաքելյան Գ.**, Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում, Երևան, 2003:

[84] **Саркисян Г.**, Население Восточной Армении в XIX-начале XX в., Ереван, 2002.

[85] **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2002:

[86] **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье I пол. XIX в., Ереван, 2003; Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв., ч. I (1800-1826 гг.), Ереван, 2006.

[87] **Առյան Լ.**, Հայերի տեղաբաշխումը ռուսական կայսրությունում ըստ 1897 թ. համառուսաստանյան մարդահամարի տվյալների, պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006:

Արևելյան Այսրկովկասի հայաբնակ բնակավայրերի ուսումնասիրության բնագավառում շնորհակալ աշխատանք է կատարել «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» (RAA) հասարակական կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն Սամվել Կարապետյանը: Նա 1982-1987 թթ. վիմագրական ուսումնասիրություններ կատարելու նպատակով գիտարշավներ է կազմակերպել Խորհրդային Ադրբեջանի Շաքիի, Վարդաշենի, Կուտկաշենի, Իսմայիլլիի, Շամախիի, Աղսուի, Աղդաշի, Ջաքաթալայի, Եվլախի շրջաններ և հավաքել, լուսանկարել ու վերծանել է շուրջ 516 վիմական արձանագրություններ, որոնք վերահաստատում են այդ տարածաշրջանում հայերի հնաբնակությունը և վաղնջական մշակութային ներկայությունը[88]*:*

Աշխատությունը շարադրելիս օգտվել ենք նաև Բուն Աղվանքի և Շիրվանի քաղաքական պատմությանը և աշխարհագրությանը նվիրված աշխատություններից[89]*:*

Թեմայի լուսաբանման համար հատուկ կարևորություն են ներկայացնում Թաթախոս հայերի մասին Ս. Ղալթախչյանի[90] *լեզվաբանական և Ար. Հակոբյանի*[91] *պատմաազգագրական արժեքավոր ուսումնասիրությունները:*

Բաքվի հայերի բանահյուսության ուսումնասիրման համար արժեքավոր է Ա. Ղազիյանի և Ս. Վարդանյանի աշխատությունը[92]*:*

Բաքու քաղաքի հայերի պատմության՝ տարաբնույթ հարցերի ուսումնասիրության բնագավառում որոշակի ներդրում է Խ. Դադայանի (լրամշակված տարբերակը լույս տեսավ նաև ռուսերեն) աշխատությունը[93]*, որը ժամանակագրական առումով սույն ուսումնասիրությանն առնչվող վերջին աշխատությունն է: Թեև աշխատությունում կան Բաքու քաղաքի հայ բնակչության թվի վերաբերյալ վիճակագրական մի քանի տվյալներ, սակայն դրանք չեն արտահայտում ժողովրդագրական գործընթացների ամփոփ պատկերը:*

Բաքվի նահանգի հայերի պատմաժողովրդագրական հարցերին անդրադարձել են նաև «Հայաստանի ազգային ատլասի» հեղինակները[94]*:*

Այսպիսով՝ թեմային առնչվող սկզբնաղբյուրների, վիճակագրական, արխիվային նորահայտ նյութերի և տպագիր գրականության հիման վրա՝ լուսաբանել ենք Բաքվի նահանգի հայ բնակչության տեղաբաշխումը և շարժընթացը XIX դարի երկրորդ կեսին:

---

[88] **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997, **նույնի՝** Հայ մշակույթի հուշարձանները Շամախիի Գարդման գավառում (Ուշտալ, Ղալակա, Նորշեն գյուղեր), Էջմիածին, 1985, № Ը, էջ 45-50, **նույնի՝** Վանքաշենը և հուշարձանները, «Էջմիածին», 1986, № ԺԱ-ԺԲ, էջ 106-109, **նույնի՝** Շամախու գավառի գյուղերի պատմությունից, ԼՀԳ, Երևան, 1989, № 2, էջ 55-60, **նույնի՝** Մատրասա գյուղը և նրա հուշարձանները, ՊԲՀ, Երևան, 1989, № 12, էջ 225-230:

[89] **Минорский В.**, История Ширвана и Дербенда X-XI вв., Москва, 1963; **Каграманян К.**, Источники «История страны Агванк»: автореф. диссерт. на соиск. уч. степ. канд. ист. наук, Ереван, 1973; **Акопян Ал.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987; **Սվազյան Հ.**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Երևան, 2006, **նույնի՝** История страны Алуанк (с древнейших времен по VIII век), Ереван, 2009.

[90] **Калтахчян С.**, Татский язык матрасцев, автореф. диссерт. на соиск. уч. степ. канд. ист. наук, Ереван, 1972.

[91] **Հակոբյան Ար.**, Թաթախոս հայեր (պատմաազգագրական ուսումնասիրություն), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2002:

[92] Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմողներ Ա. Ղազիյան, Ս. Վարդանյան, Երևան, 2004:

[93] **Դադայան Խ.**, Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920 թ.), Երևան, 2006, **նույնի՝** Армяне и Баку (1850-ые гг.-1920 г.), Ереван, 2007.

[94] Հայաստանի ազգային ատլաս, հ. Ա, պատ. խմբագիր՝ **Լ. Վալեսյան**, Երևան, 2007, հ. Բ, պատ. խմբագիր՝ **Բ. Հարությունյան**, Երևան, 2008:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

XIX դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրության կողմից Այսրկովկասի հարավարևելքում կազմավորված Բաքվի նահանգը հիմնականում զբաղեցնում էր պատմական Բուն Աղվանք (հունահռոմեական աղբյուրներում՝ «Ալբանիա») երկրի արևելյան շրջանները և որոշ հարակից տարածքներ[95]*: X դարից սկսած՝ Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով ընկած տարածքը սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի է Շիրվան*[96] *կամ «Շարուանայ, Շիրուանայ» երկիր անուններով*[97]*: Միքայել Չամչյանն այդ մասին գրում է. «Աղուանից աշխարհ..., որ է ընդ մէջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և սա կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...»*[98]*: Մխիթարյան միաբան Մանուել Քաջունու պարզաբանմամբ՝ «Շիրուան, որ հին ատեն Աղուանից մայրաքաղաքն էր, և հիմա աւերակ է, որոյ հին բերդը միայն մնացած է: Այս քաղաքին անունովն է որ հիմա Շիրուան կ՚ըսուի բոլոր Աղուանից աշխարհը»*[99]*: Այս առումով հետաքրքրական դիտարկում է արել նաև գյուղագետ Ներսես Աբելյանը՝ նշելով, որ «Բաքուի նահանգը ի հնումն կազմում էր Շիրվան-շահների պետութեան կենտրոնական մասը: Շիրվան-շահների պետութիւնը կամ Շիրվան առհասարակ ընդունված է համարել մեր պատմութեան Աղուանը (յունաց-Ալբանեան)»*[100]*: Շիրվանի կենտրոնն էր տարանցիկ առևտրական ճանապարհների վրա գտնվող հինավուրց Շամախի քաղաքը*[101]*, որը փոխարինում էր (Շաքի քաղաքի հետ միասին) Բուն Աղվանից թագավորության հնագույն մայրաքաղաք Կապաղակին:*

---

[95] Բուն Աղվանքի աշխարհագրական սահմանների և առնչվող կարևորագույն հարցերի մանրամասն քննությունը տե՛ս **Каграманян К.**, Источники «История страны Агванк»: автореф. диссерт. на соиск. уч. степ. канд. ист. наук, Ереван, 1973; **Акопян Ал.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987; Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Երևան, 2006, **նույնի՝** История страны Алуанк (с древнейших времен по VIII век), Ереван, 2009:

[96] Շիրվան երկրանվան ստուգաբանման մանրամասն քննությունը տե՛ս Հակոբյան Ա., «Շիրվան» երկրանվան ծագման հարցի շուրջ, ՍԱ, պր. IV, Երևան, 2007, էջ 61-65:

[97] IX դ. վերջերին, երբ արաբական խալիֆայության թուլացման պայմաններում Բուն Աղվանքի մի շարք մարզեր դարձան ինքնուրույն, Շիրվանի մարզի ամիրան X դ. գրավեց հարևան մարզերը և իշխանության սահմանները հասցրեց Դերբենդից հարավ ընկած ծովափնյա շրջաններ՝ ընդհուպ մինչև Ապշերոնյան թերակղզի, ներառելով Խրսանի, Լայզանի և մյուս մարզերը (տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 85, 106-119, տե՛ս նաև Փափազյան Հ., Անանուն Տաջիկ աշխարհագիրը Հայաստանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1953, № 5, էջ 80, 86):

[98] **Միքայել Չամչյանց**, հ. Գ, էջ 131:

[99] Աշխարհագրութիւն հին եւ նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց համար, աշխատասիրեց՝ Հ. Մանուէլ Վ. Քաջունի, Վենետիկ, 1857, էջ 201:

[100] **Աբէլեան Ն.**, Արքունական հայ գիւղացին Անդրկովկասում (II). Բաքուի նահանգ, «Արձագանք», Թիֆլիս, 1887, օգոստոսի 16, № 30, էջ 443:

[101] Տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 106.

Պատմական հիշատակությունները վկայում են, որ Կուր գետով Մեծ Հայքին սահմանակից Բուն Աղվանքի տարածքում, վաղնջական ժամանակներից սկսած, բնակվել է ոչ միայն աղվանական[102], այլև որոշակի հայկական էթնիկ տարր՝ գործուն մասնակցություն ունենալով երկրամասի քաղաքական և մշակութային զարգացումներին: Հր. Աճառյանի բնորոշմամբ՝ «Աղուանից երկրին մէջ գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր, ուրիշ խօսքով՝ հայ գաղթականական մեծ ճիւղեր: Ասոնք այնպէս ուժեղ էին և այնպէս հաստատուն կերպով տեղաւորուած երկրին մէջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ և ընդհակառակը, զանազան հաջող հանգամանքներու պատճառաւ... աղդեր էին երկրի վրայ...»[103]:

Կուրի ձախափնյակում և մերձկասպյան շրջաններում հայ էթնիկ տարրի վաղեմությունը փաստող ապացույցներից բերենք պատմագրական աղբյուրներում և առանձին ուսումնասիրողների մոտ պահպանված որոշ վկայություններ: Եսայի Հասան-Ջալալյանցը հավաստում է. «Եւ երկիրն էր (Շիրվանը - Գ. Ս.) բարելի և շէն և մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականսն. (ընդգծումը մերն է - Գ. Ս.) և եթէ այլ ազգօք՝ որ բնիկ ի յերկրէն էն...»[104]: Իսկ Սիմեոն Ա Երևանցի պատմագիր կաթողիկոսն հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու և հայակրօն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»[105]: Խիստ ուշագրավ է նաև Սարգիս արքեպ. Ջալալյանցի՝ հայկական գյուղերի մասին եղած հետևյալ վկայակոչումը. «Այսոքիկ գիւղօրայք հին են, և բնակիչքն (հայերը - Գ. Ս.) բնիկ շամախեցիք...»[106]: Շամախիից «Մշակին» 1909 թ. հուլիսին հղած թղթակցությունում գյուղագիր Սմբատ Գարագաշյանը հայերի հնաբնակության վերաբերյալ գրում է. «Հայ գիւղերը Շամախւոյ շրջակայքում գոյութիւն ունին շատ հնուց, տասնեակ դարեր առաջ»[107]: Հարցի վրա լույս է սփռում նաև Ներսես Աբելյանի ուսումնասիրությունում բերված տեղեկությունը, որում ասված է. «Հայերը համարվում են Շիրվանի հին բնակիչների մի մասը: Նրանց այստեղ հայտնվելու ժամանակը վերաբերում է եթե ոչ X-XI դարերին, ապա ամենայն հավանականությամբ շատ ավելի վաղ ժամանակների»[108]: Այս իմաստով ուշագրավ դիտարկում է արել նաև Լեոն՝ նշելով, որ «Հայերը Շիրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չը պէտք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի

[102] Ըստ Ստրաբոնի՝ Բուն Աղվանքում ապրել են 26 տարալեզու ցեղեր (տե՛ս **Страбон**, кн. XI, гл. IV, § 6, стр. 476). Բուն Աղվանքի թագավորության գոյության ընթացքում (մ. թ. ա. I - մ. թ. V դդ.) նրա կազմի մեջ մտած ցեղերի էթնոհամախմբման գործընթացի թուլության հետևանքով Կուրի ստորին հոսանքի ձախափնյակում այդպես էլ չձևավորվեց «աղվան» էթնոս՝ միասնական լեզվով, մշակույթով, ինքնագիտակցությամբ և, հետևաբար, ինքնանվանմամբ: Հարցի մանրամասն քննությունը տե՛ս **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 148, 273, նույնի՝ «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղուանքում, ՀԱ, ՃԺԷ տարի, Վիեննա-Երևան, 2003, էջ 142, տե՛ս նաև **Акопян Ал., Мурадян П., Юзбашян К.**, նշվ. աշխ., էջ 189, տե՛ս նաև Գալստյան Հ., Հակոբյան Ալ., Էթնալեզվական գործընթացները Բուն Աղվանքում (Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Երևան, 2003, էջ 91-92), տե՛ս նաև Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 84:
[103] Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 44:
[104] Եսայի Հասան-Ջալալեանց, էջ 26:
[105] Դիւան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, էջ 417-418:
[106] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., մասն Բ, Տփխիս, 1858, էջ 394:
[107] Գարագաշ Ս., Ի՞նչն է պատճառը (ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 639, թ. 37), հմմտ. Փարոս [Սմբատ Գարագաշեան], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1909, հուլիսի 15, № 151:
[108] Абелов Н., նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 12.

մասն է, իսկ Աղուանից երկիրը, երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական եւ քաղաքական խիստ ազդեցութեան տակ»[109]: Այն հանգամանքը, որ երկրամասում, ավելի ուշ Բաքվի նահանգը կազմող շրջաններում վաղնջական ժամանակներում ստվար հայ բնակչություն է ապրել, վկայում է «Ընթերցող» ծածկանունով հանդես եկող Եղիշե ավ. քհն. Գեղամյանցն իր «Կորած աշխարհից» հոդվածում: «Գուցէ շատերին յայտնի լինի,- գրում է նա,- որ Բագուայ նահանգում մի ժամանակ հայութեան մեծ բնակչութիւն է եղել, որի թշուառ հետքերն են միայն ապրում այսօր»[110]:

Երկրամասում հայերի հնաբնակ լինելը փաստում են նաև ոչ հայկական աղբյուրները: Այդ իմաստով հատկապես ակնառու է ցարական կառավարության պաշտոնյա, կովկասագետ Յու. Գագեմեյստերի տված տեղեկությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ուտիները»[111]: Տեղին է հիշատակել նաև կովկասագետ Ն. Զեյդլիցի հետևյալ ուշագրավ տեսակետը. «Շամախի քաղաքի շրջակայքում սփռված հայկական բնակավայրերը ամենայն հավանականությամբ կազմում են միջին դարերում առավել մեծ քանակությամբ եղած բնակավայրերի մնացորդները»[112]:

Երկրամասում հայերի հնաբնակության, դրանով իսկ՝ հնուց և վաղ միջնադարից եկող մշակութակերտ գործունեության շարունակականության անվիճելի վկայություններ են հայ ճարտարապետության հորինվածքներով կառուցված միջնադարյան բազմաթիվ եկեղեցիները, վանքերը (Քիշի Սբ. Եղիշա Առաքյալ, Ճալեթի Սբ. Աստվածածին, Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա, Մեյսարիի Սբ. Աստվածածին) և մատուռները, հնավայրերի հայերեն բազմաբնույթ արձանագրություններ ունեցող հարյուրավոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցով հարուստ են ուդիական[113] (Նիժ, Վարդաշեն, Ճալեթ, Ջորլու և այլն) և հայկական մի շարք հին գյուղերի (Ամուրավան, Գանձակ, Ղալակա, Վանք, Ռուշանաշեն, Հնզար, Սաղիան, Մատրասա և այլն) գերեզմանատները[114]: Դեռևս Սարգիս արքեպ. Ջալալյանցի, Դանիել արքեպ. Շահնազարյանցի և Մակար եպս. Բարխուտարյանցի շրջագայությունների ժամանակ երկրամասի բազմաթիվ գյուղերում պահպանվել էին դրանց վաղեմի բնակիչների՝ հայերի թողած նյութական մշակույթի հետքերը՝ հին գերեզմանոցներ, եկեղեցիներ, վանքերի ու բերդերի ավերակներ: Պատմական բացառիկ արժեք են ներկայացնում նաև երկրամասի տասնյակ գրչօջախներում (Շամախի, Սաղիան, Մեյսարի, Մատրասա և այլն) XIV-XVIII դդ. ընթացքում ընդօրինակ-

[109] Լ [Լեո], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, № 28:
[110] Ընթերցող [Եղիշե ավ. քհն. Գեղամյանց], Կորած աշխարհից, «Արձագանք», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 12, № 132:
[111] **Гагемейстер Ю.**, Хозяйственный очерк Закавказскаго края: народонаселение (Сборник газеты Кавказа), Тифлис, 1847, стр. 58.
[112] СНМ-1859-1864, стр. 93.
[113] Բուն Աղվանքի տարածքի աղվանական էթնիկ հանրություններից մեկի՝ քրիստոնյա ուդիների գրավոր լեզուն հայերենն է, որով գրվել են ուդիական գերեզմանատների տապանաքարերի և եկեղեցիների արձանագրությունները (տե՛ս **Խառատյան (Առաքելյան) Հ.**, Ուդիների ոդիսականը 18-20-րդ դդ. (Պատմությու՞ն, էթնիկ գոյատևու՞մ, քաղաքականությու՞ն), Հայոց Մեծ եղեռն. 90, Հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 124):
[114] Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 4-5: Երկրամասի տասնյակ հնավայրերի հայատառ արձանագրություններից հնագույնը Մինգեչաուրի մոտ, Սուդագիլան քաղաքամասի՝ Աղվանքում քրիստոնեության առաջին քարոզիչ Սբ. Եղիշա առաքյալի պատվին 640 թ. կառուցված տաճարում գտնված սյունակ կավաքարի արձանագրությունն է: Պրոֆ. Ա. Աբրահամյանն այն վերծանել է հետևյալ կերպ. «Ի թուականութեան երեսներորդի ամիրայն Երակղի...շինեցաւ բաւարան...Սրբոյն Եղիշեայի» (**Абрамян А.**, Дешифровка надписей Кавказских агван, Ереван, 1964, стр. 75-76, նույնի՝ Մինգեչաուրում գտնված հայատառ բեկորների վերծանությունը, «Էջմիածին», 1956, № Դ-Ե, էջ 66):

ված հայերեն ձեռագիր բազմաթիվ մատյանները (ավետարաններ, սաղմոսարաններ, քարոզագրքեր, ճաշոցներ, եկեղեցական ծիսական գրքերի ժողովածուներ՝ մաշտոցներ, ժամագրքեր, խորհրդատետրեր և այլն)[115]։ Երկրամասի գրչության կենտրոններում ոչ միայն ընդօրինակվել են մատյաններ, այլև գրատներում պահվել, կորստից փրկվել և մեզ են հասել այլ վայրերում (Սպահան, Թիֆլիս, Բաբերդ, Արցախ, Գողթան, Նոր Ջուղա, Սյունիք, Մոկս, Կաֆա և այլն) XIV-XIX դդ. ընդօրինակված, նվիրատվությունների կամ այլ ճանապարհներով ձեռք բերված մեծաքանակ արժեքավոր ձեռագրեր, որոնց մի մասն այժմ պահպանվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի գրատանը[116]։ Այսպիսով՝ բերված փաստերն ու վկայությունները հավաստում են Արևելյան Այսրկովկասում հայերի հնաբնակ, երկրամասի էթնիկական պատկերում հայկական չերտի շարունակական գոյության և մշակութակերտ լինելու մասին։ «Այլապես ինչո՞վ բացատրել Աղվանից աշխարհով մեկ սփռված հայերեն արձանագրությունների առատությունը՝ շիրմաքարերի, սրբավայրերի, կահկարասիքի և այլ կառույցների ու առարկաների վրա...։ Դրանք փաստեր են, որոնց չի կարելի շրջանցել և ոչ մի նորահայտ տեսությամբ»,- իրավացիորեն եզրահանգել է Աս. Մնացականյանը[117]։

Տակավին վաղ ժամանակներից՝ Հայոց պետականության ազդեցության ոլորտում Կուրի ձախափնյակի լինելու մասին է վկայում Մովսես Խորենացու՝ Հայկազուն-Երվանդյան Տիգրանի (մ. թ. ա. VI դ.)՝ մարաց թագավոր Աժդահակի դեմ կռվի նախապատրաստվելու առիթով հետևյալ հաղորդումը. «Եւ ժողովէ արքայն Հայոց ի սահմանացն Կապադովկացւոց, և որչափ ընտիրք Վրաց և Աղուանից, և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքունց»[118]։

Պատմական աղբյուրների հաղորդումներից պարզվում է, որ Արևելյան Այսրկովկասի, մասնավորապես մերձկասպյան հյուսիսարևելյան շրջաններում ռազմական կարևոր նշանակություն ունեցող «Ճորայ պահակի» կամ «Դուռն Հոնացի» պաշտպանությունում վաղ ժամանակներից իրենց ուրույն դերակատարությունն են ունեցել հայ նախարարական տները։ XIII դ. հեղինակ Ստեփաննոս Օրբելյանի հաղորդմամբ Սյունյաց նախարարական տունը Տրդատ I արքայի (66-88 թթ.) ժամանակներից մասնակցում էր Ճորա պահակի պաշտպանությանը։ Պատմիչն ասում է, որ Հայոց Վաղարշակ թագավորը (=Տրդատ I) կարգեց Սիսական տոհմը՝ իբրև առաջին նահապետություն և «երկրորդ թագաւորութեան իւրոյ և ընդդէմ կալ հանապազ պատերազմաւ դրանն Հոնաց»[119]։

Կուրի ձախափնյակի մշակութային զարգացումներում հայկական ազդեցությունն առավելապես դրսևորվել է քրիստոնեության և դպրության տարածման ու հաստատման գործում[120]։ Ագաթանգեղոսի հայերեն բնագրի հաղորդմամբ Գրիգոր Լուսավորիչը և Հայոց թագավոր Տրդատ III Մեծը (298-330 թթ.) քրիստոնեության քարոզչությունը տարածեցին «...մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից...»[121]։ Ագաթանգեղոսի երկի վաղագույն տարբերակում, որը կրում է «Գրիգորի վարք»

[115] Տե՛ս Եգանյան Օ., Մեսրոպ արքեպ. Սմբատյանի «Նկարագիր Շամախւոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը,
«Էջմիածին», 1970, № Ա, էջ 45-48։
«Էջմիածին», 1970, № Ա, էջ 45-48։ Ստեփանյան Գ., Շամախու հայոց թեմի գրչության այլ վայրերում գրչագրված եկեղե-
[116] Մանրամասն քննությունը տե՛ս ցապատկան և վանքապատկան մատյանները (XIV-XIX դդ.), «Էջմիածին», 2005, № ԺԲ, էջ 67-73։
ցապատկան և վանքապատկան մատյանները (XIV-XIX դդ.), «Էջմիածին», 2005, № ԺԲ, էջ 67-73։
[117] Մնացականյան Ա., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 94-95։
[118] Խորենացի, էջ 81։
[119] Օրբէլեան, էջ 9։
[120] Տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 28, 35-36.
[121] Ագաթանգեղոս, էջ 439։

անունը[122], ասվում է, որ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայում քահանայապետ ձեռնադրվելուց և Հայաստան վերադառնալուց հետո Բուն Աղվանք է ուղարկել եպիսկոպոս Թովմային՝ Փոքր Հայքի Սատաղ քաղաքից[123]։ Գրիգոր Լուսավորչի հաստատած՝ Աղվանից եպիսկոպոսապետներ ձեռնադրելու կարգը շարունակվեց նաև հետագայում։ Պատմականորեն հավաստի է, որ IV դ. 30-ական թվականների սկզբներին երկրամասում քրիստոնեություն է քարոզել Բուն Աղվանքի և Վիրքի համար եպիսկոպոս կարգված՝ Հայոց կաթողիկոս Վրթանես Ա Պարթևի ավագ որդի Գրիգորիսը[124], որը նահատակվել է Դերբենդից հարավ՝ Կասպից ծովի ափին գտնվող Վատնյա դաշտում, մազքթաց հեթանոս թագավոր Սանեսանի հրամանով[125]։ Բուն Աղվանքում ձևավորված եկեղեցին, ընդունելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գերակայությունը (Հայաստանյայց եկեղեցին «հավասարների մեջ առաջինի» կարգավիճակ ուներ Աղվանից և նախքան քաղկեդոնականությանը VII դ. սկզբներին հարելը նաև Վրաց եկեղեցու նկատմամբ), վարչականորեն և դավանաբանական առումով նրա մասն էր կազմում[126]։ Ըստ Հ. Անասյանի՝ «Աղվաններն ինքնուրույն պետություն են կազմել, երկար ժամանակ ու սերտ շփման մեջ են եղել հայերի հետ, հատկապես քրիստոնեության մուտքից հետո, և ապա հետզհետե ընկել են հայերի ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական ու մշակութային ազդեցության տակ։ Այդ բանում կարևոր դեր է կատարել Աղվանական Եկեղեցին..., որը համարվում էր Հայկական Եկեղեցու արքեպիսկոպոսություններից մեկը»[127]։

Վաղընջական շրջանից հայկական քաղաքակրթության հետ Կուրի ձախափնյակի սերտ կապի, երկրամասում քրիստոնյա, այդ թվում նաև հայ բնակչության առկայության և պահպանված քրիստոնեական ավանդույթների վկայությունն են մատենագրական աղբյուրներում հիշատակվող Կապաղակի, Բաղասականի, Հաշուի, Ցրիի, Բախաղատի և Շաքիի V դարից ի վեր եպիսկոպոսական թեմերը[128], որոնց հենքի վրա X դ. վերջերին XI դ. սկզբներին Աղվանից կաթողիկոսության ենթակայությամբ կազմավորվել են Շամախիի (Շիրվանի) և Շաքիի հայոց թեմերը[129]։

Բուն Աղվանքում գրի, լուսավորության ու քրիստոնեության հետագա տարածումը սերտորեն կապված է Մեսրոպ Մաշտոցի կրթալուսավորական գործունեության հետ, որը V դարի սկզբին Հայաստանում նորաստեղծ գրի ամրապնդումը և լուսավորական գործը հաջո-

[122] «Գրիգորի վարք»-ը մեզ է հասել միայն հունարեն և ասորերեն ու նրանցից կատարված արաբերեն և ասորատառ արաբերեն (քարշունի) թարգմանություններով։ Հունարեն բնագիրը հայտնաբերել ու հրատարակել է բելգիացի հայագետ Ժերար Գարիտը։
Ժերար Գարիտը։ հունարեն նորահայտ խմբագրությունը (Վարք)։ Թարգմանություն հունարեն բնա-
[123] Տե՛ս **Ագաթանգեղոսի** պատմության հունարեն նորահայտ խմբագրությունը (Վարք)։ Թարգմանություն հունարեն բնագրից՝ **Հ. Բարթիկյանի**, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, «Էջմիածին», 1966, № Թ-Ժ, էջ 85, տե՛ս
գրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ, հ. Ա, Երևան, 2002, էջ 178։
նաև **Բարթիկյան Հ.**, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Երևան, 2002, էջ 178։ նաև **Мурадян П.**,
[124] Տե՛ս **Բիւզանդ**, էջ 20; **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա, Կ. Պոլիս, 1912, § 99, էջ 138-139, տե՛ս նաև **Мурадян П.**,
Кавказский культурный мир и культ Григория Просветителя, «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, стр. 5-20,
տե՛ս նաև **Սվազյան Հ.**, Աղվանից կաթողիկոս Մանուկ Գրիգորիս, «Էջմիածին», 2003, № Ջ, էջ 39-46, տե՛ս նաև **Акопян**
Ал., Албания-Алуанк, стр. 124-145, նույնի՝ «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը, էջ 45-142։
[125] Գրիգորիսի նահատակությունը Բ. Հարությունյանի ճշգրտումներից հետո ստույգապես թվագրվում է Տրդատ Մեծ արքայի վախճանից (330 թ.) անմիջապես հետո այսինքն՝ 330-331 թթ. (տե՛ս **Հարությունյան Բ.**, Մազքթաց Սանեսան
բայի վախճանից (330 թ.) անմիջապես հետո այսինքն՝ 330-331 թթ. (տե՛ս Հարությունյան Բ., Մազքթաց Սանեսան
թագավորի արշավանքը Հայաստան, ԼՀԳ, Երևան, 1981, № 6, էջ 76-77)։
[126] Տե՛ս **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 137, տե՛ս նաև **Հակոբյան Ալ.**, Արևելյան Այսրկովկասում հայկական և
իրանական էթնոմշակութային ներդրումների շուրջ (մի խմբի ձևավորման օրինակով), «ՍԱ», պր. Ա, Երևան, 2002, էջ 33։
[127] **Անասյան Հ.**, Աղուանք եւ Աղուանից կաթողիկոսութիւն (Հայկական մատենագիտություն, հ. Ա, Ե-ԺԸ դդ., Երևան, 1959, էջ 614)։
[128] Տե՛ս **Կորյուն**, էջ 70, 72, **Խորենացի**, էջ 340, **Կաղանկատուացի**, էջ 89, 122, 346։
[129] Մանրամասն տե՛ս **Ստեփանյան Գ.**, Շամախու հայոց թեմի սկզբնավորման հարցի շուրջ, ՀՊՃՀ (տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2005, № 3, էջ 870-873։

ղությամբ ավարտին հասցնելուց հետո նույն առաքելությամբ անցել է նաև Բուն Աղվանք և Եսվաղեն թագավորի, Երեմիա եպիսկոպոսի ու Բենիամին երեցի օգնությամբ տարածել իր ստեղծած աղվանական նշանագրերը[130], ինչին հաջորդեց դպրանոցների բացումը: Կորյունի հավաստմամբ՝ եպիսկոպոսն ու թագավորը «...յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային ևս հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել և գումարել՝ ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց...»[131]:

Վաղ միջնադարում ևս՝ մինչև Հայոց թագավորության անկումը (428 թ.) Աղվանից թագավորությունը որոշ ընդհատումներով գտնվել է հայկական թագավորության քաղաքական և մշակութային ազդեցության ներքո, ինչի խոսուն վկայությանն ենք հանդիպում Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում. «Սկիզբն առաջնոյ պատմութեանն եդաք զսուրբ Լուսաւորիչն Հայոց...զսուրբն Գրիգորիոս... Իսկ երկրորդ հատուածիս դիցուք զգլուխ զլուսաւորիչս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւատակցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք, հայերէնախօսք յոլովք էին. թագաւորքն՝ հնազանդք թագաւորացն Հայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսքն՝ ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ կացեալ ի կրօնս, վասն այնորիկ արժան է ի միասին լինել յիշատակ երկուց ազգացս»[132]: Ն. Ակինյանի դիտարկմամբ՝ «...Աղուանից աշխարհը ոչ միայն... Մեծ Հայաստանի հովանւոյն տակ ապրած էր եւ անոր մշակոյթով սնած, այլ եւ... կրօնքով եղբայրացած... թէպէտ յետոյ քաղաքականապէս անկէ բաժնուած, բայց եղած է... անոր հետ դաշնակից եւ դրացիութեամբ հաղորդակից»[133]:

Մեծ Հայքի հյուսիսարևելյան Արցախ և Ուտիք նահանգներից հայոց ազդեցությունը Բուն Աղվանքի տարածքների վրա ուժեղացավ հատկապես Վաչագան Բարեպաշտ թագավորի երկարատև ու արդյունավետ իշխանության (485-VI դարի առաջին կես) շրջանում, որն արքայաբար իշխեց «Արցախայ ամուր աշխարհին» և «ի Կամբէճս և յԱղուանս»[134]: Վաչագան Բարեպաշտը պատմության մեջ թողել է ազգանվեր ու եկեղեցասեր գործչի բարի համբավ: Նրա հայրենասիրական և աստվածահաճո գործունեությունը գովեստով է ներկայացվում հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում. «Սա եղև դուռն լուսոյ աստուածագիտութեան և բազմազան բարեաց օրինակ երջանիկս այս»[135]:

Կուրի ձախափնյակի էթնոմշակութային զարգացումների վրա տարածվող աջափնյակի հայության ազգային-մշակութային և եկեղեցական ավանդույթների հետագա ամրապնդմանը

[130] Տե՛ս Կորյուն, էջ 70, Խորենացի, էջ 329, Կաղանկատուացի, էջ 117: Տե՛ս նաև **Шанидзе А.**, Новооткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки, **Абуладзе И.**, К открытию алфавита кавказских албанцев, стр. 1-68, 69-71, Тбилиси, 1938, **Ակինեան Ն.**, Ս. Մաշտոց վարդապետ. կեանքն եւ գործունէութիւնը, հանդերձ կենսագրութեամբ Ս. Սախսկայ, Վիեննա, 1949, էջ 295-319, **Աճառյան Հր.**, Հայոց գրերը, խմբագրությամբ՝ Է. Աղայանի, Երևան, 1984, էջ 213-220, 677-686, **Абрамян А.**, նշվ. աշխ., էջ 73, **Յակոբեան Ա.**, Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները (Հայոց գրեր 1600: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2006, էջ 123-191); The Cavcasian Albanian palimpsests of Mt. Sinai, vol. II, edited by Jost Gippert, Wolfgang Schulze, **Zaza Aleksidze** and **Jean Pierre Mane**, Brepols, 2008.

[131] Կորյուն, էջ 70:

[132] Գանձակեցի, էջ 192:

[133] **Ակինեան Ն.**, նշվ. աշխ., էջ 315:

[134] Կաղանկատուացի, էջ 47, 50, տե՛ս նաև **Ուլուբաբյան Բ.**, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1981, 141-142, տե՛ս նաև **Դանիէլեան Է.**, Գանձասարի պատմութիւն, Երեւան, 2005, էջ 43:

[135] Կաղանկատուացի, էջ 83:

նպաստեց Աղվանից հայրապետական աթոռը 552 թ. Չող-Դերբենդից Հայոց Արևելից (Արցախ, Ուտիք) կողմանց Ուտիքի Պարտավ քաղաք[136], այսինքն՝ բուն հայկական միջավայր տեղափոխելը[137]: «...VI դ. երկրորդ կեսին,- գրում է Ալ. Հակոբյանը,- Աղվանից եկեղեցին ազգային տեսանկյունից դարձավ առավել հայկական, քան աղվանական, չնայած որ այն ընդգրկում էր աղվանական տարացեղ բնակչություն ունեցող ձախափնյա լայնարձակ տարածքներ...»[138]: Նորաստեղծ առաջնորդության գահակալ է ձեռնադրվում Արցախի Մեծ Առանք (Մեծիրանք) գավառի եպիսկոպոս Տեր Աբասը (552-596 թթ.). «Առ սովաւ կալան սովորութիւն գրել ի պատրուակ թղթի՝ Աղուանից, Լփնաց և Չորայ կաթողիկոսի»[139]: Հարկ է նշել, որ աղբյուրներում նորահաստատ առաջնորդության «Աղուանից» անվանումը Հայոց Արևելից Արցախ և Ուտիք նահանգներում բացառապես կիրառվել է եկեղեցա-իրավական բովանդակությամբ[140]: Ուստի հայ պատմիչները Արցախ-Ուտիքյան հայաշխարհը և սրանց հարակից շրջաններն անվանել են «Հայոց Արևելից կողմանք», «Կողմանք Արևելից», «Երկիրն Աղուանից», «Աղուանից կողմանք», «Խորին Հայք»[141]: XII դ. պատմիչ Մատթեոս Ուռհայեցին հետևյալ պարզաբանումն է տալիս Հայաղվանքին, թե՝ «...յաշխարհն Աղուանից, որ ասի՝ խորին աշխարհ Հայոց...»[142]: Ինչպես նշում է Է. Դանիելյանը. «Հայ Առաքելական Եկեղեցու աւանդոյթների վրայ հիմնուած «Աղուանից» հայրապետութիւնը Հայոց դաւանաբանութեան հետեւորդն էր: Հայկական ծագմամբ «Աղուանք»[143] անուանումը, յետագայում եկեղեցական իմաստ ստանալով, հայկական աղբիւրներում սկսեց կիրառուել նաեւ Արցախ եւ Ուտիք նահանգների թեմերի առումով»[144]:

Աղվանից կաթողիկոսությունը (XIV դարի վերջերից - XV դարի սկզբներից Գանձասարի անվամբ)[145] ընդունելով Հայոց եկեղեցու գերակայությունը, համարվում էր նրա նվիրապետական աթոռներից մեկը, իսկ կաթողիկոսները ձեռնադրվում էին Հայոց հայրապետի կողմից[146]: Սիմեոն Երևանցի կաթողիկոսի վկայությամբ՝ «...զի յորքան ժամանակս Կաթուղիկոսքն Հայոց նստէին յերկիրս Հայոց ի բնիկ և ի սեպհական յաթոռն Լուսաւորչին, Կաթուղիկոսքն Աղուանից միշտ ընդ ձեռամբ սոցին են լեալք, և հրամանաւ սոցին են ձեռնադրեցեալք»[147]: Որ վաղ միջնադարից ձախափնյակի թեմերը գտնվում էին Էջմիածնի կաթողիկոսության տնօրինության տակ, վկայում է նաև Շահ Սաֆիի (1629-1642 թթ.)՝ 1634 թ. հրամանագրի հետևյալ

[136] Տե՛ս նույն տեղում, էջ 119:

[137] Տե՛ս **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 134-138, նույնի՝ Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման ժամանակի մասին, ՍՄԱԵԺ, պր. XXVI, Երևան, 2007, էջ 73, տե՛ս նաև **Դանիէլեան Է.**, Գանձասարի վանքը, Երեւան, 2009, էջ 16:

[138] **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 139-140.

[139] Կաղանկատուացի, էջ 343:

[140] Տե՛ս **Ուլուբաբեան Բ.**, Աղուանից կաթողիկոսութեան ստեղծման հանգամանքների հարցի շուրջ, ՀՀՀ, Պէյրութ, 1979, h. Է, էջ 48, տե՛ս նաև **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 273-274, տե՛ս նաև **Դանիէլեան Է.**, Գանձասարի պատմութիւն, էջ 55:

[141] Տե՛ս **Մնացականյան Ա.**, նշվ. աշխ., էջ 5:

[142] **Ուռհայեցի**, էջ 230:

[143] «Աղուանք» անվան ստուգաբանման մանրամասն քննությունը տե՛ս **Աղաբեկյան Մ.**, Ստուգաբանական դիտողություններ «Աղուանք» տեղանվան վերաբերյալ, ՊԲՀ, Երևան, 1990, № 1, էջ 168-177:

[144] **Դանիէլեան Է.**, Գանձասարի վանքը, էջ 16-17:

[145] Տե՛ս **Մկրտումյան Լ.**, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006, տե՛ս նաև **Բալայան Մ.**, Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009, էջ 168:

[146] Տե՛ս **Օրմանեան Մ.**, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ. Պոլիս, 1911, էջ 162; **Ուլուբաբյան Բ.**, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 119, տե՛ս նաև **Դանիէլեան Է.**, Գանձասարի պատմութիւն, էջ 47:

[147] **Սիմէոն Երեւանցի**, էջ 77:

տեղեկությունը. «…Շամախու և Շիրվանի հայերը զեկուցեցին այն մասին, որ հին ժամանակներից ի վեր նրանց կաթողիկոսը Ուչքիլիսայինն (Սբ. Էջմիածնին - Գ. Ս.) է եղել…»[148]:

Ըստ Եղիշե պատմիչի՝ V դ., երբ Հայաստանի մեծ մասը ենթակա էր Սասանյան Իրանին և ուներ մարզպանության կարգավիճակ, պարսից արքունիքը հայ նախարարական տներին ևս ներգրավել էր «Ճորայ պահակի» պաշտպանության գործում[149]: Այս իրողությունը փաստել է նաև Ղազար Փարպեցին, որի հաղորդմամբ Վասակ Սյունին Վրաստանի մարզպան նշանակված ժամանակ (439-443 թթ.) պաշտպանում էր նաև Կովկասյան նշանավոր լեռնանցքը: Ինչպես հետևում է Վասակ Սյունու խոսքից՝ «…ես մինչ Վրաց մարզպանն էի և դուռն Ալուանից յիմում ձեռին էր…»[150]: «Ճորայ պահակի» պաշտպանության նպատակով հայ, մասնավորապես սյունեցի զինվորականության և խաղաղ բնակչության հաստատումը ուժեղացավ V դարի վերջերին և VI դարի սկզբներին՝ Կասպից ծովի արևմտյան ափի երկայնքով Իրանի քաղաքական դիրքերի ամրապնդման ընթացքում: Հայրենիքից՝ հայերի հեռացնելու Սասանյանների ծրագիրը, ըստ էության, երկու նպատակ էր հետապնդում: Նախ՝ դա թելադրվում էր զուտ ռազմական անհրաժեշտությամբ, ապա՝ պարբերաբար բռնկվող հայ ազատագրական շարժումները ռազմական ուժից զրկելու ձգտմամբ[151]: IX դ. արաբ հեղինակ Բալազուրին հաղորդում է, որ Խոսրով I Անուշիրվանը (531-579 թթ.) իր կառուցած պաշտպանական ամրություններում՝ Շաբիրանում, Մասկատում և Բաբ ալ-Աբվաբում (Դերբենդ), Իրանից բերված բնակիչների[152] հետ մեկտեղ բնակեցրեց Սյունիքից տեղափոխած «քաջարի ու կռովի մարդկանց», որոնց նա կոչում էր Սիյասիջիններ (սիսականցիներ)[153]:

Արաբական արշավանքների շրջանում Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի արաբ կուսակալ Մուավիայի միջև 652 թ. կնքված պայմանագրով Հայաստանի և Վիրքի հետ միասին Կուրից հյուսիս, Բուն Աղվանքի ընդգրկմամբ, ընդհուպ մինչև Դերբենդ ընկած տարածքների իշխանությունը հանձնվեց Ռշտունուն: Սեբեոսի վկայությամբ՝ «Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն Ճորայ…»[154]:

Կուրի ձախափնյակում հայ բնակչության հետագա հաստատումն աճը հատկապես պայմանավորված էր 775 թ. Տարոնից Շաքի եկած և այդտեղ հաստատված Աշոտ Բագրատունու երեք եղբորորդիների կողմից տեղի իշխանության հիմնադրմամբ: Տարոնի հայ Բագրատունի իշխանների՝ Շաքիում հաստատվելու և այն որպես կալվածք վրաց թագավոր Արչիլի կողմից ստանալու մասին «Քարթլիս Ցխովրեբայում» ասված է. «Ատրներսեհ (Աշոտ Բագրատունու - Գ. Ս.) Կույրի եղբորորդիք, երեք եղբայրները… Տարոնից էին եկել Շաքի ու հաստատվել այնտեղ Արչիլի հրամանով, քանի որ Կովկասի բոլոր ծայրերը Ռանի կողմից անբնակ էին դարձել… և երեք եղբայրները հաստատվեցին մինչև Գուղգուղ (Գուլգուլ)»[155]: Այդ իշխանության հենքի վրա IX դ. վերջից բարձրացավ Շաքիի հայ Բագրատունիների թագավորությունը՝ Համամ-Հովհաննեսի գլխավորությամբ, հարատևելով մինչև 962 թ.[156]: Շաքիի հայկական թագավորության և նրա թագավոր՝ Համամի որդի Ատրներսեհի կապակցությամբ տեղեկություն է հաղորդում նաև արաբ պատմիչ Մասուդին (աշխատությունն ավարտել է 943 թ.), շաքեցիներին նշելով որպես քրիստոնեական հավատքի հետևորդներ[157]: X դարի մեկ այլ արաբ հեղինակ Մուկադասին, որն իր աշխատությունը գրել է 985 թ., հաղորդում է, որ Շաքիի բնակչության մեծ մասը քրիստոնյաներ էին[158]:

Հնաբնակ հայերից բացի, երկրամասում հայ բնակչության հետագա հաստատումը շարունակվել է XI դարի երկրորդ կեսից սելջուկ-թուրքերի և XIII դարում մոնղոլ-թաթարների ավերաբեր արշավանքների հետևանքով Հայաստանից տեղի ունեցած արտագաղթերի հաշվին: Սելջուկ-թուրքերի նվաճումների ժամանակ Անիի հայ բնակչության մի ստվար զանգված Կասպյան ուղիներով հեռացել և հաստատվել է Մերձվոլգյան շրջաններում՝ Աստրախան, Սարայ, Կազան, իսկ մոնղոլ-թաթարների կողմից Անիի գրավումից հետո նույն ճանապարհով անեցիների մի այլ հատված հաստատվել է Վոլգյան Բուլղարիայում[159]: Անիից դեպի հյուսիս գնացող գաղթականության՝ Կասպից ծովի արևմտյան ափագծի երկայնությամբ սփռվելու մասին գաղթականության՝ XVII դ. տաղասաց Մարտիրոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմայ երկրի» չափածո պատմության մեջ, որտեղ ասվում է, որ անեցիների մի մասը Ղրիմ, Կաֆա, Վան և այլ վայրեր գաղթելուց բացի, «անցանեն ընդ ծովամբն Կասպիական»[160]: Պատմական աղբյուրներին լրացնելու է գալիս ազգային գործիչներից Հովակ Ստեփանյանի հետևյալ տեղեկությունը. «Արմաւիր, Ղզլար, Մոզդոկ, Վլադիկաւկազ, Գրոզնի, Պեատիգորսկ, Կիսլավոդսկ, Դերբենտ, Պետրովսկ, Ղուբա, ապա Բագու, Շամախի, Նուխի եւ այլ տեղերում ապրում են տասնեակ հազարաւոր հայեր, որոնք դարերի ընթացքում արտագաղթի են ենթարկուել քաղաքական եւ տնտեսական պատճառներով Անիի շրջանից»[161]: Անիի պատմությանը նվիրված աշխատության մեջ Թ. Հակոբյանն այս առիթով գրում է. «…Անիի (և Շիրակի) բնակչությունը սփռվել էր մի հսկայական տարածության շրջաններում ու քաղաքներում, որի սահմանը հարավում հասնում էր Միջագետք ու Կիլիկիա, արևելքում՝ Կասպից ծով ու Վոլգա, արևմուտքում՝ Բալկաններ ու Հունգարիա, իսկ հյուսիսում՝ Լեհաստան»[162]: Թաթախոս հայերի պատմաազգագրությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ Ար. Հակոբյանը նշում է, որ միջազգային առևտրական ուղիներին քաջածանոթ անեցիների այդ տեղաշարժերի հետևանքով այդ ճանապարհների վրա գտնվող Մուշմի խումբ հնարավոր է, որ հաստատված լիներ նաև այդ ճանապարհների վրա գտնվող Կուրի, Դերբենդի, Ղուբայի և շրջակա հայկական բնակավայրերում[163]: «Այս մեծ աղէտն

[148] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I (հրովարտակներ), պր. Բ (1601-1650), կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 42, էջ 147:

[149] Եղիշէ, էջ 43:

[150] Փարպեցի, էջ 83:

[151] Մանրամասն քննությունը տե՛ս **Еремян С.**, Сюния и оборона сасанидами кавказских проходов, Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի, Երևան, 1941, № 7 (12), էջ 33-40, **Բարխուդարյան Ս.**, Դերբենդի հայ-աղվանական բազավորությունը, ՊԲՀ, Երևան, 1969, № 3, էջ 125-147, **Աղոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 469-470, **Հակոբյան Ար.**, Արևելյան Այսրկովկասում…, էջ 31-39:

[152] Սասանյանները Աղվանքը Իրանին ենթակա երկիր դարձնելուց հետո քաղաքական իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով V-VI դդ. այդտեղ վերաբնակեցրին Գիլանից, Քաշանից, Սպահանից և Խորասանից տեղափոխած հազարավոր բնակիչների (տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 17):

[153] Տե՛ս **Баладзори**, стр. 5, 7, տե՛ս նաև **Караулов Н.**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане: **Ибн-ал-Факих**, (СМОМПК, вып. XXXI, Тифлис, 1902 стр. 23), տե՛ս նաև Արաբական աղբյուրներ, Գ (Բալազուրի), էջ 266, տե՛ս նաև Մրրման, էջ 5: Հմմտ. վերևում, ծանոթ. 151:

[154] Սեբէոս, էջ 446:

Կ. Ա, էջ 196:

[155] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 196:
Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (Պատմական ուսումնասիրութիւններ), Պարիս, 1948, էջ 125-134, տե՛ս նաև

[156] Տե՛ս **Աղոնց Ն.**, Բագրատունեաց փառքը (Պատմական ուսումնասիրութիւններ), Պարիս, 1948, էջ 125-134, տե՛ս նաև **Բարխուդարյան Ս.**, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դդ., ՊԲՀ, Երևան, 1971, №, 1, էջ 58-72:

[157] Տե՛ս **Караулов Н.**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане: **Масуди** (СМОМПК, вып. 38, Тифлис, 1908, стр. 57), տե՛ս նաև **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 116-117, 211.

[158] Տե՛ս **Караулов Н.**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане: **Ал-Мукаддаси** (СМОМПК, вып. 38, Тифлис, 1908, стр. 9).

[159] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության հ. Ա, Երևան, 1964, էջ 123-124:

[160] **Մարտիրոսյան Ա.**, Մարտիրոս Ղրիմեցի (ուսումնասիրություն և բնագիր), Երևան, 1958, էջ 145:

[161] **Ստեփանեան Յ.**, Մօտիկ անցեալէն, «Հայրենիք», Պօսթըն, 1964, ԽԲ տարի, մայիս, № 5, էջ 45:

[162] **Հակոբյան Թ.**, Անի մայրաքաղաք, Երևան, 1988, էջ 284:

[163] Տե՛ս **Հակոբյան Ար.**, Թաթախոս հայեր, էջ 55-57:

փրկուած Հայեր,- գրում է Ա. Ալպոյաճյանը,- ինչպէս Հայաստանի ուրիշ գաւառներու բնակիչներէն մօտ 40,000 անձ, մայր երկրէն կը փոխադրուին և կը հաստատուին Կովկասեան լեռներու հիւսիսային կողմը...»[163]:

Տեղեկությունների համաձայն` Անիի գաղթականները Մերձվոլգյան և Կասպից ծովի առափնյա շրջաններում երկար չեն մնացել: Մոնղոլ նվաճողները, գրավելով այդ շրջանները էլ, հետապնդել են հայ գաղթականներին, որի հետևանքով անեցիներից շատերը ստիպված են եղել տեղափոխվել և հաստատվել Ղրիմի հարավային շրջաններում[164]: Անեցիների` Կասպից ծովի առափնյա վայրերում հաստատվելու և այդտեղից Ղրիմ գաղթելու պատճառների վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ կան Ղուբայից 1871 թ. հոկտեմբերի 8-ին «Մեղու Հայաստանի» ամսագրին Ներսես Սարումյանցի[165] հղած մի թղթակցության մեջ. «Աւանդութիւնը կպատմէ, թէ սոքա (Խաչմասի, Քիլվարի և Ղարաջալլիի հայերը - Գ. Ս.) Անի քաղաքէն գաղթած են այս տեղ եւ եղած են աւելի քան վեց հարիւր տուն, բայց յետոյ այս տեղից օդոյ եւ եղանակի վնասակարութեան պատճառաւ և մանաւանդ ուրեմն տեղական մահմետական իշխանի անագորոյն եւ բարբարոսական վարմունքէն փոխադրած են իւրեանց բնակութիւնը Խրիմու կողմերը»[166]:

Այսպիսով` պատմական հիշատակումներից կարելի է եզրակացնել, որ թուրք-սելջուկների, ապա մոնղոլ-թաթարների` իրար հաջորդող արշավանքների ու տիրապետության հետևանքով Հայաստանից տեղահանված և դեպի հյուսիս գնացած գաղթականական նոր հոսքերի հետևանքով (որոնց մեջ մեծ թիվ են կազմել անեցիները), որոշ թվով գաղթականներ հաստատվել են Շիրվանում և համալրել հնաբնակ հայերի թիվը` երկրամասում հետզհետե կազմավորելով ստվար բնակչությամբ հայաբնակ գոտի: Ըստ որոշ տեղեկությունների` միջնադարում երկրամասի ողջ տարածքում հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի[167]:

Էթնիկական բարդ խճանկար ունեցող Արևելյան Այսրկովկասում զգալիորեն առկա էր նաև էթնիկ լայն ներկայությամբ և քաղաքական իշխանությամբ օժտված իրանական շերտը: Վերջինս մեծ դեր ունեցավ Արևելյան Այսրկովկասի էթնոմշակութային և էթնոդավանական զարգացումներում, որն ընդհուպ մինչև XV-XVI դդ. արտահայտվեց իրանական մշակույթի, մասնավորապես պարսկերենի (միջին պարսկերենի կամ պահլավերենի, հետագայում նաև նոր պարսկերենի) տարածմամբ[168]: Ինչպես իրավացիորեն նշում է Ար. Հակոբյանը. «...Հայ-իրանական էթնոմշակութային շերտերը էլիտար դիրք ունեին կովկասյանի համեմատ: Սակայն հայ-

[163] Ալպօյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 350:
[164] Տե՛ս Աբիկեան Յ., Համառօտ պատմութիւն հայ գաղթավայրերու, Անթիլիաս-Լիբանան, 1985, էջ 161-162:
[165] Ներսես Անդրեասի Սարումյանը ծնվել է Արցախի Խաչեն գավառի Մեհիշեն գյուղում: Երկար ժամանակ եղել է Բաքվի պատվավոր նոտարը: Նյութապես աջակցել է Ղուբայի հայկական գյուղերի դպրոցներին, եղել գավառի դպրոցների հոգաբարձուների խորհրդի անդամ: Զոհ է գնացել է Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան ջարդերին (տե՛ս «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 274, տե՛ս նաև Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 717-718):
[166] Ներսես Սարումեանց, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1871, հոկտեմբերի 16, № 38, էջ 299, տե՛ս նաև Հակոբյան Ար., Թաթախոս հայերի լեզվական մշակույթի շուրջ (18-րդ. - 20-րդ դ. սկիզբ), «Էջմիածին», 2002, № Թ, էջ 72:
[167] Տե՛ս Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 57:
[168] Տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 30-35, տե՛ս նաև Մարգարյան Հ., Հայաստան, Իրան, Կովկաս (տարածաշրջանային խնդիրներ), «Գիտության գլոբուս», Երևան, 2001, № 1, էջ 65-66, տե՛ս նաև Հակոբյան Ար., Արևելյան Այսրկովկասում..., էջ 26-31:

կականը ենթարկվում էր իրանականին, որի գերակայությունը Արևելյան Այսրկովկասում որոշ փոփոխություններով հանդերձ պահպանվեց մինչև 15-16-րդ դդ.»[169]:

Արևելյան Այսրկովկասն իր աշխարհագրական դիրքով վաղ ժամանակներից եղել է տարբեր ժողովուրդների ու մշակույթների ակտիվ փոխազդեցության, հյուսիսից` Ճորա կամ Դերբենդի դռնով պարբերաբար ասպատակող վաչկատուն ցեղերի, Արևելքի ու Արևմուտքի հզոր տերությունների` Պարթևական թագավորության և Հռոմեական կայսրության, Սասանյանների ու Բյուզանդիայի մրցակցության ու ռազմական բախումների թատերաբեմ` մեծապես տուժել է ավերիչ պատերազմներից և տիրապետություններից: «Ոչ մի երկիր,- գրում է Մակար եպս. Բարխուտարյանցը,- ենթակայ եղած չէ վերջին աստիճան ճնշման, սրածութեան, արիւնահեղութեան, սովի և գերեվարութեան, որքան Աղուանից երկիրն: Աղուանից երկիրն, լինելու հիւսիսից հարաւ և հարաւից հիւսիս անցուդարձ անելու միակ ճանապարհն կամ դուռն, բազմիցս ոտնակոխ է լինում յաճախակի անցուդարձ անող բռնաւորների հրոսակներից մանաւանդ քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ»[170]: VIII դ. սկզբին երկրամասը ընկնում է արաբական տիրապետության տակ, մտցվելով «Արմինիա» (Հայաստան, Վիրք, Աղվանք, մերձկասպյան շրջաններ, Դերբենդ) փոխարքայության կազմում[171]: XI-XV դդ. ընթացքում գտնվում է վաչկատուն օղուզ թուրքերի, մոնղոլ-թաթարների, Լանկ-Թեմուրի, սրանց հետքերով եկած Կարակոյունլու և Աղ-կոյունլու թուրքմեն քոչվոր ցեղերի, ինչպես նաև Սեֆյանների (ղզլբաշների) տիրապետության տակ: Արշավանքներից ու ասպատակություններից տուժել է հատկապես երկրամասի քրիստոնյա բնակչությունը, որի մեծ մասը սպանվել, գերեվարվել կամ դարձել է բնավեր: Շիրվանի երկրի Մատրասա հայկական գյուղում Թումա Թավրիզեցի գրչի` 1403 թ. ընդօրինակած «Մեկնութիւնք եւ քարոզք Մատթէոսի վարդապետի, աշակերտի Գրիգորի Տաթեւացւոյ» ձեռագրի հիշատակարանում Լանկ-Թեմուրի չարագործությունների մասին դառնությամբ արձանագրված է հետևյալը. «Ի նեղ և ի դառն և ի յանձկացեալ ժամանակիս, զի հէնք և երկիւղ և սասանումն և դողումն թշուառականին և նեռին կարապետին` Թամուրին, որ թարքմանի դա մուր, զի ուր և հասանէ մթնատեսակ և մրրատեսակ առնէ, զոմն կողոպտելով, զոմն չարչարելով, զոմն սպանելով, զոմն գերելով, զհայր ի յորդւոյ բաժանելով և զորդի ի հօրէ և այլն: Եւ ոմանք մազապուրծ լինելով ի յայրս և ի ծերպս և յամրոցս և ի դղեակս, և ոչ լինէին ազատելք, զի ոմանք ի սովոյ մեռանէին և այլք ի տօթոյ և ի ծարաւոյ, կէսք ի յաճէ և յերկիւղէ զինքեանս քարավէժ առնէին, և այլ բազում չարիս...»[172]:

Պատմությունը բազում հիշատակություններ է թողել նաև ղզլբաշների[173]` Շիրվանում գործած չարագործությունների մասին: Վերջիններս, չեյխ Հեյդարի գլխավորությամբ 1488 թ. մտնելով Շիրվան, անողոքաբար, առանց սեռի ու տարիքի խտրության կոտորում են Շամախիի բնակչությանը, որոնց թվում նաև քրիստոնյաներին: Հայ անանուն մի հիշատակագիր այդ իրադարձության վերաբերյալ հետևյալ հաղորդումն է թողել. «Որ և ժողովեաց յայսմ ամի

[169] Հակոբյան Ար., Արևելյան Այսրկովկասում..., էջ 39:
[170] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 88-89:
[171] Տե՛ս **Тер-Гевондян А.**, Армения и арабский халифат, Ереван, 1977, стр. 157-160.
[172] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 31:
[173] XV դարում Սեֆյանների գլխավոր հենարան դարձան թյուրքական վաչկատուն ցեղերը, որոնք XV դարի երկրորդ կեսից սկսեցին կրել տասներկու ալ երիզներով չալմա: Հենց սրանց անունով Սեֆյանների պետությունը հաճախ անվանվում է «ղզլբաշական» (տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 296): ստացան «ղզլբաշներ» (թյուրքերեն` «կարմրագլուխներ»), քանի որ այդ ռազմիկ քոչվորները, որպես տարբերանշան,

արս իբրև խՌ. (40,000), եւ գնացեալ խաբեութեամբ եմուտ ի Շամախի, եւ զամենեսեան, որ ի ձեռն էած ի քրիստոնէից եւ ի տաճկաց՝ զարս եւ զկանայս՝ սրով կոտորեաց, և զքաղաքն ամենայն հրով այրեաց...»[174]: Շեյխ Հեյդարի հրամանով գազանաբար սրի են քաշվում նաև մանկահասակ երեխաները՝ աննկարագրելի տանջանքով: Ըստ Մշո Առաքելոց վանքի Ճառընտրի մի հիշատակագրության. «...և զմանր տղայքն ժողովեալ առ ինքն և դիզեալ ի վերայ միմեանց հինգ և վեց, և ինքն ի վերուստ նիզակաւ անցուցանէր մինչև ի ներքին տղայն. և վերացուցեալ նիզակաւն կանգնէր, և տղայքն աղիողորմն թալկանային ոտիւք և ձեռօք ի ծայրս նիզակացն...»[175]: Իսկ շեյխ Իսմայիլի՝ Շիրվանում 1500 թ. գործած հրեշավոր ոճիրների մասին հիշատակարանում ասված է. «...և եկեալ յանկարծակի, մտեալ ի մէջ Շարուանայ տանս... և բազում քրիստոնայք յանկան ի ձեռն անաւրինին և մաշեցան ի սուր սուսերի, և դիակունք ի յերկիր անկան և կերակուր եղան թռչնոց և գազանաց...»[176]: 1501 թ. շեյխ Իսմայիլը գրավեց նաև Բաքուն և Շամախին[177]:

Կուրի ձախափնյակի էթնոմշակութային պատկերում դեռևս պարսիկների, ապա արաբների նվաճումների շրջանում՝ VII-VIII դդ., սկսված մշակութային, քաղաքական և էթնիկական փոփոխություններն ավելի մեծ և ավերիչ բնույթ ստացան թյուրքալեզու քոչվոր ցեղերի ասպատակությունների ու տիրապետության ժամանակաշրջանում[178]: Նստակյաց զարգացած հողագործությունը շատ տեղերում տեղի տվեց քոչվորների անասնապահական տնտեսությանը, ինչը անվերականգնելի հարված էր երկրամասի քաղաքակրթական արժեքներին: «Թյուրքերի համար,- գրում է Լեոն,- Արևելյան Այսրկովկասի տափաստանները հայրենիք դարձել էին 11-13 դարերից ոչ վաղ, երբ տեղի ունեին սելջուկյան և թաթարական արշավանքները, որոնք լինելով վաչկատուն ժողովուրդների տեղափոխություններ, նստեցրին այստեղ հոծ բազմություններ իրանցից իբրև այնպիսի աշխարհագրական միջավայրում, որ կարծես հատկապես ստեղծված էր վաչկատուն տնտեսության համար և լիուլի փոխարինում էր նրանց բուն հայրենիք Միջին Ասիան»[179]: Մահմեդականացված Շաքի-Շիրվան գոտում մինչև XVIII սկզբները իրենց լեզուներն ու էթնիկ դիմագիծը պահպանեցին բուն աղվանական էթնիկ միավորների մի զգալի մասը (լեզգիներ, քրիստոնեություն դավանող ուդիներ)[180]: Իր ազգային նկարագիրը՝ մշակույթն ու լեզուն, հիմնականում անխաթար պահպանել էր հայ բնակչությունը[181]: Շաքի-Շիրվան գոտում բնակվող հայերը ևկվոր թյուրքական ցեղերի կազմակերպած կոտորածներից և հալածանքներից փրկվելու նպատակով բնակություն էին հաստատել նաև լեռնալանջերում, ձորերով ու կիրճերով մեկուսացված վայրերում, ուր պաշտպանության տեսակետից տեղանքն ավելի ապահով էր[182]:

[174] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ, էջ 107:
[175] Սարգիսեան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 1160:
ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, էջ LII:
[176] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (XIII-XVIII դդ.), հ. Ա, էջ 144:
[177] Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. Ա, էջ 144:
Մանր ժամանակագրություններ CHM-1859-1864, стр. 89, տե՛ս նաև **Карпович Ф.**, Арабы и тюрки в Бакинском крае и введение ислама
[178] Տե՛ս CHM-1859-1864, стр. 89, տե՛ս նաև Карпович Ф., ... (СМОМПК, вып. XXVII, Тифлис, 1900, отд. I, стр. 37-53).
[179] Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934, էջ 127:
[180] Տե՛ս CHM-1859-1864, стр. 88-89, տե՛ս նաև **Харатян Г.**, Этноконфессиональные процессы в зоне Шеки-Кабала (XVIII-XX вв.), «Научная мысль Кавказа», Ереван, 2003, № 3, стр. 82-84.
[181] Տե՛ս **Аббас-Кули-Ага Бакиханов**, Гюлистан-Ирам (Введение: топографическое описание Ширвана и Дагестана, положение, наименование стран, происхождение жителей, языков и вероисповедании), Баку, 1926, стр. 13.
[182] Տե՛ս CHM-1859-1864, стр. 89.

XVI-XVII դդ. Շիրվանը գտնվել է մե՛րթ Սեֆյան Իրանի, մե՛րթ Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո: Երեք տասնամյակ տևած թուրք-իրանական տևական պատերազմների հետևանքով մեծապես տուժեցին նաև երկրամասի հայերը: Մուստաֆա-Լալա փաշայի՝ Շիրվանում 1578 թ. գործած սոսկալի ոճիրների մասին ձեռագիր մի հիշատակարանում ասված է. «Եւող եկաւ Խանթամար յերկրէն Քաֆայու (=Թեոդոսիա), և անցաւ ի լեառն Ալըբողայ (?)[183], և մտաւ երկիրն Շարվանայ, շատ աւեր էած, գերեաց զազգքս Հայկազանց (ընդգծումը մերն է - Գ. Ս.), քակեցին ծառն ապրիշումի (իմա՝ մետաքսի - Գ. Ս.)»[184]: Այս արշավանքների և դրանց հետ կապված կողոպուտների հետևանքով սկսեց մոլեգնել սովն ու համաճարակը: Ընդհատվող պատերազմական գործողությունները կործանիչ ազդեցություն ունեցան բնակչության բնական աճի վրա: 1578-1588 թթ. պատերազմների ընթացքում, երբ Թուրքիան Իրանից զավթեց Շիրվանը, օսմանցիների հարկապահանջության անտանելի չափերից դրդված՝ մեծ թվով հայեր 1586 թ. գաղթեցին Իրան: Իրանահայերի պատմությանը նվիրված իր աշխատությունում Հ. Առաքելյանը գրում է. «Ուտէացւոց աշխարհից, Շամախու եւ Գանձակի կողմերից բազմաթիւ հայեր գաղթեցին Պարսկաստան: Դրանք բոլորը գնացին Ասպահան քաղաքը, որտեղ Շահաբբաս բնակեցրեց նրանց»[185]: Հաճախակի կրկնվող թուրք-իրանական պատերազմների հետևանքով Շիրվանից և Արցախից որոշ թվով հայեր 1614-1615 թթ. տեղահանվել են դեպի Արևելյան Վրաստան՝ Կախեթ, ապա Շահ-Աբբաս I-ի (1587-1629 թթ.) հրամանով գաղթել են Իրան[186]:

Թուրք-իրանական պատերազմներն ավարտվեցին 1639 թ. մայիսի 17-ին Կասր-է Շիրինի պայմանագրով, որով Այսրկովկասն ու Ատրպատականը մնացին Սեֆյան Իրանին[187]:

Իրանական տիրապետության շրջանում (XVI-XVIII դդ.) Շիրվանի հայ բնակչությունը ենթարկվեց ոչ միայն տնտեսական, սոցիալական և հարկային ճնշման, այլև ազգային ու կրոնական հալածանքների: Միսիոներ Յոհան Լա Մացը, անդրադառնալով շամախահայության պարտադրվող տուրքերին, Մոսկվայի իր ընկերակցին հասցեագրած նամակում գրում է. «Վերջին ամսվա ընթացքում մեզ մոտ այստեղ տեղի էր ունենում բավականին ուժեղ երկրաշարժ, որը յուրաքանչյուր գիշեր երեք-չորս անգամ ցնցում էր տները: Քանի որ հայերն այդ կապակցությամբ, հանդիսավոր կերպով, բարձրացել էին սարի գագաթը, որպեսզի քաղաքն (Շամախին - Գ. Ս.) աղետից ազատելու համար աղոթեն աստծուն, հարկադրված եղան դրա համար մոտ 200 թուման տուգանք վճարել»[188]: Մեկ այլ նամակում Լա Մացը, դարձյալ անդրադառնալով Շիրվանում հայերի իրավական վիճակին, գրում է. «Ե՛վ Սպահանում, և՛ Իրանի մյուս կողմերում ըստ ամենայնի ջանք են թափում, որպեսզի մարդիկ հրաժարվեն քրիստոնեական կրոնից...: Անգամ Շամախիում հայերին կործանելու զարմանալի միջոցների են դիմում նրանք: Անհիմն տանջանքներ են բարդում նրանց վրա, իսկ գյուղացիներն այն աստիճանի են ճնշված, որ գրեթե բոլորն էլ մտածում են իրենց երկրից հեռանալու մասին և եթե ունենի են ճնշված, որ գրեթե բոլորն էլ

[183] Հարցականը Բ. Սարգիսյանինն է:
[184] Սարգիսեան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 667, հմմտ. **Հովհաննիսյան Աշ.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1959, էջ 63:
[185] Առաքելեան Հ., Պարսկաստանի հայերը (նրանց անցեալը, ներկան եւ ապագան), մասն Ա, Վիեննա, 1911, էջ 42:
[186] Տե՛ս **Петрушевский И.**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Л-д, 1949, стр. 252-253.
[187] Տե՛ս Նաջարյան Հ., Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961, էջ 263-264:
[188] Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 542:

նային ապահով ապաստան՝ այստեղ չէր մնա ոչ ոք»[189]: Նման դաժանության վկայություններից է Պետրոս I-ի կողմից հետախուզական նպատակով Իրան ուղևորվելու ճանապարհին 1716 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին Շամախիում հանգրվանած դեսպան Արտեմի Վոլինսկու հաղորդումը՝ տեղի Խոսրով խանի հրամանով մեհմանդար Ալլա Կուլի-բեկի կողմից Բարխան (Քալախա՞ն - Գ. Ս.) հայկական գյուղի բնակիչներին դաժան ծեծի ենթարկելու մասին[190]:

XVIII դարը երկրամասի քրիստոնյա ազգաբնակչության համար մեծ փորձությունների, էթնիկ ինքնությունը պահպանելու երկարատև ու համառ պայքարի ժամանակաշրջան էր: Դարի առաջին տասնամյակների ընթացքում Շիրվանը մեծապես տուժեց հյուսիսկովկասյան լեռնականների՝ լեզգիների կրկնվող ասպատակություններից ու արշավանքներից, որոնք ուղեկցվում էին հազարավոր մարդկանց գերեվարումով: Լեռնականների արշավանքները դեպի Իրանին ենթակա տարածքներ ձեռնարկվում էին Թուրքիայի դրդմամբ, որն Այսրկովկասին տիրելու նպատակով ձգտում էր թուլացնել Իրանի և Ռուսաստանի ազդեցությունն այդտեղ[191]: Դաղստանի սուննի լեզգիների՝ 1712[192], 1716, 1720, 1721 թվականների արշավանքների ընթացքում Շաքիի և Շամախիի շրջանների հայաբնակ գյուղերը ենթարկվեցին համատարած ասպատակության. կոտորվեց, կողոպտվեց և գերեվարվեց անպաշտպան բնակչությունը[193]: 1721 թ. օգոստոսին տեղի ունեցած արշավանքի ժամանակ կոտորածից և գերեվարությունից մասամբ փրկվեց Շամախի քաղաքի և հարակից հայկական գյուղերի հայ բնակչությունը: Եսայի Հասան-Ջալալյանցի վկայությամբ՝ «Իսկ հայ ազգ քրիստոնեայքն թէ՛ ընիկ քաղաքին, և թէ այլ գիւղօրէից ոչ այնքան վնասեցան կոտորմամբ, այլ սակաւ ոմանք. զի խնայեցին ի նոսա ողորմութեամբն Քրիստոսի. այլ աւարումն ընչիցն ոչ սակաւ եղեւ, նաև գերեվարութիւն զաւակաց և որդւոց նոցա ոչ եւս եղեւ»[194]: XVIII դարի սկզբի առևտրական և հասարակական գործիչ Եղիա Մուշեղյան Կարնեցու «Պատմութիւն խմն կարճառօտ ի վերայ անձկութեանց...» ինքնակենսագրական բնույթի աշխատությունում հիշատակված մի տեղեկությունը հայ բնակչության նկատմամբ լեզգիների 1721 թ. գործած չարագործությունների պերճախոս վկայություն է. «Ընդէ՞ր յորժամ, որ Սուրխայն լազկոց տիրեց Շամախու, 75 հոգի ի հայոց սպանեց, վասն քրիստոնէականի հաւատոյ»[195]: Չնայած այդ ասպատակությունները երկրամասում հանդեցրին բազմաթիվ գյուղերի քայքայման, այդուհանդերձ, Շամախիի շրջակայքում մեծ թվով հայաբնակ գյուղեր շարունակեցին պահպանել իրենց գոյությունը: Կաթոլիկ քարոզիչ Մոնիեի

[189] Նույն տեղում, էջ 542-543:

[190] Տե՛ս **Бушев П.**, Посольство Артемия Волынского в Иран в 1715-1718 гг. (по русским архивам), Москва, 1978, стр. 72.

[191] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 146:

[192] Լեզգիների 1712 թ. արշավանքից հատկապես տուժեց Արեշ գավառի հայկական հնագույն գյուղերից Քանդակը, որը նախքան այդ ուներ 500 տուն հայ բնակչություն (տե՛ս **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 383): Եսայի Հասան-Ջալալյանցի վկայությամբ՝ «Այժմս եկեալ (լեզգիները - Գ. Ս.) ի Քանտար անուն գիւղօրայս՝ իսպառ տարան» (**Եսայի Հասան-Ջալալեանց**, էջ 23): Դատելով բնագրի շարադրանքից՝ Բ. Ուլուբաբյանը ենթադրել է, որ Քանդակը եղել է հարակից գյուղերի ընդհանուր անունը (տե՛ս Համառոտ պատմություն Աղվանից երկրի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1997, էջ 42):

[193] **Եսայի Հասան-Ջալալեանց**, էջ 31:

[194] Նույն տեղում, էջ 33:

[195] **Կարապետեան Մ.**, ԺԸ դարի առաջին քառորդի մի երկխօսութիւն, ՀԱ, ՃԻԳ տարի, № 1-12, Վիեննա-Երեւան, 2009, էջ 430:

տված մի տեղեկության համաձայն՝ XVIII դարի սկզբներին միայն Շամախիի շրջակայքում կային մոտ 60 հայաբնակ գյուղեր[196]:

XVIII դարի սկզբներին Ռուսաստանը կարողացավ օգտագործել Իրանի թուլացումը և վճռական քայլեր ձեռնարկեց Կասպից ծովի արևմտյան և հարավային ափերը տիրելու ուղղությամբ: 1723 թ. հուլիսի 28-ին ռուսական ծովային արշավախումբը գեներալ-լեյտենանտ Մ. Մատյուշկինի հրամանատարությամբ գրավեց Բաքուն, իսկ աշնանը նաև Սալյանը, Գիլանը և Մազանդարանը: Թուրքիան, որ ուշի-ուշով հետևում էր Այսրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին, Ռուսաստանի առաջխաղացումը կասեցնելու համար զավթողական պատերազմներ սկսեց Արևելքում: Ռուսաստանը, հաշվի առնելով Թուրքիայի դեմ պատերազմելու դժվարությունները, 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքեց պայմանագիր, ըստ որի՝ Թուրքիան ճանաչեց Ռուսաստանի իրավունքներն Իրանի մերձկասպյան շրջաններում, իսկ Ռուսաստանը, փոխադարձաբար, Թուրքիայի իրավունքները՝ Իրանի այսրկովկասյան տիրույթների նկատմամբ[197]: Հայտնի է, որ այդ շրջանում Այսրկովկասի քրիստոնյա ժողովուրդների քաղաքական կողմնորոշումը Ռուսաստանի կողմն էր: Ռուսաստանը, որի օգնության հետ մեծ հույսեր էր կապում նաև երկրամասի քրիստոնյա բնակչությունը, ճակատագրական պահին վերջիններիս թողեց թուրք ու պարսիկ բռնակալների ողորմածությանը: Վերահաս վտանգը ժամանակին կանխազգացել էր Մեյսարիի վանքի վանահայր Մարտիրոս եպիսկոպոսը, որը դեռևս 1724 թ. փետրվարի 24-ին Դերբենդի պարետ Ա. Յունգերին հղած նամակում զգուշացրել էր թուրքերի՝ դեպի մերձկասպյան շրջանները նախապատրաստվող հարձակման մասին: Նամակում ասվում էր նաև, որ թուրքերը պատրաստվում են հաշվեհարդար տեսնել Շամախիի և հարևան շրջանների հայ բնակչության հետ և այդ նպատակով խնդրում էր շուտափույթ ռուսական զորք ուղարկել Շամախի և Նիզաբադ՝ խոստանալով տեղի հայ մարտիկների օժանդակությունը[198]: Մարտիրոս եպիսկոպոսի՝ Ա. Յունգերին գրած մարտի 6-ի նամակում ուղղակի ասված է, որ թուրքերը նախապատրաստվում են կազմակերպել հայերի կոտորած. «...Ուռուս գալիս է, ուրախացէլ էք, ձեզ յենց կոտորենք, որ նոցա երես չի տեսնուք»[199]: Այն հանգամանքը, որ Օսմանյան Թուրքիան անթաքույց կերպով «իրենն» էր համարում Դերբենդն ու Բաքուն և դրան հասնելու համար ձգտում էր վերացնել հայկական սեպը, վկայում է հետևյալ փաստը. 1725 թ. մարտի 1-ին Վարանդայի ճակատամարտում գերի ընկած Սալահ փաշան, պատասխանելով այն հարցին, թե դուք ինչպե՞ս եք եկել այս երկիրը, առանց թաքցնելու ասել էր. «...Մեր թագաւորն հրաման է արարեալ, որ պիտի մեք այս երկիրներիս հայն և ղզլպաշն փչացնեմք. չուն որ Ռուս թագաւորի զօրքն ծովի այս կողմս են անցել, մեք նոցա վերա պիտի գնամք. հայն այս մէջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինիլ, որ մեր ճանապարհն բացուի. նաև ասաց այս փաշաս, թէ Դուք չէիք այս միջումս, մեք հիմա Դարպանտու և Պաքու վերա էինք գնացել, որ ղաւիմի մերն է (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»[200]: Թուրք փաշայի վկայությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դեռևս XVIII դարի 20-ական թվականներին Օսմանյան Թուրքիան

[196] Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères. Nouvelle édition. Mémoires du Levant, p. 14, տե՛ս նաև **Թաջիրյան Է.**, Կոռնելի լը Բրյունի «Ուղեգրությունը» որպես աղբյուր հայ գաղթօջախների պատմության, «Իրան-նամէ», Երեւան, 1993, սեպտեմբեր, № 4, էջ 21:

[197] Տե՛ս **Զուլալյան Մ.**, նշվ. աշխ., էջ 195-197:

[198] Տե՛ս Армяно-русские отношения в I-ой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, под редакцией **А. Иоаннисяна**, Ереван, 1967, стр. 72-73.

[199] Նույն տեղում, стр. 81.

[200] Նույն տեղում, стр. 249.

յան Թուրքիայի կողմից՝ Կովկասում տարվող քաղաքականության մեջ որոշակիորեն ուրվագծվում էր համաթուրքականության (պանթուրքիզմ) գաղափարախոսությունը: Հայկական լեռնաշխարհի արևելքում՝ Արցախի, Սյունիքի և Արևելյան Այսրկովկասի հոծ հայ բնակչությունն էր, որ, սեպի պես խրված լինելով դեպի Դերբենդ և Բաքու տանող ճանապարհին, թույլ չէր տալիս Թուրքիային՝ իրականացնելու իր ծրագիրը: Միակ միջոցը վերջինս համարում էր հայերի կոտորածներն ու տեղահանությունը:

Հակահայկական առաջին գործողությունները սկսեցին Դաղստանի սուննի լեզգիները՝ դարձյալ թուրքերի հրահրմամբ: 1724 թ. նրանք ասպատակեցին Շամախիի, Շաքիի և Ղուբայի գավառների անպաշտպան մնացած հայերի և ուդիների բնակավայրերը: Լեոյի բնորոշմամբ՝ «Այս մի սարսափելի աղետ էր ամբողջ հայ ազգաբնակչության համար, որ ապրում էր Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտներում՝ մինչև Կուր գետը և արևելյան ստորոտներում՝ մինչև Կասպից ծովը»[201]: Լեռնականների ավերիչ արշավանքի մասին վավերագիրը վկայում էր. «...Վա՛յ մեզ, վա՛յ մեր Հայոց գլխին, որ վասն մեր մեղաց Աստուած բարկացել է մեզ վերայ, որ փուչանանք. առաջ Շամախին ղասանին ժողուրդ չափմիչ արարին. Ղափալաւ ԼԷ (37) գեղ չափմիչ արարին. Ղարասուլի գեղերանք թուրքացրին. Շաքուայ երկրի գեղերանք ևս թուրքացրին. Ղարապաղու երկիր ամէն չափմիչ արին...»[202]: Երկրամասի ուդիները 1724 թ. մարտի 20-ին Պետրոս I-ին հղած նամակում մանրամասն ձևով նկարագրում են մահմեդականների կողմից եկեղեցիների այրումը, հոգևորականների սպանությունը, կանանց և երեխաների գերեվարությունը և բռնի թրքացումը: Նամակում մասնավորապես ասվում էր. «...անօրէնք և անհաւատք. նախ՝ եկեղեցիք այրեցին և արարին ընդ մեզ բազում չարիք ի ներհակ առ հաւատոց մերոց, քահանայք ուրացուցին և ոմն սպանեցին, կանայք ընդ որդովք իւրեանց գերեվարեցին, որդիք ընդ մայրս նմին նոցին, վանք և անապատք անմարդաբնակ եղեալ կան մինչև այսօր և մեք մնացօղքս կանք ի մէջ չարչարանաց, ոչ կենդանի եմք և ոչ մեռած: Մեք Աղուվանք եմք և ազգով Ուտիք»[203]:

Քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ հալածանքներ եղան նաև Բաքվում: Տեղի յուզբաշի Մահմուդ-Կուլին նպատակադրվել էր ջարդել քաղաքում մնացած ոչ մեծ թվով ռուսական կայազորի զինվորներին, այդ իսկ պատճառով նրանցից շատերը հեռացան քաղաքից, իսկ աղքատ խավն ուղարկվեց Ռուսաստան: Քաղաքում մնացին միայն հայերն ու հնդիկները, որոնք այդտեղ զբաղվում էին առևտրով[204]:

Լեզգիների ավերիչ ասպատակությունների, գերեվարությունների ու բռնի մահմեդականացումների հետևանքով Շաքիի, Շամախիի և Ղուբայի գավառների հայկական և ուդիական բազմաթիվ գյուղեր դարձան սակավամարդ կամ ամբողջովին դատարկվեցին: Շատերը սրի էին քաշվել, ոմանք՝ գերի տարվել, իսկ մնացածները դառն աղքատության մեջ էին: Այս հանգամանքն այնքան ակնառու էր, որ չվրիպեց նաև օտարերկրացիների ուշադրությունից: Ռուսական բանակի սպա, 1796 թ. իրանական արշավանքի մասնակից Հովհան-Գուստավ Գերբերը գրում է, որ լեզգիները ոչ միայն ավերել էին հայապատկան գյուղերը, այլև երեխաներին և կանանց գերել ու վաճառքի հանել[205]: Մեկ այլ հեղինակ՝ պրուսացի ազգագրագետ և ճանապարհորդ բարոն Ավգուստ Ֆոն Հաքստհաուզենը 1844 թ., երկրամասում ճանապարհորդելու ժամանակ գրել է. «...Բոզ-դաղի լեռնաշղթայի ամբողջ գծով և Շամախիի լեռնային շրջաննե-

Երևան, 1973, էջ 213:

[201] Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, Армяно...

րում տարածված են հայկական բնակավայրերը: Բոզ-դաղում և Շաքիի պրովինցիայում, սկսած Նուխիից մինչև Զատմաս (Խաչմաս – Գ. Ս.), ճանապարհորդը ամենուր հանդիպում է քանդված ու կիսաքանդ քրիստոնեական եկեղեցիների ու վանքերի ավերակներ, որոնք նախկինում պատկանել են ու պատկանում են հայերին»[206]:

XVIII դ. սկսած՝ թյուրքալեզու քոչվորների նստակեցության անցման շրջանում, երկրամասի մի զգալի տարածքում՝ Շաքի-Շիրվան գոտում ընթացող բռնի մահմեդականացման և թրքալեզվացման քաղաքականությունն ավելի ծավալվեց դարի երկրորդ կեսից, որը զգալիորեն անդրադարձավ ինչպես հայ, այնպես էլ ուդի բնակչության վրա[207]: Ըստ Հ. Խառատյանի՝ այդ քաղաքականությունը «օրինաչափորեն համապատասխանում էր թրքալեզու-մահմեդական ղզլբաշների միասնական ժողովուրդ ձևավորվելու գործընթացին»[208]: Դավանափոխ հայերն ու ուդիները աստիճանաբար դարձան թրքախոս: Դրանում իր բացասական դերն ունեցավ հատկապես մահմեդական դարձած Հաջի Չալաբի խանը, որի հայրը եղել է դավանափոխ հայ երեց[209]: Շաքի-Շիրվան գոտում դավանափոխների թիվը Սարգիս արքեպ. Ջալալյանցը նշում է 14000[210], Մակար եպս. Բարխուտարյանցը «տաճկացեալ հայոց» թիվը նշում է 15480 ծուխ, որից միայն 500-ը՝ Գյոքչայի գավառի Թալասարան գյուղում և շրջակայքում[211], իսկ Ղազար քհն. Հովսեփյանցը՝ 100000 մարդ[212]: Ոչ նպաստավոր էթնոգործընթացների կիզակետում հայտնված տեղի քրիստոնյա բնակիչներից շատերը (ինչպես հայ, այնպես էլ ուդի) այդ և հետագա տարիներին թեև մահմեդական և թյուրքալեզու տարրերով շրջապատված լինելու պատճառով հարկադրաբար ընդունել էին մահմեդականություն և դարձել թրքախոս, այնուհանդերձ, նրանց քրիստոնյա մնացած հատվածը հիմնականում պահպանեց իր ազգային նկարագիրը: Իսկ մահմեդականացածների մի զգալի մասը էթնիկ ինքնագիտակցությունը պահպանեց տևական ժամանակ: Իրենց իսկ խոստովանությամբ՝ «...Մենք, մի բուռ թրքախօս հայերս, թէև անօրէն լեռնականներին և արիւնարբու մահմեդականներին զոհ տուինք մեր թանկագին մայրենի լեզուն, մեր կեանքն ու հարստութիւնը, բայց մեր կրօնքն ու հաւատը, մեր ազգութիւնն ու մեր ս. եկեղեցին արեան գնով անխախտ ու հաստատ պահեցինք»[213]: Նույնը չի կարելի ասել Ապշերոնյան թերակղզում բնակվող հայության համար: «Մահամմէդականութեան ահեղ հոսանքից,- գրում է Ն. Աբելյանը,- Շիրվանում զերծ են մնում Ղուբի (Ղուբայի – Գ. Ս.), Գէօգչայի և Շամախիի գաւառների քրիստոնեաները, մինչդեռ Բաքուի գաւառում քրիստոնեայ հայերը սպառվում են, թողնելով մի քանի աննշան հետքեր»[214]:

Թեև բռնի մահմեդականացման գործընթացը և լեռնականների ասպատակությունները երկրամասում հանգեցրել էին քրիստոնեական բազմաթիվ գյուղերի քայքայմանը, այդուհանդերձ քրիստոնյա ազգաբնակչությունը, այդ թվում նաև հայերը շարունակում էին մնալ երկ-

[206] Закавказский край, Заметки о семейной и общественной жизни об отношениях между Черным и Каспийским морями. Путевые впечатления и воспоминания **Барона Августа фонь-Гакстгаузена**, ч. II, СПб., 1857, стр. 208-209.
[207] Տե՛ս **Խառատյան (Առաքելյան)** Հ., Եղիշե Առաքյալի պաշտամունքն ուդիների մեջ և Ուտի գավառի հարցի շուրջ, ԼՀԳ, Երևան, 1991, № 6, էջ 69:
[208] **Խառատյան (Առաքելյան)** Հ., Ուդիներ (Աղվանների առասպելը), «Իրան-նամէ», 1994, № 2, էջ 14:
[209] Տե՛ս Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, էջ 154:
[210] **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 368:
[211] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 291-292:
[212] Տե՛ս **Ղազար քհյ Յովսէփեան**, Նուխուայ գաւառի մահմեդական հայերը (Թոփչեան Ե., Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1905 թ., Թիֆլիս, 1904, էջ 193):
[213] **Ղազար քհյ Յովսէփեան**, Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, 1904, էջ 31:
[214] **Աբէլեան Ն.**, Արքունական հայ գիւղացին Անդրկովկասում (II). Բաքուի նահանգ, «Արձագանք», Թիֆլիս, 1887, օգոստոսի 16, № 30, էջ 443:

բամասի ստվարաթիվ էթնիկ հանրություններից մեկը: Վրաց անանուն աշխարհագրի՝ 1769 թ. հեղինակած «Վրաստանին կից երկրների նկարագրությունը» երկում ասված է. «...այս երկրում (Շաքիում - Գ. Ս.) բնակվում են շատ քրիստոնյաներ (դավանությամբ) հայեր՝ բացահայտ...»[215]: Այս առումով ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Հ. Գերբերը՝ նշելով, որ հիշյալ ժամանակահատվածում Մուշկուրում, Դերբենդում, Շամախիում և Բաքվում բնակվում էին մեծ թվով հայեր, իսկ Կապաղակում բնակչության մեծամասնությունն էին[216]: Ա. Ալպոյաճյանի դիպուկ բնորոշմաբ՝ «Հարուստ երկիր մըն էր Շիրուան, որուն բնակչութեան կարեւոր մասը կը կազմէին Հայերը, հակառակ հալածանքներուն եւ բռնի իսլամացումներուն»[217]:

Միաժամանակ հակառակ բռնի մահմեդականացումներին՝ Շաքի-Շիրվան գոտում շարունակվում էին պահպանվել տեղական լեզուներն ու կենցաղամշակութային էթնիկ առանձնահատկությունները: Սիմեոն Երևանցի կաթողիկոսն իր հիշատակարանում դավանափոխ հայերի կենցաղում քրիստոնեական մի շարք սովորույթների գործածման մասին թողել է հետևյալ վկայակոչումը. «...որք այժմ կան անդ տաճկական հաւատով (դավանափոխ շիրվանահայերը - Գ. Ս.) զորոց բազումք վկայեն թէ՝ ունին տակաւին յարարողութիւնս իւրեանց զոմանս նշանս քրիստոնէական, զի առնեն ի վերայ խմորոյ զխաչ և զայլս այսպիսիս ունիլ ասեն»[218]: Ի հաստատումն վերոնշյալի բերենք նաև Ղազար քհն. Հովսեփյանի հետևյալ վկայությունը. «Քանիցս անգամ ես հարցրել եմ թրքացած կանանցից շատերին թէ «ինչու՞ էք խաչ քաշում նոր հունցած խմորի վրա»: Միշտ պատասխանել են ինձ, միայն «խաչ» բառից խուսափելով թէ... մեր հօրից և պապերից մնացած մեր հին սովորութիւնն է, այդ «նշանը» քաշում ենք, որ մեր խմորը ամեն ժամանակ անհատ ու անպակաս լինի»[219]: Հայկական հնավանդ սովորություններից էր նաև այն փաստը, որ մահմեդական հայուհին «...փոքրիկ մանկան քնեցնելիս՝ երկիւղածութեամբ խաչակնքում է նրա վրա և կամացուկ կերպով շշնջում է միայն Յիսուս, Քրիստոս»[220]: Ըստ Հ. Գերբերի՝ հայերը, հայոց լեզվին զուգահեռ, հասկանում և գործածում էին նաև տվյալ գավառի խոսակցական լեզուն: Նրանք ապրում էին քրիստոնեական օրենքներով և ունեին իրենց գյուղական դատավորներն ու տանուտերերը[221]: Անտանեսական դրան նպաստող կարևորագույն հանգամանքներից մեկն այն էր, որ սոցիալական վերնախավում Իրանի շահի կողմից ղզլբաշ ցեղերից կառավարիչներ նշանակված հաքիմների կողքին շարունակում էր պահպանվել իրենց տիրույթներում վարչական որոշակի արտոնություններ ունեցող քրիստոնյա ազնվականությունը՝ մելիքները[222]: Այս առումով ուշագրավ տեղեկություն է պահպանել Միքայել Չամչյանը: Պատմելով լեզգիների դեմ 1722 թ. մղված ռեկությունից է պահպանել Միքայել Չամչյանը: Պատմելով լեզգիների դեմ 1722 թ. մղված ղեկության մասին, նա գրում է, որ դրանք ղեկավարել է Շաքիի մելիք Հովհաննեսը. «Զայն տեկռիվների մասին, նա գրում է, որ դրանք ղեկավարել է Շաքիի մելիք Հովհաննեսը. «Զայն տե-

215 Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ., էջ 154:
216 Տե՛ս **Гербер И.**, նշվ. աշխ., ИГЭД, стр. 116.
217 Ալպօյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 386:
218 Դիւան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, էջ 417:
219 Ղազար քհյ Յովսէփեան, Նուխուայ գաւառի մահմեդական հայերը (Թոփչեան Ե., Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1905 թ., էջ 195-196):
220 Նոյն տեղում, էջ 195:
221 Տե՛ս **Гербер И.**, նշվ. աշխ., ИГЭД, стр. 116.
222 Տե՛ս **Петрушевский И.**, նշվ. աշխ., стр. 138, տե՛ս նաև **Харатян Г.**, նշվ. աշխ., стр. 83.

սեալ հայոց բնակելոց՝ ի սահմանսն յայնոսիկ՝ յաշխարհին՝ ուտէացւոց և գուգարացւոց[223] ուր ասի լինել մեծ սղնախ, յուրում և տիրէր Յովհաննէս իշխան ոմն...»[224]: Որ իրանական տիրապետության ժամանակաշրջանում երկրամասի տարածքի մի զգալի մասում պահպանվել էին համեմատաբար անկախ իշխանություններ, ինչի մասին արժեքավոր տեղեկություն է հայտնում Պ. Բուտկովը. «Մոտ 1748 թ.: Շաքիի տիրույթը, որի կենտրոնն էր Նուխին, նախկինում կախվածություն ուներ Շամախիի խաներից... այն գտնվում էր մելիքների կամ իշխանների կառավարման ներքո»[225]: Ի դեպ, աղբյուրները փաստում են, որ հայ տոհմիկ ազնվականությունը երկրամասում շարունակել է պահպանել իր նշանակությունը նաև XIX դարի ընթացքում[226]:

Շիրվանի հայությանը մեծ զրկանքներ պատճառեցին նաև Իրանի Նադիր շահի արշավանքները: Թուրքական նվաճումներին դիմագրավելու նպատակով Նադիրը 1734 թ. մայիսին Մուղանի վրայով շարժվում է Շամախի, հիմնովին ավերում ու հրդեհում այն և մեծ թվով գերիներ վերցնում քրիստոնյաներից[227]: Աբրահամ Երևանցու հաղորդմամբ՝ «Ի Գանձայոյ ելեալ Ղուլի խանն (Նադիր շահը - Գ. Ս.) գնաց ի վերայ Շամախու և էառ զնա, նոյնպէս և զՇիրուան»[228]: Նադիրի հրամանով հրդեհվեցին նաև Շամախիի շրջակայքի մի շարք գյուղեր, ապաստակության ենթարկվեցին դաշտավայրի բնակավայրերը: Շամախին ավերելուց հետո Նադիր շահը կենդանի մնացածներին վերաբնակեցրեց հին Շամախուց 26 կմ հարավ-արևմուտք՝ Աղսուի մոտակայքում: Նոր բնակավայրը ևս ստացավ Շամախի անունը[229]. «Շամախի բերդաքաղաք... Պարսից Նատիր շահը անցեալ դարուն մէջ կործանեց, բայց եւքէն անոր քովը նորէն շինուեցաւ. և հիմա Աղուանից երկրին գլխաւոր քաղաքն է. ունի բերդ, և չորս դին պարսպով պատած է»[230]: Թե՛ բնակլիմայական պայմաններով և թե՛ ապահովության առումով նոր բնակատեղին խիստ աննպաստ էր շամախահայերի համար: Աբրահամ Գ Կրետացի պատմագիր կաթողիկոսը հաղորդում է. «Այլ և վասն բնակութեան, զի զՇամախին աւերեալ էր և քակեալ Վալինամաթն, յորժամ էառ՝ յառաջ քան զգալն ի Կէնճէ, և Ը. ժամու ճանապարհ հեռու ի Շամախուցն՝ հողէ բերդ մի շինեալ՝ հրամայեաց զմնացեալ Շամախեցիքն անդ բնակեցուցանել. և զի էր օդն ապականեալ, և տեղն չորային, և ջուրն պակաս, և տաճկունք՝ որք են Լազկիք եւ Սուննիք՝ վշտացուցանէին և զտառապեցուցանէին զԱզգն մեր»[231]: Օգտագործելով շահի մոտ ունեցած իր հեղինակությունը՝ Աբրահամ Կրետացին նրանից թույլտվություն է ստանում ավերակ Շամախիի մոտ՝ Գյուլիստան բերդից բավական հեռու, շամախահայերի հա-

223 Սեծ Հայքի Գուգարաց աշխարհ անվանը համահունչ Կուրի ձախափնյակում Շաքիի կապակցությամբ «Գուգարք» օգտագործման առումով Մ. Չամչյանը գրում է, որ հիմք է ընդունել այն ավանդությունը, ըստ որի՝ «Գուգարք. զաս ոմանք կոչեն Շաքի կամ Շեքի» (**Միքայել Չամչյանց**, հ. Գ, հավելված, էջ 142): Կուրի ձախափնյակում «գուգարացիների» անվան կիրառման վերաբերյալ միանգամայն պարզ ու որոշակի պարզաբանում է տալիս XIII դ. հեղինակ Վարդան Արևելցին, թե՝ «Գուգարացիք Շաքի է» (Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակութիւն Հ. Պէրպէրեանի, Բարիզ, 1960, էջ 10):
224 **Միքայել Չամչյանց**, հ. Գ, էջ 784:
225 **Бутков П.**, նշվ. աշխ., ч. I, стр. 231.
226 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԱ, էջ 230, տե՛ս նաև «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 260, տե՛ս նաև «Արարատ», 1871, № Գ, էջ 318, տե՛ս նաև **Անանուն Դ.**, Բարձր դասը Հայաստանում և Ազէրբայջանում. ԲՀԳԻ, գիրք Ա. եւ Բ, 1921-1922, Վաղարշապատ, 1922, էջ 9, տե՛ս նաև Из истории аграрной политики царизма в Грузии, Азербайджане и Армении (сборник архивных материалов), пред. и введ. **В. Рштуни**, Ереван, 1954, стр. 114.
227 Տե՛ս **Աբրահամ Կրետացի**, էջ 65:
228 **Աբրահամ Երեւանցի**, էջ 87:
229 Տե՛ս **Арупова М., Ашрафян К.**, Государство Надир-Шаха Афшара, Москва, 1958, стр. 187.
230 **Քաջունի, Մ.**, նշվ. աշխ., էջ 201:
231 **Աբրահամ Կրետացի**, էջ 65-66:

մար նոր բնակավայր հիմնել. «...խնդրեցի ի նմանէ՝ տալ հրաման Շամախեցի Հայոց արտաքոյ
նոր շինած բերդին՝ ժամու մի ճանապարհ հեռի ի բերդէն ի տեղի մի վայելուչ՝ զոր նոքա
խնդրեցին, շինեսցեն վասն իւրեանց բնակութեան...»[232]: Շահը հարգում է կաթողիկոսի
խնդրանքը և թույլ է տալիս հայերին՝ վերաբնակվելու նշված վայրում: Այդտեղ հաստատված
հայերը հին Շամախի վերադարձան միայն Նադիր շահի մահվանից (1747 թ. մայիսի 9) երեք
տարի անց՝ 1750 թ.:

Նադիր շահի մահից հետո Իրանում ծայր առած գահակալական կռիվների պատճառով
պետության ներսում խաները հռչակեցին իրենց անկախությունը: XVIII դ. 40-ականների
սկզբներին Այսրկովկասում միասնական իշխանության բացակայության պատճառով մի շարք
խանությունների կողքին ստեղծվեցին Շիրվանի (1748 թ.), Գանձակի, Ղարաբաղի, Շաքիի
(Նուխի), Բաքվի (1747 թ.), Թալիշի (1749 թ.), Դերբենդի և Ղուբայի (1765 թ. հետո վերջինիս է
միացվում նաև Դերբենդի խանությունը) կիսանկախ խանությունները[233]:

Պատմական հավաստի աղբյուրները վկայում են, որ XVIII դարի վերջին հայ բնակչութ-
յունը մեծ դերակատարություն ուներ երկրամասի առևտրատնտեսական հարաբերություննե-
րում: Հայ առևտրականների մի ստվար հատված իր դիրքերն էր պահպանում Կասպից ծովի
վրայով Իրանի, Ռուսաստանի ու Միջինասիական երկրների միջև կատարվող միջազգային
առևտրի բնագավառում: Ինչպես նշում է կովկասագետ Բ. Միլլերը, հայ վաճառականական մի
չերտ դեռևս XVI դ. միջնորդի դեր էր կատարում Կասպյան առևտրական մայրուղու միջոցով
միջազգային առևտրում[234]: 1758 թ. նոյեմբերի 19-ին Կասպից ծովում կանոնավոր
կատարվող միջազգային առևտրում Թույլտվություն է ստացել վաճառական Սողոմոնյանը՝ բանեցնելով երկու
նավագնացության թույլտվություն է ստացել վաճառական Սողոմոնյանը՝ բանեցնելով երկու
առևտրական նավ[235]: Հայ վաճառականների՝ Կասպից ծովի վրա ունեցած առևտրական նավերը
երթևեկում էին Աստրախանից մինչև Գիլան, Մազանդարան ու Բաքու: Վերջիններս իրենց
առևտրով ոչ միայն հարստացնում էին Ռուսաստանի գանձարանը, այլև իրենք էին կուտա-
կում հսկայական հարստություններ: Լեոն այդ հանգամանքը իրավամբ նպաստավոր է համա-
րել նաև մայր հայրենիքի համար: «Շիրվանի հայության դերը,- գրում է նա,- շատ կարևոր էր
և Հայաստանի համար, որովհետև Շիրվանը կապում էր մեր հայրենիքի հյուսիս-արևելյան նա-
հանգները (Գանձակ, Արցախ և Սյունիք) Կասպից ծովի հետ, որն այն ժամանակ շատ առաջ-
նակարգ դեր էր կատարում իբրև միջազգային առևտրական ճանապարհ, որի վրա քաղաքա-
կան շահերն էլ էին երևան գալիս այն առևտրական կարավանների հետ, որոնք ուղևորվում
էին Արևմտյան Եվրոպայից և Ռուսիայից Աստրախանի վրայով դեպի Անդրկովկաս և Պարս-
կաստան»[236]:

Կովկասագետ Պ. Բուտկովի վկայակոչած տվյալների համաձայն՝ 1783 թ. Շիրվանում
կար 2000 ծուխ հայ բնակիչ[237]: Նշված ժամանակահատվածում երկրամասում ազգաբնակչութ-
յան ծխերի թվի վերաբերյալ հավաստի տեղեկություններ է հաղորդում նաև 1796 թ.
իրանական արշավանքի մասնակից, կովկասագետ Սեմյոն Բրոնևսկին, ըստ որի՝ Ղուբայում

[232] Նույն տեղում:
[233] Տե՛ս **Аббас-Кули-Ага Бакиханов**, стр. 73, տե՛ս նաև **Петрушевский И.**, նշվ. աշխ., стр. 86, տե՛ս նաև **Абдуллаев**
Г., Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965, стр. 86.
[234] Տե՛ս **Миллер Б.**, Таты, их расселение и говоры (материалы и вопросы), ИООИА, № 8, вып. VII, Баку, 1929, стр.
16, տե՛ս նաև Հակոբյան Ա., Թարախոս հայեր, էջ 64:
[235] Տե՛ս **Տէր-Աստուածատրեանց Հ.**, Վաճառականութիւնը Ռուսիայում: Պատմական տեսութիւն վավերաթղթերով (Է-ԺԸ
դար), Պարիս, 1906, էջ 53:
[236] Լեո, Հայոց պատմություն, h. Գ, գիրք Ա, Երևան, 1969, էջ 169:
[237] Տե՛ս **Бутков П.**, նշվ աշխ., ч. II, стр. 142.

կար 7964, Շամախիում՝ 25000, Բաքվում՝ 1000, Սալյանում՝ 2000 և Շաքիում՝ 20000 ծուխ[238]:
Ընդ որում՝ Շամախիի խանության բնակչության կեսը հայեր էին[239]:

Շիրվանի ազգաբնակչությունը, այդ թվում նաև հայերը մեծապես տուժեցին նաև Իրա-
նի Աղա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքի հետևանքով: Թիֆլիսն ավերելուց հետո, երբ
նա վերադարձավ Մուղանի դաշտ՝ ձմեռելու, զգալի ավերածությունների ենթարկեց նաև Շիր-
վանը: Վավերագրում ասվում է. «Ի բանակիլ Մհամմադ շահին ի Մուղան, տարածեաց զձեռն
իւր ի վերա Շամախու և Նուխուայ՝ որ ասի Շաքի Շիրուան...: Ապա սփռեալ ի գիւղօրայս նո-
ցա այրեցին զամենայն շինուածս...»[240]: Խույս տալով Աղա Մուհամմադ խանի հետապնդում-
ներից՝ Շամախու Մուստաֆա խանը, նրան միացած շամախեցի Պողոս բեկ Հալայանը, իրենց
ժողովրդով տեղափոխվում են հին Շամախիից 40 կմ հեռավորության վրա գտնվող[241] Ֆիթ-
դաղի[242] սարահարթում՝ մի տափարակ վայրում, Մուստաֆա խանի կողմից հիմնադրված Ֆիթ
կամ Ֆիթդաղ[243] քաղաքը[244]:

XVIII դ. վերջերին Ռուսաստանը վերստին ձեռնամուխ եղավ նվաճելու Այսրկովկասը և
մասնավորապես իր դիրքերն ամրապնդելու մերձկասպյան շրջաններում: Կոմս Վ. Զուբովի
հրամանատարությամբ 1796 թ. ապրիլի 30-ին սկսված ռազմական ակտիվ գործողությունների
արդյունքում մայիսի 10-ին գրավվեց Դերբենդը, այնուհետև՝ Բաքուն, Լենքորանը, Ղուբան,
Շամախին, Ջավաթը և Շաքին[245]: Չնայած ռազմական հաջողություններին՝ Եկատերինա II-ի
անակնկալ մահվան և ծագած բազում դժվարությունների պատճառով նոր կայսր Պավել I-ը
1796 թ. նոյեմբերին ռուսական զորքերին հետ քաշվելու հրաման տվեց, ինչով Այսրկովկասում
ժամանակավորապես դադարեցվեցին ռազմական գործողությունները[246]:

Ռուսների հեռանալը վտանգավոր դրություն ստեղծեց երկրամասի հայ բնակչության
համար: Հայերի՝ ռուսական կողմնորոշում ունենալու պատճառով արյունարբու սուննի Մեհ-
տի բեկը մեծաքանակ զորքով սկսեց հարձակվել նրանց բնակավայրերի վրա[247]: Մեհտի բեկի

[238] Տե՛ս **Броневский С.**, նշվ աշխ., ч. I, стр. 59, տե՛ս նաև **Тунян В.**, Политика самодержавия России в Закавказье
XIX-нач. XX вв., стр. 42.
[239] Տե՛ս **Броневский С.**, նշվ աշխ., ч. II, гл. III, Ширван (Ханство Шемахинское), стр. 434.
[240] Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), աշխա-
տասիրությամբ Ռ. Տ. Տիտանյանի, Երևան, 1981, էջ 190:
[241] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 4:
[242] Ալ. Զախարյանը «Շիրվանի կոյսը» պատմվածքում այսպես է նկարագրել Ֆիթդաղը. «Բարձր է Ֆիթ-դաղը, և մինչև
այսօր ոչ ոք չէ համարձակուել չափել նրա բարձրութիւնը: Յաւիտենական ձիւնով է պատած նրա ամպերի մէջ
անյայտացող կատարը: Գեղեցիկ է Ֆիթ-դաղը, երբ իւր ձիւնապատ գագաթով ամենից առաջ ժպտում է առաւօտեան
արշալոյսին, աւելի գեղեցիկ է նա, երբ արեգակի վերջին ճառագայթները երեկոյեան պահուն ոսկեզօծելով նրա կատարը,
խաղում են նրա մշտնջենական ձիւնի կոյտերի հետ: Ամբողջ աշխարհը թաղուած է մթութեան մէջ, և միայն Ֆիթ-դաղի
գագաթն է վառվում այդ ժամանակ շողշողուն լոյսով» («Արձագանք», Թիֆլիս, 1888, սեպտեմբերի 11, № 35, էջ 485):
[243] Ֆիթդաղ քաղաքը գոյատևել է մինչև 1823 թ., որից հետո բնակիչները տեղափոխվել և հաստատվել են շրջակա գյու-
ղերում (տե՛ս **Фитуни А.**, История последней столицы Ширвана (историко-этнографический очерк), ИАКОПСИП,
вып. 3, Баку, 1927, стр. 142-143).
[244] Տե՛ս նույն տեղում, стр. 125: Յարակեն կառավարությունը Ֆիթդաղում հաստատված շամախահայերին թույլատրեց
վերադառնալ հայրենի քաղաք՝ 1820 թ. օգոստոսի 19-ին Շամախու Մուստաֆա խանի Իրան փախչելուց հետո (տե՛ս
Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 332, տե՛ս նաև Присоединение Кавказа к России XIX век, составили **А. Макаров, С.**
Макарова, С.-Петербург, 2005, стр. 109-110): Ա. Երմոլովը՝ 1826 թ. նոյեմբերի 7-ին Նիկոլայ I-ին հղած զեկուցագրում
հայտնում էր, որ Իրան փախչելուց առաջ Մուստաֆա խանը բռնագավթել էր բնակչության գույքը (տե՛ս **Ермолов А.**,
Записки Алексея Петровича Ермолова, ч. II (1816-1827 гг.), Москва, 1868, стр. 301).
[245] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, h. IV, Երևան, 1972, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 240:
[246] Տե՛ս **Չոբանյան Պ.**, Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ), ՊԲՀ, Երևան, 1991, № 2, էջ
62-63:
[247] Տե՛ս **Фитуни А.**, նշվ. աշխ., стр. 125.

կազմակերպած կոտորածներից հատկապես տուժեց Շամախիի գավառի Զարգարան հայկական գյուղը, ուր «պարսիկները մի օրուայ մէջ, բացի ծերերից, երիտասարդներից, 100 մանր երեխաներ մորթեցին, իրանց վրէժը լուծելու համար»[248]: Օրհասական այդ օրերին ճակատագրի քմահաճույքին մատնված հայկական մի շարք գյուղեր դիմեցին ինքնապաշտպանության: Այդ առումով հատկանշական է Գիրք գյուղի տանուտեր Օհան բեկի ղեկավարած դիմադրական շարժումը, որտեղ, սակայն, Օհան բեկը զոհվեց Մեհտի բեկի դավադիր գնդակից[249]: Ծանր էր նաև Շամախիի հայ բնակչության վիճակը: Շամախիի Մուստաֆա խանը սպանել տվեց նույնիսկ Հովհաննես վարդապետին, որն իբր «գրգռում էր հայերին խանի դեմ՝ հօգուտ ռուսների»[250]:

Ռուսական կողմնորոշում ունենալու պատճառով վախենալով խաների վրեժխնդրությունից՝ Բաքվի, Ղուբայի, Դերբենդի և Մուշկուրի խանությունների շրջակայքում գտնվող հայաբնակ գյուղերի հարյուրավոր ընտանիքներ ռուսական կառավարության թույլտվությամբ 1796-1797 թթ. գաղթեցին Հյուսիսային Կովկաս: Ըստ Պ. Բուտկովի՝ այդ շրջաններից գաղթեց ավելի քան 500 հայ ընտանիք[251]: Հովսեփ արքեպ. Արղության կազմած տեղեկագրի համաձայն՝ Դերբենդից և Մուշկուրից գաղթածների թիվը 610 ընտանիք՝ 5212 շունչ էր[252]: Նրանց մի մասին ցարական իշխանությունները բնակեցրին Ղզլարում և նրա շրջակայքում՝ Մոզդոկում, Հին և Նոր Մաճառում կամ Սուրբ Խաչում (հետագայում՝ Պրիկումսկ, Բուդյոննովսկ)[253]: «Ղարաջալլեցի» ծածկանունով հեղինակը «Մեղու Հայաստանի» լրագրում հրապարակած հոդվածում գրում է. «Մաջառը, որ բովանդակվում է երկու միմեանցից կէս վերստաչափ հեռի գիւղի մէջ - Հին և Նոր: Երկու գիւղի բնակիչները ևս... գաղթած են Դարբանդի և Ղուբայի շրջակայքում գտնուող Խաչմազ, Մօլլախալիլ[254], Քիլվար, Ղարաջալլի... գիւղերից...»[255]: Վարդան Օձնեցին, անդրադառնալով այդ գաղթերին, գրում է. «Բազումք ի Հայոց և սակաւք ի տաճկաց անցին ի Վրաստան, ի Սոմխեթ, յԵրեւան, ի Կարս և յաշխարհն Սարմատացոց՝ ի Մոզդօք և ի Ղզլար»[256]:

Երկրամասում, որը հայտնվել էր երեք հզոր պետությունների՝ Իրանի, Օսմանյան Թուրքիայի և Ռուսաստանի ռազմաքաղաքական բախման կիզակետում, պարբերաբար կրկնվող արշավանքների և արտագաղթերի պատճառով հայաբնակ մի շարք գյուղեր ավերակների էին վերածվել և զգալի չափով նվազել էր հայ բնակչության թիվը: Միաժամանակ պարսկա-թուրքական տիրապետությունն այնտեղ հանգեցրեց ինչպես հայաթափ, այնպես էլ հայաբնակ գյուղերի պատմական անվանումների անվանափոխմանը, ինչի հետևանքով հայակերտ տեղանունները մոռացության մատնվեցին և փոխարինվեցին օտարահունչ անուններով, իսկ հին անունները մեզ են հասել թարգմանաբար կամ աղավաղումներով և հազվադեպ միայն՝ պահպանել իրենց նախնական, անաղարտ ձևը: Ցավոք, մեզ չի հասել այնպիսի համապարփակ մատենագրական աշխատություն, որտեղ անուն առ անուն հիշատակված լինեին երկրամասի երբեմնի հայկական բնակավայրերի թիվը և գյուղերը: Այդ առումով որոշ տեղեկություններ է հաղորդում 1796 թ. Շիրվանի պրովինցիայի բնակավայրերի տեղագրության և քարտեզագրման աշխատանքներին մասնակցած Իվան Դրենյակինը[257], ըստ որի՝ Շամախու մերձակայքում կար 6 (230 ծուխ) հայկական գյուղ՝ «Монастырь Сагиан» (Սաղիան), «Мадерсе» (Մատրասա), «Керкенчь» (Քարքանջ), «Калаханы» (Քալախան), «Зарап» (Զառափ)[258] և «Месери» (Մեյսարի)[259], Շամախիի խանի ենթակայության տակ գտնվող Մուստաֆա բեկի տիրույթում՝ 3 (60 ծուխ) գյուղ՝ «Монастырь Ванка» (Վանք), «Кензек» (Գանձակ) և «Тобыши» (Թուբիշեն)[260], Շամախիի խանի ենթակայության տակ գտնվող Ավուզ բաշի տիրույթում՝ 8[261] (180 ծուխ) գյուղ՝ «Енги Кент» (Նորշեն), «Горжюан» (Գյուրջևան), «Гюрда» (Գյուրդա), «Ангар» (Հնդար), «Заргелан» (Զարգարան), «Баглиян» (Բահլիան), «Белестиян» (Բիլիստան) և «Кяванди» (Քավանտ)[262]: Ընդհանուր առմամբ, Ի. Դրենյակինի կազմած տեղեկագրի համաձայն՝ Շիրվանում՝ Շամախիի խանի, Մուստաֆա բեկի և Ավուզ բաշիի

---

248 Փարոս [Սմբատ Գարագաշյան], Զարգարան, «Նոր-դար», Թիֆլիս, 1898, սեպտեմբերի 17, № 167:
249 Տե՛ս **Фитуни А.**, նշվ. աշխ., стр. 126.
250 **Րաֆֆի**, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1959, էջ 266:
251 Տե՛ս **Бутков П.**, նշվ. աշխ., ч. I, стр. 94.
252 Տե՛ս **Չոբանյան Պ.**, Ռուսահայոց գաղթօջախի բնակչության քանակական կազմը (XVIII դ. վերջին քառորդ), ՊԲՀ, Երևան, 1998, № 3, էջ 64:
253 Տե՛ս **Յակոբեան Ա.**, Հայ-քաթերի տարաբաշխվածութեան ու տեղահանութիւնների պատմութիւնից (ԺԸ դարի սկիզբ-ԺԹ դարի վերջ), «Հայկազեան հայագիտական հանդէս» (այսուհետ՝ ՀՀՀ), հ. ԻԱ, Պէյրութ, 2001, էջ 131:
254 Մոլլախալիլից գաղթած հայերը Ղզլարի մոտ հիմնել են համանուն գյուղը (տե՛ս **Մարաղեանց Յար.**, Սուրբ Գրիգորիս Աղուանից Կաթողիկոսի մատուռը, «Նոր-դար», Թիֆլիս, 1891, հունվարի 12, № 5): Մոլլախալիլը գտնվել է Դերբենդ քաղաքից 27 կմ հարավ, այժմյան Բեյիջի գյուղի շրջակայքում: 1891 թ. դեկտեմբերի 6-ին Մոլլախալիլ այցելած դերբենդցի ուսուցիչ Հ. Մարաղյանցը գրում է, որ ժամանակին զուտ հայաբնակ այդ գյուղը հայտնի էր Սրբի գյուղ (Փիրի-քեանդ) անվամբ (տե՛ս **Մարաղեանց Յար.**, նշվ. աշխ., «Նոր-դար», Թիֆլիս, 1891, հունվարի 3, № 1): Սարգիս արքեպ. Ջալալյանցի այցելության ժամանակ գյուղի արևմտյան անտառախիտ վայրում դեռևս պահպանված է եղել հայոց ընդարձակ գերեզմանոցը, որի տապանագրերից չորսը նա վերծանել է: Ներկայացնում ենք դրանցից երկուսը. «Այս է տապան Առաքելին բլին ՊԺԲ (1363)», «Այս է հանգիստ Տէր Սիմօնին. ՇԾԸ (1109)» (**Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 419): Մոլլախալիլ գյուղից դուրս՝ Վատնյա դաշտի արևմտյան ծայրում, ծորակի ափին կառուցված է եղել Սբ. Գրիգորիսի անվամբ մատուռը (տե՛ս **Մարաղեանց Յար.**, նշվ. աշխ., «Նոր-դար», Թիֆլիս, 1891, հունվարի 5, № 12): Ըստ ավանդության՝ մատուռը կառուցված էր Սբ. Գրիգորիսի նահատակության վայրում (տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 174): Մատուռի հանգամանալից նկարագրությունը տվել է դեռևս 1857 թ. հոկտեմբերի 25-ին տեղագրական ուսումնասիրություններ կատարելու նպատակով այդտեղ այցելած մանկավարժ Ռոստոմ Բեկ Երզնկյանցը: Ըստ նրա՝ «...մատուռն ի վերայ դամբարանի Փիրի Հայոց» կառուցել են Մոլլախալիլի և Բեյիջիի հայերը. «...աղիւսակերտ մատուռն յանուն սրբոյն Գրիգորիսի նահատակ կաթողիկոսին Աղուանից առ ափամբ Գուրգան առուակին 'ի ծայրս տափարակ բլրակադաշտի: Երկայնութիւն մատրան է 18 ոտնաչափ, լայնութիւնն 10. իսկ բարձրութիւնն 20: Այս փոքրիկ մատուռն 'ի հարաւոյ բացեալ ունի զերկուս լուսամուտս, ձև շինուածոյն է սագաշէն (օրօրոցաձև), 'ի միջի խորսն ունի զփոքրադիր աղիւսակերտ կամարս, իսկ 'ի վերայ արևելեան որմոյն կախեալ կան հին պատկերք խաչելութեան, չարչարանաց և Աստուածամօր առանց մակագրութեանց: 'Ի կեդրոնի սրբազան մատրանս է փոքրադիր գմբէթ և կէս թիզ բարձրութեամբ. լայնութեամբն 3, իսկ երկայնութեամբն 4: Ունի զերիս յոյժ փոքրիկ լուսամուտս, և յարևելից կուսէ զդուռն, ուստի արկանեն զխունկ 'ի

պատուհան սրբազան մասանց և նշխարաց երանելի և երջանիկ նահատակին, 'ի վերայ գլխոյ բուրումն անուշահոտութեան 'ի պատուհ սրբազան մասանց և նշխարաց երանելի և երջանիկ նահատակին, 'ի վերայ գլխոյ գմբեթին է վեղարանման բոլորակ սրածայր, յորոց 'ի գլուխն կացուցեալ կայ երկաթեայ խաչ» (Հատուածք ի ճանապարհորդութեանց Ռոստոմ բէկի Երզնկեանց Հաղբատեցւոյ 'ի Դաղստան, Լեառն Աբասովայ եւ մատուռն Սուրբ Գրիգորիս («Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1859, հունվարի 1, № 1, էջ 5-6): Հետագայում այրված մատուռը բազվարենսկ քարերար Եղիսաբեթ Կաճկաճյանցը ի հիշատակ իր ամուսնու՝ Մկրտիչ Կաճկաճյանցի, 1879 թ. սրբատաշ քարերով հիմնովին նորոգել է, որի դռան ճակատին արձանագրված է եղել. «Ես Տիկին Եղիսաբէթ Կաճկաճեանց կառուցի մատուռս ի յիշատակ իմ և ամուսնոյս: Տէր յիշէ մեզ, երբ բանք կայարին և գործք կրազուռեն, ի 1879 թ. Ք.» (**Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 181, տե՛ս նաև **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 106): Մատուռը «սրբոյն Գրիգորիսի» անվամբ օծվել է 1880 թ. Ամբրոսիոս վրդ. Ռուբենյանի կողմից (տե՛ս **Մարաղեանց Յ.**, նշվ. աշխ., «Նոր-դար», Թիֆլիս, 1891, հունվարի 12, № 5):
«Մեղու Հայաստանի», Թիֆլիս, հուլիսի 7, 1879, № 51:
255 **Ղարաջալլեցի**, Մաջառ (Սուրբ Խաչ քաղաք), «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, հուլիսի 7, 1879, № 51:
256 **Վարդան Օձնեցի**, Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի Մեծի և Փոքու (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4331, թ. 91բ-92ա):
257 Իվան Տիմոֆեյի Դրենյակինը 1796 թ. մասնակցել է Շիրվանի պրովինցիայի և Ալչերոնի քարտեզագրման ու բնակավայրերի տեղագրման աշխատանքներին (տե՛ս **Дренякин И.**, Описание Ширвана. 1796 г., ИГЭД, стр. 172).
258 1868 թ. փետրվարի 19-ի վարչատարածքային բաժանման հետևանքով Զառափ գյուղը դուրս մնաց Բաքվի նահանգի կազմից և կցվեց նորաստեղծ Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխիի գավառին:
259 Տե՛ս **Дренякин И.**, նշվ. աշխ., ИГЭД, стр. 165.
260 Տե՛ս նույն տեղում:
261 Վավերագրում թյուրիմացաբար նշված է 6:
262 Տե՛ս **Дренякин И.**, նշվ. աշխ., ИГЭД, стр. 167.

տիրույթներում, կար 17 հայկական գյուղ՝ 230 ծուխ բնակչությամբ, և 83 իրանական՝ 3250 ծուխ բնակչությամբ[263]: Ի. Դրենյակինից բացի՝ XVIII դարավերջի հայկական մի քանի գյուղերի մասին հիշատակություններ է թողել նաև Ս. Բրոնևսկին: Ըստ նրա՝ նշանավոր էին «Мергани» (Մեյսարի՞- Գ. Ս.), «Мадрасе» (Մադրասա), «Сагиань» (Սաղիան), «Керкенть» (Քարքանջ), «Келухони» (Քալախան), «Мегеры» (՞- Գ. Ս.), «Талышь» (Թալիշ), «Заргала» (Զարգարա՞ն - Գ. Ս.) և «Кюглухь» (Քոհլու՞ճ - Գ. Ս.) գյուղերը[264]:

XVIII դ. վերջերին երկրամասի հայկական գյուղերը զգալի չափով համալրվեցին Արցախից և մասամբ Սյունիքից կատարված արտագաղթերի շնորհիվ: Իրանի Աղա Մուհամմադ խանի՝ 1795 և 1797 թթ. արշավանքների ու ավարառությունների պատճառով լիովին քայքայվեց Արցախի բնակչության տնտեսությունը: Կռիվների և արշավանքների պատճառած չարիքներին միանում են նաև սովն ու համաճարակները: 1797 թ. սով բռնկվեց, իսկ հաջորդ տարում՝ ժանտախտ: Այն ժամանակվա հնարավորության սահմաններում ախտականխիչ միջոցներ ձեռք չեն առնվում, որի պատճառով համաճարակը մեծ զոհեր է խլում բնակչությունից: Հուսահատության եզրին հասած բնակչության մի մասը բռնեց գաղթի ճանապարհը՝ հանգրվանելով Շիրվանում, Վրաստանում և Ռուսաստանում[265]: Մակար եպս. Բարխուտարյանցը, անդրադառնալով Արցախից տեղի ունեցած գաղթին, ցավով գրել է. «Ցրուած եւ գերուած հայեր... միլիոնաւոր (նկատի է ունի մեծ քանակությունը - Գ. Ս.) հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած: Այո՛, դատարկուած են իւրեանց հայ եւ հայադաւան բնակիչներից Պիան, Մուղան, Վարդանակերտ, Արանռոտ, Տրի, Ռոցպատեան, Աղուէ, Տուչքատակ... դատարկուած են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Զաւէ, Ջրաբերդ, Խաչէն, Վարանդայ եւ Դիզակ գաւառներն: Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներն: Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն Պարսկաստան, մի մասն Շաքի եւ Շամախի, մի մասն Կախեթ եւ Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Դարբանդ եւ Ռուսիա»[266]:

Այս դեպքերն իրենց արձագանքն են գտել նաև XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Հովսեփյանց) «Թարիխ-ե Սաֆի» («Ճշմարտացի պատմություն») պարսկերեն պատմագրական երկում, ուր հեղինակը գրում է. «Երեք տարի Ղարաբաղում երկնային ու երկրային աղետի՝ [երաշտի] հետևանքով անբերրիություն ու սով էր: Այնտեղի բնակչության մեծ մասը իր օրվա հացն ապահովելու համար ցրվել էր Շաքիի, Շիրվանի, Ղարադաղի և [հարևան] մյուս երկրները»[267]: Գեն. Պավել Ցիցիանովի՝ 1805 թ. մայիսին Ալեքսանդր I-ին հղած զեկուցագրում Շիրվան տեղափոխված հայերի թիվը նշվում է 8000 տուն[268]: Ըստ մեկ այլ աղբյուրի՝ Շիրվանի վիճակում հաստատվել են շուրջ 12000 տուն[269]: Մակար եպս. Բարխուտարյանցն իր այցելած յուրաքանչյուր բնակավայրի համար նշում է այն վայրերը, որտեղից

[263] Տե՛ս նույն տեղում, стр. 165-167.
[264] Տե՛ս **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, гл. III, Ширван (Ханство Шемахинское), стр. 433.
[265] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, էջ 405, տե՛ս նաև Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 291-292:
[266] Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ Ը:
[267] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրու-
Միրզա Յուսուֆ Ներսեսով, Երևան, 2000, էջ 73:
թյունները Ք. Կոստիկյանի, Երևան, 2000, էջ 73:
[268] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. Դ, Երևան, 1984, էջ 252:
[269] Տե՛ս Բէկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 242: Հեղինակը Մակար եպս. Բար-
խուտարյանցն է, որը սակայն աշխատությունը հրատարակել է Այրես Բեկնազարյանց անունով:

եկել ու այդտեղ են հանգրվանել հայերը: Շիրվանում հաստատված արցախահայերն իրենց համար բնակության նոր վայրեր էին ընտրել նախկինում հայաբնակ և այժմ դատարկված կամ մասամբ բնակեցված գյուղերը[270], որտեղ, գրեթե առանց բացառության, պահպանվել էին բնիկ հայերից մնացած բազմաթիվ եկեղեցիներ, արձանագիր խաչքարերով ու տապանաքարերով գերեզմանոցներ: Գյուղերի մի մասը վերականգնվեց նույն տեղում և շատ դեպքերում նույն անվան տակ շարունակեց պահպանել իր գոյությունը[271]: Արտագաղթած արցախահայերը Շաքի-Շիրվան գոտում հիմնադրեցին շուրջ հարյուր գյուղ[272], որոնց դերը նշանակալի եղավ երկրամասի՝ XVIII դարավերջի և XX դարի սկզբների առևտրատնտեսական հարաբերություններում: «Հայերը,- գրում է Ա. Ալպոյաճյանը,- ինչպէս Վրաստանի, նոյնպէս Շիրվանի մէջ առաջնակարգ դիրք ունէին, և երկրին ամէնէն կարեւոր տարրը կը ներկայացնէին»[273]:

XVIII դարի վերջերին երկրամասի հայաբնակ վայրերի՝ համահայկական ձեռնարկումների մասնակցության մասին տեղեկանում ենք Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսի (1780-1799 թթ.)՝ Շամախիի հայոց թեմի շրջաբերականներից: Հրատարակված նյութերում հետաքրքրական տեղեկություններ կան այն մասին, որ շիրվանահայությունը հարկ եղած դեպքում օգնության ձեռք է մեկնել նեղության մեջ հայտնված եկեղեցիներին: Այսպես՝ 1783 թ. Գորի քաղաքի Սբ. Ստեփաննոս եկեղեցու այրվելու պատճառով կրած վնասները վերականգնելու նպատակով Ղուկաս Կարնեցին նույն թվականի ապրիլի 1-ին Շամախիի թեմ հղած ժողովարական կոնդակով ի թիվս ռուսահայոց թեմերի, հայցում էր նաև շիրվանահայերի օգնությունը. «...ի յօրհնեալ երկիրսդ և ի քաղաքսդ՝ ի Դարբանդ, ի Ղախ (Կախ ավան - Գ. Ս.), ի Բաքու, ի Ղուպա և ի բոլոր երկիրդ Շրուանու՝ ի Նուխի, ի Շամախու և յայլ շրջակայս դոցին... վասն Գորու սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն օգնութիւն առնելոյ...»[274]: Ղուկաս Կարնեցին 1791 թ. փետրվարին Շամախիի հայոց թեմին հղած մեկ այլ նվիրական կոնդակում Էջմիածնին նյութապես օգնելու նպատակով պատվիրում էր ստեղծել գանձանակներ և հավաքված գումարներն առաքել Մայր Աթոռ. «Կոնդակ ի վերայ Շամախու, Նուխու, Ղուպայու, Շիրուանու, Բաքուայ, Դարբանդու, Ղախու և շրջակայից մերային ժողովրդոցն վասն արդեանց գանձանակացն սրբոյ Աթոռոյս...»[275]: Կաթողիկոսի գրությունները ոչ միայն պերճախոս վկայություն են այն սերտ կապերի մասին, որ ուներ Մայր Աթոռը Արևելյան Այսրկովկասի հայաբնակ վայրերի հետ, այլև հստակ պատկերացում է կազմվում տարէթնիկ այդ տարածքում XVIII դարի վերջերին հայերի տեղաբաշխվածության վերաբերյալ:

Իրանի տիրապետության ներքո գտնվող Արևելյան Այսրկովկասը XIX դարի սկզբին վարչականորեն բաժանված էր կիսանկախ և ավատատիրական իշխանությունների՝ Շաքիի, Շիրվանի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունների միջև: XIX դարի սկզբներին ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ Այսրկովկասը վերջնականապես Ռուսաստանին միացնե-

[270] Տե՛ս Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր, էջ 295:
[271] Տե՛ս Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 4:
[272] Տե՛ս Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 12:
[273] Ալպօյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Գ, Ա մաս, Գահիրէ, 1961, էջ 7:
[274] Դիվան Հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, էջ 357:
[275] Դիվան Հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Բ, էջ 591:

լու քաղաքականության իրականացմանը: 1804-1813 թթ. ռուս-իրանական պատերազմի ընթացքում 1805 թ. մայիսի 21-ին Ռուսաստանին են անցնում Շաքիի, դեկտեմբերի 25-ին՝ Շիրվանի, իսկ 1806 թ. հոկտեմբերի 3-ին՝ Բաքվի ու Դերբենդի խանությունները[276]: 1805 թ. մայիսին, երբ Արցախը գրավվեց Ռուսաստանի կողմից, 1798-1799 թթ. այդտեղ բռնկված սովի և ժանտախտի պատճառով հեռացած մելիքներից ոմանք սկսեցին վերադառնալ հայրենիք և զբաղվել Շիրվանում ու Վրաստանում ցրված արցախցի գյուղացիներին հայրենի եզերք վերադարձնելու գործով: Այդ նպատակով Վարանդայի տիրակալ Մելիք-Ջումշուդը[277] 1806 թ. դեկտեմբերի 2-ին խնդրագրով դիմում է Ս. Պետերբուրգի Լազարյան հռչակավոր գերդաստանի ներկայացուցիչ Մինաս աղա Լազարյանին՝ հայցելով նրա միջնորդությունը ցարին՝ Շիրվան տեղափոխված հայրենակիցներին հայրենիք վերադարձնելու թույլտվություն ստանալու համար: Մելիք-Ջումշուդն այդ քայլը հիմնավորում էր Արցախում կանոնավոր զորագնդեր ստեղծելու և ռուսական զորքերին աջակցելու անհրաժեշտությամբ: Նամակում մասնավորապես ասված էր. «...դուք գրում եք, թե ինչո՞ւ մենք չենք կազմակերպում կանոնավոր զորագունդեր: Դուք հավատացած եղեք, որ մենք հեշտությամբ կարող էինք անել այդ, և այն էլ առանց ուրիշի օգնության, եթե մենք այժմ տեր լինեինք մեր առաջվա հարստության և ժողովրդին, որը, սովի և ժանտախտի պատճառով, ցրիվ եկավ Շիրվան և Վրաստան: Ուրեմն, եթե դուք ցանկանում եք որ հայոց ժողովուրդը ազատվի բարբարոսների (թաթարների) բռնակալությունից,- եթե ցանկանում եք, որ բոլորը (գաղթածները) կրկին վերադառնային դեպի իրանց հայրենիքը, պահպանեին կանոնավոր զորագնդեր և լավ ծառայություններ մատուցանեին մեր ամենաողորմած թագավորին, պետք է որ դուք միջնորդեք, որ հրամայեին մեր ցրիվ եկած ամբողջ ժողովրդին, որոնք գտնվում են Շիրվանում և Վրաստանում, որ նրանք կրկին վերադառնային իրանց հայրենիքը (Ղարաբաղ)»[278]: Նույն թվականին համանման բովանդակությամբ Մ. Լազարյանին նամակ հղեցին նաև Արցախի հինգ մելիքները, որպեսզի «թույլ տրվի նրանց հավաքել իրանց զանազան երկրներում ցրիվ եկած ժողովուրդը Ղարաբաղում, իրանց՝ մելիքների կառավարության ներքո...»[279]: Կովկասի կառավարչապետ Ի. Գուդովիչը, ընդառաջելով մելիքների խնդրանքին, 1807 թ. դեկտեմբերի 14-ի հրամանագրով հանձնարարում է փոխգնդապետ Տիխոնովսկուն Շիրվանի խանությունից վերադարձնել Արցախի բնակիչներին: Հրամանագրում նշված էր. «Շիրվանի Մուստաֆա խանի հետ կնքած համաձայնագրի համաձայն վերջինս պարտավոր է Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանին վերադարձնել ղարաբաղցի բոլոր այն ընտանիքներին, ովքեր դուրս էին եկել նրա տիրույթից: Այդ առիթով ինձ խնդրագիր է հղել Ղարաբաղի Մելիք, փոխգնդապետ Ջումշուդ Շահնազարովը: Ուստի Մուստաֆա խանին հանձնարարվել է, որպեսզի Ղարաբաղին պատկանող թաթարական և հայկական ընտանիքները ցանկացած ժամանակ իրավունք ունենան դուրս գալ Շիրվանից, իսկ վեր-

[276] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1975, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 121:
[277] Արցախում բռնկված սովի պատճառով Վրաստան էր գաղթել նաև Վարանդայի գավառի տիրակալ, Մելիք-Շահնազար II-ի ավագ որդի Մելիք-Ջումշուդը, որին վրաց Գեորգի XII թագավորի 1800 թ. փետրվարի 29-ի հրովարտակով տրվել էր Բորչալուի գավառի մի մասը և Լոռին: Մելիք-Ջումշուդը 1805 թ. 6000 ռ. Լոռին վաճառելով Վրաստանի լեռնային մասի կառավարիչ կոմս Մուսին-Պուշկինին, իր հպատակների հետ կրկին վերադարձել է Արցախ՝ Վարանդա (տե՛ս Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 312):
[278] Նույն տեղում, էջ 318:
[279] Նույն տեղում, էջ 319:

ջինս պարտավոր է ոչ թե արգելքներ ստեղծել Մելիք-Ջումշուդի համար, այլ օժանդակել նրան»[280]: Հրամանագրի բովանդակությունից հետևում է, որ Շիրվանից սպասվում էր զանգվածային գաղթ, սակայն հետագա փաստաթղթերը փաստում են, որ այն տեղի չի ունեցել: Գաղթը մասամբ կատարվել է Վրաստանից ու Շաքիից: 1817 թ. կեսերին 187 ընտանիք Շաքիից տեղափոխվել էր Արցախ[281], իսկ 1820 թ. Կախեթից որոշ ընտանիքներ ներգաղթել և հաստատվել էին ոչ թե Արցախում, այլ Շիրվանում[282]: Րաֆֆին այդ առիթով գրում է. «Թեև Ղարաբաղի գաղթականների մի մասը Վրաստանից տեղափոխվեցավ իր հայրենիքը, բայց դարձյալ դեռ բավական թվով մնացել էին այնտեղ: Շամախու գավառը գաղթողներից դեռ ոչ ոք չէր վերադարձել»[283]:

Ռուս-իրանական պատերազմն ավարտվեց 1813 թ. Գյուլիստանի՝ հոկտեմբերի 12-ի պայմանագրով, որով Իրանը մեկընդմիշտ ճանաչեց Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունների միացումը Ռուսաստանին[284]: Երկրամասում ռուսական տիրապետության հաստատումից հետո պահպանվեց խանական վարչաձևը[285]: Այնտեղ խանությունները սկսեցին պրովինցիաների վերածվել միայն 1819 թվականից հետո: Նույն թվականին՝ Շաքիի Իսմայիլ խանի մահից հետո, Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովը նոր խան այլևս չնշանակեց, այլ հաստատեց ռուսական կառավարչաձև՝ խանությունը վերանվանելով պրովինցիա[286]: 1820 թ. այդ կարգը հաստատվեց Շամախիում, ավելի ուշ՝ 1826 թ.՝ Թալիշում[287]:

XIX դարի սկզբներին, ապա առաջին տասնամյակի վերջերին երկրամասում հայերի թվաքանակը հետզհետե մեծացավ՝ նաև ի հաշիվ Իրանից և Վրաստանից գաղթած հայերի: Իրանահայ գյուղացիների տեղաշարժերը, որոնք սկիզբ էին առել դեռևս XVIII դարի 20-ական թվականներին Ջհարմհալի, Փերիայի և Քեարվանդի շրջաններից, բացի հարավային շրջանների սահմաններից, ուղղություն է վերցնում նաև դեպի Հնդկաստան, Ռուսաստան և Կովկաս[288]: Այդ գավառների բնակչությունը Շահ-Աբբաս I-ի գաղթեցրած հայերի սերունդներն էին, որոնց համար այս տեղաշարժը, ըստ էության, հայրենադարձություն էր: Ենթադրվում է, որ գաղթը հիմնականում տեղի է ունեցել բախտիարների և Լուրիստանի լեռնականների հարձակումների, հարստահարումների և XVIII դարի վերջերին բռնկված տևական սովի ու երաշտի պատճառով, երբ հայ բնակչության մի մասը ֆիզիկական գոյությունը պահպանելու համար հարկադրված գաղթեց ապահով վայրեր[289]: Լ. Մինասյանը Փերիայի գավառի հայերի օրինակով

[280] Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 230:
[281] АКАК, т. VI, ч. I, док. 1081, стр. 726.
[282] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140:
[283] **Րաֆֆի**, Խամսայի մելիքությունները, էջ 320:
[284] Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, ԵԺ, հ. 4, գիրք Ա, Երևան, 1984, էջ 382:
[285] Տե՛ս **Шопен И.**, Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852, стр. 451-452.
[286] Տե՛ս **Сегаль И.**, Елисаветпольская губерния (впечатления и воспоминания), КВ, Тифлис, 1900, № 1, стр. 81.
[287] Տե՛ս Материалы по истории народов СССР. Колониальная политика Российскаго царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I (феодальные отношения и колониальный режим 1827-1843 гг.), Москва, 1936, стр. 8.
[288] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 221, տե՛ս նաև **Մարտիրոսյան Հ.**, Իրանահայ գաղութի պատմություն, Երևան, 2007, էջ 134:
[289] Տե՛ս **Տէր-Յովհանեանց Հ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, Նոր Ջուղա, հ. Ա, 1880, էջ, 350, տե՛ս նաև **Երեմեան Ա.**, Սպահանի Փէրիա գաւառը (ազգագրութիւն), Նոր-Ջուղա, 1919, էջ 27, տե՛ս նաև **Ավագ քհն. Եդգարեան**, Իրանի Չհարմհալ գաւառը, Թեհրան, 1963, էջ 18:

գրում է. «Գիւղացիները մի կտոր հաց գտնելու յոյսով թողնում են գաւառը եւ գիւղից-գիւղ ու գաւառից-գաւառ պտըտելով սկսում են ցրուել»[290]: Կյանքի դժնդակ պայմանների թելադրանքով 1800-ականների սկզբներին Կովկաս փոխադրված իրանահայ ընտանիքները հաստատվել են Շիրվանի[291], իսկ 1805, 1807 թթ. Խոյից գաղթածները՝ Շաքիի խանությունում[292]: Ն. Գորոյանցը տեղեկացնում է, որ խոյեցիներից «1805-ին կամ 1809-ին բազմաթիւ ընտանիքներ այս տեղէ Գանձակ և շրջակաները գաղթեցին. իսկ վերջին մեծ գաղթը տեղի ունեցաւ 1828 թւին»[293]: Ե. Ֆրանգյանն Ատրպատականին նվիրված իր աշխատությունում, անդրադառնալով խոյեցի հայերի տարբեր ժամանակների գաղթին, գրում է. «Հայտնի է, որ նրանք (խոյեցի հայերը - Գ. Ս.) գաղթել են ուրիշ երկրներ: Չըհաշւած մանր, աննշան գաղթականութիւնները, եղել է երկու նշանաւոր գաղթականութիւն: Մէկ՝ 1805 թւին, երկրորդ, որ ամենագլխաւորն է, պարսկահայերի մեծ գաղթականութեան միջոցին... 1828 թ.»[294]: Ընդսմին՝ թեև վերջիններիս աշխատությունների մեջ տրված տեղեկությունները ամբողջական պատկերացում չեն տալիս Շիրվանում Խոյից տեղափոխվածների թվի մասին, այնուհանդերձ փաստվում է, որ փոքր խմբերով հայ ընտանիքներ հաստատվել են Շիրվանում: Ինչ վերաբերում է խոյեցիների՝ 1828 թ. գաղթին, ապա նշենք, որ Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում հաստատվելուց բացի, ուրիշ վստահելի ապացույցներ չունենք այդ թվականին նրանց՝ Շիրվանում հաստատվելու փաստը նշելու համար: Իրանահայերի հոսքը Շիրվան շարունակվեց Սպահանում և Նոր-Ջուղայում 1815-1818 թթ. բռնկված սովի պատճառով[295], որի հետևանքով 1820 թ. փոքր խմբերով հայ ընտանիքներ հաստատվեցին Շիրվանի հայաբնակ մի քանի գյուղերում[296]:

Երկրամասի XIX դարի առաջին երկու տասնամյակների հայկական և հայաբնակ վայրերի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից 1818 թ. հուլիսի 16-ին Աղվանից կաթողիկոսության Շամախու հայոց թեմի վերաբերյալ կազմված[297] նվիրական հետևյալ ցուցակը[298].

290 Մինասեան Լ., Պատմութիւն Փերիայի հայերի (1606-1956), Անթիլիաս-Լիբանան, 1971, էջ 97:
291 Տե՛ս Գ. [Գրիգոր Ղազարյան], Մատրասա (Շամախու գաւառ), «Նոր-դար», Թիֆլիս, 1898, մայիսի 6, № 76:
292 Տե՛ս Экономический быт государственных крестьян Арешского уезда Елисаветпольской губернии, исследование **А. Н. Арасханианца**, МИЭБГКЗК, т. VII, Тифлис, 1887, стр. 145: Շաքիի գաւառում խոյեցիներ հաստատվել են Ղայաբաշի և Ջաֆարաբադ գյուղերում: «...խօյեցիները եկել են Շաքիի խանութիւնը 1807 թուականին,- գրում է Ն. Աբելյանը,- որ իսկ հիմնել են Գայաբաշի գիւղը 1824 թուականին» (տե՛ս Աբէլեան Ն., Արքունական հայ գիւղացին Անդրկովկասում, (IV), Եղիսաւէտպօլի նահանգ, «Արձագանք», Թիֆլիս, 1888, մարտի 20, № 10, էջ 127): Շամախիից գրականագետ Նիկողայոս Քարամյանի՝ Ղայաբաշի գյուղի պատմության վերաբերյալ «Արձագանքին» հղած թղթակցությունում գրում է. «Բուն Ղայաբաշցիք գաղթած են Պարսկաստանի Խոյ գաւառից մօտ 70 թէ 73 տարի առաջ և մինչև այժմ պահպանած են խոյեցւոց թէ բարբառը և թէ սովորութիւնները» (Ք., Ղայաբաշի, «Արձագանք», Թիֆլիս, 1893, փետրվարի 17, № 20):
293 Գորոյեան Ն., Պարսկաստանի հայերը (պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառօտ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի մասին՝ ամենահին ժամանակներէ մինչեւ 1898 թ.), Թեհրան, 1968, էջ 164:
294 Ֆրանգեան Ե., Ատրպատական (պատկերազարդ ժողովածու), Թիֆլիս, 1905, էջ 51:
295 Տե՛ս **Տէր-Հովհաննեանց Հ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ, 267, 397:
296 Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140:
297 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 4: Ցուցակում հայերի տների թիվը նշված է միայն Դերբենդ (15-20) և Բաքու (40) քաղաքներում: Ցուցակի տեղեկացմամբ՝ 30 տուն վաճառականներ բնակվում էին նաև Էնզելի և Սարու (Սարու քաղաքը գտնվել է իրանական Ադրբեջանում՝ Արդաբիլից Թավրիզ տանող ճանապարհին (տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 73, 176): Նշենք, որ ցուցակում չի նշվում Շամախիի հայոց թեմի մեջ մտնող վարչատարածքային հետագա բաժանումների արդյունքում մտել է Շամախիի հայոց թեմի մեջ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99):
298 Աղյուսակում գյուղերի անունները տրված են ըստ բնագրային տեքստի: Փակագծերի մեջ նշել ենք հետագա ժամանակներում տրված անունը: Թվարկումն այբբենական կարգով է:

Աղյուսակ № 1

Աղսուլաղ	Ղուպա (Ղուբա)
Աշաղի Նորշեն (I), (Ղուդիշեն, Աշղբայրամ)	Մադրասայ
Ավանաշեն	Մեյսարի
Բահլիեան	Միրիշեն
Բիլխատան	Միսկիւր (Մուշկուր)
Բոզաւանդ	յնդար (Հնդար)
Բօյի գիւղ[299]	Նորշեն (II)
Գանձակ	Նորշեն (III)
Գիւզոամ (Կուզոան)	Նորշեն (IV), (Ազայիշե՞ն)
Գիւրջուվան (Գյուրջևան)	Պաքու
Գիրք	Սաղիեան
Դարպանդ	Տակմադաղլու (Դայմադաղ)
Զարկարան	Փախրաքիւշ
Թալիշ	Փանքանկ (Փաքակլու՞)
Թալիշ (Լենքորան)	Փիր քաղաքն (նկատի է առնված Ֆիք լեռան մոտ հիմնված Նոր Շամախին)
Թօպի շեն (Թուփիշեն)	Քալախանի
Իւչտալ (Ուշտալ)	Քալպանդ
Խայիլդվար (Դվարիշեն)	Քաւանդի (Քավանտ)
Կիւրջիլար (Գյուրջաշեն)	Քարքանջ (Դարա-Քարքանջ)
Հին Քարքանջ	Քեյեվար (Քիվար)
Ղալակայ	Քեշխուրդ
Ղաջար	Քովլուջ (Քոհլուճ)

Ցարական արքունիքի՝ Այսրկովկասում անցկացրած վարչական բարեփոխումների արդյունքում 1824 թ. մայիսի 5-ի հրամանագրով նախկին խանությունների տարածքը բաժանվեց երկու տեղամասերի՝ այսպես կոչված մահմեդականի, որն ընդգրկում էր Շիրվանի, Շաքիի, Ղարաբաղի և Թալիշի խանությունները և Դաղստանի, որն ընդգրկում էր Բաքուն, Ղուբան և Դերբենդը[300]:

Այսրկովկասում Ռուսաստանն իր տիրապետությունը վերջնականապես հաստատեց 1826-1828 թթ. ռուս-իրանական պատերազմում հաղթանակ տանելուց հետո: 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն՝ իրանահայերին իրավունք տրվեց հյուսիսային նահանգներից ներգաղթելու Ռուսաստանին միացված իրենց հայրենի երկիրը: Հարկ է նշել, որ թեև նրանց վերաբնակեցումը հիմնականում ավարտվել էր 1829 թ., սակայն 1830 թ. ողջ ընթացքում, իսկ առանձին դեպքերում մինչև 1832 թ., տեղի են ունեցել լոկալ տեղափոխումներ[301]: Պատմական աղբյուրների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք համայնքների՝ թերևս Թավրիզում և Սպահանում 1830-1831 թթ. բռնկված խոլերայի ու սովի, ինչպես նաև կյանքի անապահովության ու այլ հանգամանքների պատճառով Նոր Ջուղայի շրջակա հայաբնակ գյուղերից, Սպահանից, Խոյ, Փերիա և Ղարաղան գավառներից որոշ թվով հայ ընտանիքներ 1830-1832 թթ.

299 Գյուղի տեղագրությունը մեզ անծանոթ է: Այն չի հիշատակվում տեղագրող այլ հեղինակների (Սարգիս արքեպ. Ջալալյանց, Դանիել արքեպ. Շահնազարյանց, Մակար եպս. Բարխուտարյանց, Մեսրոպ արքեպ. Սմբատյանց) աշխատություններում, ինչը ենթադրել է տալիս, որ գյուղը հետագա ժամանակներում ինչ-ինչ պատճառներով դարձել է անմարդաբնակ: Ինչպես օրինակ՝ Նորշենից 1 կմ արևմուտք եղել են հայկական գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդներ, Ռուշանաշենի հյուսիսային կողմում եղել է ծառերով ու մացառներով ծածկված ավերակ գյուղատեղի, եղեղցի և գերեզմանոց (տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 201, տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 68):
300 Տե՛ս **Դիլոյան Վ.**, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 42, տե՛ս նաև **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье, стр. 27.
301 Տե՛ս **Газарян И.**, Переселение армян из Персии в Армянскую Область в 1828 г., «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1957, № 7, стр. 69, տե՛ս նաև **Саркисян Г.**, նշվ. աշխ., стр. 60.

վերաբնակվել են Շամախիի գավառի Զարխու, Կարմախան և հարակից այլ գյուղերում[302]: Ինչպես տեղեկացնում է Հարություն Տեր-Հովհանյանցը՝ «...աղքատացան բազումք և ցրուեցան ոմանք ի զանազան սահմանս...»[303]: Հր. Աճառյանի մի տեղեկության համաձայն՝ 1828 թ. ներգաղթից հետո Շամախիի գավառում հաստատվել էին նաև Մարաղայից տեղափոխվածներ[304]:

Արցախահայ և իրանահայ գաղթականության մուտքը փոփոխության ենթարկեց երկրամասի հայաբնակ գոտու ոչ միայն ազգագրական պատկերը, այլև գյուղերի խմբավորումը՝ ըստ բնակչության թվի: Արևելյան Այսրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատումից հետո պաշտոնական առաջին ընտանեկան ցուցակագրությունն անցկացվել է 1831 թ., համաձայն որի՝ Շիրվանի պրովինցիայի հինգ մահալներում հայերը 1764 ծուխ էին՝ 12390 (6187 ար., 6203 իգ.) բնակչով[305]: Նույն ցուցակագրության համաձայն՝ երկրամասում քիչ թվով հայեր բնակվում էին նաև Թալիշի խանության տարածքում[306]: XIX դարի 30-ական թթ. սկզբներին Միայն Լենքորան քաղաքում հայերն ունեին 48 տուն[307]: Ըստ մահալների՝ պատկերը աղյուսակի տեսքով հետևյալն է[308].

Աղյուսակ № 2

Բնակավայր / Ղոշունի մահալ (Շամախու գավառ)	Ծուխ	ար.	իգ.	Բնակավայր	Ծուխ	ար.	իգ.
Արփաւոտ	225	524	521	Նորշեն (II)	25	88	73
Գյուրջաշեն	14	49	39	Քոհյուճ	39	130	137
Դարա-Քարքանջ	11	40	43	Քավանտ	52	200	164
Դվարի (Դվարիշեն)	71	220	222	Ղասանի մահալ (Գյոքչայի գավառ)			
Թալիշ	13	53	42	Աղբուլաղ	21	60	58
Խանիշեն	24	77	61	Ավանաշեն (Ղոշաբենդ)	12	58	44
Հին Շամախի	14	57	52	Գանձակ	64	246	192
Ղաջար	13	34	28	Գիրք	14	41	35
Մատրասա	39	132	114	Դայմադաղ	29	100	91
Մեյսարի	20	65	51	Թուրիշեն	73	294	254
Միրիշեն	60	173	151	Նորշեն (I), (Կուդիշեն, Աշըրայրամ)	56	209	980
Սաղիան	92	360	301	Փաքակլու	99	415	376
Փախրաքուշ	126	478	388		40	174	140
Քալախան	20	72	63	Խազաուրտի մահալ (Գյոքչայի գավառ)			
Քարքանջ	28	77	77	Բզավանդ	21	61	50
Հովուգի մահալ (Շամախու գավառ)				Խոշավատ	43	172	155
Բահիյան	10	37	32	Ղալակա	35	190	154
Բիլիստան	89	284	243	Ագայիշեն (Նորշեն), (IV)	96	374	282
Գյուրջևան	28	106	89	Ռուշանաշեն	20	72	69
				ՈՒշտալ	6	21	26
Գյուրդա	61	199	183	Սարդարի մահալ (Գյոքչայի գավառ)			
Զարգարան	12	52	52	Քայբանդ	27	119	99
Հնդար	22	74	72	Ընդամենը	1764	6187	6203
						12390	

302 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 309, թ. 8, տե՛ս նաև **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 12, տե՛ս նաև **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 173, 191, տե՛ս նաև **Գ-որոյեան Ն.**, նշվ. աշխ., էջ 94:

303 **Տէր-Հովհաննեանց Հ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 401:

304 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, էջ 53:

305 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 63:

306 Տե՛ս **Евецкий О.**, նշվ. աշխ., стр. 211.

307 Տե՛ս Обозрение российских владений на Кавказе (в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях (Талышинское ханство), СПб., 1836, ч. III, стр. 206.

308 Փակագծում տրված են նաև վարչատարածքային հետագա բաժանումների հետևանքով ստեղծված գավառների անունները: Գյուղերը ըստ գավառների թվարկված են այբբենական կարգով:

Աղյուսակ № 1-ի և № 2-րդի ամփոփումները հնարավորություն են ընձեռում փաստելու, որ ներգաղթի արդյունքում երկրամասում ավելացել էր հայկական գյուղերի և բնակչության թիվը: 1831 թ. ցուցակագրությունում տեղ են գտել նաև Արփաւոտ, Խանիշեն, Գյուրդա, Ռուշանաշեն և Խոշավատ գյուղերը[309]: Այդտեղից պարզ է, որ իրանահայ գաղթականներն առաջին հերթին վերաբնակվել են նոր բնակեցված հայկական կամ նախկինում հայաբնակ, ապա ամայացած գյուղերում, որի արդյունքում ժամանակի հետ զգալիորեն ընդլայնվեց հայ բնակչության էթնոտարածքը: Ինչպես իրավացիորեն գրում է Գր. Ավագյանը. «Այստեղի (Կուրի ձախափնյակի - Գ. Ս.) հայերը, բացի մի քանի գյուղերից, որոնց բնակչությունը XIX դարի սկզբներին (Ռուսաստանին միանալու շրջանում) վերաբնակեցվել է Իրանից (Պարսկաստանից), բնիկներ են, տեղացիներ»[310]:

Այսրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատումից հետո ցարական արքունիքն աստիճանաբար այնտեղ հաստատեց միապետական վարչակարգին հատուկ կառավարչաձև: Տարածաշրջանի բարեփոխումների ծրագրերը մշակում էր ցարական կառավարության կողմից զինվորական նախարար կոմս Ա. Չերնիշևի նախագահությամբ 1833 թ. հուլիսի 11-ին ստեղծված «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտեն»[311]: 1840 թ. ապրիլի 10-ին կառավարությունն ընդունեց օրինագիծ, որով Այսրկովկասում վարչական նոր բաժանում էր անցկացվում: Այդ օրենքով ստեղծվում էին վարչական երկու միավորներ՝ Վրացա-Իմերեթական նահանգ՝ Թիֆլիս, և «Մահմեդական պրովինցիայում»՝ Կասպիական մարզ՝ Շամախի կենտրոններով[312]: Վարչական միավորները կազմելիս անտեսվեցին տվյալ վայրում ապրող ժողովրդների պատմական հայրենիքի տարածքային սկզբունքները և բնակչության ազգային առանձնահատկությունները: Ընդ որում՝ վարչատարածքային այս նոր բաժանման հիմքում ընկած էին նախկին խանությունների տարածքային սահմանները: Կասպիական մարզի գավառներն էին Նուխին (կազմվեց Շաքիի պրովինցիայից), Շամախին (Շիրվանի պրովինցիայից և Սալյան տեղամասից), Ղուբան (Ղուբայի պրովինցիայից և Սամուրի շրջանից), Բաքուն (Բաքվի պրովինցիայից), Լենքորանը (Թալիշի մարզից), Դերբենդը (Դերբենդի, Թաբարսարանի և Ղարա-ղայթաղի պրովինցիաներից) և Շուշին (Ղարաբաղի պրովինցիայից)[313]:

Վարչատարածքային վերոնշյալ բաժանումների ժամանակ Շիրվանշահերի պետությունից բացի, Կասպիական մարզի սահմանների մեջ հայտնվեցին նաև ժամանակին Մեծ Հայքի մաս կազմած Կուրի աջափնյա և Արաքսի ստորին հոսանքից հարավ-արևելք ընկած Փայտակարան նահանգի[314] հյուսիսային տարածքները զբաղեցնող Մուղանի[315] կամ Սալյանի հարթու-

309 Հովհաննես նվիրակի ցուցակում նշված 4 Նորշեն գյուղերից 1831 թ. ցուցակագրությունում հիշատակվում են 3-ը:

310 **Ավագյան Գ.**, Հայկական ՍՍՀ բնակչությունը (տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 1975, էջ 60:

311 **Иваненко В.**, Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича (исторический очерк), Тифлис, 1901, стр. 289.

312 Տե՛ս նույն տեղում, էջ 303, տե՛ս նաև **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье, стр. 66.

313 Տե՛ս **Иваненко В.**, նշվ. աշխ., էջ 303, տե՛ս նաև **Евангулов Г.**, Местная реформа на Кавказе, СПб., 1914, стр. 13, տե՛ս նաև **Шахатунян А.**, Административный передел Закавказскаго края, Тифлис, 1918, стр. 86.

314 Մեծ Հայքի տասնմեկերորդ նահանգ Փայտակարանը տարածվում էր Արաքսի ստորին հոսանքի աջ կողմում՝ Կուրի և Արաքսի գետախառնուրդի շրջաններից մինչև Ատրպատական և Կասպից ծով: Ունեցել է 12 գավառ: Նահանգի Վարդանակերտ գավառը (Վարդանակերտ կենտրոնով) ընդգրկում էր Մուղանի դաշտի մեծ մասը, Հրաքոտպերոժ գավառի կենտրոնն էր արքունի քաղաք Փայտակարանը, որը նախքան Կասպից ծովի մակարդակի անկումը եղել է ծովափնյա

գրում է. «Գիւղացիները մի կտոր հաց գտնելու յոյսով թողնում են գաւառը եւ գիւղից-գիւղ
ու գաւառից-գաւառ պտըտելով սկսում են ցրուել»[290]: Կյանքի դժնդակ պայմանների թե-
լադրանքով 1800-ականների սկզբներին Կովկաս փոխադրված իրանահայ բնտանիքները հաս-
տատվել են Շիրվանի[291], իսկ 1805, 1807 թթ. Խոյից գաղթածները՝ Շաքիի խանությունում[292]: Ն.
Գորոյանցը տեղեկացնում է, որ խոյեցիներից «1805-ին կամ 1809-ին բազմաթիւ ընտանիքներ
այս տեղէ Գանձակ և շրջակաները գաղթեցին. իսկ վերջին մեծ գաղթը տեղի ունեցաւ 1828
թւին»[293]: Ե. Ֆրանգյանն Ատրպատականին նվիրված իր աշխատությունում, անդրադառնալով
խոյեցի հայերի տարբեր ժամանակների գաղթին, գրում է. «Հայտնի է, որ նրանք (խոյեցի հա-
յերը - Գ. Ս.) գաղթել են ուրիշ երկրներ: Չըհաշուած մանր, աննշան գաղթականութիւնները,
եղել է երկու նշանաւոր գաղթականութիւն: Մէկ՝ 1805 թւին, երկրորդ, որ ամենագլխաւորն է,
պարսկահայերի մեծ գաղթականութեան միջոցին... 1828 թ.»[294]: Ընդսմին՝ թեև վերջիններիս
աշխատությունների մեջ տրված տեղեկությունները ամբողջական պատկերացում չեն տալիս
Շիրվանում Խոյից տեղափոխվածների թվի մասին, այնուհանդերձ փաստվում է, որ փոքր
խմբերով հայ ընտանիքներ հաստատվել են Շիրվանում: Ինչ վերաբերում է խոյեցիների՝ 1828
թ. գաղթին, ապա նշենք, որ Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում հաստատվելուց բա-
ցի, ուրիշ վստահելի ապացույցներ չունենք այդ թվականին նրանց՝ Շիրվանում հաստատվելու
փաստը նշելու համար: Իրանահայերի հոսքը Շիրվան շարունակվեց Սպահանում և Նոր-Ջու-
ղայում 1815-1818 թթ. բռնկված սովի պատճառով[295], որի հետևանքով 1820 թ. փոքր խմբերով
հայ ընտանիքներ հաստատվեցին Շիրվանի հայաբնակ մի քանի գյուղերում[296]:

Երկրամասի XIX դարի առաջին երկու տասնամյակների հայկական և հայաբնակ վայրե-
րի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից
1818 թ. հուլիսի 16-ին Աղվանից կաթողիկոսության Շամախու հայոց թեմի վերաբերյալ կազմ-
ված[297] նվիրական հետևյալ ցուցակը[298].

[290] Մինասեան Լ., Պատմութիւն Փերայի հայերի (1606-1956), Անթիլիաս-Լիբանան, 1971, էջ 97:
[291] Տե՛ս Գ. [Գրիգոր Ղազարյան], Մատրասա (Շամախու գաւառ), «Նոր-դար», Թիֆլիս, 1898, մայիսի 6, № 76:
[292] Տե՛ս Экономический быт государственных крестьян Арешского уезда Елисаветпольской губернии, исследование
Տե՛ս Экономический быт государственных крестьян Арешского уезда Елисаветпольской губернии, исследование
А. Н. Арасханианца, МИЭБГКЗК, т. VII, Тифлис, 1887, стр. 145: Շաքիի գաւառում խոյեցիներ հաստատվել են Ղայա-
А. Н. Арасханианца, МИЭБГКЗК, т. VII, Тифлис, 1887, стр. 145: Շաքիի գաւառում խոյեցիներ հաստատվել են Ղայա-
բաշի և Ջաֆարաբադ գյուղերում: «...խօյեցիները եկել են Շաքիի խանութիւնը 1807 թուականին,- գրում է Ն. Աբելյանը,-
որ իսկ հիմնել են Գայաբաշի գիւղը 1824 թուականին» (տե՛ս **Աբէլեան Ն.**, Արցունական հայ գիւղացին Անդրկովկասում,
(IV), Ելիսաւէտպօլի նահանգ, «Արձագանք», Թիֆլիս, 1888, մարտի 20, № 10, էջ 127): Շամախիից գրականագետ Նիկո-
ղայոս Քարամյանի՝ Ղայաբաշի գյուղի պատմության վերաբերյալ «Արձագանքին» հղած թղթակցությունում գրում է.
«Բուն Ղայաբաշցիք գաղթած են Պարսկաստանի Խոյ գաւառից մօտ 70 թէ 73 տարի առաջ և մինչև այժմ պահպանած են
խոյեցոց թէ բարբառը և թէ սովորութիւնները» (**Ք.**, Ղայաբաշի, «Արձագանք», Թիֆլիս, 1893, փետրվարի 17, № 20):
[293] **Գորոյեան Ն.**, Պարսկաստանի հայերը (պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառօտ տեղեկութիւններ
Պարսկաստանի հայերի մասին՝ ամենահին ժամանակներէ մինչեւ 1898 թ.), Թեհրան, 1968, էջ 164:
[294] **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական (պատկերազարդ ժողովածու), Թիֆլիս, 1905, էջ 51:
[295] Տե՛ս **Տէր-Հովհաննեանց Հ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ, 267, 397:
[296] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140:
[297] Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 4: Ցուցակում հայերի տների թիվը նշված է
միայն Դերբենդ (15-20) և Բաքու (40) քաղաքներում: Ցուցակի տեղեկացմամբ՝ 30 տուն վաճառականներ բնակվում էին
նաև Էնզելի և Սարու (Սարու քաղաքը գտնվել է իրանական Ադրբեջանում՝ Արդաբիլից Թավրիզ տանող ճանապարհի
հատվածում (տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 73, 176): Նշենք, որ ցուցակում
Նուխիի հաջորդության պատկան գյուղերի ցանկում նշված է նաև Վանք գյուղը, որը վարչատարածքային հետագա բա-
ժանումների արդյունքում մտել է Շամախիի հայոց թեմի մեջ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99):
[298] Աղյուսակում գյուղերի անունները տրված են ըստ բնագրային տեքստի: Փակագծերի մեջ նշել ենք հետագա ժամա-
նակներում տրված անունը: Թվարկումն այբբենական կարգով է:

Աղյուսակ № 1

Աղպույաղ	Ղուպա (Ղուբա)
Աշաղի Նորշեն (I), (Ղուդիշեն, Աշըրայրամ)	Մադրասայ
Ավանաշեն	Մեյսարի
Բահլիեան	Միրիշեն
Բիլիստան	Միւսկիւր (Մուշկուր)
Բօզաւանդ	յնդար (Հնդար)
Բօլի գիւղ[299]	Նորշեն (II)
Գանձակ	Նորշեն (III)
Գիւզռամ (Կուզռան)	Նորշեն (IV), (Ազայիշե՞ն)
Գիւրջուվան (Գյուրջևան)	Պաքու
Գիրք	Սաղիեան
Դարպանդ	Տակմադաղլու (Դայմադաղ)
Զարկարան	Փախրաքիշ
Թալիշ	Փանրանկ (Փաքակլու՞)
Թալիշ (Լենքորան)	Փիք քաղաքն (նկատի է առնված Ֆիք լեռան մոտ հիմնված Նոր Շամախին)
Թօղի շեն (Թուքիշեն)	Քալախանի
Իւշտայ (Ուշտայ)	Քալպանդ
Խալիլղվար (Դվարիշեն)	Քաւանդի (Քավանտ)
Կիւրջիլար (Գյուրջաշեն)	Քարքանջ (Դարա-Քարքանջ)
Հին Քարքանջ	Քեյեվար (Քիվար)
Ղալակալ	Քեշխուրդ
Ղաջար	Քովլուջ (Քոհյուճ)

Ցարական արքունիքի՝ Այսրկովկասում անցկացրած վարչական բարեփոխումների արդ-
յունքում 1824 թ. մայիսի 5-ի հրամանագրով նախկին խանությունների տարածքը բաժանվեց
երկու տեղամասերի՝ այսպես կոչված մահմեդականի, որն ընդգրկում էր Շիրվանի, Շաքիի,
Ղարաբաղի և Թալիշի խանությունները և Դաղստանի, որն ընդգրկում էր Բաքուն, Ղուբան և
Դերբենդը[300]:

Այսրկովկասում Ռուսաստանն իր տիրապետությունը վերջնականապես հաստատեց
1826-1828 թթ. ռուս-իրանական պատերազմում հաղթանակ տանելուց հետո: 1828 թ. փետրվա-
րի 10-ին կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն՝ իրա-
նահայերին իրավունք տրվեց հյուսիսային նահանգներից ներգաղթելու Ռուսաստանին միաց-
ված իրենց հայրենի երկիրը: Հարկ է նշել, որ թեև նրանց վերաբնակեցումը հիմնականում
ավարտվել էր 1829 թ., սակայն 1830 թ. ողջ ընթացքում, իսկ առանձին դեպքերում մինչև
1832 թ., տեղի են ունեցել լոկալ տեղափոխումներ[301]: Պատմական աղբյուրների մանրամասն
ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք հանգամանքների՝ թերևս Թավրիզում և
Սպահանում 1830-1831 թթ. բռնկված խոլերայի ու սովի, ինչպես նաև կյանքի անապահովութ-
յան ու այլ հանգամանքների պատճառով Նոր Ջուղայի շրջակա հայաբնակ գյուղերից, Սպա-
հանից, Խոյ, Փերիա և Ղարաղան գավառներից որոշ թվով հայ ընտանիքներ 1830-1832 թթ.

[299] Գյուղի տեղագրությունը մեզ անծանոթ է: Այն չի հիշատակվում տեղագրող այլ հեղինակների (Սարգիս արքեպ.
Ջալալյանց, Դանիել արքեպ. Շահնազարյանց, Մակար եպս. Բարխուտարյանց, Մեսրոպ արքեպ. Սմբատյանց) աշխա-
տություններում, ինչը ենթադրել է տալիս, որ գյուղը հետագա ժամանակներում ինչ-ինչ պատճառներով դարձել է անմար-
դաբնակ: Ինչպես օրինակ՝ Նորշենից 1 կմ արևմուտք եղել են հայկական գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդներ,
Ռուշանաշենի հյուսիսային կողմում եղել է ծառերով ու մացառներով ծածկված ավերակ գյուղատեղի, եղեղեցի և գերեզ-
մանոց (տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 201, տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Շամախու գավառի գյուղերի պատ-
մությունից, էջ 68):
[300] Տե՛ս **Դիլոյան Վ.**, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները,
Երևան, 1989, էջ 42, տե՛ս նաև **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закав-
казье, стр. 27.
[301] Տե՛ս **Газарян И.**, Переселение армян из Персии в Армянскую Область в 1828 г., «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս.
գիտ.), Երևան, 1957, № 7, стр. 69, տե՛ս նաև **Саркисян Г.**, նշվ. աշխ., стр. 60.

վերաբնակվել են Շամախիի գավառի Ջարխու, Կարմախան և Հարակից այլ գյուղերում[302]: Ինչ-
պես տեղեկացնում է Հարություն Տեր-Հովհանյանցը՝ «...աղքատացան բազումք և ցրուեցան
ոմանք ի զանազան սահմանս...»[303]: Հր. Աճառյանի մի տեղեկության համաձայն՝ 1828 թ. ներ-
գաղթից հետո Շամախիի գավառում հաստատվել էին նաև Մարաղայից տեղափոխվածներ[304]:

Արցախահայ և իրանահայ գաղթականության մուտքը փոփոխության ենթարկեց երկ-
րամասի հայաբնակ գոտու ոչ միայն ազգագրական պատկերը, այլև գյուղերի խմբավորումը՝
ըստ բնակչության թվի: Արևելյան Այսրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստա-
տումից հետո պաշտոնական առաջին ընտանեկան ցուցակագրությունն անցկացվել է 1831 թ.,
համաձայն որի՝ Շիրվանի պրովինցիայի հինգ մահալներում հայերը 1764 ծուխ էին՝ 12390
(6187 ար., 6203 իգ.) բնակչով[305]: Նույն ցուցակագրության համաձայն՝ երկրամասում քիչ
թվով հայեր բնակվում էին նաև Թալիշի խանության տարածքում[306]: XIX դարի 30-ական թթ.
սկզբներին Միայն Լենքորան քաղաքում հայերն ունեին 48 տուն[307]: Ըստ մահալների՝ պատկե-
րը աղյուսակի տեսքով հետևյալն է[308].

Աղյուսակ № 2

Բնակավայր	Ծուխ	ար.	իգ.	Բնակավայր	Ծուխ	ար.	իգ.
Ղոշունի մահալ (Շամախու գավառ)							
Արփաւուտ	225	524	521	Նորշեն (II)	25	88	73
Գյուրջաշեն	14	49	39	Քոհյուճ	39	130	137
Դարա-Քարքանջ	11	40	43	Քավանտ	52	200	164
Դվարի (Դվարիշեն)	71	220	222	Ղասանի մահալ (Գյոքչայի գավառ)			
Թալիշ	13	53	42	Աղբուլաղ	21	60	58
Խանիշեն	24	77	61	Ավանաշեն (Ղոշաբենդ)	12	58	44
Հին Շամախի	14	57	52	Գանձակ	64	246	192
Ղաջար	13	34	28	Գիրք	14	41	35
Մատրասա	39	132	114	Դայմադաղ	29	100	91
Մեյսարի	20	65	51	Թուրիշեն	73	294	254
Միրիշեն	60	173	151	Նորշեն (I), (Ղուզիշեն, Աշրբայրամ)	56	209	980
Սաղիան	92	360	301	Փաթակլու	99	415	376
					40	174	140
Փախրաքուշ	126	478	388	Խազառուդի մահալ (Գյոքչայի գավառ)			
Քալախան	20	72	63	Բզավանդ	21	61	50
Քարքանջ	28	77	77	Խոշավատ	43	172	155
Հովուզի մահալ (Շամախու գավառ)				Ղալակա	35	190	154
Բահիան	10	37	32	Ազայիշեն (Նորշեն), (IV)	96	374	282
Բիլիստան	89	284	243	Ռուշանաշեն	20	72	69
Գյուրջևան	28	106	89	Ոէշտալ	6	21	26
Գյուրդա	61	199	183	Սարդարի մահալ (Գյոքչայի գավառ)			
				Քալբանդ	27	119	99
Ջարգարան	12	52	52			6187	6203
Հնդար	22	74	72	Ընդամենը	1764	12390	

[302] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 309, թ. 8, տե՛ս նաև **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 12, տե՛ս նաև Բարխուտարեանց
Մ., նշվ. աշխ., էջ 173, 191, տե՛ս նաև Գորոյեան Ն., նշվ. աշխ., էջ 94:
[303] Տէր-Հովհաննեանց Հ., նշվ. աշխ., h. Ա, էջ 401:
[304] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 53:
[305] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 63:
[306] Տե՛ս **Евецкий О.**, նշվ. աշխ., стр. 211.
[307] Տե՛ս Обозрение российских владений на Кавказе (в статистическом, этнографическом, топографическом и фи-
нансовом отношениях (Талышинское ханство), СПб., 1836, ч. III, стр. 206.
[308] Փակագծում տրված են նաև վարչատարածքային հետագա բաժանումների հետևանքով ստեղծված գավառների
անունները: Գյուղերը ըստ գավառների բվարկված են այբբենական կարգով:

Աղյուսակ № 1-ի և № 2-րդի ամփոփումները հնարավորություն են ընձեռում փաստե-
լու, որ ներգաղթի արդյունքում երկրամասում ավելացել էր հայկական գյուղերի և բնակչութ-
յան թիվը: 1831 թ. ցուցակագրությունում տեղ են գտել նաև Արփաւուտ, Խանիշեն, Գյուրդա,
Ռուշանաշեն և Խոշավատ գյուղերը[309]: Այդտեղից պարզ է, որ իրանահայ գաղթականներն
առաջին հերթին վերաբնակվել են նոր բնակեցված հայկական կամ նախկինում հայաբնակ,
ապա ամայացած գյուղերում, որի արդյունքում ժամանակի հետ զգալիորեն ընդլայնվեց հայ
բնակչության էթնոտարածքը: Ինչպես իրավացիորեն գրում է Գր. Ավագյանը. «Այստեղի (Կու-
րի ձախափնյակի - Գ. Ս.) հայերը, բացի մի քանի գյուղերից, որոնց բնակչությունը XIX դարի
սկզբներին (Ռուսաստանին միանալու շրջանում) վերաբնակեցվել է Իրանից (Պարսկաստանից),
բնիկներ են, տեղացիներ»[310]:

Այսրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատումից հետո ցարական ար-
քունիքն աստիճանաբար այնտեղ հաստատեց միապետական վարչակարգին հատուկ կառա-
վարչաձև: Տարածաշրջանի բարեփոխումների ծրագրերը մշակում էր ցարական կառավարութ-
յան կողմից զինվորական նախարար կոմս Ա. Չերնիշևի նախագահությամբ 1833 թ. հուլիսի
11-ին ստեղծված «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտեն»[311]: 1840 թ. ապրիլի 10-ին
կառավարությունն ընդունեց օրինագիծ, որով Այսրկովկասում վարչական նոր բաժանում էր
անցկացվում: Այդ օրենքով ստեղծվում էին վարչական երկու միավորներ՝ Վրացա-Իմերեթա-
կան նահանգ՝ Թիֆլիս, և «Մահմեդական պրովինցիայում»՝ Կասպիական մարզ՝ Շամախի
կենտրոններով[312]: Վարչական միավորները կազմելիս անտեսվեցին տվյալ վայրում ապրող ժո-
ղովրդների պատմական հայրենիքի տարածքային սկզբունքները և բնակչության ազգային
առանձնահատկությունները: Ընդ որում՝ վարչատարածքային այս նոր բաժանման հիմքում
ընկած էին նախկին խանությունների տարածքային սահմանները: Կասպիական մարզի գա-
վառներն էին Նուխին (կազմվեց Շաքիի պրովինցիայից), Շամախին (Շիրվանի պրովինցիայից
և Սալյան տեղամասից), Ղուբան (Ղուբայի պրովինցիայից և Սամուրի շրջանից), Բաքուն
(Բաքվի պրովինցիայից), Լենքորանը (Թալիշի մարզից), Դերբենդը (Դերբենդի, Թաբարսարանի
և Ղարա-ղայթաղի պրովինցիաներից) և Շուշին (Ղարաբաղի պրովինցիայից)[313]:

Վարչատարածքային վերոնշյալ բաժանումների ժամանակ Շիրվանշահերի պետությու-
նից բացի, Կասպիական մարզի սահմանների մեջ հայտնվեցին նաև ժամանակին Մեծ Հայքի
մաս կազմած Կուրի աջափնյա և Արաքսի ստորին հոսանքից հարավ-արևելք ընկած Փայտա-
կարան նահանգի[314] հյուսիսային տարածքները զբաղեցնող Մուղանի[315] կամ Սալյանի հարթու-

[309] Հովհաննես նվիրակի ցուցակում նշված 4 Նորշեն գյուղերից 1831 թ. ցուցակագրությունում հիշատակվում են 3-ը:
[310] Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը (տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 1975, էջ 60:
[311] **Иваненко В.**, Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого
Князя Михаила Николаевича (исторический очерк), Тифлис, 1901, стр. 289.
[312] Տե՛ս նույն տեղում, էջ 303, տե՛ս նաև **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в
Закавказье, стр. 66.
[313] Տե՛ս **Иваненко В.**, նշվ. աշխ., էջ 303, տե՛ս նաև **Евангулов Г.**, Местная реформа на Кавказе, СПб., 1914, стр. 13,
տե՛ս նաև **Шахатунян А.**, Административный передел Закавказскаго края, Тифлис, 1918, стр. 86.
[314] Մեծ Հայքի տասնմեկերորդ նահանգ Փայտակարանը տարածվում էր Արաքսի ստորին հոսանքի աջ կողմում՝ Կուրի և
Արաքսի գետախառնուրդի շրջաններից մինչև Ատրպատական և Կասպից ծով: Ունեցել է 12 գավառ: Նահանգի Վարդա-
նակերտ գավառը (Վարդանակերտ կենտրոնով) ընդգրկում էր Մուղանի դաշտի մեծ մասը, Հրաքոտպերոժ գավառի
կենտրոնն էր արքունի քաղաք Փայտակարանը, որը նախքան Կասպից ծովի մակարդակի անկումը եղել է ծովափնյա

թյան մեծ մասը (հետագայում՝ Ջավաթի գավառը) և Կասպից ծովի առափնյա Լենքորանի դաշտավայրը (հետագայում՝ Լենքորանի գավառը): Փայտակարանում Ջավաթ և Լենքորան գավառների տեղադրությանը հետևյալ բացատրությունն է տվել Գ. Պատկանյանը. «Փայտակարանի մասն, որ է Սալեանի Մուղան դաշտի և Լանքարանի հողերը»[317]*:*

Փայտակարան աշխարհով Հայաստանն իր արևելքով հարում էր Կասպից ծովին: Հայոց բնաշխարհի այդ տարածքի տեղաբնիկները հայերն են[318]*: Դարեր շարունակ այնտեղ էր Հայոց արքունի ձմեռանոցը, իսկ Արտաշիսյանների ու Արշակունիների թագավորության ժամանակաշրջաններում՝ հայկական կայազորները և վարչական ծառայողները*[319]*: Կասպից ծովի հարավարևմտյան ափերին վաղնջական ժամանակներից բնակվել են նաև իրանական ժողովուրդներից թալիշները*[320]*: Փայտակարանի էթնիկ կազմը խաթարվեց թյուրքալեզու քոչվոր ցեղերի և մոնղոլ-թաթարների ներթափանցման հետևանքով: Տեղացի բնակիչներից շատերը դուրս մղվեցին հայրենի բնօրրանից, իսկ մի մասը հարթավայրերից քաշվեց լեռնային շրջաններ*[321]*: Աղետաբեր ասպատակությունների հետևանքով կործանվեց նաև երկրամասի երկրագործական մշակույթը, ոչնչացվեց նրա ոռոգման համակարգը, երկրագործությունն ու այգեգործությունը զգալի չափով իրենց տեղը զիջեցին քոչվորական անասնապահությանը, արգավանդ դաշտերի մեծագույն մասը վերածվեց կիսաանապատի*[322]*, ինչը «Հայաստան» օրաթերթը դիպուկ է բնո-*

1944, էջ 350, տե՛ս նաև Հարությունյան Բ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, ԼՀԳ, Երևան, 1981, № 12, էջ
61-76, նույնի՝ Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ.,
ԲԵՀ, Երևան, 1976, 77-95, նույնի՝ Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների (քարտեզ), Երևան, 2001):
Փայտակարանը Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) հետո, տարբեր ժամանակներում մտել է այլևայլ պետու-
թյունների կազմի մեջ: 428-ին միացվել է Ատրպատականի մարզպանությանը: IX դ. վերջին մտել է Սաջյանների, X դ. 40-
ականներից՝ Սալարյանների, X դ. վերջից՝ Ռավվադյանների պետության մեջ: XI դ. կեսին գրավել են սելջուկ թյուրքերը,
XIII դ. առաջին կեսին՝ մոնղոլները: 1501 թ. մտել է Սեֆյանների Ղզլբաշական պետության կազմի մեջ: Փայտակարանի
արևելյան երկրամասերը 1722-1735-ին միացվել են Ռուսաստանին, ապա կրկին անցել Իրանին: 1813 թ. Գյուլիստանի
պայմանագրով վավերացվել է Փայտակարանի արևելյան մասի միացումը Ռուսաստանին, իսկ արևմտյան հատվածը
մնացել է Իրանի կազմում: 1826 թ. վերացվել է Թալիշի խանությունը, որի տարածքը XIX դարի երկրորդ կեսին մտել է
Բաքվի նահանգի մեջ: 1920 թ. ապրիլից Փայտակարանի արևելյան շրջանները Խորհրդային Ադրբեջանի, այնուհետև՝
Ադրբեջանական Հանրապետության կազմում են (տե՛ս Հարությունյան Բ., Փայտակարան, ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ
301-302):

[316] Հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացին, որ 1736 թ. մարտին անմիջական մասնակցություն է ունեցել պարսից Նադիր շահի՝ Մուղանի դաշտում թագավորության (ի նշան թագավորության՝ արքայական սուրը շահի մեջքին օրհնելով կապել է հայոց կաթողիկոսը), իր գրառումներում հետևյալ կերպ է նկարագրում դաշտը. «Եւ այս Մուղան կոչեցեալ մեծ և անհուն դաշտս, է լայն և ընդարձակ դաշտ մի հիանալի, որ Լ. (30) օր հազիւ թէ լաւ ձիաւոր մի կարէ շրջագայել զբոլորն» (Աբրահամ Կրետացի, էջ 41): Մուղանի դաշտի նկարագրությունը տե՛ս նաև **Торопова Н.**, Муганская степь (Природа и люди на Кавказе и за Кавказом): по рассказам путешественников, поэтическим произведениям **А. Пушкина, М. Лермонтова, Я. Полонскаго** и ученым исследованиям, сост. **П. Надеждин**, СПб., 1869, стр. 264.

[317] Պատկանեան Գ., Հայոց ազգի պատմութիւնը, Սանկտ-Պետերբուրգ, 1863, էջ 4:

[318] Տե՛ս **Страбон**, кн. XI, гл. VII, § 1, стр. 481, տե՛ս նաև Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, էջ 35, տե՛ս նաև Հիւբշման Հ., նշվ. աշխ., էջ 103:

[319] Տե՛ս Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 251:

[320] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 89-90, տե՛ս նաև **Кистенев Д.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 534. Թալիշները համարվում են իրանական էթնիկական մեծ զանգվածի մի կարևոր հատվածը: Թալիշների լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղի հյուսիսարևմտյան ենթաճյուղի մերձկասպյան բարբառների խմբին: Թալիշների մասին տե՛ս Ասատրյան Գ., Թալիշներ, «Իրան-նամէ», Երեւան, 1993, № 4, էջ 17-19, նույնի՝ Этюды по иранской этнологии, Ереван, 1998, стр. 3-12); Обозрение российских владений на Кавказе (Талышинское ханство), ч. III, стр. 175-252; **Миллер Б.**, Талышский язык, М-Л, 1953; Очерки по истории и культуре талышского народа (материалы первой международной научной конференции по талышеведению), вып. I, под общей ред. проф. **Г. Асатряна**, Ереван, 2007; Талыши, в кн.: Народы Кавказа, т. II, под общей ред. **С. П. Толстова**, Москва, 1962, стр. 187-194.

[321] Տե՛ս **Березин И.**, նշվ. աշխ., ч. III. гл. VI (От Салиана до Ленкорана), стр. 108.

[322] Տե՛ս **Левиатов В.**, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, стр. 41.

րոշել. «Մուղանի անապատը, որ հայկական տիրապետութեան ժամանակ ծաղկած վիճակի մէջ էր գտնւում, մահմետական տիրապետութեան, մանաւանդ թաթարական իշխանութեան օրով, «հեռու-հեռու քշեցին ընիկ ազգը մեր Հայկեան»...»[323]*:*

Ինչպես ցույց են տալիս փաստերը, անկախ այդ պարտադրված արտագաղթերից, փոքրաթիվ հայ բնակչություն, այնուամենայնիվ, մնացել էր այդտեղ: Այսպես՝ 1765 թ. Սբ. Էջմիածնի նոտար Երեմիա աբեղա Օշականցու պատրաստած «Նվիրակական վիճակների» սահմանները ճշտող վավերագրով, որում հայաբնակ վայրերի թվում նշված են նաև Սալյանը և Լենքորանը[324]*: Ռուսաստանի ակադեմիայի անդամ Սամուել Գոտլիբ Գմելինը, որը 1770 և 1773 թթ. ճանապարհորդել է Դերբենդ-Ղուբա-Բաքու-Շամախի-Սալյան երթուղով, նշում է, որ Սալյանի բնակչության հիմնական մասը հայերն էին, թաթարներ*[325] *և պարսիկներ*[326]*: 1842 թ. սեպ-*

[323] Դէպքերը Մուղանի անապատում, «Հայաստան», Թիֆլիս, 1917, դեկտեմբերի 21, № 181:

[324] Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, էջ 802, տե՛ս նաև Այվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, 2003, էջ 249:

[325] XI-XVII դդ. ողջ ընթացքում Արևելյան Այսրկովկաս ներթափանցած թյուրքալեզու բնակչության տարբեր հատվածներն ու ցեղերը կայուն էթնիկական անվանման բացակայության պատճառով մինչև XX դ. սկզբները շատ հաճախ կոչվել են տարբեր էթնանուններով՝ թաթարներ, փադառներ, շահսևաններ, ջինլիներ, ջուանշիրներ, թյուրքեր, կովկասյան թյուր-
Сысоев В., Тюркское население Азербайджана в XVII веке, Баку, 1926, стр. 3-16), որոնք, միաբեր և այլն (տե՛ս
նական հանրություն չկազմելով, չեն հավակնել հավաքական էթնանվան: XVIII դ. երկրորդ կեսին երկրամասում ճանապարհորդած գիտնականները (Ֆրիդրիխ Մարշալ ֆոն Բիբերշտեյն, Սեմյոն Բրոնևսկի և այլք), հետևելով նախորդ ճանապարհորդների, իրենց աշխատություններում թյուրքալեզու վերոհիշյալ էթնանունների փոխարեն հաճախակի սկսում են
գործածել *թաթար* անունը (տե՛ս **Керимов Э.**, Из истории этнографического изучения Азербайджана в русской науке
(XV-первой четверти XIX в.), Азербайджанский этнографический сборник (исследования и материалы), вып. I,
Баку, 1964, стр. 212-217): XIX դարի երկրորդ կեսին վերաբերող ռուսական վիճակագրական տեղեկագրերում, պաշտոնական փաստաթղթերում ու վավերագրերում *թյուրքեր* և *կովկասյան թյուրքեր* տերմինների կողքին առավել գործածական է դառնում *թաթար* անունը, որն աստիճանաբար դառնում է այստեղ ներթափանցած թյուրքալեզու ցեղերի համար
մեկ ընդհանուր հավաքական էթնանվանում (տե՛ս СНМ-1859-1864, стр. 85-89): Արդեն XIX դարի վերջին պաշտոնական
գրականության մեջ, ի թիվս կայսրության այլ թյուրքական և մահմեդական ժողովուրդների, *թաթար* է անվանվում նաև
Կովկասի թյուրքալեզու բնակչությունը (տե՛ս Энциклопедический словарь, под ред. проф. **И. Андреевскаго**, т. XIII[A],
издатели **Ф. Брокгауз, И. Ефрон**, СПб., 1894, стр. 836, տե՛ս նաև Энциклопедический словарь, под ред. проф.
И. Андреевскаго, т. XXVII[A], издатели **Ф. Брокгауз, И. Ефрон**, СПб., 1899, стр. 86): Բաքվի նահանգին վերաբերող
1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերում «թուրք-թաթարական» անվան դիմաց աղյուսակի սյունակում թյուրքալեզու էթնիկ բնակչությունը հիմնականում նշված է *թաթար* անվամբ (տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII,
стр. 53). Միայն XX դարի սկզբներին վերջիններիս սկսեցին անվանել *այսրկովկասյան թաթարներ*, որպեսզի Կազանի և
Ղրիմի թաթարները տարբերվեն (տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 22), թեպետ ազգային պատկանելության դեպքում
Կովկասի մահմեդականներն իրենց հազվադեպ են անվանել *թաթար*: Նրանց շրջանում առավել գործածական էին *թյուրք*
կամ *մուսուլման* ինքնանվանումները (տե՛ս **Алекперов А.**, նշվ. աշխ., стр. 72): 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան
Սեյմի լուծարումից հետո, երբ կովկասյան թաթարների արհեստածին «ազգային» խորհուրդը երիտթուրքերի աջակցությամբ մայիսի 28-ին Թիֆլիսում հռչակեց նոր պետության ստեղծումը, հակառակ Իրանի բողոքների, Իրանի հյուսիսարևմտյան երկրամասի՝ պատմական Ատրպատական-Ադրբեջան անունով այն կոչվեց *Ադրբեջան*: «...Ադրբեջանի պատմության» հանրահայտ դասընթացի հեղինակ Ե. Պախոմովի դիտարկմամբ՝ «Ադրբեջան անվանումը երբեք չի տարածվել
Արաքսից հյուսիս: Միայն 1918 թ., երբ Անդրկովկասյան Կոմիսարիատը բաժանվեց Վրաստանի, Հայաստանի և Արևելյան Անդրկովկասի միջև, միտք հղացավ՝ հիմնելու պետություն, որը կմիավորեր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Պարսկաստանի, այսպես կոչված, «ադրբեջանական թյուրքերին»: Այդ պետությանը ժամանակավոր տրվեց Ադրբեջան անվանումը: Սակայն այդ գաղափարը իրականացնել չհաջողվեց, և նոր Ադրբեջանական Հանրապետության կազմի մեջ
մտավ միայն Արևելյան Անդրկովկասը...» (տե՛ս **Пахомов Е.**, Краткий курс истории Азербайджана с прилож. экскурса
по истории Ширваншахов XI-XIV вв., Баку, 1923, стр. 11, հմմտ. **Бартольд В.**, Сочинение, т. II, ч. I, стр. 703). ԱԽՍՀ-
ում սեփական ինքնության փնտրտունքի մեջ գտնվող թյուրքալեզու տարբեր բարբառներով խոսող ցեղերին «Ադրբեջան»
վարչաքաղաքական անունից՝ *ադրբեջանցիներ* կոչելը ժամանակակից էթնիկ իմաստով պաշտոնական, զանգվածային
կիրառում ստացավ և վերջնականապես ամրագրվեց 1936 թ. դեկտեմբերի 5-ի ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունումով ու Անդրֆեդերացիայի կազմալուծումից հետո, որի հիմքում ընկած էր Ի. Ստալինի դեռևս 1923 թ. ապրիլի 23-ին
ՌԿԿ (բ) XII համագումարում «Ազգային մոմենտները կուսակցական և պետական շինարարությունում» կարդացած զեկուցման մեջ առաջ քաշած հետևյալ դրույթը. «Азербайджан. Основная национальность-азербайджанская...» (**Сталин И.**, Марксизм и национально-колониальный вопрос (сборник избранных статей и речей), Москва, 1934, стр. 119.):
Հարկ է նկատել, որ այս իրողությունը չեն ժխտում նաև ադրբեջանցի պատմաբաններից ոմանք: Օրինակ՝ Ա. Ալեքպերովը

տեմբերին Թալիշի գավառ այցելած Կազանի համալսարանի պրոֆեսոր Ի. Բերեզինի տեղեկացմամբ գավառի հիմնական բնակիչներն էին թալիշները, և ոչ շատ թվով՝ թաթարները[327]: Սարգիս արքեպ. Ջալալյանցը 1850 թ. Փայտակարանում եղած ժամանակ, երբեմնի հայրենի չեն երկրամասի կորուստով դառնացած, գրել է. «Զգտանին արդէն ի նմին ընդարձակ տարածութեան գիւղօրայք Հայոց, քանզի ի վաղուց անտի ի բռնակալութենէ Պարսից ընկալեալ են զօրէնս Մահմետի, և կան նովին կրօնիւք վայելելով զբարութիւնս երկրին: Ողբ ի բերան առեալ անմխիթար հառաչէ աշխարհն Փայտակարանի զկորուստ փառաց իւրոց և վայելչութեանց...»[328]:

Ցարական կառավարությունը 1846 թ. դեկտեմբերի 14-ին Այսրկովկասը կրկին ենթարկեց վարչատարածքային բաժանման, համաձայն որի՝ ստեղծվեցին չորս նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախիի և Դերբենդի: Նահանգները բաժանվեցին գավառների կամ տեղամասերի[329]: Նորաստեղծ Շամախիի նահանգի մեջ էին մտնում Շամախիի, Բաքվի, Լենքորանի[330] և Շաքիի[331] գավառները[332]: Նահանգային կենտրոնն էր Շամախի քաղաքը:

Շամախիում 1859 թ. մայիսի 30-ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժի պատճառով Կովկասի փոխարքա Ա. Բարյատինսկու առաջարկով կենտրոնական նահանգական վարչությունը տեղափոխվում է Բաքու[333]: 1859 թ. դեկտեմբերի 6-ին Ալեքսանդր II-ի հրամանագրում այդ մասին ասված է հետևյալը. «1. Այժմյան Շամախիի վարչությունը և այդտեղ գտնվող այս նահանգի բոլոր նահանգային հիմնարկները Շամախիից տեղափոխել Բաքու քաղաք: 2. Բաքուն բարձրացնել նահանգային քաղաքի աստիճանի: 3. Շամախիի նահանգը այսուհետև կոչել Բաքվի նահանգ»[334]: 1860 թ. Բաքվի նահանգի վարչատարածքային կազմում ձևավորվեց նաև Ղուբայի գավառը[335], իսկ երբեմնի Շիրվանի նահանգից կազմավորվեցին Գյոքչայի և Ջավաթի գավառները[336]:

Ադրբեջանի հնագիտության ու ազգագրության հարցերին նվիրված իր աշխատության մեջ «Ադրբեջանցիներ» վերտառությամբ գլխում պարզորոշ գրում է. «...այդ անվանումը (իմա՝ ադրբեջանցի - Գ. Ս.) բնակչության շրջանում լայն կիրառում գտավ միայն 1936 թ. սկսած» (**Алекперов А.**, նշվ. աշխ., стр. 71). Մեկ այլ պատմաբան՝ Է. Աղաևը գրում է. «Իրենց այժմյան անվանումը ադրբեջանցիները ստացել են ավելի ուշ, այն երկրի անունից, որտեղ ապրում են» (Աղաև Է., Բաքու, Երևան, 1984, էջ 21): Թեև 1937 թ. հունվարի 6-ին անցկացված համամիութենական մարդահամարի պաշտոնական նյութերում թյուրքալեզու բնակչությունը դեռևս անվանվում էր թյուրք (տե՛ս Всесоюзная перепись населения 1937 г. Краткие итоги, Москва, 1991, стр. 94): Ադրբեջանում թյուրքալեզու բնակչությունը մեկ միասնական՝ *ադրբեջանցի* անվանումով նշված է միայն 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի պաշտոնական նյութերում (տե՛ս Всесоюзная перепись населения 1939 г. Основные итоги, Москва, 1992, стр. 71): Հարցի մանրամասն քննությունը տե՛ս **Ասատրյան Գ.**, **Գևորգյան Ն.**, Ադրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, 1990, **Ստեփանյան Գ.**, Արևելյան Այսրկովկասում «ադրբեջանցի» էթնանվան գործառման հարցի շուրջ, էջ 137-144:

[326] Մեջբերումն ըստ՝ **Бутков П.**, նշվ. աշխ., ч. I, стр. 91.

[327] Տե՛ս **Березин И.**, նշվ. աշխ., ч. III. гл. VII (От Ленкорана до Астары), стр. 119. Կազանի համալսարանի պրոֆեսոր, արևելագետ Ի. Բերեզինին ճանապարհորդության ընթացքում ուղեկցել է Կարապետ անունով մեն հայ:

[328] **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 266:

[329] Տե՛ս **Евангулов Г.**, նշվ. աշխ., стр. 10, տե՛ս նաև **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье, стр. 92.

[330] 1846 թ. ռուսական իշխանությունները Թալիշի գավառը պաշտոնապես վերանվանում են Լենքորան:

[331] 1846 թ. ռուսական իշխանությունները Շաքին պաշտոնապես վերանվանում են Նուխի (տե՛ս **Մնացականեան Ա.**, Նամակներ Նուխուց, «Տարազ», Թիֆլիս, 1900, № 40, էջ 580):

[332] Տե՛ս «Обзор», Тифлис, 1887, 19 июня, № 51, տե՛ս նաև **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 21.

[333] Տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 21.

[334] Տե՛ս **Фатуллаев Ш.**, նշվ. աշխ., стр. 34.

[335] Տե՛ս Географическо-статистический словарь Российской империи, сост. П. Семенов, т. I, СПб., 1863, стр. 186 (այսուհետ՝ ГССРИ).

[336] Տե՛ս **Шахатунян А.**, նշվ. աշխ., стр. 98.

Այսրկովկասում 1867 թ. դեկտեմբերի 9-ին անցկացված հերթական վարչատարածքային բաժանման արդյունքում ձևավորվեցին Քութայիսի, Թիֆլիսի, Բաքվի, Գանձակ-Ելիզավետպոլի և Երևանի նահանգները: Գանձակ-Ելիզավետպոլի նահանգը, որ պետք է կազմավորվեր հարևան Թիֆլիսի, Բաքվի և Երևանի նահանգների տարածքների հաշվին, գործողության մեջ դրվեց 1868 թ. փետրվարի 19-ին: Վարչական այս նոր բաժանման հետևանքով Բաքվի նահանգի կազմից դուրս մնացին և նորաստեղծ Գանձակ-Ելիզավետպոլի նահանգին կցվեցին Նուխիի (Շաքի) և Արեշի գավառները: Այսպիսով՝ վերջնականորեն ձևավորված Բաքվի նահանգն ուներ 34.286,3 քառ. կմ տարածություն և ընդգրկում էր Գյոքչայի, Շամախիի, Ղուբայի, Բաքվի, Ջավաթի և Լենքորանի գավառները[337], որոնք միմյանցից բաժանվում էին բնական սահմաններով՝ լեռներով և գետերի ավազաններով:

Երկրամասը զբաղեցրել է աշխարհագրական մի տարածք, որտեղ բնությունը բնական սահմաններով երկրամասը բաժանել է երեք հիմնական գոտիների՝ ստորին, վերին և միջին: Առաջինը Կուր գետի ափամերձ լայնատարած դաշտավայրերն են: Երկրորդը նախալեռնային շրջաններն են: Սրանք հարուստ էին ջրառատ, մշտահոս գետերով, վտակներով, մարգագետիններով և անտառներով: Երրորդ գոտին բարձր լեռնային շրջաններն են՝ զուրկ անտառներից, սակայն հարուստ ալպյան մարգագետիններով, արագահոս գետերով ու ջրվեժներով[338]: Ընդհանուր առմամբ, Արևելյան Այսրկովկասի ֆիզիկաաշխարհագրական բնույթը հարթավայրային է, որովհետև մեծ լեռնաշղթաները ձգվում են նրա սահմանային վայրերով. «Արևելեան Անդրկովկասը, կամ Թաթարստանը, նորագոյն տերմինալոգիայով՝ Ադրբէջանը... Վրաստանից և Հայաստանից հաւասար չափով տարբեր մի երկիր է, որ բռնում է Բագւի նահանգն ամբողջովին և Գանձակի նահանգի դաշտային մասերը: Արևելեան Անդրկովկասը ոչ լեռնաշղթաների ու հովիտների երկիր է (Վրաստան) ոչ էլ բարձրաւանդակ (Հայաստան), այլ նա մի ընդարձակ դաշտավայր է, որ տեղ-տեղ մինչև իսկ ծովի մակերևույթից ցածր է (Կասպից լճի մոտերը)»[339]:

Նահանգի ստվար հայության մի խոշոր հատվածը կենտրոնացած էր Բաքու քաղաքում և նույնանուն գավառում, Շամախիում և նույնանուն գավառում (24 գյուղ), Գյոքչա ավանում և նույնանուն գավառում (21 գյուղ), Ղուբա քաղաքում և նույնանուն գավառում (2 գյուղ), մասամբ նաև Ջավաթի ու Լենքորանի գավառներում: Նահանգի հայաբնակ գոտին տարածված էր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հարավահայաց՝ դեպի Կուր գետի դաշտավայրերն ուղղված լանջերին, և դասավորված է եղել երկու խմբով՝ Շամախի-Աղսու-Քյուրդամիր խճուղու երկարությամբ՝ լեռնային այն բարձրության վրա, որ ընկած էր Աղսու գետի ավազանի կամ հոսանքի ձախ կողմում, և երկրորդ խումբը, որն ընկած էր հիշյալ գետի աջափնյա բարձրության վրա[340]: Հայկական գյուղերը ընկած էին լեռնային տարածքներին բնորոշ գծային կամ շղթայաձև դասավորվածությամբ: Հայաբնակ այս գոտու բնակչության հիմնական զբաղմունքը եղել է շերամապահությունը, երկրագործությունը, այգեգործությունն ու անասնապահությունը:

---

[337] Տե՛ս Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем **Михаилом Николаевичем**, 6 декабря 1862-6 декабря 1872 гг., Тифлис, 1873, стр. 49-50.

[338] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 48-53, տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 112:

[339] **Աբեղեան Ա.**, Ա. Ծախարունեան եւ կովկասահայ խնդիրը, «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 30, № 222:

[340] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 48-53, տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 112:

Հարկ է նկատել, որ նահանգի հայկական գյուղերը ազգային-քաղաքական տեսակետից աննպաստ կերպով են դասավորված եղել: Գավառների հայկական գյուղերը շրջապատված էին մեծ թվով թաթարական գյուղերով[341]: Բացի դրանից նահանգի բերրի հողերը հիմնականում զբաղեցնում էին կովկասյան թաթարները: «Թաթար քոչվորները,- գրում է կովկասագետ Մ. Շապշովիչը,- գալով և գրավելով այդ տարածքները, զբաղեցրին ամենահարուստ, բերքատու հարթավայրերը, լեռնային արոտավայրերը, իսկ հայերի, թաթերի և թալիշների համար մեծամասնությամբ մնացին այն տարածքները, որտեղ նրանք զբաղվում էին միայն հողագործությամբ»[342]: Սակավահողությունից դրդված՝ հայ գյուղացիները ընտանիքի հացի տարեկան պահանջները բավարարելու համար ճարահատյալ անտառային գոտիներում էին զբաղվում հացահատիկի մշակությամբ, ուր բնակլիմայական պայմանները բարձր բերք չէին խոստանում: Դանիել արքեպ. Շահնազարյանցը Շամախիի գավառի Կարմախան գյուղի օրինակով գրել է. «Այս գիւղն և սորա շրջակայքն են անտառատեղի. բնակիչք հետզհետէ կոտորելով անտառն վարելատեղի են շինում իրանց համար»[343]: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ միաժամանակ երկրամասում երկրագործությանը զարկ տալու նպատակով Շիրվանի պրովինցիայում շրջագայած կամեր-յունկեր Պելչինսկին Ի. Պասկևիչին 1830 թ. հունվարի 29-ին հղած զեկուցագրում առաջարկել էր Շիրվանի լեռնային վայրերում բնակվող հայերին տեղափոխել երկրագործության համար առավել բարենպաստ՝ Կուր գետի ափամերձ շրջաններ և գետահովիտներ[344]:

Գլխավորապես լեռնալանջերին գտնվող հայկական բնակավայրերը բնական աղետների պատճառով շատ հաճախ մեծ փորձությունների առաջ են կանգնել: Վտանգավոր էին հատկապես սողանքները, երբ ճահճացած կավային հողը, անկարող լինելով դիմադրել հեղեղատներին, սկսում է սողալ և մեծ վնասներ պատճառել լեռնալանջերին փռված գյուղերին[345]: Երկրամասում տեկտոնական և հրաբխային երևույթները չեն դադարել գործելուց. դրանց արտահայտություններն էին Շամախիի և Բաքվի շրջաններում հաճախակի կրկնվող երկրաշարժերը, հատկապես Բոզ-դաղ լեռան վրա 1827, 1839, 1888 և 1893 թթ. տեղի ունեցած հրաբխային ժայթքումները, որոնք բազմաթիվ մարդկային զոհեր խլեցին[346]:

Այսպիսով՝ ինչպես վկայում են մատենագրական և վավերագիր աղբյուրները, երկրամասը հնուց ի վեր եղել է հայկական քաղաքական, հոգևոր-մշակութային և ժողովրդագրական ազդեցությունների ոլորտում: Չնայած ուշ միջնադարից հաճախակի կրկնվող ասպատակությունները, գերեվարություններն ու գաղթերը երկրամասում հանգեցրին հայության թվի նվազմանը և հայկական մի շարք գյուղերի քայքայմանը, այնուհանդերձ նրանց մի զգալի մասն իրենց շարունակական կենսագոյությունը պահպանեցին ընդհուպ մինչև XX դարի վերջերը:

[341] Տե՛ս СНМС-1859-1864, ч. IV, стр. 92.
[342] **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 23.
[343] Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ, էջ 318:
[344] Տե՛ս АКАК, т. VII, док. 142, стр. 186.
[345] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1895, մայիսի 28, № 54:
[346] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 12 , էջ 1952:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Ա. ՇԱՄԱԽԻԻ ԳԱՎԱՌ

Շամախիի գավառը գտնվում էր Բաքվի նահանգի կենտրոնական մասում՝ Սբ. Սահակ (Փիր-Սահաթ) և Աղսու գետակների միջև: Հյուսիսից սահմանակից էր Ղուբայի, հարավից՝ Ջավաթի, արևելքից՝ Բաքվի և արևմուտքից՝ Գյոքչայի գավառներին: Գավառի տարածքը կազմում էր 5.768,3 քառ. կմ[347]:

ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔ: Գավառի կենտրոնն էր պատմության մեջ բազմիցս հիշատակվող Շամախի քաղաքը[348]: Այն տարածված էր Կովկասյան լեռնապարի հարավարևելյան ճյուղերի ստորոտին, փոքրիկ բլրաշարի վրա՝ փռված Սբ. Սահակ և Ջագլավա գետակների խառնվելու տեղում: Քաղաքին ամենամոտիկ սարերն են դեպի հյուսիս-արևմուտք ձգվող Ղզղարասին և Փեղրաքունը[349]: Քաղաքի գեղանիստ դիրքին հետևյալ նկարագիրն է տվել Մակար եպս. Բարխուտարեանցը. «Խոր ձորեր են Շամախու արևելեան և արևմտեան կողմերն: Արևմտեան ձորով հոսում է Մեյսարու վտակն և արևելեան ձորով մի փոքրիկ առու: Երկու ջրերս միանում են պարսից թաղի ստորոտում և խառնւում Փիր-Սահաթ գետակին: Քաղաքիս վերնամասն հարթ է, միջնամասն՝ լանջ, ստորին մասն՝ հովտահարթ»[350]: Ալ. Շիրվանզադեն «Իմ կյանքից» խոբագրով հուշերում գմայլանքով է նկարագրել ծննդավայրի գեղաշուք բնությունը. «Անդրկովկասի մի անկիւնում կայ մի քաղաք, անունը Շամախի կամ Շիրվան: Ա՜հ, հրաշալի է այդ քաղաքի բնութիւնը. Այնտեղ երկինքը կապոյտ է, ինչպէս Փիրուզա, երկիրը բոյսերով, ծաղիկնե-

[347] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 1-2, տե՛ս նաև СНМ-1859-1864, стр. 2.
Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 1-2, տե՛ս նաև СНМ-1859-1864, стр. 2. Սամեխիա, Մամեխիա, Կամեխիա ձևերով (տե՛ս «Ասիայի եր-
[348] Պտղոմեոսի մոտ (մ. թ. II դ.) Շամախին հիշատակված է Սամեխիա, Մամեխիա, Կամեխիա ձևերով (տե՛ս «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի: Պտղոմեոսյան քարտեզագրության հիմքերի վրա քարտեզը վերականգնել է Ս. Տ. Երեմյանը, ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 416), տե՛ս նաև **Գալչեան Ռ.**, Հայաստանը համաշխարհային քարտեզագրութեան մէջ, Երեւան, 2005, էջ 117): Քաղաքի հիմնադրման վերաբերյալ աղբյուրներում առկա են միմյանց հակասող թվագրումներ: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ քաղաքը կառուցվել է Աղվանից Տէր-Վիրո կաթողիկոսի (595-629 թթ.) կողմից. «Սա շինեաց քաղաքս հինգ յանուն Շաքայ՝ զՇաքառ, զՇամքոր, զՇաքի, զՇիրվան, զՇամախի, զՇապօրան…», որն անում է վեց (տե՛ս **Գանձակեցի**, էջ 195): Արաբ պատմիչ Բալազուրին գրում է, որ Շամախին կառուցել է Շամախի իբն Շուջա Շիրվանի թագավորը՝ Հարուն խալիֆի (786-809) օրոք «Շամախի քաղաքը, որը Շարուանի նահանգում է, կոչվել է Շարուանի թագավոր ալ-Շամմախ իբն Շուջայի անվամբ» (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 181-182): Ակադեմիկոս Գ.ր. Ղափանցյանի բացատրությամբ՝ Շամախա (Šammaḫa) նշանակում է՝ «եղեգնուտ» (տե՛ս **Капанцян Гр.**, Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1947, стр. 62).
Տե՛ս Հ. Ղ. [Գարեգին քհն. Ղուկասյան], Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, № 28:
[349] Տե՛ս Հ. Ղ. [Գարեգին քհն. Ղուկասյան], Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, № 28:
[350] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 156:

ռով փարթամ, ինչպես մի աքանչելի պարտեզ: Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, գիւրեկան, ոչ քամի, ոչ փոթորիկ: Իսկ գարնանը և ամռանը բարձրագագաթ ծառերի վրայ գիշեր-ցերեկ երգում են անթիւ սոխակներ: Եւ ի՜նչ համեղ մրգեր կան այնտեղ, եթէ գիտենաք, ի՜նչ հոտաւետ պտուղներ»[351]: Բնակլիմայական այս նպաստավոր պայմանների բերումով էլ Շամախին ու նրա մերձակայքը, դեռևս Աղվանից թագավորների ժամանակներից սկսած, համարվել են ամառանոց ու հանգստավայր[352]: Երկրամասի բնակչության համար այս սովորությունը շարունակվեց հետագայում ևս: Գավառական բժիշկ Միսաք Արամյանցը, նկարագրելով Շամախիի առողջարար կլիման, 1887 թ. գրել է. «Ո՞վ տեսել է Շիրուանի աքանչելի բնութիւնը և չէ հիացել. ո՞ր տկարը դիմել է նրա կենդանարար օդին ու ջրին և չէ կազդուրուել հոգով ու մարմնով: Ամեն տարի ընտանիքս Շամախի ամարանոց ուղարկելով, մինչոց եմ գտել միատեղ ութ-տասն օր Սագեանի Նախավկայի մենաստանում Շիրուանի կենդանարար օդն ու ջուրը վայելելով, հոգեպէս և մարմնապէս թարմանալու, զուարթանալու և կազդուրուելու»[353]:

Շամախին Այսրկովկասի հնագույն և ավանդաշունչ քաղաքներից էր[354]: Իր աշխարհագրական դիրքով այն գտնվել է հին աշխարհի հաղորդակցության և առևտրական մեծ ճանապարհների վրա: Այդտեղով էր անցնում առևտրառազմական մեծ նշանակությամբ հայտնի Պարտավ-Դերբենդ ճանապարհը: Տարանցիկ այդ ուղին միմյանց հետ կապում էր Պարտավ, Շամախի, Շարվան, Ղուբա և Դերբենդ քաղաքները[355]: Արաբ պատմիչ Մուկադդասի հաղորդած տեղեկության համաձայն՝ «Շամախին նախալեռնային քաղաք է: Շինությունները կառուցված են քարից և գիպսից: Այդտեղ կան հոսուն ջրեր, այգիներ և զբոսանքի համար հաճելի վայրեր»[356]: Միշտ այս քաղաքն էին գալիս ռուս, իրանցի, հնդիկ և այլ ազգերի վաճառականներ: Ժամանակակցի բնորոշմամբ՝ «Քանզի գիտել ևս արժան է յաղագս փարթամութեան քաղաքիս այսորիկ Շամախու... և զի էր պանտար Կասպիական ծովուն և յամենայն կողմանց վաճառականացն տեղիք բնակութեան, և վաճառի, և շահաւետութեան ի Հնդկաց և ի Հոռոմոց, ի Ջուղայու, ի Ռուսաց, և յամենայն երկրէ. և այսպէս լի էր ամենայն ստացուածովք և գանձիւք»[357]: Դրա շնորհիվ Շամախին եղել է մետաքսի, արվեստի և վաճառականության, ինչպես նաև կարևոր հանգույց և տարբեր պետությունների ռազմաքաղաքական ու մշակութային կապերի կարևոր հանգույց և տարբեր պետությունների ռազմաքաղաքական ու դիվանագիտական զանազան միջոցառումների մշտական եղակետ: Այս կարևոր

[351] Շիրվանզադէ Ալ., Իմ կեանքից, «Հասկեր», Թիֆլիս, 1910, № 11, էջ 320- 321, տե՛ս նաև Հին թուղթեր. նյութեր Շիրվանզադէի մասին, «Վէմ», Փարիզ, 1935, Դ տարի, սեպտեմբեր-դեկտեմբեր, № 4, ԺԲ, էջ 90,

[352] Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 362:

[353] Արամեանց Մ., Սալիանից Էջմիածին. նկարագիր ուխտաւոր ուղեւորութեան (փոփոխութիւններով արտատպված «Նոր-դար» ամենամեայ լրագրից), Թիֆլիս, 1887, էջ 6-7: Բժիշկ, գրող և հասարակական գործիչ Միսաք Արամյանցը գավառական բժշկի պաշտոնով երկար տարիներ աշխատել է Սալյանում: Եղել է «Հյուսիսափայլ» ամսագրի հիմնադիր, լուսավորության մեծ ջատագով Ստ. Նազարյանցի դստեր ամուսինը: Մահացել է 1909 թ. դեկտեմբերին Սալյանում (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909, դեկտեմբերի 11, № 274):

[354] Հարուստ ավանդազրույցներ ունենալու շնորհիվ Շամախին շատ հաճախ համարվել է հայ և օտարազգի ստեղծագործողների ոգեշնչման աղբյուրը: Օրինակ՝ ռուս մեծ բանաստեղծ Ա. Պուշկինի «Հեքիաթ ոսկե աքաղաղի մասին» վիպերգի հերոսուհին է չքնաղ «շամախեցի թագուհին» (տե՛ս **Пушкин А.**, Сказка о золотом петушке (Сказки, Москва, 1989, стр. 111-130)

[355] Տե՛ս **Караулов Н.**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане: **Ал-Истахрий** (СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, стр. 29-31), տե՛ս նաև **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր (Մարզպանության հաստատումից Հայաստանում մինչև Բագրատունյաց թագավորության անկումը), Երևան, 1960, էջ 343:

[356] **Караулов Н.**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане: **Ал-Мукаддаси** (СМОМПК, вып. 38, Тифлис, 1908, стр. 8).

[357] Եսայի Հասան-Ջալալեանց, էջ 33:

բնաշխարհագրական հատկանիշներով Շամախին ունեցել է երկրամասի հարմարավետ վայրերը, որի շուրջը հիմնականում խմբավորվել են հայկական գյուղերը[358]:

Աղբյուրները վկայում են, որ միջնադարից Շամախին ուսումնակրթական սերտ կապեր է ունեցել Սյունյաց մետրոպոլիտական Աթոռի հետ: Ձեռագիր հիշատակարանի վկայության համաձայն՝ Հովհան Որոտնեցու մահվանից հետո (1382 թ.), երբ Տաթևի համալսարանը գլխավորում էր նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին (1346-1411 թթ.), Ջուղայից, Թավրիզից, Սյունիքից և այլ վայրերից ուսանելու եկած 12 աշակերտներից մեկը, որի անունն էր Հունան, Շամախիից էր: Թովմա Մեծոփեցու հավաստմամբ՝ «Եւ նորա ժողովեալ գրագումս ի յաշակերտաց իւրոց՝ զՄխիթարն Տաթեւու... զՅովհաննէսն ի Վաղանդու... զՈւնան ի Շամախու...»[359]: Այդ վկայությունը այլ խմբագրությամբ տեղ է գտել նաև «Հայսմավուրքում», որտեղ Գրիգոր Տաթևացու և նրա աշակերտ Հունանի մասին ասվում է. «Եւ նորա ժողովեալ բազում աշակերտս՝ որոց են անուանքն այս: ԶՄխիթար 'ի Տաթեւու... ԶՈՀաննէս 'ի Վաղանդու վանից: ԶՈւնան 'ի Շամախու»[360]:

XV-XVI դդ. պարբերաբար կրկնվող պատերազմների և բնակչության տեղաշարժերի հետևանքով փոփոխվել է շամախահայերի թիվը: Եվրոպացի ճանապարհորդները տարբեր տվյալներ են թողել այդ ժամանակաշրջանում Շամախիում եղած հայ բնակչության թվի մասին: Այս առումով ուշագրավ տեղեկություն է հաղորդում XV դարի երկրորդ կեսի իտալացի դիվանագետ, ճանապարհորդ ու վաճառական Ջոզեֆո Բարբարոն[361], որը 1471-1473 թթ. եղել է Վենետիկի դեսպանը Իրանի այդ ժամանակվա տիրակալ Ակ-կոյունլու Ուզուն-Հասանի արքունիքում: Վենետիկ վերադառնալու ճանապարհին Բարբարոն Թավրիզից հետո լինում է նաև Շամախում և Դերբենդում: Նկարագրելով Շամախի քաղաքը՝ նա գրում է. «...Շամախի, մի քաղաք Մարաստանում[362]... որի իշխանը կոչվում է Շիրվան Շահ, որ քաղաքը ի պահանջել հարկին կարող է տալ ինը եւ տասը հազար ձիավոր: Գտնվում է դեպի Բագվի ծովը վեց օրվան ճանապարհ հեռու... Այս շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետաքս, կտավ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով: Գտնվում է Մեծ Հայաստանում[363], եւ բնակիչների մեծ մասը հայ են»[364]: Ուշագրավ է նաև անգլիական «Ռուսական» ընկերության գործակալ[365], ճանապարհորդ ու վաճառական Անթոնի Ջենկինսոնի՝ Շամախում 1563 թ. ապրիլի 10-ին կատարած գրառումներից հետևյալ հատվածը. «...այս քաղաքը (Շամախին - Գ. Ս.) ծո-

[358] Շամախի քաղաքի հայ բնակչության համառոտ պատմությունը տե՛ս Ստեփանյան Գ., Շամախին և շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջերը), «Վէմ», Երևան, 2009, հոկտեմբեր-դեկտեմբեր, № 3, էջ 74-95:

[359] **Թովմա Մեծոփեցի**, էջ 76-77, հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. Բ (XIII-XVIII դդ.), էջ 152:

[360] Գիրք որ կոչի Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1730: Վարք և Յիշատակ Երանելույն Եռամեծի Սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն Անյաղթ փիլիսոփային, և աշակերտի Մեծի Վարժապետին Հայոց, Տիեզերալոյս Վարդապետին Սրբոյն Ոհաննու Որոտնեցւոյն, Անկի Ի. և Ապրիլի Իէ:

[361] Ջոզեֆո Բարբարոն ծնվել է Վենետիկում, XV դ. սկզբին, մահացել է 1493 թ.: 1471 թ. նա մեկնել է Իրան, Կիպրոս, Կիլիկիայի, Եփրատի վրայով դեպի Թավրիզ, Սուլթանիե և Իսպահան: Վերադառնալիս եղել է Թավրիզում, Շամախիում, Դերբենդում, այնուհետև մեկնել Մոսկվա և Լեհաստանի ու Գերմանիայի վրայով հասել հայրենիք:

[362] Շամախին տեղադրելով Մարաստանում՝ Ջ. Բարբարոն ամենայն հավանականությամբ նկատի է ունեցել այն հանգամանքը, որ Շիրվանը նշված ժամանակաշրջանում գտնվում էր Իրանի տիրապետության տակ:

[363] Կասկածից վեր է, որ Շամախին գտնվում է Կուրի միջին հոսանքի ձախափնյակում և, բնականաբար, չէր կարող լինել Մեծ Հայքի սահմաններում: Ենթադրելի է, որ Ջ. Բարբարոյին շփոթեցրել է Շամախի քաղաքում ստվար հայության առկայության հանգամանքը, ուստի և քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքում: Նշենք, որ Ջ. Բարբարոյի տեքստի այդ հատվածը ադրբեջանցի պատմաբանները միտումնավոր կերպով դուրս են թողել « Путешественники об Азербайджане, под ред. **Э. Шахмалиева**, т. I, сост. **З. Ямпольский**, Баку, 1961, стр. 74» գրքից:

[364] Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 199:

[365] Տե՛ս **Փափազյան Վ.**, Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտներում (XVI-XVII դդ.), Երևան, 1990, էջ 82:

վից ուղտով յոթը օրվան ճանապարհ հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնակեցված գլխավորապես հայերից... (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»[366]: Ավելին՝ Շամախիի հայ առևտրականներին էր պատկանում քաղաքի հում մետաքսի[367] արտահանման առաջնայնությունը[368]. Հումքը վաճառահանվում էր Եվրոպա, Միջին Ասիա, Հալեպ, Իրան և Արևելյան երկրներ[369]:

Շամախի քաղաքի՝ XVII դարի սկզբների հայ բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել ռուս վաճառական Ֆեոդոր Կոտովը, որը, երկարամյա շփումներ ունենալով հայերի հետ, սովորել էր նաև հայոց լեզուն: 1623 թ. Իրան մեկնելու ճանապարհին, կանգ առնելով Շամախիում, ճամփորդական իր նոթերում գրել է. «Շամախին կառուցված է բարձր լեռների միջև՝ թեքության վրա, բերդը քարից է, բնակավայրն էլ է քարից... Ե՛վ բնակավայրը, և՛ կրպակների շարքը, և՛ քարավանատները կառուցված են բերդից դուրս: Շամախիում կան յոթ քարավանատներ. բոլորն էլ կառուցված են քարից և գտնվում են կրպակների շարքերի միջև. կան տաճկական, հայկական, ուր առևտուր են անում նաև ռուսները, լեզգիների, գիլանցիների և այլ քարավանատներ, և քաղաքն ընդարձակ է»[370]: Շամախահայերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել Իրան ուղևորվելու ճանապարհին 1636 թ. դեկտեմբերի 30-ից 1637 թ. մարտի 27-ը Շամախիում հանգրվանած Սաքսոնիայի թագավոր Ֆրիդրիխ Շլեզվիգ-Հոլշտինացու դեսպանության քարտուղար Ադամ Օլեարիուսը[371]: Երկրորդ անգամ Ա. Օլեարիուսը Շամախիում լինում է հետդարձի ճանապարհին 1638 թ. փետրվարի 20-ից մարտի 30-ը[372]: Նրա հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Շամախին այդ շրջանում ուներ 5000 տուն ազգաբնակչություն[373]: Ուշագրավ է Շամախիի հայ բնակչության վերաբերյալ Ա. Օլեարիուսի այն վկայությունը, որում նա գրում է, որ Շամախիում եղած ժամանակ խանը ցուցադրել էր ավելի քան 2000 մարդուց բաղկացած իր հետևակը, որի մեծագույն մասը հայեր էին[374]: Անդրադառնալով XVII դարի 30-ական թվականների կեսերին Շամախիում ստվար հայ բնակչության փաստին՝ Հ. Առաքելյանը Իրանի հայերին նվիրված ուսումնասիրությունում եզրահանգել է. «Պէտք է ենթադրել, եւ այդ շատ հաւանական ենթադրութիւն է, որ որքան էլ Շահաբբասը միջոցներ գործ դրեց դատարկելու Արարատեան երկիրը հայերից, բայց դարձեալ շատերին յաջողուեց մնալ իրանց տեղերում եւ շատերն էլ գուցէ ճանապարհից փախչելով վերադարձան իրանց նախկին տեղերը, որովհետեւ Ադամ Օլէարիուսը, որ այցելեց Շամախին 1636 թուին, յայտնում է, որ քաղաքում շատ հայեր կային, եպիսկոպոս ունէին...»[375]:

---

366 Նույն տեղում, էջ 372, տե՛ս նաև Английские путешественники в Московском государстве в XVI веке. Пер. с англ. **Ю. В. Готье**, Ленинград, 1937, стр. 205.
367 Ըստ Ադամ Օլեարիուսի տվյալների՝ 1636-1637 թթ. Շիրվանում արտադրվել էր 3000 հակ մետաքս (տե՛ս **Адам Олеарий**, նշվ. աշխ., стр. 791).
368 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1884, հունվարի 27, № 17: Շիրվանի մետաքսից գործած գլխաշորերի և քարավանների մասին
հիշատակումներ են պահպանվել նաև հայկական հնագույն ժողովրդական երգերում: Ինչպես օրինակ՝ «Լուսնյակն ինձի
ցերեկ, Շիրվանի աղլուխ կամ քարվան բերեր» (**Фитуни А.**, նշվ. աշխ., стр. 141).
369 Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 412:
Н. А. Кузнецовой, Москва, 1958, стр. 36,
370 Хожение купца **Федота Котова** в Персию: критич. текст и перевод **Н. А. Кузнецовой**, Москва, 1958, стр. 36, տե՛ս նաև Խաչիկյան Լ., Հայերը հին Մոսկվայում և
տե՛ս նաև Путешественники об Азербайджане, т. I, стр. 225, տե՛ս նաև Խաչիկյան Լ., Հայերը հին Մոսկվայում և
Մոսկվա տանող ճանապարհների վրա, ԲՄ, Երևան, 1980, № 13, էջ 90:
371 Ադամ Օլեարիուսը ծագումով սաքսոնացի է: Ավարտել է Լայպցիգի համալսարանը: Ունեցել է փիլիսոփայության մագիստրոսի գիտական աստիճան:
372 Տե՛ս Путешественники об Азербайджане, т. I, стр. 250-251.
373 Տե՛ս **Адам Олеарий**, նշվ. աշխ., стр. 553.
374 Տե՛ս նույն տեղում, стр. 526.
375 Առաքելեան Հ., նշվ. աշխ., էջ 95:

Արհեստներն ու առևտուրը շամախահայերի համար համարվում էին կենսապահովման հիմնական աղբյուր: Շամախիի հայ առևտրականները զբաղվում էին մեծածավալ առևտրով և կապ էին պահպանում հեռավոր երկրների հետ, իրենց ձեռքին էին կենտրոնացրել տարանցիկ առևտուրը: Նրանց գործունեության սահմանները տարածվում էին Ռուսաստանից, Իրանից, Եվրոպայից մինչև Կենտրոնական և Միջին Ասիայի երկրներ: Շամախահայ վաճառականների առևտուրը այլ վաճառատների հետ չէր սահմանափակվում լոկ հում մետաքսով և մետաքսե կտորեղենով: Նրանք առևտրական կենտրոններ էին հասցնում արևելյան ամենաբազմապիսի ապրանքներ (օրինակ՝ համեմունքներ, կաշվեղեն, բուսական ներկեր, գորգեր և այլն), իսկ ներկրում էին տնային իրեր, պերճանքի զանազան առարկաներ և այլն[376]: Շամախիի հայ տորոնավաճառները կարմիր ներկի համար տորոն (բույսի արմատը) էին մատակարարում Մոսկվայի, Մարսելի, Մանչեստրի մանուֆակտուրային արդյունաբերողներին[377]:

Հոծ հայ բնակչություն ունեցող Շամախի քաղաքն էր Արևելյան Այսրկովկասի այն հանգուցակետը, որտեղ վաղ ժամանակներից օտարերկրյա վաճառականների հետ գործածար կապեր էին հաստատում տարբեր վայրերից այդտեղ ժամանող հայ վաճառականները[378]: Այսպես՝ XVII դ. բանաստեղծ-տաղասաց Ստեփանոս Թոխաթեցին, «Ողբ ի վերայ Եվդոկիա մեծի քաղաքին» բանաստեղծության մեջ նկարագրելով Եվդոկիայի երբեմնի բարգավաճ կյանքն ու ավերումը, տեղի առևտրականների ծավալած գործունեության մասին հայտնում է, որ իրենց առևտրական գործերով նրանք լինում էին նաև Շիրվանում և Շամախիում[379]: Շամախիի առևտրատնտեսական կյանքում հայերի խաղացած ազդեցիկ դերի մասին է վկայում այն փաստը, որ հայ վաճառականները մետաքսի հումքի արտաքին առևտրով մրցակցում էին բրիտանական առևտրական զորեղ ընկերությունների հետ, որոնք ձգտում էին իրենց առևտուրը ընդլայնել Այսրկովկասում: «Անգլիացիները,- գրում է Հ. Քյուրտյանը,- 1561-ին մտան Կովկասեան Հայաստան, Շամախի, Շիրվանի եւն կողմերը առեւտուրի՝ մանաւորապէս հում մետաքսի համար, սակայն հազիւ քանի մը տարի վերջ սկսած ինքզինքնին անզօր գտնել Հայոց հետ մրցակցելու գործի մէջ»[380]: Որ Շամախիի շուկայում անգլիացիների համար անցանկալի մրցակիցներ էին տեղի, այդ թվում նաև հայ վաճառականները, վկայում է 1568 թ. սեպտեմբերի 1-ին Շամախի այցելած անգլիացի առևտրական Լոուրենս Չեփմենը: Նա հայտնում է, որ Շամախիում շուկան այնքան լավ էր ապահովված ամեն տեսակ ապրանքներով, որ նրանք չկարողացան վաճառել իրենց կտորեղենը[381]:

Շամախիի հայ վաճառականների՝ միջազգային առևտրի մասնակցության վերաբերյալ ուշագրավ է հետևյալ փաստը:
376 Շամախիի հայ վաճառականների՝ միջազգային առևտրի մասնակցության վերաբերյալ ուշագրավ է հետևյալ փաստը: Շամախիի բնակիչ Գրիգոր Գուր-
Շամախիում 1915 թ. ամռանը շրջագայած կովկասագետ Ա. Ֆիտունի տեղեկացմամբ՝ Շամախիի բնակիչ Գրիգոր Գուր-
գենյանի տանը պահպանվում էին Չինաստանից բերված ախճապակյա ապսքի երկու շքեղ պարագաններ: Վերջինիս տեղեկացմամբ՝ դրանք իրեն են հանձնել շամախեցի հնաբնակ Ներսիսյանները, որոնց պատմելով այդ սպասքերը
սերնդեսերունդ փոխանցվելով արդեն մի քանի հարյուր տարի է ինչ գտնվում է իրենց մոտ (տե՛ս **Фитуни А.**, նշվ. աշխ., стр. 102).
377 Տե՛ս **Зелинский С.**, նշվ. աշխ., стр. 31-32.
378 Տե՛ս Хожение купца **Федота Котова** в Персию, стр. 72.
379 Տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում, հ. Բ, Վենետիկ, 1901, էջ 608:
380 Քիւրտեան Յ., Հայ ազատագրական փորձ մը ԺԶ դարուն (հատուած մը իմ «Հում մետաքսի վաճառականութիւնը եւ հայերը» գործէս), «Անահիտ», Փարիզ, 1937, Ը տարի, № 5-6, յուլիս-դեկտեմբեր, էջ 60:
381 Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 414-415, տե՛ս նաև Английские путешественники..., стр. 239.

Շամախիի և շրջակայքի հայ, ինչպես նաև ամբողջ բնակչության թվաճի վրա բացասական ազդեցություն է ունեցել Այսրկովկասում 1716-1717 թթ. բռնկված «моровая язва»[380] կոչված համաճարակը, որի պատճառով զոհ են գնացել տասնյակ մարդիկ[381]:

Շամախի քաղաքի ազգաբնակչության թվաքանակի ու զբաղմունքի մասին ուշագրավ վկայություն է թողել XVII դարի 40-ական թվականների սկզբներին երկրամաս այցելած թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին: Իր «Ուղեգրության» մեջ գրում է, որ Շամախին ունեցել է 7000 բարեզարդ տուն, անթիվ այգիներ ու պարտեզներ, 26 թաղամաս, 44 քարավանատներ, մոտ 200 խանութներ և սրճարաններ[382]: Եթե յուրաքանչյուր տուն միջին հաշվով 5-6 շունչ հաշվվի, ստացվում է, որ Շամախին այդ ժամանակ ուներ մոտ 35000-42000 բնակիչ:

Տեղեկություններ կան այն մասին, որ տարբեր ժամանակներում Շամախիում բնակություն են հաստատել Հայաստանից տեղափոխված հայ առևտրավաշխառուական դասի ներկայացուցիչներ: Սիմեոն Երևանցի կաթողիկոսը վկայում է, որ 1640-ականների վերջերին Երևանի նահանգի Կարակոյունլու (հնում՝ Ջիլին, Ջղուն)[383] գյուղի կալվածատեր, վաճառական ոմն Սուքիաս ինչ-ինչ հանգամանքների բերումով բնակություն է հաստատում Շամախիում. «Յաղագս Ղարաղոյունլու կոչեցեալ գեղջն... գեօղս լեալ է ումեմն խօճայ Սուքիաս կոչեցելոյ հայ ազգաւ, և Սուքիասս ի պատահմանց ինչ երթալ ի Շամախի՝ մնայ անդ»[384]: 1660 թ. Շամախի այցելած Սպահանում կապուցինների միսիայի առաջնորդ հայր Ռաֆայել դյու Մանը (ժակ Դյուտերտր) արձանագրում էր, որ քաղաքն ուներ ստվարաթիվ հայ բնակչություն[385]:

Որ XVII դարում Շամախիի ազգաբնակչությունը խիստ աճել, և քաղաքը այն ժամանակվա մասշտաբով դարձել էր արհեստների և առևտրի խոշոր կենտրոն, փաստվում է թեկուզև 1668 թ. հունվարի 4-ին տեղի ունեցած երկրաշարժով: XVII դ. վերջի անանուն մի ժամանակագրի հայտնած տեղեկության համաձայն՝ նախքան երկրաշարժը քաղաքն ունեցել է շուրջ 40000 բնակիչ[386]: Զաքարիա Ագուլեցու վկայությամբ՝ երկրաշարժի հետևանքով զոհվել էր 7-8000 մարդ[387]: Ենթադրենք, որ այդ թիվը խիստ չափազանցված է, բայց եթե նույնիսկ մի քանի անգամ կրճատելու լինենք այն՝ նկատի ունենալով, որ երկրաշարժից ամբողջ ազգաբնակչությունը չի կոտորվել, այնուամենայնիվ պետք է նշել, որ Շամախին եղել է խոշոր քաղաք: Երկրաշարժի սարսափն ապրող ականատես-ժամանակագիրն այսպես է գրում. «...շարժ եղև և Շամախի խոր գնաց»[388]: Մեկ այլ ժամանակագրի մոտ տեղեկություն է պահպանված նաև հայոց եկեղեցու մասին. «...զի եղև յայտնի և մեծ հրաշք, որ աղօթից զօրութիւնն ցուցաւ յայտնապէս, զի որչափ ծողովուրդ, որ կային ի Շամախոյ քաղաքին յեկեղեցին բնաւին ոչ քար մի անկաւ, ոչ Ա (1) մարդոյ վարար եղև, այլ արտաքոյ եղեալքն ընդ հողով

[380] Ժանտախտի տարատեսակ, որն արտահայտվում է աչքի եղջերաթաղանթի սուր բորբոքմամբ: Անվանումն առաջացել է գերմանացի բժիշկ Ա. Մորենի (1828-1899 թթ.) անունից (տե՛ս Энциклопедический словарь медицинских терминов, т. II, Москва, 1983, стр. 197).

[381] Տե՛ս **Ерицов А.**, Чума в Закавказье (исторический очерк), Тифлис, 1879, стр. 7-8.

[382] Տե՛ս Էվլիյա Չելեբի, էջ 93-94:

[383] Գյուղը նախկինում մտնում էր Երևանի նահանգի Երևանի գավառի Վեդիբասարի ոստիկանական շրջանի մեջ: 1945-1952 թթ. բնակավայրի խոշորացման պատճառով ապաբնակեցվել է (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 3, Երևան, 1977, էջ 534):

[384] Սիմէոն Երեւանցի, էջ 127:

[385] Estat de la Perse en 1660, par le pére Raphaël du Mans, p. 3.

[386] Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. Բ, էջ 279:

[387] Տե՛ս Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 74:

[388] Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. Բ, էջ 272:

կորեան և կործեցանեցան»[386]: Կամ՝ «Իսկ զՇամախոյ Գ (3) բաժինն կործանեցաւ, յերկիր նաև, թէ յանդունդս սուզեցաւ... իսկ որք ի յեկեղեցիս էին զերծան և որք արտաքոյ՝ ոմանք կործանեցան մի անգամ և ոմանք կիսամահ և երկնախոցք եղեն...»[387]:

Երկրաշարժի պատճառած վնասները դեռևս չէին վերականգնվել 1671 թ. սեպտեմբերին՝ Շամախի այցելած հոլանդացի ծովային Յան Ստրեյսի այցելության ժամանակ[388]: Վերջինս վկայությամբ՝ քաղաքն ուներ հինգ դարպաս, փողոցները նեղլիկ էին, տները ցածրիկ և հողաշեն, ազգաբնակչությունը բաղկացած էր մահմեդականներից և քրիստոնյաներից[389]: Վերջիններս հիմնականում հայեր էին: Քաղաքի ազգաբնակչության թվակազմի վերաբերյալ ուշագրավ հիշատակություն է թողել 1686 թ. Շամախի այցելած ֆրանսիացի հիսուսյան քարոզիչ Ֆիլիպ Ավրիլը, որի հաղորդումը որոշ պատկերացում է տալիս քաղաքի էթնիկական և դավանական կազմի մասին: Ըստ Ֆ. Ավրիլի՝ մոտ 50-60-հազարանոց բնակչություն ունեցող Շամախիում «Բացի հայերի մեծ թուից, որ կարելի է հասցնել 30000-ի, կան նաեւ հնդիկներ, մոսկովիտներ, վրացիներ, յոյներ, թուրքեր, չերքեզներ եւ բազմաթիւ այլ ժողովուրդներ...»[390]: Ինչպես տեսնում ենք, այս տեղեկության մեջ հայերը կազմում են քաղաքի խառը բնակչության կեսը և, ամենակարևորը, համարվում են հիմնական բնակիչները: XVII-XVIII դարերի սահմանակետին Հայաստանի ազատագրման առաջին ծրագրի հեղինակները՝ Իսրայել Օրին և Մինաս վրդ. Տիգրանյանը, որոնք կարևոր տեղ էին հատկացնում Շամախիին, Օրու՝ եվրոպական տերություններին հղած 1699 թ. սեպտեմբերի 22-ի զեկուցագրում գրում էին, որ քաղաքը բաղկացած է եղել 7 ծխական համայնքներից. «Հարուստ և առևտրական քաղաք է Շամախին ...մենք այնտեղ ունենք յոթը հայ ծխական համայնքներ, և քաղաքի բոլոր վաճառականները և առևտրականները հայ են»[391]: Այնուհետև նշում է, թե Շամախին կարող է տրամադրել «...տասը հազար հայ մարդիկ, ամենքն էլ հեծյալ, կազմ ու պատրաստ...»[392]: Զեկուցագրից հետևում է, որ XVII դ. վերջերին Շամախիում հայերը կազմում էին բնակչության զգալի մասը: Որ Օրին չափազանցված թվեր չէր բերում քաղաքի հայերի թվաքանակի հարցում. դրանք հաստատվում են Շամախիում տարբեր ժամանակներում հանգրվանած եվրոպացի ճանապարհորդների թողած տեղեկություններով: Այսպես՝ 1703 թ. օգոստոսին Շամախի ժամանած հոլանդացի նկարիչ և ճանապարհորդ Կոռնելի լը Բրյուինը վկայում է, որ քաղաքում հայերը մեծ թիվ էին կազմում: Քաղաք մտնելուց հետո Բրյուինն իր խմբով հայ ուղեկիցների հետ իջևանել էր հայկական քարվանատանը, ուր մի հայ վաճառական առատորեն հյուրասիրել էր նրանց[393]:

1701 թ. Շամախիում, հին եկեղեցու տեղում կառուցվում է Սբ. Աստվածածին անվամբ նոր եկեղեցին, որի մուտքի ճակատին արձանագրված է եղել. «Ի ՌՃԾ (1701) թվին Հայոց. ի ժամանակս Շահ Սուլթան Հուսէին ինքնակալ արքային պարսից, որ եւ ըստ խնդրոյ Թիֆլիզեցի Մանդինի որդի Էլչի Թաղին հօքմ էր տուել վասն շինութեան սուրբ եկեղեցւոյս, Տէր Աս-

[386] Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. Ա, էջ 243-244:

[387] Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. Բ, էջ 279:

[388] Տե՛ս **Стрейс Я.**, Три путешествия, перевод **Э. Бородиной**, Москва, 1935, стр. 246.

[389] Տե՛ս նույն տեղում, стр. 245, տե՛ս նաև Путешественники об Азербайджане, т. I, стр. 312.

[390] Philippe Avril, նշվ. աշխ., էջ 114, տե՛ս նաև Թաջիրյան Է., նշվ. աշխ., էջ 21, հմմտ. Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 358:

[391] Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, էջ 53:

[392] Նույն տեղում:

[393] Տե՛ս Voyage de Corneille Le Brune, t. III, p. 484, տե՛ս նաև Թաջիրյան Է., նշվ. աշխ., էջ 21:

տուած իւր Թագաւորութիւնն հաստատուն պահեսցէ եւ էլչի Թաղիին հին եւ նոր ննջեցելոյն հանգիստ եւ արքայութիւն պարգեւեսցէ, եւ արդ մեք Թիֆլիզեցիքս»[394]:

Պատմական հիշատակությունները վկայում են, որ տարբեր ժամանակներում, տնտեսական, ռազմաքաղաքական ու այլ շարժառիթներով, շամախահայերի մի մասը հարկադրված է եղել թողնել հայրենի երկիրը և հանգրվան գտնել մոտ ու հեռավոր երկրներում: XVIII դարի առաջին կեսին մի կողմից Պետրոս I-ի և նրա հետնորդների հովանավորող քաղաքականության, մյուս կողմից 1720-ական թվականների ապստամբական շարժումների վայրէջքից հետո Այսրկովկասից հայ բնակչության զանգվածային գաղթի հետևանքով շամախահայերի մի հատված հաստատվեց Ռուսաստանի հայկական ամենահին ու գործուն գաղթօջախներից մեկում՝ Աստրախանում: Ասվածի առումով որոշակի հետաքրքրություն է առաջացնում Հր. Աճառյանի հայ գաղութի պատմությանը նվիրված աշխատության մեջ եղած այն տեղեկությունը, ըստ որի՝ հայերը Աստրախան են գաղթել «...Պարսկաստանէն, Ղարաբաղէն, Շամախէն և ուրիշ զանազան տեղերէ: Ասոնք մեծապէս յառաջադիմեցին վաճառականութեան մէջ, Ռուսիոյ և Արևելքի միջնորդ հանդիսացան, արևելեան վաճառականութեան դեր տարան և այս միջոցով նշանաւոր հարստութիւն դիզեցին»[395]: 1747 թ. պետական-պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ 1730-1740-ական թվականներին Շամախիից Աստրախան բնակություն են հաստատել 40 հոգի (արական սեռի)[396]: Հետագա շրջանում Աստրախան են տեղափոխվում ևս 10 հոգի[397]: Շամախիից Աստրախանում հաստատված հայ վաճառականների շրջանում առնից աչքի ընկնող դեմքերից էր 1746 թ. տեղափոխված և 1747 թ. ռուսական հպատակություն ընդունած Սերգեյ Հովհաննիսյանը (Իվանով), որը համարվում էր գործվածքային խոշոր փաբրիկատերերից և ամենամեծ արհեստանոցատերերից մեկը[398]: Հարկ է նշել, որ շամախահայերի դեպի Աստրախան և այլ վայրեր կատարած տեղափոխությունները պարբերական բնույթ չեն կրել, որով և չեն խախտել նրանց բնապատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

XVIII դարի 80-ական թվականներին քաղաքի ազգաբնակչության թիվը չէր անցնում 4000-5000-ը[399]: Նույն թվականի Շամախիի հայ բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել 1780-ականների սկզբներին երկրամաս այցելած ֆրանսիացի ուղեգրող Լուի-Ֆրանսուա Ֆերիեր-Սովբեֆը: Նա գրում է, որ «Շամախիում բնակվում էին շատ հայեր»[400]: Իվան Դրենյակինի՝ 1796 թ. կազմած տեղեկագրում նշված է, որ քաղաքում հայերն ունեին 70, իսկ իրանցիները՝ 170 տուն[401]:

[394] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 160, հմմտ. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 57:
[395] Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, էջ 108:
[396] Տե՛ս Յուխտ Ա., Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը XVIII դարի առաջին կեսում, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1957, № 7, էջ 56, տե՛ս նաև Աբրահամյան Ա., նշվ. աշխ., h. Ա, էջ 373:
[397] Տե՛ս **Хачатрян В.**, Население армянской колонии в Астрахани во второй половине XVIII века, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1965, № 7, էջ 79:
[398] Տե՛ս **Хачатрян В.**, նշվ. աշխ., էջ 83, տե՛ս նաև Յուխտ Ա., նշվ. աշխ., էջ 57-58, նույնի՝ Армянские ремесленники в Астрахани в первой половине XVIII в., «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1958, № 1, էջ 51:
[399] Տե՛ս **Алиев Ф.**, Города и городская торговля в Азербайджане во второй половине XVIII в., АН АзССР. Труды института истории, т. XIII, Баку, 1958, стр. 137.
[400] **Ferrières L. F.**, Sauvebef, Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières – Sauvebef, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789, tome première (t. 1), Maestricht, 1790, p. 228.
[401] Տե՛ս **Дренякин И.**, Описание Ширвана. 1796 г., ИГЭД, стр. 164.

XVIII դարի սկզբների շամախահայերի քաղաքային կյանքի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հ. Գերբերը: Նա գրում է, որ մահմեդականներն անհանդուրժողականություն էին ցուցաբերում հայ բնակչության նկատմամբ և ենթարկում էին ամեն տեսակի հալածանքների ու ստորացումների: Մահմեդականներին չխանգարելու համար քաղաքում հայերն ունեին առանձին փողոցներ և հավաքատեղիներ: Նույնիսկ մահմեդականներից տարբերվելու համար, խանի հրամանով հայերն ու հրեաները հագուստի վրա՝ կրծքի շրջանում, կրում էին տարբերակիչ նշան՝ դեղին մահուդից լաթիկ: Ըստ Հ. Գերբերի՝ այդ արվում էր նրա համար, որպեսզի «մահմեդականը պղծված և անհավատ մարդկանց (իմա՝ քրիստոնյաներին – Գ. Ս.) տեսնելիս չբարևեր մահմեդական ձևով, և դրանով իսկ խուսափեր մեղք գործելուց»[402]: Այդուհանդերձ, հակառակ այս միջոցառումներին, հայ բնակչության հիմնական զանգվածը, ամեն տեսակ զրկանքներ կրելով, պահպանեց իր ազգային ինքնությունն ու կրոնը՝ ազգային կյանքում առաջնորդվելով հայ եկեղեցու կանոններով: Ինչպես նշում է Հ. Գերբերը, հայերն ապրում էին քրիստոնեական օրենքներով[403]:

Շամախիում, ուր կենտրոնացած էր նահանգի հայության մի զգալի մասը, տեղաբնակ հայերից զատ, պատմական ճակատագրի բերումով բնակություն էր հաստատել նաև հեռավոր Էգեյան ծովի մերձափնյա շրջանից՝ Զմյուռնիայից գաղթած հայության մի հատված[404]: Շամախում և նրա շրջակայքում զմյուռնիահայերի հաստատվելը, ամենայն հավանականությամբ, կապվում է հարկադրաբար գաղթելու իրողության հետ, որի պատճառ կարող էին համարվել Զմյուռնիայում մեկը մյուսին հետևող տարերային աղետները[405]: «Մատրասեցի» ծածկանունով հեղինակը գրում է, որ Շամախիի շրջակայքում թափառական կյանքով ապրելիս են եղել Ջանումյան, Թավաքալյան[406] և Օսմանյան ազգանվամբ «հայրենազուրկ հայ» ընտանիքները, որոնք, ըստ ավանդության, գաղթել էին Զմյուռնիայից[407]: Շամախիում և նրա շրջակայքում զմյուռնիահայերի հաստատվելը, ամենայն հավանականությամբ, կապվում է հարկադրաբար գաղթելու իրողության հետ: Կարելի է ենթադրել, որ Զմյուռնիայից հայերի մի հատվածի դուրս գալու հավանական պատճառը 1812 թ. բռնկված ժանտախտն էր, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ, իսկ շատերն էլ հեռացան քաղաքից: Հ. Քոսյանը վկայում է. «...սակայն մաղձայոյզն եւ ուրիշ հիւանդութիւններ երբեմն երբեմն հոգսերու մէջ կը ձգեն զմիւռնացին եւ գիւղերը կամ այլուր փախչելու կը ստիպեն բնակիչները»[408]: Շամախիում հաստատված զմյուռնիահայերի թվում եղել են թե՛ առևտրականներ և թե՛ արհեստավորներ,

[402] **Гербер И.**, նշվ. աշխ., ИГЭД, стр. 116.
[403] Տե՛ս նույն տեղում:
[404] Հայտնի է, որ Էգեյանի ծովամերձ շրջանների (Զմյուռնիա, Մանիսա, Այդըն, Նազիլի և այլն) հայ գաղթավայրերի կազմավորման մասին փաստական վկայությունները չեն անցնում XVI դարից առաջ (տե՛ս Խառատյան Ա., Հայ գաղթականությունը Էգեյանի մերձափնյա շրջանում (XIV-XVIII դդ.), ՊԲՀ, Երևան, 1988, № 4, էջ 31): XVII դարի առաջին քառորդին Զմյուռնիա գաղթածների մեջ մեծամասնություն են կազմել Սեղրու, Կաղանի, Սիսիանի և Արարատյան դաշտի հայերը (տե՛ս **Քօսեան Հ.**, Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, h. Բ, Վիեննա, 1899, էջ 25, 69-70 և հտ.):
[405] Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), h. Բ, Երևան, 2003, էջ 182-183:
[406] Ենթադրում ենք, որ Թավաքալյան տոհմի մի ճյուղը հաստատվել է Դերբենդում, և այդտեղի շառավիղներից է հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայդուկային շարժման առաջին կազմակերպիչներից, ՀՅԴ կուսակցության անվիրյալ Բագրատ (Գևորգ, Զաքի) վրդ. Թավաքալյանը (1850, Դերբենդ-1902, Բաքու): Թաղվել է Բաքվի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում (տե՛ս «Հովիւ», Թիֆլիզ, 1910, ապրիլի 4, № 12, էջ 186):
[407] Տե՛ս **Մատրասեցի [Հարություն Բարղամյան]**, Ովքե՞ր են մադրասեցիները, «Նոր-դար», Թիֆլիս, 1903, փետրվարի 17, № 37, տե՛ս նաև **Հակոբյան Ա.**, Թաթախոս հայեր, էջ 62:
[408] **Քօսեան Յ.**, Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, h. Ա, Վիեննա, 1899, էջ 24:

որոնք իրենց գործուն մասնակցությունն են բերել քաղաքի առևտրի և կառուցապատման աչ-
խատանքներին: XIX դարի վերջերին Շամախի այցելած Գ. Քաջբերունին գրում է, որ քաղաքի
մոտ՝ գետի վրայով ձգվող միաթռիչք և սրբատաշ կամարով կամուրջի հյուսիսային ծայրի
արևելյան ճակատի վրա, արձանագրված է եղել. «Վարպետ Յակոբ Օսմանցի 1828»[414]: Գ. Քաջ-
բերունու մեկ այլ վկայությամբ՝ քաղաքի կենտրոնական փողոցի վրա հայ տնատեր բնակիչ-
ներից մեկը բացել էր դեղատուն, որը կրում էր իր ազգանունը՝ Օսմանցով[415]: Զմյուռնիահայե-
րից բացի, Շամախիում բնակվում էին դեռևս XIX դարի սկզբներից Շիրվան վերաբնակեցված
խոյեցի հայեր[416]:

Աղբյուրների վկայությամբ՝ XIX դարի 20-ական թվականների վերջերին Կովկասի այլ
քաղաքներից ու գավառներից (Կարս, Ալեքսանդրապոլ, Ախալքալաք, Ախալցխա և այլն) բա-
ցի, Շամախիում հայ բնակչության հետ նույնպես բնակվել են նստակեցության անցած, հայ
առաքելական դավանանքի հետևորդ փոքրաթիվ գնչուներ (հայ բոշա)[417]: «Հայ բոշա» Գր.
Վանցյանի՝ XIX դ. վերջին գրած հոդվածներից մեկում ասվում էր. «...նոյն իսկ Շամախումն էլ
մի ժամանակ եղել են բոշաներ, բայց երևի մասամբ գաղթելով, մասամբ թողնելով իրանց ցե-
ղական պարապմունքը, բոլորովին մոռացուել և խառնուել են տեղացի հայերի հետ»[418]:

Շամախին, որ վաղ միջնադարից ի վեր եղել է երկրամասի հայության կրթական, մշա-
կութային, քաղաքական կյանքի և վաճառականության հիմնական կենտրոնը, XIX դարի
սկզբներին նշված բնագավառներում հայ բնակչության դերի հետագա բարձրացման շնորհիվ
հայության շրջանակներում դիտվել է իբրև հայկական քաղաք[419]: «Հայերը,- գրել է անգլիացի

[414] Քաջբերունի Գ., նշվ. աշխ., բ. 3:
[415] Տե՛ս նույն տեղում:
[416] Տե՛ս Գարագաշ Ս., Քաղցած փեսաները եւ գէօզարչինի բալան (մի գիծ Շամախոյ կեանքից), Բագու, 1898, էջ 10:
[417] Բոշաների նախնիները մ. թ. I հազարամյակի սկզբներին դուրս գալով Հնդկական թերակղզու հյուսիսից և անցնելով
Իրանով՝ պատմական Հայաստան և հարակից տարածքներ են թափանցել ոչ ուշ, քան XII դարում և հայ ժողովրդի հետ
տևական համակեցության արդյունքում արդեն XVII-XVIII դարերում հաղթահարելով ծագումնաբանական անջրպետը՝
փաստորեն, դարձել էին հայ էթնիկ տարրի անքակտելի մասը: Ըստ Գր. Վանցյանի՝ «Չնայելով իւր ցեղի առասպելական
տոկունութեանը, հայ բոշաների մի ստուար մասը արդէն անդառնալի կերպով ձուլել է հայերի հետ. Երևանի, Շամախու,
Գանձակի, Թիֆլիսի և այլ տեղերի հայ-բոշաները, որոնց գոյութեան մասին մենք մի յիսուն տարի առաջ պատմական
փաստեր ունէինք, այսօր այլևս գոյութիւն չունին իբրև բոշա, այլ կուլ են գնացել հայերի մէջ...» (Վանցեան Գ., Հայեր
բոշաներից, «Մուրճ», Թիֆլիս, 1897, № 10, էջ 1398): Հայ բոշաները հիմնականում կրում են մաքուր հայկական և աստվա-
ծաշնչյան անուններ՝ Համազասպ, Գեղամ, Վազգեն, Հովսեփ, Հակոբ, Արարատ, Արշակ, Եզնիկ, Անահիտ և այլն (տե՛ս
Ոսկանյան Վ., Հայ բոշաներն այսօր, «Իրան-նամէ», Երեւան, 1999, № 32-34, էջ 107): Մանրամասն քննությունը տե՛ս
Шопен И., Новые заметки древней истории Кавказа и его обитателей, СПб., 1866, стр. 283-284; Աղրիանո Կոլոչի,
Բոշաները, «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 10, էջ 1425-1439, Վանցեան Գ., Պատմական ակնարկ բոշաների անցյալից,
«Մուրճ», Թիֆլիս, 1894, № 7-8, էջ 1066-1088, նույնի՝ Հայեր բոշաներից, «Մուրճ», 1897, № 10, էջ 1394-1403, Փափազեան
Վ., Հայ-բոշաներ (Ազգագրական ուսումնասիրութիւն), «Ազգագրական հանդէս», Գ գիրք, Թիֆլիս, 1898, № 1, էջ 74-90, Դ
գիրք, Թիֆլիս, 1898, № 2, էջ 203-275, Патканов К., Армянские цыгане (СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, стр.
45-70), նույնի՝ Цыганы. Несколько слов о наречиях закавказских цыган: боша и карачи, СПб., 1887; Ոսկանեան Վ.,
Մի քանի խօսք բոշայ անուան շուրջ, ՀՀՀ, h. ԻԳ, Պէյրութ, 2003, էջ 177-192:
[418] Վանցեան Գ., Պատմական ակնարկ բոշաների անցյալից, «Մուրճ», Թիֆլիս, 1894, № 7-8, էջ 1074:
[419] Շամախին ծննդավայր է հայ մեծանուն մի շարք հոգևոր գործիչների և մտավորականների: Շամախիից էր Ամենայն
Հայոց կաթողիկոս (1759-1763 թթ.), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Հակոբ Ե Շամախեցին (տե՛ս
Միքայել Չամչյանց, h. Գ, էջ 865-866, տե՛ս նաև Գիտ քիյ Աղանեանց, Սիմէոն կաթողիկոսի կենսագրութիւնը, «Արձա-
գանք», Թիֆլիս, 1894, փետրվարի 20, № 21): Այդտեղ են ծնվել երկու քույրերի զավակներ Ալ. Շիրվանզադեն, Հովհաննես
Աբելյանը և վերջիններիս մայրերի մորաքրոջ որդի Կոստան Զարյանը (տե՛ս Ավագյան Ա., Եռակի վտարանդին (Կոստան
Զարյանի կյանքի պատմությունը), ԼՀԳ, Երևան, 1997, № 1, էջ 52), գրականագետ, դրամատուրգ և թարգմանիչ, Լայպ-
ցիգի համալսարանը փիլիսոփայության դոկտորի աստիճանով ավարտած Սեդրակ Թառայանը, բանաստեղծ,
արձակագիր Վահան Գալֆայանը, գեղեցկատես դերասանուհի Եվգինե Սերարը (գրաքննադատ, հասարակական-քա-
ղաքական գործիչ Պողոս Մակինցյանի կինը, որը 1927 թ. Փարիզում հաղթող է ճանաչվել աշխարհի տարբեր երկրների
(ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Հունաստան, Թուրքիա) միջև գեղեցկուհի կինոդերասանուհու համար կայացած
մրցույթում (տե՛ս Եվգինե Սերար, Հարազատ անուններ, Երևան, 1970, էջ 94-95), պարուհի, դերասանուհի, գրող և գրակա-

հայագետ Հենրի Լինչը,- բազմաթիվ են նաև Շամախիի շրջանին և քաղաքի մէջ, որ Պաքուի
արեւմտեան կողմը կ՚իյնայ»[415]: 1828 թվականին, երբ Ռուսաստանը ստեղծում էր Հայկական
մարզը, Լազարյաններն իրենց առաջադրած ծրագրով հայկական թագավորության սահմաննե-
րում ընդգրկել էին նաև պատմական Հայաստանից դուրս գտնվող Շամախին և Շաքին: «Շատ
մարզեր, ասված էր ծրագրում, ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքու և Շա-
մախու մարզերը՝ էջմիածնի նախագահ վանքով, կազմում են Հայաստանի վաղեմի թագավո-
րության ընդհանուր կորիզը և գլխավոր հիմքը»[416]: Վերջապես, Սաղիանի Սբ. Ստեփաննոս
Նախավկա վանքից հետո 1836 թվականից մինչև 1918 թ. Շամախին երկրամասի հայերի թեմա-
կան առաջնորդանիստ կենտրոնն էր[417]:

* * *

Շամախի քաղաքը XIX դ. առաջին կեսին համարվում էր Արևելյան Այսրկովկասի
զարգացած և աչքի ընկնող առևտրական կենտրոններից մեկը և ապրում էր բավական աչ-
խույժ տնտեսական ու մշակութային կյանքով: 1832 թ. Շամախին ուներ 2233 ծուխ[418]: Նույն
տարվա տվյալներով՝ քաղաքում հայկական տների թիվը հասնում էր 279-ի[419]: Մինչդեռ մեկ
այլ պատմական աղբյուրի վկայությամբ, որ վերաբերում է XIX դարի 30-ական թվականներին՝
քաղաքի հայ բնակչության թիվը 566 հոգի էր[420]: «Կովկասյան օրացույցի»՝ 1849 թ. տվյալ-
ների համաձայն՝ քաղաքն ուներ 3213 տուն՝ 20149 (10351 ար., 9798 իգ.) բնակիչ, որից հայ
առաքելական դավանանքի[421]՝ 2450, կաթոլիկ՝ 200, լյութերական՝ 25, ռուս՝ 300, մահմեդա-
կան՝ 16250, հրեա՝ 25[422]: Ըստ Սարգիս արք-եպ. Ջալալյանցի՝ Շամախիում 1850 թ. կար 4000

նագետ, Իրանում եվրոպական տիպի առաջին թատրոնի հիմնադիր Սոֆիա Փիրբուդաղյանը, նույն ինքը՝ Արմեն Օհան-
յանը (տե՛ս Բախչինեան Ա., Մատթէոսեան Վ., Շամախեցի պարուհին. Արմեն Օհանեանի կեանքն ու գործը, Երևան,
2007), Ս. Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, Ռուսաստանի Վիբորգ քաղաքի դպրոցներում 1892 թ.
նկարչություն դասավանդած Ստեփան Ներսեսովը (Ներսեսյան, 1859-1894 (տե՛ս Աղասյան Ա., Հայ կերպարվեստի
զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 232), Դորպատի ուսուցչական սեմինարիայում 1884-1885 թթ.
ուսանած Իսրայել Մարկոսյանցը (տե՛ս Աբեղեան Ա., Դորպատի հայ ուսանողութիւնը, ՀԱ, № 7-12, Վիեննա, 1941, էջ
256), Բաքվում ճանաչված երդվյալ ատենակալ և փաստաբան Սահակ Տեր-Ստեփանյանց-Գուրգենյանը (Աղվանից) և
ուրիշներ: Սահակ Տեր-Ստեփանյանց Գուրգենյանն իր կենսագրականում գրում է «Աղուանցի եմ, Շամախի կամ Շի-
րուան քաղաքէն» (Գուրգէնեան Ս., Պանդուխտ կամ կեանք Աղուանցւոյ, Կոստանդնուպոլիս, 1864, էջ 56): Նրա հայրը՝
Մահտեսի Գրիգոր բեկը, տոգորված ազատասիրական-հայրենասիրական մղումներով, հայ ժողովրդի վիճակին մոտիկից
ծանոթանալու նպատակով 1838-1842 թթ. ճանապարհորդել է ասիական մի շարք երկրներում. «1838 թուականին Գրիգոր
պէյը բաղձալով որ Հայոց վրայօք տեղեկութիւններ ժողովէ, իրեն ազատասիրական եռանդը դրդեց զինքը երթևեկել ի
հնդիկ, Ասիոյ ու Ափրիկէի մէջէն անցաւ ի Կ. Պոլիս և անցէց իր հայրենիքը. այս ճամբորդութիւնը տևեց չորս տարի»
(նույն տեղում): 1850-ական թթ. հոր քայլին է հետևում նաև Ս. Գուրգենյանը «կամքս ինծի ստիպեց որ իրեն հետևիմ,
սանձս տուի բաղդին ձեռքը» (նույն տեղում, էջ 57, տե՛ս նաև Գուրգէնեան Ս., Պանդուխտ կամ Բագուայ դատաստա-
նական բեմի փաստաբան Սահակ բէկ Գուրգէնեանի կեանքէն մի քանի էպիզոտներ, Բագու, 1882):
[415] Լինչ Հ., Հայաստան. ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, հ. Ա: Ռուսական Հայաստան, թարգմանիչ Լեւոն Լա-
թենց, Կ. Պոլիս, 1913, էջ 422:
[416] Դիլոյան Վ., նշվ. աշխ., էջ 308:
[417] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 36:
[418] Տե՛ս Обозрение российских владений на Кавказе (Ширванская провинция), ч. III, стр. 155.
[419] Տե՛ս նույն տեղում:
[420] Տե՛ս Обозрение российских владений на Кавказе (в статистическом, этнографическом, топографическом и фи-
нансовом отношени, СПб., 1836, ч. IV, стр. 361, 370.
[421] Ռուսական պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում հայ առաքելական հանրությունը ներկայացված է
«Գրիգորյան» անվանումով: Շարադրանքում մենք պահպանել ենք ավանդական՝ *առաքելական* անվանումը:
[422] Տե՛ս КК на 1850 г., Тифлис, 1849, стр. 94.

տուն, որից հայապատկան էր 600-ը. «Բնակիչք են Հայք և Մահմետականք, տունք չորս հազար, յորոց վեց հարիւրն են Հայք...»[423]: 1851 թ. քաղաքն ուներ 5512 տուն և 20386 (11307 ար., 9079 իգ.) բնակիչ, որից հայերի թիվը 6238 էր (3287 ար., 2951 իգ.)[424]:

Աղյուսակով ըստ էթնոդավանական խմբերի, այսպիսին էր պատկերը[425].

Աղյուսակ № 3

Էթնոդավանական խմբեր	ար.	իգ.	Բնակչ. ընդ. թիվը
Մահմեդական	6256	5492	11748
Հայ	3287	2951	6238
Ուղղափառ	1276	309	1585
Մոլոկան[426]	276	212	488
Սկոպեց (ներքինի)[427]	96	38	134
Վրացի	67	43	110
Կաթոլիկ	25	15	40
Լյութերական	11	13	24
Հրեա	10	6	16
Հնադեծս[428]	3		3
Ընդամենը	11307	9079	20386

Աղյուսակից հետևում է, որ ռուս վիճակագիրները մարդահամարը կատարել են էթնոդավանական պատկանելության սկզբունքով` քրիստոնյաների և մահմեդականների միջև: Այսրկովկասում կրոնական պատկանելությունը հաճախ վճռորոշ էր էթնիկ դիմագիծը բնութագրելու համար: Ուստի մարդահամարի նյութերում «ուղղափառ», «մոլոկան», «հնածես» և «սկոպեց» անվանումների մեջ ներառվում էին ռուսական տարբեր կրոնական խմբերը: Նկատենք, որ 1833 թ. կեսերից երկրամասում վերաբնակեցված ռուս աղանդավորներին արգելված էր բնակություն հաստատել քաղաքներում, ուստի Շամախիում նրանց համայնքը կազմավորվել է ավելի ուշ` 1840-ական թվականներին[429]: «Մահմեդական» ազգանիշի տակ ուղղակիորեն չպետք է «կովկասյան թաթար» հասկանալ, քանի որ Շամախիում բնակվում էին նաև որոշ թվով պարսիկներ: «Կաթոլիկ» սյունակում ներառվում էին եվրոպացիները: Ինչ վերաբերում է «լյութերական» ազգանիշին, ապա դրա տակ պետք է հասկանալ բողոքական կամ ավետարանական հայերին[430]: «Մշակի» տեղեկացմամբ. «Շամախւոյ ազգաբնակութիւնը բազմազան է.

[423] Տե՛ս Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 400:
[424] Տե՛ս **Черепанов П.**, Статистическое описание Шемахинской губернии. Шемахи, КК на 1852 г., Тифлис, 1851, стр. 429.
Էթնոդավանական խմբերի հաջորդականությունը տրվում է ըստ նրանց թվաքանակի նվազման սկզբունքի:
[425] Էթնոդավանական խմբերի հաջորդականությունը ... Մոլոկանությունը ռուսական եկեղեցու աղանդներից է, որը բավականին տարածված է Այսրկովկասում: Հիմնադիրը
[426] Մոլոկանությունը ռուսական եկեղեցու աղանդներից է, ... Մոլոկանները կրոնի մեջ շեշտը դնում են հոգևոր կյանքի և ոչ թե ծեսերի,
համարվում է Սիմոն Ուկլեյնը (XVII-XVIII դդ.): Մոլոկանները կրոնի մեջ շեշտը դնում են հոգևոր կյանքի և ոչ թե ծեսերի, համարվում է Սիմոն Ուկլեյնը (XVII-XVIII դդ.): Շամախիի մոլոկանների համայնքի հիմնադիրն է սամարացի Միքայել Պոպաշտամունքի, արարողությունների վրա: Շամախիի մոլոկանների համայնքի հիմնադիրն է սամարացի Միքայել Պո-
պաշտամունքի, արարողությունների վրա: Շամախիի ... (տե՛ս **Никольский Н.**, История русской церкви, Москва, 1985, стр. 300-302, 315). Մոլոկանները Շամախիում
պովը (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1875, փետրվարի 20, № 7):
հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1875, փետրվարի 20, № 7): աղանդավորներ աղան-
[427] XIX դարի վերջին Ռուսաստանում և Կովկասում բավական լայն տարածում էր ստացել ինքնամորձատողների աղանդը, որի դավանական հիմնական սկզբունքներից մեկը սեռական կյանքի խիստ մերժումն էր, համարելով այն մեծ մեղք
(տե՛ս **Զարյան Ա.**, Ներքինիներ, «Իրան-նամէ», Երևան, 1995, հուլիս-սեպտեմբեր, № 4-5, էջ 17-18):
[428] Հնածեսականությունը (старообрядчество) ռուս ուղղափառ եկեղեցում առաջացած կրոնական ուղղություն է, որը, չընդունելով պատրիարք Նիկոնի 1653-1666 թթ. անցկացրած բարեփոխումները, անջատվեց եկեղեցուց և պաշտպանեց հին ծեսերն ու պաշտամունքի ձևերը (տե՛ս Атеистический словарь, Москва, 1985, стр. 424):
[429] Տե՛ս **Волкова Н.**, Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., КЭС, № 4, Москва, 1969, стр. 7.
[430] Շամախի քաղաքի հայության մեջ, առաքելականներից բացի, եղել են նաև բողոքական կամ ավետարանական եկեղեցու հետևորդներ: Ավետարանական քարոզչությունը Շամախի ներթափանցեց 1828 թ. սկսած` Շվեյցարիայի Բազել քաղաքից եկած քարոզիչներ Ֆ. Զարեմբայի, Ա. Դիտրիխի և Մ. Ֆարուխի (Հ. Գալստյան) միջոցով (տե՛ս **Քասունի Ե.**, Լուսաշաւիղ, Պատմութիւն Հայ Աւետարանական շարժման (1846-1866), Պէյրութ-Լիբանան, 1947, էջ 230): Շամախիում

այդտեղ բնակվում են միայն հայեր, ռուսներ և թուրքեր, իսկ եթէ կան աննշան բացառութիւններ, դոքա կայանում են փոքր թւով մալականներ»[434]: Ղ. Ալիշանի տեղեկացմամբ, 1850-ականների սկզբներին քաղաքն ունեցել է 18000 (այլ աղբյուրներով` 19558)[435] ազգաբնակչություն, որից 1000 տուն հայ. «Բն. 18,000, յորս 1000 երդ Հայ...»[436]: 1855 թ. տվյալների համաձայն` քաղաքի 3113 տնից հայերն ունեցել են 469, ռուսները` 164, շիաները` 1320, և սուննի մահմեդականները` 1130 տուն[437]: Նույն տարվա տվյալներով` հայերի թիվը քաղաքում 2796 էր (1544 ար., 1252 իգ.)[438]: Նկատենք, որ Շամախի քաղաքի 1850-ականների հայ բնակչության թվի վերաբերյալ վիճակագրական գրականության մեջ տեղ են գտել թերի և երբեմն էլ հակասական տվյալներ: Սխալ հաշվառումների հետևանքով հայապատկան տների թիվը նվազ է ցույց է տրված: Բնական աճի պայմաններում, անշուշտ, աճել է հայերի թիվը, քանի որ 1851-1858 թթ. ժամանակահատվածում տեղի չեն ունեցել այդ գործընթացը խանգարող պատճառներ` երկրաշարժ, համաճարակ և այլն:

Շամախի քաղաքի ազգաբնակչության բնական աճի վրա խիստ բացասական ազդեցություն էին թողնում հաճախակի կրկնվող ավերիչ երկրաշարժերը: Քաղաքը, գտնվելով սեյսմիկ ակտիվ շրջանում, լրջորեն վնասվել էր 1668, 1669, 1806, 1828[439], 1847, 1848, 1849 թթ. երկրաշարժերից[440]: Հերթական աղետալի երկաշարժը տեղի ունեցավ 1859 թ. մայիսի 30-31-ին, որի հետևանքով ավերվեց 3250 շինություն, փլատակների տակ մնաց 400 մարդ[441]: Գերմանացի ականավոր երկրաբան Հերման Աբիխի տվյալներով` զոհվեց ավելի քան 100 մարդ[442]: Կործանարար երկրաշարժերի վերաբերյալ Էջմիածնի սինոդին Թեմի կոնսիստորիայի հունիսի 3-ի ծանուցման մեջ ասված է, որ «...չմնաց ի Շամախի և ոչ մի բնակութիւն առանց զգալի վնասուորութեան...»[443]: Երկրաշարժի պատճառած նյութական վնասը կազմում էր 1.344.000 ռ.: Վնասի չափն այնքան մեծ էր, որ շամախեցիները 10 տարով ազատվում են հարկերից[444]:

Շամախիում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի պատճառով, երբ 1859 թ. վերջերին նահանգային կենտրոնական վարչությունը տեղափոխվում է Բաքու[445], շամախեցիներից շատերը ևս փոխում են իրենց բնակավայրը` հաստատվելով Բաքվում և այլուր, իսկ հիմնական հատվածը դարձյալ մնաց հարազատ օջախներում[446]: 1859 թ. նոյեմբերի տվյալներով` Շամա-

ավետարանականների առաջնորդն էր Սարգիս Համբարձումյանը, որի անվան հետ է կապված նրանց հետագա գործունեությունը: Ավետարանական ակտիվ քարոզչության արդյունքում XIX դարի 40-60-ական թթ. Շամախին և Բաքուն դարձան արևելահայ ավետարանականության կենտրոններից (տե՛ս Ղուկասեանց Հ., Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ (պատմական նիւթեր), Թիֆլիս, 1886: Մանրամասն տե՛ս Ղազարյան Ա., Ռ. Ն. Լևոնյան, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999:
[434] Գալստեանց Ս., Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1875, փետրվարի 13, № 6:
[435] Տե՛ս Կորկոտյան Զ., նշվ. աշխ., էջ 37:
[436] Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 92:
[437] Տե՛ս КК на 1856 г., Тифлис, 1855, стр. 272.
[438] Տե՛ս նույն տեղում, стр. 270.
[439] 1828 թ. հուլիսի 9-ին և 28-ին տեղի ունեցած երկրաշարժերի հետևանքով փլվել էր 247 տուն և 30 խանութ (տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 158):
[440] Տե՛ս Շամախու աղէտը (ժողովածու), Բագու, 1902, էջ 11:
[441] Տե՛ս նույն տեղում, էջ 12:
[442] Տե՛ս **Абих Г.**, Шемахинское землетрясение 1859 года (Природа и люди на Кавказе и за Кавказом..., стр. 287), նույնի` Землетрясения в Шемахе и Эрзруме в мае 1859 г. (Записки кавказскаго отдела императорскаго русскаго географическаго общества (այսուհետ` ЗКОИРГО), кн. VI, Тифлис, 1862, стр. 1-19).
[443] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3844, թ. 1:
[444] Տե՛ս Լ [Լեո], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 8, № 29:
[445] Տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ., էջ 21, տե՛ս նաև АКАК, т. XII, стр. 398.
[446] Տե՛ս Շամախու աղէտը, էջ 12:

խիում ազգաբնակչության թիվը հասել էր 24502-ի (13141 ար., 11361 իգ.)[447]: Փաստորեն, երկրաշարժից հետո բնակիչների թիվը պակասել էր 585-հոգով: Նվազեց նաև հայ բնակչության թիվը: 1861 թ. տվյալներով՝ քաղաքում հայապատկան տների թիվը 876 էր[448]: Երկրաշարժի հետևանքները վերացնելուց հետո Շամախին աստիճանաբար ընկավ բնականոն զարգացման ընթացքի մեջ: Աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ երկրաշարժից հետո քաղաքն ուներ 4972 տուն, իսկ բնակչության թիվը 25087 էր (13999 ար., 11088 իգ.)[449]: 1865 թ. դրությամբ քաղաքն արդեն ուներ քարաշեն 5192, փայտաշեն 19 տուն և 29027 բնակիչ[450]: Այդ շրջանում քաղաքն ունեցել է 47 փողոց, 3 հրապարակ և 7 կամուրջ[451]: Շամախիում հերթական երկրաշարժը տեղի ունեցավ 1869 թ. օգոստոսի 21-ին, որի հետևանքով փլվեց 120 տուն, իսկ մնացած մասը խախտվեց ու մեծամեծ վնասներ կրեց: Խիստ վնասվել էին Սբ. Աստվածածին մայր եկեղեցու տանիքը, կաթողիկեն, թաղակապ կամարները և, հատկապես, զանգակատունը[452]: «Տոմար ընտանեկան» օրացույցում նշվում է, որ 1869 թ. քաղաքում ապրել է 2428 հայ[453]:

1870 թ. քաղաքն ուներ 24502 (13141 ար., 11361 իգ.) բնակիչ[454]: Անանիա արքեպ. Համազասպյանի՝ Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Տփղիսեցուն հղած զեկուցագրում նշված է, որ մինչև 1871 թ. քաղաքում հայապատկան տների թիվը հասնում էր 1200-ի[455]: Երկրաշարժից երեք տարի անց՝ 1872 թ. հունվարի 16-ին, տեղի ունեցավ ավելի մեծ ուժգնությամբ երկրաշարժ: Նախքան բնական այդ աղետը՝ քաղաքն ուներ 24821 բնակիչ[456]: Երկրաշարժի պատճառով զոհվեցին 118 հոգի, վիրավորների թիվը 44 էր[457]: Զոհվածների թվում հայերը 30 հոգի էին. «...ընդ յանկարծամահ մեռելսն գտանին հայք լուսաւորչականք մինչ ց30»[458]: Երկրաշարժի հետևանքով հիմնովին վնասվեց քաղաքի բարձրադիր մասում գտնվող հայկական թաղամասը: Հիմնահատակ ավերվեց Հայոց նորաշեն եկեղեցին: Երկրաշարժի պատճառած նյութական վնասը կազմում էր 1137000 ռ.[459]: Ալ. Շիրվանզադեի «Կյանքի բովից» հուշագրության մեջ կարդում ենք. «Վերջին զարհուրելի երկրաշարժից այնտեղ քար քարի վրա չէր մնացել, բայց դարձյալ գեղեցիկ էր նա արտաքուստ, ինչպես գեղեցիկ է գեղեցկուհին նույնիսկ ցնցոտիների մեջ: Նրա փլատակներն անթիվ բարդիների, կաղամախիների ու թթենիների միջից նայում էին որպես միջնադարյան շքեղ դղյակներ: Նրա խորտակված եկեղեցիների ու մզկիթների կանգուն պատերը նմանվում էին հոյակապ աշտարակների, ուր, կարծես, գերված էին առասպելական գեղեցկուհիներ իրանց ողբերգական ճակատագրով»[460]: Երկրաշարժի պատճառով կրկին սկսեց նվազել քաղաքի բնակչության թիվը: Տնտեսական անկման ու ավերումների

[447] Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, աշխատասիրեաց Տ. Սրբուհի Ա. Երիցեանց, Թիֆլիս, 1874, էջ 64:
[448] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 138:
[449] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 100.
[450] Տե՛ս Свод статистических сведений о Кавказе, т. I, Тифлис, 1869, отд. II, стр. 62, 67 (այսուհետ՝ СССОК, т. I).
[451] Տե՛ս КК на 1856 г., стр. 273.
[452] Տե՛ս «Արարատ», 1869, № Թ, էջ 104-105:
[453] Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 143:
[454] Տե՛ս Сборник сведений о Кавказе: Списки населенных мест Кавказскаго края, т. II, Тифлис, 1872, стр. 351 (այսուհետ՝ ССОК, т. II).
[455] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29, տե՛ս նաև Սարգիսբէկեան Ս., Շամախին, «Մշակ», Թիֆլիս, 1902, մարտի 21, № 62:
[456] Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 143:
[457] Տե՛ս **Зелинский С.**, նշվ. աշխ., стр. 9.
[458] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6041, թ. 1:
[459] Տե՛ս Լ. [Լեո], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 8, № 29:
[460] Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից, էջ 9:

հետևանքով հազարավոր անգործ մնացած արհեստավորներ և տուրքերից խեղճացած գյուղացիներ թողնում են հայրենի եզերքը և գաղթում Բաքու, ուր շուտով գոյանում է շամախահայերի մի ամբողջ թաղամաս: Սկսված արտագաղթի հետևանքով հայ բնակչության թիվն աստիճանաբար սկսում է նվազել: Այս պայմաններում Շամախիում արագորեն ընկնում է արհեստների ու առևտրի հարգը, բազմաթիվ վաճառականներ սնանկանում են, արհեստավորները մնում են անգործ, աստիճանաբար փակվում են գործարանները, որի հետևանքով Շամախին աստիճանաբար կորցնում է իր երբեմնի փառքը և նյութական բարեկեցությունը: Շամախի քաղաքի տնտեսական անկումը հետևյալ կերպ է նկարագրել «Նոր-դարը». «Պատմական Շիրվանը, որ մի ժամանակ իւր առատ արդիւնաբերութեամբ Անդրկովկասի մէջ գրեթէ առաջին տեղն էր բռնում, այսօր շատ կոյր բախտի զօրութեամբ, երկրաշարժի շնորհիւ, մի տխուր և յոյժ ցաւալի տեսարան է ներկայացնում: Այլ ևս չկան այն հոյակապ շինութիւնները, որոնց նայելիս մարդ զմայլւում էր: Չկան նոյնպէս այն մետաքսի գործարանները, որոնց իւրաքանչիւրի մէջ գտնուողների թիւը հասնում էր առնուազն 300-400 ի»[458]:

Այնուհանդերձ, Բաքվի հետ անհավասար մրցակցության պայմաններում Շամախին փորձում էր պահպանել իր հնամենի շուքն ու փայլը՝ երկրամասի հայության համար նախկինի պես մնալով որպես հոգևոր-եկեղեցական և մշակութային կենտրոն: «Շամախին, Աղուանից աշխարհի այդ պատմական քաղաքը,- գրում է Սմբատ Գարագաշյանը,- որը մինչև սոսկալի երկրաշարժը պատուաւոր տեղ է բռնելիս եղել վաճառականական աշխարհում, այսօր կարծես, սկսում է վերակենդանանալ նորից, ճիգեր է թափում արժանանալու՝ եթէ ոչ նախկին փառքին, գոնէ գաւառական քաղաքների մէջ աչքի ընկնող տեղ գրաւելու»[459]: «Մշակի»՝ Շամախիի թղթակցի «Հ. Ղ.» ծածկանունով հանդես եկող Գարեգին քհն. Ղուկասյանի «Նամակ Շամախուց» թղթակցությունից հայտնի է դառնում, որ քաղաքը երկրաշարժից հետո ունեցել է 24000 բնակիչ: Դրա մեծագույն մասը՝ 6/7-ը, կազմել են սուննի և շիա թաթարները, իսկ 1/7 մասը՝ հայերը[460]: Քաղաքը բաժանված էր երկու գլխավոր թաղերի՝ մահմեդական և քրիստոնեական: Վերջինիս մեջ գերակշռում էր հայ բնակչությունը, «որոնց շնորհիւ այդ թաղը թէ մաքուր է պահվում և թէ կենդանութիւն նշմարւում»[461]: 1873 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով՝ քաղաքի ազգաբնակչության թիվը 25087 (13999 ար., 11088 իգ.), որից հայերի թիվը 5177 էր (2940 ար., 2237 իգ.)[462]՝ ամբողջ բնակչության 20,6%-ը: Շամախիից 1880 թ. հուլիսի 20-ին «Մշակին» հղած մի թղթակցությունում ասվում է, որ քաղաքն ուներ 900 տուն հայ[463]: 1886 թ. տվյալներով՝ քաղաքի բնակչության թիվը 22139 էր (13286 ար., 8853 իգ.), որից հայերի թիվը արտագաղթի հետևանքով դարձել էր 3962 (2690 ար., 1272 իգ.)[464]՝ ամբողջ բնակչության 17,9%-ը: Ըստ դավանանքի՝ հայ առաքելականների թիվը 3638 էր (2452 ար.,

[458] «Նոր-դար», Թիֆլիս, 1891, նոյեմբերի 2, № 159:
[459] Փարոս [Սմբատ Գարագաշյան], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, № 28:
[460] Տե՛ս Հ. Ղ. [Գարեգին քհն. Ղուկասյան], Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1909, հուլիսի 15, № 151:
[461] Փարոս [Սմբատ Գարագաշյան], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1909, հուլիսի 15, № 151:
[462] Տե՛ս СНМ-1873, տե՛ս նաև Сборник сведений о Кавказе. Списки населенных мест Кавказскаго края. Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1873 г., т. V, ч. I, Тифлис, 1879 (б. с. այսուհետ՝ ССОК, т. V). Հարկ է նշել, որ 1873 թ. ընտանեկան ցուցակներում Շամախի քաղաքի տների և ազգաբնակչության վերաբերյալ առկա թվերը ճշգրտորեն համապատասխանում են 1863 թ. տվյալների հետ: Ստացվում է, որ 10 տարվա ընթացքում տեղի չի ունեցել բնակչության աճի շարժ, ինչն անհավանական է: Հակված ենք կարծելու, որ 1873 թ. տվյալներում տեղ են գտել ոչ ճիշտ հաշվարկներ:
[463] Տե՛ս Հայ-լուսավորչական, Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1880, օգոստոսի 15, № 142:
[464] Տե՛ս ССДНЗКИПС-1886.

1186 իգ.), հայ բողոքականներինը` 324 (238 ար., 86 իգ.)[470]: Նույն թվականի տվյալներով`
ռուս բնակչության թիվը հասնում էր 668-ի (512 ար., 156 իգ.), իսկ կովկասյան թաթարների-
նը` 17509-ի (10084 ար., 7425 իգ.)[471]: Ի դեպ, հարկ է նշել, որ 1886 թ. «Կովկասյան օրացույց»-
ում, 1871-1874 թթ. վերաբերող վիճակագրական աղյուսակում ռուս վիճակագիրների կողմից
Բաքվի նահանգի թյուրքախոս բնակչությունը նշված է նաև «ադրբեջանական թաթարներ»
անվամբ[472], ինչը, մեղմ ասած, թյուր ըմբռնումների և քաղաքական շահարկումների տեղիք է
տվել ադրբեջանցի պատմաբաններին: Զգտելով «գիտականորեն հիմնավորել» և «արդարաց-
նել» Արաքսից հյուսիս ընկած տարածքում «Ադրբեջան» անվամբ հանդես եկող պետության
ներկայիս գոյության իրավունքը` այդ պետության պատմության «հնացման» նպատակով
ադրբեջանական ժողովրդի էթնոգենեզի հարցերին նվիրված «աշխատություններում»[473] խե-
ղաթյուրելով վերջինիս կազմավորման էթնիկական պատմությունը` XIX դարի և XX դա-
րասկզբի վիճակագրական նյութերում հանդիպող «ադրբեջանցի» տերմինին փորձ է արվում
տալ էթնիկ իմաստավորում[474]: Մինչդեռ, տարաժամանակյա փաստերի համադիր քննությունը
ցույց է տալիս, որ խնդրո առարկա «ադրբեջանցի» տերմինը ռուս վիճակագիրներն գործածել
են աշխարհագրական տեղանվան նշանակությամբ և նկատի են ունեցել Իրանի Ատրպատա-
կան-Ադրբեջանից Արևելյան Այսրկովկաս վերաբնակեցված թյուրք-թաթարական ցեղերի այն
ստվար հատվածին, որոնց տեղափոխված երկրի անունով անվանել են ատրպատականցիներ-
ադրբեջանցիներ (տեղեկագրում` «адербейджанские татары»)[475]:

[470] Տե՛ս նույն տեղում:
[471] Տե՛ս նույն տեղում:
[472] Տե՛ս КК на 1886 г., Тифлис, 1885, стр. 214.
[473] Տե՛ս К проблеме этногенеза азербайджанского народа (сборник статей), Баку, 1984.
[474] Այդ մասին տե՛ս **Չոբանյան Պ.**, Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին: Պատմա-
բանասիրական ուսումնասիրություններ, Ա, Երևան, 2006, էջ 33-37:
[475] Վերը նշեցինք, որ Արևելյան Այսրկովկասում մինչև 1918 թ. բնավ գոյություն չի ունեցել *Ադրբեջան* անվամբ պետութ-
յուն` առավել ևս *ադրբեջանցի* ինքնանվամբ էթնոս, իսկ մինչև 1930-ականների կեսերը կովկասյան թաթարների պարա-
գայում այսօրվա իմաստով չի գործածվել *ադրբեջանցի* էթնանունը: Հայտնի է, որ Իրանի հյուսիսարևմտյան վարչական միա-
վորը նեղ. XIX դ. և XX դ. առաջին տասնամյակի վերջերին Արաքսից հյուսիս ընկած տարածքում
հանգ Ատրպատական-Ադրբեջանը և XX դ. առաջին տասնամյակի վերջերին Արաքսից հյուսիս ընկած տարածքում
ստեղծված ներկայիս «Ադրբեջան» անվամբ պետությունը պատմական և էթնիկական տարբեր հասկացություններ են:
Աբրահամ Կրետացու պարզաբանմամբ` «Ատրպէճանու` որ է Ատրպատականու» (**Աբրահամ Կրետացի**, էջ 59): Հետևա-
բար, XIX դ. և XX դ. սկզբերի վիճակագրական նյութերում *թաթար* էթնանվանը զուգահեռ վկայված *ադրբեջանական*
տերմինն ամենևին էլ չպետք է հասկանալ որպես էթնանուն և, առավել ևս, այն փորձել վերագրել Ադրբեջանի Հանրապե-
տությունում բնակվող այսօրվա ադրբեջանցիներին: Իրավացի է Հունգարացի արևելագետ Հերման (Արմինիուս) Վամ-
բերին. «...**այսօրվա Անդրկովկասի թուրք բնակչության ստվար մասը անկասկած հարավից է եկել հյուսիս. այսինքն`**
նրանք ներկայացնում են Ազրբայջանից (Ատրպատականից – Գ. Ս.) **ու Կասպից ծովի հարավային ափերից եկած այն**
թուրք իրոսակների բեկորները (ընդգծումը մերն է - Գ. Ս.), որոնք դեպի Կովկաս են նետել քաղաքական դեպքերը Սելջուկ-
ների երևալուց սկսած մինչև Ռուսաստանի ամբողջական տիրապետությունը, այսինքն` մինչև 18-րդ դարի վերջերը»
(**Vambery H.**, Das Türkenvolk (Ethnologischen und Ethnographischen Beziehungen), Leipzig, 1885, S. 571, **նույնի`** Իրանեան
թուրքեր կամ ազըրբէյջաններ, «Մուրճ», Թիֆլիս, 1905, № 11-12, էջ 107): Այս համոզումը ամրապնդվում է նաև այլ աղբ-
յուրի աներկդիմի վկայությամբ: Կովկասագետ Լ. Զագրուսկու պարզաբանմամբ`«Ադրբեջանական թաթարներ. ինչպես
ցույց է տալիս նրանց իսկ անվանումը, եկել են իրանական Ադրբեջան նահանգից» (**Загруский Л.**, Этнологическая
классификация Кавказских народов (б. м. и г.), стр. 10). Հարկ է նշել, որ Բաքվում հաստատված իրանական Ադրբե-
ջանից եկած և կովկասյան թյուրքալեզու ցեղերը հստակ կերպով տարանջատված են Բաքվի քաղաքային վարչության
վիճակագրական բյուրոյի` 1904 թ. հրատարակած տեղեկագրում, որտեղ նշված է. «Татары адербейджанские (иранс-
кого типа), персидские и кавказские» (Статистическое бюро Бакинской городской управы. Пособия при разработке
материала переписи г. Баку 22-го октября 1903 года, Баку, 1904, стр. 102): Ավելի հանգամանորեն տե՛ս **Էնաեթոլլահ**
Ռէզա, Ազարբայջան եւ Առան (Կովկասեան Ալբանիա), Երեւան, 1994, **Ստեփանյան Գ.**, Արևելյան Այսրկովկասում «ա-
դրբեջանցի» էթնանվան գործառման հարցի շուրջ, էջ 137-144:

Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի տվյալներով` 1890 թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ հայ-
կական տների թիվը հասնում էր 415-ի[471], իսկ բնակչությանը` 3573 էր (1846 ար., 1727 իգ.)[472]:
Շամախու գավառային վարչության կողմից 1894 թ. անցկացված վիճակագրության համա-
ձայն` քաղաքի ընդհանուր բնակչության թիվը 22293 էր (13552 ար., 8741 իգ.), որից հայերի-
նը 4042 էր (2624[473] ար., 1418 իգ.)[474]: Ըստ դավանանքի` հայ բնակչությունից առաքելական
էին 3641 (2369 ար., 1272 իգ.), լյութերական` 401 (255 ար., 146 իգ.) հոգին[475]: Ռուս բնակ-
չության թիվը 690 էր (494 ար., 196 իգ.)[476]:

Ըստ XIX դարի վերջի վկայությունների` Շամախին համարվում էր հայկական մշակույ-
թի կենտրոն` հայերի` քաղաքաշինության ժամանակի պահանջներին համապատասխան կա-
ռուցված երկհարկ-եռահարկ տներով, սյունաշար պատշգամբներով ու նախասրահներով: Քա-
ղաքի կառուցապատման համար զգալի աշխատանք են կատարել հայ արհեստավորներն ու
ճարտարապետները: Քաղաքը, ունենալով լեռնային հատուկ բնակլիմայական պայմաններ,
զարգացել է յուրատեսակ քաղաքաշինական մշակույթով: Շամախին XIX դարի վերջերին հիմ-
նականում բաժանված էր երկու մեծ թաղամասի: Հայերից բացի, քրիստոնեական թաղամա-
սում ապրել են նաև ռուս պետական պաշտոնյաներ[477]: Գ. Քաջբերունու վկայությամբ` «Այ-
նուհետև դէպի վեր, լանջի վերայ շարունակւում են քաղաքի հայկական թաղը և բազարի մի
մասը իրենց տներով, փողոցներով, աղբյուրներով և այլն: Իսկ վերի` երկրորդ հարթավայրի
վերայ տարածուած է քաղաքի նոր մասը, աւելի գեղեցիկ և կանոնաւոր մասը, հայոց և խառն
ռուսների հետ քրիստոնեայ թաղը, լայն` խաչաձև փողոցներով...: Նոր թաղումն են հայ և
ռուս բնակչութեանց աչքի ընկնող տները. զոր օրինակ հանգուցեալ Ալեքսանդր Լալաեի տու-
նը իւր պարտեզով որ խիստ բարձրութիւնից նայում է ներքին բազարի` թաթարների թաղի և
մեչիտների վերայ: Նա շինած է պետութեան կողմից Շամախին նահանգական քաղաք եղած
ժամանակ նահանգապետի համար: Այդ թաղումն է գտնվում նաև հայոց գլխաւոր եկեղեցին:
Հայոց եկեղեցուց քիչ ցած բարձրա-
հրջանում և այդ տան մէջ բնակւում էր նահանգապետը: Հայոց եկեղեցուց քիչ ցած բարձրա-
նում է Նազարեանների եռայարկ սրբատաշ ամուր տունը, որ իրեն գոյութիւնը անսասան պա-
հել է երկրաշարժերի դեմ: Ապա գալիս են խճածածկ փողոցի վերայ Քալանթարեանների
երկյարկանի քարաշէն տունը, Սարգսեանի և այլոց տները: Միւս փողոցների վերայ Տէր-Ստե-
փանեանի, Արզումանեանի, Եգանեանի, Գեանջեցեանի և այլոց բազմաթիւ տներ: Ապա գալիս
են փողոցների վերայ հայոց խանութներ...»[478]:

Հետագայում ևս Շամախիի հայ բնակչության թվի տատանումները շարունակվում են:
Բնակչության շարժընթացի ոչ հաստատուն բնույթը բացատրվում է թե՛ տնտեսական անկա-
յուն պայմաններով թե՛ ակտիվ տեղաշարժերով: Բաքվի նահանգում 1892 թ. հունիսի 6-ից
նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում բռնկված համաճարակի հետևանքով Շամախիի
բնակիչներից հիվանդացել էր 288 և մահացել 225 հոգի[479]: Ստ. Զելինսկու ուսումնասիրութ-
յունները ցույց են տալիս, որ նույն տարում հայ բնակչության մահացության թիվը կազմել է

[471] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 138:
[472] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 159:
[473] Ստ. Զելինսկու վկայակոչած տվյալում արականների թվում 6-ի փոխարեն սխալմամբ տպագրված է 9:
[474] Տե՛ս **Зелинский С.**, նշվ. աշխ., стр. 22.
[475] Տե՛ս նույն տեղում:
[476] Տե՛ս նույն տեղում, նաև «Մուրճ», Թիֆլիս, 1894, № 10-11, էջ 1388:
[477] Տե՛ս **Քաջբերունի Գ.**, նշվ. աշխ., p. 5-6:
[478] Նույն տեղում:
[479] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 20, № 148:

144 մարդ: Մահացության բարձր ցուցանիշը պայմանավորված էր խոլերայով[480]: 1895 թ. դրությամբ քաղաքում հայ ընտանիքների թիվն անցնում էր 500-ից[481]: 1886 թ. հաշվառումից 11 տարի անց՝ 1897 թ. անցկացված մարդահամարից հետո նկատվում է քաղաքի հայերի թվի աստիճանական նվազում: Ըստ այդ տվյալների՝ քաղաքի բնակչությունը 20007 էր (10463 ար., 9544 իգ.), որից հայ՝ 2515 (1274 ար., 1241 իգ.)[482]՝ կազմելով ամբողջի 12,6%-ը: Բնակչության թվով թյուրքալեզու էթնիկ խմբերին (գերակշռում էին թաթարները)՝ 16160 (80,8%) հաջորդել են հայերը, ապա՝ ռուսները՝ 807 (4%)[483]:

Այսպիսով՝ 1832-1897 թթ. Շամախի քաղաքի հայ բնակչության շարժընթացն ունի հետևյալ պատկերը[484].

Աղյուսակ № 4

Տարեթվեր	Ծուխ	ար.	իգ.	Բնակչ. ընդ. թիվը
1832	279	-	-	-
1848	600	-	-	-
1849	-	-	-	2475
1851	-	3298	2964	6262
1855	469	1544	1252	2796
1861	876	-	-	-
1869	-	-	-	2428
1871	-	-	-	1200
1873	-	2940	2237	5177
1880	900	-	-	-
1886	-	2690	1272	3962
1890	415	1846	1727	3573
1894	-	2924	1418	4342
1897	-	1274	1241	2515

Ինչպես երևում է աղյուսակում բերված թվերից, 1886 թ. համեմատությամբ 1897 թ. հայ բնակչության թիվը 1447 հոգով նվազել էր: Այդ փաստը հիմնականում պայմանավորված էր Բաքու և այսրկովկասյան այլ քաղաքներ արտագնա աշխատանքով: Այսպիսով՝ 1859 թ. նահանգային կենտրոնը Բաքու տեղափոխելուց հետո աստիճանաբար սկսեց մեծանալ վերջինիս դերը, իսկ XIX դարի երկրորդ կեսերից սկսած՝ Բաքվի նավթարդյունաբերության արագ զարգացումը բացասական ներգործություն ունեցավ Շամախի քաղաքի հետագա առաջընթացի վրա, որն արդեն դարի 70-ականների սկզբներից սկսել էր տնտեսական անկում ապրել, աստիճանաբար կորցնելով միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիների հանգուցակետի նշանակությունը:

Անդրադառնալով Շամախի քաղաքի համընդհանուր զարգացման գործում հայերի ունեցած մեծ դերին՝ «Շամախեցի»[485] ծածկանունով հանդես եկող բազմարժեք մանկավարժ Հարություն Բաղդամյանը գրում է. «Եւ շամախեցիներից ոչ ոք չի կարող ուրանալ հայերի մեծագործութիւնները թէ՛ քաղաքին ջուր մատակարարելու խնդրում, թէ՛ դպրոցական և թէ՛ այլ հանրօգուտ ասպարէզներում, որոնցից հաւասարապէս օգտւում էին բոլորը, առանց ազգի

[480] Տե՛ս **Зелинский С.**, նշվ. աշխ., стр. 19.
[481] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1895, հունվարի 11, № 4:
[482] Տե՛ս ПВПНРИ-1897, стр. 1, таблица XIII, стр. 53.
[483] Տե՛ս նույն տեղում, էջ 52-53:
[484] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Շամախի քաղաքի հայ ազգաբնակչության շարժընթացը (XIX դ.), Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), հ. 9, Երևան, 2008, էջ 108-123:
[485] Հարություն Ալեքսանի Բաղդամյանը ծնվել է 1881 թ. Շամախիի Սաղիան գյուղում: Երկար տարիներ ապրել և աշխատել է Բաքվում: Մահացել է 1965 թ. (տե՛ս **Հովակիմյան Բ.**, նշվ. աշխ., էջ 337, 575):

խտրութեան: Մինչդեռ թուրքերի մէջ քաղաքակրթութիւնը կասեցնող երևոյթներից դուրս՝ սպանութիւններից, աւազակութիւններից բացի այլ բան մենք չենք կարող ցոյց տալ, ու՞ր մնաց հանրօգուտ գործ կամ բարեգործութիւն...»[489]: Հայերի ու կովկասյան թաթարների հասարակական կյանքի սոցիալ-բարոյական նկարագրի համեմատական բնութագիրը ներկայացնելու համար ավելորդ չենք համարում մեջ բերել նաև «Մշակում» Շամախիի թաթարների վերաբերյալ արված հետևյալ դիտարկումները. «Տեղւոյս թուրք ազգաբնակչութիւնը, եթէ ասեմ աշխարհակալ Չինկիզխանի և Լանկ-Թամիրի օրերից մինչև այսօր իր վայրենի և արիւնարբու բնաւորութիւնից մի կոպեկի չափ թողած չէ, բոլորովին չեմ սխալւի... Բայց մեր տեղւոյս մահմետական տարրը, չը նայելով իր, համարեա թէ, մի ամբողջ դար ռուսաց ողորմած Կայսրութեան օրէնքներով կառավարւելուն, դարձեալ իր արիւնասէր և սպանիչ բնաւորութիւնից մի մանանխոյ հատի չափ չէ կորցրած: Թաղը թաղի վրա կհարձակւեն: Այդ դէպքում ոստիկանութիւնը և քաղաքիս կառավարութիւնը անկարող կլինի նրանց խաղաղեցնելու: Յայտնի է 1866 թ. կոտորածը, երբ մի վարունգի առիթով 76 թուրք մարդ սպանւեցին»[490]:

Շամախիում լայն ճանաչում ունեին Քալանթարյան, Դոլուխանյանց, Ավշարյանց, Շահնազարյանց և Լալայանց ազնվականական տոհմերը: Պատվելի քաղաքացիներ էին Նիկողայոս Ախվերդյանը, Մովսես Ներսեսյանցը, Մեժլում Շահնազարյանցը, Գևորգ Տեր-Սահակյանցը, Սարգիս Տեր-Հովհաննիսյանցը[491] և ուրիշներ: Շամախի քաղաքի առևտրի, արդյունաբերության և հասարակական կյանքում հայ մելիքական տոհմերից առանձնահատուկ դերակատարություն է ունեցել հատկապես Լալայան գերդաստանը: Այդ գերդաստանի շառավիղներից Շամախիում և Բաքվում ծավալած իրենց բազմարդյուն գործունեությամբ հատկապես մեծ ճանաչում էին ձեռք բերել Մարկոս բեկ Լալայանի որդի Պողոս բեկը[492] և նրա 8 որդիները՝ Աթանասը, Հովհաննեսը, Աբրահամը, Մկրտիչը, Մարգարը, Գևորգը, Հակոբը և Կարապետը[493]:

Շամախիի հայությունը մեծ դերակատարություն ուներ նաև հասարակական կյանքում: Շամախիի քաղաքային հասարակական վարչությունը սկսեց գործել 1896 թ. դեկտեմբերի 28-ից[494]: Շամախիի քաղաքագլուխ էր ընտրվել տեղի ազդեցիկ հայերից մեծահարուստ Ալեքսանդր Լալայանը, որի օգնականն էր վաճառական Անտոնյանը: Ա. Լալայանն այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 1899 թ. հունիսը և թողեց Բաքվի նահանգապետին հղած իր դիմումի համաձայն՝ Բաքու մշտական բնակության մեկնելու պատճառով[495]: Ավելի ուշ շրջանում՝ 1901-1902 թթ., քաղաքագլխի պաշտոնակատարն է եղել ազդեցիկ հայերից Ղազարյանը[496]:

Այսպիսով՝ ինչպես վկայում են մատենագրական, արխիվային և վիճակագրական աղբյուրները, պատմության բոլոր ժամանակներում էլ Շամախի քաղաքը համարվել է Արևել-

[489] **Շամախեցի**, Թրքասիրութի՞ւն, թէ բրքամոլութիւն. ընդդիմախօսական Եղիշէ Ա. - Ք. Գեղամեանի «Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը» գրքի առթիւ, Թիֆլիս, 1920, էջ 20-21:
[490] **Հայ-լուսատրչական**, Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1880, օգոստոսի 15, № 142:
[491] Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1858, դեկտեմբերի 27, № 52, էջ 416:
[492] Պողոս բեկը մահացել է 107 տարեկան հասակում՝ 1847 թ.: Նա զբաղվել է առևտրաարդյունաբերությամբ: Շամախիում և Բասխալ գյուղում ուներ մետաքսաբելի ֆաբրիկա, որի արտադրանքը հիմնականում արտահանվում էր Ռուսաստան, Թուրքիա, Իրան և Հնդկաստան (տե՛ս **Фитуни А.**, նշվ. աշխ., стр. 124).
[493] Տե՛ս **Խ. ա. ք. Մ.** [**Խորեն ավ. քհն. Միրզաբեկյան**], Կենսագրական ակնարկ շամախեցի Լալայեանց ազնիւ տոհմի (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 1-12, տե՛ս նաև **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 335):
[494] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1897, № 1, էջ 163, տե՛ս նաև **Мильман А.**, Политический строй Азербайджана в XIX—начале XX веков (административный аппарат и суд, формы и методы колониального управления), Баку, 1966, стр. 236.
[495] Տե՛ս КК на 1900 г., Тифлис, 1899, стр. 178.
[496] Տե՛ս **Սարգիսբէկեան Ս.**, Շամախին, «Մշակ», Թիֆլիս, 1902, մարտի 21, № 62:

յան Այսրկովկասի հայաշատ կենտրոններից մեկը: Տեղի հայությունն իր ստեղծագործ աշխատանքով և գիտամշակութային բարձր մակարդակով ոչ միայն ապրում էր համախմբված, սոցիալ-տնտեսական, հասարակական և կրթամշակութային աշխույժ կյանքով, այլև նշանակալից դեր է խաղացել երկրամասի համընդհանուր զարգացման գործում:

* * *

Շամախիի գավառը 1886 թ. ընտանեկան ավյալների համաձայն՝ բաժանված էր 99 գյուղական համայնքների և ուներ 208 բնակավայր, որից հայկական էին 24-ը[494]: Միայն 4 գյուղերում էին (Քոհլուճ, Հնդար, Թալիշ, Մլիրիշեն) բնակվում նաև սուննի կովկասյան թաթարներ: Գավառի հայկական գյուղերը տեղաբաշխված էին Շամախիից արևմուտք՝ մինչև Գարդման (այժմ՝ Գիրդիմաչայ) գետ, որը բնական սահմանաբաժան էր Գյոքչայի գավառի հետ:

Այդ գյուղերն էին[495].

ԱՐՓԱՈՒՏ: Գտնվում էր Շամախիի հարավային կողմում: Կառուցված էր դաշտաբերանի վրա՝ խոր ձորում: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի՝ գյուղը 1798 թ. համալրվել է Արցախի Հադրութ, Թաղլար, Խաչմաս և Ճարտար գյուղերի բնակիչներով[496]: 1863 թ. գյուղն ունեցել է 32 ծուխ[497]՝ 214 բնակչով (109 ար., 105 իգ.)[498], 1873 թ.՝ 40 ծուխ՝ 262 բնակչով (149 ար., 113 իգ.)[499], իսկ 1886-ին՝ 46 ծուխ՝ 336 բնակչով (181 ար., 155 իգ.)[500]: 1890 թ. ծխերի թիվը թեև մնացել էր անփոփոխ՝ 46, սակայն բնակչության թիվն աճել էր՝ հասնելով 338-ի (183 ար., 155 իգ.)[501]: Գյուղին վնասներ են պատճառել 1895 թ. մայիսի 10-ի հորդառատ անձրևից առաջացած սողանքները. (եղել են նույնիսկ մարդկային զոհեր)[502]: «Շատ մարդեր,- գրում էր «Արձագանքը»,- արտատեղիներ և արտեր ճաքճքելով ու տեղագնաց լինելով ընդ միշտ կորցրին խղճուկ գեղջկան ժողովրդի համար իրանց պէտքականութիւնը և դարձան անմշակ ու ամայի»[503]:

494 Տե՛ս ССДНЗКИПС-1886, стр. XI.
495 Գյուղերը տեղագրված են այբբենական կարգով:
496 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 162:
497 Հայկական գյուղական համայնքի հիմնական միավոր համարվող նահապետական ընտանիքը տարբեր հեղինակների
մոտ արձանագրված է երդ (Ղևոնդ Ալիշան), ծուխ (Մակար եպս. Բարխուտարյանց), գերդաստան (Դանիել արքեպ. Շահնազարյանց) և տուն (Սարգիս արքեպ. Ջալալյանց, Սեդրակ արքեպ. Սմբատյանց) տարբերակներով: Աղբյուրների հետազոտությունը ցույց է տալիս, որ երդը, տունը և ծուխը ընտանիքին հոմանիշ հասկացություններ էին: Երդը և տունը համարապես կիրառվել են և՛ քաղաքային, և՛ գյուղական, մինչդեռ ծուխը՝ գյուղական ընտանիքը իմաստավորելու համար:
Ծուխը՝ լայն իմաստով, հայ հոգևորականի իրավասության տակ գտնվող ընտանիքների, բնակավայրերի ամբողջությունն էր, որի սահմանները որոշում էր թեմի առաջնորդը կամ թաղական խորհուրդը: Ծուխն ունենում է եկեղեցի և քահանա:
Գերդաստանն արտահայտում էր մեծ ընտանիքի կամ ընտանեկան համայնքի գաղափարը (տե՛ս Հովհաննիսյան Ս., Ընտանիքի ձևերը, կազմը և ֆունկցիաները վաղ ֆեոդալական Հայաստանում, ՊԲՀ, Երևան, 1973, № 1, էջ 195-208, տե՛ս նաև Կարախանյան Գ., Հայոց ժողովրդական մշակույթը, Երևան, 2003, էջ 281): Սույն ուսումնասիրության մեջ շփոթ չառաջացնելու նպատակով, գյուղական ընտանիքը կներկայացնենք ծուխ տարբերակով, իսկ քաղաքայինն ընտանիքը՝
երդ կամ տուն բառերի միջոցով:
498 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
499 Տե՛ս СНМ-1873.
500 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
501 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 163:
502 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1895, մայիսի 28, № 54:
503 Նույն տեղում:

ԲԱՀԼԻԱՆ: Գարդման գետի ձախ ափին էր՝ մի տափարակ հովտում՝ Շամախիից 26 կմ հարավ-արևելք: Գյուղում բնակվել են նաև Արցախի Դիզակ և Վարանդա գավառներից եկածներ[504]: Փոքրիկ այս գյուղը 1853 թ. ունեցել է 17 ծուխ[505]: Հետագայում նկատվել է բնակչության թվի անընդհատ աճ: 1863 թ. գյուղն ունեցել է 30 ծուխ՝ 196 բնակչով (112 ար., 84 իգ.)[506]: 1865 թ. ծխերի թիվը մնացել է անփոփոխ՝ 30[507]: 1873-ին ծխերի թիվը դարձյալ մնացել է նույնը, սակայն աճել է բնակչության թիվը՝ հասնելով 208-ի (118 ար., 90 իգ.)[508]: 1886 թ. ծխերի թիվն արդեն 36 էր, աճել էր նաև բնակչության թիվը՝ 231 (126 ար., 105 իգ.)[509], իսկ 1890 թ. ունեցել է 36 ծուխ՝ 232 բնակչով (127 ար., 105 իգ.)[510]:

ԲԻԼԻՍՏԱՆ[511]: Գտնվում էր Գարդման գետի ձախ ափին՝ բարձրադիր հարավահայաց սարալանջին, Բահլիանի հարևանությամբ: Գ. Քաջբերունու տեղագրությամբ. «Զարգեարանից դէպի հարաւ՝ բարձր դաշտավայրում, իրարից քիչ հեռու դրուած են երկու փոքր հայաբնակ գիւղեր Բահլիան և Բիլիստան»[512]: Գյուղում բնակվել են նաև Արցախի Վարանդա գավառից եկածներ[513]: 1853 թ. գյուղն ունեցել է 24 ծուխ[514], 1863-ին՝ 32 ծուխ՝ 169 բնակչով (85 ար., 84 իգ.)[515]: 1865 թ. ծխերի թիվը 30 էր[516]: 1873 թ. ծխերի թիվը նվազել է՝ հասնելով 28-ի, նվազել է նաև բնակչության թիվը՝ 154 (81 ար., 73 իգ.)[517]: 1886 թ. ունեցել է 31 ծուխ՝ 151 բնակչով (82 ար., 69 իգ.)[518]: 1890 թ. թեև ծխերի թիվը մնացել է նույնը, սակայն աճել է բնակչությունը՝ 155 (85 ար., 70 իգ.)[519]:

ԳՅՈՒՐԴԱՇԵՆ (ԳՅՈՒՐԴԱ): Գավառի հնագույն հայկական գյուղերից էր: Գտնվում էր Հնդարից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ մի գեղալիր վայրում՝ Գարդման գետի ձախ կողմում[520]: Հետազոտողները գյուղի բնակչության տեղաբնիկության վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնել: Մակար եպս. Բարխուտարյանցը ուղղակի գրում է. «...ժողովուրդն բնիկ»[521]: Խնդրին անդրադարձել է Գ. Քաջբերունին՝ նշելով. «Ժողովուրդը գաղթել է վաղ ժամանակ Ղարաբաղի կողմերից...»[522]: Գյուրդաշենի խոր հնության վկայությունը փաստում են գյուղի գերեզմանոցում պահպանված բազմաթիվ հնաոճ տապանաքարերը: Ամենահին գերեզ-

504 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 184::
505 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99:
506 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
507 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 261, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
508 Տե՛ս СНМ-1873.
509 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
510 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 184:
511 Հ. Քյուրտյանի հրատարակած ձեռագրում Դանիել արքեպ. Շահնազարյանցի կողմից տետրակի լուսանցքում Բիլիստանը նշված է եղել նաև «Փլիստան» ձևով (տե՛ս Քիւրտեան Յ., Շահեկան վիճակագրական ուղեգրութիւն մը Շամախիի
հայոց մասին, «Հասկ», Անթիլիաս (Պէյրութ), 1960, ԻԹ տարի, № 11-12, էջ 452):
512 Տե՛ս Քաջբերունի Գ., նշվ. աշխ., թ. 60:
513 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 185:
514 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99:
515 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
516 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 261:
517 Տե՛ս СНМ-1873.
518 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
519 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 185:
520 Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 66:
521 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 183:
522 Քաջբերունի Գ., նշվ. աշխ., թ. 53:

մանաքարը թվագրվում է 1547 թ., որի փորագրությունն է. «Թվ (ին) ՋՂՁ (1547) / այս է հան-
գիստն աղ/այ Պ(ա)յա(ն)տիր Պաշխ»[523]: Ինչ վերաբերում է Արցախից արտագաղթած հայ բնակ-
չությանը, ապա նման համալրում ստացել են նաև երկրամասի այլ հայկական գյուղեր: 1858
թ. գյուղն ունեցել է 14 ծուխ[524]: 1863 թ. տվյալներով՝ ծխերի թիվը 23 էր՝ 124 բնակչով (64
ար., 60 իգ.)[525], իսկ 1873-ին՝ 27՝ 144 բնակչով (74 ար., 70 իգ.)[526]: 1875-ին ծխերի թիվը նվազել
է՝ դառնալով 26[527]: 1886 թ. դարձյալ աճել է ծխերի թիվը՝ հասնելով 30-ի՝ 150 բնակչով (74
ար., 76 իգ.)[528]: 1890-ին ունեցել է 30 ծուխ՝ 151 բնակչով (75 ար., 76 իգ.)[529]:

<u>ԳՅՈՒՐՋԱՇԵՆ (ԳՅՈՒՐՋԻԼԱՐ, ԳՅՈՒՐՋԻՔԵՆԴ)</u>: Գավառի սակավամարդ գյուղե-
րից էր: Ըստ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի՝ գյուրջաշենցիները գաղթել են Վրաստանից.
«Գիւրջիլարցիք գաղթած են Վրաստանից 1820»[530]: Որ գյուղը նախքան այդ գաղթը եղել է
հայաբնակ, փաստում է Հովհաննես նվիրակի՝ 1818 թ. հուլիսի 16-ին Շամախու թեմի հայա-
բնակ բնակավայրերի և հայկական գյուղերի վերաբերյալ կազմած նվիրակական ցուցակը, ու-
տեղ գյուղը նշված է Կիւրջիլար անվամբ[531]: Հիմնվելով այս վկայության վրա՝ կարծում ենք,
որ փոքրաթիվ ծխաքանակ ունեցող այս գյուղը 1820 թ. համալրվել է Վրաստանից գաղթած մի
քանի հայ ընտանիքներով: Վիճակագրական առաջին տեղեկությունները հաղորդում են 1863
թ. ընտանեկան ցուցակագրության տվյալները, ըստ որոնց՝ գյուղն ունեցել է 17 ծուխ՝ 69
բնակչով (33 ար., 36 իգ.)[532]: 1865 թ. ծխերի թիվը 13 էր[533]: 1873 թ. տվյալներով՝ այն 14 էր՝ 45
բնակչով (27 ար., 18 իգ.)[534]: 1874 թ. ամռանը գյուղ այցելած Այսրկովկասի պետական գույ-
քագրման վարչության գյուղագետ Ի. Սպասսկիի տեղեկագրում գյուղը հիշատակված է նաև
Գյուրջիքենդ անվամբ[535]: Գյուղական այս համայնքը նշված է 1878 թ. Շամախիի հայոց թեմի
հայկական գյուղերի ցանկում[536]: Թեև Ն. Աբելյանը Գյոքչա և Շամախի գավառների վերաբեր-
յալ կատարած տնտեսագիտական ուսումնասիրության մեջ նշում է, որ Գյուրջաշենի համայն-
քը մինչև 1886 թ. ընտանեկան ցուցակագրությունը լուծարվել և միացել է հարևան Սաղիան
գյուղին[537], սակայն 1909 թ. մինչև 1915 թ. վիճակագրական տեղեկագրերում գյուղը հիշա-
տակվում է որպես առանձին համայնք[538]: 1890 դրությամբ այն ունեցել է 17 ծուխ՝ 67 բնակ-
չով[539]:

[523] Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 66:
[524] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3684, թ. 13:
[525] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
[526] Տե՛ս СНМ-1873.
[527] Տե՛ս Сборник сведений о Кавказе, т. III. Очерк виноделия Кавказа, Тифлис, 1875, стр. 462 (այսուհետ՝ ССОК, т. III).
[528] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[529] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 183:
[530] **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140:
[531] Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 4:
[532] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 28.
[533] Տե՛ս **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 258, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[534] Տե՛ս СНМ-1873.
[535] Տե՛ս ССОК, т. III, стр. 456.
[536] Տե՛ս ՀԱԱ,ֆ. 56, ց. 1, գ. 7054, թ. 80-84:
[537] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 21.
[538] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 14, տե՛ս նաև КК на 1915 г., Тифлис, 1914, стр. 114.
[539] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 139: Ի դեպ, հարկ է նշել, որ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի՝ «Շամախւոյ թեմի հայ
ժողովրդեան ցուցակն» վերտառությամբ աղյուսակում նշվում է, որ Գյուրջաշենն ուներ 71 ծուխ՝ 67 բնակչով: Ենթադրում

<u>ԳՅՈՒՐՋԵՎԱՆ</u>: Շնորհիվ իր աշխարհագրական բարենպաստ դիրքի՝ Գյուրջևանը մի
շարք գյուղերի համար համարվել է հանգուցակետ: Այստեղ են խաչվել Գյուրդա-Հնդարից,
Գյանդլխան-Նորշենից, Քոհլունից և ապա դեպի հարավ տանող ճանապարհները[540]: Ուսումնա-
սիրողները գյուղի բնակչության տեղաբնիկության և անվան վերաբերյալ տարբեր կարծիքներ
ունեն: Սարգիս արքեպ. Ջալալյանցը գրում է, որ գյուրջևանցիները բնիկներ են[541]: Մակար
եպս. Բարխուտարյանցը գրում է. «Բնակչաց մի մասն նախ Արցախի Խաչեն և Ջրաբերդ գա-
ւառներից գաղթած են Կախեթի կողմերն և ապա Կախեթից գիւղս, վասն որոյ անուանուած է
Կուրջիվան: Եւ միւս մասն գաղթած է Դիզակ գաւառի Հատրութ և Դող գիւղերից և Վարանդա
գաւառի Յիրհեր, Ղուզի-ճարտար և Կիւնի-ճարտար գիւղերից: Իսկ ամենափոքր մասն եղած է
բնիկ տեղացի»[542]: Ըստ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի՝ «Գիւրջիվանցիք գաղթած են Վրաս-
տանից 1820»[543]: Հարցին անդրադարձել է նաև ուսումնասիրող Ս. Կարապետյանը՝ իրավացիո-
րեն գրելով, որ գյուղը վաղ ժամանակներից եղել է հայաբնակ և հետագայում համալրվել է
Կախեթից գաղթած, Արցախի Դիզակ և Վարանդա գավառների մի քանի գյուղերի հայ բնակ-
չությամբ, իսկ Մակար եպս. Բարխուտարյանցի ենթադրության համար հիմք է ծառայել գյու-
ղի՝ «Գյուրջևան (գյուրջի-վրացի, Գյուրջիստան-Վրաստան) անվանումը»[544]: Ինչպես արդեն
նշել ենք, երբ Կովկասի կառավարչապետ Ի. Գուդովիչը 1807 թ. դեկտեմբերի 14-ի հրամանա-
գրով թույլատրում է Շիրվան և Վրաստան տեղափոխված գաղթականների ներգաղթը, հայրե-
նիք վերադարձող գաղթականների մի փոքր մասը Կախեթից տեղափոխվում է Շիրվան և բնա-
կություն հաստատում Գյուրջաշեն և Գյուրջևան գյուղերում: Արցախում չհաստատվելու
պատճառը, ըստ երևույթին, պայմանավորված էր գաղթականների հարազատների՝ Շամախիի
գավառում մինչ այդ հաստատված լինելու իրողությամբ: Առաջին հայացքից թվում է, թե
գյուղի անվանման փաստը կապվում է Վրաստանից գաղթած հայերի հետ, ինչպես ենթադրում
է Մակար եպս. Բարխուտարյանցը: Սակայն աղբյուրները աներկբա վկայում են, որ գյուղը գո-
յություն է ունեցել նախքան գաղթը: Ս. Կարապետյանը, լինելով Գյուրջևանի հյուսիսային
մասում տարածված գերեզմանատանը, գրում է, որ ամենահին գերեզմանաքարը թվագրվում է
1762 թ., և որի փորագրությունն է. «Այս է տապ(ա)ն քոխայ Աղըրև/ի որդի Կափել, Թուս
Շա/յբոտաղ, իւր փեսա Յակուփ/ս գէրիր դվա, ի թվին ՌՄԺԱ (1762)»[545]: Կամ սրան կից մեկ
այլ տապանաքարի վրա փորագրված է. «Այս է տապան Ագըրի որդի/սարկայվաք Եղիեազյար,
/ իւր կողակից Սանամ, ԹՎ.(ին) Ռ/ ՄՃԼԸ (1789)»[546]: Գյուղը «Горжюан» անունով նշված է Ի.
Դրենյակինի՝ 1796 թ. կազմած տեղեկագրում[547]: Գյուղի հնուց ի վեր հայաբնակ լինելու վկա-
յությունն է Շամախիի թեմի առաջնորդ Թովմա (Թումա) վարդապետի թեմակալության տարի-
ներին (1632-1637 թթ.)՝ 1632 թ. կառուցված Սբ. Գրիգորիս եկեղեցին, որի ներսի հարավային

նք, որ թվերի այս անհամամասնությունը կապված է ծխերի թվի տպագրական սխալի հետ: Թերևս 17-ի փոխարեն
սխալմամբ տպագրվել է 71: Մեր ենթադրության օգտին է խոսում այն հանգամանքը, որ փոքրաթիվ այս գյուղը ինչպես
XIX դարի երկրորդ կեսին, այնպես էլ XX դարասկզբին չի ունեցել ծխերի թվի աննախադեպ աճ: Ինչպես օրինակ՝ 1909 թ.
գյուղն ունեցել է 14 ծուխ՝ 51 բնակչով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 14):
[540] Տե՛ս ССОК, т. III, стр. 442, տե՛ս նաև Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 59:
[541] Տե՛ս **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 394:
[542] **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 180:
[543] **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140:
[544] **Կարապետյան Ս.**, Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 59:
[545] Նույն տեղում, էջ 61:
[546] Նույն տեղում:
[547] Տե՛ս **Дренякин И.**, նշվ. աշխ., ИГЭД, стр. 167.

ավանդատան դռան ճակատին եղել է տեղի Հին եկեղեցու շինարարական արձանագրությունը. «Շինեցաւ սուրբ եկեղեցիս... հրամանաւ Թոմա վարդապետի և Հայոց Մովսէս կաթուղիկոսին ի թվին ՌՁԲ (1633)»[548]*: Գյուղի ծխերի վիճակագրության ամենահին վկայությունը բերում է Սարգիս արքեպ. Ջալալյանցը, սակայն նա Հնդար և Գյուրջևան գյուղերի բնակչությունը միասին է նշում` 180 ծուխ, ուստի հնարավոր չէ պարզել յուրաքանչյուրի ծխերի քանակը. «Հընդար և Գիւռճիվան: Են գիւղօրայք Հայոց տունք են հարիւր ութսուն»*[549]*: 1853 թ. գրությամբ Գյուրջևանն ունեցել է 100 ծուխ*[550]*: Տարբեր տարիների վիճակագրական տվյալները վկայում են, որ գյուղի բնակչության թվաքանակը անընդհատ աճել է: 1863 թ. այն ունեցել է 131 ծուխ` 874 բնակչով (462 ար., 412 իգ.)*[551]*, 1865 թ.` արդեն 120 ծուխ*[552]*: 1873 թ. տվյալներով` ծխերի թիվն աճել է` 175` 1027 բնակչով (552 ար., 475 իգ.)*[553]*: 1876 թ. ծխերի թիվը նվազել է` 160*[554]*: 1886 թ. ծխերի թիվն արդեն հասել էր 240-ի` 1215 բնակչով (650 ար., 565 իգ.)*[555]*, և 1890 թ. գրությամբ թեև ծխերի թիվն անփոփոխ է մնացել, սակայն աճել է բնակչությունը` հասնելով 1220-ի (655 ար., 565 իգ.)*[556]*:*

<u>ԴԱՐԱ-ՔԱՐՔԱՆԴ</u>: Գտնվում էր Արփաւու գյուղից արևմուտք: Այստեղ հաստատվել էին Արցախի Ծամձոր, Յոր, Թաղլար և Ճարտար գյուղերից[557]*: Րաֆֆին 1872 թ. շրջագայելով Շամախիի գավառի հայաբնակ գյուղերում, «Մշակում» զետեղված «Նամակ Շամախուց» հոդվածում ուշագրավ տեղեկություն է հայտնում այն մասին, որ գյուղը առեղծվել է Մեծ Բարքանդից բաժանվելու հետևանքով. «Կայ և այդ գիւղից (Մեծ Բարքանդից – Գ. Ա.) մօտ մէկ ձորագիւղ Դարա Քեարքանդ (Ջորա Քեարքանդ) անունով. հաւանական է, որ այդ գեղը Մեծ Քեարքանդից հատուած լինի մի ժամանակ»*[558]*: Հովհաննես նվիրակի` 1818 թ. հուլիսի 16-ի կազմած ցուցակում հիշատակված են Հին Բարքանդ և Բարքանդ անուններով երկու գյուղեր, որը հիմք է տալիս ենթադրելու, թե Դարա-Բարքանդը հիմնադրվել է 1818 թ. շատ տարիներ առաջ*[559]*: 1863 թ. գյուղն ունեցել է 26 ծուխ` 161 բնակչով (92 ար., 69 իգ.)*[560]*: 1865 թ. տվյալներով` գյուղում միայն Արցախից բնակեցված ծխերի թիվը հասնում էր 20-ի*[561]*: 1873 թ. ծխերի*

---

[548] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 181: Հմմտ. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 7: Ենթադրվում է, որ եկեղեցու կառուցման թվականը պետք է լինի 1632 թ., որովհետև Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսն աթոռակալել է 1629-1632 թթ.:
[549] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 393:
[550] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99:
[551] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
[552] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 259, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[553] Տե՛ս СНМ-1873.
[554] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6265, թ. 7:
[555] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[556] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 181:
[557] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1895, մայիսի 28, № 54:
[558] Յ. Մ., Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1872, սեպտեմբերի 28, № 38: «Մշակում» զետեղված հոդվածաշարերում Րաֆֆին հանդես է գալիս նաև Յ. [Հակոբ] Մ. [Միրզոյան] կեղծանունով (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 518):
[559] Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 4:
[560] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
[561] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԱ, էջ 231, տե՛ս նաև Պատմական տեղեկանք Աղուանից աշխարհի մասին (ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3): Համադրելով ձեռագրի բովանդակությունը Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի «Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի...» աշխատության հետ՝ հակված ենք այն կարծիքին, որ արխիվային վավերագիրը նրա աշխատության ձեռագիր օրինակն է, կամ նրանցից մեկը:

թիվն աճել է` հասնելով 30-ի, 176 բնակչով (93 ար., 83 իգ.)*[562]*: 1886 թ. ծխերի թիվը դարձյալ աճել է` 38` 218 բնակչով (125 ար., 92 իգ.)*[563]*: 1890 թ. թեև ծխերի թիվը մնացել է նույնը` 38, սակայն բնակչության թիվը նվազել է` 209 (115 ար., 94 իգ.)[564]*:*

<u>ԴՎԱՐԻ (ԴՎԱՐԻՇԵՆ)</u>: Գտնվում էր դաշտաբերանի մոտ: Այստեղ ևս հաստատվել են Արցախի Դիզակ և Վարանդա գավառներից եկած վերաբնակիչներ[565]*: Գյուղն ունեցել է բնակլիմայական վատ պայմաններ: Այդ մասին Գ. Քաջբերունին գրում է. «Ինչ ողորմածութիւն որ ցոյց է տուել Աստուած Ղաջարին, նոյնն առաւել լիութեամբ տարածել է նա Դուարեշէնցոց վերայ: Աղի ջուր, մոծակ, թախտաբիմի, տենդ...»*[566]*: 1863 թ. գյուղն ունեցել է 12 ծուխ` 74 բնակչով (47 ար., 27 իգ.)*[567]*: 1865 թ. ծխերի թիվը նվազել է մեկով*[568]*: 1873 թ. տվյալներով` ծխերի թիվը կրկին 11 էր` 70 բնակչով (41 ար., 29 իգ.)*[569]*: 1886-ին ծխերի թիվն արդեն հասել է 17-ի` 96 բնակչով (56 ար., 40 իգ.)*[570]*: 1890 թ. գրությամբ վիճակագրական տվյալները մնացել են անփոփոխ` 17 ծուխ` 96 բնակչով (56 ար., 40 իգ.)*[571]*:*

<u>ԶԱՐԳԱՐԱՆ (ԶԱՐԿԱՐԱՆ)</u>: Գավառի հնաբնակ և հայաշատ գյուղերից էր[572]*: Գտնվում էր Կովկասյան մեծ լեռնաշղթայի հարավահայաց անտառածածկ լանջին` Բիլիստան և Գյուրջևան գյուղերի միջև*[573]*: Ըստ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի` զարգարանցիները, ավանդության համաձայն, համարվում են բնիկ շիրվանցիներ*[574]*: Այդ նույնը հավաստում է նաև Շամախուց` «Նոր-դարին» 1898 թ. սեպտեմբերի 4-ին հղած թղթակցության մեջ Սմբատ Գարագաշյանը. «Շամախու շրջակայ գիւղերի մէջ Զարգարանը մի պատմական գիւղ է: Դեռ 2-3 դար առաջ ունեցել է 400 բնակիչ, սակայն պարսիկ արիւնարբու խաները սրի և կրակի էին մատնում առանց այն էլ հարևան պարսիկ և թուրք գիւղացիների ձեռքին հարստահարուած ժողովրդին»*[575]*: Պարսից խաների` XVIII դ. վերջերին կազմակերպած կոտորածներից հետո բազմամարդ Զարգարանում XIX դ. սկզբներին մնացել էր ընդամենը 50-60 ծուխ*[576]*: 1853 թ. գյուղն ունեցել է 57 ծուխ*[577]*: 1863 թ. ծխերի թիվը հասել է 94-ի` 655 բնակչով (387 ար., 268 իգ.)*[578]*: 1865 թ. ունեցել է 120 ծուխ*[579]*: 1873 թ. տվյալներով` ծխերի թիվը նվազել է` 94` 764 բնակչով (463 ար., 301 իգ.)*[580]*: 1886 թ. ծխերի թիվն աճել է` հասնելով 103-ի` 1009 բնակչով*

---

[562] Տե՛ս СНМ-1873.
[563] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[564] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 163:
[565] Տե՛ս նույն տեղում, էջ 178:
[566] Քաջբերունի Գ., նշվ. աշխ., թ. 33:
[567] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
[568] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 258, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[569] Տե՛ս СНМ-1873.
[570] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[571] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 178:
[572] Զարգարան գյուղում է ծնվել հայ բողոքական, ազգային-հասարակական գործիչ Էմանուել Փիրքուղաղյանը (տե՛ս Աբեղեան Ա., Դորպատի հայ ուսանողութիւնը, ՀԱ, № 7-12, Վիեննա, 1941, էջ 256:
[573] Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 261:
[574] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 140:
[575] Փարոս [Սմբատ Գարագաշյան], Զարգարան, «Նոր-դար», Թիֆլիս, 1898, սեպտեմբերի 17, № 167:
[576] Տե՛ս նույն տեղում:
[577] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 100:
[578] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 30.
[579] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 261, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[580] Տե՛ս СНМ-1873.

(598 ար., 411 իգ.)[581]: 1890-ի դրությամբ թեև դարձյալ ունեցել է 103 ծուխ, սակայն աճել է բնակչության թիվը՝ հասնելով 1027-ի (613 ար., 414 իգ.)[582]:

ՋԱՐԽՈՒ (ԽՈՅԼԻ): Գտնվում էր Սաղիան գյուղի հյուսիսային կողմում՝ ձորի հարավահայաց լանջի վրա[583]: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի՝ զարխուեցիք գաղթել են Նոր Ջուղայից, Ղարադաղ գավառից և Ներքին Փերիայի[584] Ղարղուն գյուղից՝ 1830 թ.[585]: Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը, անդրադառնալով հարցի քննությանը, գրում է, որ զարխուեցիների գաղթը Իրանից տեղի է ունեցել երկու փուլով՝ 1820, ապա 1830 թթ. ընթացքում. «Զարխու ...գաղթած են Պարսկաստանից Սպահան[ից] մօտ 1820 և 1830 թուերից»[586]: Ն. Աբելյանի տեղեկացմամբ՝ Զարխուում իրանահայերը հաստատվել են XIX դարի 30-ական թթ.[587]: Մի կարևոր հանգամանք ևս: Աղբյուրները վկայում են, որ Իրանից գաղթածների թվում եղել են նաև խոյեցիներ: XIX դարի 30-ական թվականների սկզբներին, երբ Պարսկահայքի Խոյ քաղաքից հայ ընտանիքներ գաղթեցին Շամախի, Պողոս բեկ Լալայանի միջնորդությամբ նրանց համար բնակության վայր է հատկացվում Զարխուում: Լալայանների տոհմի կենսագրականում ասված է. «Պարսկաստանից բաւականաչափ խոյեցի հայեր ընտանիքով գաղթել էին Շամախի, և իրանց համար բնակութեան տեղ են փնտրում. Խան Պողոսի միջնորդութեամբ տալիս են գաղթականներին Զարխու անուանուած տեղին, ուր բնակութիւն են գցում յիշեալ գաղթականները և մնում մինչև ցայսօր»[588]: Խոյեցիների՝ Զարխուում հաստատվելու փաստի առնչությամբ ուշագրավ վկայություն է թողել նաև Ալ. Շիրվանզադեի հորեղբոր որդին՝ Անդրեյ Ոսնջուլի Մովսիսյանը, ըստ որի՝ իրենց նախնիները գաղթել են Խոյից և հաստատվել Զարխու «Ազուան» գյուղում. «Մեր ցեղ Խոյից են եկել, Շիրվան զադեյի հայրն էլ Խոյից է եկել»[589]: (Սահակ Մուրադյան)[590] ծածկանունով գավառական թղթակիցը «Նոր-դար»-ում «Ովքե՞ր են մատրասեցիք» հոդվածում, առանց աղբյուրը նշելու, գրում է, որ Իրանից գաղթածների թիվը կազմել է 20-25 ծուխ[591]: Ենթադրվում է, որ գյուղի վերաբնակիչները գերազանցապես եղել են խոյեցիներ: Մեզ այդ մտքին է մղում 1863-1873 թթ. գյուղացուցակներում գյուղի անվանման երկրորդ՝ Խոյլի տարբերակի հիշատակման փաստը[592]: 1863 թ. գյուղն ունեցել է 21 ծուխ՝ 130 բնակչով (66 ար., 64 իգ.)[593]: 1865 թ. ծխերի թիվը նվազել է մինչև 18-ի[594]: 1873 թ. տվյալ-

[581] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[582] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 184:
[583] Տե՛ս նույն տեղում, էջ 173:
[584] Փերիան բաժանված էր երկու մասի՝ Վերին Փերիա և Ներքին Փերիա (տե՛ս Փահլևանյան Հ., Իրանահայ համայնքը (1941-1979), Երևան, 1989, էջ 35):
[585] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 173:
[586] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 140:
[587] Տե՛ս Абелов Н., նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 12.
[588] Խ. ա. ք. Մ. [Խորեն ավ. քհն. Միրզաբեկյան], Կենսագրական ակնարկ շամախեցի Լալայեանց ազնիւ տոհմի (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 8):
[589] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ալ. Շիրվանզադեի ֆոնդ, գ. 31, թ. 1-2: Ա. Մովսիսյանի հուշերը գրի է առել նրա թոռը՝ Գրետա Մովսիսյանը՝ 1962 թ. Զարխու գյուղում:
[590] Սահակ Մարկոսի Մուրադյանը զոհ է գնացել Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան ջարդերին (տե՛ս Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 51, 684):
[591] Տե՛ս Ազուան, [Սահակ Մուրադյան], Ովքե՞ր են մատրասեցիք, «Նոր-դար», Թիֆլիս, 1903, հունվարի 17, № 10:
[592] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29, տե՛ս նաև СНМ-1873.
[593] Տե՛ս նույն տեղում:
[594] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 258:

ներով՝ ծխերի թիվն աճել է՝ հասնելով 22-ի՝ 127 բնակչով (70 ար., 57 իգ.)[595]: 1874 թ. կեսերին ծխերի թիվը հասել է 23-ի[596]: 1886 թ. գյուղն ունեցել է 22 ծուխ՝ 151 բնակչով (74 ար., 77 իգ.)[597]: 1890-ին դարձյալ ունեցել է 22 ծուխ, սակայն նվազել է բնակչությունը՝ 143 (73 ար., 70 իգ.)[598]:

ԹԱԼԻՇ (ԹԱԼԻՇ-ՄԵԼԻՔ-ՈՒՄՈՒԴ)[599]: Գտնվում էր Աղսու գետի ձախ կողքում՝ Սաղիան գյուղից ոչ հեռու՝ Քոհլուճ գյուղից 6-7 կմ արևելք՝ «Թանգի» անվանված բլրի արևմտյան լանջին[600]: XVIII դարի վերջերին այնտեղ հաստատվել են Արցախի Դիզակ և Վարանդա գավառներից եկածները[601]: 1863 թ. ընտանեկան ցուցակների համաձայն՝ գյուղը եղել է զուտ հայաբնակ և ունեցել է 60 ծուխ՝ 334 բնակչով (168 ար., 166 իգ.)[602]: Երկու տարի անց գյուղում նկատվել է բնակչության կտրուկ նվազում: 1865 թ. ունեցել է 16 ծուխ[603]: Ս. Էփրիկյանի տվյալների համաձայն՝ 1860-ականների թթ. վերջերին գյուղն ունեցել է 20 ծուխ[604]: Հետագա տարիներին գյուղում բնակություն են հաստատել նաև սուննի կովկասյան թաթարները, որոնք թվաճով աստիճանաբար սկսել են գերազանցել հայերին: 1873 թ. տվյալներով՝ հայերն ունեին 28 ծուխ՝ 106 բնակչով (52 ար., 54 իգ.), իսկ կովկասյան թաթարները՝ 42 ծուխ՝ 193 բնակչով (109 ար., 84 իգ.)[605]: XIX դարավերջին գյուղ այցելած Գ. Քաջբերունու վկայությամբ՝ «...թաթարախառն գիւղ, ուր հայերը, խաների ժամանակ Ղարաբաղի Թաղլար և Ծարտար գիւղերից գաղթած են...»[606]: Հակված ենք կարծելու, որ գյուղի հայ բնակչության թվի նման նվազումը պայմանավորված էր ոչ այնքան դանդաղ աճով, որքան՝ տնտեսական պատճառներով: 1886 թ. հայերի ծխերի թիվը դարձյալ նվազել է՝ հասնելով 18-ի՝ 68 բնակչով (36 ար., 32 իգ.)[607]: Մինչդեռ կտրուկ աճել է կովկասյան թաթարների ծխերի թիվը՝ հասնելով 56-ի՝ 265 բնակչով (138 ար., 127 իգ.)[608]: 1890 թ. դրությամբ թեև հայերի ծխերի թիվը մնացել է նույնը, սակայն նվազել է բնակչության թիվը՝ հասնելով 65-ի (36 ար., 29 իգ.)[609]:

ԽԱՆԻՇԵՆ: Գտնվում էր Բողդաղ լեռնաշղթայից դեպի Աղվանից դաշտը թեքված մի լեռնաբազկի հարավկողմյան ձորակի վրա՝ Դարա-Քարքանջ գյուղի հարևանությամբ[610]: 1863 թ. գյուղն ունեցել է 32 ծուխ՝ 167 բնակչով (98 ար., 69 իգ.)[611], 1865 թ.՝ 18 ծուխ[612]: 1873 թ.

[595] Տե՛ս СНМ-1873.
[596] Տե՛ս ССОК, т. III, стр. 442.
[597] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[598] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 173:
[599] 1863-1873-1886-1914 թթ. գյուղացուցակներում գյուղը հիշատակվում է նաև Թալիշ-մելիք-ումուդ անվամբ (տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29, տե՛ս նաև СНМ-1873, տե՛ս նաև ССДНЗКИПС-1886, տե՛ս նաև КК на 1915 г., стр. 186).
[600] Տե՛ս Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 69:
[601] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 178:
[602] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
[603] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 258, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[604] Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, գիրք Ա, էջ 10:
[605] Տե՛ս СНМ-1873.
[606] Քաջբերունի Գ., նշվ. աշխ., թ. 32:
[607] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[608] Տե՛ս նույն տեղում:
[609] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 178:
[610] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԱ, էջ 231, տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 163:
[611] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
[612] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԱ, էջ 231, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:

ծխերի թիվն աճել է` հասնելով 31-ի` 154 բնակչով (91 ար., 63 իգ.)[613]: 1886 թ. ծխերի թիվը
դարձյալ աճել է` հասնելով 39-ի` 211 բնակչով (115 ար., 96 իգ.)[614]: 1890 թ. գրությամբ թեև
ծխերի թիվը հասել էր 40-ի, սակայն բնակչությունը նվազել էր` հասնելով 206-ի (110 ար., 96
իգ.)[615]:

<u>ՀՆԴԱՐ</u>: Գտնվում էր Գյուրջևան գյուղից 2,5 կմ արևմուտք` Գյուրջևան-Գյուրդաչին
ճանապարհի մեջտեղում: Հնդար գյուղն ուներ երեք թաղերից (վերին, ներքին և միջին)[616]:
«Գիւրջեւանից ոչ հեռու,- գրում է Գ. Քաջբերունին,- դէպի արեւմուտք սփռուած է Հընդար
գիւղը: Նա մեծ գիւղերի հաշւումն է և շրջապատուած է լայնածաւալ այգիներով, որոնցից
ստացւում է ընտիր կարմիր գինի: Տեղագրութիւնը բարձր է մի որոշ թեքութեամբ դէպի հիւ-
սիս»[617]: Սարգիս արքեպ. Ջալալյանցը գրում է, որ հնդարցիները բնիկներ են[618]: Մեսրոպ ար-
քեպ. Սմբատյանցը նույնպես պաշտպանել է այդ տեսակետը` գրելով, որ հնդարցիները համար-
վում են բնիկ շիրվանցիներ[619]: Հարցին անդրադարձել է նաև Մակար եպս. Բարխուտարյանցը,
որ նույնպես համարել է, թե բնիկ են ստորին և միջին թաղերի բնակիչները, իսկ վերին թա-
ղում ապրել են նաև Լփնաց[620] կողմից գաղթած թաթախոս հայեր[621]: Գյուղի վաղեմությունը
փաստում են միջին թաղի գերեզմանոցի բազմաթիվ տապանաքարերն ու խաչքարերը: Վեր-
ջիններս, ըստ ոճական, գեղարվեստական և գրային առանձնահատկությունների, թվագրվում
են XV-XVI դդ.: Տապանաքարերից մեկի վրա փորագրված է եղել. «Ա(ստուա)ծ ողոր/մի Մուս-
փայ/ին»[622]: Դրանցից հները վերաբերում են XVIII դ. սկզբներին: Օրինակ` «Այս է հանգիստ
Տ(է)ր Ս(ա)հ(ա)կի, թվ(ի)ն ՌՃԾԱ (1702)»[623]: Կամ` «Այս է հ(ա)նգիստ Տ(է)ր Աբր(ա)հ(ա)մի
դուս/տր Նարինին, ՌՃԾԱ (1702)»[624]: 1853 թ. գյուղն ունեցել է 83 ծուխ[625]: 1863 թ. ունեցել է
87 ծուխ` 471 բնակչով (261 ար., 210 իգ.)[626], որի $^2/_3$-ը եղել են հայերը, իսկ $^1/_3$-ը` սուննի
կովկասյան թաթարները[627]: Ըստ այդմ` հայերը կազմել են 314, թաթարները` 157 մարդ: 1865
թ. գրությամբ գյուղը դարձյալ բաժանված է եղել երեք թաղերի` 25-ական ծխով. «...իւրա-
քանչիւր թաղն ունի քսան և հինգ տուն Հայազգի գերդաստան, և առանձին գերեզմանատ-
ներ»[628], - գրում է Դանիել արքեպ. Շահնազարյանը: 1873 թ. ծխերի թիվն աճել է` հասնելով

[613] Տե՛ս СНМ-1873.
[614] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[615] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 164:
[616] Տե՛ս Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 63:
[617] Քաջբերունի Գ., նշվ. աշխ., բ. 48:
[618] Տե՛ս Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 394:
[619] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 140:
[620] Բ. Հարությունյանի ճշգրտումներից հետո Լփինքի (Ծիղրքի հետ միասին) սահմաններն էին. արևմուտքում` Գարդման
գետը, Կովկասյան լեռնաշղթայի Բաբադաղ լեռից սկիզբ առնող բազուկը մինչև Բաբադաղ, հյուսիսում` Կովկասյան լեռ-
նաշղթան մինչև Ալթըաղաչ գյուղի հարավակողմը, արևմուտքում` Ալթըաղաչ-Սյունդյու-Մարազա-Գ-իջակ լեռ-Փիրսաղատ
գետից արևմուտք ընտնվող բլուրներ-Կուր գետ և հարավում` Կուր գետ (տե՛ս Հարությունյան Բ., Լփինքի տեղադրության
հարցի շուրջը, ԲԵՀ, Երևան, 1981, № 1, էջ 123):
[621] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 181:
[622] Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 65:
[623] Նույն տեղում:
[624] Նույն տեղում:
[625] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց.1, գ. 2914, թ. 100:
[626] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
[627] Տե՛ս նույն տեղում:
[628] Դանիել արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 260:

90-ի` 533 բնակչով (286 ար., 247 իգ.), որից կովկասյան թաթարներն ունեին 6 ծուխ` 29
բնակչով (15 ար., 14 իգ.)[629]: 1874 թ. կեսերին գյուղն ուներ 100 ծուխ[630]: 1886-ին ծխերի թիվն
արդեն հասել էր 125-ի` 666 բնակչով (374 ար., 292 իգ.), որից կովկասյան թաթարներն ունեին
6 ծուխ` 34 բնակչով (23 ար., 11 իգ.)[631]: 1887-ին գյուղն արդեն ուներ 131 ծուխ [632]: 1890-ին
թեև նվազել է ծխերի թիվը` հասնելով 131-ի, սակայն աճել է բնակչությունը` հասնելով 731-ի
(398 ար., 333 իգ.)[633]:

<u>ՂԱՋԱՐ</u>: Գտնվում էր Թանգի կոչված բլրի արևելյան սարալանջին: Գյուղը բնակեցվել
է Արցախի Վարանդա գավառից գաղթած հայերով: «Շատ վաղուց,- գրում է Գ. Քաջ-
բերունին,- Ղարաբաղից գաղթելով, սրանք հաստատուել են նախկին Ղաջար թաթար գիւղի
աւերակների վերայ, պահպանելով նախկին անունը իբրեւ հազուագիւտ մի բան»[634]: Առաջին
անգամ գյուղի բնակչության մասին պաշտոնական տվյալներ ենք գտնում 1863 թ. վիճա-
կագրության մեջ` 25 ծուխ` 156 բնակչով (88 ար., 68 իգ.)[635]: 1865-ին գյուղն ունեցել է 22
ծուխ[636]: 1873 թ. տվյալներով` նկատվել է ծխերի թվի աճ` 32` 205 բնակչով (100 ար., 105
իգ.)[637]: 1886-ին ծխերի թիվն արդեն հասել է 37-ի` 225 բնակչով (126 ար., 99 իգ.)[638]: 1890 թ.
գրությամբ վիճակագրական տվյալները մնացել են անփոփոխ` 37 ծուխ` 225 բնակչով (126
ար., 99 իգ.)[639]:

<u>ՄԱՏՐԱՍԱ (ՄԱԴՐԱՍԱ)</u>: Գտնվում էր Սբ. Սահակ (Փիր-Սահաթ) և Աղսու գետերի մի-
ջև` Շամախի քաղաքից 7 կմ հարավ-արևմուտք[640]: «...գիւղը ունի գեղեցիկ դիրք, բարեխառն
կլիմա և առողջարար օդաջուր...»[641],- Մատրասայի մասին այսպես է գրել «Մշակը»: Մատրա-
սայի` հնուց ի վեր հայկական գյուղ լինելու մասին մատենագիտության մեջ առաջին անգամ
հիշատակվում է 1403 թ.: Գրիչ Թումա Թավրիզեցու կողմից Մատրասայում 1403 թ. ընդօրի-
նակված «Մեկնութիւնք եւ քարոզք Մատթէոսի վարդապետի, աշակերտի Գրիգորի Տաթեւաց-
ւոյ» ձեռագրի հիշատակարանում ասված է. «...ի յերկիրս Շրվանայ, ի գեղջս որ յորջորջի վե-
րաձայնելով Մատրասայ ընդ հովանեաւ մօր լուսոյ սուրբ Աստուածածնիս, ի նեղ և ի դառն և
ի յանձկացեալ ժամանակիս... Արդ, եղև գրաւ սուրբ աւետարանիս ի թու. Հա[յ]ոց կրկին չորից
հարիւրից և տասանց հնգից և երկուց թուոց (1403)»[642]:
Մատրասա գյուղի հիմնադրման մասին գոյություն ունեն տարբեր վարկածներ: Օրի-
նակ` Մակար եպս. Բարխուտարյանցը գրում է, որ մատրասահայերի մի մասը գաղթել է Սպա-
հանի կողմից և խոսում է պարսկերեն բարբառով[643]: Ս. Կարապետյանը, գրում է, որ Մատրա-

[629] Տե՛ս СНМ-1873.
[630] Տե՛ս ССОК, т. III, стр. 460.
[631] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[632] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 104, թ. 33:
[633] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 182:
[634] Քաջբերունի Գ., նշվ. աշխ., բ. 33:
[635] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
[636] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 258, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[637] Տե՛ս СНМ-1873.
[638] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[639] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 178:
[640] Տե՛ս ССОК, т. III, стр. 446: Մատրասայում է ծնվել գեներալ-լեյտենանտ, խորհրդային միության հերոս (29.05.1945 թ.)
Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը (տե՛ս Գիրք հերոսների մասին, Երևան, 1964, էջ 33-41)
[641] «Մշակ», Թիֆլիս, 1912, մայիսի 6, № 95:
[642] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 31:
[643] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 167:

սայի գերեզմանատան՝ վաղ շրջանի տապանաքարերի վիմագիր արձանագրությունները թվա-
գրվում են XIV-XV դդ.[644]: Ուսումնասիրողներից Ար. Հակոբյանը տարբեր փաստերի և վկա-
յությունների համադրական քննությամբ ցույց է տալիս, որ Մատրասան հիմնադրվել է XIV դ.
Ապշերոնյան Բուզովնա-Մատրասա գյուղից եկած մի քանի տոհմերի կողմից[645]: «Նոր-դարի»
թղթակից Գր. Ղազարյանն իր գյուղական մի թղթակցության մեջ ասում է, որ 1700 թ. գյուղն
ունեցել է 17 ծուխ, իսկ Շամախիի Մուստաֆա խանի ժամանակ (1779-1820 թթ.) 1780 թ. գյու-
ղից 20 ընտանիք գաղթել և հաստատվել է Ղուբայի գավառի Քիլվար գյուղում[646]: Մատրասա-
յի բնակչության թվաճի վրա բացասաբար է ազդել 1798 թ. բռնկված ժանտախտը, որը խլեց
հարյուրավոր կյանքեր: «Մատրասեցի» (Հարություն Բարղամյան)[647] ծածկանունով հեղինակը,
քաջածանոթ լինելով գյուղի պատմությանը, «Նոր-դարում» հրապարակված «Ովքե՞ր են մադ-
րասեցիները» հոդվածում ուշագրավ տեղեկություններ է տալիս ժանտախտի պատճառած չա-
րիքների մասին: «...եթէ չլինէր 105 տարի առաջ պատահած, 1798 թուի ժանտախտը,- գրում է
նա,- որը դադարկեց մեր գիւղը (այն ժամանակ է ընդարձակուել Մադրասայի գերեզմանատու-
նը), Մադրասան կունենար հազարաւոր տներ և գուցէ տասնեակ հազար շնչողներ»[648]: Նույն
աղբյուրի վկայությամբ՝ այդ աղետից հետո Մատրասան 1800-ական թվականների սկզբներին
համալրվել է Իրանից գաղթած 50 տուն հայերով[649]:

XVIII դարի վերջի ձեռագիր մի աղբյուրում վկայակոչվում է Մատրասայում գործող
Սբ. Հովհաննես եկեղեցու մասին[650]: Գանձասարի վանքի միաբան Աբրահամ եպս. Տաքեցու
կողմից 1799 թ. կազմված «Ձեւք նամակաց եւ դրութեանց» ժողովածուի օրհնության անթվա-
կիր հիշատակագրերից մեկում ասվում է. «զՊօղոս այրն հեղահողի իւրից փոխան կարգեցաք
Սուրբ Յովհաննէս գեղեցկաշէն եկեղեցւոյդ Մատրասու գեղիդ, որ վերահասու լիցի ամենայն
ելից և մտից եկեղեցւոյդ այդորիկ»[651]: Հետագա ժամանակներում գյուղի բնակիչների թիվը
մեծանում է՝ ի հաշիվ այլ վայրերից եկած հայ բնակիչների: Արդեն առիթ ունեցել ենք նշելու,
որ տեղացիների հրավերով գյուղում բնակություն են հաստատել նաև Ջմյուռնիայից գաղթած
և Շամախիի շրջակայքում թափառական կյանքով ապրող Ջանումյան, Օսմանյան և Թավա-
քալյան ազգանվամբ ընտանիքները: Գյուղը համալրվել է նաև Արցախից և Երևանից վերա-
բնակեցված Բարղամյան, Տեր-Սահակյան, Ալլահվերդյան և Բաղդասարյան ընտանիքներով:
Ուշագրավ է, որ այստեղ XX դարի սկզբներին ապրել է «Իրևանի» (Երևանի) մականունով ըն-

644 Տե՛ս Կարապետյան Ս., Մատրասա գյուղը և նրա հուշարձանները, էջ 232:
645 Տե՛ս Հակոբյան Ար., Թաթախոս հայեր, էջ 61:
646 Տե՛ս Գ. [Գրիգոր Ղազարյան], Մաղրասա (Շամախու գաւառ), «Նոր-դար», Թիֆլիս, 1898, մայիսի 6, № 76:
647 Տե՛ս Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 279, 575:
648 Մատրասեցի [Հարություն Բարղամյան], Ովքե՞ր են մադրասեցիները, «Նոր-դար», Թիֆլիս, 1903, փետրվարի 17, № 37:
649 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Հակոբյան Ար., Թաթախոս հայեր, էջ 62:
650 Մատրասա գյուղի Սբ. Հովհաննես անվամբ եկեղեցու մասին մատենագրական հետագա աղբյուրներն ու արխիվային վավերագրերը տեղեկություններ չեն հաղորդում: Հավանաբար խոսքն այստեղ Սբ. Աստվածածին եկեղեցու մասին է, որը ձեռագրում թյուրիմացաբար նշվել է Սբ. Հովհաննես: Մատրասայի եկեղեցին Սբ. Աստվածածին անվամբ հիշատակվում 1843 թ. արխիվային վավերագրում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1391, թ. 1): 1860 թ. կառուցված նոր եկեղեցին նույնպես օծվել է Սբ. Աստվածածին անվամբ (տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 167): տե՛ս նաև Անասյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 141:
651 Մատենադարան, ձեռ. № 3452, թ. 7բ-8ա,

տանիքը[652]: Գյուղում բնակվել են նաև հայ բոշաներ: Ավանդության համաձայն՝ բոշաներից
են ծագել Դոնղարյանները, իսկ «մահմեդականներից հայացած են» Ղարամյաններն ու Բա-
շիրյանները[653]:

Գյուղն իր բնակիչների թվով բոլոր ժամանակներում էլ գերազանցել է գավառի մնա-
ցած հայկական գյուղերը: Ապրելով գյուղաքաղաքի կյանքով[654]՝ Մատրասան զարգացման իր
աստիճանի շնորհիվ համարվել է Բաքվի նահանգի «թագն ու պսակը»[655]: 1851 թ. գյուղն ունե-
ցել է 234 ծուխ՝ 1333 բնակչով (717 ար., 616 իգ.)[656]: 1853 թ. ծխերի թիվը մնացել է անփոփոխ՝
234[657]: 1859 թ. այդ թիվն աճել է՝ հասնելով 237-ի[658]: 1863 թ. ունեցել է 281 ծուխ՝ 1784
բնակչով (961 ար., 823 իգ.)[659]: 1865 թ. գյուղն ունեցել է մոտ 300 ծուխ[660]: 1873 թ. տվյալնե-
րով՝ ծխերի թիվը դարձյալ կտրուկ աճել է՝ հասնելով 374-ի՝ 2187 բնակչով (1185 ար., 1002
իգ.)[661]: 1886 թ. այդ թիվն արդեն հասել է 483-ի՝ 2774 բնակչով (1471 ար., 1303 իգ.)[662]: 1887 թ.
ունեցել է 2780 բնակիչ (1477 ար., 1303 իգ.)[663]: 1888 թ. ծխերի թիվն արդեն հասել է 550-ի[664]:
1890 թ. ունեցել է 483 ծուխ՝ 2780 բնակչով (1477 ար., 1303 իգ.)[665]: Մեկ այլ տեղեկության հա-
մաձայն՝ 1890 թ. գյուղն ունեցել է 556 ծուխ՝ 2810 բնակչով[666]: XIX դարի վերջին՝ մասնավո-
րապես 1898 թ., գյուղն ունեցել է 700 ծուխ[667], իսկ բնակիչների թիվն անցնում էր 3600-ից[668]:

<u>ՄԵՅՍԱՐԻ</u>[669]: Գտնվում էր Շամախիից շուրջ 16 կմ արևմուտք՝ մի զառիվայրի վրա[670]:
Գյուղն ուներ զով կլիմա, որի համար էլ համարվել է Շամախիի ամառանոցը: «Կառուցեալ է
սա ի գլուխ անդնդախոր ձորոյ, զորով անցանէ ջուր քաղցրահամ, ունելով յինքեան գձուկնս
մանունս: Զբօսարան է սա քաղաքին Շամախւոյ և հեռի ի նմանէ կէս մղոնաւ. անընդհատ

652 Տե՛ս Մատրասեցի [Հարություն Բարղամյան], Ովքե՞ր են մադրասեցիները, «Նոր-դար», Թիֆլիս, 1903, փետրվարի 17, № 37, տե՛ս նաև Հակոբյան Ար., Թաթախոս հայեր, էջ 62:
653 Տե՛ս նույն տեղում:
654 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1889, սեպտեմբերի 23, № 108:
655 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1893, մարտի 21, № 34:
656 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 63:
657 Տե՛ս նույն տեղում, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99:
658 Տե՛ս նույն տեղում, ֆ. 56, ց. 1, գ. 5700, թ. 1:
659 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
660 Տե՛ս **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ., էջ 352, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
661 Տե՛ս СНМ-1873.
662 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
663 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8328, թ. 3:
664 Տե՛ս նույն տեղում, թ. 4:
665 Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 167:
666 **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 138:
667 Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1898, մայիսի 6, № 76:
668 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 205, թ. 276-277:
669 Տե՛ս Հ. Ղ. [**Գարեգին քհն. Ղուկասյան**], Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, № 28:
670 Մենքով արքեպ. Սմբատյանցը Մեյսարի անվան ստուգաբանության վերաբերյալ գրել է. «...ես կարծում եմ թէ ի պա-
տիւ Մասանց սրբոյ որ այն վանքումն են եղել, անուանել են Մասերի վանք, կամ Մեսրավանք այն է Մեսրովբայ վանք,
ինչպէս Գողթանեանց գաւառի Մսրվան գիւղը, որ խսկապէս Մեսրովբավանէ. Մեսրովբ թարգմանչի այն տեղ մնալու և
աշակերտներ պատրաստելու համար՝ որով և գիւղը, իսկ թէ այլազգական բառ համարելով Մէյսարին այնպէս բացա-
տրենք. հետեւեալը դուրս կըգայ: Մահսերի՝ նշանակէ հնդախօսական ատրագրութեան թուղթ, բազմակնիք, զանեն
մահսերագրութիւն, որպէս երեւի վանքի մօտի ժողովուրդ լինելով Մէյսարեցիք՝ սովրած են եղել միշտ մահսերագրութեամբ
բողոքել վանահօրից, որպէս և Սաղիանցիք եւ այլք» (**Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 143): Ըստ Մակար եպս. Բարխու-
տարյանցի՝ «Պարսկերէն մէյ նշանակում է գինի և սէար՝ գլուխ, իսկ Մէյսարի՝ գլխաւոր գինի» (**Բարխուտարեանց Մ.**, նշվ.
աշխ., էջ 169): Մեկ այլ մեկնաբանությամբ Մեյսարին բաղկացած է «Մէյ», որ նշանակել է գեփյուռ, և «սար» բառերից
(տե՛ս **Սարգիսբէկեան Ս.**, Շամախին, «Մշակ», Թիֆլիս, 1902, մարտի 21, № 62):

յաճախեն աստանօր բազմութիւնք արանց և կանանց և առնեն գխրախութիւն յեղանակս ամռան»[671],- գրել է Սարգիս արքեպ. Ջալալյանը: Ավանդության համաձայն՝ մեյսարեցիները համարվում են բնիկ շիրվանցիներ[672]: Պատմությունն ավանդում է, որ Մեյսարին հնում ունեցել է 700 տուն. «Որպէս պատմեն ծերունիք թէ թիւ տանց սորին ի հնումն հասանէր ցեօթն հարիւր»[673]: Գյուղը հռչակավոր է եղել հյուսիսարևմտյան խոր կիրճի ձորաբերանում գտնվող Մասանց կամ Մեյսարի վանքով, որը հայտնի է եղել գլխավոր եկեղեցու՝ Սբ. Աստվածածին անունով: Վանքի վաղեմությունը փաստում է մեյսարեցիների հնաբնակ լինելու իրողությունը: Մատենագրական աղբյուրները և ձեռագիր հիշատակարանները վանքի վանական կառույցներից Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման ստույգ թվականի վերաբերյալ տեղեկություններ չեն հաղորդում: Թերևս առաջին հիշատակությունը կապված է Շամախիի թեմի առաջնորդ Անտոն վարդապետի օրոք (1667-1681 թթ.) Սբ. Աստվածածին եկեղեցու 1680 թ. նորոգման հետ[674]: Այդ մասին եկեղեցու մուտքի վերնամասում փորագրված է եղել հետևյալ արձանագրությունը. «Քրիստոսի թվին ՌՈՋ (1680): Արդ ես հուսկ Անտոն վարդապետս նորոգեցի զԱստուածածնի վանքս, որք հանդիպիք սուրբ աղօթս յիշեցէք ի Տէր, ի ՌՃԻԹ (1680) թվին Հայոց»[675]: Եղիա Մուշեղյան Կարնեցու Սպահանից՝ Թավրիզի Արևելահնդկական ընկերության կառավարիչ Պոռեկարին[676] 1721 թ. ապրիլ 15-ին հղած նամակում գյուղի մասին կա հետևյալ հիշատակությունը. «...լագկին էկաւ Շամախի Մէյսարու գեղն, տարաւ 300 մարդով»[677]: Սարգիս արքեպ. Ջալալյանը 1850 թ. ամռանն իր այցելությամբ հավաստում է, որ
գյուղն ունեցել է 30 տուն[678]: 1863 թ. գյուղն ունեցել է 59 ծուխ՝ 309 բնակչով (163 ար., 146
իգ.)[679]: Հինավուրց այս գյուղում 1865 թ. եղել է 40 ծուխ[680], իսկ 1873-ին՝ 59 ծուխ, 397
բնակչով (208 ար., 189 իգ.)[681]: 1886-ին ծխերի թիվն արդեն հասել է 87-ի, 495 բնակչով (263
ար., 232 իգ.)[682]: 1890 թ. կար 88 ծուխ՝ 498 բնակչով (266 ար., 232 իգ.)[683]:

<u>ՄԻՐԻՇԵՆ</u>: Գտնվում էր Մատրասա գյուղից ոչ շատ հեռու: Այստեղ հաստատվել են Արցախի Միրիշեն, Հաղրութ և Շոշ գյուղերից[684]: 1863 թ. ընտանեկան ցուցակների համաձայն՝

671 Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 397:
672 Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 140:
673 Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 397:
674 Մեյսարիի Սբ. Աստվածածին վանքի մասին տե՛ս Ստեփանյան Գ., Շամախու հայոց թեմի Մէյսարիի Սբ. Աստուածածին վանքի պատմութիւնից, ՀՀՀ, Պէյրութ, 2009, հ. ԻԹ, էջ 351-358:
675 Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 381, հմմտ. Ջալալեանց Ս., նշվ. աշխ., մասն Բ., էջ 399, Սմբատեան Մ., նշվ. աշխ., էջ 147, տե՛ս նաև Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 49:
676 Պոռեկարը (Բերգար) եղել է ֆրանսիացի զինվորական: 1707 թ. եղել է Իսրայել Օրու դեսպանագնացության բարտուղարը: Իբրև Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչ 1721 թ. նա փոխադրվել է Թավրիզ: Նույն թվականին Եղիա Մուշեղյան Կարնեցին՝ որպես օգնական, ծառայել է նրա մոտ (տե՛ս Եղիա Կարնեցու դիվանը. նյութեր Սերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի, Երևան, 1968, էջ 333):
677 Նույն տեղում, էջ 99:
678 Տե՛ս Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 397:
679 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 27.
680 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ., էջ 352, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
681 Տե՛ս СНМ-1873.
682 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
683 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 170:
684 Տե՛ս նույն տեղում, էջ 169:

գյուղը եղել է զուտ հայաբնակ և ունեցել է 34 ծուխ՝ 187 բնակչով (100 ար., 87 իգ.)[685]: Հետագա տարիներին գյուղում բնակություն են հաստատել նաև սուննի կովկասյան թաթարները: 1873 թ. տվյալներով՝ հայերն ունեցել են 16 ծուխ՝ 86 բնակչով (43 ար., 43 իգ.), կովկասյան թաթարները՝ 14 ծուխ՝ 73 բնակչով (45 ար., 30 իգ.)[686]: Հետագայում դարձյալ նկատվել է հայերի ծխերի թվի աճ՝ 1886 թ. հասնելով 20-ի՝ 134 բնակչով (67 ար., 67 իգ.), նվազել է կովկասյան թաթարների թիվը՝ հասնելով 15-ի՝ 72 բնակչով (41 ար., 31 իգ.)[687]: 1890 թ. գրությամբ հայերի ծխերի թիվը նվազել է՝ 13՝ 75 բնակչով (38 ար., 37 իգ.)[688]:

<u>ՆՈՐՇԵՆ</u>: Գավառի հինավուրց գյուղերից էր: Գտնվում էր Գյուրջևանից 4-5 կմ հյուսիս: Գյուղի անվան ամենահին հիշատակությունը պահպանվել է Հնդարի Սբ. Աստվածածին ավերակ եկեղեցու մոտի գերեզմանոցի տապանաքարերից մեկի՝ 1786 թ. արձանագրության մեջ. «Ես եմ հողապատեան շիրիմս / տամբարանի Նորշինու Գալուստի / կենակից Բոբչակ (Տէր) Ա(ստուա)ծատուրեն / ընթերցողացըդ հայցեմ գալ ողորմի, թվ(ին) ՌՄԼԵ (1786)»[689]:
Գյուղում բնակվել են Արցախի Վարանդա գավառից եկածներ[690]: 1863 թ. ունեցել է 14 ծուխ՝
85 բնակչով (52 ար., 33 իգ.)[691]: 1873 թ. տվյալներով՝ ծխերի թիվը աճել է՝ հասնելով 17-ի՝ 88
բնակչով (47 ար., 41 իգ.)[692]: 1886 թ. ծխերի թիվը նվազել է՝ հասնելով 16-ի՝ 75 բնակչով (39
ար., 36 իգ.)[693]: 1890-ի գրությամբ թեև ծխերի թիվը մնացել է նույնը, սակայն նկատվել է
բնակչության աճ՝ հասնելով 76-ի (40 ար., 36 իգ.)[694]:

<u>ՍԱՂԻԱՆ</u>: Գավառի հինավուրց և հայահոծ գյուղերից էր[695]: Գտնվում էր Մատրասա և Քարքանջ գյուղերի միջև ընկած խոր ձորի արևելահայաց լանջին՝ Շամախի քաղաքից շուրջ 20 կմ արևմուտք[696]: Ըստ Ս. Երեմյանի՝ գյուղը նախապես հայտնի էր «Սաղքաւ» անունով. «Հաբանդ գաւառ-Այստեղ էր Սաղքաւ կրոնական կենտրոնը, հետագայում՝ Սաղիանու վանք անունով հայտնի»[697]: Ուսումնասիրողներից Ալ. Հակոբյանը գյուղը նույնացնում է Ծիղբերի երկրի Յրի[698] քաղաքի հետ, որի տեղադրությունը Շամախի քաղաքի հատվածում ճշտված է Բ. Հարությունյանի կողմից[699]:

685 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
686 Տե՛ս СНМ-1873.
687 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
688 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 169:
689 Քաջբերունի Գ., նշվ. աշխ., թ. 51, տե՛ս նաև Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 9:
690 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 183:
691 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
692 Տե՛ս СНМ-1873.
693 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
694 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 183:
695 Գյուղը տվել է նշանավոր մի շարք գործիչներ: Ծնունդով սաղիանցի են եղել բազմաբնույթ առևտրաարդյունաբերողներ, մեծահարուստ և բարերար Բուդաղյան եղբայրները: Սաղիան գյուղում է ծնվել (10.2.1946) ռազմական գործիչ, ՀՀ բանակի գեներալ-գնդապետ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար (2007 թ. ապրիլ-2008 թ. ապրիլ) Միքայել Հարությունի Հարությունյանը (տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994): Հանրագիտարան, Երևան, 2004, էջ 364: Ի դեպ, «Մեղու Հայաստանի» լրագրի հայտնած ուշագրավ մի տեղեկության համաձայն՝ սաղիանցիները հայտնի են եղել իրենց անհարք ըմպիշներով. «Սորա (Սաղիանի - Գ. Ս.) օդը առողջարար է և բարեխոստի և բնակիչք լինում են առողջակազմ և շատ անգամ ունենում են անյարք ըմպիշներ» (տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, նոյեմբերի 3, № 42):
696 Տե՛ս Քաջբերունի Գ., նշվ. աշխ., թ. 24:
697 Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 62:
698 Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկում ասվում է, որ դեռևս IV դ. 30-ական թվականների սկզբներին Բուն Աղվանքում լուսավորական գործունեության ժամանակ, Յրիում Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսը

Ավանդության համաձայն՝ սաղիանցիները համարվում են «բուն Շիրուանցիք»[700]*: Սա-*
ղիանը երկրամասի հնագույն գյուղերից մեկն է եղել և, անվիճելիորեն, շատ երկար դարերի
պատմություն ունի: Այն առաջին անգամ հիշատակվում է տեղում 1636 թ. Աբրահամ դպիրի
ձեռքով ստեղծված «Աղօթամատոյց»-ի հիշատակարանում. «Արդ՝ գրեցաւ Աղօթամատուցս ի
յերկիրս Աղուանից, ի գեօղս որ կոչի Սաղիան...»[701]*: Իսկ 1654 թ. գրիչ Եղիսաբեթի ընդօրինա-*
կած մի «Ժողովածու»-ի հիշատակարանում նշված է. «Գրեցաւ ի գեաւղս որ կոչի Սաղիան,
ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս[702]*: Հայրապետութեան ազգիս Հայկազնեայ տէր Փիլիպպո-*
սի, ի հայրենի աթոռն պատրիարգանիստ նահանգի սբ. Էջմիածինն»[703]*: Այսպիսով՝ պահպան-*
ված տեղեկությունները փաստում են այն իրողությունը, որ եթե հիշատակարաններում նշված
տարեթվին գոյություն է ունեցել Սաղիան գյուղը, ապա հավանալի է, որ այն դրանից առաջ
պետք է ստեղծված լիներ իր եկեղեցով ու բնակչությամբ: Միջնադարում Սաղիանը եղել է
երկրամասի ստվարաթիվ հայկական գյուղերից մեկը: Այդ մասին են վկայում գյուղի գերեզ-
մանատան՝ մի քանի հազարի հասնող տապանաքարերն իրենց արձանագրություններով[704]*:*
Սաղիանի հնուց ի վեր հայկական գյուղ լինելու փաստը հաստատել են նաև XIX դարասկզբի
վրացի ճանապարհորդները: Վրացի անանուն հեղինակը, որն իր ճանապարհորդությունը
սկսել էր Իկոթից 1806 թ. հունվարի 7-ին, նշում է, որ փետրվարի 6-ին հասել էր հայկական
Սաղիան դյուղ. «Փետրվարի 6-ին իջևանեցինք հայկական Սաղիան գյուղում: Այնտեղ հայկա-
կան մի եկեղեցի կար, լավ կառուցված, սրբատաշ քարով»[705]*: Սարգիս արքեպ. Ջալալյանցը*
երկրամասում շրջագայելու ժամանակ եղել է նաև Սաղիանում և գյուղի վերաբերյալ թողել է
հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Կացեալ ի ամին գեղջ ո՛չ բազում ժամս անցի անտի ի
գիւղն Սաղիան, որ մերձ է ի քաղաքն Շամախւոյ, բնակիչք են Հայք, տունք յիսուն, ունին
դայգիս բազումս...»[706]*:*
Սաղիանում է գտնվել Շամախիի թեմի առաջնորդանիստ կենտրոնը՝ Սբ. Ստեփաննոս
Նախավկա վանքը: Թեև մատենագրական աղբյուրները վանքի հիմնադրման վերաբերյալ
ստույգ տեղեկություններ չեն հաղորդում, այնուհանդերձ պատմությունը վկայում է, որ
վանքը գոյություն է ունեցել վաղ միջնադարից[707]*: Պատմությունն ավանդում է, որ Սաղիանի*
վանքը հիմնադրվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից այդ վայրերում նրա առաքելության ժամա-
նակ: Այդ մասին տեղեկանում ենք նաև «Նոր-դարին» 1887 թ. նոյեմբերի 24-ի ամն «Դ. Գ.»-ի
հղած թղթակցությունից, որում ասված է. «Շամախիից 18 վերստ հեռաւորութեամբ դէպի հա-
րաւ գտնվում է Սաղիանի ս. Ստեփաննոս վանքը մի վայելուչ բարձրահայեաց գիրքի վերայ,
որ, ըստ աւանդութեան տեղաբնակների, հիմնուած է Ս. Մեսրովբ Թարգմանչից՝ նրա այս

հիմնել էր եկեղեցի և այնտեղ դրել Սբ. Զաքարիայի և Սբ. Պանդալեոնի մասունքների մի մասը. «Եւ տարեալ զամենա-
սուրբ նշխարս վկայիցն ի մեծ քաղաքն Ցրի Աղուանից իշխանութեանն՝ շինէր փոքրիկ եկեղեցի և դնէր անդ մեծ զգուշու-
թեամբ մասն ինչ յարենէն Զաքարիայ և ի նշխարաց սրբոյն Պանդալիոնի...» (Կաղանկատուացի, էջ 37):

[699] Տե՛ս Հարությունյան Բ., Լփինքի տեղադրության հարցի շուրջը, էջ 123:

[700] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 140:

[701] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), h. Բ, էջ 859:

[702] Սաղիանի Սբ. Աստվածածին եկեղեցին XIX դ. վերջին գտնվել է կիսավեր վիճակում (տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 19):

[703] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), h. Գ, էջ 624:

[704] Տե՛ս Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 60:

[705] Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, էջ 151:

[706] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 394:

[707] Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա վանքի մասին տե՛ս Ստեփանյան Գ., Շամախու հայոց թեմի Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանքի պատմությունը (դասախոսության տեքստ), Երևան, 2007:

կողմերը եկած ժամանակը»[708]*: Սաղիանում քրիստոնեական տաճարի կառուցման և այդտեղ*
հոգևոր իշխանության հաստատման հանգամանքն ինքնին փաստում է այդ վայրում հնուց ի
վեր քրիստոնեական ավանդույթների առկայության մասին: Սաղիան գյուղի և համանուն
վանքի մասին ուշագրավ տեղեկություններ են պահպանված պատմաբան և գրող Երեմիա Չե-
լեպի Քյոմուրճյանի կողմից Կ. Պոլսում 1691 թ. կազմված «Հայ եկեղեցու մեծ քարտեզ»-ում,
որտեղ ասված է. «Եպիսկոպոսարան (եպիսկոպոսանիստ - Գ. Ս.) Սաղիանու վանք»[709]*: Մակար*
եպս. Բարխուտարյանցի վկայությամբ՝ գյուղում, տեղաբնիկ հայերից բացի, ապրել են նաև
Նախիջևանից, Իրանից և Արցախից գաղթածները. «Բնիկ տեղացի է ժողովրդեան կէս մասն,
իսկ Հին-Նախիջևանից, Պարսկաստանից և Արցախից գաղթած են՝ միւս կէս մասն»[710]*: 1828 թ.*
հուլիսի 9-ին և 28-ին տեղի ունեցած երկրաշարժերի պատճառով գյուղում ավերվել էր 247
տուն և 30 խանութ-կրպակ[711]*: 1853 թ. գյուղն ունեցել է 160*[712]*, իսկ 1863 թ.՝ 102 ծուխ՝ 543*
բնակչով (303 ար., 240 իգ.)[713]*: 1865 թ. օգոստոսին Դանիել արքեպ. Շահնազարյանցի այցելու-*
թյան ժա-մանակ գյուղն ունեցել է 75 ծուխ[714]*: Հարկ է նկատել, որ այդ թիվն անհավանական*
է, քանզի հնարավոր չէ, որ երկու տարվա ընթացքում այդ աստիճան կտրուկ նվազեր բնակչո-
ւթյունը: 1873 թ. ծխերի թիվը հասել է 116-ի՝ 632 բնակչով (347 ար., 285 իգ.)[715]*: 1886 թ. ծխե-*
րի թիվը դարձյալ աճել է՝ հասնելով 160-ի՝ 936 բնակչով (481 ար., 455 իգ.)[716]*: 1890 թ. վիճա-*
կագրական տվյալները մնացել են անփոփոխ՝ 160 ծուխ՝ 936 բնակչով (481 ար., 455 իգ.)[717]*:*
<u>ՓԱԽՐԱՔՈՒՇ</u>*: Գտնվում էր Աղսու գետակի ձախ կողմի բարձրավանդակի վրա՝ Սա-*
ղիան գյուղից 5-6 կմ հյուսիս: Գյուղի հնության վկայությունն էր հյուսիսարևմտյան ծայրին,
Աղսու գետի հովտին նայող թեք անտառածածկ սարալանջին հասարակ քարով և կրով կա-
ռուցված վանքը, որը հայտնի էր Մեխլու վարդապետի (ըստ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի՝
գուցե նաև Միքայել վարդապետի) անվամբ[718]*: Հուշարձանախմբի ուսումնասիրությամբ առա-*
ջինը զբաղվել է Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը, որը պեղումների ժամանակ ավերակ վանքի
մնացորդների տեղում գտել է խաչքարեր և զանազան անձնանուններով հիշատակային արձա-
նագրություններով ու անարձանագիր քարեր: Ինչպես օրինակ. «Շահումին. թ. ՋԿԲ. (1513)»,
«Միքայէլ երեց. թվ. ՌԿԸ. (1619)», «Սուրբ Խաչս բարեխաւս Գրիգոր քահանայ Տէր Կարապե-
տին. թվ. ՌԿԸ (1619)», «Սուրբ խաչս բարեխաւս Աւաքին»[719]* և այլն:XVIII դ. վերջերին գյու-*
ղում բնակություն է հաստատվել Արցախի Տող և Ծամձոր գյուղերից[720]*: «Սաղիանի խճուղիից*
արևմուտք, Աղսու գետի թեքութեան վերայ կա մի փոքր գիւղ հայաբնակ, շատ վաղուց գաղ-
թած Ղարաբաղի երկրից Փախրաքուշ անունով»[721]*,- գրում է Գ. Քաջբերունին: 1863 թ. գյուղն*

[708] «Նոր-դար», Թիֆլիս, 1887, նոյեմբերի 24, № 202:

[709] **Uluhogian G.**, Un'antica mappa dell'Armenia. Monasteri e santuari dal I al XVII secolo, Ravenna, 2000, p. 51.

[710] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 174:

[711] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 87.

[712] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 104:

[713] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.

[714] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 258, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:

[715] Տե՛ս СНМ-1873, տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, նոյեմբերի 3, № 42:

[716] Տե՛ս ССДНЗКИПС-1886.

[717] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 174:

[718] Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 186:

[719] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 186:

[720] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 177:

[721] Քաջբերունի Գ., նշվ. աշխ., p. 28:

ունեցել է 14 ծուխ՝ 75 բնակչով (44 ար., 31 իգ.)[722], *1865 թ.՝ 12-ը*[723]*: 1873 թ. տվյալներով՝ ծխերի թիվը նվազել է մինչև 11՝ 49 բնակչով (28 ար., 21 իգ.)*[724]*: 1886 թ. ծխերի թիվն արդեն աճել է՝ հասնելով 16-ի՝ 70 բնակչով (39 ար., 31 իգ.)*[725]*: 1890 թ. դրությամբ գյուղն ունեցել է 17 ծուխ՝ 75 բնակչով (40 ար., 35 իգ.)*[726]*:*

<u>ՔԱԼԱԽԱՆ</u>: Գտնվում էր Քարքանջի արևելյան կողմում՝ Շամախիից մոտ 10 կմ հարավ՝ մի գոգավոր սարահարթում[727]*: Գյուղի հայ բնակչության տեղաբնիկության վերաբերյալ պահպանվել են իրարամերժ տեսակետներ: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի՝ «...բնակիչք հայ և բնիկ տեղացի»*[728]*, իսկ «Նոր-դարի» մի տեղեկության համաձայն՝ «Քեալախանիի ժողովուրդը գաղթած է Պարսկաստանից, մի քանի դարեր առաջ»*[729]*: Փաստերի համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ գյուղի տեղաբնիկ հայ բնակիչների թիվը համալրվել է Իրանից գաղթած հայերով: Գ. Քաջբերունին գրում է, որ գյուղը նախապես գտնվել է Շամախիի մոտակայքում՝ «Ալլահ-Ակպար» անվամբ բլրի լանջում: Սակայն հետագա ժամանակներում ինչ-ինչ պատճառներով գյուղացիները վերաբնակվել են թաթարական հին ավերակ Շխլար գյուղատեղում և հիմնել Քալախան անվամբ գյուղը*[730]*: 1853 թ. այն ունեցել է 33 ծուխ*[731], *իսկ 1863 թ. տվյալներով՝ ծխերի թիվն աճել է՝ հասնելով 48-ի՝ 281 բնակչով (149 ար., 132 իգ.)*[732]*: 1865 թ. ծխերի թիվը նվազել է՝ 40, և գյուղը եղել է զուտ հայաբնակ*[733]*: 1873 թ. Քալախանն ունեցել է 79 ծուխ՝ 343 բնակչով (180 ար., 163 իգ.)*[734], *1874 թ. կեսերին՝ 81*[735], *իսկ 1886 թ. ծխերի թիվն արդեն հասել էր 86-ի՝ 379 բնակչով (218 ար., 161 իգ.)*[736]*: 1890-ին թեև ծխերի թիվը մնացել է նույնը՝ 86, սակայն աճել է բնակիչների թիվը՝ հասնելով 401-ի (215 ար., 186 իգ.)*[737]*:*

<u>ՔԱՎԱՆՏ</u>[738]*: Գտնվում էր Գարդման գետի ձախ ափի անտառապատ սարահարթի վրա*[739]*: «Զուտ հայաբնակ Քեաւանդի գիւղը,- գրում է Գ. Քաջբերունին,- ունի բարձր հարթ դիրք և գրաւում է խաղողի ընդարձակ այգիների կենտրոնը, ուր ծուռ ու մոլոր փողոցներում շարեշար կանգնած են մի յարկանի և երկյարկանի քարաշեն տները իրենց պատշգամբներով»*[740]*: 1863 թ. այս գյուղն ունեցել է 64 ծուխ՝ 507 բնակչով (261 ար., 246 իգ.)*[741]*: 1865 թ.*

---

722 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
723 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 258:
724 Տե՛ս СНМ-1873.
725 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
726 Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 177:
727 Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 72:
728 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 166:
729 Քալախանի, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, նոյեմբերի 28, № 187:
730 Տե՛ս **Քաջբերունի Գ.**, նշվ. աշխ., p. 9:
731 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99:
732 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.
733 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԱ, էջ 230:
734 Տե՛ս СНМ-1873.
735 Տե՛ս ССОК, т. III, стр. 450.
736 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
737 Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 166:
738 Դանիել արքեպ. Շահնազարյանցի կողմից տետրակի լուսանցքում Հ. Քյուրտյանի հրատարակած ձեռագրում Քավանտը նշված է եղել նաև «Քավանդ» ձևով (տե՛ս **Քիրտեան Յ.**, Շահեկան վիճակագրական ուղեգրութիւն մը Շամախիի հայոց մասին, «Հասկ», Անթիլիաս (Լիբանան), 1960, ԻԹ տարի, № 11-12, էջ 452):
739 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 184:
740 **Քաջբերունի Գ.**, նշվ. աշխ., p. 62:
741 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.

ծխերի թիվը հասել է մոտ 100-ի[742]*: 1873 թ. տվյալներով, թեև ծխերի թիվը նվազել է՝ 74, սակայն աճել է բնակչության թիվը՝ հասնելով 529-ի (288 ար., 241 իգ.)*[743]*: 1886-ին ծխերի թիվն աճել է՝ կազմելով 84՝ 562 բնակչով (304 ար., 258 իգ.)*[744]*: 1890 թ. թեև ծխերի թիվը մնացել է նույնը, սակայն աճել է բնակչության թիվը՝ հասնելով 566-ի (308 ար., 258 իգ.)*[745]*:*

<u>ՔԱՐՔԱՆՋ</u>: Գավառի բազմամարդ գյուղերից մեկն էր: Գտնվում էր Քալախան գյուղից արևմուտք, նրանից 7 կմ հեռավորության վրա և Շամախիից 9-10 կմ հարավ-արևմուտք՝ մի բարձրավանդակ սարալանջի վրա[746]*: XIX դարի վերջերին գյուղ այցելած Գ. Քաջբերունին ճամփորդական նոթերում գրում է. «Գնանք այժմ զուտ հայաբնակ Քերքենջ գիւղը, որ հեռու չէ Քեալախանայից: Նա դրուած է վերջին գիւղի և Մատրասայի միջև մի սարալանջի վերայ, որ բարձր նայում է դէպի հիւսիս՝ դէպի Շամախի»*[747]*: Քարքանջը աղբյուրներում հիշատակվում է նաև Հին Քարքանջ*[748] *կամ Մեծ Քարքանջ ձևերով*[749]*: Ամենայն հավանականությամբ, այդպես է նշվել այն պատճառով, որ տարբերակվի Շամախիի գավառում եղած Դարա-Քարքանջ անունով մեկ այլ գյուղից: Քարքանջցիների տեղաբնիկ լինելու վերաբերյալ կան իրարամերժ տեսակետներ: Այսպես՝ ըստ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի՝ քարքանջեցիք գաղթել են Խոյ քաղաքից և հարակից գյուղերից «Քարքանջի բնակիչքն լեզուով, սովորութիւնով եւ ամեն բանով երեւում են, որ Պարսկաստանի Խոյ քաղաքից, կամ գիւղերից են գաղթել. մի քանի դար առաջ: Եւ իսկապէս Թոռնաւան*[750] *գաւառից են, որ այժմ Զորսայ մըհալ՝ հանդէպ Նախիջեւանայ՝ յայնկոյս Երասխայ»*[751]*: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի՝ «Քարքանջի բնակիչք ամբողջապէս հայ են և բնիկ տեղացի»*[752]*: «Մշակում» տպագրված Ս. Սարգիսբեկյանի հոդվածում ասվում է, որ քարքանջցիները գաղթել են Հայաստանից՝ Անիից. «Քարքանջը, ինչպէս երեւում է եւ տեղական լեզուից, պիտի գաղթած լինի Հայաստանից, տեղական աւանդութեամբ՝ Անիից»*[753]*:*

Տարաժամանակյա վկայությունները թույլ են տալիս եզրակացնել, որ գյուղում տեղաբնիկ հայերից բացի, հաստատվել են նաև այլ վայրերից եկած հայ ընտանիքներ: Քարքանջ գյուղի հնությունը փաստում է գյուղի գերեզմանատան հյուսիսային եզրին՝ մի բարձրադիր վայրում, կառուցված երկրամասի ամենահին մատուռներից մեկի՝ Սբ. Սահակը, որը XV-XVI դդ. կառույց է[754]*: Տակավին XVIII դարի սկզբներին Քարքանջը և շրջակա գյուղերը հիմնակա-*

---

742 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 261:
743 Տե՛ս СНМ-1873.
744 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
745 Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 184:
746 Տե՛ս «Վտակ», Թիֆլիս, 1908, մայիսի 8, № 97:
747 **Քաջբերունի Գ.**, նշվ. աշխ., p. 12:
748 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 4:
749 Տե՛ս **Սարգիսբէկեան Ս.**, Շամախին, «Մշակ», Թիֆլիս, 1902, մարտի 21, № 62:
750 Թոռնավան կամ Թոռնավան գավառը գտնվում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում՝ Վանա լճի հյուսիսարևելյան կողմում (տե՛ս **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 190): Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը թյուրիմացաբար Թոռնավանը նույնացնում է ուշ ժամանակների Խոյի Չորսի շրջանին:
751 **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140, 168:
752 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., 164:
753 **Սարգիսբէկեան Ս.**, Շամախին, «Մշակ», Թիֆլիս, 1902, մարտի 21, № 62:
754 Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 74: Ավանդության համաձայն՝ Սբ. Սահակ մատուռը կառուցվել է ազգությամբ պարսիկ, ոմն Յուսուֆի գերեզմանի տեղում, որն, օծվելով քրիստոնյա, վերանվանվել էր Սահակ և քրիստոնեություն քարոզելու նպատակով շրջագայել Շիրվանում, Իրանում, Հայաստանում և Վրաստանում. «Սա էր մայրաքաղաքէն Շահաստանայ, որ է Թաւրէզ, ազգաւ Պարսիկ և հաւատովն Տաճիկ...Եւ այնպէս շրջագայեալ ի Քրդստան, ի Պարսկաստան, ի Հայաստան, ի Վրաստան, յԱսորեստան, ի Բաղդատ և յայլ բազում տեղիս՝ քարոզել

նում Հայաբնակ լինելու իրողությունը փաստում են երկրամասում շրջագայած եվրոպացի ճանապարհորդները: Ինչպես օրինակ՝ Քարքանջի հայ բնակչության թվի վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է թողել 1703 թ. օգոստոսին գյուղ այցելած հոլանդացի նկարիչ և ճանապարհորդ Կոռնեյ լը Բրուինը: «Մենք անցանք մի քանի գիւղերով՝ բնակեցուած հիմնականում հայերով,- գրում է նա,- եւ ժամը իննի մօտերը հասանք Քերքենջ («Kirkins»)՝ բերդի բարձունքի վրայ գտնուող մի գիւղ, որը ծածկուած է խաղողատունկերով:...Այս գիւղը շուրջ 200 բնտանիք ունի»[755]: 1853 թ. տվյալներով՝ գյուղն ունեցել է 143 ծուխ[756]: 1863 թ. ծխերի թիվն աճել է՝ հասնելով 147-ի՝ 892 բնակչով (467 ար., 425 իգ.)[757]: 1865 թ. ծխերի թիվը նվազել է՝ 122[758]: 1873 թ. գյուղն ունեցել է 182 ծուխ՝ 1029 բնակչով (573 ար., 456 իգ.)[759]: 1874 թ. կեսերին ծխերի թիվն աճել է՝ հասնելով 186-ի[760]: 1886-ին ծխերի թիվը կտրուկ փոխվել է՝ հասնելով 231-ի՝ 1317 բնակչով (714 ար., 603 իգ.)[761]: 1890 թ. թեև ծխերի թիվը մնացել է անփոփոխ՝ 231, սակայն բնակչությանը նվազել է՝1308 (705 ար., 603 իգ.)[762]:

<u>ՔՈՀԼՈՒՃ (ՔՅՕՎԼՈՒՋ)</u>: Գտնվում էր Գյուրջևանից 5-6 կմ հարավ-արևելք՝ Աղսու գետի աջ բարձրադիր անտառածածկ սարալանջին: Գյուղը հիմնադրել են Արցախի Վարանդա գավառի Ավետարանոց, Տողատեղ, Մսմնա, Ղավախան և Հարար գյուղերից եկածները[763]: 1853 թ. գյուղն ունեցել է 27 ծուխ[764]: 1863 թ. ծխերի թիվն աճել է՝ հասնելով 54-ի՝ 278 բնակչով (163 ար., 115 իգ.)[765], որի 1/3-ը կազմել են սուննի կովկասյան թաթարները[766]: Ըստ այդմ՝ հայերը կազմել են 185, թաթարները՝ 93 մարդ: 1873 թ. տվյալներով՝ ծխերի թիվը գարձյալ եղել է 54, սակայն բնակիչների թիվն աճել է՝ հասնելով 397-ի (203 ար., 143 իգ.)[767]: Նույն թվականի գրությամբ գյուղում նկատվել է կովկասյան թաթարների թվի նվազում. նրանցից մնացել էր ընդամենը 3 ծուխ՝ 13 բնակչով (7 ար., 6 իգ.)[768]: 1874 թ. գյուղն ունեցել է 61 ծուխ հայ բնակիչ[769]: 1887 թ. ծխերի թիվը նվազել է՝ հասնելով 52-ի[770]: 1886 թ. ծխերի թիվը կրկին նվազել է՝ 49՝ 337 բնակչով (220 ար., 177 իգ.)[771]: Նույն թվականին կովկասյան թաթարներն ունեին 3 ծուխ՝ 21 բնակչով (11 ար., 10 իգ.)[772]: 1890 թ. գրությամբ գյուղն ունեցել է 52 ծուխ՝ 411 բնակչով (222 ար., 189 իգ.)[773]:

Շամախիի գավառում վերոնշյալ գյուղերից բացի, 1886 թ. գրությամբ փոքրաթիվ հայեր են ապրել նաև Շամախիի մերձակայքում գտնվող թաթարական Բասխալ գյուղում՝ 1 ծուխ (20 ար., 17 իգ.)[774]: Գավառի նախալեռնային գոտում եղել են հայկական մի շարք գյուղեր ևս, որոնք ժամանակի պատմական դեպքերի բերումով դատարկվել կամ դավանափոխվել են[775]:

Այսպիսով՝ ըստ 1853-1890 թթ. տվյալների՝ Շամախու գավառի հայկական գյուղերում բնակչության թվի շարժընթացը և փոփոխություններն ունեն հետևյալ պատկերը[776].

<u>Աղյուսակ №5</u>

Բնակավայր	1853 Ծուխ	1861 Ծուխ	1863 Ծուխ	1863 Բնակիչ	1873 Ծուխ	1873 Բնակիչ	1886 Ծուխ	1886 Բնակիչ	1890 Ծուխ	1890 Բնակիչ
Արփատուտ	-	31	32	214	40	262	46	336	46	338
Բահլիան	17	30	30	196	30	208	36	231	36	232
Բիլիստան	24	20	32	169	28	154	31	151	31	155
Գյուրդաշեն	-	17	23	124	27	144	30	150	30	151
Գյուրջաշեն	-	-	17	69	14	45	-	-	17	67
Գյուրջևան	100	120	131	874	175	1027	240	1215	240	1220
Դարա-Քարքանջ	-	21	26	161	30	176	38	217	38	209
Դվարի	-	12	12	74	11	70	17	96	17	96
Ջարգարան	57	119	94	655	94	764	103	1009	163	1027
Ջարխու	-	18	21	130	22	127	22	151	22	143
Թալիշ	-	15	60	334	28	106	18	68	18	65
Խանիշեն	-	20	32	167	31	154	39	211	39	206
Հնդար	83	101	87	314	90	533	125	666	131	731
Ղաջար	-	22	25	156	32	205	37	225	37	225
Մատրասա	234	340	281	1784	374	2187	483	2774	566	278
Մեյսարի	40	40	59	309	59	397	87	495	80	498
Միրիշեն	-	7	34	187	16	86	20	134	12	75
Նորշեն	-	8	14	85	17	88	16	75	16	76
Սաղիան	160	75	102	543	116	632	160	936	162	936
Փախրաքուշ	-	10	14	75	11	49	16	70	16	75
Քալախան	33	44	48	281	79	343	86	379	86	401
Քարքանջ	143	123	147	892	182	1029	231	1317	231	1308
Քոհլուճ	27	31	54	185	54	346	49	397	52	411
Քավանտ	52	101	64	507	74	529	84	562	84	566
Ընդամենը	1050	1325	1682	8485	1634	9661	2015	11.865	2170	9489

թեամբ ածեալ զքագումս ի հաւատս Քրիստոսի...Եւ յետոյ երթեալ ի Շրուան ի քաղաքն Շամախի՝ և յորդառատ վարդապետութեամբ քարոզեաց անդ զՔրիստոս, և զբազումս լուսաւորեաց ի լոյս աստուածգիտութեան» (Հայոց նոր վկաները (1155-1843), գիտական հրատարակութիւն բազմաթիւ ձեռագրերի համեմատութեամբ, ընդարձակ տեղեկութիւններով եւ ծանօթութիւններով, եւ ձեռագրերի, նահատակների, յատուկ անունների ու օտար բառերի մանրամասն ցուցակներով եւ ցանկերով: Աշխատութեամբ՝ **Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի**, Վաղարշապատ, 1903, էջ 209, 213): Թեև պարսիկները փորձել են Յուսուֆին հետ պահել քրիստոնեական հավատքից, սակայն նա մնացել է անդրդվելի, որի պատճառով էլ 1417 թ. ապրիլի 18-ին նահատակվել է նրանց կողմից (տե՛ս նույն տեղում, էջ 213, հմմտ. **Միքայել Չամչյանց**, հ. Գ, էջ 440-441): Մատուռի մասին տեղեկություն է թողել նաև 1703 թ. օգոստոսին Քարքանջ ժամանած Կոռնելի լը Բրյուինը: Ըստ նրա՝ «Այստեղ (Քարքանջում - Գ. Ս.) քարաշեն մի վանք կա՝ սրբի գերեզմանով, որին կոչում էին Սահակ վարդապետ («Sahach Viartapecct»):...Այստեղ տոն օրերին մոմ են վառում եւ ճաշում գերեզմանի կողքին: Քանի որ ես եկել էի կիրակի օրով, այնտեղ շատ մարդ գտա և ինձ քաղաքավարի ձևով ճաշի հրավիրեցին» (Voyage de Corneille Le Brune, t. III, p. 502-503, տե՛ս նաև **Թաջիրյան Է.**, նշվ. աշխ., էջ 21): Մատուռը վերաշինվել է 1734-1735 թթ., Պողոս բեկ Լալայանի կողմից (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 2):

[755] Voyage de Corneille Le Brune, t. III, p. 502-503, տե՛ս նաև **Թաջիրյան Է.**, նշվ. աշխ., էջ 21:

[756] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 10-13:

[757] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.

[758] Տե՛ս **Դանիել արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԱ, էջ 230, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:

[759] Տե՛ս СНМ-1873.

[760] Տե՛ս ССОК, т. III, стр. 450.

[761] Տե՛ս ССДНЗКИПС-1886.

[762] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 164:

[763] Տե՛ս նույն տեղում, էջ 180:

[764] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99:

[765] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 29.

[766] Տե՛ս նույն տեղում:

[767] Տե՛ս СНМ-1873.

[768] Տե՛ս նույն տեղում:

[769] Տե՛ս ССОК, т. III, стр. 460.

[770] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 104, թ. 33:

[771] Տե՛ս ССДНЗКИПС-1886.

[772] Տե՛ս նույն տեղում:

[773] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 180:

[774] Տե՛ս ССДНЗКИПС-1886.

[775] Նորշեն գյուղից 1 կմ արևմուտք՝ Գյանդխան թաթարական փոքր գյուղից 0,3 կմ հեռավորության վրա՝ հրվանդաձև բլրին տարածված են եղել հայկական հնագույն գերեզմանոցի մնացորդները՝ թվագրված XV-XVI դդ.: Հայկական հին գերեզմանոց է պահպանվել նաև Նորշենից 18 կմ հյուսիս-արևելք՝ Քյալվա թաթարական գյուղի մոտ (տե՛ս Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, էջ 68):

[776] Աղյուսակը կազմված է ըստ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99; Սմբատեանց Ս., նշվ. աշխ., էջ 138-139; СНМ-1859-1864, ч. IV, стр. 27-32; СНМ-1873; ССДНЗКИПС-1886 տվյալների. հաշվարկը մերն է:

XIX դարի երկրորդ կեսին՝ տարբեր տարիների ընթացքում անցկացված պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Շամախիի գավառի (առանց քաղաքի) հայ բնակչության տեղաշարժն ուներ հետևյալ պատկերը. 1863 թ. կազմում էր 8735 (4735 ար., 4000 իգ.)[777], 1873 թ.՝ 9661 (5299 ար., 4362 իգ.)[778], 1886-ին՝ 11865 (6433 ար., 5432 իգ.)[779]: Գավառում ազգաբնակչության թիվը նվազեց 1892 թ. հունիսի 6-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում բռնկված խոլերայի պատճառով: Հիվանդացել էր 5824 և մահացել 2315 մարդ[780]: 1897 թ. գավառում հայ բնակչության թիվը 11768 էր (5995 ար., 5773 իգ.)[781]՝ ամբողջ բնակչության 11,6%-ը:

Այսպիսով՝ ըստ 1863-1897 թթ. պաշտոնական վիճակագրական տվյալների՝ Շամախիի գավառի (ներառյալ քաղաքը և թաթարական Բասխալ գյուղը) հայ բնակչության շարժընթացն ուներ հետևյալ պատկերը[782].

Աղյուսակ № 6

1863[783]		%	1873		%	1886		%	1897		%
ար.	իգ.	9,8	ար.	իգ.	15,2	ար.	իգ.	13,6	ար.	իգ.	11,72
4635	3850		8239	6599		9143	6721		7269	7014	
8485			14838			15864			14283		

[777] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 27-32.
[778] Տե՛ս СНМ-1873, տե՛ս նաև ССОК, т. V..
[779] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[780] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 20, № 148:
[781] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.
[782] Աղյուսակը կազմված է ըստ СНМ-1859-1864, ч. IV, стр. 27-32; СНМ-1873; ССДНЗКИПС-1886; ПВПНРИ-1897, таблица XII, стр. 50, таблица XIII, стр. 53, таблица XIV, стр. 68-69 տվյալների. հաշվարկը մերն է:
[783] Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1863 թ. ցուցակներում Քոխլուճ և Հնդար գյուղերին վերաբերող տվյալներում հայերի և կովկասյան թաթարների սեռային կազմը տրված է միասին՝ աղյուսակում հայ բնակչության սեռերի թիվը տրված է մոտավոր:

Բ. ԳՅՈՔՉԱՅԻ ԳԱՎԱՌ

Գյոքչայի գավառն ընկած էր Կոկխոն (Գյոքչայ) գետակի ձախ ափին՝ դաշտաբերանի և Կովկասյան մեծ լեռնաշղթայի միջև[789]: Հյուսիսից այն սահմանակից էր Ղուբայի, հարավից՝ Ջավաթի և Կուր գետով՝ Շուշիի գավառներին, արևելքից՝ Շամախի, արևմուտքից՝ Նուխի (Շաքի) և Արեշ գավառներին: Գյոքչայի գավառի տարածքը կազմել է 4.156,9 քառ. կմ[790]:

<u>ԳՅՈՔՉԱ (ԳՅՈՔՉԱՅ) ԱՎԱՆ</u>: *Գավառի կենտրոնն էր 1873 թ. հիմնադրված Գյոքչա ավանը, որն աղբյուրներում հիշատակվում է նաև որպես գյուղաքաղաք[791]: Դեռևս XVII դարի 40-ական թվականների սկզբներին երկրամաս այցելած թուրք ուղեգրող Էվլիյա Չելեբին իր «Ուղեգրության» մեջ Շամախիի բարեշեն գյուղերի թվում հիշատակում է նաև «Գյոք-սու» անվամբ մեծ գյուղը, որն ուներ 700 տուն, այգիներ և պարտեզներ[792]: Շամախիից և Նուխիից[793],*

Հայ բնակչությունն այստեղ հիմնականում հաստատվել է մեծ մասամբ զբաղվել է առևտրով, դերձակությամբ, կոշկակարությամբ, գինեգործությամբ ու ամ- դարբնությամբ: 1886 թ. տվյալներով՝ ավանում հայերի թիվը 189 էր (117 ար., 72 իգ.)՝ ամբողջ բնակչության 29,44%-ը[794]: 1890 թ. դրությամբ այդ թիվը պակասել է՝ հասնելով 172-ի[795]: Ավանի հայերի հանգանակությամբ 1893 թ. կառուցվել է մատուռ[796]: 1897 թ. տվյալներով՝ ավանի ազգաբնակչությունը 2201 (1348 ար., 853) էր, որից հայ՝ 296 (181 ար., 115 իգ.)[797]՝ ամբողջ բնակչության 13,4%-ը: Բնակչության թվով թաթարներից՝ 1507 (68,5%) հետո հայերը զբաղեցրել են երկրորդ տեղը[798]:

* * *

1886 թ. ընտանեկան տվյալների համաձայն՝ Գյոքչայի գավառը բաժանված էր 76 գյուղական համայնքների միջև և ուներ 143 բնակավայր, որից հայկական էր 21-ը[799]: Հայկական գյուղերը տեղաբաշխված էին Կոկխոն (Գյոքչայ) գետակից դեպի արևելք՝ մինչև Գարդման գետը:

Այդ գյուղերն էին.

<u>ԱՋԱՅԻՇԵՆ (ՆՈՐՇԵՆ)</u>: *Գավառի մարդաշատ գյուղերից էր: Գտնվում էր Ղալակա և Ուշտալ հայկական գյուղերի միջև. «Ազայիշէն է գիւղ կառուցեալ ի սարադաշտ տեղւոջ»[800]:*

[789] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 190:
[790] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 1-2, տե՛ս նաև СНМ-1859-1864, стр. 2.
[791] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 210:
[792] Տե՛ս Էվլիյա Չելեբի, էջ 91-92:
[793] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 210:
[794] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[795] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 210:
[796] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8865, թ. 16, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1892, փետրվարի 14, № 19:
[797] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.
[798] Տե՛ս նույն տեղում, стр. 52-53.
[799] Տե՛ս ССДНЗКИПС-1886, стр. XI.
[800] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 207:

Գյուղի նոր բնակիչները եկել էին Արցախի Խաչեն, Ջրաբերդ և Վարանդա գավառների գյուղերից[796]: Ս. Կարապետյանը 1984 թ. Ազայիչենում եղած ժամանակ գրում էր, որ տեղում պահպանված ամենահին տապանաքարը թվագրված է 1796 թ., որը կրում էր հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան Մռավաչ Եկանի որդի Դանել/ին/, ՌՄԽԵ (1796) թվի/ն/»[797]: Որ գյուղը հնաբնակ հայերից բացի, հետագա ժամանակներում համալրվել է արցախահայերով, փաստում են վիմագիր արձանագրությունները: Այսպես՝ գյուղի գերեզմանատան արձանագիր տապանաքարերի մեջ մեծ թիվ են կազմել այնպիսիները, որոնց վրա նշված են եղել հանգուցյալների՝ ծագումով արցախցի լինելու փաստերը: Օրինակ. «Այս է տապան ղարապաղցի Հրապետի որդի Յարութիւն, ՌՄՀԴ թ/վին/, (1825)»[798]: 1853 թ. գյուղն ունեցել է 58 ծուխ[799], իսկ 1863-ին ծխերի թիվը հասնում էր 67-ի՝ 484 բնակչով (239 ար., 245 իգ.)[800]: 1865-ին ծխերի թիվը նվազել է՝ հասնելով 55-ի[801]: 1873 թ. գյուղն ունեցել է 71 ծուխ՝ 525 բնակչով (286 ար., 239 իգ.)[802], 1886 թ.՝ 83 ծուխ՝ 712 բնակչով (395 ար., 317 իգ.)[803]: 1890 թ. թեև ծխերի թիվը մնում էր նույնը, սակայն նվազել էր բնակչության թիվը՝ 693 (386 ար., 307 իգ.)[804]:

<u>ԱՂԲՈՒԼԱՂ</u>: Գտնվում էր Ավանաշեն գյուղից հյուսիս-արևելք: Այստեղ հաստատվել էին Արցախի Շոշ, Ավետարանոց, Հաղրութ և Զանգեզուր գավառի Խնձորեսկ գյուղերից եկածները[805]: 1853 թ. գյուղն ունեցել է 21 ծուխ[806]: 1863 թ. ծխերի թիվը նվազել է՝ հասնելով 19-ի՝ 124 բնակչով (65 ար., 59 իգ.)[807]: 1873-ին այդ թիվը դարձյալ նվազել է՝ հասնելով 18-ի՝ 110 բնակչով (62 ար., 48 իգ.)[808], իսկ 1886-ին ծխերի թիվը նորից աճել է՝ հասնելով 23-ի՝ 120 բնակչով (66 ար., 54 իգ.)[809]: 1890 թ. դրությամբ ծխերի և բնակչության թիվը մնացել է անփոփոխ[810]:

<u>ԱՎԱՆԱՇԵՆ</u>: Գավառի հայահոծ գյուղերից էր: Գտնվում էր Գարդման գետի աջ ափին՝ գոգավոր հովտի հարավահայաց լանջին՝ Շամախիից 14 կմ հարավ-արևելք՝ մի գեղատեսիլ վայրում[811]. «Յետ տեսանելոյ զԳարդման գնացի ընդ անձուկ ճանապարհաւ ի գիւղն Աւանաշէն, շինեալ ի բարեբեր հովիտս նահանգին Գարդմանու... շրջապատն թաւ անտառ, օդն և ջուրն առողջարար, և հայեցուածքն վայելուչ»[812],- գրել է Սարգիս արքեպ. Ջալալյանցը: Գյուղի հիմնադրման պատմությանն անդրադարձողները դրա անունը կապում են XVIII դ. սկզբի Արցախի ազնվականների մղած ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներից մեկի՝

796 Տե՛ս նույն տեղում:
797 Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Շամախու Գարդման գավառում, էջ 50, նույնի՝ Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 17:
798 Նույն տեղում:
799 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
800 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.
801 Տե՛ս Դանիել արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 320, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
802 Տե՛ս СНМ-1873.
803 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
804 Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 207:
805 Տե՛ս նույն տեղում, էջ 193, տե՛ս նաև **Լեո**, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, էջ 405:
806 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 101:
807 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 30.
808 Տե՛ս СНМ-1873.
809 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
810 Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 193:
811 Նույն տեղում, էջ 194, տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 17:
812 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 393:

Ավան հարյուրապետի հետ: Սարգիս արքեպ. Ջալալյանցն այդ առթիվ գրում է. «Ընկալաւ սա զանուն ի հիմնադրէ իւրմէ ի մելիք Աւանէ Արցախեցւոյ...»[813]: Գյուղում եղած ժամանակ Մակար եպս. Բարխուտարյանցին ծերունիները պատմել են, որ ավանդությունը գյուղի հիմնադրումը կապում է Ավան հարյուրապետի անվան հետ, որ «եկած է Արցախի Շօշու գիւղից 1799-ին իւր ժողովրդով»[814]: Նկատենք, որ այս մեջբերումներում անհրաժեշտ է կատարել պատմական և ժամանակագրական սրբագրումներ: Նախ հարկ է ասել, որ Ավան հարյուրապետը բնիկ արցախցի չէր: Շիրվանաբնակ հայ զինվորականների հետ նա Արցախ էր անցել այդտեղ սկսված ազգային-ազատագրական պայքարի առաջին օրերից[815]: Լեոյի վկայակոչած պաշտոնական մի տվյալի համաձայն՝ Ավան հարյուրապետը մահացել է 1736 թ.[816], մեկ այլ տեղեկության համաձայն՝ 1734 թ.՝ Աստրախանում[817]: Ուստի վերջինիս կողմից գյուղի հիմնադրման 1799 թվականը ամենայն հավանականությամբ հիմնազուրկ է ու սխալ: Քննությունը թույլ է տալիս ասել, որ գյուղը հիմնադրվել է 1729 թ., քանի որ Ավան հարյուրապետն իր զինակիցների հետ Արցախից ընդմիշտ հեռացել էր 1728 թ.[818]: Այսպիսով՝ անկախ այս եզրակացության հավաստիության աստիճանից, կասկածից դուրս է, որ Ավանաշենում եթե ոչ գյուղի ամբողջ հայ բնակչությունը, ապա նրա մեծամասնությունը հաստատվել էր այստեղ XVIII դ. 20-ական թվականների վերջերին: 1799 թ. գյուղը համալրել են Դիզակի, Վարանդայի գավառներից և Խաչենի Դաշբուլաղ գյուղից եկածները, ինչպես նաև Զանգեզուր գավառից մեծ թվով ընտանիքներ. «... բնակիչք գաղթած են Արցախի Դիզակ, Վարանդա գաւառներից, Խաչենի Դաշբուլաղ գիւղից և Մեծ-Սիւնեաց Զանկազոր գաւառից»[819]: Որ նախքան արցախցիների և Դաշբուլաղ գիւղից և Մեծ-Սիւնեաց Զանկազոր գաւառից»: Որ նախքան արցախցիների և
այունեցիների՝ 1799 թ. վերաբնակեցումը, գյուղը բնակեցված էր հայերով, փաստվում է Շամախիի թեմի առաջնորդ Աբխողոմ վարդապետի (1751-1753 թթ.) օրոք կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցով: Այդ եկեղեցու շինարարական արձանագրության մեջ ասված է. «Յիշատակ է Սուրբ Աստուածածնայ եկեղեցիս, շինեցաւ Աղա Բալի Լազրովենց 1752 թվին Փրկչին»[820]: Սարգիս արքեպ. Ջալալյանցի այցելության ժամանակ գյուղն ունեցել է 80 ծուխ. «...բնակիչք են Հայք, տունք ութսուն»[821]: 1853 թ. այս բնակավայրի ծխերի թիվը 48 էր[822]: 1863-ին ծխերի թիվը հասել է 115-ի՝ 776 բնակչով (417 ար., 359 իգ.)[823]: 1865 թ. այն ունեցել է 120 ծուխ[824]: Հետագա տարիներին նկատվել է բնակչության թվի նվազում: 1873 թ. ծխերի թիվը կրկին նվազել է՝ 117՝ 815 բնակչով (433 ար., 382 իգ.)[825], 1874 թ. կեսերին՝ 113-ի[826]: 1886 թ. ծխերի

813 Նույն տեղում:
814 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 194:
815 Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века (сборник документов), т. II, ч. II, под ред. **Аш. Иоаннисяна**, Ереван, 1967, док. 175, стр. 27, док. 278, стр. 187, տե՛ս նաև Միքայէլ-բեկ Մելիք-Շահնազարեան, Վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին, Մատենադարան, ձեռ. 7429, թ. 26ա, 27բ, տե՛ս նաև **Арутюнян П.**, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., Москва, 1954, стр. 235.
816 Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, էջ 176:
817 Տե՛ս Армяно-русские отношение во второй тридцатилетии XVIII века (сборник документов), т. III, сост. **Восканян В., Галустян Д., Мартиросян В.**, Ереван, 1978, стр. 358.
818 Տե՛ս **Арутюнян П.**, նշվ. աշխ., էջ 238:
819 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 194:
820 Նույն տեղում:
821 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 393:
822 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 101:
823 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
824 Տե՛ս Դանիել արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 262, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
825 Տե՛ս СНМ-1873.
826 Տե՛ս ССОК, т. III, стр. 440.

թիվն աճել է՝ կազմելով 127՝ 985 բնակչով (506 ար., 479 իգ.)[827]: 1890 թ. գյուղն ունեցել է 130 ծուխ՝ 970 բնակչով (500 ար., 470 իգ.)[828]:

<u>ԲՈՉԱՎԱՆԴ (ԲՉԱՎԱՆԴ)</u>: Հիմնված էր Կոկիսոն գետակի ձախ ափին՝ Ղալակայից 8 կմ արևմուտք: Դանիել արքեպ. Շահնազարյացի վկայությամբ՝ «Այս գիւղն շինուած է Գեօդ-չայի գետափանց վերայ, և կառավարվում է նորա ջրովն»[829]: Բնականից բարձր դիրք ունենա-լու շնորհիվ գյուղը նմանվել է բերդավանի»[830]: Նրա նոր բնակիչները եկել էին Արցախի տարբեր գյուղերից[831]: 1853 թ. գյուղն ուներ 56 ծուխ[832]: 1863-ին ծխերի թիվը նվազել է՝ 30՝ 209 բնակչով (111 ար., 98 իգ.)[833]: 1865 թ. այն ուներ 35[834], իսկ 1873-ին՝ 31 ծուխ՝ 194 բնակչով (97 ար., 97 իգ.)[835]: 1886 թ. ծխերի թիվը 37 էր, սակայն նկատվում է բնակչության աճ, որը կազմում էր 206 (111 ար., 95 իգ.)[836]: 1890 թ. ուներ 50 ծուխ՝ 284 բնակչով (150 ար., 134 իգ.)[837]:

<u>ԳԱՆՁԱԿ</u>: Գավառի հինավուրց գյուղերից էր: Գտնվում էր անտառապատ սարերով շրջապատված մի բարձրադիր վայրում: Գյուղը համալրվել է Արցախի Դիզակ և Վարանդա գավառների՝ Հադրութ, Թաղլար, Ճարտար և այլ գյուղերի բնակիչներով[838]: Գանձակը Բաքվի նահանգի հայահոծ գյուղերից էր: Տարբեր տարիների վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ գյուղում նկատվել է բնակչության անընդհատ աճ: 1853 թ. գյուղն ունեցել է 92 ծուխ[839]: 1863 թ. ծխերի թիվը հասել է 115-ի՝ 814 բնակչով (443 ար., 371 իգ.)[840]: Ըստ Թեմի առաջնորդ Դանիել արքեպ. Շահնազարյանցի՝ 1865 թ. օգոստոսին գյուղն ունեցել է 120 ծուխ[841]: 1873 թ. այն ունեցել է 121 ծուխ՝ 863 բնակչով (467 ար., 396 իգ.)[842]: 1886 թ. այդ թիվն արդեն հասել էր 144-ի՝ 1039 բնակչով (561 ար., 478 իգ.)[843]: 1890 թ. Գանձակն ունեցել է 144 ծուխ՝ 1037 բնակչով (563 ար., 474 իգ.)[844]:

---

827 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
828 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 194:
829 Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 320:
830 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 207, տե՛ս նաև Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 440, Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 16:
831 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 209:
832 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 101:
833 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.
834 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 320, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
835 Տե՛ս СНМ-1873.
836 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
837 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 209:
838 Տե՛ս նույն տեղում, էջ 195:
839 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 101:
840 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
841 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 262:
842 Տե՛ս СНМ-1873.
843 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
844 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 195:

<u>ԳԻՐՔ</u>: Գավառի հնաբնակ և հայաշատ գյուղերից էր[845]: Գտնվում էր մի լայնարձակ ձորի հարավահայաց լանջին՝ երեք կողմից շրջապատված անտառապատ սարերով[846]: Գիրքի հնաբնակ լինելը փաստում է գյուղի գերեզմանոցում պահպանված XVII դ. կեսերի տապանա-քարը, որին փորագրված է եղել. «Կազմեցօ տ(ա)պ(ա)նս ի թվին ՌՃԲ հ(այոց) (1653)./ վ(ա)ս(ն) Ա(ստուծո)յ ող(որ)մի աս(ա)ց(է)ք Շահվերդի հոգ(ու)ն»[847]: «Գիրքը, ինչպէս և շատ հայ գիւ-ղեր,- գրում էր «Նոր-դարը»,- բարբարոս հրոսակների աւերմունքներից ազատուելու համար, միշտ քաշուել են դէպի լեռնային տեղերն և անտառների մէջ են ազատուել նրանց ճանկերից և իրենց ազգութիւնը պահպանել մինչև ցայսօր»[848]: Հինավուրց այս գյուղում բնակվել են նաև Արցախի Տող, Գիշի, Թաղավարդ, Թաղլար և այլ գյուղերից եկածները[849]: Գյուղը բաղկա-ցած էր փոքրիկ ձորակներով իրարից բաժանված մի քանի թաղերից: Տարբեր տարիների վի-ճակագրական տվյալները վկայում են, որ գյուղը բոլոր ժամանակներում եղել է բազմա-մարդ[850]: Սարգիս արքեպ. Ջալալյանցի այցելության ժամանակ գյուղն ունեցել է 100 ծուխ. «...բնակիչք են Հայք տունք հարիւր...»[851]: 1853 թ. գյուղն ունեցել է 124 ծուխ[852]: 1863 թ. ծխերի թիվն աճել է՝ հասնելով 157-ի՝ 1036 բնակչով (550 ար., 486 իգ.)[853], 1865-ին՝ 130-ի[854]: 1873 թ. ծխերի թիվը դարձյալ աճել է՝ հասնելով 211-ի՝ 1200 բնակչով (631 ար., 569 իգ.)[855]: 1886 թ. ծխերի թիվը 227 էր, բնակիչներինը՝ 1329 (713 ար., 616 իգ.)[856]: 1889 թ. ունեցել է 240 ծուխ[857]: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի՝ 1890 թ. ծխերի թիվը նվազել է՝ հասնելով 227-ի՝ 1282 բնակչով (689 ար., 593 իգ.)[858]: 1890 թ. մեկ այլ տվյալով գյուղն ուներ մոտ 250 ծուխ[859]:

<u>ԴԱՅՄԱԴԱՂ</u>: Գտնվում էր Գարդման գետի ափամերձ մասում՝ Մեծ Կովկաս լեռնա-շղթայի ստորոտին: Տեղի բնակիչները հաստատվել են Արցախի Մուշկապատ գյուղից[860]: 1853

---

845 Գյուղի անվան ծագումը մեկնաբանվում է երեք կերպ: Առաջինը՝ իբր խիստ կրքոտ և կռվարար լինելու պատճառով՝ Կիրք. «...ուրիշ տեղացիք տեղւոյս բնակչաց կրքոտ և կռուարար բնավորութիւնը տեսնելով, անոնց գիւղը կը կոչեն Կիրք», երկրորդը՝ գյուղի դիրքի պատճառով՝ Գիրկ. «...գիւղատեղը ծոցաւոր լինելուն պատճառաւ կոչեր են Գիրկ, վասն զի բլրակներով շրջապատուած է երեք կողմերէ և առջեւը բաց», երրորդը՝ խիստ գրասեր և ընթերցասեր լինելու պատճառով՝ Գիրք. «...իսկ հպարտ բնակիչները կը կոչեն Գիրք, իբր գրքերով և գրականութեամբ լիքը» (Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 529:
846 Տե՛ս Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 390:
847 Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 21:
848 Յովհ. Պ., Գիրք, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, հոկտեմբերի 25, № 163:
849 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 197:
850 Գիրքը ծննդավայրն էր ազգային հասարակական-քաղաքական և առևտրաարդյունաբերող մի շարք գործիչների: Այստեղ է ծնվել դերասանուհի Եվգինե Սեբարի հայրը՝ Մովսեսը, ով ընտանիքով տեղափոխվել էր Շամախի, այնուհետև՝ Բաքու և զբաղվել նավթարդյունաբերությամբ: Դառնալով խոշոր նավթատեր՝ եղել է «Նոբել եղբ.» բաժնետիրական ընկե-րության 12 անդամներից մեկը (տե՛ս Եվգինե Սեբար, նշվ. աշխ., էջ 11-14): Գիրքում է ծնվել «Հայրենասերների միության» հիմնադիր անդամ Դավիթ Ներսիսյանը (տե՛ս Ջէյրլեան Ս., Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լօս Անճըլըս, 1992, էջ 21) և հայ ազգային ազատագրական շարժման գործիչ Թադևոս Ամիրյանը (Գիժ Թաթոս). տե՛ս Բաքվի 26 կոմիսարների հիշատակին (փաստաթղթեր և նյութեր), Բաքու, 1968, էջ 205):
851 Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 390:
852 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
853 Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.
854 Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ, էջ 350, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
855 Տե՛ս СНМ-1873.
856 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
857 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1889, սեպտեմբերի 23, № 108:
858 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 198:
859 Տե՛ս Յովհ. Պ., Գիրք, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, հոկտեմբերի 25, № 163, նաև նույնի՝ Գիրք, «Նոր-դար», Թիֆլիս, 1891, հունվարի 5, № 2:
860 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 190:

թ. գյուղն ունեցել է 17 ծուխ[861], իսկ 1863 թ. ծխերի թիվը 20 էր՝ 70 բնակչով (38 ար., 32 իգ.)[862]: 1873 թ. ծխերի և բնակչության թիվը նվազել էր՝ 18՝ 65 բնակչով (35 ար., 30 իգ.)[863]: Բնակլիմայական վատ պայմանների հետևանքով 1878 թ. գյուղը տեղափոխվել է գետի աջ ափը, ուր տեղանքն ավելի բարենպաստ էր[864]: 1886-ին ծխերի թիվը գյուղում դարձյալ նվազել է՝ 15՝ 61 բնակչով (33 ար., 28 իգ.)[865]: Զուտ հայաբնակ այս գյուղում հետագա տարիներին բնակություն են հաստատել նաև որոշ թվով կովկասյան թաթարներ, որոնց ծխերի թիվը 1886-ին 5 էր[866]: 1890 թ. դրությամբ ծխերի և բնակչության թիվը գյուղում մնացել է անփոփոխ[867]:

<u>ԹՈՒԲԻՇԵՆ (ԹՈՓԻՇԵՆ)</u>: Գտնվում էր մի բարձրադիր սարահարթի վրա՝ Ավանաշեն և Գանձակ գյուղերի հարևանությամբ[868]: Գյուղը մինչև 1800-ական թվականների սկզբները գտնվել է Ավանաշեն գյուղի հովտի արևմտյան հատվածում, սակայն բնակլիմայական վատ պայմանների հետևանքով հետագայում փոխադրվել և հիմնավորվել է այդտեղ: Վրաց անանուն հեղինակը, որն իր ճանապարհորդությունը սկսել էր Իկոթից 1806 հունվարի 7-ին, նշում է, որ փետրվարի 3-ին հասել էր հայկական Թուբիշեն գյուղ[869]: Մակար եպս. Բարխուտարյանցի այցելության ժամանակ հին գյուղատեղում եկեղեցին դեռևս գտնվել է կիսավեր վիճակում. «Մօտ 80 տարի առաջ Թուբի չէնս հիմնուած է եղել Ավանաշինի հովտի արեւմտեան բերանում, օդի և ջրի վնասակարութեան պատճառաւ փոխադրուած են բնակիչներն այժմեան տեղս»[870]: Գյուղում բնակվել են Արցախի Դիզակ, Վարանդա և Ջրաբերդ գավառներից եկածներ[871]: 1853 թ. գյուղն ունեցել է 33 ծուխ[872]: 1863 թ. գյուղում ծխերի թիվը հասել է 56-ի՝ 441 բնակչով (234 ար., 207 իգ.)[873]: 1865 թ. գյուղն ունեցել 50 ծուխ[874]: 1873-ին ծխերի թիվը 72 էր՝ 542 բնակչով (296 ար., 246 իգ.)[875]: 1874 թ. կեսերին ունեցել է 77 ծուխ[876]: 1886 թ. ունեցել է 85 ծուխ՝ 675 բնակչով (384 ար., 291 իգ.)[877]: 1890 թ. ծխերի և բնակչության թիվը մնացել է անփոփոխ[878]:

<u>ԽՈՇԱՎԱՏ</u>: Գտնվում էր Կոկիսոն գետակի ձախ ափին՝ Ղալակա գյուղից 90 կմ արևմուտք՝ համանուն լեռան լանջին՝ սակավաջուր մի վայրում[879]: 1863 թ. գյուղն ուներ 8 ծուխ՝ 59 բնակչով (33 ար., 26 իգ.)[880], 1873 թ. ծխերի թիվը նույնն էր, սակայն աճել էր բնակ-

[861] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 101:
[862] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 30.
[863] Տե՛ս СНМ-1873.
[864] Տե՛ս **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 575:
[865] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[866] Տե՛ս նույն տեղում:
[867] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 191:
[868] Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 22:
[869] Տե՛ս **Չոբանյան Պ.**, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, էջ 151:
[870] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 194:
[871] Տե՛ս նույն տեղում, էջ 195:
[872] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 101:
[873] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
[874] Տե՛ս **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1870, № ԺԲ, էջ 263, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[875] Տե՛ս СНМ-1873.
[876] Տե՛ս ССОК, т. III, стр. 440.
[877] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[878] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 195:
[879] Տե՛ս **Կարապետյան Ս.**, Խոշավատ, «Երկրապահ», Երևան, 1998, հուլիսի 23-29, № 21:
[880] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.

չությունը՝ հասնելով 72-ի (34 ար., 38 իգ.)[881]: 1886 թ. ծխերի թիվը12 էր, աճել էր նաև բնակ-
չության թիվը՝ հասնելով 84-ի (41 ար., 43 իգ.)[882]: Հետագայում գյուղից որոշ ընտանիքներ
տեղափոխվում են հարևան Բղավանդ գյուղ, որտեղ 1890 թ. ուներին 12 ծուխ[883]:

<u>ԿԱՐՄԱԽԱՆ</u>: Հինավուրց այս գյուղը գտնվում էր Գիրդիման կամ Լահիճ գավառա-
կում՝ Շամախիից 6-7 կմ հարավ-արևելք: Կարմախանի մասին ամենահին հիշատակություն-
ները գյուղի մոտ հայկական հին գերեզմանատան մնացորդներն են: Հնավայրում Մեսրոպ
արքեպ. Սմբատյանցի այցելության ժամանակ խիտ անտառով ծածկված գերեզմանոցում եղել
են «Խօջէյիդ» անվամբ ուխտատեղին և մի քանի հին խաչքարեր: «...այս գերեզմանատան
մէջ,- գրում է Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը,- քանի հին խաչքարերի վրայ կարդացինք Հայ
Թուականքս Ո (600), Չ (700), Պ (800) և Ջ. (900) որով երևում էր, որ վեց եօթն հարիւր տարի
առաջ Հայաբնակ է եղել այս գիւղն ու գաւառն»[884]: Անթվակիր տապանաքարերից մեկն ունե-
ցել է հետևյալ արձանագրությունը. «Սուրբ Գէորգ փոխեցաւ ի Գոտիչայս ի Քրիստոս, ով որ
կարդայ, Աստուած ողորմի»[885]: Իսկ մեկ այլ խաչքարի վրա արձանագրված է եղել միայն թվա-
կանը. «Թվ. ՊԿԸ (1419)»[886]: Թվարկված վիմագրական տեղեկություններից ենթադրվում է, որ
հինավուրց հայաբնակ այս գյուղը պատմության դժնդակ ժամանակներում՝ թերևս XVII-XVIII
դդ., ավերվել է[887]: Այն վերստին հիմնադրել են Իրանից տեղափոխված հայերը: Վերջիններիս
գաղթած բնակավայրի և թվականի վերաբերյալ աղբյուրները հաղորդում են հակասական
տվյալներ: 1865 թ. օգոստոսին գյուղ այցելած Դանիել արքեպ. Շահնազարյանցը գրել է.
«Գեարմախանի է փոքրիկ գիւղ...: Բնակիչք սորա գաղթական են Պարսկաստանից երեսուն և
հինգ տարի առաջ»[888]: Դատելով հաղորդումից՝ բնակիչները գաղթել են 1830 թ.: Ըստ Մեսրոպ
արքեպ. Սմբատյանցի՝ կարմախանցիք գաղթել են Սպահան քաղաքից. «Գերմախան գաղ-
թած են Պարսկաստանից՝ Սպահանի մօտերից, 1820 և 1830 թուերից»[889], իսկ ըստ Մակար եպս.
Բարխուտարյանցի՝ Ղարադաղ գավառի Լառ[890] գյուղից 1832 թ.[891]: Ն. Աբելյանի տեղեկաց-
մամբ Կարմախանում իրանահայերը հաստատվել են XIX դարի 30-ական թթ.[892]: «Մշակին»
Կարմախանից ուղարկված մի թղթակցությունում գյուղը հիշատակվում է նաև Խոյլի անվամբ.
«Գեարմախանի կամ Խօյլի»[893]: Այս փաստը նկատի ունենալով՝ Ս. Կարապետյանը ենթադրում
է, որ գյուղում հաստատվել են Խոյից գաղթածներ[894]: Վերը բերված տեղեկություններից պետք
է եզրակացնել, որ գյուղը վերաբնակեցվել է երեք փուլով՝ 1820, 1830, ապա՝ 1832 թթ. Սպա-
հանից, Լառից, թերևս նաև Խոյից տեղափոխվածներով: Առաջին անգամ գյուղի բնակչության

[881] Տե՛ս СНМ-1873.
[882] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[883] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 209:
[884] **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 188:
[885] **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 193, հմմտ. **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 23-24:
[886] Նույն տեղում:
[887] **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 23:
[888] **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 318:
[889] **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140:
[890] Լառ գյուղը գտնվում է արևմտյան Ղարադաղի կենտրոնական գծի վրա, Լառ գետակի ձախ կողմում ընկած հարթ տարածքում: Գյուղը համարվում է Ղարադաղ գավառի հայաբնակ ամենահին գյուղը: 1853 թ. Լառն ունեցել է 60, իսկ 2003-ին՝ 4 տուն հայ բնակչություն: Լառ գյուղը ներկայումս բնակեցված է թրքախոս իրանցիներով (տե՛ս Ղարադաղ. Հայ ազգաբնակչութիւն, հավաքեցին և կազմեցին **Վ. Ռաքէոսեան, Վ. Մովսէսեան**, Թեհրան, 2004, էջ 3, 28-34):
[891] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 191, տե՛ս նաև «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 10, էջ 1597:
[892] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 12.
[893] «Մշակ», Թիֆլիս, 1902, օգոստոսի 13, № 176:
[894] Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 23:

մասին պաշտոնական տվյալներ ենք գտնում 1863 թ. վիճակագրության մեջ՝ 36 ծուխ՝ 208 բնակչով (97 ար., 111 իգ.)[895]: 1865 թ. օգոստոսին ուներ 35 ծուխ[896]: 1873 թ. թեև ծխերի թիվը 36 էր, սակայն նկատվել է բնակչության նվազում՝ հասնելով 188-ի (102 ար., 86 իգ.)[897]: 1886 թ. այդ թիվն աճել է՝ հասնելով 47-ի՝ 237 բնակչով (129 ար., 108 իգ.)[898]: 1890 թ. գրությամբ գյուղն ունեցել է 48 ծուխ՝ 228 բնակչով (122 ար., 106 իգ.)[899]:

ԿՈՒՋՌԱՆ (ԳԻՐՔ-ԿՈՒՋՌԱՆ): Գավառի հնաբնակ և բարգավաճ գյուղերից էր՝ տարածված մի սարահարթի վրա՝ Գիրք գյուղից 2 կմ արևմուտք: Մեզ հասած մի տեղեկության համաձայն՝ գյուղի գերեզմանոցի տապանաքարերից մեկը թվագրվում էր 1711 թ.: Տապանաքարը, որ պատկանելիս է եղել գյուղի հոգևոր հովվին, կրել է հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան Տ(է)ր Ղազ/արին, թվին ՌՃԿ (1711)»[900]: Այստեղ հաստատվել են Արցախի Խաչեն գավառից եկածներ[901]: 1863 թ. գյուղն ունեցել է 46 ծուխ՝ 252 բնակչով (125 ար., 127 իգ.)[902], 1873 թ.՝ 45՝ 227-ով (121 ար., 106 իգ.)[903], 1886 թ.՝ 46, սակայննկատվել է բնակչության նվազում՝ հասնելով 201-ի (107 ար., 94 իգ.)[904], իսկ 1890 թ.՝ 46 ծուխ՝ 202 բնակչով (108 ար., 94 իգ.)[905]:

ՂԱԼԱԿԱ: Հինավուրց հայկական այս գյուղը գավառի ամենամարդաշատ բնակավայրերից էր: Գտնվում էր Բողդաղ լեռնաշղթայի հարավային բարձրության վրա. «Այս գիւղ է շինուած մի սարադաշտ տեղւոյ...»[906]: Արցախի Խաչեն և Ջրաբերդ գավառների գյուղերից դուրս եկածները վերաբնակվել են այս գյուղում[907]: «Ղալագէն և շրջակայ մօտիկ մի քանի հայ գիւղերը գաղթականներ են Ղարաբաղից տասն ութ դարու վերջերքին և ներկայ տասն և ինն դարու սկզբներում: Խօսում են Ղարաբաղի հայոց լեզուով»[908],- նշում էր «Արձագանքը»: Գյուղի հնաբնակությունը փաստում են նրա հարավային մասում տարածված ընդարձակ գերեզմանատանը խոր հնության կնիք կրող անարձանագիր տապանաքարերը: Որ գյուղը հնուց ի վեր բնակեցված է եղել հայերով, որոնց շարքերը հետագայում համալրել են արցախահայերը, փաստում են վիմագիր արձանագրությունները: Ս. Կարապետյանը 1984 թ. Ղալակայում եղած ժամանակ գրում էր. «Գերեզմանատանը կային վաղ միջնադարից մինչև XIX-XX դարերին վերաբերող տապանաքարեր: Տապանաքարերի արձանագրությունները իրենց գրչական, լեզվաոճական առանձնահատկություններով որոշակիորեն բաժանվում են երկու հիմնական խմբերի: Առաջինները վերաբերում են հնագույն ժամանակներից մինչև 1710-ական թվականների վերջերին, մյուսները՝ դրանից հետո, ընդհուպ մինչև XX դարի սկզբները: Այլ կերպ ասած, տեղացի, բնիկ հայերի և եկվոր արցախցի վերաբնակիչ հայերի տապանաքարերում առ-

[895] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
[896] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 318:
[897] Տե՛ս СНМ-1873.
[898] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[899] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 191:
[900] Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 24:
[901] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 198:
[902] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.
[903] Տե՛ս СНМ-1873.
[904] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[905] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 199:
[906] Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ, էջ 319:
[907] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 207:
[908] «Արձագանք», Թիֆլիս, 1893, հոկտեմբերի 27, № 125:

կա են որոշակի տարբերություններ»[909]: Տապանաքարերից մեկի վրա, որտեղ պատկերված է եղել խաչ, նետ ու աղեղ, արձանագրված էր. «Թվ/ին/ ՋԾԾ (1501)»[910]: Մեկ ուրիշի վրա փորագրված է եղել. «Այս է հանգիստ Սանամին, կատարեցաւ կամքն Արարչին ՌՃԿԷ (1718) թվին, գրեցաւ ձեռամբ Տ/է/ր Յովհաննիսին, ով որ կարդայ մէկ լիայ բերան ողորմի ասէք եղբելոյս»[911]: Գյուղը բոլոր ժամանակներում եղել է մարդաշատ: Դեռևս 1853 թ. ունեցել է 113 ծուխ[912], 1863-ին՝ 179՝ 1161 բնակչով (643 ար., 518 իգ.)[913]: 1865 թ. այն ուներ 170 ծուխ[914], 1873-ին՝ 206՝ 1205 բնակչով (620 ար., 585 իգ.)[915]: 1885-ին բնակչության թիվը 1474 էր[916], իսկ 1886 թ. ծխերի թիվը հասնում է 298-ի՝ 1649 բնակչով (894 ար., 755 իգ.)[917]: 1889 թ. Ղալական ուներ 300[918], 1890-ին՝ 298 ծուխ, ընդ որում՝ նկատվել է բնակչության թվի նվազում՝ հասնելով 1593-ի (864 ար., 729 իգ.)[919]: 1893 թ. գյուղն ուներ 300 ծուխ[920]:

Ղալական մեծապես տուժել է 1893 թ. հոկտեմբերի 8-ին՝ ժամը 11-ին, բռնկված հրդեհից, որի հետևանքով գյուղի արևմտյան ծայրի Պիծ անունը կրող թաղում այրվել է 170 տուն[921]: «Ամսոյս 8-ին,- գրում էր «Արձագանքը»,- սաստիկ քամիի պատճառաւ մի թոնրից կրակ է բռնում և այրում բոլոր Ղալագէն, նոյն թւում եկեղեցին և ուսումնարանը. տներն իրանց շինութիւնների և կահ կարասիքներով մոխիր դարձան, եկեղեցին իւր մասունքներով, ուսումնարանը իւր նստարաններով և միւս բոլոր դասարանագգեստներով և գրեանքներով. Այրվողների կան պարագաններով»[922]: Հրդեհին զոհ են գնացել 30 հոգի՝ տարեց և մանուկ: Այրվողների թվում գերակշռել են կանայք, աղջիկներն ու երեխաները[923]: Դրանից հետո 296 ծխից մնացել էր 114-ը՝ 600 բնակչով[924]:

ՆՈՐՇԵՆ (ՂՈՒԴԻՇԵՆ, ԱՇՂԲԱՅՐԱՄ): Գյուղը սկզբում գտնվում էր Բողդաղ լեռնաշղթայի արևմտահայաց լանջին[925]: Դանիել արքեպ. Շահնազարյանցը գյուղի վերաբերյալ գրել է. «Աշըղբայրամ նորշէնն է... և պարապումէ վարուցանիւ: Ունի լաւ սառնորակ աղբիւր ջրոյ: Օդն տեղւոյն է առողջարար»[926]: 1895 թ. ապրիլի 10-ին տեղի ունեցած ավերիչ սողանքի հետևանքով գյուղի ներքին թաղի բոլոր տներն ավերվել են, իսկ բնակիչները հարկադրված փոխադրվել են Վերին թաղում գտնվող 35 տները: Սակայն հաջորդ օրը հողը շարունակել է հոսել, և քանդվել են նաև Վերին թաղի տները, որի հետևանքով կործանվել են գյուղի բոլոր

[909] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Շամախու Գարդման գավառում, էջ 47:
[910] Նույն տեղում, էջ 48, տե՛ս նաև նույնի՝ Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 25:
[911] Նույն տեղում:
[912] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 101:
[913] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.
[914] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 319, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[915] Տե՛ս СНМ-1873.
[916] Տե՛ս Արասխանեանց Ա., Ղալագէ գիւղը, «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 10, էջ 1598:
[917] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[918] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1889, սեպտեմբերի 23, № 108:
[919] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 209:
[920] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1893, հոկտեմբերի 24, № 124:
[921] Արասխանեանց Ա., Ղալագէ գիւղը, «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 10, էջ 1597: Հրդեհի պատճառով եկեղեցում այրվել է նաև գրիչ Խունկի 1483 թ. ընդօրինակած հայտնի Կարմիր Ավետարանը, որը մեծ հռչակ է վայելել Շամախու թեմում (տե՛ս նույն տեղում):
[922] «Արձագանք», Թիֆլիս, 1893, հոկտեմբերի 24, № 124:
[923] Տե՛ս Քամալեանց Ս., «Արձագանքի» թղթակիցը Ղալագէում, «Արձագանք», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 3, № 141:
[924] Տե՛ս Արասխանեանց Ա., Ղալագէ գիւղը, «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 10, էջ 1597:
[925] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 199:
[926] Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ, էջ 321

70 տները[927]: Բնակիչները գյուղը վերահաստատել են Գիրք գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ նույն ուղղությամբ թեքված անտառածածկ լեռնալանջին: Հայերը գյուղն անվանել են նաև Ղուդիշեն, կովկասյան թաթարները՝ Աշըղ-Բայրամ[928]: Հայահոծ այս գյուղը 1853 թ-ին ունեցել է 52 ծուխ[929]: 1863 թ. այդ թիվը հասել է 96-ի՝ 605 բնակչով (319 ար., 286 իգ.)[930]: 1865 թ. ծխերի թիվը նվազել է՝ 70[931], իսկ 1873 թ. աճել է և ունեցել 107 ծուխ՝ 692 բնակչով (377 ար., 315 իգ.)[932]: 1886 թ. արդեն 132 ծուխ էր՝ 834 բնակչով (460 ար., 374 իգ.)[933]: 1890 թ. թեև ծխերի թիվը մնացել է անփոփոխ, սակայն նկատվել է բնակչության նվազում՝ հասնելով 828-ի (456 ար., 372 իգ.)[934]:

ՇՈՒՔՈՒՐՉԻ: Գտնվում էր Բողդաղի հարավահայաց լանջին՝ Դավաբաթան ձորի արևելյան կողմում՝ անտառներով շրջապատված մի գեղատեսիլ վայրում: Հարակից լինելով Նորշեն-Աշըղբայրամ գյուղին՝ Շուքուրչին սկզբում համարվել է նրա թաղերից մեկը: Ինչպես նշում է Դանիել արքեպ. Շահնազարյանցը. «...դիմեցաք ի մի թաղն նորա (Նորշեն-Աշըղբայրամ գյուղի - Գ. Ս.) Շուքուրչու»[935]: Հիշյալ գյուղը նշված չէ 1853 թ. կազմված Շամախիի թեմի բնակավայրերի ցանկում[936]: Այն չի հիշատակվում նաև 1863 թ. ընտանեկան ցուցակներում, ինչը ենթադրել է տալիս, որ գյուղը Նորշեն-Աշըղբայրամից առանձնացել է 1865 թ. հետո: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի՝ տեղի բնակչությունը համալրվել է Արցախի Խաչեն գավառի Բալուջա, Դաշբուլաղ, Խանձք և Ղշլաղ գյուղերից եկածներով[937]: Ն. Աբելյանն իր ուսումնասիրությունում Շուքուրչին անվանում է նաև Նորշեն[938]: 1865 թ. գյուղն ունեցել է 15 ծուխ[939]: Այս բնակավայրը նշված չէ 1873 թ. ընտանեկան ցուցակներում: 1874 թ. կեսերին Շուքուրչու ծխերի թիվը աճել է՝ հասնելով 25-ի[940]: Գյուղը նշված չէ նաև 1886 թ. ընտանեկան ցուցակներում: 1890 թ. այն ունեցել է 37 ծուխ՝ 215 բնակչով (113 ար., 102 իգ.)[941]:

ՌՈՒՇԱՆ (ՌՈՒՇԱՆԱՇԵՆ): Գավառի հնաբնակ գյուղերից էր՝ ընկած Բողդաղի հյուսիսային կողմի գոգավոր սարահարթի վրա. «Ռուշանաշէնն շինուած է մի տափարակավայր տեղւոջ չորս կողմով անտառով պատած»[942]: Գյուղի բնակչությունը համալրվել է Արցախի Խաչեն և Վարանդա գավառների Խանձք և Գիշի գյուղերից եկածներով[943]: 1853 թ. գյուղն ունեցել է 44 ծուխ[944], 1863-ին՝ 50՝ 398 բնակչով (215 ար., 183 իգ.)[945]: Դանիել արքեպ. Շահնազարյանցի վկայությամբ՝ 1865 թ-ին Ռուշանը բազմամարդ էր և ուներ 100-ից ավելի ծուխ[946]: Նույն թվականին ծխերի թվի վերաբերյալ առավել ստույգ տեղեկություն է հաղորդում արխիվային մի վավերագիր՝ 105[947]: 1873 թ. գյուղն ունեցել է 64 ծուխ՝ 388 բնակչով (211 ար., 177 իգ.)[948], 1874 թ.՝ 25[949], 1886 թ.՝ 62՝ 424 բնակչով (227 ար., 197 իգ.)[950], 1890 թ. թեև ծխերի թիվը մնացել էր անփոփոխ, սակայն կատարվել է բնակչության թվի աննշան նվազում՝ 419 (224 ար., 195 իգ.)[951]:

ՎԱՆՔ (ՎԱՆՔԱՇԵՆ): Գավառի հնաբնակ և մարդաշատ գյուղերից էր: Գտնվում էր Կոկխոն գետակի ձախ կողմի բարձրության վրա՝ ձորագլխին[952]. «Վանքաշէն գիւղն իրան չորս կողմն ունենալով անտառներ, և ինքն լինելով շինուած մի բլրակի վերայ՝ ունի շատ առողջարար օդ, ունի լաւ ջուր, հողն տեղւոյն բերրի»[953]: Մակար եպս. Բարխուտարյանցի այցելության ժամանակ գյուղի հին գերեզմանոցում պահպանվել էին 1366, 1399, 1403, 1410 թթ. արձանագրությամբ խաչքարեր[954]: Գյուղից 0,5 կմ հյուսիս-արևմուտք գտնվել են հին Վանքաշեն ավերակ գյուղատեղին և հիմնավեր վանքը. «Գիւղիս արևմտահիւսիս կողմում, գետակի ձախ ափի ղառիվերի վերայ կայ մի աւերակ վանքատեղի, անունն անյայտ: Բաւական նեղ և դժուարատար է կածանն, որ շարունակ բարձրանում է դէպի սրբավայրն: Կալաչափ հարթակի վերայ շինուած է եղել վանքս, որի անուամբ Վանքաշէն կոչուած է և գիւղս, բայց այժմ կործանուած է հիմնայատակ»[955]: Գյուղի շրջակայքում գտնվել են նաև Շաքլու և Քոռ աղբյուր գյուղատեղերի ավերակներն ու Կարմիր քերծ հնավայրը[956]: Վանք գյուղը համարվել է Շամախիի և Արցախի թեմերի սահմանագլուխը: Գյուղի բնակչությունը ավելացել է Արցախի Վարանդա գավառի Աշան, Նինկի, Ծարտար, Խաչեն գավառի Վանք գյուղերից և Ջրաբերդ գավառից եկածներով: Ընդ որում, Վանք գյուղից եկածները եղել են Առանշահիկ հնագույն Խաչենական տոհմից սերված Հասան-Ջալալյանների տոհմակիցները[957]: Սարգիս արքեպ. Ջալալյանցի վկայությամբ՝ գյուղը զուտ հայաբնակ էր և ուներ 60 տուն. «Բնակիչք են Հայք, ...տունք վաթսուն»[958]: 1853 թ. այն ունեցել է 93 ծուխ[959], իսկ 1863-ին ծխերի թիվը կտրուկ ավելացել է՝ հասնելով 129-ի՝ 823 բնակչով (459 ար., 364 իգ.)[960]: 1865-ին ծխերի թիվը նվազել է՝ 110[961]: 1873 թ. ունեցել է 171 ծուխ՝ 938 բնակչով (510 ար., 428 իգ.)[962]: 1886-ին ծխերի թիվն

[927] Տե՛ս Կարապետյան Ս., Նորշեն, «Երկրապահ», Երևան, 1998, սեպտեմբերի 10-16, № 28:
[928] Տե՛ս նույն տեղում:
[929] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
[930] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.
[931] Տե՛ս Դանիել արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ, էջ 321, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[932] Տե՛ս СНМ-1873.
[933] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[934] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 199:
[935] Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ, էջ 321:
[936] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99-104:
[937] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 199:
[938] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 51.
[939] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 321, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[940] Տե՛ս ССОК, т. III, стр. 428.
[941] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 199:
[942] Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 318:
[943] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 201:
[944] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
[945] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.

[946] Տե՛ս Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 318:
[947] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[948] Տե՛ս СНМ-1873.
[949] Տե՛ս ССОК, т. III, стр. 436.
[950] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[951] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 201:
[952] Տե՛ս Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 29, նույնի՝ Վանքաշենը և հուշարձանները, էջ 106:
[953] Դանիէլ արքեպ., նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ, էջ 318:
[954] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 204, տե՛ս նաև Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 31-32:
[955] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 203:
[956] Տե՛ս նույն տեղում, էջ 204-205:
[957] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 203:
[958] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 389:
[959] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
[960] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.
[961] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[962] Տե՛ս СНМ-1873.

արդեն հասնում էր 182-ի՝ 1039 բնակչով (545 ար., 494 իգ.)[963]: 1890 թ. նկատվում է բնակչության թվի աննշան նվազում՝ 182 ծուխ՝ 1033 բնակչով (541 ար., 492 իգ.)[964]:

ՈՒՇՏԱԼ: Գավառի հնաբնակ գյուղերից էր: Գտնվում էր Դավա-բաթան գետակի աջ ափի մի բարձրադիր սարալանջի հարավ-արևելյան մասում՝ Ղալակա գյուղից 2 կմ արևելք՝ Ազայիշեն (Նորշեն) գյուղից դեպի արևելք՝ 3 կմ հեռավորության վրա[965]: Մեզ հասած մի տեղեկության համաձայն՝ գյուղի հարավային ծայրում տարածված հին գերեզմանոցի տապանաքարերից մեկի վրա արձանագրված էր. «Այս է դապան Գուլնազարին, որ մահօքն փոխեցաւ առ Ա/ստուա/ծ, ՌՃԿԶ (1717) թվին Ա/ստուած/ ողորմի ասէք, ամէն»[966]: 1853 թ. գյուղն ուներ 52 ծուխ[967], 1863 թ. 86՝ 607 բնակչով (342 ար. 265 իգ.)[968]: 1865 թ. ծխերի թիվը նվազել է՝ հասնելով 60-ի[969], իսկ 1873-ին հասնելով 99-ի՝ 812 բնակչով (442 ար., 370 իգ.)[970]: 1886 թ. նկատվել է մեծ աճ, ծխերի թիվը հասել է 139-ի՝ 1086 բնակչով (585 ար., 501 իգ.)[971]: 1890 թ. թեև ծխերի թիվը մնացել է անփոփոխ՝ 139, սակայն նվազել է բնակչությունը՝ հասնելով 1073-ի (576 ար., 497 իգ.)[972]:

ՓԱԹԱԿԼՈՒ (ՓԵԹԱԿ): Ընկած էր մի խոր ձորում: Պատմությունն ավանդում է, որ Փաթակլուն հիմնադրել են Շամախիի Մուստաֆա խանի հետ 1796 թ. հուլիսին Ցիթ քաղաքից հեռացող հայերը[973]: Տեղանքն իր բնակլիմայական պայմաններով կրկնում էր Ցիթ քաղաքը, ուստի Մուստաֆա խանը գյուղը նախապես անվանել է Ցիթդաղ և տանուտեր է կարգել իր անձնական բժիշկ և խորհրդական Գաբրիել[974] բեկ Թովմասյանին[975]: Հետագայում գյուղում հաստատվել են Արցախի Խաչեն և Վարանդա գավառներից գաղթածները[976]: 1853 թ. գյուղն ունեցել է 18 ծուխ[977]: 1863 թ. այնտեղ ծխերի թիվը հասել է 20-ի՝ 214 բնակչով (116 ար., 98 իգ.)[978]: 1873 թ. Փաթակլուն ունեցել է 29 ծուխ՝ 249 բնակչով (131 ար., 118 իգ.)[979]: 1874 թ. կեսերին ծխերի թիվը նվազել է՝ հասնելով 28-ի[980], 1886 թ. աճել է՝ հասնելով 46-ի՝ 313 բնակչով (172 ար., 141 իգ.)[981]: 1890 թ. ծխերի և բնակչության թիվը մնացել է նույնը[982]:

---

[963] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[964] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 203:
[965] Տե՛ս **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ., էջ 320:
[966] **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Շամախու Գարդման գավառում, էջ 49:
[967] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
[968] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 32.
[969] Տե՛ս **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Բ, էջ 320:
[970] Տե՛ս СНМ-1873.
[971] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[972] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 207:
[973] Տե՛ս **Фитуни А.**, նշվ. աշխ., стр. 126.
[974] Գյուղը շրջապատող կիրճը կրել է Գաբրիելի անունը, որը, տեղացիների տառադարձմամբ անվանվել է նաև «Գյաբունց-Կյապունց յամաջ» (նույն տեղում, էջ 127):
[975] Տե՛ս նույն տեղում:
[976] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 197:
[977] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
[978] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
[979] Տե՛ս СНМ-1873.
[980] Տե՛ս ССОК, т. III, стр. 426.
[981] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[982] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 197:

ՓՈՔՐ ԳԱՆՁԱԿ: Գտնվում էր Ռուշանաշեն գյուղի հարևանությամբ[983]: 1863 թ. գյուղն ուներ 22 ծուխ՝ 150 բնակչով (84 ար., 66 իգ.)[984], 1873 թ.՝ 26՝ 159 բնակչով (82 ար., 77 իգ.)[985]: 1886 թ. թեև ծխերի թիվն աճել էր՝ հասնելով 29-ի, սակայն նվազել էր բնակչության թիվը՝ 147 (85 ար., 62 իգ.) [986]: 1890 թ. ծխերի թիվը մնում էր անփոփոխ՝ 146 բնակչով[987]:

ՔԱԼԲԱՆԴ: Գյուղը տարածված էր Բոզդաղ լեռնաշղթայի հարավահայաց լանջին. «Այս գիւղն է Հայոց. ունի շատ վարելահողեր դաշտումն, որ տարածված է հարաւային կող-մումն այս գիւղի»,- գրել է Դանիել արքեպ. Շահնազարյանցը[988]: Քալբանդը բոլոր ժամանակներում եղել է գավառի հայահոծ գյուղերից և ունեցել է ավելի քան 1411 դես. մշակված այգիներ[989]: 1853 թ. գյուղն ուներ 42 ծուխ[990]: 1863 թ. այդ թիվը հասնում էր 76-ի՝ 498 բնակչով (273 ար., 225 իգ.)[991], 1865 թ.՝ մոտ 100-ի[992]: 1873-ին նկատվում է բնակչության թվի նվազում, ծխերի թիվը հասնում է 89-ի՝ 455 բնակչով (228 ար., 227 իգ.)[993]: 1886 թ. ծխերի թիվն արդեն հասել էր 104-ի՝ 722 բնակչով (381 ար., 341 իգ.)[994]: 1890 թ. ծխերի և բնակչության թիվը մնում էր անփոփոխ[995]:

ՔԵՇԽՈՒՐԴ[996]: Գավառի հայաշատ գյուղերից մեկն էր՝ ընկած խոր ձորի մեջ: Գյուղում հաստատվել են Արցախի Դիզակ և Վարանդա գավառների Հադրութ, Տող, Թաղլար, Ծարտար, Ավետարանոց և Շոշ գյուղերից եկածները[997]: 1853 թ. գյուղն ունեցել է 68 ծուխ[998]: 1863-ին այնտեղ ծխերի թիվը հասել է 108-ի՝ 769 բնակչով (399 ար., 370 իգ.)[999]: Այն հանգամանքը, որ գյուղը եղել է մարդաշատ, վկայում է 1865 թ. սեպտեմբերի սկզբին այդտեղ այցելած Դանիել արքեպ. Շահնազարյանցը. «...ինձ ընդառաջ ելին հոգևորական և ժողովրդեան բազմութիւն...»[1000]: 1873 թ. Քեշխուրդն ունեցել է 132 ծուխ՝ 868 բնակչով (466 ար., 402 իգ.)[1001]: 1886 թ. այդ թիվն արդեն հասել էր 170-ի՝ 927 բնակչով (485 ար., 442 իգ.)[1002]: 1890 թ. թեև ծխերի թիվը մնացել էր նույնը՝ 170, սակայն նվազել էր բնակչությունը՝ հասնելով 917-ի (478 ար., 439 իգ.)[1003]:

---

[983] Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանք, Հայկական պատմա-ճարտարապետական հուշարձանները (քարտեզ), Երևան, 1991:
[984] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
[985] Տե՛ս СНМ-1873.
[986] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[987] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 139:
[988] Տե՛ս **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ., էջ 350:
[989] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1920, մարտի 30, № 66:
[990] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
[991] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
[992] Տե՛ս **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ., էջ 351, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, թ. 3:
[993] Տե՛ս СНМ-1873.
[994] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[995] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 197:
[996] Ի դեպ, Դանիել արքեպ. Շահնազարյանցի ուղեգրական գործի «Արարատ» ամսագրի հրատարակման մեջ Քեշխուրդ տեղանունը նշված է «Քէջեարտ» (տե՛ս «Արարատ», 1871, № Գ, էջ 351) ձևով, իսկ Հ. Քյուրտյանի հրատարակած ձեռագրում՝ «Քեշխուրտ» ձևով (տե՛ս **Քիւրտեան Յ.**, Շահեկան վիճակագրական ուղեգրութիւն մը Շամախիի հայոց մասին, «Հասկ», Անթիլիաս (Պէյրութ), 1961, Լ տարի, № 1, էջ 23), որն առավել ստույգ է:
[997] Տե՛ս նույն տեղում, էջ 196:
[998] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 102:
[999] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 31.
[1000] **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ., էջ 351:
[1001] Տե՛ս СНМ-1873.
[1002] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[1003] Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 196:

Այսպիսով՝ ըստ 1853-1890 թթ. տվյալների՝ Գյոքչայի գավառի հայկական գյուղերի բնակչության թվի շարժընթացը և փոփոխությունները ունեն հետևյալ պատկերը[1004].

Աղյուսակ №7

Բնակավայր	1853 Ծուխ	1861 Ծուխ	1863 Ծուխ	1863 Բնակիչ	1873 Ծուխ	1873 Բնակիչ	1886 Ծուխ	1886 Բնակիչ	1890 Ծուխ	1890 Բնակիչ
Ազայիշեն (Նորշեն)	58	55	67	484	71	525	83	712	83	693
Աղբուլաղ	21	16	19	124	18	110	23	120	23	120
Ավանաշեն (Ղոշաբենդ)	48	100	115	776	117	815	127	985	130	970
Բզավանդ	56	35	30	209	31	194	37	206	37	284
Գանձակ	92	99	115	814	121	863	144	1039	145	1037
Գիլլի	124	130	157	1036	211	1200	227	1329	227	1282
Դայմադաղ	17	11	20	70	18	65	15	61	15	61
Թուրիշեն	33	57	56	441	72	542	85	675	80	85
Խոշավատ	-	-	8	59	8	72	12	84	-	-
Կարմախան	-	36	36	208	36	188	47	237	47	228
Կուզռան (Գիլլի-Կուզռան)	-	21	46	252	45	227	46	201	46	202
Ղալակա	113	111	179	1161	206	1205	298	1649	298	1593
Նորշեն (Ղուլիշեն, Աշըքայրամ)	52	70	96	605	107	692	132	834	132	828
Շուրուրջի	-	17	-	-	-	-	-	-	37	215
Ռուշանաշեն	44	105	50	398	64	388	62	424	62	419
Վանք	-	140	159	823	171	938	182	1039	182	1033
Ոէշտալ	52	60	86	607	99	812	139	1086	139	1073
Փաթանլու	18	27	20	214	29	249	46	313	46	313
Փոքր Գանձակ	-	18	22	150	26	159	29	147	29	146
Քալբանդ	42	180	76	498	89	455	104	722	104	104
Քեշխուրդ	68	115	108	769	132	868	170	927	170	917
Ընդամենը	838	1403	1465	9698	1671	10567	2008	12790	14674	11657

XIX դարի երկրորդ կեսի զանազան տարիների ընթացքում Գյոքչա գավառի (առանց ավանի) հայ բնակչության թիվը եղել է խիստ փոփոխական: 1863 թ. կազմում էր 9698 (5202 ար., 4496 իգ.)[1005], 1873 թ.՝ 10.567 (5631 ար., 4936 իգ.)[1006], 1886 թ.՝ 12790 (6880 ար., 5910 իգ.)[1007]: 1892 թ. հունիսի 6-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում խոլերայի հետևանքով գավառում հիվանդացել էր 2456 և մահացել 1356 մարդ[1008]: 1897 թ. գավառի ազգաբնակչությունը 115504 էր (62785 ար., 52.719 իգ.), որից հայ 12698 (6559 ար., 6139 իգ.)[1009]՝ կազմելով ամբողջ բնակչության 11%-ը:

Այսպիսով՝ ըստ 1863-1897 թթ. պաշտոնական վիճակագրական տվյալների՝ Գյոքչայի գավառի (ներառյալ ավանը) հայ բնակչության շարժընթացն ուներ հետևյալ պատկերը[1010].

Աղյուսակ № 8

1863		%	1873		%	1886		%	1897		%
ար.	իգ.	16,2	ար.	իգ.	17,52	ար.	իգ.	16,93	ար.	իգ.	11,04
5202	4496		5631	4936		6997	5982		6740	6254	
9698			10567			12979			12994		

[1004] Աղյուսակը կազմված է ըստ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99-104, Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 138-139, СНМ-1859-1864, ч. IV, стр. 78-79; СНМ-1873; ССДНЗКИПС-1886 տվյալների. հաշվարկը մերն է:

[1005] Տե՛ս СНМ-1859-1864, ч. IV, стр. 27-32.

[1006] Տե՛ս СНМ-1873, տե՛ս նաև ССОКБГ-1873.

[1007] Տե՛ս ССДНЗКИПС-1886.

[1008] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 20, № 148:

[1009] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.

[1010] Աղյուսակը կազմված է ըստ СНМ-1859-1864, ч. IV, стр. 27-32; СНМ-1873; ССДНЗКИПС-1886; ПВПНРИ-1897, таблица XII, стр. 50, таблица XIII, стр. 53, таблица XIV, стр. 68-69 տվյալների. հաշվարկը մերն է:

Գ. ԲԱՔՎԻ ԳԱՎԱՌ

Բաքվի գավառը գտնվում էր համանուն նահանգի արևելյան մասում՝ Կասպից ծովի արևմտյան ափին՝ հրվանդանաձև, շուրջ 60 կմ երկարությամբ ծովի մեջ խորացած Ապշերոնյան թերակղզում: Հյուսիս-արևմուտքից սահմանակից էր Ղուբայի, հարավից փոքր ելուստով՝ Ջավաթի և արևմուտքից՝ Շամախիի գավառներին: Իր տարածությամբ Բաքվի գավառը (3.457,1 քառ. կմ)[1011] զիջում էր նահանգի մյուս գավառներին: Գավառի կազմի մեջ էին մտնում նաև Կասպից ծովի ափամերձ, երեք խմբերի միջև բաժանված բնական և արհեստական կղզիները, որոնց ընդհանուր մակերեսը կազմում էր 34,8 քառ. կմ[1012]: Ապշերոնյան թերակղզին շրջապատող ամենամեծ կղզիներն են՝ Սվիտոյը, Ժիլոյը, Նարգենը, Գյուրգյանը, Արտեմը, Վուլֆը և այլն: Բաքվի կամ Սվինուի կղզիների խմբում, որը տարածված էր Բաքվի նեղուցից հարավ՝ մինչև Կուրի գետաբերանը, ընդգրկված էին Դուվանին, Բուլլան, Սվինոյը, Հալածը և այլն, Կըրլաղաջի խմբում՝ համանուն նեղուցում՝ Սառան, Այրված սալը, Կուրի քարը և այլն[1013]:

Թերակղզում գտնվող նավթի գլխավոր աղբյուրները վաղնջական ժամանակներից հռչակված էին իրենց անշեջ կրակներով: Աշխարհի զանազան կողմերից այստեղ էին գալիս բազմաթիվ ուխտավորներ՝ սրբազան կրակը երկրպագելու[1014]:

Ապշերոնյան թերակղզում պեղված հնադարյան դամբարանները վկայում են Կովկասյան այս տարածքի՝ հնուց ի վեր բնակեցված լինելու հանգամանքի մասին[1015]: Հայերն այստեղ բնակություն են հաստատել անվաղն վաղ միջնադարից և ունեցել են իրենց պաշտամունքային օջախները, բայց պահպանված առավել հին պատմական հուշարձանները վերաբերում են միայն XII-XV դդ.[1016]: Այսպես՝ Բաքու քաղաքից 30 կմ հեռավորության վրա՝ Ապշերոնյան թերակղզու հյուսիսային եզրին գտնվող[1017] երբեմնի հայկական, սակայն հետագայում մահմեդականացած Բուզովնա գյուղում բնակվող հայերի և նրանց սրբատեղիների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում 1842 թ. օգոստոսին այստեղ այցելած Ի. Բերեզինը. այդ ժամանակ գյուղն ունեցել է 685 բնակիչ և ընդամենը երեք հայ ընտանիք[1018]: Ի. Բերեզինը հիշատակում է Սբ. Հովհաննեսի և Անդրեասի դամբարանի և դրա վրա եղած հայատառ արձանագրությունների...

[1011] Տե՛ս **Ягодынский П.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, т. I, стр. 473-474, տե՛ս նաև СНМ-1859-1864, стр. 2. Նկատենք, որ այդ թիվը հաստատուն չի եղել: Քաղաքի սահմանների աստիճանաբար ընդլայնվելու հետ մեկտեղ այն համախակի փոփոխվել է: Ինչպես օրինակ՝ մինչև 1843 թ. կազմել է 63,7, 1843-1878 թթ.՝ 110,1, 1878-1900 թթ.՝ 361,8, կմ² (տե՛ս **Фатуллаев Ш.**, նշվ. աշխ., стр. 28).

[1012] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 2.

[1013] Տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 5-6.

[1014] Տե՛ս Хождение за три моря Афанасия Никитина, изд. подг. **Я. Луре** и **Л. Семенов**, Л-д, 1986, стр. 45.

[1015] Տե՛ս **Рустамов Д., Мурадов Ф.**, Археологические исследования в Гобустане в 1978 г. Археологические и этнографические изыскания в Азербайджане (1978), Баку, 1982, стр. 5-8.

[1016] Մանրամասն տե՛ս **Տէր-Յովհաննիսեանց Եր.**, Ս. Եղիայի վանքը Բուզովնում, «Արարատ», 1902, № Ե-Զ, էջ 481-487:

[1017] Տե՛ս ГССРИ, т. I, стр. 330.

[1018] Տե՛ս **Березин И.**, նշվ. աշխ., стр. 270, приложение VI.

գրությունների մասին: Դամբարանի կողքին եղել է քառանկյուն, կլոր թաղակապ ծածկով ոչ
մեծ մատուռ, որը տեղի հայերի ներկայացմամբ սուրբ ճգնավորների համար ծառայել է որպես
վանական խուց: Ի. Բերեզինի վկայությամբ՝ մատուռի մուտքին նշմարվել են հայերեն տա-
ռերով արձանագրության մնացորդներ[1019]: Համաձայն մատուռի կողքի եզրապատի արձանա-
գրության՝ շինությունը 1480-1481 թթ. կառուցել է հայ ոմն Թանվարը՝ որդի Թուման-Շանի,
որդի Թաքսիրի՝ որդի Ինթայի[1020]: Ըստ Բերեզինի՝ Բուզովնայի հայերն այստեղ են կատարել
իրենց պաշտամունքային ծեսը[1021]:

Ի. Բերեզինի նկարագրությունը բազմաթիվ առումներով համապատասխանում է ավելի
ուշ շրջանում հնավայրում եղած այլ հեղինակների թողած տեղեկություններին: Այդ առումով
հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում XX դ. սկզբին «Արարատ» ամսագրում հրատա-
րակված «Ս. Եղիայի վանքը Բուզովնում» հոդվածը: Հոդվածագիր Եր. Տեր-Հովհաննիսյանը,
լինելով Բուզովնայում, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայերին վերաբերող վի-
մագրական նյութի պատառիկների մասին: Ըստ նրա՝ «Բուզովնան, որ մի ժամանակ հայի գիւղ
է եղել[1022], ներկայումս ծառայում է Բագուեցւոց համար իբրև ամարանոց...»[1023]: Բուզովնայում
նշանավոր ուխտատեղիներից էր Սբ. Եղիա Մարգարեի մատուռը, որի հետ էին կապված նաև
Անդրեաս և Անանիա քարոզիչների անունները[1024]: 1874 թ. «Տոմար ընտանեկան» օրացույցի
մի տեղեկության համաձայն՝ քարոզիչների գերեզմանների վրա մատուռը վերակառուցվել է
1862-ական թվականների վերջերին. «Քաղաքիս մօտ 30 վերստ հեռաւորութեամբ Ապշերոնի
թերակղզիի վրայ գտնւում են հայոց սրբոցն Անդրէի և Եղիայի գերեզմանները, որոնց վրայ
վերջի ժամանակները մատուռ շինուեցաւ»[1025]: Մատուռն ունեցել է գեղահարմար դիրք: Եր.
Տեր-Հովհաննիսյանցի նկարագրմամբ՝ «Հրաշալի դիրք ու գեղեցկութիւն ունի Ս. Եղիայի մա-
տուռը. չորս կողմից շրջապատուած է սպիտակ քարէ սալայատակով և փայտէ վանդակներով.
իսկ սոցա ետևը թիկնապահների նման կանգնած են սաղարթախիտ հովհար ծառեր, որոնց հո-

[1019] Տե՛ս նույն տեղում, стр. 270.
[1020] Տե՛ս նույն տեղում, стр. 271.
[1021] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև ГССРИ, т. I, стр. 330, տե՛ս նաև КК на 1856 г., стр. 511-512.
[1022] Ուշագրավ է այն փաստը, որ XX դարասկզբի արխիվային վավերագրերում Բուզովնան շարունակաբար անվանվում է
«Հայի գյուղ» անվամբ: Այսպես, Բաքվի հայոց եկեղեցիների գործակալի հանձնարարությամբ 1906 թ. օգոստոսի 8-ին
քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցու քահանա Հովհաննես Տեր-Հարությունյանը Սբ. Եղիայի, Անդրեասի և Անանիայի
անվամբ եկեղեցի-մատուռում գույքագրում անցկացնելու նպատակով մեկնելով Բուզովնա գրում է. «1906 թուի օգոստոսի
8-ին թւ 431 իւր (գործակալը - Գ. Ս.) պաշտոնական գրութեամբ առաջարկեց ինձ գնալ Հայոց գիւղը և 1905 թուի հայ-
թուրքական արիւնհեղութիւններից ազատուած Բզովնա գիւղի հայոց եկեղեցւոյ զգեստները և անօթները պահանջել նոյն
եկեղեցւոյ պահապան Համբարձում Խաչատրեանից» (ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 217, թ. 1):
[1023] Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 482:
[1024] Տե՛ս նույն տեղում, էջ 483, տե՛ս նաև СНМ-1859-1864, ч. IV, стр. 93:
[1025] Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 124: Պետք է նկատել, որ «մատուռ շինուեցաւ» արտահայտությունը վերա-
բերում է շինության վերականգնմանը կամ հիմնովին վերաշինմանը, քանի որ մատուռը հիմնադրվել էր դեռևս XV դարի
20-ական թվականների սկզբներին: Մատուռի մուտքի վերնամասում փորագրված էր. «Կառուցաւ մատուռս սրբոյն
Եղիայի և Անդրէի արդեամբ և ծախիւք աստիճանաւոր Լևոն Կասպարեան Եաղուբեանց ի 30-ն սեպտ. 1862 թ.» (Տէր-
Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 483): Բաքվի հայերի համար մատուռը համարվել է միակ ուխտատեղին: Քննարկվող
ժամանակաշրջանում ուխտավորների հոսքը այդտեղ երբեք չի դադարել: Ուխտավորները գալիս էին ինչպես մերձակա
վայրերից, այնպես էլ շրջակա գավառներից: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Բաքվում XIX դարի սկզբներին բնա-
կություն հաստատած շամախեցի առևտրաարդյունաբերող Սահակ Աղամյանը 1830 թ. մատուռի արևմտյան կողմում
ուխտավորների համար կառուցում է երկու քարաշեն սենյակ (տե՛ս նույն տեղում, էջ 484): Եկեղեցի-մատուռը գործել է
մինչև 1905 թ. հայ-թաթարական ընդհարումները (տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 217, թ. 1):

վանու տակ քիչ չեն հանգիստ վայելել արևից պապակուած բագուեցիները»[1026]: Մատուռն
ունեցել է ձեռագիր հիշատակարան, ուր գրված է եղել այդ սրբատեղու մանրամասն տարե-
գիրը և նշված գյուղի կալվածքների քանակը[1027]: Բուզովնա գյուղի շրջակայքում եղել են նաև
Սբ. Մինասի (շինված էր մի ապառաժ քարի վրա, ուր փորագրված էին մի քանի խաչեր), Սբ.
Սիմոնի և Սբ. Հովհաննես ճգնավորների նահատակման վայրերում շինված մատուռները:
Ճգնավորների տապանաքարերի վրա արձանագրված էր «ՇԿԸ» (1119)[1028] թվականը[1029]: Սբ.
Եղիա Մարգարեի մատուռից արևելք՝ դարձյալ մի ժայռի վրա գտնվել է հաջորդ սրբատեղին,
սակայն առանց որևէ արձանագրության[1030]: Եր. Տեր-Հովհաննիսյանցի այցելության ժամանակ
Ս. Եղիայի մատուռի մոտ գտնվող քարի վրա դեռևս պահպանված էր Ներսես ավագ քահա-
նայի կողմից 1421 թ. կառուցված ջրհորի վերաբերյալ արձանագրությունը. «Ես Ներսէս աւագ
քահանայ շինեցի ջրհորս այս յիշատակին ծնողաց իմոց հայր...քահանայ... Տէր Ներսէս և կնոջ
նորա Խաթունս... ի ամի թուականին Հայոց ՊՀ. (820) (Փրկ. 1421 թ.)»[1031]: Բուզովնա գյուղից
պահպանվել են նաև տապանաքարերի և խաչքարերի բեկորներ՝ Չ. (700), Պ. (800) և Ջ. (900)
թվականների արձանագրություններով, եկեղեցական շինությունների ավերակներ: Բուզովնա
գյուղում գտնվել են նաև հայերեն գրով հին դրամներ: 1902 թ. գտնված ոսկեդրամի մի երե-
սին եղել են հայերեն արձանագրություններ, իսկ մյուս երեսի վրա խաչ[1032]: Բերված տեղե-
կությունները վկայում են Բուզովնայի՝ հնուց ի վեր հայաշատ լինելու մասին: Եր. Տեր-Հով-
հաննիսյանցը գրում է. «...եթէ ի նկատի ունենանք տեղական հին յիշատակարանները և ար-
ձանագրութիւնները, պէտք է ենթադրել, որ Բուզովնան եղել է մի հին հայաշատ կենտրոն, որն
ունեցել է իւր սեփական սրբատեղիները, իւր քահանաները և իւր առանձին գերեզմանա-
տունը»[1033]:

Ապշերոնյան թերակղզին և շրջակա բնակավայրերը նշված ժամանակաշրջանում հա-
յերով բնակեցված լինելու հանգամանքը հավաստում են նաև հնագիտական այլ տվյալներ:
Այսպես՝ նույն Բուզովնա գյուղում հայտնաբերված դամբարանի մուտքին եղել է արաբատառ
շինարարական արձանագրություն, որի բովանդակությունից հետևում է, որ այն պատկանում
է ոմն հայ Տարսայիճի Բահրամի որդուն՝ Շմավոնին. «Այդ հանգստարանը Տարսայիճ (հայի)
Բահրամի որդի Շմավոնինն է: Մուհարամի ամսի յոթհարյուրվեց թվին (=1303 թ.)»[1034]: Բու-
զովնա գյուղը գոյատևել է մինչև 1500-ական թթ. սկիզբը[1035]:
Փաստերի վերլուծությունը վկայում է, որ Բուզովնան ունեցել է թաթախառն հայ բնակ-
չություն, և գյուղի բնակիչները 1501, 1509 թթ. ղզլբաշների Բաքու կատարած արշավանքի

[1026] Տե՛ս Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 485:
[1027] Տե՛ս նույն տեղում:
[1028] Եր. Տեր-Յովհաննիսյանցի մոտ հայոց ՇԿԸ տառերի թվային համարժեքը թյուրիմացաբար նշված է 1118 թ.:
[1029] Տե՛ս Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 486:
[1030] Տե՛ս նույն տեղում:
[1031] Նույն տեղում, էջ 484:
[1032] Տե՛ս նույն տեղում, էջ 486:
[1033] Նույն տեղում, էջ 482:
[1034] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, հատորը կազմեց Պ. Չոբանեան, Երեւան, 1999 (Չոբանեան Պ.,
Մակար եպս. Բարխուտարեանցի կեանքն ու գործը, էջ 13): Ուշագրավ այդ տեղեկությունը Պ. Չոբանյանը մեջբերել է
ադրբեջանցի պատմաբան Սիմա Քերիմզադեի («Надписи памятников архитектуры Азербайджана 11-15 вв.: (авто-
реф. канд. дисс.), Баку, 1970) թեկնածուական ատենախոսության սեղմագրից:
[1035] Տե՛ս Տէր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 484-485:

ժամանակ գաղթել են զանազան կողմեր, հավանական է, որ նրանց մի մասը գար և հաստատվեր ավելի վաղ իրենց համագյուղացիների կողմից հիմնված Մատրասա գյուղում, ինչպես նաև հեռանար Ղուբայի լեռնային շրջաններում գտնվող հայկական գյուղեր[1036]:

Բաքվի շրջակայքում հայկական բազմաթիվ գյուղական համայնքների մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում XIV դարի երկրորդ կեսի - XV դարի սկզբի տեղացի աշխարհագրագետ և ճանապարհորդ Աբդ ար-Ռաշիդ ալ Բաքուվին՝ ավանդաբար նրանց բնակիչներին կոչելով քրիստոնյաներ: «Բաքուի...մերձակայքում,- գրում էր Բաքուվին,- կան շատ գյուղեր և յուրաքանչյուրն ունի ամրացված միջնաբերդ ամրապինդ պատերով: Այդ գյուղերի բոլոր բնակիչները քրիստոնյաներ են (իմա՝ հայեր - Գ. Ս.)...»[1037]: Ի. Բերեզինը նշում էր, որ Բաքվի շրջակայքում նախկինում շատ գյուղեր բնակեցված են եղել հայերով, սակայն իրանական տիրապետության հալածող քաղաքականության հետևանքով հայերը լքել էին իրենց բնակավայրերը և կենտրոնացել Բաքվում, իսկ դատարկված բնակավայրերը գրավել էին մահմեդականները[1038]: XIX դ. վերջին «Մշակին» հղած թղթակցությամբ Ալ. Բալանթարը գրում էր, որ այդ գյուղերը 180-200 տարի սրանից առաջ բնակեցված են եղել հայերով[1039]: Հոդվածագիրը տեղեկություններ է հաղորդում նաև Բալախան և Բուզովնա գյուղերի անհետացած եկեղեցիների և այդ տարածքում հանդիպող հայկական զանազան գերեզմանաքարերի մասին[1040]: Ըստ նրա՝ հայ կնոջ մի գերեզմանաքարի թվագրումից պարզվում է, որ կինը մահացած է եղել մոտ 400 տարի սրանից առաջ[1041]: Ապշերոնյան թերակղզում վաղքրիստոնեական մշակույթի հետքերի մասին ուշագրավ տեղեկություններ են պահպանվել «...քաղաքից հինգ վերստաչափ հեռու գտնուող պարսկական «Բիբի-Հէյբաթ» սուրբ սրբատեղու» բնակատեղից[1042]: «Մեղու Հայաստանի» լրագրի մի տեղեկության համաձայն՝ Բաքվից 5 կմ հարավ-արևմուտք գտնվող Բիբի-Հեյբաթ ուխտատեղում նախկինում եղել է հայկական վանք. «...Բառաւուն հայ կուսանաց վանք է եղել յիշեալ ուխտատեղին, այժմ՝ Թուրքերն են տիրում թէ՛ ուխտատեղիին, թէ՛ նրա նաւթով լի հողերին»[1043]: Թերակղզու նավթահանքային շրջան այցելած Սարգիս արքեպ. Ջալալյանցը վկայում է, որ դեռ երևում էին ավերակ եկեղեցու հետքերը. «Է ընդարձակ վայր ի հիւսիսակողմն Բագուայ նահանգի հեռու... երևին աւերակք տանց, ընդ որս և եկեղեցւոյ...»[1044]:

Ապշերոնյան թերակղզում հայաբնակ գյուղեր էին նաև Բալախանը, Սաբունչին, Մաշթաղան, Շաղանը և Մարդաքյանդը[1045]: Նշված գյուղերը շրջապատված էին գեղեցիկ այգինե-

1036 Տե՛ս Հակոբյան Ար., Թարախու հայեր, էջ 63:

1037 **Абд ар-Рашид ал-Бакуви,** Китаб талхис ал-асар ва аджа'иб ал-малик ал-Каххар («Сокращение [книги о] «Памятниках» и чудеса царя могучего»), издание текста, перевод, предсловие, примечания и приложения З. М. Буниятова, Москва, 1971, стр. 89-90. Հարկ է նշել, որ երկի հրատարակիչ Զ. Բունիաթովը, որին հատուկ է պատմական փաստերի կեղծումն ու աղավաղումը, կասկածի տակ դնելով այդ հաղորդման հավաստիությունը, հանիրավի կերպով միջամտել է պատմիչի շարադրանքին և բնօրինակի այդ հատվածում դրել հարցական նշան (տե՛ս նույն տեղում, стр. 90).

1038 Տե՛ս **Березин И.,** նշվ. աշխ., ч II, гл. IV (От Кубы до Баку), стр. 41.

1039 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, № 37:

1040 Տե՛ս նույն տեղում:

1041 Տե՛ս նույն տեղում:

1042 Ա. Մ. [Ալեքսանդր Մովսիսյան], Բագու (II), «Արձագանք», Թիֆլիս, 1885, օգոստոսի 4, № 5, էջ 68:

1043 «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1883, փետրվարի 23, № 18:

1044 Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 409-410:

1045 Տե՛ս Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», Երևան, 1997, օգոստոսի 9, № 79:

րով, որոնք կազմում էին «...օաղիսներ Ափշերոնեան աւազուտ և ապառաժոտ թերակղզու վերայ և միևնոյն կախարդական զօրութեամբ ձգում են իւրեանց ճանապարհորդներին...»[1046]: Դերբենդի հայկական գերեզմանոցի վիմական արձանագրությունները վկայություններ են թողել առ այն, որ Դերբենդում հաստատված հայերի մեջ եղել են նաև բալախանեցի հայեր: Ինչպես օրինակ. «Այս է տապան Բալախանեցի ողորմած հոգի Համբարձում վարդապետին. Թվին ՌԲՃԱ (1752), ապրիլ ԻԵ (25)»[1047]: Իսկ Սաբունչի գյուղը 1886 թ. ընտանեկան ցուցակներում դեռևս հիշատակվում էր նաև «Արմանի բուլաղ» (Հայկական աղբյուր) անվամբ[1048]: Մարդաքյանդ գյուղի վերաբերյալ արխիվային վավերագրում ասված է. «Մարդաքեանդը հայոց գիւղ է եղել: Մի քանի հին տների պատուանդանի մեկ արշինաչափ խաչաձեւ անկիւնաքարերն, այս եւ այն փոսերից գտնուող խաչաձեւ քարերը հաստատում են այդ ենթադրութիւնը: Այդ խաչաձեւ քարերից մի քանի հատ ունի հարուստ քալպայ Ասլան ումն...»[1049]:

Ապշերոնյան թերակղզում և հարակից տարածքում ստվար հայ բնակչության առկայության փաստի մասին հետաքրքրական տեղեկություններ է թողել նաև «Աղուան» ծածկանունով Սահակ Մուրադյանը «Նոր-դարում»: Հեղինակը, XIX դարի վերջին լինելով Բուզովնա գյուղում, տեղի ծերունիների պատմածների հիման վրա գրառել է հետևյալ ուշագրավ ավանդությունը. «Ամբողջ Ափշերոնեան թերակղզու վրայ, Բագուից մինչև Ափշերոն գիւղա-քաղա-քը, մի ժամանակ ապրելիս են եղել թուով մօտ 60,000 հայեր, որոնք յետոյ Կասպից ծովի արևելեան կողմից (Միջին Ասիայից) անդադար իրենց վրայ դրոհ տուող գազանաբարոյ ժողովուրդներից ստիպուած, ցրուել են զանազան կողմերը, իսկ նրանց տեղը բռնել են այժմեայ թուրքերը»[1050]: 1830 թ. հունիսին թերակղզուն մոտակա գյուղերում շրջագայած ֆրանսիացի տնտեսագետ Մորենսը Ի. Պասկևիչին նույն թվականի հունիսի 4-ին հղած զեկուցագրում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում V-VI դարերից այդ վայրերում գոյություն ունեցած ձիթենու այգիների և տեղի հայ բնակչության կողմից ձիթապտղի գործածման մասին: Ըստ Մորենսի՝ հայերը ձիթապտուղը տնտեսության մեջ գործածում էին այնպես, ինչպես՝ Եվրոպայում[1051]: Այսպիսով՝ բերված փաստերի լույսի տակ ակնհայտ է դառնում հայերի՝ Ապշերոնյան թերակղզում վաղնջական ժամանակներից բնակեցված լինելու մասին:

Ըստ Ղ. Ալիշանի՝ Ապշերոնյան թերակղզին 1850-ական թվականների սկզբներին ուներ մոտ 40 գյուղ՝ ներառյալ Բաքու քաղաքը՝ 32000 ազգաբնակչությամբ, որից հայեր՝ 600 մարդ. «Ափշեռոն... յորում են 40 իւ չափ գիւղք, և 32,000 բնակիչք, Պարսք և Փարսիք և Թուրքք, և Հայք 600 ոգիք»[1052]: 1886 թ. ընտանեկան տվյալների համաձայն՝ Բաքվի գավառը բաժանված էր 41 գյուղական համայնքների միջև և ուներ 46 գյուղ[1053]: Թեև գավառում XIX դարի կեսերին զուտ հայկական գյուղեր չեն եղել, սակայն բնակվել են ոչ քիչ թվով հայեր:

1046 «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, № 37:

1047 Դիվան հայ վիմագրության, պր. VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխատասիրությամբ՝ Գր. Գրիգորյանի, Երևան, 1999, էջ 190:

1048 Տե՛ս ССДНЗКИПС-1886.

1049 Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», 1997, օգոստոսի 9, № 79:

1050 Աղուան, [Սահակ Մուրադյան], Ովքե՞ր են մատրասեցիք, «Նոր-դար», Թիֆլիս, 1903, հունվարի 17, № 10:

1051 Տե՛ս АКАК, т. VII, док. 144, стр. 191-192.

1052 Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 93:

1053 Տե՛ս ССДНЗКИПС-1886, стр. X.

* * *

ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔ: Բաքվի գավառի կենտրոնն էր Ապշերոնյան թերակղզու հարավում, աստիճանաբար ծովախորշն իջնող սարալանջի վրա փռված, սկզբնաղբյուրներում V դարից ի վեր հիշատակվող Բաքու քաղաքը[1054]:

Ապշերոնյան թերակղզու հայաբնակ բնակավայրերի շարքում հայ ժողովրդի պատմության մեջ վաղ ժամանակներից կարևոր տեղ է գրավել հատկապես Բաքու քաղաքը: Ըստ ռուս գիտնական Կուզմա Սպասսկի-Ավտոնոմովի՝ հայերը եղել են քաղաքի հիմնական բնակիչներից[1055]: Ըստ պատմական ավանդության՝ Հայոց Արևելից կողմանց (Արցախ, Ուտիք) թագավոր Վաչագան Բարեպաշտը, երբ 500 թ. Փայտակարան նահանգի Բագավան գավառը՝ լիբև օժիտ տվեց իր դստերը՝ Վարսենիկին, Բաքուն նրա ձմեռանոցն էր, իսկ Շամախին՝ ամառանոցը[1056]: Ս. Էփրիկյանն այդ մասին գրում է. «Այս կրակոտ երկիրը (Բագավան գավառը - Գ. Ս.), Քրիստոսի 500 թուին Աղուանից Վաչագան թագաւորը, որ կը նստէր Պարտաւ քաղաքը, օժիտ տուեր էր իւր Վարսենիկ դստեր, որոյ ձմերոցը Բագուն էր, իսկ ամարանոցը Շամախին»[1057]: Ուշագրավ է, որ Վաչագան Բարեպաշտի և արքայադստեր Վարսենիկի վերաբերյալ ավանդապատումն իր արձագանքն է գտել նաև հնդկահայ հասարակական գործիչ, գրող և մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանի «Վէպ Վարսենկան Սկայուհւոյ Աղուանից» կրոնաբարոյական գրվածքում[1058]:

Ավանդության համաձայն, Բաքվում նախկինում եղել է կրակի և ծովի աստվածների հեթանոսական մեհյան[1059]: Եղիշա առաքյալը, Աղվանից աշխարհ գալով, կործանել է այն և նրա տեղը կանգնեցրել Քրիստոսի խաչը: Մեսրոպ Մաշտոցն այդտեղ Սբ. Աստվածածնի անվամբ մատուռ է հիմնել, իսկ Վաչագան Բարեպաշտ թագավորը 500 թ. մատուռի տեղում կառուցել է եկեղեցի[1060]. «Իսկ Վաչագան բարեպաշտ թագաւորն Աղուանից յամի Տեառն 500 շինեց եկեղեցի, ըստ այսմ և Բագուայ հին և նշանաւոր եկեղեցին և ուխտատեղին է սուրբ Աստուածածնայ եկեղեցին, որ բերդի մէջ է և փարոսեան աշտարակի դիմացն է»[1061]: Նկատենք, որ խոսքն այստեղ քաղաքի ամենահին եկեղեցու՝ Սբ. Աստվածածնի մասին է[1062]: Չնայած եկեղեցին Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտի կողմից հիմնադրված լինելու վերաբերյալ տեղեկությունները սահմանափակվում են միայն ավանդազրույցով, անտարակույս, նրանում կան իրական պատմական դեպքերի արձագանքներ: Այսպես՝ Մ. Կաղանկատվացին վկայում է, որ Վաչագան թագավորը լինելով եկեղեցասեր գործիչ, Հայոց Արցախ և Ուտիք աշխարհներում «...ըստ թուոյ աւուրց տարւոյն...» կառուցել էր եկեղեցիներ[1063]: Քանի որ Կաղանկատվացու երկը պարունակում է նաև Կուրի ձախափնյակում Վաչագան թագավորի ունեցած ազդեցության և ծավալած գործունեության վերաբերող հստակ տեղեկություններ. «...կարգէր տեղեաց տեղեաց եպիսկոպոսունս, և՛ երիցունս, և՛ հայեցողս. և ի Կամբէճս և յԱղուանս զնոյն հրաման սաստից կարգեալ հաստատէր...»[1064], դրանից կարելի է եզրակացնել, որ Վաչագան թագավորի՝ քրիստոնեության ամրապնդման նպատակով ծավալած եկեղեցաշեն գործունեությունը տարածվել էր ընդհուպ մինչև Ապշերոնյան թերակղզի՝ արքունի ձմեռանոց[1065]: Այստեղ տեղին է մեջբերել Բաքվում բնակված բանասեր Սարգիս Ծոցիկյանի՝ հին Բաքվին և Վաչագան թագավորի կողմից հիմնարկված հայկական եկեղեցուն վերաբերող նկարագրությունը. «Բերդի պարիսպներէն ներս կը գտնուին բաւական թուով հին շինութիւններ, Շիրվանցի Շահերու և Պարսիկ Խաներու բնակարաններ, նեղ ու ծուռ փողոցներ, կրպակներ և տուներ՝ որոնց ճակատներն իրարու մօտեցած են: Գլխաւոր մուտքէն մը քայլ ներս շինուած է Հայոց Ս. Աստուածուսական առաջին եկեղեցին: Բերդի պարսպապատերու շրջանակին մէջ է Հայոց Ս. Աստուածածին եկեղեցին: Տասնեհինգ դարու հնութիւն մը»[1066]: Հայկական եկեղեցու գոյությունն իսկ կարելի է զորեղ ապացույց համարել վաղ միջնադարում Բաքվում ստվար հայ բնակչությամբ կազմակերպված համայնք լինելու մասին:

Այնուհետև Բաքուն հիշատակվում է IX և X դդ. արաբական ճանապարհորդների և աշխարհագրագետների (ալ-Իստահրի, ալ-Մասուդի, ալ-Մուքադասի) երկերում, որոնք վկայում են նավթի արդյունահանման[1067] և քաղաքում նավահանգստի գոյության մասին[1068]:

1054 Տե՛ս Бартольд В., Работы по исторической географии. Баку, Сочинение, т. III, Москва, 1965, стр. 350-352.

1055 Տե՛ս Автономов-Спасский К., Баку, КК на 1852 г., отд. III, стр. 307.

1056 Տե՛ս Հանրամատչելի հանրագիտական բառարան, հ. Ա, կազմեց Համբարձում Առաքելեան, Թիֆլիս, 1915, էջ 199:

1057 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 362:

1058 Տե՛ս Վէպ Վարսենկան Սկայուհւոյ Աղուանից, ի հնութեանց հայրենեաց փոխեաց յարդի ոճ և գիր Մ. Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագ Սրբոյ Էջմիածնի, Կալկաթա, 1847:

1059 Կրակապաշտության այդ վայրը հետագա ժամանակներում ստացել է Սուրախանի անվանումը, որը գտնվում էր Բաքվից 15 կմ հեռավորության վրա: Սուրախանիում զրադաշտական տաճարը հիմնադրվել է այն պարսիկների կողմից, որոնք, չընդունելով մահմեդական կրոնը, հաստատվել էին Ապշերոնյան թերակղզում և կազմել փոքրիկ համայնք: Տեղացի մահմեդականները նրանց քամահրանքով անվանել են *գեբրներ* կամ *գուրեր* (տե՛ս Отечествоведение. Россия по рассказам путешественников и ученым исследованиям, сост. Д. Семенов, т. III, СПб., 1871, стр. 73-75, տե՛ս նաև Բունիաթյան Ն., Կրակապաշտների տաճարը Սուրախանիում, Երևան, 1926, էջ 3-4): XIX դարի 70-ականների թթ. սկզբներին Սուրախանու կրակապաշտության աղոթարանում ծիսակատարություններ են կատարել հնդիկները (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1873, մայիսի 17, № 10): Սուրախանիում մի վերջին անգամ կրակապաշտության արարողություն է կատարվել 1888 թ. նոյեմբերին, կայսր Ալեքսանդր III-ի՝ Բաքվում գտնվելու առիթով: Այդ նպատակով նույնիսկ Հնդկաստանից հրավիրվել էին մոգեր (տե՛ս Սարուխան Ա., Աղեքսանդր Մանթաշեանց: Մեծ վաճառականն ու բարեգործը (յիշողութիւններ իր մահուան 20 ամեակի առթիւ), Վիեննա, 1931, էջ 19):

1060 Տե՛ս Ֆիզիքական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի, կազմեց Աւետիք Տէր-Յակոբեան, Թիֆլիս, 1914 (ՀԱԱ, ֆ. 335, ց. 1, գ. 24, թ. 99 (այսուհետ՝ Տէր-Յակոբեան Ա., նշվ. աշխ., թ.):

1061 Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 373:

1062 Սբ. Աստվածածին եկեղեցին վերանորոգվել է 1789 թ., Շամախու հայոց թեմի առաջնորդ Ոսկան եպիսկոպոսի օրոք (1785-1796 թթ.), հայ հասարակության հանգանակած գումարներով: Եկեղեցու վերակառուցման գործում մեծ դերակատարություն է ունեցել Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսը, որը 1784 թ. կոնդակով Շամախու հայոց թեմի գանձապետ Եղիազարին պատվիրում է օգնել ժողովրդին եկեղեցին կառուցելու գործում. «Կոնդակ նոյնոյ՝ առ գանձապետ Եղիազարն ի Բագու, որով պատուիրէ օգնել ժողովրդեան ի շինել զեկեղեցին ի Մահլայոջն, և յանուն եկեղեցւոյ ժողովեալ դրամս յանձնել ժողովրդոց...» (Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 217): Կաթողիկոսի մեկ այլ կոնդակում, որն ուղղված էր Բաքվի Հովսեփ, Հովհաննես և Բարսեղ քահանաներին ու գանձապետ Եղիազարին փոխարինած Դավթին, ասված է հետևյալը. «...թոյլատրէ Բագուեցւոց շինել զեկեղեցին ի Մահլայոջն» (նույն տեղում): Պետք է նկատել, որ շատ դեպքերում «շինել» տերմինը օգտագործվել է ոչ միայն «հիմնարկել», «կառուցել» իմաստով, այլև «վերակառուցել, նորոգել» նշանակությամբ, ինչպես ժամանակին նշել է Հ. Օրբելին (տե՛ս Орбели О., Избранные труды, Ереван, 1963, стр. 419): Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը իրավացի էր, երբ գրում էր, որ Սբ. Աստվածածին եկեղեցին նորոգվել է 1789 թ. (տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 373): Եկեղեցու կառուցման աշխատանքներին նյութական օժանդակություն են ցուցաբերել վաճառական Մարկոս և Ջհրապ Թառումյան եղբայրները: Եկեղեցին 1799 թ. գտնվել է քայքայված վիճակում և XIX դարում մի քանի անգամ նորոգվել է: 1881-1882 թթ. հիմքից վերակառուցվել է եկեղեցու փլարային վիճակում գտնվող շրջապարիսպը: Սբ. Աստվածածին եկեղեցին ընդհուպ մինչև 2006 թ. եղել է կանգուն վիճակում: Ներկայումս այն զանգակատան հետ միասին քանդված է, իսկ տեղում կառուցվել է սրճարան (տե՛ս Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, Հայոց պատմության հարցեր, № 8, Երևան, 2007, էջ 153):

1063 Կաղանկատուացի, էջ 338:

1064 Նույն տեղում, էջ 50:

1065 Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 362, տե՛ս նաև Հանրամատչելի հանրագիտական բառարան, հ. Ա, էջ 199:

1066 Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, մասն երկրորդ, Կովկաս, հ. Բ, Փարիզ, 1922, էջ 280-281:

1067 Նավթի օգտագործումը հայերին հայտնի է եղել դեռևս Հայոց Տիգրան II թագավորի (մ. թ. ա. 95 - մ. թ. ա. 55) ժամանակներից: Այդ մասին վկայություն է թողել հռոմեացի պատմիչ Դիոն Կասսիոս Կոկկեյանոսը (II դարի երկրորդ կես - III

Պատմական Բաքվի միջուկն է կազմել Մանուչեհր III Շիրվանշահի (1120-1160/4 թթ.) կառավարման օրոք տաշած քարերով կառուցված հին քաղաքի ամրոցը («Իչերի-շահարը»), որը XV-XVI դդ. համարվել է Այսրկովկասի անառիկ կառույցներից մեկը: Ավելի ուշ՝ 1192 թ., Շամախում տեղի ունեցած ահեղ երկրաշարժի պատճառով Շիրվանշահ Ախսիտան I-ը (մոտ 1160-1196/7 թթ.) մայրաքաղաքը ժամանակավորապես տեղափոխել է Բաքու[1069]: Բաքվի՝ Շիրվանշահերի գահանիստը դառնալուց հետո Շիրվանշահ Շեյխ Իբրահիմը (1382-1417 թթ.) ամրոցի տարածքում հիմնադրում է նաև բերդ-պալատի համալիրն իր աշտարակ ամրոցով, որն ավարտուն տեսք է ստանում նրա հաջորդի՝ Հալիլուլլահ I Շիրվանշահի օրոք (1417-1465 թթ.)[1070]: XII դարից որպես պաշտպանական կառույց օգտագործվում էր նաև Կույսի աշտարակը («Կըզ Կալասի»)[1071]: Սարգիս արքեպ. Ջալալյանցը հետևյալ նկարագրությունն է տվել արքունական այդ կառույցին. «Ի հին քաղաքի անուանի է յոյժ պալատ բերդակալի նորին, Խալիլ Ուլլահի, հրաշակերտեալ Արարացի ճարտարապետութեամբ, բաղկացեալ ի բազմաւոր սենեկաց և առանձին մզկիթաւ, յետ նորա բուրգն բարձրաբերձ ի բերդամիջի... շինութիւն հին և յոյժ ամուր»[1072]: Ամրոցի հարավային հատվածում կառուցված էր հին Բաքվի նշանավոր հուշարձաններից մեկը՝ փարոս-աշտարակը: Սարգիս արքեպ. Ջալալյանցի վկայությամբ՝ «Ի կողմն հարաւոյ գոյ Քուֆի գիր՝ բազմաց անծանօթ. աւանդութեամբ ասի շինեալ նախ քան զերկու հազար ամն: Թուի թէ ի գլուխ սորա դնէին զճրագ կամ վառէին զհուր յաւուրս աշէկոծութեանց, որպէս զի վտանգեալ կամ մոլորեալ նաւք՝ այսու նշանաւ փութացեալ ապահովասցին յայս նաւահանգիստ»[1073]: Այսպիսով՝ ինչպես բնորոշ է միջնադարյան քաղաքների ծագմանն ու զարգացմանը, Բաքու քաղաքը ևս առաջացել է բերդավանից: Սկզբնապես գլխավոր թաղամասը կոչվել է Բերդի թաղ: Բերդի առջև փռված պարսպապատ ավանը հետագայում վերաճել է գյուղաքաղաքի, ապա քաղաքի, իսկ բերդն աստիճանաբար վերածվել է ներքին բերդի կամ միջնաբերդի:

Բաքուն արդեն իսկ համարվում էր Կասպյան ծովային առևտրի հանգույցներից մեկը, և XVI-XVII դդ. եվրոպացի վաճառական-ճանապարհորդների թողած տեղեկությունների համաձայն՝ Բաքվից Դերբենդ և Ռաշտ մարդատար ու բեռնատար նավափոխադրումները գլխավո-

դարի սկիզբ): Նա իր «Հռոմեական պատմություն» երկի 36-րդ գրքում, խոսելով Լուկիոս Լուկուլլոսի՝ 69 թ. Հայաստանի դեմ կատարած արշավանքի մասին, գրում է. «Այդ ժամանակ Լուկիոս Լուկուլլոսը, պատերազմում հաղթելով Ասիայի տիրակալներ Միհրդատին և արման Տիգրանին և ստիպելով նրանց խուսափել ճակատամարտից, պաշարում է Տիգրանակերտը: Բայց բարբարոսները (հռոմեացիները այսպես են անվանել նաև հայերին - Գ. Ս.) նետաձգությամբ և (պաշարողական) մեքենաների վրա թափած նավթով մեծապես վնասեցին նրան: Այդ դեղանյութը կուպրաշատ էր և բոցավառվող, այնպես որ հրկիզում էր այն ամենը, ինչի կպչում էր, և ոչ մի հեղուկով հեշտ չէր այն հանգցնել» (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9: Հին հունական աղբյուրներ, Ա, Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 125): Քննարկելով Դիոն Կասսիոսի այս վկայությունը՝ XIX դարի հեղինակներից Նազարեթ Տաղավարյանը (Չատրճյան) գրում է, որ նավթը հայերին հայտնի էր այն ժամանակվանից սկսած, երբ Տիգրան II-ի նվաճումների հետևանքով Աղվանքը գտնվում էր Հայաստանի գերիշխանության տակ (տե՛ս Տ. [Նազարեթ Տաղավարյան], Բագուի նաւթահանքերը հնութեան մէջ, «Բազմավէպ», Վենետիկ, 1908, № 11, էջ 497):

[1068] Տե՛ս **Бартольд В.**, Работы по исторической географии. Баку, стр. 350-352.

[1069] Տե՛ս **Джидди Г.**, նշվ. աշխ., стр. 39-40.

[1070] Տե՛ս **Ашурбейли С.**, Государство Ширваншахов (VI-XVI вв.), Баку, 1983, стр. 244, 247.

[1071] **Александрович-Насыфен Дж.**, Девичья башня в Баку, ИАКОПСИП, вып. 3, Баку, 1927, стр. 155-163.

[1072] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 406:

[1073] Նույն տեղում:

րապես հայերի ձեռքում էին: Այս առումով հետաքրքրական է XVI դարի վերջերին (1579, 1580-1581 թթ.) Բաքու այցելած եվրոպացի ճանապարհորդ Քրիստոֆեր Բուրոյի տեղեկությունը, որտեղ հիշատակվում է Հակոբ անունով ոմն հայ, որը Կասպից ծովի վրա շահագործում էր 35 տոննա տարողությամբ նավ[1079]: Քրիստոֆեր Բուրոն հետաքրքիր տեղեկություններ է հայտնում նաև Բաքվից հյուսիս գտնվող Նիզաբադ (Նիյազ-Աբադ) ծովեզրյա գյուղաքաղաքից 18 վերստ[1080] արևմուտք «Հայ գյուղ» անվանվող բնակավայրի մասին, որի բնակիչները զբաղվում էին մետաքսի և տորոնի առևտրով[1081]:

1647 թ. Բաքու այցելած Էվլիյա Չելեբին իր «Ուղեգրության» մեջ գրում է, որ Բաքուն՝ որպես խանություն, մտնում էր Շիրվանի էյալեթի մեջ և համարվում էր Շամախիի նավահանգիստը: Ըստ այդմ՝ Բաքվում օդը եղել է տաք և բարեխառն: Բերդում եղել են մոտ 70 հին և հողածածկ տներ: Քաղաքի մոտ եղել են 7 նավթահանքեր, որոնցից ամեն մեկն ունեցել է իր գույնը՝ դեղին, կարմիր, սև և այլն: Քաղաքն ունեցել է մոտ 1000 տուն, այգիներ, պարտեզներ, բաղնիք և շուկա[1082]: XVII դարի մեկ այլ թուրք պատմագիր-աշխարհագրագետ Քյաթիբ Չելեբին (Հաջի Խալիֆա, 1609-1656 թթ.) իր «Ջիհան Նյումա» գրքում Բաքվի մասին գրել է. «Բաքուն... Դերբենդի մոտ, Շամախիից հյուսիս-արևելք, ծովեզերքին, Շիրվանի նշանավոր քաղաքներից է: Եղանակն այստեղ տաք է: Շրջակայքը, մինչև 10 փարսախ տարածությամբ լինելով քարքարոտ վայր, բուսականությունից բոլորովին զուրկ է»[1083]:

1683 թ. Բաքվում հանգրվանել է գերմանացի բժիշկ, ճանապարհորդ Էնգելբերտ Կեմպֆերը, որն ուշագրավ տեղեկություններ է թողել քաղաքի և այնտեղ բնակվող հայերի մասին: Ըստ նրա՝ քաղաքի մի հատվածը փռված էր լեռան լանջին, որտեղ բնակվել են աղքատները: Իսկ հայկական քարավանատունը տեղահոծ բնակեցված էր միայն քաղաքի ներքևի մասը: Իսկ հայկական քարավանատունը տեղակայված էր քաղաքի գլխավոր մայրուղու վրա՝ «Շամախինկա» թաղամաս տանող դռների մոտ[1084]: Հայկական քարավանատան գոյությունը Բաքվի կենտրոնում՝ խոսուն փաստ է նախ բաքվահայերի, ապա նաև այլ վայրերից ժամանող հայ վաճառականների Բաքվում կատարած տնտեսական կարևոր դերի մասին:

Բաքվում հայերն առանձնապես հաճախակի են հիշատակվում XVIII դարի 20-ական թվականներից: Ուշագրավ է այն փաստը, որ երբ 1723 թ. հուլիսի 26-ին ռուսական ծովային արշավախումբը գեներալ-լեյտենանտ Մ. Մատյուշկինի հրամանատարությամբ առանց գրոհի պարսկական կայազորից գրավեց Բաքուն, ռուսական կայազորի զինվորները տեղավորվեցին հայկականում և հնդկականում[1085]: Ինչպես երևում է մերձկասպյան երկու քարավանսարաններում՝ հայկականում և հնդկականում... Ինչպես երևում է ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեն. Վ. Դոլգորուկովի՝ Զինվորական կոլեգիային 1726 թ. հունիսի 23-ի հղած զեկուցագրից, Նիզաբադում տեղակայված կորպուսի՝ Բաքվի կայազորում 124 զինվորներից հայեր են 95-ը[1086]: 1728 թ.

[1079] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 442:

[1080] Վերստը երկարության ռուսական հին չափի միավոր է, որը հավասար է 500 սաժենի կամ 1 կմ-ից քիչ ավելի:

[1081] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 443, տե՛ս նաև Английские путешественники..., стр. 276.

[1082] Տե՛ս Էվլիյա Չելեբի, էջ 94-95:

[1083] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, էջ 18:

[1084] Մեջբերումն ըստ՝ **Бретаницкий Л.**, Баку, М-Л, 1970, стр. 77.

[1085] Տե՛ս **Бутков П.**, նշվ. աշխ., ч. I, стр. 48.

[1086] Տե՛ս Армянские войска в XVIII веке. Из истории Армяно-русского военного содружества (Исследование и документы), подготовил к изданию **А. Хачатрян**, Ереван, 1968, стр. 109.

մերձկասպյան մարզերը քարտեզագրած Հ. Գերբերը նշում է, որ նույն թվականի դրությամբ Բաքուն արդեն հայաշատ էր[1082]*:*

1744-1748 թթ. Իրան ուղարկված իշխան Մ. Գոլիցինի դեսպանության անդամ շոտլանդացի Ջոն Կուկը, նկարագրելով Բաքուն, գրում է. «Բաքուն փոքր քաղաք է, կառուցված Կասպից ծովի ափին կիսաշրջանի ձևով՝ պատած բարձր անկանոն ձևի ամուր պարսպով, ամրացված բուրգերով, դրա համար էլ, երբ քաղաքը ռուսների ձեռքին էր, արտաքին պարիսպը (նրանք) վերակառուցեցին ավելի կանոնավոր ձևով, լավ ամրացված բուրգերով. պարսպից դուրս նրանք փորեցին խոր խրամատ: Սակայն պարսիկները, չհասկանալով այդ շինությունների նշանակությունը, աչքաթող արին դրանք, և մնաց միայն միանդամայն անպետք պարսպի ները»[1083]*: Բաքու և Սալյան քաղաքներում բնակվող ազգաբնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում XIX դարի երկրորդ տասնամյակի թուրք պատմագիր Ջևդեթ փաշան (Ահմեդ Ջևդեթ, մահ. 1894 թ.) իր «Թարիխի Ջևդեթ» աշխատության Գ հատորում, որն ընդգրկում է 1774-1825 թթ. պատմությունը՝ առանց կոնկրետ տարեթվի հիշատակության: Ըստ պատմագրի՝ «Սալյան և Բաքու քաղաքներում ապրում են 10 հազար տուն շիաներ (մեծամասնությունը իրանցիներ էին - Գ. Ս.) և 10 հազար տուն հայեր»*[1084]*: Եթե յուրաքանչյուր ընտանիքում միջին հաշվով 4-5 շունչ հաշվվի, ստացվում է, որ Բաքուն և Սալյանն այդ ժամանակ ունեին ավելի քան 40000 հայ բնակիչ: Նկատենք, որ թուրք պատմագրի բերած վկայությունը որքան էլ որ այդ ժամանակաշրջանի համար մոտավոր լիներ, այնուհանդերձ, այդ տեղեկությունը ևս մի լրացուցիչ վկայություն է Ապշերոնյան թերակղզում և Կասպից ծովի առափնյա շրջաններում հայերի՝ ստվարաթիվ լինելու մասին:*

XVIII դարի 80-ական թվականների Բաքվի հայության մասին փաստեր են նաև Հայոց կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցու ստորագրությամբ Բաքու՝ մի շարք անձանց առաքված նամակներն ու կոնդակները: Այսպես՝ 1780 թ. դեկտեմբերին առաքված նվիրակական կոնդակներից մեկում կաթողիկոսը գանձապետ Եղիազարին հորդորում էր պատասխան գրով տեղեկացնել տեղի հայ բնակչության որպիսության մասին. «Թուղթ ևս Բաքու առ սիրոյ Աթոռոյս գանձապետ պարոն Եղիազարն գրեաց սիրազան Վեհըն...: Եւ հարկ է, թէ գիրդ մի պակասեցուցես, գրելով միշտ զորպիսութեանց քոց և այդ կողմանցդ, և զորպիսաբար կեցութեանց օրհնեալ ժողովրդոց այդ, երկրացդ (ընդգծումը մերն է - Գ. Ս.) յորպէս յառաջ գրեալ ես միշտ առ լուսահոգին...: Զի թէպէտ մեք միշտ ի ցաւս կամք աստ, զորս կրեցաք, և ևս կրեմք, այլ զօրհնեալ ժողովրդոցդ զբարեկեցութիւնսն գիտել ցանկամք ի յուրախութիւն մեզ, որպէս և վասն անյաջողութեանցն վշտանամք և հայցեմք յԱստուծոյ դայցելութիւն»[1085]*:*

Բաքու քաղաքի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում երկրամասում XVIII դարի 80-90-ական թվականներին ռուսական զինվորական ծառայության մեջ գտնվող սպաները: Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-պորուչիկ Ս. Պոտյոմկինի հանձնակատար Ա. Ախվերդովի տվյալներով՝ Բաքուն 1783 թ. ունեցել է 500 տուն՝ 1500 բնակչով[1086]*: Ս. Բրոնևսկու տեղեկացմամբ 1790-ական թվականների վերջերին քաղաքն ուներ 500 տուն՝ 3000 բնակչով*[1087]*: 1796 թ. վերաբերող արխիվային մի փաստաթղթի տվյալների համաձայն՝ քաղաքում կար 620 ընտանիք*[1088]*: Բաքու քաղաքի ամենահին հատակագծերից մեկում, որն ստորագրված է 1796 թ. ինժեներ կավալեր Քրիստիան Տրուզսոն 2-րդի կողմից*[1089]*, բերդի և շրջակայքի մի շարք շինությունների կողքին (մզկիթ, խանի պալատ, քարավանատուն և այլն) նշված է նաև բերդաթաղի ստորոտին՝ ծովեզերքի փարոսյան աշտարակի դիմաց, գտնվող հայկական եկեղեցին*[1090]*, որն, անտարակույս, եղել է քաղաքի ամենահին՝ Սբ. Աստվածածին եկեղեցին:*

XIX դարի սկզբին՝ մասնավորապես 1802 թ., քաղաքն արդեն ուներ 6000 տուն ազգաբնակչություն[1091]*: Այդ շրջանում Բաքվում ապրող հայերի և նրանց՝ ռուսական կողմնորոշում ունենալու մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում վրաց պատմիչ Բագրատ Բագրատիոն արքայազնը (1776-1841 թթ.) «Նոր պատում» (Ախալի մոթխրոբա) երկում: Ինչպես հայտնի է, 1806 թ. փետրվարի 8-ին Հուսեյն Ղուլի խանը Բաքվի բերդի բանալիները պետք է հանձներ գեն. Պ. Ցիցիանովին, սակայն անձնատվության օրը խանը դավադրաբար սպանել է տալիս նրան*[1092]*: Պատմիչի հաղորդման համաձայն՝ սպասվող դավադրության մասին տեղացի մի հայ գաղտնի նամակով նախապես հայտնել էր Ցիցիանովին, որը, սակայն, չհավատալով դրան, անողոքաբար պատժել էր հային. «Այստեղ Բաքվի խանը՝ Հուսեյն Ղուլին, դավաճանություն սարքեց, որպեսզի սպանի Ցիցիանովին: Լսելով այս՝ այնտեղ ապրող հայերից մեկը հաղորդեց սրա մասին Ցիցիանովին*[1093]*, որը, սակայն, իր հպարտ լինելու և անհեռատեսության շնորհիվ հավատ չընծայեց այն հային, բանտարկել տվեց և անողոք պատժեց նրան»*[1094]*: Այնուհետև Հուսեյն Ղուլի խանը մտադրվել էր պատժել նաև Բաքվի ամբողջ հայ բնակչությանը: Քաղաքի նշանավոր մահմեդականների հետ խորհրդակցելուց հետո խանը հրամայում է հայերին հավաքվել եկեղեցու մեջ: Սպասվող կոտորածը կանխվում է մի պարսիկ հաջու կողմից, որին Րաֆֆին գրում էր. «...մի հաջողվում է մեղմել խանի բարկությունը: Այս կապակցությամբ Րաֆֆին գրում էր. «...մի պարսիկ հաջի, որը խոհեմ, բարեսիրտ մարդ էր, շտապում է խանի մոտ, և ցույց տալով նրա բարբարոսության վատ հետևանքները, կարողանում է ամոքել նրա բարկությունը և ազատում է հայերի կյանքը: Այնուհետև Բաքվի հայերը միշտ մեծ հարգանքով և երախտագիտությամբ են վերաբերվել դեպի այդ մարդու տունը»*[1095]*:*

XIX դարի սկզբին՝ մասնավորապես 1810 թ., քաղաքն ուներ 931 տուն ազգաբնակչություն[1096]*: Բաքու քաղաքի աստիճանական զարգացման և քաղաքային բնակչության աճին զուգընթաց կատարվում է նաև հայ բնակչության թվի անընդհատ աճ: Եթե 1818 թ. հուլիսի դրությամբ հայերը Բաքվում ունեին 40 տուն*[1097]*, ապա 1820-ական թվականների սկզբներին՝*

[1082] Տե՛ս **Гербер И.**, նշվ. աշխ., ИГЭД, стр. 116.
[1083] Մեջբերումն ըստ՝ Մարտիրոսյան Վ., Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ), Երևան, 1971, էջ 105:
[1084] Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 248:
[1085] Դիվան Հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, էջ 170:
[1086] Տե՛ս **Ахвердов А.**, Описание Дагестана. 1804 г., ИГЭД, стр. 222.

[1087] Տե՛ս **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, гл. III, Ширван (Ханство Бакинское), стр. 401.
[1088] Տե՛ս **Алиев Ф.**, նշվ. աշխ., стр. 142.
[1089] Տե՛ս **Фатуллаев Ш.**, նշվ. աշխ., стр. 23.
[1090] Տե՛ս **Саламзаде А.**, նշվ. աշխ., стр. 118.
[1091] Տե՛ս Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, էջ 55:
случившихся в последния тридцать лет, т. е. от
[1092] Տե՛ս Описание достопамятных происшествий в Армении Сочинение князя Егора Хубова, СПб., 1811, стр. 128.
Патриаршества Симеонова (1799 г.) до 1809 года. Շամախի տանող ճանապարհի վրա կանգնեցվել է 1846 թ.:
[1093] Տե՛ս Պ. Ցիցիանովի արձանը Բաքվի ա րվարձանից (տե՛ս Էփրիկյան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363):
Քանդակագործն էր Թովմաս Այվազյանցը
[1094] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ., էջ 233:
[1095] Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 303-304:
[1096] Տե՛ս **Левиатов В.**, նշվ. աշխ., стр. 61.
[1097] Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 4:

50՝ 277 բնակչով (148 ար., 129 իգ.)[1098]: Այդ տարիներին քաղաքի հայ ընտանիքների մեծամասնությունը դեռևս ապրում էր Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքում[1099]՝ հին քաղաքի կենտրոնական մասում՝ նրա միջուկը կազմող բերդի շրջանում՝ բերդաթաղում, որը XIX դարի վերջերին դեռևս անբարեկարգ վիճակում էր. «...քաղաքի հին մասը, որ կոչվում է բերդ, ներկայացնում է ասիական մի անճաշակ ու տգեղ քաոս. տները թափուած են միմեանց վրայ, փողոցներն այնքան նեղ են, որ հազիւ թէ մի երկու մարդ կարողանան անցնել»[1100]: Քաղաքի աստիճանական զարգացման հետևանքով հայերն սկսեցին բնակվել նաև բերդի և քաղաքի հարավային կողմում՝ արվարձանում[1101], որի տարածքը (առանց փողոցների) կազմում էր 45,89 հեկտար[1102]: 1820-1860 թթ. ընթացքում ռուսական իշխանությունները Բաքուն ծառայեցնում էին որպես աքսորավայր[1103]: Տարբեր պատճառներով այդտեղ են աքսորվել նաև մի շարք հայեր, որոնց թվում՝ Արցախի մելիքներ: Այսպես՝ 1826 թ. Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովի հրամանով Ջրաբերդի Մելիք-Վանի (Հովհաննես) Աթաբեկյանը և Գյուլիստանի Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանը Ռուսաց կառավարության նկատմամբ «անհավատարմության» մեղադրանքով ձերբակալվում են և ութ ամիս շարունակ մնում կալանված Բաքվի Բայիլովի բանտում[1104]:

Բաքվում XIX դարի 30-ական թվականներին բնակվող հայ բնակչության վերաբերյալ մի հետաքրքիր վավերագիր է պահպանվել Հայաստանի ազգային արխիվում, որն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում քաղաքում և արվարձանում 1838 թ. մայիսի 16-ին հայ բնակչության շրջանում անցկացված ընտանեկան ցուցակագրության մասին՝ բնակիչներից յուրաքանչյուրի անուն-ազգանունով և ընտանիքի անդամների թվով: Հիշյալ աղբյուրը հստակ ցույց է տալիս Բաքվի հայ համայնքի ձևավորման ակունքները: Ըստ այդմ՝ հայերը բերդաթաղում և արվարձանում արդեն ունեին 69 տուն՝ 434 բնակչով (211 ար., 223 իգ.)[1105]: Ցուցակագրությունն ուշադրության արժանի է հատկապես այն առումով, որ արտահայտում է ոչ միայն հայ բնակչության թիվն՝ ըստ անուն-ազգանունների, այլ նաև հարուստ նյութեր է պարունակում Բաքվի հայերի՝ տվյալ ժամանակահատվածի սոցիալ-դասային կազմի վերաբերյալ: Համայնքի սոցիալական կազմը պարզունակ էր. այն բաղկացած էր հիմնականում արտոնյալ, հարկատու և չքավոր դասերից[1106]: Արտոնյալ դասի ներկայացուցիչների շարքում նշված են նաև ծխատեր երեք քահանաներ: Միաժամանակ ցուցակագրությունում տեղ են գտել այնպիսի ազգանուններ (Ադամյան, Թումայան, Ցաղուբյան, Սերեբրյակյանց, Շահգեդանյան և այլն), որոնք հետագա տարիներին դարձան խոշոր առևտրաարդյունաբերողներ, հասարակական գործիչներ և այլն[1107]:

[1098] Տե՛ս **Տէր-Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., թ. 99, տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 866, թ. 1, տե՛ս նաև «Հովիտ», Թիֆլիզ, 1910, օգոստոսի 16, № 16, էջ 249:

[1099] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69:

[1100] «Արոր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 26:

[1101] Տե՛ս **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363:

[1102] Տե՛ս **Фатуллаев Ш.**, նշվ. աշխ., стр. 36.

[1103] Տե՛ս **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363, տե՛ս նաև **Տէր-Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., թ. 99:

[1104] Տե՛ս **Մաղալյան Ա.**, Փաստաթղթեր Արցախի գործիչների և Աբբաս-Միրզայի 1826 թ. հանդիպման հետևանքների վերաբերյալ, ԲՀԱ, Երևան, 2006, № 1, էջ 3-19):

[1105] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69-70:

[1106] Տե՛ս նույն տեղում:

[1107] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև **Ստեփանյան Գ.**, Փաստաթուղթ Բաքու քաղաքի XIX դ. 30-ական թթ. վերջերի հայ բնակչության մասին, ԲՀԱ, Երևան, 2008, № 2, էջ 8-12:

Թերակղզու վրա կուչ եկած փոքրիկ և անհրապույր Բաքու քաղաքն աստիճանաբար դուրս էր գալիս պարփակվածությունից և զարգանալով ու բարգավաճելով բերդաքաղաքից վերածում աչքի ընկնող առևտրական ու տնտեսական կենտրոն: Ի. Բերեզինի տվյալներով՝ 1842 թ. օգոստոսի դրությամբ քաղաքն ուներ 1050 քարաշեն տուն, որից հայապատկան էին 200-ը[1108]: Ազգաբնակչության թիվը բերդաթաղում 4803 էր (2442 ար., 2361 իգ.), իսկ արվարձանում՝ 1192 (638 ար., 554 իգ.)[1109]: Սարգիս արքեպ. Ջալալյանցը 1850 թ. օգոստոսին հետևյալ տպավորությունն է ստացել քաղաքից. «...ի ծովահայեաց քաղաքն Բագու, որ շինեալ կայ ի գեղեցիկ նաւահանգստի յեզր Կասպական ծովուն ի զառ ի վայր տեղւոյջ, շրջապատեալ կրկնակի ամուր պարսպօք՝ մեծամեծ աշտարակօք և խոր խրամատօք, բոլորն ի կոփածու քարանց...: Շինութիւնք տանց ի ներքին բերդի տգեղ են և խրթին, պողոտայքն անուղիղ և անձուկ: Իսկ տունք քաղաքին՝ որ արտաքոյ բերդին են հոյակապ և գեղեցիկ, պողոտայքն ուղղագիծ և կարգաւորեալ ձևով, ըստ մեծի մասին երկյարկեայ»[1110]: Նրա հաղորդած տվյալների համաձայն՝ քաղաքում հայերի տների թիվը հասնում էր 150-ի. «Բնակիչք են Պարսիկք, ընդ որս և Հայք աւելի քան զհարիւր յիսուն տունս, պարապին ի վաճառականութիւնս»[1111]:

Քաղաքի բուռն ընդարձակումը համապատասխանեց այն ժամանակահատվածին, երբ բերդը կորցրեց իր պաշտպանական նշանակությունը և առևտրային գործունեությունը կենտրոնից աստիճանաբար սկսեց տեղափոխվել արվարձան, որն իր հերթին բաժանված էր առանձին թաղամասերի: Որպես նավահանգստային քաղաք՝ Բաքուն շարունակում էր ապրանքափոխանակության և առևտրական լայն հարաբերությունների մեջ գտնվել Իրանի, Անդրկասպյան երկրի, Դաղստանի, Ռուսաստանի, Չինաստանի և այլ երկրների հետ[1112]: Միայն 1851-1860 թթ. ընթացքում Բաքվի նավահանգիստ տարեկան մուտք է գործել 207 նավ[1113]: 1850-ական թվականների սկզբներին քաղաքն արդեն ուներ 8000 բնակիչ[1114]: Կ. Սպասսկի-Ավտոնոմովի վկայությամբ՝ 1851 թ. նոյեմբերին Բերդաթաղում և արվարձանում կար 1992 տուն, 23 փողոց, 3 հրապարակ, 2 կամուրջ և 505 կրպակ[1115]:

Բաքվի առաջընթացի համար վճռական նշանակություն ունեցան Ապշերոնյան թերակղզում հայտնաբերված նավթի պաշարները, որոնց արդյունահանման և արտահանման շնորհիվ քաղաքն սկսեց զարգանալ որպես նավթարդյունաբերության խոշոր կենտրոն ոչ միայն Այսրկովկասի, այլև ամբողջ կայսրության մասշտաբով՝ իր վրա հրավիրելով նաև եվրոպական երկրների ուշադրությունը: Կարճ ժամանակամիջոցում մեծ չափերի հասած նավթարտահանումը որոշակի փոխեց տնտեսական հաշվեկշիռը: Տարածաշրջանի բազմաբնույթ զարգացմանը խթանում էր նաև արդյունաբերական, բնակելի և հասարակական շենքերի լայնածավալ շինարարությունը, որի շնորհիվ քաղաքը ընդարձակվեց և բազմամարդ դարձավ: 1851 թ. 7431 (3755 ար., 3676 իգ.) բնակիչ ունեցող Բաքվում հայերի թիվը հասնում էր 405-ի (283 ար., 122 իգ.)[1116]: 1855 թ. քաղաքն ունեցել է 97 հայկական տուն[1117]: Տրապիզոնում Իտալիայի հյուպա-

---

[1108] Տե՛ս **Березин И.**, նշվ. աշխ., ч. II, гл. IV (От Кубы до Баку), стр. 39, приложение VI.

[1109] Տե՛ս նույն տեղում, приложение VI.

[1110] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 405:

[1111] Նույն տեղում:

[1112] **Броневский С.**, II, стр. 225, տե՛ս նաև **Маркова О.**, Россия Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, стр. 79, 83.

[1113] Տե՛ս ГССРИ, т. I, стр. 192.

[1114] Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 93:

[1115] Տե՛ս **Автономов-Спасский К.**, Баку, КК на 1852 г., отд. III, стр. 305.

[1116] Տե՛ս նույն տեղում, стр. 307, տե՛ս նաև Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 123:

[1117] Տե՛ս КК на 1856 г., стр. 492.

տոս Կ. Սոլանելու կողմից 1881 թ. գրված «Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի» ուսումնասիրության մեջ ասվում է, որ 1850-ական թվականների վերջերին Բաքվում արդեն կար 130 հայապատկան տուն[1118]: 1858 թ. նոյեմբերի 21-22-ին Բաքու այցելած ֆրանսիացի հանրահայտ գրող Հայր Ալեքսանդր Դյուման հիշատակություն է թողել հայերի կենցաղի, առևտրական գործունեության և հրապարակի աջ մասում գտնվող քրիստոնեական եկեղեցու (տվյալ դեպքում հայկական Սբ. Աստվածածին եկեղեցին) մասին[1119]:

1859 թ. վերջերին նահանգային կենտրոնը Բաքու տեղափոխելը մեծ նշանակություն ունեցավ քաղաքի հետագա բազմակողմանի զարգացման համար: Դառնալով նահանգային քաղաք` ընդերքի հեքիաթային հարստությունների շնորհիվ Բաքուն արագությամբ սկսեց ընդարձակվել ու բարգավաճել: Արագ տեմպերով զարգացում ապրեցին քաղաքաշինությունը և քաղաքային կյանքն ընդհանրապես: Քաղաքի «տները շինվում են տեղական կակուղ քարից,- գրում էր «Արօրը»,- որը այդ պատճառով ճարտարապետական գեղեցիկ ձևեր ընդունելու հնարաւորութիւնն է տալիս»[1120]: Քաղաքի ամենաբանուկ վայրը և քաղաքին շուք հաղորդողը ծովածոցն էր, որը պայտաձև խրվում է քաղաքի մեջ: Այդտեղ էին գտնվում քաղաքային այգին, նահանգապետի տունը, մաքսատունը և «Кавказ и Меркурий» նավային ընկերության նավամատույցը: «Թատրոն» հանդեսը նշում էր, որ «Բագու քաղաքն ունի մի այգի: Աւելի ճիշտ ասած Կասպից ծովի ափին երկար տարածութեան վրա աւազուտ անապատի մէջ երևում է օազիսի նման մի բան, ուր երբ մտնում էք, նկատում էք կանաչ ծառեր, և թփեր և ծաղիկներ: Այդ կանաչած փայտերի տակի հողը ածուխ է, բերած է Լէնքորանից, իսկ ծառերը` զանազան տեղերից»[1121]: 1860 թ. քաղաքն ուներ 2544 տուն` 13300 բնակչով, որից ըստ դավանանքի` հայ առաքելականներ` 589, մահմեդականներ` 11076, ուղղափառներ` 1635[1122]: Շամախիից և գավառներից դեպի Բաքու սկսված արտագաղթի հետևանքով 1861 թ. քաղաքում արդեն կար հայապատկան 689[1123], իսկ 1862-ին` 700 տուն[1124]: Ընդհանուր առմամբ, 1863 թ. քաղաքն ուներ 2264 տուն` 12191 բնակչով (6690 ար., 5501 իգ.)[1125], իսկ 1865 թ.` 3166` 14715 ազգաբնակչությամբ[1126]: Քաղաքն այդ տարիներին ուներ 46 փողոց, 2 կամուրջ և 1 այգի[1127]:

Բաքվում հայ բնակչության ստվարացման հետ մեկտեղ, հայկական ամենահին` Սբ. Աստվածածին եկեղեցուց բացի, անհրաժեշտություն առաջացավ քաղաքի տարբեր հատվածներում նոր եկեղեցիների կառուցումը: Երկրորդ եկեղեցու կառուցման նախաձեռնությունը պատկանում է Շամախու հայոց թեմի առաջնորդ Դանիել վրդ. Շահնազարյանցին: Ստանալով շինարարական աշխատանքներ սկսելու` Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի թույլտվությունը` թեմակալը 1863 թ. հունիսին կատարում է եկեղեցու հիմնարկեքը. «Օրհնեցաւ հիմն եկեղեցւոյս ի ձեռն կառավարչի վիճակիս Շամախւոյ... Դանիէլ Արքեպիսկոպոսի

[1118] Տե՛ս Կաեդանոյ Սոլանելի, Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի, «Բազմավէպ», Վենետիկ, № Խ, 1882, էջ 292:

[1119] Տե՛ս Alexandre Dumas, Voyage au Caucase, Paris, 2002, p. 152, 160, նույնի` Баку и окрестности его: Волчьи ворота и бакинские огни (из путешествия его по Кавказу), в кн.: Природа и люди на Кавказе и за Кавказом..., стр. 278.

[1120] «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թուականին Քրիստոսի, Բաքու, 1893, էջ 26:

[1121] «Թատրոն», Թիֆլիս, 1893, գիրք Ա, դեկտեմբեր, էջ 64-65:

[1122] Տե՛ս ГССРИ, т. I, стр. 191, տե՛ս նաև «Արօր»-ի պատկերազարդ օրացոյց 1894 թ., էջ 23: Հմմտ. Энциклопедический словарь, под ред. проф. **И. Андреевскаго**, т. II^{A}, издатели **Ф. Брокгауз, И. Ефрон**, СПб., 1891, стр. 770.

[1123] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 138:

[1124] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1897, ապրիլի 26, № 48:

[1125] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 100, տե՛ս նաև Статистический сборник, ч. IV. Коммунальное хозяйство, Баку, 1929, стр. 8.

[1126] Տե՛ս СССК, т. I, отд. II, стр. 62, 67.

[1127] Տե՛ս КК на 1856 г., стр. 493.

յամսեանն յունիսի նոյն ամի»[1128]: Նոր եկեղեցին կառուցվում էր «Պարապետ» կոչված հրապարակի մոտ (Կուլսի աշտարակի մերձակայքում)` բաքվեցի բարերար Ջավադ Մելիքյանցի վերակացությամբ, Սբ. Աստվածածին եկեղեցու հասույթներով և թեմի հայության հանգանակած գումարներով[1129]: Եկեղեցու կառուցման աշխատանքներն ավարտվել են Շամախու հայոց թեմի առաջնորդ Անդրեաս արք. Անդրեասյանի (Պոլսեցի, 1869-1874) օրոք, իսկ օծումը տեղի է ունեցել 1869 թ. մայիսի 4-ին` Սբ. Գրիգոր Լուսավորչի անվամբ[1130]. «Օծաւ եկեղեցին հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն հայոց Տ. Տ. Գէորգայ Դ-ի ի 4 մայիսի 1869 ամի, օրհնութեամբ վիճակաւորի թեմիս Անդրէաս արքեպիսկոպոսի առ կայսերութեամբն նոյն արքայի, փոխարքայութեամբ յիշեալ Մեծ Իշխանին և առ նահանգապետութեամբ նորին գերազանցութեան պարոն Միխայէլ Պետրովչի Կուլիբէկեան»[1131]: Սբ. Գրիգոր Լուսավորիչ մեծաշեն եկեղեցին հորինվածքով եռանավ է, ունի կենտրոնագմբեթ դահլիճ, ութանիստ թմբուկ և սրածայր վեղար, արևմտյան կողմից ունեցել է եռահարկ զանգակատուն: Կառուցված է սրբատաշ քարից, հյուսիսային և հարավային մուտքերը երկու կողմից եզերել են բարձրադիր զույգ խաչքարերը[1132]: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցն Բաքվի հայերի համար համարվում էր ազգային այն կառույցը, որի շուրջ հիմնականում կենտրոնանում էին բարեգործական և կրթամշակութային օջախները[1133]:

«Տոմար ընտանեկան» օրացույցի մի տեղեկության համաձայն` 1869 թ. Բաքվում արդեն ապրում էին 891 հայեր[1134]: Բաքու քաղաքի հայ բնակչության ավելացմանը նպաստեց Շամախիում 1872 թ. հունվարի 16-ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժը, որի հետևանքով փրկվածների մի մասը թողեց ավերված քաղաքը և գաղթեց Բաքու. «Շամախին նորից սկսեց դատարկվել: Այդ ժամանակ Բագուն արդէն շատ առաջ էր գնացել իբրև նահանգական ծովափնեայ քաղաք և շամախեցիները, մեծ մասամբ հայեր, այնտեղ գաղթեցին»[1135]: Այդ նույն ժամանակ Բաքվում հանդրվանեց նաև սովի հետևանքով Իրանից տեղահան եղած հայությունը. «1872 թ. մարտ ամիսն էր: Բագուայ փողոցները, երկու եկեղեցիների դռները և Մարդասիրական Ընկերութեան ազատ սենեակները յանկարծ լցուեցան մուրացկան աղքատներով. դրանց մի մասը Պարսկաստանի սաստիկ սովից, և միւս մասը Շամախու աւերիչ գետնաշարժից փախուստ տուող գաղթականներ էին»[1136]: Բաքվում հանդրվանած շամախահայ գաղթականների թիվը կազմում էր մոտ 50 ընտանիք, իսկ իրանահայերինը, որոնք հիմնականում Սալմաստ գավառից էին, ավելի քան 80 ընտանիք[1137]:

Հայ բնակչության թիվը Բաքվում առանձնապես մեծ չափով աճեց XIX դարի 70-80-ական թվականներին և XX դարի սահմանագլխին` նավթային վերելքի արշալույսին` ի հաշիվ Հայաստանի տարբեր շրջաններից տեղափոխվածների: «Մի քանի տարւայ մէջ,- գրում

[1128] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 375:

[1129] Տե՛ս նույն տեղում:

[1130] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4348, թ. 3:

[1131] **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 377:

[1132] Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», հուլիսի 26, 1997, N 69, էջ 1:

[1133] Ավելի հանգամանորեն տե՛ս **Ստեփանյան Գ.**, Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատմության, ԼՀԳ, Երևան, 2009, № 3, էջ 45-53:

[1134] Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 124:

[1135] Տե՛ս Շամախու աղէտը, էջ 13:

[1136] Տե՛ս Պատմութիւն Բագուայ Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1 ը), կազմեց Ա. Գալստեանց, Բագու, 1895, էջ 3:

[1137] Տե՛ս նույն տեղում:

է Ալ. Քալանթարը,- Բաքուն ճանաչել չէր կարելի. սկսեցին գումարներ խաղալ, վաճառականությունը մեծացավ և սկսեց ավելի և ավելի գրավել հարուստ դրամատերերին, և թէ աշխատող, արդիւնաբերող ձեռքեր»[1138]: Եթե հարյուրամյակներ շարունակ հայերի համար Բաքուն մի հարմար վաճառանոց և նավահանգիստ էր, ապա XIX դարի կեսերից հայերը Բաքվում նաև արդյունաբերողներ էին, գործարանատերեր, հանքատերեր և այլն: Համաշխարհային նավթարդյունաբերության հիմնադիրներից մեկը՝ Գ. Կյուլպենկյանը, որը, 1890 թ. Կ. Պոլսից ուղևորվելով Բաքու, նպատակադրվել էր մոտիկից ծանոթանալ Ապշերոնյան թերակղզում ընթացող սև ոսկու արդյունահանման գործին, իր ճամփորդական նոթերում գրել է, որ 1870 թ. Բաքվի ազգաբնակչությունը կազմում էր 12000 մարդ[1139]: Հակված ենք այն կարծիքին, որ այդ թիվը նվազ է ցույց տրված, քանի որ հոսքը դեպի Բաքու արդեն հասնում էր տասնյակ հազարների՝ պայմանավորված նավթարդյունաբերության զարգացմամբ: Առավել հավաստի են Կովկասի վիճակագրական կոմիտեի տվյալները, ըստ դրանց՝ 1870 թ. քաղաքն ուներ 15604 (8950 ար., 6654 իգ.) բնակիչ[1140]:

Բաքու գաղթողների մեջ մեծ թիվ էր կազմում հատկապես գյուղացիությունը: Դա հիմնականում կապված էր XIX դ. 70-ական թվականներին գյուղում դրամատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետ: Ներքաշվելով կապիտալիզմի զարգացման գործընթացի մեջ՝ տնտեսապես քայքայված, հարկերի, պարտքերի ու պարհակների գանձումների բեռից խեղդված, սոցիալական ծանր պայմանների մեջ հայտնված գյուղացիության մի մասը բռնում է գաղթի ճանապարհը ապրուստի միջոցներ հայթայթելու ակնկալությամբ: Բաքուն, Թիֆլիսը, Բաթումը և Կովկասի արդյունաբերական այլ օջախներ, որոնք բանվորական ուժի մեծ կարիք ունեին, դեպի իրենց էին ձգում քայքայված գյուղացիական զանգվածներին: Արտագնացությունը դեպի նշված քաղաքներ պայմանավորված էր Արևելյան Հայաստանի արդյունաբերության թույլ զարգացած լինելու հանգամանքով[1141]: Պանդխտության դիմող հայ գյուղացիությունը գնում էր գլխավորապես Բաքու, ուր արագ տեմպերով զարգանում էր նավթարդյունաբերությունը[1142]: Այսպես՝ 1879 թ. սկզբին «Մշակի» թղթակիցներից «Կասպիացին» (Հովհաննես վրդ. Տեր-Գրիգորյան) նավթի քաղաքի ձգողական ուժի մասին հետևյալն էր գրում. «Նավթի պատճառով Բաքուն դարձել է երկրորդ Կալիֆորնիա, ուր ամեն տեղերից և ազգերից մարդիկ հեղեղի պես են թափվում…: Եկվորների նշանավոր մասը հայեր են, առավելապես Ղարաբաղի, Շամախու և Տաթևի վիճակներից…»[1143]: Գյուղացիության մի հատվածն էլ սոցիալական դրդապատճառներից բացի, արտագնացության էր դիմում՝ իրավազրկությունից և գյուղական իշխանությունների անհամար կամայականություններից դրդված: Ժամանակի մամուլը լի է բազմաթիվ հաղորդումներով տանուտերերի բռնությունների ու կամայականությունների մասին: «Ոմանք գիւղական իշխանութիւնների անիրաւութիւնից և կամայականութիւնից զզուած գլուխ են վեր առել, հեռա-

[1138] Քալանթար Ա., Պանդխտութիւնը մեզանում, «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 11, էջ 1538:
[1139] Տե՛ս Gulbenkian G., La Transcaucasie et la peninsule d'Apcheron: souvenirs de voyage, Paris, 1891, p. 200, նույնի՝ Ապշերոնեան թերակղզին եւ ռուսաց Ճաւրը, «Մուրճ», 1891, № 7-8, էջ 903:
[1140] Տե՛ս ССОК, т. II, стр. 351.
[1141] Տե՛ս Саркисян Г., նշվ. աշխ., стр. 124.
[1142] Տե՛ս Զուրաբյան Ս., Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 25:
[1143] Կասպիացի [Հովհաննես վրդ. Տեր-Գրիգորյան], Նամակ Բագուից «Մշակ», Թիֆլիս, 1879, հունվարի 23, № 8:

ցել ու կորել իրանց տեղից, որովհետև իրաւունք և արդարութիւն պաշտպանելու չափ զօրութիւն չունեն»,- գրում էր «Մշակը»[1144]:

Արևելյան Հայաստանի գյուղերում արտագնացությունը պայմանավորված էր նաև բնակչության աճի հետևանքով առաջացած սակավահողությամբ: «Անդրկովկասում, շատ քիչ բացառութիւններով, տիրում է սակաւահողութիւն: Այդ սակաւահողութիւնը դրդում է գիւղացիների աւելորդ աշխատող ձեռքերին պանդխտելու զանազան կողմեր՝ գործ փնտրելու համար: Այսպէս օրինակ-Ղարաբաղի, Սիսիանի կամ Զանգեզուրի և Շամախու գիւղացիները
թափւում են Բագու»[1145],- գրում էր ազգային գործիչ Գ. Խաժակյանը: Բաքու էր մեկնում հիմ-
նականում Շամախիի, Նուխիի, Գանձակի, Ագուլիսի, Արցախի, Զանգեզուրի, Ալեքսանդրա-
պոլի, Երևանի, Ախալցխայի և հայաբնակ այլ շրջանների հայ երիտասարդությունը[1146]: Սոցիա-
լական առումով նրանց կազմը բազմազան էր, թեև, ինչպես արդեն նշվեց, Բաքու մեկնողների
մեջ հիմնականում գերակշռում էր հողազուրկ գյուղացիությունը. «Եւ գնում էին դէպի Բագու
Արարատեան դաշտից եւ մանաւանդ լեռնոտ եւ սակավահող Ղարաբաղից եւ Զանգեզու-
րից»[1147]:

Արտագնացությունն առաջ էր գալիս նաև վաշխառության հետևանքով, երբ գյուղա-
ցիության ճնշող մեծամասնությունը, չկարողանալով մարել վաշխառուական պարտքերը,
հարկադրված էր դիմելու տարագնացության: «Մշակի» թղթակից «Կասպիացին», անդրա-
դառնալով հայ գյուղացու՝ Բաքու գաղթին, երկրորդական պատճառներից զատ, հիմնակա-
նում կանգ է առնում սոցիալ-տնտեսական խնդրի վրա՝ գրելով. «Սրանց ամենափոքր մասը
միայն պատճառ ունի օտարութեան գալու: Ոմանք հօրից մնացած և կամ իրենց վեր առած
պարտք ունեն, որ ահեղ վիշապի պես բարդ տոկոսով աճում է օրըստօրէ. պետք է փող աշխա-
տեն՝ վճարեն: Ոմանք գյուղումն ապրելու ո՛չ մի հնար չունեն - ո՛չ հող, ո՛չ կալված, ո՛չ
գրաստներ և ո՛չ էլ անասուններ… հարկերը պահանջում են անխնա, իսկ այնտեղ մշակութա-
յին գործեր չկան…»[1148]: Աղքատացած գյուղացիների հետ մի շարք դեպքերում արտագնա-
ցության էին մեկնում նաև փոքրիշատե ապահովված գյուղացիները: Նրանք մեկնում էին
դրամ վաստակելու և իրենց տնտեսություններն ավելի բարեկարգելու կամ առևտրական գոր-
ծունեություն ծավալելու նպատակով. «Հարուստ գիւղացիները շարունակ գաղթում են, մեծ
մասը Բագու և քիչ մասը Շամախի ու երկաթուղու կայարանները (Ուջար և Հաջի-Կաբուլ -
Գ. Ս.) արհեստով ու վաճառականութեամբ պարապելու»[1149]:

Վերը նշվածից բացի, գյուղի երիտասարդության մի հատվածն էլ Բաքու էր մեկնում՝ ոչ թե վերոհիշյալ պատճառներից ելնելով, այլ ժամանակի պահանջից դրդված: «Անդրկովկասի քաղաքներում և գյուղերում,- գրում էր «Մշակի» թղթակից «Կասպիացին»,- Բագւի անունը մի կախարդական զօրութիւն է ստացել: Բագու բառը լսելով՝ պատրաստած սեղան կամ ոսկու կոյտ են հասկանում, որից իւրաքանչիւր ոք եկածին պես անարգելք կարող է ցանկացած բեռը կապել ու գնալ…»[1150]: Հայաստանից երիտասարդ ուժի արտահոսքն առավել նկատելի է եղել

[1144] Նույն տեղում:
[1145] Խաժակնեան Գ., Նաւթաշրջանի բանւորները (IV), «Մուրճ», Թիֆլիս, 1893, № 4, էջ 585-586:
[1146] Նույն տեղում, էջ 586, տե՛ս նաև «Տարազ», Թիֆլիս, 1893, մարտի 31, № 12, էջ 178:
[1147] Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, հուն-
վար, № 3, էջ 64:
[1148] Կասպիացի [Հովհաննես վրդ. Տեր-Գրիգորյան], Նամակ Բագուից «Մշակ», Թիֆլիս, 1879, հունվարի 23, № 8:
[1149] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 31:
[1150] Կասպիացի [Հովհաննես վրդ. Տեր-Գրիգորյան], Նամակ Բագուից «Մշակ», Թիֆլիս, 1879, հունվարի 23, № 8:

Զանգեզուրից և Արցախից[1151]*: Խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ Արցախից և Նախիջևանից Բաքու մեկնողների մեջ աշխատանք որոնելու նպատակով եղել են ոչ քիչ թվով անչափահաս տղաներ, որոնք գերազանցապես ընդգրկվում էին տնային տարբնույթ ծառայության մեջ: «Նոր-դարն» այդ կապակցությամբ գրում էր. «Վերջին ժամանակներս Ղարաբաղի և Հին-Նախիջևանի գաւառներից այնքան պանդուխտներ են եկած այդտեղ, որոնց թիւ և համար չկայ. եկել են առաւելապես իրենց գիւղական ուսումնարանը թողած 10-12 տարեկան փոքր տղաներ»*[1152]*: Դեպի Բաքու զանգվածային արտագնացության հոսքին նպաստեց նաև հաղորդակցության միջոցների բարեկարգումը, մասնավորապես 1883 թ. շահագործման հանձնված Թիֆլիս-Բաքու երկաթգիծը: Ղազար քհն. Հովսեփյանցի վկայությամբ՝ «...Բաքու-Թիֆլիզեան երկաթուղու գիծը բացուելուն պէս Ղարաբաղի, Շամախու, Թիֆլիզի, Գանձակի, Երևանի և ուրիշ տեղերի գիւղացիք վազեցին Բաղու, չուստով հարստանալու և միլիոնների տեր դառնալու պատրանքով»*[1153]*: Զանգեզուրից «Նոր-դարին» հղած Ս. Բահաթրյանի՝ պանդխտությանը վերաբերող վիճակագրական բնույթի մի թղթակցության տվյալներով՝ միայն 1884 թ. 10 ամիսների ընթացքում Զանգեզուրի գավառի տարբեր գյուղերից Բաքու արտագնացության էր մեկնել 2443 մարդ*[1154]*: Ըստ գյուղերի՝ պատկերը հետևյալն էր.*

Աղյուսակ № 9

Բնակավայր	Գաղթածների թիվը	Խնձորեսկ	392
Սիսիանի շրջան		Խոզնավար	37
Այիրու (այժմ՝ Սալվարդ)	60	Խոտ	131
Ախլաթյան	142	Կալադարասու (հնում՝ Բերդաձոր)[1155]	29
Աղբենդ (այժմ՝ Աշոտավան)	43	Կյորու (հետագայում՝ Ձորաշեն)[1156]	45
Անգեղակոթ	59	Կոռնիձոր	72
Բալաք	35	Հալիձոր	32
Բռունիս	17	Շինուհայր	92
Բռնակոթ	88	Սվարանց	14
Դարբաս	29	Տաթև	103
Թազագյուղ (այժմ՝ Թասիկ)	41	Տանձատափ	10
Լոր	29	Տեղ	26
Ղարաքիլիսա (հնում՝ Սյունիք, Սյունի, այժմ՝ Սիսիան)[1157]	86	Քարահունջ	52
Մազրա (հնում՝ Մուցք, այժմ՝ Բարձրավան)	48	Քարաշեն	38
Շաղատ	110	Կապանի շրջան	
		Արծվանիկ	18
Տոլորս	71	Նորաշենիկ	59
Ուզ (այժմ՝ Ույծ)	111	Սևաքար	28
Գորիսի շրջան		Մեղրու շրջան	
Ալիղուլիշեն (հետագայում՝ Ազատաշեն)	15	Մեղրի	64
Գորիս	167	Շվանիձոր	19
Երիցաթումբ (այժմ՝ Բարձրավան)	31	Ընդամենը	2443

1151 Տե՛ս Լալաեան Ե., Զանգեզուր գաւառ, «Ազգագրական հանդէս», Դ գիրք, Թիֆլիս, 1899, էջ 54, տե՛ս նաև Շիրին Ա., Սիսիան (Ուսումնասիրութեան մի փորձ), Բագու, 1912, էջ 20, տե՛ս նաև Մելիք-Շահնազարեանց Ս., Հայ գիւղացու սեւ օրր, Թիֆլիս, 1890, տե՛ս նաև **Թորովենց Վ.**, Բագու, գիրք Ա, մաս Ա, Երևան, 1930:
Թիֆլիս, 1890, դեկտեմբերի 11, № 196:
1152 Բագուից, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, դեկտեմբերի 11, № 196:
1152 Բագուից, «Նոր-դար», Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին, էջ 26:

1153 **Ղազար քհյ Յովսէփեան**, Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին, էջ 26:
1154 Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1885, օգոստոսի 17, № 139: Գյուղերի հաջորդականությունը տրված է ըստ ներկայիս վարչական շրջանների՝ այբբենական կարգով: Փակագծում ավելացրել ենք նաև հին և նոր անվանումները:
1155 Կալադարասուն (Ղարադշլաղ) Մեծ Շեն գյուղն է, պատմական Բերդաձոր բնակավայրը (տե՛ս **Սարգսյան Ս.**, Արցախ: Պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996, էջ 69): Այն գտնվում է Արցախ աշխարհի Բերդաձոր գավառում՝ Քիրս լեռան արևմտյան փեշին: Բերդաձոր գյուղախումբը բաղկացած է եղել մի քանի մեծ ու փոքր գյուղերից: Հետագայում մտել է Սյունյաց աշխարհի Աղահեջք, իսկ ավելի ուշ՝ Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի մեջ (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 1, Երևան, 1986, էջ 665, տե՛ս նաև հ. 2, Երևան, 1988, էջ 888):
1156 Ձորաշեն, Ազատաշեն և Այգեձոր գյուղերի միավորմամբ 1970-1974 թթ. կազմավորվել է Հարթաշենը գյուղը (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 386):
ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 40, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 125, տե՛ս նաև Հասրաթյան Մ., Պատմա-
1157 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1985, էջ 129:
հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 129:

Աղյուսակից հստակ երևում է, որ Զանգեզուրի գավառից Բաքու արտագնա աշխատանքի մեկնածների շրջանում մեծ թիվ էին կազմում հատկապես Գորիս գյուղաքաղաքից, Խնձորեսկ, Ախլաթյան, Խոտ, Ույծ (Ուզ), ապա Տաթև[1163] *գյուղերից գաղթածները: Ույծից «Հորիզոնի» թղթակից Հակոբ Տեր-Պողոսյանը (Տերունի), անդրադառնալով Բաքու արտագնա աշխատանքի մեկնելու պատճառներին, գրում էր. «Միանգամայն զուրկ հողից, եղածի էլ մեծ մասը միանգամայն անպէտք ու անպտղատու, տասնեակ տարիներից ի վեր է, որ այդ հողը դարել է իրեն ապաստանած գիւղացիներին տարեայ հացը տալուց և այդ ժամանակից ի վեր ամեն կողմից նեղւած Ուզ գիւղացին միակ միջոցին է դիմում սովամահութիւնից ազատւելու համար. ուղարկում է դէպի Բագու իր բոլոր կարող և ընդունակ ույժերը, տանը թողնելով կանանց, ծերերին և մանուկներին»*[1164]*: Հարկ է նշել, որ Ս. Բահաթրյանի բերած ցուցակը լիարժեք չէ, որից դուրս են մնացել մի շարք գյուղեր*[1165]*:*

Արցախից Բաքու պանդխտության մեկնող երիտասարդությունը հիմնականում եղել է Վարանդա գավառից: Ե. Լալայանը վկայում է. «Պանդխտութիւնը, որ սաստիկ տարածված է գավառիս (Վարանդայի - Գ. Ս.) բնակչության մեջ: Գլխավորապես պանդխտում են Բաքու, Ղզլար, Պետրովսկ և Անդրկասպյան երկրները: Վարանդացուն տակավին նոր ծանոթ այդ երկրները, մանավանդ Բաքուն՝ յուր նավթահորերով, դրավել և գերել է»[1166]*:*

1880-ական թվականներին զգալիորեն աճում է նաև Երևանի նահանգից արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Պետական գյուղացիների տնտեսական դրությունն ուսումնասիրողները 1884-1886 թթ. արձանագրում էին, որ Նոր Բայազետի գավառի 31 գյուղերից արտագնա աշխատանքի են մեկնել 6400 տղամարդուց 2230-ը, նույն գավառի 77 գյուղերի 23 791 տղամարդուց՝ 5065-ը: Շարուր-Դարալագյազի գավառում արտագնացության էր դիմում աշխատունակ տղամարդկանց 10%-ը, Նախիջևանի Գողթան գավառի Տանակերտ գյուղում՝ 4/5-ը և այլն[1167]*: Զանգեզուրի, Երևանի և Ղարաբաղի շրջանների հայ գյուղացիների հետ մեկտեղ Բաքու էին գաղթում նաև Գյոքչա, Շամախի և Ղուբա գավառների հայկական գյուղերի բնակիչները: Ն. Աբելյանի հաշվարկներով XIX դարի 80-ական թվականներին Գյոքչայի գավառից Բաքվում հիմնական բնակություն էր հաստատել 60 տուն՝ 300 հոգի (175 ար., 125 իգ.), իսկ Շամախիի գավառից՝ 100 տուն՝ 430 հոգի (230 ար., 200 իգ.)*[1168]*: Գյոքչայի գավառից ժամանակավոր բնակություն էին հաստատել 532 հոգի, Շամախիի գավառից՝ 180 հոգի*[1169]*: Բերված թվերը, կապված ժողովրդի պարբերական տեղաշարժերի հետ, փոփոխություն են կրել:*

1163 Տաթև գյուղի և Բաքվում հաստատված տաթևացիների մասին հանգամանալից տե՛ս **Григоров Н.**, Село Татев (СМОМПК, вып. XIII, Тифлис, 1892, стр. 59-125).
1164 «Հորիզոն», Թիֆլիս, 1914, փետրվարի 25, № 41:
1165 Օրինակ՝ ցուցակում նշված չէ Սիսիանի շրջանի Գետաթաղ գյուղը, որտեղից, XIX դարի 80-ական թվականներից սկսած, Բաքու արտագնա աշխատանքի էին մեկնել մեծ թվով երիտասարդներ: Գետաթաղի պատմության հեղինակ Ա. Հովսեփյանը այդ մասին գրում է. «Այդ ժամանակաշրջանում (նկատի ունի XIX դարի 70-80-ական թվականները - Գ. Ս.) Գետաթաղում չկար մի ընտանիք, որից գոնե մի տղամարդ չգնար Բաքու փող վաստակելու: Գնացողների որոշ մասը մնում էր Բաքվում մի քանի տարի և գյուղ էր գալիս ժամանակ առ ժամանակ: Աստիճանաբար սրանց մի մասը հիմնավորվում էր քաղաքում, տեղափոխում իր ընտանիքը, խզում կապը գյուղի հետ» (**Հովսեփյան Ա.**, Գետաթաղ գյուղի և գետաթաղցիների պատմությունից (ձեռագրի իրավունքով), Բաքու, 1967, էջ 52: Ձեռագիրը պահվում է մեր անձնական արխիվում:
1166 Լալայան Ե., Երկեր, հ. 2, Արցախ, Երևան, 1988, էջ 136:
1167 Տե՛ս Համբարյան Ա., Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության մասին, էջ 25:
1168 Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 191.
1169 Տե՛ս **Стопани А.**, նշվ. աշխ., стр. 5.

Այսպես՝ Գյոքչա գավառի բաքվաբնակ հայ գյուղացիների հայրենակցական միության նախագահ Մ. Մայիլյանը Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին հղած 1919 թ. օգոստոսի 19-ի գրությամբ տեղեկացնում էր, որ տարբեր տարիների ընթացքում գավառից պանդխտել է ոչ ավելի, քան 1500 մարդ[1165]:

Հետազոտությունները վկայում են, որ Գյոքչա և Շամախի գավառների հայ գյուղացիներից շատերը Բաքու էին մեկնում ոչ թե քաղաքային կյանք վարելու և այնտեղ հիմնավորվելու մտադրությամբ, այլ ժամանակավոր աշխատանք գտնելու նպատակով: Բաքու արտագնա աշխատանքի մեկնող երիտասարդները գնում էին սեպտեմբերից և վերադառնում գարնանը՝ հաջորդ տարվա դաշտային աշխատանքներին մասնակցելու համար[1166]: Այդ իսկ պատճառով նրանց մեծ մասը պահպանում էր կապը գյուղի հետ[1167]: «Շամախու, Գեոգչայի, Շուշւայ, Շարոպանի (Իմերեթիա) և այլ գաւառների գիւղացիք,- գրում է Ալ. Քալանթարը,- թէպէտ գնում են և երկարատև պանդխտութեան, բայց սոքա մեծ մասամբ պատկանում են կարճատև պանդուխտների խմբին, իսկ հակառակը՝ Զանգեզուրի, Դարալագեազի, Նախիջևանի, Հաճէի (Իմերեթիա) և այլ գաւառների գիւղացիք,- սոքա գլխաւորապէս պատկանում են շատ տարիներով մնացողներին...»[1168]: Փաստերը ցույց են տալիս, որ արտագնա աշխատանքի մեկնած գյուղացիությունը գյուղի հետ մշտապես կապ պահպանելու, գյուղերում բնակվող իրենց հայրենակիցներին նյութական օգնություն ցույց տալու նպատակով ստեղծել էին մի շարք հայրենակցական և երիտասարդական միություններ: Նմանօրինակ միություններ էին ստեղծել գյոքչայեցիները, շամախեցիները, նուխեցիները, արեշցիները, արցախցիները, զանգեզուրցիները[1169], ագուլիսցիները, վասպուրականցիները, մշեցիները, սասունցիները և այլք[1170]: «Վերջին տարիներս,- գրում էր «Անիւ» շաբաթաթերթը,- Բագւում բնակւող գիւղացիական երիտասարդութեան մէջ մի նոր գործունէութեան ասպարէզ է բացւել: Գիւղից դուրս, աշխատաւոր գիւղացիութեան շրջանակից հեռու կազմակերպւում են «միութիւններ» և նպատակ դնում օգնել գիւղացիներին՝ բարձրացնելու նրանց նիւթական և մտաւոր-բարոյական մակարդակը»[1171]: Միայն XX դարասկզբին Բաքվում գործում էին արցախահայերի ավելի քան 30 հայրենակցական միություններ[1172]: Բաքվի նավթարդյունաբերության ոլորտում երկար տարիներ պաշտոնավարած Ալեքսանդր Ստոպանիի տվյալներով՝ գյուղի հետ կապ չէր պահպանում նավթարդյունաբերության 16,1%-ը[1173]: Այսպիսով՝ Բաքվում հաստատված հայության երրորդ հատվածը ոչ թե քաղաքացիներից և վաճառականներից հետո զբաղեցնում էր գյուղացիությունը, որը կազմում էր քաղաքի ամենաբազմամարդ շերտը:

[1165] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 47:
[1166] Տե՛ս **Мелик-Шахназаров Е.**, Селение Арцваник Зангезурскаго уезда Елисаветпольской губернии (СМОМПК, вып. XXV, Тифлис, 1898, отд. II, стр. 38).
[1167] Տե՛ս նույն տեղում:
[1168] **Քալանթար Ա.**, Պանդխտութիւնը մեզանում, «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 10, էջ 1543:
[1169] Բաքվում հաստատված զանգեզուրցիներից հայրենակցական միություններ էին ստեղծել գրեթե բոլոր գյուղերի ներկա-
յացուցիչները: Ինչպես օրինակ՝ ախլաթյանցիները, շաղատեցիները, ույծեցիները, գետաթաղցիները, խնձորեսկցիները և
այլն (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1901, հունիսի 22, № 134, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1908, ապրիլի 25, № 88):
[1170] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 106, թ. 14, տե՛ս նաև ֆ. 245, ց. 1, գ. 7, թ. 3:
[1171] «Անիւ», Բաքու, ապրիլի 6, 1908, № 6, էջ 15:
[1172] Տե՛ս «Վտակ», Թիֆլիս, 1908, մայիսի 8, № 93:
[1173] Տե՛ս **Стопани А.**, նշվ. աշխ., стр. 6.

*Հայաստանի տարբեր շրջաններից բացի, 1840-ական թվականներից սկսած՝ կարիքից
դրդված դեպի Բաքու պանդխտության էին դիմում նաև Իրանի Ատրպատական նահանգի
տարբեր գավառների հայ գյուղացիները, որոնցից շատ քչերն էին հետագայում վերադառնում
տուն: «Մշակը» անդրադառնալով Ատրպատականի հայերի՝ պանդխտության մեկնելու դրդա-
պատճառներին, գրում էր. «Ապրելով խրաւազուրկ պայմաններում, կիսաճորտ դրութեան մէջ,
անկարող լինելով զարգանալ տնտեսապէս և կուլտուրապէս, հայ գիւղացիներն իւրաքանչիւր
տարի մեծ քանակութեամբ գաղթում են Կովկաս գլխաւորապէս Բագու, աշխատելու համար
գործարաններում: Գնացողներից շատ քչերն են վերադառնում, իսկ վերադարձողներն էլ կամ
ծեր են, կամ անբուժելի հիւանդներ: Եւ շնորհիւ գոյութիւն ունեցող իրաւական և տնտեսական
պայմանների, որոնց հետևանք է արտագաղթը, Ատրպատականի հայութիւնը չի աճում»[1174]:
Եթե Մուժամբարի հայերը պանդխտության էին դիմում Թիֆլիս և Գանձակ, ապա ղարադա-
ղահայերը հիմնականում մեկնում էին Բաքու, ուր զբաղվում էին ներկարարությամբ և հացթ-
խությամբ[1175]: Ըստ Ե. Ֆրանգյանի՝ «Տարեկան մօտաւորապէս 30,000 հոգի պանդխտում են
գլխաւորապէս Բագու, Շուշի, Թիֆլիս, Բաթում... և այլն: Բացառութիւնների շարքում պէտք
ընդունել այն հայերին, որոնք մէկ կամ երկու անգամ գնացած չլինեն Ռուսաստան»[1176]:
Հայկական գյուղերից արտագնա աշխատանքի մեկնողները Բաքվում գերազանցապես
ընդգրկվում էին նավթարդյունաբերության ոլորտում[1177], զբաղվում էին նաև կոշկակարութ-
յամբ, դերձակությամբ, դարբնությամբ, հյուսնությամբ և այլ արհեստներով[1178]: «Մշակի»՝
Բաքվի թղթակիցն, անդրադառնալով Բաքու արտագնա աշխատանքի մեկնած գյուղացու
դրությանը, գրում էր. «Ամենից շատ եկողները անարվեստ և անխելք գյուղացիք են, որոնք
թե քաղաքումը և թե դուրսը բեռնակրի, գիշերապահի, մշակի պաշտոն են վարում և այլ ամե-
նահասարակ գործեր կատարում չափավոր վարձով»[1179]:
Բաքվում հաստատված պանդուխտ հայ մշակները բնակություն հաստատեցին ոչ միայն
քաղաքի արվարձանային թաղերում, այլև մոտակա Սաբունչի, Մաշթաղա, Բուզովնա, Շաղան,
Մարդաքյանդ և Բիբի-Հեյբաթ գյուղերում[1180], որոնք 1870-ական թվականների սկզբներին
արդեն բազմամարդ էին: Այդ գյուղերը մտնում էին քաղաքից հյուսիս-արևելք՝ մոտ 20 կմ հե-
ռավորության վրա գտնվող Բալախանի անունով նավթագործական շրջանի մեջ[1181]: «Նոր-դա-
րի»՝ Բաքվի թղթակից Միք. Ղալաբեկյանը «Բալախանի» վերտառությամբ հոդվածաշարում
մռայլ գույներով է նկարագրում նավթային այդ շրջանը. «Մտնելով Բալախանի, անշուշտ քեզ
թաղուած կկարծէիր մի տարօրինակ գերեզմանատան մէջ, որտեղ միայն գերեզմանաքարերի
փոխարէն քառակուսի վիշկաններն են գետնից դէպ վեր երկինք ցցուած»[1182]: Առավել մարդա-*

[1174] «Մշակ», Թիֆլիս, 1916, օգոստոսի 20, № 184:
[1175] Տե՛ս **Տէմիրճեան Վ.**, Դիւան Ատրպատականի հայոց պատմութեան, հ. Ա, Պէյրութ, 1980, էջ 191-192, տե՛ս նաև Գորո-
յեան Ն., նշվ. աշխ., էջ 149:
[1176] **Ֆրանգեան Ե.**, նշվ. աշխ., էջ 197:
[1177] Տե՛ս **Стопани А.**, նշվ. աշխ., стр. 5.
[1178] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 191.
[1179] «Մշակ», Թիֆլիս, 1879, հունվարի 23, № 8:
[1180] **Շիրվանզադե Ալ.**, Կյանքի բովից, էջ 77:
[1181] Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 10-11, էջ 1306:
[1182] **Ղալաբէգեան Մ.**, Բալախանի, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, հուլիսի 7, № 94: Հեղինակի «Բալախանի» հոդվածաշարը
տե՛ս նաև հուլիսի 11, № 95, հուլիսի 12, № 96, հուլիսի 13, № 97, հուլիսի 18, № 100:

չատ էր հատկապես Մաշթաղան, որտեղ տների թիվն անցնում էր 1000-ից[1183]: Աստիճանաբար սկսեց ձևավորվել նաև գործարանային շրջանը, որի հետևանքով Բաքվի ամբողջ մթնոլորտը լցվեց նավթի հոտով ու ծխով: Մտահոգ բնակչության առողջության խնդրով՝ կառավարությունը նահանգապետ Վ. Ստարոսելսկու առաջարկությամբ 1873 թ. հատուկ տեղ էր հատկացրել գործարանային շրջանի համար, որն իր գործունեության առանձնահատկությունների պատճառով կոչվեց «Սև քաղաք»[1184]: Ալ. Շիրվանզադեն իր հուշերում թողել է «Սև քաղաքի» ուշագրավ նկարագրությունը. «Սև Քաղաք անվանվում է այստեղ նավթային գործարանների խումբը, որ սփռված է մոտավորապես վեց քառակուսի վերստաչափ տարածության վրա, հեռվից մարդու աչքին ներկայացնում է մառախուղով պատած մի փոքրիկ քաղաք, որը սև մականունը կրում է այն պատճառով, որ այստեղ ամենայն բան սև է՝ սկսած անշունչ առարկաներից մինչև տնային կենդանիներն ու մարդը»[1185]: Արդեն վեց ամիս անց «Սև քաղաքում» հիմնադրվել և գործում էր 80 գործարան[1186]: «Սև քաղաքից» ոչ այնքան հեռու՝ 4 կմ հեռավորության վրա, գտնվում էր արտադրական և բնակելի շրջանը՝ «Սպիտակ քաղաքը»[1187]: «Սև» և «Սպիտակ» քաղաքների միջև երկաթուղային կապը հաստատվեց 1880 թ., երբ կառուցվեց Բաքու-Սուրախանի-Սաբունչի երկաթուղագիծը (33 կմ): 1873 թ. «Բնակավայրերի ցուցակների» համաձայն՝ քաղաքն ուներ 3516 տուն՝ 15 105 (8627 ար., 6478 իգ.) ազգաբնակչություն, որից հայ 747 (396 ար., 351 իգ.)[1188]՝ կազմելով ամբողջ բնակչության 4,9%-ը: XIX դարի 70-80-ական թթ., շարունակվող ներգաղթի պայմաններում Բաքվի ազգաբնակչության թիվն հիմնականում ավելանում էր մեխանիկական աճի հաշվին: 1883 թ. դրությամբ քաղաքի ազգաբնակչության թիվը, կտրուկ աճելով, հասնում էր 50000-ի[1189]: 1886 թ. «Ընտանեկան ցուցակների» տվյալներով՝ 86 611 (54823 ար., 31768 իգ.) ազգաբնակչության մեջ հայերի թիվն արդեն հասնում էր 24490-ի (17.483 ար. 7007 իգ.)՝ կազմելով ամբողջ բնակչության 28,3%-ը[1190]: 1873 թ. և 1886 թ. տվյալների համադրումից պարզվում է, որ շուրջ 13 տարում Բաքվի բնակիչների թիվն ավելացել էր 71506-ով: Այդ թվում հայերի թվաքանակն ավելացել էր 23743 մարդով:

Շնորհիվ արդյունաբերության բազմաբնույթ ճյուղերի համընդհանուր զարգացման՝ XIX դարի երկրորդ կեսից և հատկապես դարավերջին Բաքուն արդեն առևտրաարդյունաբերական միջազգային խոշոր քաղաք էր, ուր կարելի էր հանդիպել ամեն ազգի ներկայացուցիչների: Ալ. Շիրվանզադեն, 1885 թ. «Արձագանք» շաբաթաթերթում տպագրած իր «Բաքու» ակնարկաշարում պատմելով Բաքվի մեծ վերելքի մասին, գրել է. «Ոչ միայն Կովկասում, այլև Ռուսաստանի մէջ ներկայումս Բագու քաղաքը վայելում է մի ընդհանուր հռչակ, որը հազիւ

1183 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, № 37:
1184 «Նոր-դար», Թիֆլիս, 1886, հոկտեմբերի 29, № 183, տե՛ս նաև Фатуллаев Մ., նշվ. աշխ., стр. 39.
1185 Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից, էջ 78:
1186 Տե՛ս Թոփչեան Ե., Նաւթային արդիւնաբերութիւնը Կովկասում (Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1904 թ., Տեղեկատու, վիճակագրական, առողջապահական, գրականական, պատմական, գիտական, գեղարուեստական եւ այլ յաւելուածներով, Թիֆլիս, 1903, էջ 200):
1187 «Տարազ», Թիֆլիս, 1891, ապրիլ 7, № 13, տե՛ս նաև Արասխանեանց Ա., Բաքւայ նավթաշրջանից (Միստեմական տեղեկութիւններ), «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 10-11, էջ 902, տե՛ս նաև **Саванерская Т., Швидковский Д., Петров Ф.**, История градостроительного искусства, Москва, 1989, стр. 306.
1188 Տե՛ս СНМ-1873, տե՛ս նաև ССОК, т. V.
1189 Տե՛ս **Gulbenkian G.**, նշվ. աշխ., p. 200, նույնի՝ Այշերոնեան թերակղզին եւ ռուսաց նաւրը, «Մուրճ», 1891, № 7-8, էջ 903:
1190 Տե՛ս ССДНЗКИПС-1886.

թէ երբ և լցէ վիճակուած է եղել վայելելու Կովկասի մի ուրիշ քաղաքին: Այդ փոքրիկ ծովեզրեայ աննշան աւանը, որը մի քառասուն տարի առաջ հազիւ իւր մէջ պարունակել է մի քանի հարիւր տուն բնակիչ, այսօր ներկայացնում է Կովկասում մի կենտրոն, ուր ուղղուած է տնտեսական աշխարհի հայացքը: Օր ըստ օրէ տնտեսապէս զարգանալով, համաշխարհային քարտէզի վերայ Բագուն արագութեամբ սկսում է վայելել առաջնակարգ քաղաքի տեղը: Ցիբաւի, ով որ քառասունական թուականներին տեսել է այդ քաղաքը, որ այդ ժամանակ յայտնի է եղել նորանով միայն, որ ծառայել է իբրև աքսորատեղի Անդրկովկասի զանազան կողմերի յանցաւորների համար, այսօր չէ կարողանում չը զարմանալ, տեսնելով այդ ժամանակուայ գիւղաքաղաքի տեղ մի նշանավոր նահանգական քաղաք յիսուն հազար բնակիչներով»[1191]: 1887 թ. տվյալների համաձայն՝ քաղաքի ազգաբնակչության թիվը կազմում էր 64000[1192]: Բաքու քաղաքի՝ 1889 թ. էթնոժողովրդագրության վերաբերյալ ուշագրավ տվյալներ է պարունակում Թիֆլիսում հրատարակված «Բաքուն և նրա շրջակայքը» գրքույկը: Քաղաքի ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում էր 92600, որից, ըստ դավանանքի, շիա մահմեդականները՝ 39508 (գլխավորապես թաթեր), հայերը՝ 25897, ռուսները՝ 22693 (դրանց մեջ աննշան թիվ են կազմում վրացիները), ռուս մոլոկանները և այլ աղանդավորներ (պրիգուն, դուխոբոր, հնածես, ներքինի և այլն)՝ 970, կաթոլիկները՝ 1211, լյութերականները՝ 1919, հրեաները՝ 402[1193]: Ընդ որում, գրքույկում նշված է, որ շիա մահմեդականների գերակշռող մեծամասնությունը իրանական ծագում ունեցող թաթեր են՝ կազմելով ամբողջ բնակչության $^3/_4$-ը և խոսում են ոչ թե թյուրքերեն, այլ նոր պարսկերեն, իսկ $^1/_4$-ը թաթարներն են: Այսինքն՝ 39508 շիա մահմեդականներից թաթեր էին 29631-ը, իսկ 9877-ն ունեին թյուրքական ծագում: Եթե նկատի ունենանք գրքույկում նշված այն փաստը, որ թաթարների մի մասն էլ «մինչև այժմ իրենց անվանում են մողալներ, այն է՝ մոնղոլներ», ապա 1889 թ. ներկայիս Ադրբեջանի մայրաքաղաքում բնակվում էր մոտ 7000 կովկասյան թաթար, որոնք կազմում էին (92600) բնակչության 7-8 %-ը[1194]: Այստեղից հետևում է, որ XIX դ. 80-ական թվականների վերջերին Բաքվում թաթերից հետո երկրորդ տեղը զբաղեցնում էին հայերը: Վերը հիշատակված գրքույկի տվյալներով՝ կովկասյան թաթարները Բաքվում ապրում էին գլխավորապես քաղաքի հին հատվածում, բերդ-ամրոցի շրջակայքում և Չեմբերիքենդում[1195]:

Բաքու քաղաքի ժողովրդագրական վիճակի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է պարունակում ոստիկանական ծառայության կողմից բուն քաղաքում և արդյունաբերական գործարանային շրջանում ըստ էթնոդավանական և սեռատարիքային պատկանելության 1890 թ. անցկացված վիճակագրությունը[1196], որն ուներ հետևյալ պատկերը[1197].

1191 Ա. Մ. [Ալեքսանդր Մովսիսյան], Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1885, հուլիսի 28, (1) № 4, էջ 52:
1192 Տե՛ս Кавказ: Справочная книга, сост. старожилом, Тифлис, 1887, стр. 27.
1193 Տե՛ս Баку и его окрестности (приложение к справочной книге старожила «Кавказ»-№ 4), Тифлис, 1891, стр. 63.
1194 Տե՛ս նույն տեղում, стр. 64-65:
1195 Տե՛ս նույն տեղում, стр. 68.
1196 Էթնոդավանական խմբերի հաջորդականությունը տրված է ըստ նրանց թվաքանակի նվազման սկզբունքի:
1197 Տե՛ս Բագուից, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, դեկտեմբերի 14, № 199:

Աղյուսակ №10

Բուն քաղաք	Չափահաս		Անչափահաս		Բնակչ. ընդ. թիվը
	ար.	իգ.	ար.	իգ.	
Մահմեդական	13150	13135	8523	9881	44689
Հայադավան (առաքելական)	10346	9035	4384	3842	27607
Հունադավան (օրթոդոքս)	8426	7122	4060	4069	23677
Մոլոկան	606	673	563	589	2431
Լյութերական	645	605	372	410	2032
Կաթոլիկ [1198]	602	445	275	278	1600
Հրեա	336	263	253	280	895
Պրիգուն[1199]	35	48	35	44	245
Բապտիստ[1200]	23	27	10	12	72
Ներքինի	23/25	-	-	-	48
Ընդամենը	34222	31377	18475	19424	103296

Աղյուսակում բերված թվերից երևում է, որ բուն քաղաքի 103296 բնակչությունից հայերի թիվը կազմում էր 27607:

Աղյուսակ № 11

«Սև» քաղաք	Չափահաս		Անչափահաս		Բնակչ. ընդ. թիվը
	ար.	իգ.	ար.	իգ.	
Հունադավան (օրթոդոքս)	1392	833	415	283	2923
Հայադավան (առաքելական)	1035	98	41	37	1211
Մահմեդական	1027	7	18	5	1057
Լյութերական	137	134	53	69	393
Մոլոկան	57	38	18	14	127
Պրիգուն	20	18	15	19	72
Կաթոլիկ	33	10	5	5	53
Հրեա	28	12	4	6	50
Ընդամենը	3909	1150	569	438	5886

Աղյուսակում ներկայացված թվերը վկայում են, որ արդյունաբերական-գործարանային շրջաններում 5886 բնակչությունից հայերի թիվը կազմում էր 1211: Այսպիսով՝ «Սև» և «Սպիտակ» քաղաքների 109182 բնակիչներից հայեր էին 28818-ը՝ կազմելով ամբողջ բնակչության 26,4%-ը: Երբ այս տվյալները համեմատում ենք 1886 թ. վիճակագրական տվյալների հետ, պարզվում է, որ XIX դարի 80-ական թվականների կեսերից սկսած՝ քաղաքում հայ բնակչության թվի կանոնավոր աճ է նկատվել, թեև այն երբեմն փոփոխվել է: 1890 թ. հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում նաև Մակար եպս. Բարխուտարյանցը, ըստ որի՝ այդ ժամանակ քաղաքում գործող երկու եկեղեցիները (Սբ. Աստվածածին, Սբ. Գրիգոր Լուսավորիչ) միասին ունեցել են 2000 ծուխ՝ 7337 (3502 ար., 3835 իգ.) բնակչով: Դրանից բացի, եղել են նաև 3000 պանդուխտներ, որոնք աշխատել են նավթահորերում կամ էլ կատարել են տարաբնույթ աշխատանքներ[1201]: 1890 թ. Բաքու քաղաքի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական համանման տվյալներ է հրապարակել նաև Մեսրոպ

1198 Բաքվի կաթոլիկները մեծ մասամբ եղել են լեհեր (տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 28):
1199 XIX դ. 30-40-ական թվականների մոլոկանությունը տրոհվել է զանազան ճյուղերի, որոնցից է ցատկողների (պրիգուններ) աղանդը: Հիմնադիրն է Մաքսիմ Ռուդոմյոտկինը: Իրենց արարողությունների ժամանակ նրանք ցատկոտում են և երգում հոգևոր երգեր՝ համոզված լինելով՝ ով երկար դիմանա դրան, նա էլ կլինի ընտրյալը (տե՛ս **Дингельштедт И.**, Закавказские сектанты в их семейном и религиозном быту, СПб., 1885, стр. 158-183). Ի դեպ, ռուս աղանդավորների համայնքը Բաքվում կազմավորվել է 1859 թ. սկսած (տե՛ս **Волкова Н.**, Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., стр. 7).
1200 Բապտիզմը (մկրտչականություն) բողոքականության տարատեսակ է: Առաջացել է XVII դարի սկզբին՝ Հոլանդիայում, այնուհետև տարածվել Անգլիայում, Ռուսաստանում և այլուր: Բապտիստները չեն ընդունում սրբապատկերները, սրբերին և խաչելությունը (տե՛ս Атеистический словарь, стр. 48).
1201 Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 153:

արքեպ. Սմբատյանցը, ըստ որի՝ 1890 թ. քաղաքի հայ բնակչությունն ունեցել է 2210 տուն, իսկ շնչերի թիվը հասել է 8126-ի[1202]: Հարկ է նկատել, սակայն, որ թե՛ Մակար եպս. Բարխուտարյանցի, թե՛ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի կողմից վերը բերված տվյալները խիստ թերի են, հետևաբար արժանահավատ լինել չեն կարող: Զպետք է անտեսել այն իրողությունը, որ XIX դարի 80-ական թվականների վերջերին Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից գնալի արտահոսքի հետևանքով քաղաքի հայ բնակչությունը հաստատուն աճ է ունեցել: Միայն Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի գավառներից 1891 թ. արտագնացության էին դիմել 4546 մարդ[1203], իսկ Նոր Բայազետի գավառից՝ 1890 թ.՝ 195, 1891 թ.՝ 550 մարդ[1204]: Բաքու քաղաքի բուռն զարգացման հետևանքով նկատելիորեն աճեց նրա ազգաբնակչության թիվը, որը, ըստ 1891 թ. տվյալների, արդեն հասնում էր 107215-ի (61640 ար., 45 575 իգ.)[1205]:

Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացությանը Բաքու և այլ քաղաքներ նոր թափ հաղորդեց 1892-1894 թթ. սովը: Միայն երեք գավառներից (Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի) 1892 թ. արտագնացության դիմեց 4655 մարդ[1206]: Ըստ Ս. Զավարյանի հաշվարկների՝ 1892 թ. Նոր Բայազետի գավառից մեկնեց 1171 մարդ[1207]: «Արձագանքում» վկայակոչված մի տվյալի համաձայն՝ 1892 թ. ապրիլի սկզբներին հայ բնակչության թիվը Բաքվում արդեն հասնում էր մոտ 30000-ի. «Բագու քաղաքի բնակիչներից գրեթէ 30,000 հոգի հայ են, որոնք ունին մի եկեղեցի և մի հին մատուռ»[1208]:

Բաքվի բազմազգ բնակչության, այդ թվում նաև հայերի թվի նվազման պատճառ դարձավ 1892 թ. հունիսի 6-ից բռնկված համաճարակը[1209]: Խոլերան, որ եկել էր Իրանից, արագորեն տարածվեց նաև Այսրկովկասի գրեթե բոլոր վայրերում[1210]: Բաքվում սկսված խոլերան տարածվեց հատկապես քաղաքի երրորդ մասում, որտեղ մեծ թվով բանվորներ էին ապրում[1211]: Խոլերային զոհ գնաց հատկապես աղքատ խավը, որը չուներ նյութական անհրաժեշտ միջոցներ համաճարակից պաշտպանվելու համար: «Խոլերան...,- գրել է Լեոն,- կոտորում էր... կոտրվում էր բացառապէս աղքատ մարդկութիւնը: Մահերը դիակների վրայ մարմնացրել էին աշխարհի հին, պևոր իմաստութիւնը. «չունիս փող, մտիր հող»: Աղքատութիւնը մենակ էր մնացել իր սրտի ու մտքի հետ: Եւ կոտորվում էր...»[1212]: Աղետի առաջին իսկ օրերից Բաքվի քաղաքային Դուման ակտիվ միջոցառումների ծրագիր է մշակում՝ չմոռանալով ներգրավել նաև բարեգործական ընկերություններին ու անհատ բարեգործներին: Խոլերայի համաճարակի ժամանակ քաղաքի հայ հոգևորականությունը նույնպես մասնակցեց աղետի հաղթահարմանը: Մոլեգնող համաճարակի դեմ կանխարգելող աշխատանքներ տանելու նպատակով Բաքվի նա-

1202 Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 138:
1203 Տե՛ս **Համբարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 25:
1204 Տե՛ս **Заваров С.**, Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, стр. 285.
1205 Տե՛ս Обзор Бакинской губернии за 1891 г., Баку, 1893, стр. 24-27.
1206 Տե՛ս **Համբարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 25:
1207 Տե՛ս **Заваров С.**, նշվ. աշխ., стр. 285.
1208 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, ապրիլի 12, № 12:
1209 Շամախիի նահանգում խոլերայի համաճարակ բռնկվել էր նաև 1846 թ. հոկտեմբերին, որը տևել էր մինչև հաջորդ տարվա ապրիլը: Համաճարակը ընդգրկել է Շամախին, Բաքուն, Սալյանը և Թալիշը: Միայն Բաքվում վարակվել էին 1056 հոգի, որից 53-ը մահացել (տե՛ս «Կովկաս», Տփխիս, 1847, հուլիսի 12, № 28): (տե՛ս նաև Գորոյեանց Ն., նշվ. աշխ., էջ 101:
1210 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 639, թ. 44, տե՛ս նաև Գորոյեանց Ն., նշվ. աշխ., էջ 997:
1211 Տե՛ս **Արասխանեանց Ա.**, Խոլերան եւ հասարակութիւնը, «Մուրճ», 1892, № 6, էջ 997:
1212 Տե՛ս Լէօ, Ախտահանութիւն, Բաքու, 1893, էջ 5:

հանգապետի որոշմամբ նահանգի մաչտաբով ստեղծվում է Առողջապահության հասարակական կոմիտե՝ Շամախիի թեմի եկեղեցական ծխական դպրոցների տեսուչ Եղիշե ավ. քհն. Գեղամյանցի նախագահությամբ, որն ազգաբնակչության համար չափազանց ծանր այդ շրջանում ամենայն պատասխանատվությամբ կատարեց իրեն վստահված գործը[1213]:

Համաճարակի հետևանքով հայ բնակիչների կեսից ավելին հեռացավ քաղաքից և հաստատվեց նահանգի գավառներում, Արցախի և Զանգեզուրի տարբեր գյուղերում: «Տարազ» ամսագրի վկայությամբ՝ «Բագուի բնակիչների կէսից աւելին արդէն թողել են իրանց քաղաքը և հեռացել: Մեծագոյն մասը նրանցից գնացել է Շուշի քաղաքը և Ղարաբաղու և Զանգեզուրի գիւղօրայքը»[1214]: Ռուս բանվորությունը գլխավորապես հեռացավ Աստրախան և Ռուսաստանի եվրոպական մասը[1215]: «Հռչակաւոր Բաքուն,- գրում էր «Մուրճը»,- որ այս վերջին երկու տասնեակ տարիներում աճել էր մինչ 120,000 բնակիչների, դատարկւեց արագ կերպով այնպէս, որ, ամիս չանցած, նորա մէջ մնացին, որպէս պնդում են, միայն երկու տասնեակ հոգի»[1216]: Քաղաքից փախչող ժողովրդի միջոցով խոլերան տարածվեց նաև նահանգի գավառներում. «Եւ ամեն տեղ, ուր խոլերայի ստորակէտ-բացիլաներով վարակւած բաքւեցիք անարգել մուտք գործեցին, վարակւեց և հիւանդութեան նոր բոյն դառաւ»[1217]: «Գեոքչայի հայաբնակ գիւղերում, ուր փախել էին բագուեցիք, մեծամասնութիւնն այսօր վարակուած է խօլերայով»[1218],- գրում է «Արձագանքը»: Բաքվում հիվանդացածներից 77,7 %-ը մահանում էր: Միջին թվով, ամեն օր 45 հիվանդից մահանում էր 34-ը, նահանգում՝ 105-ից 71-ը[1219]: Մահացողների թիվը հունիսի վերջերին օրական հասավ մինչև 280 հոգու[1220]: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Բաքվում հունիսի 6-ից օգոստոսի 1-ն վարակվել էին 2501 հոգի, որոնցից 1934-ը մահացել էին, նահանգում հունիսի 17-ից օգոստոսի 1-ը արդեն հիվանդացել էր 4714 հոգի և մահացել 3210-ը[1221]: Միայն օգոստոսի 6-20-ը ընկած ժամանակահատվածում Բաքվում մահացավ 996, Բալախանիում՝ 37 մարդ[1222]: Հուլիսի 2-ի դրությամբ 100000-ի հասնող ազգաբնակչությունից քաղաքում մնացել էր մոտավորապես 20000-ը[1223]: Նահանգային բժիշկ Գոգիլովի հավաստմամբ համաճարակի արագ տարածմանը նպաստել են մահմեդականների մի շարք սովորույթներ. «...ի միջի այլոց այն սովորութեան շնորհիւ, որ խօլերայից մեռածի հագուստը բաժանում են աղքատներին և այն մօլլաներին, որոնք հանգուցեալի գլխին Ղուրան են կարդացել»[1224]: Ընդհանուր առմամբ, հունիսի 6-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում Բաքվի նահանգում հիվանդացել էր 20223 և մահացել 11639 հոգի, որից միայն Բաքվում և գավառում հիվանդացել էին 8270-ը և մահացել 4130-ը[1225]: Համաճարակն աստիճանաբար տեղի է տվել սեպտեմբերին[1226]: Բաքվում բռնկված համաճարակին հաջորդեցին տարափոխիկ հիվանդություններ՝ ծաղիկ, դիֆթերիա և այլն: «Արձագանքի» վկայությամբ՝ «Խօլերայից յետոյ հազիւ Բագուն փոքր-ինչ շունչ էր քաշել, ընկել իւր սովորական ընթացքի մէջ՝ բնակիչներն, բոլորը հաւաքուել էին», երբ գլուխ բարձրացրին համաճարակային տարբեր հիվանդությունները[1227]: Միայն 1893 թ. դեկտեմբերի դրությամբ հիվանդացել էր 204 հոգի, որից մահացել էր 65-ը[1228]:

1213 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 10, թ. 2:
1214 «Տարազ», Թիֆլիս, 1892, № 22, էջ 335:
1215 Տե՛ս Արասխանեանց Ա., Խոլերան եւ հասարակութիւնը, «Մուրճ», Թիֆլիս, 1892, № 6, էջ 997:
1216 Նոյն տեղում:
1217 Նոյն տեղում:
1218 «Արձագանք», Թիֆլիս, 1892, օգոստոսի 5, № 90:
1219 Տե՛ս նույն տեղում, օգոստոսի 16, № 95:
1220 Տե՛ս Արասխանեանց Ա., Խոլերան եւ հասարակութիւնը, «Մուրճ», 1892, № 6, էջ 997:
1221 Տե՛ս նույն տեղում:
1222 Տե՛ս «Тифлисский листок», Тифлис, 1892, 2 июля, №151.
1223 Տե՛ս նույն տեղում:
1224 «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 9, № 143:

Փաստերը վկայում են, որ համաճարակներից բացի, Բաքվի հայ բնակչությունը մեծապես տուժել էր նաև բուն քաղաքում և հատկապես նավթարդյունաբերական-գործարանային շրջաններում մեկը մյուսին հետևող հրդեհներից[1229]: «Կովկասի ոչ մի քաղաքում այնքան հրդեհներ տեղի չեն ունեցել, որքան Բագւում»[1230],- ասված էր 1904 թ. «Լոյս պատկերազարդ օրացոյցում»: Այսպես՝ 1880 թ. փետրվարի վերջերին քաղաքի կենտրոնական մասում բռնկված հրդեհի պատճառով այրվել է Լալայանցներին պատկանող խանութների շարքը[1231]: Ուշադրության է արժանի հատկապես 1895 թ. հունվարի 30-ին քաղաքի կենտրոնում բռնկված հրդեհը, որի հետևանքով «քաղաքի զարդ» համարվող Քալանթարյան եղբայրներին պատկանող եռահարկ «Պասաժն»[1232] ամբողջովին հրո ճարակ է դարձել[1233]: «Մշակը» տպավորիչ է ներկայացնում հրդեհը. «Պասաժը՝ քաղաքի զարդը, ամենալաւ մագազինների այդ գեղեցիկ շարքը՝ ամբողջովին կլանված էր կրակի բոցերի մէջ: Հրդեհը այնպէս արագ կերպով տարածվեց պասաժի մի ծայրից միւս ծայրը, որ համեմատաբար շատ քիչ բան կարողացան ազատել»[1234]: Ամբողջովին այրվեց Քալանթարյաններին պատկանող խանութները (վնասի չափը կազմում էր 185000 ռ.): Հրդեհի բոցերը կլանեցին նաև պասաժի հարևանությամբ գտնվող Մալխասյանների տունը[1235]:

Թեպետ XIX դարի վերջին բուն քաղաքում և արվարձաններում (Բայիլ, Սաբունչի, Բալախանի, «Սև քաղաք») արդեն ստվարացել էր հայերի թիվը, սակայն քաղաքը դեռևս գտնվում էր ծխատեր ընդամենը մեկ քահանայի հովվության ներքո, որի պատճառով մկրտությունների և այլ արարողությունների ժամանակ դժվարություններ էին առաջանում: Քաղաքի հայ բնակչությունը ծխական համայնքների միջև բաժանվեց թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի նախաձեռնությամբ: «Աղքատ ժողովրդի հոգսն ու ցաւը քաղողը պէտք է լինի հոգևոր հովիւը, բայց Բագւում դժբախտաբար խեղճերը զրկուած են նոյն իսկ ամենա-

1225 Տե՛ս նույն տեղում, դեկտեմբերի 20, № 148:
1226 Տե՛ս «Тифлисский листок», Тифлис, 1892, 1 сентября, № 200.
1227 Տե՛ս Տէր-Գրիգորեան Գ., Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1892, հոկտեմբերի 2, № 114:
1228 Տե՛ս «Кавказ», Тифлис, 1894, 25 ноября, № 23.
1229 1891 թ. տեղի են ունեցել 69 հրդեհ՝ պատճառելով 276650 ռ. վնաս, 1894 թ. 47 հրդեհ՝ 164 345 վնասով, 1897 թ. 65 հրդեհ՝ 896920 ռ. վնասով (տե՛ս Թոփչեան Ե., Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1904 թ., էջ 408-409):
1230 Թոփչեան Ե., Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1904 թ., էջ 408:
1231 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1880, հունվարի 31 (փետրվարի 12), № 13:
1232 Պասաժ (ֆրանսերեն passage՝ անցում): Պասաժը երկու կողմերից զետեղված խանութներ կամ վաճառասեղաններ և միջով հաճախորդների անցնելու միջանցք ունեցող ծածկված երկար շինություն է: Ունի առանձին ելք ու մուտքով սրահ և վաճառաշարք (տե՛ս Մարգարյան Ա., Հայրապետյան Ա., Օտար բառերի բացատրական բառարան, Երևան, 2004, էջ 325-326):
1233 Տե՛ս Բագուեցի, Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1895, փետրվարի 1, № 3, տե՛ս նաև փետրվարի 12, № 14:
1234 Տէրեան Ստ., Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1895, փետրվարի 2, № 13:
1235 Տե՛ս նույն տեղում:

անհրաժեշտ հոգևոր մխիթարանքից: Վաղուց հայտնի է, որ քաղաքի հայ ժողովուրդը ծխի չէ բաժանուած, ամբողջ Բագուն մի մեծ ծուխ է մի քանի քահանաներով, որոնց թիւը բաւական չէ ամբողջ ժողովուրդը հովուելու»[1236],- գրում էր այդ օրերին «Արձագանք» շաբաթաթերթը: 1893 թ. ապրիլի 7-ին ծխաբաժանության[1237] կամ թաղաբաժանության վերաբերյալ կազմված կանոնադրության համաձայն՝ քաղաքի հայ բնակչությունը բաժանվեց ծխական վեց թաղերի, որտեղ պարտավոր էր ծառայել մեկական քահանա: Բացի դրանից, ծխատեր յուրաքանչյուր քահանա պարտավոր էր ամեն շաբաթվա համար բնակչության շարժընթացի վերաբերյալ կազմել ցուցակագրություն և ներկայացնել թեմի առաջնորդին՝ ի հաստատումն[1238]: Ըստ այդմ՝ առաջին թաղում (440 տուն) բնակչության հովվությունն ստանձնեց Ղևոնդ քհն. Տեր-Աստվածատրյանը, երկրորդում (346 տուն)՝ Մեսրոբ քհն. Տեր-Ոսկանյանցը, երրորդում (376 տուն)՝ Խորեն ավ. քհն. Միրզաբեկյանցը, չորրորդում (390 տուն)՝ Գրիգոր քհն. Գրիգորյանցը, հինգերորդում (417 տուն)՝ Եղիշե ավ. քհն. Գեղամյանցը և վեցերորդում (350 տուն)՝ տեր Աբգարը[1239]: Վերը բերված թվերի ամփոփումից պարզվում է, որ քաղաքում 1893 թ. ապրիլի դրությամբ հայ հիմնական բնակիչների տների թիվը 2319 էր (1893 թ. հունվար-մարտ ամիսների դրությամբ այդ թիվը կազմում էր 2178 և նվազել էր 141-ով)[1240]: Այդ ամենից զատ, կային նաև 5000 հոգի առանց ընտանիքների արտագնա աշխատանքի եկածներ, որոնց կոչում էին կրպակաբնակներ[1241]: Նշված ծխաբաժանությունը որոշ հնարավորություն է տալիս տեղի հայ համայնքի բնակչության թվի մասին կատարելու հետևյալ հաշվարկները: Եթե յուրաքանչյուր ծխում միջին հաշվով 5-6 շունչ հաշվվի, ստացվում է, որ Բաքուն այդ ժամանակ ուներ մոտ 11595-13914 մշտաբնակ հայ բնակիչ: Եվ եթե այդ թվին էլ գումարենք 5000 ինքնագործ բնակիչների, ապա քաղաքի հայ բնակչությունը պիտի լիներ 16595-18914 մարդ: Թվաճի նման ցածր մակարդակի պատճառը, անտարակույս, պայմանավորված էր 1892 թ. հունիսին բռնկված խոլերայի հետևանքներով, երբ եղան մեծ թվով մահացություններ և քաղաքից բնակչության զանգվածային արտահոսք: Որպես օրինակ, եթե համադրենք 1890 (28818) և 1893 (16 595-18 914) թթ. տվյալները, ապա ստացվում է, որ հայերի թիվը նվազել էր 12 223-9904-ով:

Բաքվի հայ, ինչպես նաև ամբողջ բնակչության աճը խթանվեց մոլեգնող համաճարակի կանխարգելումից հետո ստեղծված սանիտարահիգիենիկ, սոցիալ-տնտեսական նորմալ պայմանների շնորհիվ: Ս. Էփրիկյանի բերած տվյալների համաձայն՝ 1893 թ. վերջերին քաղաքի 87 704 (55 609 ար., 32095 իգ.) ազգաբնակչությունից հայերի թիվն արդեն 25583-էր (18 269 ար., 7314 իգ.)[1242]: Հայ բնակչության բարձր աճի հիմնական պատճառը Արևելյան Հայաստանում դեռևս շարունակվող սովն էր, որի հետևանքով գյուղերից հեղհեղ մեծանում էին արտա-

1236 «Արձագանք», Թիֆլիս, 1893, հունվարի 3, № 2:
1237 Բաքվում առաջին ծխաբաժանությունը կատարվել էր 1888 թ. գարնանը (տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, մարտի 1, № 26):
1238 Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 391:
1239 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1894, փետրվարի 26, № 24:
1240 Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 372:
1241 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1894, փետրվարի 26, № 24, տե՛ս նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 395:
1242 Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363, տե՛ս նաև Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, թիւ 2, Պոլիս, 1938, էջ 349:

գաղթողների թիվը Բաքու և այլ քաղաքներ: Միայն Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի գավառներից 1893 թ. տարբեր ամիսներին արտագնացության էր մեկնել 5236 մարդ[1248]: Ըստ Ս. Զավարյանի հաշվարկների՝ այդ նույն տարում միայն Նոր Բայազետի գավառից մեկնել էր 5236 մարդ[1249]: Աղբյուրները վկայում են, որ նշված ժամանակահատվածում, Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից բացի, Բաքու արտագնա աշխատանքի և մշտական բնակության էին մեկնում նաև Ռուսաստանի հայաբնակ գրեթե բոլոր վայրերից. «...այսօր Ռուսաստանի հայաբնակ վայրերից ամենիցն էլ գաղթականներ կան Բագւում»[1250]: Բերված թվերն ու փաստերը ակներևորեն ցույց են տալիս, որ Բաքվի հայ բնակչության թիվը, ընդհանուր առմամբ, շարունակում էր արագ տեմպերով աճել: Ասվածը հստակ երևում է «Արձագանքի» 1893 թ. ապրիլին հայտնած հետևյալ տեղեկությունից. «Բագուայ բնակիչների մեծագոյն մասը թուրքեր են, դրանից յետոյ երկրորդ տեղը բռնում են տեղացի և գաղթական հայերը...»[1251]: «Արձագանքում» տեղ գտած մի տվյալի համաձայն՝ 1893 թ. նոյեմբերի վերջերին հայ բնակչության թիվը Բաքվում արդեն հասնում էր 35000-ի. «Հայաշատ Բագուն, ուր հայ գաղթականների թիւը հասնում է 35,000-ի»[1252]:

XIX դարի վերջին քառորդին Բաքուն արդեն համարվում էր բազմազգ քաղաք: Այստեղ կովկասյան թաթարներից, ռուսներից, հայերից, իրանցիներից, ինչպես նաև ավելի փոքր թվով վրացիներից ու հրեաներից բացի ապրում էին նաև եվրոպական ազգություններ (լեհ, շվեդ, գերմանացի և այլն)[1253]: 1897 թ. հունվարի 28-ի մարդահամարի տվյալներով՝ Բաքուն ուներ 111904[1254] (66893 ար., 45011 իգ.)[1255] ազգաբնակչություն, որից հայ 19099 (12574 ար., 6525 իգ.)[1256]՝ կազմելով ամբողջ բնակչության 17,1%-ը: Նույն մարդահամարի տվյալների համաձայն՝ քաղաքի հայ բնակչությունն իր թվաքանակով երրորդն էր թյուրքալեզու էթնիկ խմբերից (գերակշռում էին թաթարները)՝ 41155 (36,8%), և ռուսներից՝ 38965 (34,8%) հետո, որոնց հաջորդել են պարսիկները՝ 3369 (3%), գերմանացիները՝ 2460 (2,2%), հրեաները՝ 1905 (1,7%), թաթերը՝ 1072 (0,1%), վրացիները՝ 971 (0,9%), լեհերը՝ 835 (0,7%) և այլք[1257]:

Հարկ է նշել, որ Բաքու քաղաքի հայ բնակչության վերաբերյալ 1897 թ. մարդահամարի նյութերի տվյալները էականորեն տարբերվում են նույն թվականի եկեղեցական հաշվառումներից: Այսպես՝ Շամախիի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցի (1896 թ. դեկտեմբերի 20-1898 թ.)՝ «Արձագանքին» 1897 թ. հոկտեմբերի 27-ին հղած թղթակցությունում նշվում է, որ Բաքուն ուներ 45402 հայ բնակիչ, որից 33402-ը բնակվում էր բուն քաղաքում և «Սև քաղաքում», իսկ 12000-ը՝ Բալախան-Սաբունչիի ոստիկանական շրջանում[1258]:

1248 Տե՛ս Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 25:
1249 Տե՛ս Заваров С., նշվ. աշխ., стр. 285.
1250 Բագուայ հայերի ներկան եւ ապագան, «Արձագանք», Թիֆլիս, 1893, ապրիլի 11, № 41:
1251 Նույն տեղում:
1252 Շամախու թեմական դպրոցի խնդիրը, «Արձագանք», Թիֆլիս, 1893, նոյեմբերի 24, № 137:
1253 Տե՛ս Баку и его окрестности, стр. 72.
1254 1897 թ. ոչ պաշտոնական տվյալներով՝ Բաքուն ուներ 112153 ազգաբնակչություն (տե՛ս Ե. Թ. [Եղիշե Թոփչյան], Ցուցահանդէս-XIV, «Մշակ», Թիֆլիս, 1901, հոկտեմբերի 3, № 218):
1255 Տե՛ս ПВПНРИ-1897, стр. 1, таблица XIII, стр. 53.
1256 Տե՛ս նույն տեղում, таблица XIII, стр. 53:
1257 Տե՛ս նույն տեղում, таблица XIII, стр. 52-53.
1258 1897 թ. մայիսին Բաքու քաղաքի վարչական կառավարման համակարգը ենթարկվեց փոփոխության, որի հետևանքով ստեղծվեց Բալախան-Սաբունչիի ոստիկանական շրջանը: Իր գործարդյունաբերական-գործարանային շրջաններում

«Միայն Բագու քաղաքի և Սև քաղաքամասի մէջ,- գրում է Կարապետ եպս. Այվազյանցը,- բնակվում են Հայ Լուսաւորչական ժողովուրդ՝ «33,402» ի բաց առեալ Բալախանայն, ուր կան՝ 12000 Հայ Լուսաւորչականներ, թէև այս տեղի ժողովուրդը պատկանում են արհեստաւոր, գործաւոր և մշակ դասակարգին, որոնք միասին կազմում են Բագուի ժողովուրդ: Լուսաւորչական Հայերի ընդհանուր թիւը լինում է այն ժամանակ 45402»[1259]: Ինչպես տեսնում ենք Բաքվի հայ բնակչության թվաքանակի մասին պահպանված տվյալների մեջ զգալի տարբերություն գոյություն ունի: Ուստի դրանք ճշգրտման կարիք ունեն: Մարդահամարի և թեմի առաջնորդի վերը նշած տվյալների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ վիճակագրական տվյալների հակասությունը կապված է 1897 թ. մարդահամարի ոչ ամբողջական ու թերի հաշվառումների հետ: Թերևս պաշտոնական մարդահամարի ժամանակ հաշվառվել են միայն հիմնական հայ բնակիչները: Իբրև ասվածի վկայություն է ծառայում հետևյալ փաստը. Բաքվից Սարգիս Ծոցիկյանի՝ «Արձագանքին» 1897 թ. մայիսի 22-ին հղած թղթակցությունում նշվում է, որ հայերը քաղաքում ունեին մոտ 4000 տուն: «Բագուն,- գրում է Ս. Ծոցիկյանը,- որ ասկից 15 տարի առաջ 600-ի չափ հայ տուն կըպարունակէ, հիմա տանց թիւը հասած է մօտ 4,000-ի... մեծ մասամբ Կարապաղի կողմերէն գաղթած, հաստատուած»[1260]: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ընտանիք բաղկացած էր ոչ ավել քան 4-5 հոգուց, ապա ստացվում է, որ հայերի ընդհանուր քանակը տատանվում էր 16-20000-ի միջև, այսինքն՝ այդ թիվը գրեթե համապատասխանում է 1897 թ. մարդահամարում արձանագրված տվյալի հետ: Հայկական ընտանիքների թիվը, համադրելով 1893 թ. ապրիլ ամսվա թվական տվյալի հետ (2319), ստացվում է, որ չորս տարվա ընթացքում այն ավելացել էր 1681-ով: Արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ 1893 թ. սկզբներից՝ խոլերայի կանխարգելմանը հաջորդած տարիներին, Բաքվի ազգաբնակչության բավարար աճի համար կային համեմատաբար նպաստավոր պայմաններ, որի արդյունքում դեպի Բաքու արտագնա աշխատանքի մեկնողների թիվն արդեն մեծ չափեր էր ընդունել: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ քաղաքի 111904 առկա բնակչությունից մշտաբնակ էր 109185-ը (64552 ար., 44633 իգ.)[1261]: Ընդ որում, առկա բնակչության թվում ըստ ծննդավայրի տեղացի էր 40307-ը, Բաքվի նահանգի գավառներից և այլ նահանգներից ու պետություններից եկածները՝ 71597[1262]: Ինչպես տեսնում ենք, Բաքվի հայ բնակչության թվաքանակի մասին պահպանված տվյալների մեջ զգալի տարբերություն գոյություն ունի: Ուստի դրանք ճշգրտման կարիք ունեն: Մարդահամարի և թեմի առաջնորդի վերը նշած տվյալների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ պաշտոնական մարդահամարի ժամանակ հաշ-

միության» խորհրդի հետ, որը նյութական մեծ միջոցներ էր հատկացնում տեղամասում սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքի բարելավման համար (տե՛ս **Мильман А.**, նշվ. աշխ., стр. 234): Բաքու քաղաքը վարչակառուցվածքային փոփոխության ենթարկվեց ավելի ուշ՝ 1905 թ. հայ-թաթարական ընդհարումներից հետո: Պետերբուրգում 1905 թ. սեպտեմբերի 26-ին կայացած նավթարդյունաբերողների և ձեռնարկատերերի խորհրդակցության ժամանակ, հաշվի առնելով նավթարդյունաբերության խիստ կարևորությունը երկրի տնտեսության համար, որոշվեց հիմնել Բաքվի քաղաքապետություն, որը պետք է ընդգրկեր հիմնականում Բալախանի-Սաբունչիի ոստիկանական տեղամասը՝ նավթարդյունաբերական և գործարանային շրջանները՝ Բալախանին, Սուրախանը, Սաբունչին, Բիբի-Հեյբաթը, Զաբրատը, Ռամանին, Բաքվի գավառի մի մասը և Ապշերոնյան թերակղզու «Նորգեն», «Մվիտոդ» և այլ կղզիներ: Քաղաքապետությունը ստեղծվեց Նիկոլայ II-ի՝ 1906 թ. հոկտեմբերի 28-ի հրամանագրով: Քաղաքապետության վարչական կառավարումը իրականացնում էր քաղաքապետը, որին Կովկասի փոխարքայի ներկայացմամբ նշանակում էր ցարը (տե՛ս **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 5-6, տե՛ս նաև **Мильман А.**, նշվ. աշխ., стр. 263-264, տե՛ս նաև Անանուն Դ., Ռուսահայոց հասարակական քաղաքական մտքի զարգացումը, h. Գ. (1901-1918), Վենետիկ, 1926, էջ 174):

1259 Նամակներ խմբագրութեան (I), «Արձագանք», Թիֆլիս, 1897, հոկտեմբերի 31, № 126:

1260 Ծոցիկեան Ս., Բագու, մայիսի 22 (Թղթակցութիւն «Արձագանքի»), «Արձագանք», Թիֆլիս, 1897, մայիսի 28, № 59:

1261 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица I, стр. 3.

1262 Տե՛ս նույն տեղում, стр. 2.

վառվել են միայն հիմնական հայ բնակիչները: Իբրև ասվածի վկայություն է ծառայում
հետևյալ փաստը. Բաքվից Սարգիս Ծոցիկյանի՝ «Արձագանքին» 1897 թ. մայիսի 22-ին հղած
թղթակցությունում նշվում է, որ հայերը քաղաքում ունեին մոտ 4000 տուն: «Բագուն,- գրում
է Ս. Ծոցիկյանը,- որ ասկից 15 տարի առաջ 600-ի չափ հայ տուն կըպարունակէր, հիմա
տանց թիւը հասած է մօտ 4,000-ի... մեծ մասամբ Կարապաղի կողմերէն գաղթած, հաստա-
տուած»[1263]: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ընտանիք բաղկացած էր ոչ ավել, քան 4-5 հո-
գուց, ապա ստացվում է, որ հայերի ընդհանուր քանակը տատանվում էր 16-20000-ի միջև, այ-
սինքն՝ այդ թիվը գրեթե համապատասխանում է 1897 թ. մարդահամարում արձանագրված
տվյալի հետ: Հայկական ընտանիքների թիվը, համադրելով 1893 թ. ապրիլ ամսվա թվական
տվյալի հետ (2319), ստացվում է, որ չորս տարվա ընթացքում այն ավելացել էր 1681-ով:

Արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ 1893 թ. սկզբներից՝ խոլերայի կանխարգելմանը
հաջորդած տարիներին, Բաքվի ազգաբնակչության բավարար աճի համար կային համեմատա-
բար նպաստավոր պայմաններ, որի արդյունքում արտագնա աշխատանքի և հիմնական բնա-
կության մեկնողների թիվն արդեն մեծ չափեր էր ընդունել: 1897 թ. մարդահամարի տվյալնե-
րով՝ Բաքվի 111904 առկա բնակչությունից մշտաբնակ էր 109185-ը (64552 ար., 44633 իգ.)[1264]:
Ընդ որում, առկա բնակչության թվում ըստ ծննդավայրի տեղացի էր 40307-ը, Բաքվի նահան-
գի գավառներից և այլ նահանգներից ու պետություններից եկածները՝ 71597[1265]: Ինչպես տես-
նում ենք, քաղաքում գերակշռում էին դրսեկ բնակիչները: Ուստի 1897 թ. պաշտոնական մար-
դահամարի և թեմի առաջնորդի վկայակոչած տվյալների վերլուծությունը թույլ է տալիս ար-
ձանագրելու, որ հայ բնակչության թվաքանակն առավել ամբողջական և արժանահավատ է
թեմի առաջնորդի վկայակոչած տվյալներում, որը ներառում է նաև ժամանակավոր բնակիչ-
ների թիվը: Մեր եզրակացության օգտին է խոսում նաև հետևյալ փաստը. 1898 թ. սկզբներին
Բաքվի ոստիկանական բաժանմունքի կողմից անցկացված հաշվառման համաձայն՝ 173542
բնակիչներից հայերի թիվը 40074 էր[1266]: Թվական տվյալների համադրումից ստացվում է, որ
նախորդ՝ 1897 թ. հաշվառումից հետո շուրջ մեկ տարվա ընթացքում հայերի թիվը կտրուկ
աճել է 20975-ով, ինչը հնարավոր չէր նույնիսկ բնական ու մեխանիկական բարձր աճի պայ-
մաններում: Վիճակագրական տվյալների այս հակասությունը թերևս կապված է 1897 թ. մար-
դահամարի ոչ ամբողջական ու թերի հաշվառումների հետ: Որ 1990-ական թվականների
կեսերից Բաքվում հայ բնակչությունը հաստատուն աճ է ունեցել, փաստում են նաև XX դա-
րասկզբի հաշվառումները: Օրինակ՝ 1902 թ. կեսերին Բաքվում հայերի թիվն արդեն 50000
էր[1267]: Այսրկովկասի վիճակագրական կոմիտեի կազմած տեղեկագրի համաձայն՝ 1904 թ.
դրությամբ նահանգի հայերի թիվը 91024 էր, որից միայն 51340-ը՝ Բաքու քաղաքում[1268]:

XIX դարի 90-ականների կեսերին քաղաքում հայերի թիվը բազմանում է նաև ի հաշիվ
Արևմտյան Հայաստանից՝ Վանից եկած ընտանիքների: Աբդուլ Համիդի կազմակերպած կոտ-
որածներից մազապուրծ ավելի քան 500 վանեցի գաղթականներ 1896 թ. աշնանը, ապա 1897
թ. հոկտեմբերին Կովկասի զանազան քաղաքներից գալով, ապաստան գտան Բաքվում, ուր

1263 Ծոցիկեան Ս., Բագու, մայիսի 22 (Թղթակցութիւն «Արձագանքի»), «Արձագանք», Թիֆլիս, 1897, մայիսի 28, № 59:

1264 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица I, стр. 3.

1265 Տե՛ս նույն տեղում, стр. 2.

1266 Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 11-12, էջ 1504:

1267 Տե՛ս Хроника рабочего движения и письма с фабрик и заводов, «Искра», 1902, 1 сентября, № 24, стр. 4.

1268 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 94, թ. 1, տե՛ս նաև КК на 1907 г., Тифлис, 1906, отд. II, стр. 320-321.

մնացին ընդհուպ մինչև 1898 թ. մայիսի վերջերը[1269]: Տեղի Սբ. Աստվածածին եկեղեցու ավ. քհն. Աբգար Տեր-Հարությունյանցի վկայությամբ՝ «1896 թուականի աշնան սկզբներին երամ երամով հայ գաղթական ընտանիքներ մերկ, քաղցած և կիսաառողջ թափուեցին Բագու և սկսեցին թափառել փողոցները «մի փշուր հաց, մի հին հալաւ խնդրելով»[1270]:

Արևմտահայ գաղթականների օգնության գործը կազմակերպելու ուղղությամբ հսկայական աշխատանք ծավալեցին տեղի բարեգործական ընկերությունները՝ այդ նպատակով ստեղծելով գաղթականական գործը կազմակերպող մասնախմբեր[1271]: Այդ գործին իր մեծագույն նպաստը բերեց Մարդասիրական ընկերությունը և Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձությունը[1272], որոնք գաղթականների ծանրագույն վիճակը մեղմելու, նրանց սննդով և հագուստով ապահովելու համար տրամադրեցին նյութական միջոցներ[1273]: Օգնության գործը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով նշված բարեգործական ընկերությունների կողմից ստեղծվեցին հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվեցին Բաքվի ազդեցիկ հայերից Ե. Սարգսյանցը, Ա. Կաճկաճյանը, Հ. Ադամյանը և Ա. Կրասիլնիկյանցը, իսկ Մարդասիրական ընկերության հանձնաժողովում՝ Ա. Մաղաթյանը, Ե. Կրասիլնիկյանը, Ս. Ադամյանը, Ն. Պատվականյանը, Ն. Աբելյանը և Գ. Տեր-Մարգարյանցը[1274]: Գաղթականներին բժշկասանիտարական անհրաժեշտ օգնություն ցուցաբերեցին բժիշկներ Ա. Ադամիրզյանը և Մ. Զալյանը[1275]: «Չը կար կովկասահայ կենտրոնում մի վայր, ուր տաճկահայերն աւելի խնամք վայելած լինէին, մի կտոր հաց աշխատած, քան Բագուն»,- գրում էր «Միտսար» ծածկանունով «Գործի»՝ Բաքվի թղթակից Միրզա Տեր-Սարգսյանը[1276]: Հարկ է նշել, որ որքան էլ բարեգործական ընկերությունները փորձում էին ուժերը ներածին չափով օգնության ձեռք մեկնել գաղթականներին, այդուհանդերձ, այդ օգնությունը բավարար չեղավ վերջիններիս անսահման տառապանքներն ամբողջապես մեղմելու: «Նոր-դարն» այդ առիթով գրում էր. «Բագւում որ փողոցով անցնելու լինէք, կպատահէք միշտ մերկանդամ գաղթականների, որոնք երբեմն նոյն իսկ խմբերով ձեռք են պարզում ողորմութեան և ձանձրացնում անցորդներին: Եւ դրանք գլխաւորապես կանայք և երեխաներ են, որով տեսարանը աւելի ցաւալի է դառնում...»[1277]: Գաղթականների մի խումբ 1897 թ. նոյեմբերի 4-ին Բաքվից տեղափոխվեց Աշգաբադ[1278]: 1897 թ. նոյեմբերի 23-ի տվյալներով՝ հայ գաղթականների վարակիչ հիվանդանոցում բուժվում էր 351, իսկ տեղի հիվանդանոցում՝ 18 հոգի: Նրանք մեծ մասամբ կանայք և երեխաներ էին: Առողջ տղամարդկանց թիվը 75 էր[1279]: Գաղթականների շարքերը հյուծվածությունից և տարափոխիկ

[1269] Տե՛ս Տէր-Յարութիւնեանց Ա., Հայ գաղթականները Բագու եւ նրանց վերադարձը, Բագու, 1903, էջ 19, 21:
[1270] Նույն տեղում, էջ 14:
[1271] Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1878, մայիսի 27, № 20:
[1272] «Բաքվի հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությունը» հիմնվել է Բաքվի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու ավագ քահանա Թադևոս Բուդաղյանցի և գեներալ Հովհաննես Լազարյանի նախաձեռնությամբ՝ 1872 թ. (տե՛ս Պատմութիւն Բագուայ Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան, էջ 3):
[1273] Տե՛ս Տէր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 15:
[1274] Տե՛ս նույն տեղում, էջ 15-16:
[1275] Տե՛ս նույն տեղում, էջ 18:
[1276] Տե՛ս Միտսար [Միրզա Տեր-Սարգսյան], Տաճկահայերի վերադարձը, «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 23, № 36:
[1277] «Նոր-դար», Թիֆլիս, 1898, ապրիլի 4, № 58, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1897, սեպտեմբերի 7, № 103:
[1278] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 6, № 130:
[1279] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 23, № 136:

հիվանդություններից օրեցօր նոսրանալով, 1897 թ. նոյեմբերի կեսերին հասավ 300-ի[1280]: 1897 թ. դեկտեմբերի կեսերին «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության» աղքատանոցում գտնվող 241 հոգուց արևմտահայ գաղթականների թիվը 205 էր, շամախեցիներինն ու տեղացիներինը՝ 36[1281]: Բարեգործական նշված կազմակերպությունները վանեցի գաղթականներին եկեղեցական աղքատանոցում խնամեցին մինչև 1898 թ. մայիսի վերջերը, երբ ստացվեց ցարական կառավարության՝ գաղթականների հայրենիք վերադառնալու մասին հրամանը, նրանց մեծ մասը մեկնեց Վան: Մկրտիչ Ա Վանեցու հորդորանքով գաղթականներին մինչև Բայազետ ուղեկցեց «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության» նախագահ Աբգար ավ. քհն. Տեր-Հարությունյանցը[1282]: Բաքվում մնացած գաղթականներն աստիճանաբար սկսեցին հիմնավորվել քաղաքում: Նրանցից շատերը հիմնականում գյուղացիներ էին և չէին տիրապետում որևէ արհեստի, ուստի աշխատանքի տեղավորվեցին նավթահանքերում, տարբեր արհեստանոցներում՝ կատարելով գիշերային պահակի, դռնապանի և մշակի աշխատանքներ[1283]:

Բաքու քաղաքի 1898 թ. սկզբների էթնոդավանական պատկերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են պարունակում քաղաքի ոստիկանական բաժանմունքի կազմած վիճակագրական նյութերը, համաձայն որոնց՝ 173542 (98920 ար., 74622 իգ.) ընդհանուր բնակչությունից, ըստ դավանանքի, մահմեդականների թիվը հասնում էր 65421-ի (44380 ար., 21041 իգ.)՝ կազմելով 37,7%, ուղղափառներինը՝ 39116-ի (21355 ար., 17661 իգ.)՝ կազմելով 22,5%-ը, հայ առաքելականներինը՝ 40074-ի (22590 ար., 17484 իգ.)՝ կազմելով 23,1%, կաթոլիկներինը՝ 2351-ի (1342 ար., 1009 իգ.)՝ կազմելով 13,6%, լյութերականներինը՝ 7260-ի (3977 ար., 3283 իգ.)՝ կազմելով՝ 4,2%, ռուս աղանդավորներինը (ռասկոլնիկ)՝ 6807-ի (3497 ար., 310 իգ.)՝ կազմելով՝ 4% և հուդայականներինը՝ 2113-ի (1289 ար., 834 իգ.)՝ կազմելով՝ 12,2%[1284]: 1897 թ. եկեղեցական (45402) և 1898 թ. պաշտոնական (40074) հաշվառումների տվյալների համադրումից ստացվում է, որ շուրջ մեկ տարվա ընթացքում հայերի թիվը քաղաքում նվազել էր 5328-ով: Դա այն դեպքում, երբ բնական և մեխանիկական աճի տեմպերի համար առկա էր ժողովրդագրական նպաստավոր պայմաններ: Աղբյուրների հաղորդումների այսպիսի անհամապատասխանությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ինչպես 1897 թ. մարդահամարի, այնպես էլ Բաքվի ոստիկանական բաժանմունքի անցկացրած հաշվառման ընթացքում, ռուսական պաշտոնական վիճակագրական մարմինների կողմից արհեստականորեն նվազեցվել է քաղաքի հայ բնակչության թիվը: Այս համոզմանն է մեզ բերում նաև Շամախիի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի՝ Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին 1915 թ. հունիսի 16-ին հղած զեկուցագրում տեղ գտած հետևյալ դիտարկումը: Թեմակալը, կաթողիկոսին ամենամյա տեղեկություններ հաղորդելով Բաքվի նահանգի գավառների հայության թվի մասին, գրում էր, որ շատ դեպքերում «ազգաբնակչութեան թիւը որոշելիս պէտք է հետևել ոչ թէ պաշտոնական թուերին, այլ մեր մասնաւոր տեղեկութիւններով կազմած հաշուին»[1285]:

[1280] Տե՛ս Հայ գաղթականներին խնամող յանձնաժողովը Բագւում, «Արձագանք», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 16, № 133:
[1281] Տե՛ս Ս. Մ. Ծոցիկեան, Բագուն եւ հայ գաղթականները «Արձագանք», Թիֆլիս, 1897, դեկտեմբերի 19, № 147:
[1282] Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1898, հունիսի 20, № 108, տե՛ս նաև Տէր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 22:
[1283] Տե՛ս Միտսար [Միրզա Տեր-Սարգսյան], Տաճկահայերի վերադարձը, «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 23, № 36:
[1284] Տե՛ս Բաքւայ ազգաբնակութիւնը, «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 11-12, էջ 1504:
[1285] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1056, թ. 41:

Արտագնացությունը Բաքու նկատելիորեն աճեց նաև 1990-ական թվականների վերջերին: 1898 թ. նոյեմբերին Երևանի նահանգապետը գրում էր. «Արտագնացային զբաղմունքը տարեցտարի ընդունում է ավելի ու ավելի նշանակալի չափեր: 1898 թ. տարբեր քաղաքներ (Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլն) արտագնա աշխատանքի են մեկնել մինչև 20000 մարդ»[1286]: Դեպի Բաքու արտագնացությանը նպաստեց նաև Գյոքչայի և Շամախիի գավառների 1899 թ. երաշտն ու անբերրիությունը[1287]: Դարավերջին Բաքու արտագնա աշխատանքի սկսեցին գալ նաև Հյուսիսային Կովկասից և Դաղստանի մարզից, ինչին նպաստեց հատկապես 1899 թ. օգոստոսի 22-ին Բաքու-Պետրովսկ (Մախաչկալա) երկաթուղագծի բացումը, որով Բաքուն կապվեց եվրոպական Ռուսաստանի երկաթուղային գծերին[1288]:

Ընդհանուր առմամբ, բերված թվերի վերլուծությունը ցույց է տալիս, որ XIX-XX դդ. սահմանագծում հայ բնակչության թիվը Բաքվում ավելի քան 45000 էր: Միաժամանակ աղբյուրները փաստում են, որ չնայած էթնիկ գործընթացները զգալիորեն խաթարում էին քաղաքի ժողովրդագրական դիմապատկերը, այնուամենայնիվ հայերը շարունակում էին մնալ Բաքվի գերակշռող էթնիկ հանրություններից մեկը, թվաքանակով զիջելով կովկասյան թաթարներին: Դրա հետ մեկտեղ, հայ և ռուս բնակչության թվաքանակը գրեթե հավասար էր:

Այսպիսով՝ Բաքու քաղաքի հայ բնակչության թվաճի պատկերը 1820-1897 թթ. ժամանակահատվածում ուներ հետևյալ պատկերը[1289].

Աղյուսակ № 12

Տարեթիվ	1820-ական թթ.	1838	1851	1860	1873	1886	1890	1897
Երկսեռ բնակչ. ընդ. թիվը	277	434	405	589	747	24490	28818	45402
%	-	-	-	-	5	28,3	26,4	40,57

Աղյուսակի տվյալները փաստում են, որ Բաքվի նահանգում հայերի հաջորդ մեծ զանգվածը XIX դարավերջին կենտրոնացված էր Բաքվում: Ավելին՝ բավարար աճի համար նպաստավոր պայմանների հետևանքով հայերի թիվը, ընդհանուր առմամբ, շարունակել էր արագորեն աճել: Եթե սկզբնական շրջանում Այսրկովկասի տարբեր վայրերից այստեղ եկած հայ մշակ-բանվորների, արդյունաբերողների ու վաճառականների գործունեությունը և բնակությունը կրում էր ժամանակավոր բնույթ, ապա ժամանակի ընթացքում նրանցից շատերը դարձան տեղաբնակներ՝ կառուցելով տներ, ձեռք բերելով հողատարածություններ և այլն՝ անշուշտ իրենց կապերը չխզելով հայրենի քաղաքների և գյուղերի հետ[1290]:

Անդրադառնանք XIX դարի երկրորդ կեսի տարբեր տարիների ընթացքում Բաքվի գավառի (առանց քաղաքի) հայ բնակչության թվաքանակի հարցին: 1860 թ. գավառում ազգաբնակչության թիվը 36600 էր[1291]: Նահանգային վարչության՝ 1869 թ. տվյալների համա-

[1286] Տե՛ս Обзор Эриванской губернии за 1908 г., Эриван, 1909, стр. 8.
[1287] Տե՛ս **Заваров С.**, Кавказ в сельско-хозяйственном отношении в 1899 г., Тифлис, 1900, стр. 207.
[1288] Տե՛ս Արասխանեանց Ա., Բաքւայ նավթաշրջանից, «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 10-11, էջ 938:
[1289] Աղյուսակը կազմված է ըստ Տէր-Յակոբեան Ա., նշվ. աշխ., ք. 39, ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69-70, **Автономов-Спасский К.**, Баку, КК на 1852 г., отд. III, стр. 305; ГССРИ, т. I, стр. 191; СНМ-1873; ССДНЗКИПС-1886, «Նոր-դար», Թիֆլիս, 1890, դեկտեմբերի 14, № 199, ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53, таблица XII, стр. 50, таблица XIV, стр. 60-61, «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 11-12, էջ 1504, տվյալների. հաշվարկը մերն է:
[1290] Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայ ազգաբնակչության շարժընթացը (XIX դ.), ԲՀՊՏՀ, Երևան, 2008, № 1, էջ 61-75:
[1291] Տե՛ս ГССРИ, т. I, стр. 186.

ձայն՝ Բաքվի գավառում բնակվող հայերի թիվը եղել է 891[1292]: Ըստ «Բաքուն և նրա շրջակայքը» գրքույկի՝ 1889 թ. պատկերն այսպիսին է եղել. գավառի ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում էր 64128, որից շիա մահմեդականներ՝ 58578, հայեր՝ 2083, ռուսներ՝ 2551, կաթոլիկներ՝ 541, լյութերականներ՝ 366 և հրեաներ՝ 9 հոգի[1293]: Ընդ որում, մահմեդական բնակիչների թվում գերակշռում էին իրանական ծագում ունեցող թաթերը՝ կազմելով բնակչության 3/4-ը, իսկ 1/4-ը թաթարներն էին: Այսինքն՝ 58578 շիա մահմեդականներից թաթեր էին 43933-ը, իսկ 14645-ը ունեին թյուրքական ծագում[1294]: 1897 թ. հայերի թիվը գավառում 3484 էր (3125 ար., 359 իգ.)[1295]:

Ինչ վերաբերում է XIX դարի երկրորդ կեսին Ապշերոնյան թերակղզու շուրջը՝ կղզիներում, բնակվող հայերի թվաքանակի հարցին, նշենք, որ սկզբնաղբյուրներում և վիճակագրական տեղեկագրերում այդպիսի տեղեկություններ չեն պահպանվել, ինչը հնարավորություն չի տալիս նշել ճշգրիտ կամ մոտավոր որևէ տվյալ: Բացի դրանից, մեծ թվով նավթագործներ են բնակվել թերակղզու շուրջ՝ ափից 100 կմ հեռու գտնվող Պողպատե կղզում, Նավթային Քարերում և այլն[1296], որտեղ աշխատանքի բերումով բնակվող նավթագործների մեջ եղել են ոչ քիչ թվով հայ ինքնագործներ:

XIX դարի երկրորդ կեսից և հատկապես դարի վերջերին Բաքուն Թիֆլիսից հետո դառնում էր արևելահայերի տնտեսական ու մշակութային կյանքի ամենախոշոր կենտրոնը՝ առաջ անցնելով այնպիսի քաղաքներից, ինչպիսիք էին Շամախին, Նուխին, Շուշին և Գանձակը: 1898 թ. տվյալներով՝ Բաքվում արդեն կար 5895 շինություն[1297]: 1896-1897 թթ.՝ «Քաոսը» գրելու շրջանում, մի քանի անգամ Բաքու այցելած Ալ. Շիրվանզադեն հետևյալ տպավորությունն էր ստացել քաղաքից. «Բաքուն, իհարկե, առաջվանը չէր. շատ բաներ էին փոխվել տասնուհինգ[1298] տարուայ ընթացքում: Նաւթային արդիւնաբերութեան բարգաւաճման հետ քաղաքը կերպարափոխուել էր: Առաջուայ միյարկանի, կիսախարխուլ տներին փոխարինել էին երեք-չորս յարկանի հոյակապ շինութիւններ, փողոցները սալայատակուել էին և այլևս նաւթով չէր ջրվում, ազգաբնակութիւնը եռապատկուել էր, երեկուայ ասիական չուխան փոխուել էր եւրոպական ֆրակի, փափախը-ցիլինդրի, չմուշկները-քոշերը-փայլուն կօշիկների: Նախկին նպարավաճառներից, գործակատարներից և սայլապաններից շատերը դարձել էին հանքատէրեր և գործարանատէրեր: Արտաքինի հետ փոխուել էր և մարդկանց ներքինը, հագուստը ազդել էր ճաշակի, մտքի և ամբողջ հոգեբանութեան վրայ: Ուզում եմ ասել՝ գոյացել էր եւրոպական իմաստով բուրժուազիայի առաջին սաղմը: Բայց ոչ եւրոպական կրթութեամբ»[1299]:

Բաքվի և Ապշերոնյան թերակղզու մյուս բնակավայրերի կառուցապատման ուղղությամբ և քաղաքաշինության ոլորտում մեծ դեր ունեցան հատկապես հայ ճարտարապետներն ու շինարարները, որոնց ջանքերով կառուցվեցին արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքեր և եկեղեցիներ: Հատկապես նշանակելի է ճարտարապետներ Գ. Տեր-Միքելյանի,

[1292] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 92.
[1293] Տե՛ս Баку и его окрестности, стр. 63.
[1294] Տե՛ս նույն տեղում, стр. 64-65.
[1295] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.
[1296] Տե՛ս Աղաև Է., նշվ. աշխ., էջ 8:
[1297] Տե՛ս Ե. Թ. [Եղիշե Թոփչյան], Ցուցահանդէս (XIV), «Մշակ», Թիֆլիս, 1901, հոկտեմբերի 3, № 218:
[1298] Ալ. Շիրվանզադեն նկատի ունի Բաքվից 1883 թ. օգոստոսին իր դուրս գալու ժամանակը:
[1299] ԳԱԹ, Ալ. Շիրվանզադեի ֆոնդ, գ. 9, թ. 291-292: Հմմտ. գ. 8, թ. 278:

Վ. Սարգսյանի, Ն. Բաևի, Հ. Տեր-Հովհաննիսյանցի (Բաջազնունի) և Ֆ. Ազալյանի ավանդը[1300], որոնց կառուցած բնակելի շենքերը, հասարակական ու մշակութային շինությունները կանգուն են ցարդ և զարդարում են ներկայիս Բաքուն: Մեզ հասած կցկտուր տեղեկություններից պարզվում է, որ այդ ժամանակներում Նուխի և Շամախի քաղաքներից բացի՝ իրենց գործին գերազանց տիրապետող բազմաթիվ հայ վարպետներ աշխատում էին նաև Բաքվում[1301]:

Առևտրաարդյունաբերական Բաքվում կարելի էր հանդիպել ամեն ազգի ներկայացուցիչների: Հայերը, կովկասյան թաթարները, լեզգիները, պարսիկները, լեհերը, գերմանացիները, ռուսները և այլք, ապրում էին կողք կողքի և սերտ համագործակցության մեջ էին: Նրանցից յուրաքանչյուրը բնականաբար իր հետ բերում էր սեփական ազգային սովորույթներն ու մշակույթը: «Բագւայ բնակիչների մեծ մասը,- գրում է «Տարազը»,- գաղթականներ են: Սրանք իրանց հետ բերել են և իրանց երկիրների աւանդութիւնները, սովորութիւններն ու խառնելով Բագւայ այժմեան խառնիճաղանճ, աշխարհիս չորս կողմից եկած, ժողովրդի բարք ու վարքի հետ ու այդ խառնուրդն էլ համեմելով քաղաքակիրթ աշխարհների կարգ ու կանոնով՝ բագուեցիները իրանց համար մի նոր կենցաղ են ստեղծել»[1302]: Այդուհանդերձ, այս պայմաններում անգամ, հայերն իրենց գործունեության բնույթով խիստ տարբերվում էին մնացյալ ազգերից: Բաքուն ընդհանրապես, առավել լայն իմաստով, երկար ժամանակ համարվել է հայկական ոգու ստեղծման և զարգացման ասպարեզ: Հայ բնակչությունը Բաքվում հիմնականում տեղակայված էր քաղաքի կենտրոնական հատվածում, և հայերին էին պատկանում գրեթե բոլոր շքեղ խանութները և առևտրական տները[1303]: 1890 թ. Բաքու այցելած Մակար եպս. Բարխուտարյանցը գրել է. «Բնակիչներն են հայ, ռուս, պարսիկ, թուրք ևն. և բազմաթիւ պանդուխտներ կովկասաբնակ ազգերից և մինչև անգամ արտասահմանեաններից...: Պարսիկներն, որք բնակում են բերդումս և քաղաքիս հարաւային կողմում, բոլորովին անկարգ և խառն ի խուռն շինած են իւրեանց բնակարանները և խանութները: Բարեկարգ և գեղեցիկ շինուած են հայոց տները, խանութները և իջևանները»[1304]:

Տնտեսական կյանքի աշխուժացման պայմաններում ավելի էր հզորանում հատկապես հայ առևտրաարդյունաբերական խավը: Որպես այս ամենի արդյունք՝ XIX դ. վերջին Բաքվում արդեն կար ձևավորված և բավականին ազդեցիկ հայ առևտրաարդյունաբերական բուրժուազիա: Հայ առևտրաարդյունաբերողներից շատերը Բաքվում հիմնեցին գործարաններ, ֆաբրիկաններ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Բաքվի խոշոր ձեռնարկատերերի շարքում մեծ տոկոս էին կազմում հատկապես հայ նավթարդյունաբերողները (Ալեքսանդր Մանթաշյանց, Փիթոյան եղբայրներ, Պողոս, Հակոբ, Աբրահամ և Արշակ Ղուկասյան եղբայրներ, Ղորղանյան եղբայրներ, Օրբելյան եղբայրներ, Առաքել Ծատուրյանց[1305], Հովհաննես Միրզոյան, Գևորգ Լիանոզյան, և շատ ուրիշներ), որոնք և հիմք դրեցին զարգացման սաղմնային վիճակում գտնվող Բաքվի նավթարդյունաբերությանը: Նավթի առաջին շատրվանը 18 սաժեն

1300 Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), Երևան, 2000, էջ 210-215, 236-237, նույնի՝ Գաբրիել Տեր-Միքելյան (կյանքն ու գործունեությունը), Երևան, 1981:

1301 Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1801-1879), Երևան, 1959, էջ 54:

1302 «Տարազ», Թիֆլիս, 1891, մարտի 31, № 12, էջ 178:

1303 Баку и его окрестности, стр. 68.

1304 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 151-152:

1305 Բաքվի նշանավոր հարուստներից մեկը՝ նավթարդյունաբերող ու կալվածատեր Առաքել Ծատուրի Ծատուրյանը (1830-1904) ծնունդով Զանգեզուրի գավառի Քարահունջ գյուղից էր (տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թ. 112, տե՛ս նաև տե՛ս Գէորգ-բէգեան Բ., Քարահունջ, «Նոր-դար», Թիֆլիս, 1891, մարտի 27, № 50, նաև Վեհափառ Հայրապետի ուղեւորութիւնը, «Արարատ», 1898, № Թ, էջ 397):

խորությունից 45 մ բարձրությամբ ժայթքեց Բալախանիում՝ 1873 թ. հունիսի 13-ին հայազգի «Գ. Վերմիշև և Կ°» ընկերությանը պատկանող նավթադաշտում[1306]: 1890 թ. դրությամբ 226 մլն փութ նավթի հանույթի 46%-ը պատկանում էր հայերին, 47,3%-ը՝ ռուսներին և եվրոպացիներին, իսկ 6,7%-ը՝ կովկասյան այլ ազգություններին[1307]: Նավթարդյունաբերությունը ոչ միայն հարստացրեց Բաքուն, այլև XIX դարի երկրորդ կեսից՝ առավելապես դարի վերջում, վճռական դեր խաղաց հայ դրամատիրության ձևավորման գործընթացում:

Բաքվի նավթարդյունաբերության զարգացման ասպարեզում իրենց առանձնահատուկ դերն են ունեցել հատկապես արցախահայերը[1308], որոնք իրենց գործիմացության և անսպառ եռանդի շնորհիվ ձեռք են բերում մեծ հարստություն, նպաստում քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքի բարգավաճմանը: Արցախցիներ էին խոշոր նավթահանքերի տերեր, եղբայրներ Առաֆելյանները, Ղուկասյանները, Կրասիլնիկյանները, Գրիգոր և Հովսեփ Թումայան եղբայրները, Գրիգոր Դիլդարյանը, Մուսայել Շահգեդանյանը[1309] և շատ ուրիշներ[1310]: «Գաղտնիք չէ,- գրում է «Տարազը»,- որ Բագուի հայ հարուստները մի աննշան բացառութեամբ, բոլորը ղարաբաղցիներ են: Սրանք գաղթելով Բագու՝ իրանց բնածին ընդունակութեամբ եւ տոկունութեամբ մի երեսուն-քառասուն տարւայ ընթացքում շինել են այժմեան Բագու քաղաքը եւ ձեռք բերել ահագին հարստութիւն»[1311]: Անհրաժեշտ է նշել, որ Բաքվի հայ դրամատերերը, Բաքվից զատ, վիթխարի կարողությունների հասնող անշարժ գույք էին ձեռք բերել նաև Թիֆլիսում՝ այդտեղի լավագույն փողոցներում (Միքայելյան, Գոլովինսկի, Սոլոլակի թաղում և այլն) գնելով կամ կառուցելով շքեղ տներ[1312]: Այդ նպատակով իրենց կապիտալներն էին Թիֆլիսում ներդնում Ա. Ղուկասյանը, տիկ. Տեր-Հակոբյանը, Գ. Թումայանը, Գր. Առաֆելյանը, Կ. Կրասիլնիկյանը, Ս. Բուդաղյանը, Գևորգ և Ալեքսանդր Լալայանները և ուրիշներ[1313]: Բաքվի հայ դրամատերերի այս քայլը յուրովի մրցակցություն էր առաջ բերում Թիֆլիսի տնատերերի շրջանակներում: Ինչպես գրում է «Մուրճը». «Այդ հանգամանքը մեծապէս ազդել է Թիֆլիսի տների և հողերի գների վրայ, որովհետև բաքուեցիք, փողով առատ և տներից ոչ մեծ եկամուտների ակնկալութիւն ունեցողներ են, գնում են տներ ոչ սոցա այժմ տուած եկամուտների համաձայն, այլ շատ աւելի թանկ, միայն թե տները լինեն քաղաքի լաւագոյն փողոցներում...»[1314]:

Բաքվի հայ բնակիչները սիրում էին իրենց քաղաքը և շատ դեպքերում անհրաժեշտ ու համարձակ քայլերի էին դիմում նրա բարեկեցության համար: Այսպես՝ հայտնի է, որ Բաքուն հնուց ի վեր ունեցել է խմելու ջրի խնդիր: Եվ ահա առաջին կարգի վաճառական Մ. Մ. Սարահանյանը... իր միջոցներով Կուրի կանյանը Կուր գետի քաղցրահամ ջրերը քաղաք հասցնելու նպատակով

1306 Տե՛ս Гулишамбаров С., Об изменении рельефа Каспия. Общая причина изменения рельефа суши, вып. I, Баку, 1878, стр. 15-16, տե՛ս նաև «Արօր»-ի պատկերազարդ օրացույց 1894 թ., էջ 29:

1307 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 27-28, տե՛ս նաև Микаелян В., Мирзоян С., Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX-первые десятилетия XX вв.), ԼՀԳ, Երևան, 1990, № 2, էջ 77:

1308 Տե՛ս Магда Нейманъ, Армяне. Краткий очерк их истории и современного положения, СПб., 1899, стр. 151.

1309 Տե՛ս Գիլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, Թեհրան, 1981, էջ 23-30, տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1890, ապրիլի 15, № 8:

1310 Ավելի հանգամանորեն տե՛ս Ստեփանյան Գ., Արցախահայության դերը Բաքվի առևտրաարդյունաբերության զարգացման գործում. XIX դ. – XX դարասկիզբ (համառոտ ակնարկ), Միջազգային գիտաժողովի նյութեր նվիրված ԱրՊՀ-ի 40-ամյակին, Ստեփանակերտ, 2010, էջ 272-276:

1311 Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1892, № 25, էջ 350:

1312 Տե՛ս Туманов Г., Заметки о городском самоуправлении на Кавказе, Тифлис, 1902, стр. 83.

1313 Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 256, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 11:

1314 «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 256:

դետաբերանում կառուցեց խոշոր ջրամբարներ, քաղաքի զանազան մասերում՝ Բայիլից մինչև Սև և Սպիտակ քաղաք, անցկացրեց գետնափոր խողովակներ, վարձեց նավահանգիստ և կապալով ձեռք բերած նավերով մաքուր ջուր մատակարարեց քաղաքին[1315]:

XIX դարավերջին Բաքվի հայերն առաջատար դիրք ունեին քաղաքի ոչ միայն հասարակական-տնտեսական հարաբերություններում, այլև, շնորհիվ իրենց կրթվածության և գրագիտության, ընդգրկված էին հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Չկար մի այնպիսի բնագավառ, որտեղ հայերը գործուն մասնակցություն չունենային: Նրանք ոչ միայն հայտնի արհեստավորներ, վաճառականներ ու նավթարդյունաբերողներ էին, այլև պետական մարմինների ծառայողներ ու պաշտոնյաներ, Քաղաքային Դումայի անդամներ[1316], հաճախ նաև՝ քաղաքագլուխներ և տեղապահներ: Պատկերը փոքրիշատե ամբողջական դարձնելու նպատակով հարկ ենք համարում մեջբերել որոշ փաստեր: Այսպես՝ 1840-ական թվականների կեսերին Բաքվի քաղաքագլուխն էր քաղաքաբնակ ամբողջ հասարակության կողմից ընտրված Արղության նշանավոր իշխանական տոհմի ներկայացուցիչ պորուչիկ Պավել Փարսադանի Արղության-Երկայնաբազուկը (Դոլգորուկի)[1317], որը հետագայում՝ 1849-1850 թթ., Շամախիի գավառային վարչությունում աշխատել է որպես երդվյալ ատենակալ[1318]: Քաղաքագլուխ Ստանիսլավ Դեսպոտ-Զենովիչի (1885-1890-1895)[1319] կառավարման շրջանում (վերընտրվել է երկու անգամ) քաղաքային վարչության անդամ և քաղաքագլխի տեղապահն էր «Մարդասիրական ընկերության» նախագահ Քրիստափոր Սերգեյի Անտոնյանը[1320], որն այդ պաշտոնը անընդմեջ զբաղեցրել է տասնվեց տարի[1321]: Ս. Զենովիչից հետո Քր. Անտոնյանի և 2-րդ ռանգի կապիտան Կոնստանտին Իրեցկու միջև ընթացած ընտրապայքարում քաղաքագլուխ է դառնում Քր. Անտոնյանը[1322]: Սակայն Քաղաքային Դումայում տեղի ունեցած մի միջադեպ Քր. Անտոնյանին ստիպում է հրաժարական տալ, որից հետո քաղաքագլուխ է ընտրվում Կ. Իրեցկին[1323]: Երկու տարի անց՝ 1897 թ. հուլիսին, երբ Կ. Իրեցկին թողնում է

[1315] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1912, հոկտեմբերի 31,№ 242:
[1316] Քաղաքային Դուման ընտրվում էր չորս տարին մեկ անգամ, գույքային ցենզի հիման վրա: Այն ուներ իր վարչությունը, որի նախագահը քաղաքագլուխն էր:
[1317] Տե՛ս КК на 1846 г., Тифлис 1845, стр. 178. Զաքարյան իշխանական տոհմից սերված Պավել Փարսադանի Արղության-Երկայնաբազուկը ռուսահայոց հոգևոր առաջնորդ, ազգային-ազատագրական շարժման գործիչ Հովսեփ արքեպ. Արղության-Երկայնաբազուկի վաղամեռիկ եղբոր՝ Փարսադանի որդին էր (տե՛ս **Տէր-Աբրահամեան Յ.**, Յովսէփ Չորրորդ Երկայնաբազուկ Արղութեանց ընդհանրական առաջնորդ ռուսաքնակ Հայոց (1772-1800), իշխան կայսրութեան Ռուսաց եւ կաթողիկոս Ամենայան Հայոց, Ս.-Պետերբուրգ, 1881, էջ 4, տե՛ս նաև Արղութեան տոհմի ազնւականութիւն ստանալը, «Վէմ», Փարիզ, Ե տարի, 1937, № 1, հունվար-մարտ, էջ 85-92):
[1318] Տե՛ս КК на 1850 г., стр. 19, տե՛ս նաև КК на 1851 г., Тифлис, 1850, отд. V, стр. 21.
[1319] Всеподданнейший отчет о произведенной в 1905 году по Высочайшему повелению сенатором **Кузьминским**: ревизии города Баку и Бакинской губернии (б.м. и г.), стр. 250, տե՛ս նաև «Նոր-դար», Թիֆլիս, 1890, մայիսի 12, № 59, տե՛ս նաև КК на 1894 г., Тифлис, 1893, стр. 130.
[1320] Տե՛ս Ա. Մ. [**Ալեքսանդր Մովսիսյան**], Բագու, «Արձագանք», Թիֆլիս, 1885, հուլիսի 28, (I) № 4, էջ 52, տե՛ս նաև КК на 1894 г., стр. 130.
[1321] Տե՛ս Ն. Դ. [**Ներսես Դավթյան**], Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1894, մայիսի 24, № 58:
[1322] «Մուրճ», Թիֆլիս, 1894, № 1, էջ 159:
[1323] Քաղաքային Դումայի 1895 թ. հունվարի 3-ի նիստին իրավասուներ Աղաջան Ունանյանի և Կ. Իրեցկու միջև վիճաբանությունը ուղեկցվում է փոխադարձ վիրավորանքներով: Կ. Իրեցկին չի կարողանում համակերպվել քաղաքագլուխ չընտրվելու մտքի հետ և վայր է դնում իրավասուի իր լիազորությունները: Հարցն այն աստիճանի է բարդանում, որ իշխանությունները, օգտվելով առիթից, այդ ընդհարմանը փորձում են տալ ազգային բնույթ, այս «հանցանքի» մեջ մեղադրելով Քր. Անտոնյանին: Վերջինս ստիպված հրաժարական է ներկայացնում: Հատկանշական է, որ հունվարի 26-ին քաղաքագլխի պաշտոնի համար հայտարարված նոր ընտրությունների ժամանակ հաղթած Կ. Իրեցկուն մեծ մասամբ իրենց ձայ-

քաղաքագլխի պաշտոնը, նոր քաղաքագլխի հավանական թեկնածու էր համարվում Բաքվի նահանգական ինժեներ Հովհաննես Մարգարյանը[1324], սակայն քաղաքագլուխ է ընտրվում Մ.ի.ք. Բելյավսկին: Նրան հաջորդել է գնդ. Նիկ. Ավգուստ Ֆոն-դեր Նոննեն (1898 թ. նոյեմբերի 4-1901 թ. փետրվարի 28)[1325]: Վերջինիս կառավարման շրջանում վարչության անդամ էր Գրիգոր Այվազյանը[1326]:

Այսպիսով՝ ժողովրդագրական տվյալների վերլուծությունը փաստում է, որ XIX դարավերջին Բաքու քաղաքի հայ բնակչությունը կազմում էր ընդհանուր բնակչության մի շոշափելի մասը, որն ապրում էր համախմբված, աշխույժ հասարակական-քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքով:

ներն էին տվել հատկապես հայ պատգամավորները՝ դրանով իսկ փորձելով խուսափել ռուս չինովնիկների կողմից արհեստականորեն հրահրվող հակահայ տրամադրություններից (տե՛ս «Մուրճ», Թիֆլիս,1894, № 1, էջ 159):
[1324] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1897, հուլիսի 11, № 78:
[1325] Տե՛ս Всеподданнейший отчет о произведенной в 1905 году по Высочайшему повелению сенатором **Кузьминским**, стр. 309, տե՛ս նաև КК на 1900 г., стр. 176-177.
[1326] Տե՛ս КК на 1900 г., стр. 175.

Դ. ՂՈՒԲԱՅԻ, ՋԱՎԱԹԻ ԵՎ ԼԵՆՔՈՐԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐ

Ղուբայի գավառն ընկած էր Ղուբա և Դավաչի գետերի՝ Կասպից ծովի և Կովկասյան մեծ լեռնաշղթայի գագաթնագծի միջև[1320]: Հյուսիսից այն սահմանակից էր Դաղստանի մարզի Կյուրինի, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Սամուրի շրջաններին, հարավից՝ Նուխիի, Շամախիի և, փոքր ելուստներով՝ Գյոքչայի ու Բաքվի գավառներին, արևելքից՝ Կասպից ծովին: Գավառի տարածքը կազմում էր 6.300,7 կմ[1321]:

ՂՈՒԲԱ ՔԱՂԱՔ: Գավառի կենտրոնն էր, Այսրկովկասի վաճառաշահ քաղաքներից մեկը[1322]: Քաղաքն ընկած էր համանուն գետի աջ ափի բարձրության մի հարթակի վրա: Ղուբաչայ գետակը քաղաքը բաժանում էր երկու հատվածի: Գետակից աջ բնակվում էին հայերն ու կովկասյան թաթարները, իսկ ձախ՝ հրեաները: Վերջիններիս թիվը 1880 թ. տվյալներով՝ 700 էր[1323]: Գեն. Ի. Պասկևիչի կողմից 1830 թ. ապրիլի 24-ին ստորագրված «Անդրկովկասի մարզերի բնակչության ցուցակը» վավերագրում Ղուբա քաղաքում հիշատակվում է 1805 տուն[1324]: 1850 թ. օգոստոսի վերջերին Ղուբա այցելած Սարգիս արքեպ. Ջալալյանցը հետևյալ նկարագրությունն է թողել քաղաքի տեղագրության վերաբերյալ. «Է սա մինն ի շահաստան քաղաքաց աշխարհին Աղուանից, շինեալ յեզր Ղուտիար գետոյ, որ ելանէ ի ձիւնախաղաղ լերանց Կովկասու...: Բնակիչք են Հրէայք և Մահմետականք, տունք երկու հազարք»[1325]: Տեղի հայ բնակչության կազմը առավելապես համալրվել է Արցախից և մասամբ նաև Շամախուց եկածներով[1326]: Սարգիս արքեպ. Ջալալյանցի վկայությամբ՝ այստեղ նախապես բնակություն է հաստատել թիֆլիսեցի վաճառական Ստեփանոս Լազարյանցը, որն իր հետ բերել էր նաև այլ վաճառականներ և որպես հուսադրության նշան՝ կառուցել առաջին սեփական շինությունը. «...ժողովեալ է աստանօր զքանի մի տունս Հայոց և ի յուսադրութիւն նոցա զառաջինն կառոյց զմեծաշէն տունս և զկրպակս վասն իւր»[1327]: Նրա հորդորանքով քաղաքում հետագայում հաստատվել է ևս 35 տուն հայ[1328]: 1851 թ. տվյալներով՝ քաղաքն ուներ 43 (32 ար., 11 իգ.) հիմնական և 150 (ար.) ժամանակավոր հայ բնակիչ[1329]: 1853 թ. հայկական թաղի մեջ կառուցվել է եկեղեցի. «Յետ որոյ ինքնորդոր կամօք կառոյց զհոյակապ եկեղեցի հրաշաղան ձևով և վայելուչ գմբեթիւ, գծայրն որոյ պճնեալ ոսկեզօծ խաչիւ»[1330]: Արխիվային մի վավերագրի վկայությամբ՝ 1853 թ. քաղաքի հայ բնակչությունն ունեցել է 14 տուն[1331], իսկ 1861 թ. այդ թիվն արդեն հասել է 90-ի[1332]: 1863 թ. դրությամբ քաղաքն ուներ 1292 տուն՝ 10168 (4955 ար., 5213 իգ.) ազգաբնակչություն[1333]: 1865 թ. Ղուբան արդեն ուներ քարաշեն 1220, փայտաշեն 296 տուն և 10683 ազգաբնակչություն[1334]: «Տոմար ընտանեկան» օրացույցի մի տեղեկության համաձայն՝ 1865-ին հայերի թիվը եղել է մոտ 500[1335]: 1870 թ. քաղաքն ուներ 13062 (7230 ար., 5832 իգ.) բնակիչ[1336]: 1873 թ. դրությամբ քաղաքում կար 1397 տուն՝ 11324 (6219 ար., 5105 իգ.) ազգաբնակչություն, որից հայ՝ 62 (40 ար., 22 իգ.)[1337]: Կասկածից վեր է, որ այդ թվի մեջ չեն հաշվառվել ժամանակավոր բնակություն հաստատած հայ ընտանիքները:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ղուբայում զարգացած է եղել տորոնի մշակումն ու առևտուրը: Կասպից ծովի արևմտյան առափնյա շրջաններում շահութաբեր այդ զբաղմունքի մասին հիշատակություններ են հանդիպում դեռևս X դարի արաբ մատենագիր Իբն Հաուկալի մոտ[1338]: Կապված տորոնի և առևտրաարդյունաբերական այլ ապրանքների առևտրի աշխուժացման հետ քաղաքում մեծ թիվ էր կազմում ժամանակավոր բնակություն հաստատած ընտանիքների թիվը, որոնց զգալի մասը հետագայում մշտական բնակություն հաստատեց[1339]: 1884 թ. տվյալներով՝ քաղաքն ուներ մոտ 100 հայ ընտանիք, որոնք «յայտնի էին քաղաքին իրենց համեստ և խաղաղասեր բնաւորութեամբ»[1340]: 1886 թ. 13917 (7784 ար., 6133 իգ.) ազգաբնակչությունից հայերի թիվը 833 էր (531 ար., 302 իգ.)՝ կազմելով ամբողջ բնակչության 6%-ը[1341]: 1890 թ. հայերը քաղաքում ունեցել են 200 տուն՝ 750 բնակչով (400 ար., 350 իգ.)[1342]: «Թափառական» ծածկանունով հանդես եկող Վահան Ճարակյանը «Ղուբա քաղաքի հայերը» հոդվածում գրում է, որ 1896 թ. մարտի կեսերին Ղուբայում կար մոտ 200 ծուխ հայ[1343]: «...տորոնի առևտուրը ծաղկելով,- գրում է Վահան Ճարակյանը,- գալիս են այդտեղ բաւականին թուով թիֆլիզեցի, ղարաբաղցի և շամախեցի հայ դրամատէրեր, որոնցից շատերը բերելով իրանց ընտանիքները՝ մշտապէս հաստատվում են քաղաքում: Վերջիններիս օրինակին հետևելով՝ ժամանակի մանր վաճառականները եւ բերել են տալիս իրանց ընտանիքները և նոյնպէս մշտական բնակութիւն հաստատում. այսպիսով՝ հետզհետէ կազմվում է տեղւոյս հայերի ներկայ պատկառելի թիւը»[1344]: 1897 թ. մարդահամարի տվյալներով քաղաքի

1320 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 126:
1321 Տե՛ս **Котляревский П.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 289-290, տե՛ս նաև СНМ-1859-1864, стр. 2.
1322 Ըստ «Դերբենդ Նամե»-ի՝ Ղուբան հիմնադրել է Կավատ կամ Կուբադ I (483-531 թթ.) թագավորը (տե՛ս **Ашурбейли С.**, Государство Ширваншахов (VI-XVI вв.), стр. 15): Նադիր շահի մահից հետո 1750-ականներին Հուսեյն Ալի-խանի օրոք Ղուբան դարձել է խանության կենտրոն (տե՛ս Краткий исторический очерк городов Закавказского края, КК на 1846 г., стр. 50, տե՛ս նաև **Константинов В.**, Куба, КК на 1852 г., отд. III, стр. 334, տե՛ս նաև **Берже А.**, Прикаспийский край, КК на 1857 г., Тифлис, 1856, стр. 325.):
1323 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1880, օգոստոսի 20, № 144:
1324 Տե՛ս Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после просоединения к России (1830-1870), под ред. проф. **Н. Тавакаляна**, Ереван, 1993, стр. 62.
1325 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 422:
1326 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 2-3:
1327 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 423:
1328 Տե՛ս նույն տեղում:
1329 Տե՛ս **Константинов В.**, Куба, КК на 1852 г., отд. III, стр. 338.

1330 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 423:
1331 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 104:
1332 Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 138:
1333 Տե՛ս СНМ-1859-1864, стр. 80.
1334 Տե՛ս СССК, т. I, отд. II, стр. 62, 67.
1335 Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 137:
1336 Տե՛ս ССОК, т. II, стр. 351.
1337 Տե՛ս СНМ-1873, տե՛ս նաև ССОКБГ-1873.
1338 Տե՛ս Արաբական աղբյուրներ, Գ (**Իբն Հաուկալ**), էջ 635:
1339 Տե՛ս **Քալանթար Ա.**, Պանդխտութիւնը մեզանում, «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 11, էջ 1537: Ի դեպ, երկար տարիներ Ղուբայում տորոնի առևտրով է զբաղվել նաև Ալ. Շիրվանզադեի հայրը՝ Մինասը: Իր հուշերում Ալ. Շիրվանզադեն գրում է, որ իր հայրը սկզբում դերձակ էր, սակայն շուտով դեն նետեց ասեղը՝ միանալով շամախեցի բազմաթիվ «տորոնչիների» խմբին, որոնք կարմիր ներկի համար տորոն էին մատակարարում Մոսկվայի, Մարսելի ու Մանչեստրի մանուֆակտուրային ձեռնարկատերերին (տե՛ս **Շիրվանզադէ Ալ.**, Իմ կեանքից, «Հասկեր», Թիֆլիս, 1910, № 11, էջ 319-320):
1340 «Նոր-դար», Թիֆլիս, 1884, դեկտեմբերի 6, № 199:
1341 Տե՛ս ССДНЗКИПС-1886, տե՛ս նաև «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 10-11, էջ 1388:
1342 Տե՛ս **Բարխուդարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 128:
1343 Տե՛ս **Թափառական [Վահան Ճարակյան]**, Ղուբա քաղաքի հայերը (հայերի թիվն ու նրանց գաղթը, պարապմունքն ու բնոյթը, եկեղեցին ու դպրոցը), «Արձագանք», Թիֆլիս, 1896, մարտի 15, № 31:
1344 Նույն տեղում:

15363 (8160 ար., 7203 իգ.) ազգաբնակչությունից հայերի թիվն արդեն 807 էր (446 ար., 361 իգ.)[1345]` կազմելով ամբողջ բնակչության 5,3%-ը: Քաղաքի հայ բնակչությունն իր թվաքանակով չորրորդն էր թաթարներից` 7134 (46%), հրեաներից` 3775 (24,6%) և թաթերից` 2437 (16%) հետո[1346]: Ղուբայում հայերի թվի տատանումները պայմանավորված են այն հանգամանքով, որ քաղաքը, լինելով առևտրական կենտրոններից մեկը, տարբեր ժամանակներում նվազում կամ աճում էր ի հաշիվ այստեղ ժամանակավոր բնակություն հաստատած ինքնագործ հայերի:

Այսպիսով` Ղուբա քաղաքի հայ բնակչության շարժընթացը և փոփոխությունները, ըստ 1853-1897 թթ. վիճակագրական տվյալների, ունեն հետևյալ պատկերը[1347].

Աղյուսակ № 13

1851	1853	1861	1873	1886	1890	1890	1897
Բնակիչ	Ծուխ	Ծուխ	Բնակիչ	Բնակիչ	Ծուխ	Բնակիչ	Բնակիչ
43	14	90	62	833	200	750	807

1886 թ. ընտանեկան տվյալների համաձայն` Ղուբայի գավառն ունեցել է 325 բնակավայր, որոնք բաժանված էին գյուղական 88 համայնքների միջև[1348]: Գավառում հայաբնակ է եղել 3 գյուղ:

ԽԱՉՄԱՍ ԿԱՄ ՆՈՐ ԽԱՉՄԱՍ (ԽԱՉՄԱԶ)[1349]: Հիմնված էր Վատնյան դաշտի շարունակության վրա` մի գեղեցիկ դաշտահովտում[1350]: Դեռևս XVIII դարավերջին և XIX դարասկզբին 52 տուն հայ բնակչությամբ գոյություն են ունեցել Մեծ և Փոքր Խաչմաս գյուղերը[1351], որոնք, հարակից լինելով, կազմել են քաղաքավան: Ըստ Ս. Էփրիկյանի` «Ի հնումն հայաբնակ քաղաքաւան Աղուանից, և այժմ փոքրիկ գիւղ Հայոց և Մահմէտականաց»[1352]: XIX դարի երկրորդ կեսի ռուսական պաշտոնական վիճակագրական տեղեկագրերի տվյալների համաձայն` Մուշկուրի տեղամասի Խաչմաս գյուղական համայնքը և համանուն գյուղը կրում էր Նոր Խաչմաս անունը[1353], որից ոչ հեռու` 10 կմ հեռավորության վրա, գտնվում էին հին Խաչմասի ավերակները և ընդարձակ գերեզմանատունը: «Ղարաջալլեցի» ծածկանունով հեղինակը 1783 թ. լինելով հայոց ավերակ գերեզմանատանը, «Մեղու Հայաստանի» լրագրին հղած թղթակցությունում դառնացած գրում էր. «...իբրև յիշատակ մնացել են միայն Հայոց գերեզմանատները, որոնց մամռապատ և մինչև բողաղը հողի մէջ ներս խրուած քարէ յիշատակարանները ցաքուցրիւ սփռուած են այս և այն ձորում կամ փոսում, որտեղից չատ հեշտութեամբ

1345 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.
1346 Տե՛ս նույն տեղում, стр. 52-53.
1347 Աղյուսակը կազմված է ըստ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 104; Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 138; ССДНЗКИПС-1886; «Նոր-դար», Թիֆլիս, 1890, դեկտեմբերի 14, № 199; ПВПНРИ-1897, таблица XII, стр. 50, таблица XIII, стр. 53, таблица XIV, стр. 66-67 տվյալների. հաշվարկը մերն է:
1348 Տե՛ս ССДНЗКИПС-1886, стр. XI.
1349 Ղազար քհն. Հովսեփյանցը հետևյալ ստուգաբանումն է տվել Խաչմաս տեղանվանը. «Խաչ-մաս, որ նշանակում է խաչի մասունք կրող» (Ղազար քհյ Յովսէփեան, Նուխուայ գաւառի մահմեդական հայերը (Թոփչեան Ե., Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1905 թ., էջ 194): Տեղացի հայերն անվանել են Խոչմազ (տե՛ս КК на 1857 г., стр. 382). Ըստ Մեսրոպ. արքեպ. Սմբատյանցի` «Խաչմաս բառը պարզ հայերէն է, և նշանակում է այստեղ Խաչի մասն լինել, և գուցէ Աղուանից պատմութեան մէջ յիշուած խաչն լինի...» (Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 544):
1350 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 130:
1351 Տե՛ս **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, стр. 383, տե՛ս նաև **Бутков П.**, նշվ. աշխ., ч. I, стр. 94, տե՛ս նաև ч. III, стр. 424, տե՛ս նաև Յակոբեան Ա., Հայ-թաթերի տարաբաշխվածութեան ու տեղահանութիւնների պատմութիւնից, էջ 131-132:
1352 Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, գիրք Ա, էջ 149:
1353 Տե՛ս СНМ-1859-1864, стр. 92, տե՛ս նաև ССДНЗКИПС-1886.

Թուրքի սրբապիղծ ձեռքով դուրս են քարշվում և մի քանի հաջիների կամ բեգերի շինութիւնների հիմնաքարը դառնում»[1354]: Հին Խաչմազի հայերը դեռևս 1796-1797 թթ. գաղթել էին Հյուսիսային Կովկաս և հաստատվել Սուրբ Խաչում[1355]: Գյուղատեղին, որն ունեցել է պտղաբեր հող և առատ ջուր, համարվել է Ներսես Սարումյանցի սեփական կալվածքը[1356]: Թեև վերջինս մտադրություն է ունեցել վերաշինել գյուղը և այն բնակեցնել հայ ընտանիքներով, սակայն վերաբնակեցման մասին հետագա աղբյուրները, էստ էության, տեղեկություններ չեն պահպանել:

Նոր Խաչմասը նահանգի թաթախոս հայերի բնակավայրերից մեկն էր: Ընդ որում, գյուղամիջով հոսող գետակի աջ ափին բնակվել են հայերը, իսկ ձախին` սուննի և շիա մահմեդականները: 1850 թ. գյուղ այցելած Սարգիս արքեպ. Ջալալյանցը վկայում է. «...բնակիչք են Հայք, տունք յիսուն, օդն ծանր, երկիրն արգաւանդ և բերրի, ծառազարդ և պտղալի, լինի առատ գարի, ցորեան, բրինձ, տորոն, և մետաքս չատ»[1357]: 1853 թ. գյուղն ունեցել է 31 ծուխ[1358], իսկ 1863 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով` 38` 164 բնակչով (89 ար., 75 իգ.)[1359]: Նույն թվականի տվյալներով` գյուղում բնակվել են նաև սուննի կովկասյան թաթարներ[1360]: Նկատենք, որ 1863 թ. ընտանեկան ցուցակներում առանձին-առանձին նշված չէ ինչպես հայ, այնպես էլ թաթար ծխերի արական և իգական բնակիչների թիվը: Սակայն նույն աղբյուրի ամփոփիչ աղյուսակում հստակ գրված է, որ Ղուբայի գավառում հայ բնակչության թիվը կազմել է 528, որից միայն Քիլվարինը` 446 հոգի: Հետևապես ստացվում է, որ Խաչմասում հայերի թիվը եղել է 82: «Մեղու Հայաստանի» ամսագրի հաղորդած մի տեղեկության համաձայն` 1871 թ. գյուղն ունեցել է 50 գերդաստան[1361]: 1873 թ. տվյալներով` հայերն ունեցել են 30 ծուխ` 168 բնակչով (89 ար., 79 իգ.)[1362]: Նույն թվականի տվյալներով` գյուղում ապրող սուննի կովկասյան թաթարների թիվը կազմել է 13 ծուխ` 68 բնակչով (42 ար., 26 իգ.)[1363]: Շամախիի թեմի առաջնորդ Սահակ վրդ. Միքայելյանի (1874-1876 թթ.) տվյալներով` 1875 թ. վերջերին հայերը գյուղում ունեցել են 27 ծուխ[1364]: Թեմակալը նշում է. «...եկի և գեղջն Խաչմազու, որ անկանի յարևմտակողմն Ղուբայու քսան և հինգ վերստ հեռաւորութեամբ, շրջապատեալ տաճկական գիւղօրէիւք, ուրանօր տունք Հայոց են քսան և եօթն...»[1365]: 1886 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով` գյուղն ունեցել է 45 ծուխ, որից հայ բնակչությունը` 32 (75 ար., 96 իգ.), իսկ թաթարները` 13 ծուխ (35 ար., 26 իգ.)[1366]: 1890 թ. տվյալներով` հայ բնակչությունն ունեցել է 32 ծուխ` 194 բնակչով (110 ար., 84 իգ.)[1367]:

1354 Ղարաջալլեցի, Մաջառ (Սուրբ Խաչ քաղաք) «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, հուլիսի 7, 1879, № 51:
1355 Տե՛ս նույն տեղում:
1356 Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 546:
1357 Տե՛ս Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 420:
1358 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 104:
1359 Տե՛ս СНМ-1859-1864, ч. VI, стр. 67.
1360 Տե՛ս նույն տեղում, նաև КК на 1857 г., стр. 382.
1361 Տե՛ս Ներսէս Սարումեանց, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1871, հոկտեմբերի 16, № 38, էջ 299:
1362 Տե՛ս СНМ-1873.
1363 Տե՛ս նույն տեղում:
1364 Տե՛ս «Արարատ», 1876, № Ա, էջ 33:
1365 Նույն տեղում:
1366 Տե՛ս ССДНЗКИПС-1886.
1367 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 133:

ՔԻԼՎԱՐ: Գտնվում էր Կովկասյան Մեծ լեռնաշղթայից Փոքր լեռնաշղթայի վրա կախված մի լեռնաբազկի վրա, որի հյուսիսային կողմով հոսել է Շապորան գետը[1368]: Գյուղը Թաթախոս հայերի բնակավայրերից էր: 1929 թ. Քիլվար այցելած արևելագետ Բ. Միլլերի հայտնած տեղեկության համաձայն՝ 140 ընտանիքներից 30-ը վաղ ժամանակներում՝ մի քանի սերունդ առաջ, գաղթել են Շամախիից, Բարքանչից, Քալախանից, Մատրասայից, ինչպես նաև մեկական ծուխ Երևանից, Արցախից և Ղարաջալիից[1369]: Նույն հեղինակի վկայակոչած տվյալներով՝ Հյուսիսային Կովկաս գաղթից հետո XVIII դարի վերջին Քիլվարն ունեցել է 50 ծուխ հայ բնակիչ[1370]: Հնուց ի վեր Քիլվարի հայաբնակ լինելու վկայությունը գյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ հին եկեղեցին է, որը հիմնովին վերանորոգվել էր Շամախիի թեմի առաջնորդ Ներսես վարդապետի օրոք (1551-1601 թթ.), ըստ արձանագրության՝ ՌԼԴ (1585) թվականին[1371]: Եկեղեցին երկրորդ անգամ հիմնովին վերակառուցվել է 1637 թ.՝ Շամախու թեմի առաջնորդ Թովմա կամ Թումա անունով վարդապետի թեմակալության տարիներին (1632-1637 թթ.) քարագործ վարպետ Կիրակոսի ձեռքով: Եկեղեցու պատին արձանագրված է. «Շինեցաւ սուրբ եկեղեցիս ի ժամանակն եւ ի Հայրապետութեան Թոմայ վարդապետի թվին ՌՁՁ-ին. ձեռամբ ուստայ Կիրակոսին»[1372]: Սարգիս արքեպ. Ջալալյանցի այցելության ժամանակ գյուղն ուներ 40 տուն. «...բնակիչք են Հայք, տունք քառասուն, դիրք տեղւոյն վայելուչ, և ի շրջապատն թաւաթուփ անտառք, ամրապինդ խոխոմք և անմատչելի ծործորք»[1373]: 1853 թ. գյուղն ունեցել է 41 ծուխ[1374], 1863 թ.՝ 56՝ 446 բնակչով (222 ար., 224 իգ.)[1375]: «Մեղու Հայաստանի» ամսագրի հաղորդած մի տեղեկության համաձայն 1871 թ. հոկտեմբերին գյուղն ունեցել է 70 գերդաստան[1376]: 1873 թ. գյուղն արդեն ուներ 78 ծուխ՝ 513 բնակչով (259 ար., 254 իգ.), ընդորում, բնակչության շրջանում գերակայել է թաթերեն լեզուն[1377]: Թեմի առաջնորդ Սահակ վրդ. Միքայելյանի՝ 1875 թ. վերջերին այցելության ժամանակ գյուղն ունեցել է 74 ծուխ հայ բնակչություն. «...ելի և գեղջն Քիլվարու, որ անկանի յարևելահարաւային կողմն Ղուբայու քառասուն վերստ հեռաւորութեամբ, շրջապատեալ գիւղօրէից տաճկաց. վարին ընդ միմեանս ի լեզու և ի տարազ կենցաղավարութեան տաճկաց. տունք Հայոց ի սմա են եօթանասուն և չորս...»[1378]: 1886 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով՝ գյուղն ունեցել է 82 ծուխ՝ 680 բնակչով (372 ար., 308 իգ.)[1379]: 1890 թ. հայ բնակչությունը կազմում էր 100 ծուխ՝ 420 բնակչով (220 ար., 200 իգ.)[1380]:

[1368] Տե՛ս նույն տեղում, էջ 139:
[1369] Տե՛ս **Миллер Б.**, նշվ. աշխ., стр. 15.
[1370] Տե՛ս նույն տեղում, стр. 14, տե՛ս նաև Հակոբյան Ար., Թարախոս հայեր, էջ 73:
[1371] Տե՛ս Բարխուդարյան Ս., նշվ. աշխ., էջ 147:
[1372] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 424, հմմտ. Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 542, Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 139:
[1373] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 423:
[1374] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 104:
[1375] Տե՛ս СНМ-1859-1864, ч. VI, стр. 55.
[1376] Տե՛ս Ներսէս Սարումեանց, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1871, հոկտեմբերի 16, № 38, էջ 299:
[1377] Տե՛ս СНМ-1859-1864, ч. VI, стр. 55, նաև СНМ-1873.
[1378] «Արարատ», 1876, № Ա, էջ 33:
[1379] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[1380] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 139:

* * *

Ս. Բրոնևսկու տեղեկացմամբ 1796-1897 թթ. Հյուսիսային Կովկաս գաղթից հետո XIX
դարի սկզբներին Ղուբայի պրովինցիայում վերոնշյալ գյուղերից բացի, հայաբնակ էին Բարա-
խում (I), Բարախում (II), Ղարաջալի և Ղարաղուրտ գյուղերը[1381]: Ղուբայից Ն. Սարումյանցի՝
1871 թ. հոկտեմբերի 8-ին «Մեղու Հայաստանի» ամսագրին հղած թղթակցությունից պարզ-
վում է, որ Հյուսիսային Կովկաս գաղթից հետո Ղարաջալի հայաբնակ գյուղն ուներ դեռևս 4
գերդաստան հայ[1382]: 1886 թ. գյուղն ուներ 14 ծուխ՝ 67 բնակչով, որից հայեր՝ 3 ծուխ՝ 14
բնակչով (11 ար., 3 իգ.)[1383]: Ղարաջալի և մերձակա Արար-Սարու գյուղերը ժամանակին եղել
են շամախեցի Լալայան եղբայրների սեփական կալվածքը[1384]:
Ղարաջալի գյուղի փոքրաթիվ հայերի մասին հետագա աղբյուրները, մասնավորապես
Ղուբայի գավառում շրջագայած Մակար եպս. Բարխուտարյանցի ու Մեսրոպ արքեպ. Սմբատ-
յանցի տեղեկությունները բացակայում են: Բ. Միլլերի վերոբերյալ տեղեկությունից են-
թադրվում է, որ գյուղի վերջին հայերը վերաբնակվել են Քիլվար և Խաչմաս գյուղերում[1385]:
Մակար եպս. Բարխուտարյանցի այցելության ժամանակ դեռևս պահպանվում էին Քիլվար
գյուղի շրջակայքում գտնվող երբեմնի հայաբնակ Թալաբի, Խաչնի, Դիխան կամ Օհան Խան-
[1386], Ուլվար և Ջեյվա գյուղերի եկեղեցիների ավերակներն ու գերեզմանատները: Ջեյվա գյու-
ղում բնակվում էին մահմեդականացած հայեր[1387]: Թալաբի գյուղը բաժանված է եղել երկու
հատվածի՝ իրար մոտ գտնվող Վերին և Ներքին Թալաբիների: Մակար եպս. Բարխուտարյանցը
Ներքին Թալաբիից ոչ հեռու գտնվող գերեզմանատանը կարդացել է տապանագրի հետևյալ
արձանագրությունը. «Աստ փոխեցաւ ի Քրիստոս... թ. ՇԷ (1058)», «Այս քար, Աստուած ողոր-
մի... թ. ՌՂ (1241)» և «Աստուած ողորմի Մխիթարին...թ. ՋՀԸ (1529)»[1388]: Կիսավեր եկեղեցին
գտնվում էր Վերին Թալաբիում, որից ոչ հեռու ընկած էր հայկական գերեզմանատունը, ուր
շատ էին քահանաներին պատկանող տապանաքարերը: Տեղացիների պատմելով՝ գյուղը ժամա-
նակին ունեցել է 500 տուն հայ բնակչություն, որոնք Վ. Զուբովի ժամանակ գաղթել են Ռուս-
աստան, Ղզլարի շրջան, բացի 8 տնից, որոնք, բռնի մահմեդականություն ընդունելով, մնա-
ցել են տեղում, և ներկա պահին երկու Թալաբիների բնակիչները նրանց սերունդներն են[1389]:
Վերը նշված գյուղերի բնակիչները, որոնք XVIII դարի վերջին գաղթել էին Հյուսիսային Կով-
կաս, Թաթախոս հայեր էին[1390]: Եղիշե ավ. քհն. Գեղամյանցը «Կորած աշխարհից» հոդվածում
գրում է. «Ղուբայի լեռներում, ինչպէս երեւում է հայկական տապանաքարերից, ժողովրդի ա-
ւորութիւններից, մի ժամանակ բազմաթիւ հայ գիւղեր են եղել, որոնք բոլորն էլ կուլ են գնա-
ցել պարսից ազդեցութեան տակ»[1391]: Ն. Ջեյդլիցի կազմած տեղեկագրում Ղուբայի գավառում

Ханство Кубинское), стр. 383.
[1381] Տե՛ս **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, гл. III, Ширван (Ханство Кубинское), стр. 383.
[1382] Տե՛ս Ներսէս Սարումեանց, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1871, հոկտեմբերի 16, № 38, էջ 299:
[1383] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[1384] Տե՛ս Խ. ա. ք. Մ. [Խորեն ավ. քհն. Միրզաբեկյան], Կենսագրական ակնարկ շամախեցի Լալայեանց ազնիւ տոհմի (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 11, տե՛ս նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 337):
[1385] Տե՛ս **Миллер Б.**, նշվ. աշխ., стр. 15.
[1386] Ավանդության համաձայն, գյուղը հիմնադրել է Արցախից վերաբնակված հայազգի Օհան խանը, որն իր հետ բերել էր 100 ծուխ: 1796-1897 թթ. գյուղը գաղթել է Հյուսիսային Կովկաս (տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 142-143):
[1387] Տե՛ս նույն տեղում, էջ 141:
[1388] Նույն տեղում, էջ 137:
[1389] Տե՛ս նույն տեղում:
[1390] Տե՛ս Յակոբեան Ա., Հայ-թաթերի տարաբաշխվածութեան ու տեղահանութիւնների պատմութիւնից, էջ 131:
[1391] Ընթերցող [Եղիշե ավ. քհն. Գեղամյանց], Կորած աշխարհից, «Արձագանք», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 12, № 132:

նչված է նաև «Հայի գյուղ» («Армяни-дигяхъ») բնակավայրը, որտեղ 1863 թ. բնակվում էին փոքրաթիվ շիա թաթեր[1392]: Ղուբա քաղաքի քահանա Ավագ Ավշարյանցը, որ Թեմակալ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի պահանջով 1887 թ. դեկտեմբերի կեսերին շրջագայել է Ղուբայի շրջակա երբեմնի հայաբնակ հնավայրերում, Թեմակալին 1888 թ. փետրվարի 4-ին հղած գրությունում ասում է. «...չգտայ ոչ մի հնութիւն բացի հայոց հանգստարաններից, որք գտանին քաղաքից հեռու Թուրքաբնակ գիւղօրէից մօտ անտառներում և մացառուտ տեղերում, յորոց մասին ոմանք ականատեսք պատմում են թէ, 800 ից մինչև 1000 տարուան արձանագրեր գան գերեզմանաքարերի վրայ...»[1393]:

Այսպիսով՝ Ղուբայի գավառում (առանց քաղաքի) 1863 թ. հայ բնակչության թիվը կազմում էր 528 (267 ար., 261 իգ.)[1394], 1873 թ.՝ 681 (348 ար., 333 իգ.)[1395], 1886 թ.՝ 865 (458 ար., 407 իգ.)՝ կազմելով ամբողջ բնակչության 0,63%-ը[1396]: 1892 թ. հունիսի 6-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում բռնկված խոլերայի հետևանքով գավառում հիվանդացել էր 3837 և մահացել 2755 բնակիչ[1397]: 1897 թ. գավառում հայերի թիվը եղել է 384 (219 ար., 165 իգ.)[1398]: Հարկ է նշել, որ «Բնակչության տեղաբաշխումն ըստ դավանանքի և մայրենի լեզվի» աղյուսակի տվյալների համաձայն՝ Ղուբայի գավառում 554 մարդ (282 ար., 272 իգ.) նշված են որպես թաթերեն խոսող հայ առաքելականներ[1399]: Քանի որ 1897 թ. մարդահամարը չէր կատարվել ըստ էթնիկ հատկանիշների, ուստի դրա տակ պետք է նկատի ունենալ թաթախոս հայերին[1400]:

Ղուբա գավառի (առանց քաղաքի) հայ բնակչության թվի շարժընթացը և փոփոխությունները, ըստ 1853-1897 թթ. համեմատական տվյալների՝ ունեն հետևյալ պատկերը[1401].

Աղյուսակ № 14

Բնակավայր	1853 Ծուխ	1861 Ծուխ	1863 Ծուխ	1863 Բն-իչ	1871 Ծուխ	1873 Ծուխ	1873 Բն-իչ	1886 Ծուխ	1886[1402] Բն-իչ	1890 Ծուխ	1890 Բն-իչ	1897 Բն-իչ
Խաչմաս	31	26	20[1403]	82	50	78	513	32	171	100	567	-
Ղարաջալի	-	-	-	-	4	-	-	3	14	-	-	-
Քիլվար	41	87	56	446	70	30	168	82	680	45	340	-
Ընդամենը	72	113	94	528	124	108	681	117	865	145	907	384

[1392] Տե՛ս СНМ-1859-1864, ч. VI, стр. 56.
[1393] **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 540:
[1394] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 78.
[1395] Տե՛ս СНМ-1873, նաև ССОК, т. V.
[1396] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[1397] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 20, № 148:
[1398] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.
[1399] Տե՛ս նույն տեղում, таблица XIV, стр. 54.
[1400] Տե՛ս **Акопян Ар.**, Татоязычные армяне 15 веков от «армянства» к «армянству», Южный Кавказ: Территории. Истории. Люди.Сборник статей (Helnrlch Boll. Stlftung), Тбилиси, 2006, стр. 190-193.
[1401] Աղյուսակը կազմված է ըստ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 104; СНМ-1859-1864, ч. VI, стр. 78; «Մեղու հայաստանի», Թիֆլիս, 1871, հոկտեմբերի 16, № 38, էջ 299; СНМ-1873; ССДНЗКИПС-1886; **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 139; ПВПНРИ-1897, таблица XII, стр. 50, таблица XIII, стр. 53, таблица XIV, стр. 64-65 տվյալների. հաշվարկը մերն է:
[1402] Անհրաժեշտ ենք համարում այստեղ նշել, որ 1886 թ. ընտանեկան ցուցակներում Ղուբայի գավառի հայաբնակ գյուղերի շենքերի վերաբերյալ առկա են թվական տվյալների սխալ հաշվարկներ: Օրինակ՝ թեև Քիլվար գյուղում նշված է 680 (372 ար., 308 իգ.), Խաչմասում՝ 171 (75 ար., 96 իգ.) և Ղարաջալիում՝ 14 (11 ար., 3 իգ.) մարդ, սակայն ամփոփիչ աղյուսակում միայն գավառում հայ բնակչության ընդհանուր թիվը անհասկանալիորեն նշված է 1020 (541 ար., 479 իգ., տե՛ս ССДНЗКИПС-1886): Ուստի, գավառի ամփոփիչ աղյուսակում նշված են մեր կողմից հաշվարկված և ճշտված տվյալներ:
[1403] Ընտանեկան ցուցակում գյուղի հայ բնակչության ծխերի վերաբերյալ հստակ թվի բացակայության պատճառով աղյուսակում դա նշել ենք մոտավոր թվով:

Ըստ 1863-1897 թթ. պաշտոնական վիճակագրական տվյալների՝ Ղուբա գավառի (ներառյալ քաղաքը) հայ բնակչության շարժընթացն ունի հետևյալ պատկերը[1404].

Աղյուսակ № 15

1863		%	1873		%	1886		%	1897		%
ար.	իգ.	0,41	ար.	իգ.	0,5	ար.	իգ.	1	ար.	իգ.	0,65
267	261		388	355		989	709		665	526	
528			743			1698			1191		

* * *

Ջավաթի գավառը Կուր գետով հյուսիսից սահմանակից էր Գյոքչայի, Շամախու, հյուսիս-արևելքից՝ Բաքվի գավառներին, արևելքից՝ Կասպից ծովին, հարավից՝ Լենքորանի գավառին, հարավ-արևմուտքից՝ Ատրպատականին, արևմուտքից՝ Շուշվա և Կարյագինոյի գավառներին: Տարածքը կազմում էր 9.837,5 քառ. կմ[1405]:

<u>ՍԱԼՅԱՆ ԱՎԱՆ</u>: Գավառի կենտրոնն էր Սալյան[1406] ավանը, ուր հիմնականում կենտրոնացված էր Բաքվի նահանգի ձկան և ջրում լուծված աղերի արդյունաբերությունը[1407]: Սալյանում բնակվել են հայեր, կովկասյան թաթարներ, իրանցիներ, ռուսներ և դաղստանցիներ[1408]: Ավանը բաժանված էր 12 թաղամասերի[1409]: 1842 թ. սեպտեմբերին Սալյան այցելած Ի. Բերեզինը նշում է, որ այդտեղ կար 900 տուն ազգաբնակչություն և ընդամենը 3 հայ (1 ար., 2 իգ.)[1410]: Սարգիս արքեպ. Ջալալյանցը հետևյալ նկարագրությունն է թողել Սալյանի վերաբերյալ. «...գետքն Երասխ և Կուր յետ միանալոյ դարձեալ բաժանին յերկուս յառաջս և այնպէս գնացեալ ընդ միոյ աւուր ճանապարհ դադարին ի ծով Կասպից, թողլով ի մէջի զընդարձակ կղզի, ուրանօր է Սալիան, օդն ծանր է և ջուրն առողջարար և չահաստան միանգամայն ի կողմանէ ձկանց...»[1411]: 1852 թ. տվյալներով՝ հայերի թիվը 7 էր (4 ար., 3 իգ.)[1412]: 1855 թ. տվյալների համաձայն՝ ավանում 1125 տնից հայերն ունեցել են 3, ռուսները՝ 4, շիա և սուննի մահմեդականները՝ 1118 տուն[1413]: 1863 թ. դրությամբ ավանն ուներ 1397 տուն՝ 10634 (5650 ար., 4984 իգ.)[1414], իսկ արդեն 1870 թ.՝ 9489 (4855 ար., 4634 իգ.) բնակիչ[1415]:

[1404] Աղյուսակը կազմված է ըստ СНМ-1859-1864, ч. VI, стр. 67; СНМ-1873; ССДНЗКИПС-1886; ПВПНРИ-1897, таблица XII, стр. 50, таблица XIII, стр. 53, таблица XIV, стр. 64-67 տվյալների. հաշվարկը մերն է:
[1405] Տե՛ս **Алифин С.**, նշվ. աշխ., стр. 289-290, նաև СНМ-1859-1864, стр. 2.
[1406] Ըստ Վ. Մինորսկու՝ Սալյանը հիմնվել է Գեշբասփ կամ Գուշբասփ քաղաքի վայրում (տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., стр. 108). Գեշբասփ քաղաքը ձգվում էր Արաքսի հետ միացման վայրից Կուր գետի երկայնությամբ մինչև Կասպից ծովը: Ըստ Սարգիս արքեպ. Ջալալյանցի՝ «Ըստ Պարսից պատմութեան էր սա (Սալյանը - Գ. Ս.) ականաւոր քաղաք յաշխարհին Աղուանից, հիմնեալ ի Գէշտասփէ, որդւոյ Լոհրասպայ, յազգէ Սասանեաց» (**Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 364): Սալյանը քաղաքի կոչում է ստացել ավելի ուշ՝ 1916 թ.:
[1407] Տե՛ս **Гагемейстер Ю.**, Закавказские очерки, СПб., 1845, стр. 7-10.
[1408] Տե՛ս **Броневский С.**, նշվ. աշխ., ч. II, гл. III, Ширван (Сальянское владение), стр. 423.
[1409] Տե՛ս **Калашев Н.**, Местечка Сальяны. Джеватского уезда Бакинской губерни (СМОМПК, вып. V, Тифлис, 1886, стр. 76). Հոդվածագիր Նիկոլայ Քալաշյանցը ծնունդով եղել է Շամախիի գավառի Սաղիան գյուղից: Երկար տարիներ դասավանդել է Գյոքչա ավանի ուսումնարանում (տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 210):
[1410] Տե՛ս **Березин И.**, նշվ. աշխ., ч III. гл. V (От Баку до Салиана), стр. 105.
[1411] **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 366-367:
[1412] Տե՛ս **Калашев Н.**, նշվ. աշխ., стр. 123.
[1413] Տե՛ս КК на 1856 г., стр. 448.
[1414] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 100.
[1415] Տե՛ս ССОК, т. II, стр. 351.

1863-1873-1886 թթ. ընտանեկան և բնակավայրերի ցուցակներում Սալյան ավանում նշված չէ հայ բնակչության թվի վերաբերյալ որևէ տեղեկություն: 1881 թ. ավանում հայերն ունեին 3 քարաշեն տուն և նույնքան էլ խանութ-կրպակ[1416]: Սալյանից Հ. Յուզբաշյանի` «Նոր-դար» և «Մշակ» լրագրերին հղած թղթակցություններում տեղեկացվում է, որ 1880-ական թվականների սկզբներին ավանն ուներ «Հայ փոքրիկ հասարակութիւն»[1417]: 1880 թ. հիմնված տեղի մեկդասյա ուսումնարանում 1881 թ. սովորում էր 2, 1882 թ.` 2, 1883 թ.` 1 հայ աշակերտ[1418]: 1891 թ. դրությամբ հայերը Սալյան ավանում և շրջակայքում ունեցել են 47 տուն` 541 բնակչությամբ, որի մի մասը եղել են ժամանակավոր բնակիչներ[1419]: Այդ մասին հստակ պատկերացում է տալիս Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի կողմից 1891 թ. կազմված և ստորև ներկայացված աղյուսակը[1420].

Աղյուսակ № 16

Բնակավայր	Տուն	Երկսեռ բնակչ. թիվը
Բաղդանով	1	15
Սալյան	20	115
Արկուշա	1	67
Նիկոլաևկա	1	50
Բոժի Պրոմիսլա	10	173
Բանկ	1	63
Նորաշեն	7	38
Ջիստ-Օստի, Կուլտուկ	6	20
Զուբով	1	1
Ընդամենը	48	542

Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը, անդրադառնալով Սալյանում և ձկնարդյունաբերական վայրերում բնակություն հաստատած հայ բնակչության թվաքանակի հարցին, աղյուսակի ծանոթագրության սյունակում պարզաբանում է, որ տների թվում նշված են ընտանիքավոր պաշտոնյաններն ու արհեստավորները, իսկ երկսեռ բնակչության թվում` մշակ-բանվորները, անտուն ընտանիքներն ու առանց ընտանիքների` արտադնա աշխատանքի եկած կրպակարանականները: Նրա պարզաբանմամբ` «...Սալեանի ձկնորսատեղեաց հայերը չունին հաստատուն բնակութիւն, ըստ որում նոցա հաստատութիւնը կախուած է բանակին բօժիպրօմիսլայի կապալառուների բարեհաճ տնօրէնութիւնից...»[1421]: 1897 թ. մարդահամարի տվյալներով` ավանի բնակիչների թիվը 11787 էր (5989 ար., 5798 իգ.), որից հայ 108 (68 ար., 40 իգ.)[1422]` կազմելով ամբողջ բնակչության 1%-ը: Իրենց թվաքանակով հայերը թաթարներից` 11520 (97,7%), ռուսներից` 119 (1%) հետո զբաղեցրել են երրորդ տեղը[1423]:

1886 թ. ընտանեկան տվյալների համաձայն` Ջավաթի գավառը բաժանված էր 58 գյուղական համայնքների և ուներ 160 բնակավայր[1424]: Թեև գավառում հայկական գյուղեր չկային, սակայն բնակվել են ոչ քիչ թվով հայեր: Նահանգային վարչության` 1869 թ. տվյալների

[1416] Տե՛ս **Калашев Н.**, նշվ. աշխ., стр. 79.
[1417] Յուզբաշեան Յ., Նամակ Սալեանից, «Մշակ», Թիֆլիս, 1880, մարտի 28, № 52, նույնի` Սալեան, «Նոր-դար», Թիֆլիս, 1884, նոյեմբերի 20, № 188:
[1418] Տե՛ս **Калашев Н.**, նշվ. աշխ., стр. 135.
[1419] Տե՛ս **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 141:
[1420] Տե՛ս նույն տեղում:
[1421] Նույն տեղում, էջ 142:
[1422] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.
[1423] Տե՛ս նույն տեղում, стр. 52-53.
[1424] Տե՛ս ССДНЗКИПС-1886, стр. XI.

համաձայն` հայերը գավառում 10 հոգի էին[1425]: Գավառում 1892 թ. հունիսի 6-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում բռնկված խոլերայի հետևանքով հիվանդացել էր 975 և մահացել 605 բնակիչ[1426]: 1897 թ. մարդահամարի տվյալներով` գավառում, առանց Սալյան ավանի, հայերի թիվը դարձել էր 591 (507 ար., 84 իգ.)[1427]:

Ըստ 1842-1897 թթ. վիճակագրական տվյալների, Ջավաթի գավառում (ներառյալ Սալյան ավանը) հայ բնակչության թվի շարժընթացքն ուներ հետևյալ պատկերը[1428].

Աղյուսակ № 17

Բնակավայր	1842	1852	1869	1891	1891	1897		Բնակչ. ընդ. թիվը
	Բնակիչ	Բնակիչ	Բնակիչ	Տուն	Բնակիչ	ար.	իգ.	
Սալյան ավան	3	7	-	28	115	68	40	108
Գավառ	-	-	10	20	427	507	84	591
Ընդամենը	3	7	10	48	542	575	124	699

* * *

Լենքորանի գավառը զբաղեցնում էր Բաքվի նահանգի հարավային մասը: Հյուսիսից այն սահմանակից էր Ջավաթի գավառին, հարավից և արևմուտքից` Ատրպատականին, արևելքից` Կասպից ծովին: Գավառի տարածքը կազմում էր 4.731,0 քառ. կմ[1429]:

ԼԵՆՔՈՐԱՆ ՔԱՂԱՔ: Գավառի կենտրոնն էր Լենքորան քաղաքը, ուր կենտրոնացած էր հայ բնակչության մի փոքր հատված: Դեռևս 1830-ական թվականների սկզբներից Լենքորանում հիշատակվում է հայկական եկեղեցու գոյության մասին[1430]: Բաղդասար մետրոպոլիտի` 1838 թ. դեկտեմբերի 3-ին Արցախի թեմի վանքերի և եկեղեցիների վերաբերյալ կազմած ցուցակի համաձայն` Լենքորանի բնիկ հայ բնակչությունը 17 ծուխ էր[1431]: Հարկ է նշել, որ աշխատանքի և զբաղմունքի բնույթի հետ կապված` քաղաքում ժամանակավոր բնակվել են նաև հայ բնակիչներ: Համաձայն 1830-ական թվականների սկզբների տվյալների` քաղաքի հայ բնիկ և ժամանակավոր բնակիչներն ունեին 48 տուն, որոնց մի մասը գտնվում էր ավերակ բերդի մերձակայքում[1432]: «Տոմար ընտանեկան» օրացույցի մի տեղեկության համաձայն` 1848 թ. այդ թիվն արդեն հասել է 160-ի[1433]: Ըստ Ղ. Ալիշանի տվյալների` 1850-ական թվականների սկզբներին քաղաքի բնիկ հայերն ունեցել են «34 երդ Հայք, եկեղեցաւ հանդերձ»[1434]: 1855 թ. հայապատկան տների թիվը 36 էր[1435]: 1858 թ. հունվարի 1-ի դրությամբ Լենքորանի ուսումնարանում սովորող 57 աշակերտներից հայեր էին 25-ը[1436]:

[1425] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 92.
[1426] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 20, № 148:
[1427] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XII, стр. 53.
[1428] Աղյուսակը կազմված է ըստ **Березин И.**, նշվ. աշխ., ч III. гл. V (От Баку до Салиана), стр. 105; **Калашев Н.**, նշվ. աշխ., стр. 123; **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 139, 141, СНМ-1859-1864, стр. 92; ВПНРИ-1897, таблица XII, стр. 53 տվյալների. հաշվարկը մերն է:
[1429] Տե՛ս **Кистенев Д.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 535-536, նաև СНМ-1859-1864, стр. 2.
[1430] Տե՛ս Обозрение российских владений на Кавказе (Талышинское ханство), ч. III, стр. 206.
[1431] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 273, թ. 276:
[1432] Տե՛ս Обозрение российских владений на Кавказе (Талышинское ханство), ч. III, стр. 206, 238-239.
[1433] Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 136, տե՛ս նաև КК на 1850 г., стр. 64.
[1434] Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 93:
[1435] Տե՛ս КК на 1856 г., стр. 441.
[1436] Տե՛ս Սանդրոսյան Մ., Արևելահայ գյուղը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 62:

1863 թ. քաղաքն ուներ 827 տուն՝ 3739 (2098 ար., 1641 իգ.) բնակչություն[1444]: 1865 թ. դրությամբ քաղաքն արդեն ուներ՝ քարաշեն՝ 40, փայտաշեն՝ 866 տուն և 4608 բնակչություն[1445]: 1870 թ. քաղաքն ուներ 5320 (2836 ար., 2484 իգ.) բնակիչ[1446]: 1873 թ. քաղաքն ուներ 827 տուն՝ 4779 (2504 ար., 2275 իգ.) բնակչություն, որից հայերի թիվը եղել է 232 (111 ար., 121 իգ.)[1447], 1886 թ.՝ 273 (151 ար., 122 իգ.)՝ կազմելով ընդհանուր բնակչության 8,47%-ը[1448]: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ քաղաքում ազգաբնակչության թիվը 8733 էր (4661 ար., 4072 իգ.), որից հայ 299 (139 ար., 160 իգ.)[1449]՝ կազմելով ամբողջ բնակչության 3,4%-ը: Բնակչության թվով թաթարներից՝ 5600 (64,13%), ռուսներից՝ 1369 (15,7%), թալիշներից՝ 973 (11,14%) հետո հայերը զբաղեցրել են չորրորդ տեղը[1450]:

<u>ԱՍՏԱՐԱ ԱՎԱՆ:</u> Լենքորանի գավառի ծայր հարավում փոքր թվով հայ բնակչություն կար նաև Թալիշի խանության նախկին կենտրոնում՝ Իրանին սահմանակից նավահանգստային Աստարա ավանում[1451]: Աստարա գետը ավանը բաժանում էր երկու մասի՝ «ռուսական» և «պարսկական»[1452]: «Ռուսական» մասում բնակվում էին՝ ռուսներ, ռուս այլադավան մոլոկաններ, հայեր և պարսիկներ[1453]: Ենթադրվում է, որ հայերի ներկայությունը ավանում պայմանավորված էր սահմանային առևտրական հարաբերություններում ընդգրկվելու հանգամանքով: 1898 թ. օգոստոսի 18-ին ռուսական Աստարա է այցելել Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ Մաղաքիա եպս. Տերունյանը: Թեմակալի ուղևորության մանրամասները գրի է առել դպիր Մկրտիչ Երկարակեցյանը: Նա նշում է, որ չհասած ավանին՝ «հանդիպեցինք Աստարայի սակաւաթիւ Հայերի խմբին, որոնք ճանապարհին մէկ կողմի վերայ բացօթեայ շարուած էին սպասում Հայ Եպիսկոպոսի օրհնաբեր գալստեանը»[1454]: Ըստ Մ. Երկարակեցյանի տվյալների՝ «ռուսական» Աստարան ուներ 23000 բնակիչ և հայապատկան 12 տուն[1455]: Եթե պայմանականորեն ընդունենք, որ յուրաքանչյուր ընտանիք բաղկացած էր 4-5 հոգուց, ստացվում է, որ հայերի թիվը տատանվում էր 48-60-ի միջև: Հայ վաճառականները գործուն մասնակցություն ունեին Աստարա ավանի առևտրական գործարքներում: Այդտեղ գործել է «Եղբ. Թումայան» առևտրական տան մթերանոցը[1456]: Ավանի նշանավոր հայերից էր Արցախից այստեղ վերաբնակված Մարգար Ահարոնյանը, որի ջանքերով 1894 թ. կառուցվել էր տեղի փայտաշեն հայկական եկեղեցին[1457]: Եկեղեցու գոյությունը վկայում է XIX դարավերջին Աստարայում հայկական համայնքի ստվարացման ու կազմակերպվածության մասին:

[1444] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 100.
[1445] Տե՛ս СССК, т. I, отд. II, стр. 62, 67.
[1446] Տե՛ս ССОК, т. II, стр. 351.
[1447] Տե՛ս СНМ-1873, տե՛ս նաև ССОКБГ-1873.
[1448] Տե՛ս ССДНЗКИПС-1886.
[1449] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.
[1450] Տե՛ս նույն տեղում:
[1451] Նադիր շահի մահից հետո Գարա խանը 1747 թ. խանության կենտրոնը տեղափոխել է Աստարայից 40 կմ հյուսիս գտնվող Լենքորան (տե՛ս **Маркарян С.**, Очерк истории формирования Талышского ханства. Очерки по истории и культуре талышского народа, вып. I, стр. 53.
[1452] Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 93, տե՛ս նաև Հանրամատչելի հանրագիտական բառարան, h. Ա, էջ 124:
[1453] Տե՛ս **Երկարակեցեան Մ.**, Ուղեւորութիւն առաջնորդին Հայոց Պարսկ. եւ Հնդկաստանի Տ. Մաղաքիա Ս. եպիսկոպոսի Տէրունեան, Նոր-Ջուղա, 1899, էջ 42:
[1454] Նույն տեղում, էջ 41-42:
[1455] Տե՛ս նույն տեղում, էջ 42:
[1456] Տե՛ս **Երկարակեցեան Մ.**, նշվ. աշխ., էջ 42:
[1457] Տե՛ս նույն տեղում:

1886 թ. ընտանեկան տվյալների համաձայն՝ Լենքորանի գավառը բաժանվում էր 72 գյուղական համայնքների միջև՝ ունենալով 298 բնակավայր[1451]: Թեև գավառում հայկական գյուղեր չկային, սակայն աշխատանքի և զբաղմունքի բերումով այստեղ բնակվում էր փոքրաթիվ հայություն: Ղ. Ալիշանը տեղեկացնում է, որ 1850-ական թվականների սկզբներին գավառում հայերի թիվը «200 ևեթ ոգիք ասին լինել»[1452]: Նահանգային վարչության՝ 1869 թ. ընտատվյալների համաձայն՝ հայերի թիվը Լենքորանի գավառում 166 էր[1453]: 1873-1886 թթ. ընտանեկան ցուցակներում Լենքորանի գավառում հայ բնակչության թվի վերաբերյալ որևէ տեղեկություն չկա: Այդ փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ հայերն այդտեղ եղել են ժամանակավոր բնակություն հաստատածներ, որի պատճառով դուրս են մնացել հաշվառումներից: Գավառում 1892 թ. հունիսի 6-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում բռնկված խոլերայի հետևանքով հիվանդացել էր 1804 և մահացել 1133 բնակիչ[1454]: 1897 թ. գավառում հայերի թիվը հասնում էր 184-ի (136 ար., 48 իգ.)[1455]:

Այսպիսով՝ ըստ 1873-1897 թթ. պաշտոնական վիճակագրական տվյալների՝ Լենքորանի գավառի (ներառյալ քաղաքը) հայ բնակչության թվի շարժընթացն ուներ հետևյալ պատկերը[1456].

<u>Աղյուսակ № 18</u>

1873		%	1886		%	1897		%
ար.	իգ.	0,2	ար.	իգ.	0,3	ար.	իգ.	0,4
111	121		151	122		275	208	
232			273			483		

[1451] Տե՛ս ССДНЗКИПС-1886, стр. XI.
[1452] Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 93:
[1453] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 92.
[1454] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 20, № 148:
[1455] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.
[1456] Աղյուսակը կազմված է ըստ СНМ-1873; ССДНЗКИПС-1886; ВПНРИ-1897, таблица XII, стр. 50. таблица XIII, стр. 52-53, таблица XIV, стр. 64, 68 տվյալների. հաշվարկը մերն է:

Ե. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ԵՎ ԷԹՆՈԴԱՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

*Արևելյան Այսրկովկասը, սկսած ամենավաղ ժամանակներից, աչքի էր ընկնում ազգա-
յին կազմի խայտաբղետությամբ, մշակութային փոխներթափանցումներով, բազմաթիվ լեզու-
ների և դավանանքների առկայությամբ[1457]: Երկրամասի բազմազգ լինելուն նպաստել էր նրա
աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները: «Ոչ մի երկիր,- գրում էր Մակար
եպս. Բարխուտարյանցը,- այնքան խճողուած չէ եղել բազմատեսակ ցեղերով և այլազան բար-
բառներով, ինչպէս Աղուանից երկիրն: Պատճառն այն է, որ նախ՝ բարեբեր է երկիրս, առատա-
ջուր և սննդատու. երկրորդ՝ որ միակ կարճ և յարմար անցքն է Հարաւից Հիւսիս և Հիւսիսից
Հարաւ և Եւրոպայից Ասիա և Ասիայից Եւրոպա անցուդարձ անելու ճանապարհի համար»[1458]:*

*Բաքվի նահանգում ամենախիտ բնակեցված են եղել Լենքորանի և Ղուբայի հարթա-
վայրերը, իսկ ամենանոսրը՝ Ջավաթի գավառը: Ըստ տեղաբաշխվածության՝ հայերը հիմնա-
կանում կենտրոնացած էին Բաքու քաղաքում, Գյոքչայի, Շամախիի, մասամբ նաև Ղուբայի
գավառներում, թաթերը՝ Բաքվի, Ղուբայի, Շամախու և մասամբ՝ Լենքորանի գավառներում,
ռուսները՝ Շամախիի, Բաքվի, մասամբ՝ Լենքորանի, Ջավաթի, Ղուբայի և Գյոքչայի գավառ-
ներում, լեզգիական խմբի լեզուներով խոսող ժողովուրդները՝ նահանգի հիմնականում հյուսի-
սային հատվածում՝ Ղուբայի գավառում, մասամբ նաև՝ Գյոքչայի, Բաքվի և Ջավաթի գա-
վառներում, թալիշները՝ նահանգի հարավային մասում՝ Լենքորանի գավառում, հրեաները՝
Ղուբայի, Շամախիի, Բաքվի, Գյոքչայի, մասամբ՝ Լենքորանի գավառներում, վրացիները
կենտրոնացած էին Բաքու քաղաքում, մասամբ՝ Ջավաթի, Գյոքչայի, Ղուբայի, Շամախիի և
Լենքորանի գավառներում: Եվրոպական ազգությունները (գերմանացիներ, շվեդներ, անգլիա-
ցիներ, ֆրանսիացիներ, իտալացիներ և այլք) քաղաքաբնակ էին՝ կենտրոնացած Բաքվում[1459]:*

*XIX դարավերջին Բաքվի նահանգի էթնոլիճակագրական պատկերում ամենաբազմա-
քանակ զանգվածը եղել են թուրք-թաթարները, որովհետև 1897 թ. մարդահամարի ժամանակ
ռուսական պետական վիճակագրությունը նրանց անվան դիմաց աղյուսակի սյունակներում
նշել է նաև թյուրքական լեզվաընտանիքի տարբեր խմբերի մեջ մտնող մահմեդական այլ
զանգվածներ՝ թաթարներ, ղրղզներ, չուվաշներ, բաշկիրներ, թուրքմեններ, կումիկներ և
թյուրքեր[1460]՝ հաշվի չառնելով նրանց էթնիկ տարբերությունները[1461]: Դրան նպաստել էր այն
հանգամանքը, որ նույնացվում էր իսլամ ազգաբնակչության էթնիկ ու կրոնական ինքնագի-
տակցությունը[1462]: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս 1897 թ. մարդահամարի տվյալները,
մահմեդական բազմազան էթնիկ խմբերի մեջ աստիճանաբար նկատելի էր դառնում թաթարա-*

Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պր. Ա, Երեւան, 2008, էջ 5:
1457 Տե՛ս **Մուրադեան Պ.**, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պր. Ա, Երեւան, 2008, էջ 5:

1458 **Բարխուտարեանց Մ.**, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 12:

1459 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 52-53, տե՛ս նաև **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 22.

1460 Տե՛ս նույն տեղում:

1461 Այդ մասին տե՛ս **Баскаков Н.**, Тюркские языки, Москва, 1960.

1462 Տե՛ս **Աբեղեան Արտ.**, Մենք եւ մեր հարեւանները: Թուրք-թաթարական ցեղերը Անդրկովկասում, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, № 11, էջ 127:

*կան զանգվածի թվաճը՝ 485146 (268720 ար., 216426 իգ.)[1463]: Վերջիններս հիմնականում
կենտրոնացած էին Բաքվի, Ղուբայի և հատկապես Ջավաթի գավառներում[1464]:*

*Բաքվի նահանգի ժողովրդագրական ընդհանուր հիմնահարցերի ուսումնասիրության
տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում լեզգիական խմբի լեզուներով խո-
սող պատմական Աղվանքի բնիկ ժողովուրդների անմիջական հետնորդները՝ լեզգիները, ուդի-
ները, աղուլները, հափութլիները, ջեկերը, բուդուղները, խինալուղները, կրիզները, ծախուրնե-
րը, թաբասարանները և ռութուլները[1465]: 1863-1886 թթ. հաշվառումներում նշված են հափութ-
լիները, ջեկերը, բուդուղները, խինալուղները և կյուրինները (լեզգիների մի խումբ, որոնք վերը
նշված հաշվառումներում թվաքանակով գերազանցել են լեզգիական խմբին պատկանող ժողո-
վուրդներին)[1466]: 1897 թ. մարդահամարների նյութերում լեզգիական խմբի լեզուներով խոսող
ժողովուրդների անվան դիմաց աղյուսակի սյունակներում կյուրիններից և ուդիներից բացի,
նշված են նաև Դաղստանի ժողովուրդներից ավարները, կազիկումուխները (լաքեր) և դարգին-
ները[1467], որոնք իրականում պատկանում են ոչ թե լեզգիական խմբին, այլ դաղստանյան ճյու-
ղի առանձին լեզվախմբերին[1468]:*

*Նշված ժողովուրդներից բացի, նահանգում բնակվել են նաև փոքրաթիվ էթնիկ խմբեր՝
օսեր[1469], գնչուներ[1470], չեչեններ, ինգուշներ, չերքեզներ, արաբներ, հույներ, քրդեր և ուրիշներ:
Ընդհանուր առմամբ, 1987 թ. մարդահամարի տվյալներով, նահանգում ապրում էին 52 էթնիկ
հանրություններ և խմբեր[1471]:*

*Բաքվի նահանգում ռուսական կառավարությունը հատկապես շահագրգռված էր ռուս
բնակչության աճով: Նվաճելով Այսրկովկասը՝ ցարական արքունիքն իր առջև նպատակ էր
դրել յուրացնելու այն, որին հասնելու համար կյանքի կոչեց երկրամասը մեծաթիվ ռուս գաղ-*

1463 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XII, стр. 53.

1464 Տե՛ս նույն տեղում, стр. V, տե՛ս նաև **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 22.

1465 Տե՛ս Народы Кавказа, т. I, Лезгины, стр. 503-519, Табасаранцы, стр. 520-528, Агулы, стр. 529-536, Рутульцы, стр. 537-545, Цахуры, стр. 546-553: под общей ред. С. П. Толстова, Москва, 1960; Народы Кавказа, т. II, Удины, стр. 195-198, Народы Шахдагской группы (будугцы, крызы и хиналугцы), стр. 199-204, **Волкова Н.**, Этнонимы и племенные названия Северного Кавказа, Москва, 1973, **Акопян Ал.**, Албания-Алуанк, стр. 35, 94-95, Խառատյան (Առաքելյան) Հ., Ուդիներ (Աղվանների առասպելը), էջ 12-16:

1466 Տե՛ս СНМ-1859-1864, стр. 78-79, СНМ-1873, ССДНЗКИПС-1886.

1467 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 52.

1468 Народы Кавказа, т. I, Аварцы, стр. 440-466, Даргинцы, стр. 467-486, Лакцы, стр. 487-502: Այդ մասին տե՛ս **Աբեղեան Արտ.**, Կովկասի ժողովուրդները, «Հայրենիք», Պօսթըն, 1924, Բ տարի, ապրիլ, № 6, էջ 120-130, մայիս, № 7, էջ 120-128, հունիս, № 8, էջ 101-109; **Загруский Л.**, Заметка об исследования Кавказских языков, Москва, 1888; **Марр Н.**, Племенной состав населения Кавказа: классификация народов Кавказа (рабочий проект): Труды комиссии по изучению племенного состава населения России, 3, Петроград, 1920, стр. 52-53; **Яковлев Н.**, Языки и народы Кавказа: краткий обзор и классификация, Тифлис, 1930; Абдурагимов Г., նշվ. աշխ., стр. 265-270; **Бадалова Ф.**, Восточнокавказские языки, в кн.: Национально-культурные особенности развития народов Южного Дагестана (материалы круглого стола), Москва, 2007, стр. 121-127.

1469 Հնդեվրոպական ծագում ունեցող օսերը բաժանվում են երեք հիմնական խմբի՝ Տուալների, Դիգորների և Իրոնների: Օսերը Հյուսիսային Կովկասի այն ժողովուրդներից են, որոնք դավանում են երկու պաշտոնական կրոն՝ քրիստոնեություն և մահմեդականություն (տե՛ս Դալլյան Տ., Օսեր, «Իրան-նամէ», Երեւան, 1997, № 4-5-6, էջ 18, տե՛ս նաև **Лавров Д.**, Заметки об Осетии и осетинах (СМОМПК, вып. III, Тифлис, 1884, стр. 1-314):

1470 1831 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալներով՝ գնչուների թիվը Շիրվանի պրովինցիայում կազմել է 200 ընտանիք (տե՛ս Обозрение российских владений на Кавказе (Ширванская провинция), стр. 74). XIX դարի երկրորդ կեսին Բաքվի նահանգում գնչուները հիմնականում տեղաբաշխված են եղել Ղուբայի գավառի Ղարաչա գյուղում և Գյոքչայի գավառում: Այստեղի գնչուները եղել են թյուրքալեզու և շիա (տե՛ս СНМ-1859-1864, стр. 85).

1471 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53.

թականներով՝ գերազանցապես աղանդավորներով, բնակեցնելու ծրագիրը: Երկրամասը Ռուսաստանի համար հուսալի էթնիկ տարրով բնակեցնելու հարցը ցարական կառավարության համար առաջնահերթ խնդիր էր դարձել դեռևս XIX դարի 20-ական թվականներից[1472]: Ռուսաբնակեցման գործընթացն առաջ տանելու ձգտումը պաշտոնական հեղինակներից մեկը համարում էր «Ռուսաստանի պետական ժամանակակից կարևորագույն խնդիրներից մեկը, որովհետև խելացի ուղղություն ստացած այդ գաղութացումը Ռուսաստանի հզորության հետագա զարգացման ամենից զորեղ միջոցն է»[1473]: Ընդ որում, հուսալի տարր հասկացության տակ ցարական չինովնիկները նկատի ունեին միայն մալոռուս կազակներին, որոնց տեղավորելով Այսրկովկասի սահմանամերձ վայրերում՝ ցարական կառավարությունը մտադիր էր Ռուսաստանից պարբերաբար համալրումների միջոցով ձևավորել այսպես կոչված «Արաքսի կազակությունը»: Այս մասին դեռևս 1827 թ. Ի. Պասկևիչին ուղղված գրություններից մեկում կոմս Դիբիչն առաջարկում էր Իրանի սահմանի վրա բնակեցնել 80000 մալոռուս (ուկրաինական) կոզակների[1474]: Ռուս բնակչության առաջին խմբերի բնակեցումը Բաքվի նահանգում սկսվել 1833 թ. կեսերից և շարունակվեց ընդհուպ մինչև 1868 թվականը[1475]: Դրանք հիմնականում աղանդներ (մոլոկաններ, հնածիսականներ, դուխոբորներ և այլն) էին, որոնք վերաբնակեցվում էին Սարատովի, Վորոնեժի, Տավրիկյան, Տամբովի, Վլադիմիրի, Օրենբուրգի նահանգներից[1476]: Հնածեսականները հաստատվեցին Լենքորանի գավառում, մոլոկանները՝ Գյոքչայի և Շամախիի գավառներում՝ հիմնելով Ալեքսանդրովկա, Իվանովկա, Ալեքսեևկա, Մարազա, Վլադիմիրովկա (Ղուբայի գավառ) և այլ բնակավայրեր[1477]: Վերաբնակիչներին արգելված էր բնակություն հաստատել քաղաքներում[1478]: Ընդ որում, առանց տեղացիների կարծիքը հաշվի առնելու, վերաբնակիչներն առատորեն ապահովվում էին հողով, նրանց շնորհվում էին հարկային ու այլ արտոնություններ: 1830-40-ական թվականներին Բաքվի նահանգում արդեն ռուսներով բնակեցվել էր 16 բնակավայր, որոնց տների թիվը հասնում էր 1537-ի[1479]: Ռուս բնակչության թիվը նահանգում աստիճանաբար սկսեց ավելանալ հատկապես XIX դարավերջին: Նպատակ էր դրված առաջին հերթին վերաբնակեցնել Մուղանի, այնուհետև Շիրվանի և Սալյանի տափաստանները[1480]: 1895-1905 թթ. Կովկասը ռուսներով վերաբնակեցնելու համար առանձնացվել էր 215617 դեսյատին[1481] տարածք, որից միայն 4715 չնչաբաժինը՝ Բաքվի նահանգում և Դաղստանի մարզում[1482]:

[1472] Տե՛ս **Исмаил-Заде Д.**, Русское крестьянство в Закавказье (30–е годы XIX-начало XX в.), Москва, 1982; Հայրյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակները (1830-1920 թթ.), Երևան, 1989; Русские старожилы Азербайджана. Материалы по этнической экологии, ч. II, отв. ред. В. И. Козлов, И. А. Дубова, Москва, 1990.

[1473] Ավդալբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917 թթ.), Երևան, 1959, էջ 179-180:

[1474] Տե՛ս АКАК, т. VII, стр. 322.

[1475] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 84-85.

[1476] Տե՛ս **Деминский Ф.**, Некоторые сведения о Кабристанаском полицейском участке Шемахинскаго уезда Бакинской губернии, ЗКОИРГО, кн. XXII, вып. 2-й, Тифлис, 1901, стр. 52.

[1477] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 84-85, **Шапшович М.**, նշվ. աշխ., стр. 22.

[1478] Տե՛ս **Волкова Н.**, Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., стр. 7.

[1479] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 85.

[1480] Տե՛ս КК на 1916 г., Тифлис, 1915, стр. 99-100.

[1481] Դեսյատինը հողաչափական միավոր է: Հավասար է 2400 քառ. սաժենի կամ 1,09 հեկտարի:

[1482] Տե՛ս Աղոնց Մ., նշվ. աշխ., էջ 29:

Այսպիսով՝ Բաքվի նահանգի էթնիկ կազմի շարժընթացը, ըստ 1863-1897 թթ.[1483] պաշտոնական վիճակագրական տվյալների, ուներ հետևյալ պատկերը[1484].

Աղյուսակ № 19

Էթնիկ հանրություններ և խմբեր	1863 թ.	%	1873 թ.	%	1886 թ.	%	1897 թ.	%
Թյուրքալեզու էթնիկ խմբեր[1485]	210223	44,9	304049	57,5	378021	53	486301	58,82
Թաթեր	83059	17,7	79112	15	118165	16,57	89519	10,83
Ռուսներ[1486]	12604	2,7	18101	3,42	42432	6	77681	9,4
Հայեր[1487]	18711	4	27127	5,13	55304	7,76	52233	6,3
Լեզգիական խմբի լեզուներով խոսող ժողովուրդներ	44802	9,6	50748	9,6	57143	8	48194	5,8
Թալիշներ	34344	7,3	42999	8,13	50510	7,1	34994	4,23
Հրեաներ	1065	0.2	6323	1,2	8603	1,2	8172	1
Պարսիկներ	-	-	-	-	-	-	5973	0,7
Գերմանացիներ[1488]	-	-	-	-	1721	0,24	3430	0,42
Վրացիներ	-	-	-	-	11	0,002	1616	0,2
Լեհեր	-	-	-	-	1132	0,16	1439	0,2
Այլ[1489]	63469	13,6	658	0,12	-	-	17164	2,1
Ընդամենը	468277	100	529117	100	713042	100	826716	100

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե բնակչության թիվը նահանգում 1863 թ. 468 277 էր, 1873 թ.՝ 529117, 1886 թ.՝ 713028, ապա 1897 թ.՝ 826716 (458065 ար., 368 651 իգ.) մարդ: 1863-1897 թթ. արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ նահանգի բնակչությունը 34 տարում աճել էր 358439-ով կամ 76,5%-%-ով: Եթե բնակչության միջին խտությունը 1 կմ² վրա 1870 թ. կազմել է 14,7 մարդ[1490], ապա 1897 թ. այդ թիվը հասել էր 24,03 մարդու[1491]: Ըստ այդմ՝ 34 տարվա ընթացքում թյուրքալեզու էթնիկ խմբերն աճել էին 276078, ռուսները՝ 65077, հայերը՝ 33522, թաթերը՝ 6460, հրեաները՝ 7107, լեզգիական խմբի լեզուներով խոսող ժողովուրդները՝ 3392, եվրոպական ազգությունները՝ 1709, վրացիները՝ 1605, թալիշները՝ 650, լեհերը՝ 307 մարդով: 1897 թ. մարդահամարի տվյալներից հետևում է, որ XIX դարավերջին բնակչության թվով հայերը զբաղեցնում էին չորրորդ տեղը՝ զիջելով

[1483] Աղյուսակը կազմված է ըստ СНМ-1859-1864, стр. 78-79; СНМ-1873; ССДНЗКИПС-1886; ПВПНРИ-1897, стр. 2, տե՛ս նաև таблица XIII, стр. 53, տվյալների. հաշվարկը մերն է:

[1484] Աղյուսակում էթնիկ հանրությունների և խմբերի հաջորդականությունը տրվում է ըստ նրանց թվաքանակի նվազման սկզբունքի:

[1485] 1863 և 1873 թթ. ցուցակներում թյուրքալեզու էթնիկ խմբերից նշված են թաթարներն ու շահսևանները (տե՛ս СНМ-1859-1864, стр. 78-79; СНМ-1873): 1897 թ. մարդահամարի ժամանակ ռուսական պետական վիճակագրությունը թուրք-թաթարներ անվան դիմաց սյունակում նշել է նաև թյուրքալեզու տարբեր խմբերի մեջ մտնող մահմեդական այլ զանգվածներ՝ թաթարներ, ղրղզներ, չուվաշներ, բաշկիրներ, թուրքմեններ, կումիկներ և թյուրքեր: Գերակշռող տարրը եղել են թաթարները (տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53):

[1486] 1897 թ. մարդահամարի նյութերում ռուսների թվի մեջ ընդգրկված են վելիկոռուսները, մալոռուսները և բելառուսները (տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIII, стр. 53):

[1487] Թեև 1863 թ. դրությամբ միայն Բաքու քաղաքում հայերի թիվը հասնում էր մոտ 700-ի, սակայն ցուցակներում անհասկանալիորեն նշված չեն քաղաքի և գավառի հայերի վերաբերյալ վիճակագրական տվյալները: Ուստի այդ թիվը ներառում է միայն Գյոքչայի, Շամախու և Ղուբայի գավառները:

[1488] 1897 թ. մարդահամարի նյութերի ամփոփիչ աղյուսակում եվրոպական ազգությունները (ֆրանսիացիներ, իտալացիներ, անգլիացիներ, շվեդներ և այլն) նշված են մեծամասնություն կազմած գերմանացիների անվան դիմաց սյունակում (տե՛ս ПВПНРИ-1897, стр. 2):

[1489] Այլազգիների թվում մեր կողմից ներառված են նաև Դաղստանի ժողովուրդներից ավարները, դարգինները և կազիկումուխները (լաքեր):

[1490] Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 64:

[1491] Տե՛ս ПВПНРИ-1897, стр. IV.

թյուրքալեզու էթնիկ խմբերին, թաթերին, ռուսներին, հետևում թողնելով հրեաներին, լեզգիական խմբի լեզուներով խոսող ժողովուրդներին, թալիշներին, պարսիկներին, եվրոպական ազգություններին, վրացիներին և այլոց[1492]: Անդրադառնալով թալիշների թվածի՝ 1897 թ. տվյալին, հակված ենք կարծելու, որ բերված թիվը լիակատար կերպով չի արտացոլում նրանց թվաքանակի իրական պատկերը: Եթե, ըստ 1863-1886 թթ. հաշվառումների, հաշվի առնենք թալիշ բնակչության բարձր աճը, ապա գոնե բնական շարժի դեպքում դարավերջին պետք է որ այն ավելացած լիներ: Այս հարցի պատասխանը տալիս է կովկասագետ Լ. Լոպատինսկին՝ գրելով. «Իրանցիները (նկատի ունի Բաքվի նահանգի Լենքորանի գավառի թալիշներին - Գ. Ս.) ամենուրեք անհարմար են զգում սեփական ազգային ինքնությունն արտահայտել և շատ հաճախ թաքցնում են իրենց մայրենի լեզուն, ինչը մեծապես դժվարացնում է վիճակագրական տվյալների հավաքումը»[1493]:

Միաժամանակ, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, 1863-1897 թթ. հայերի ու ռուսների միջև թվական մրցակցություն է եղել: Եթե հայերը 1863 թ. 6107 հոգով գերազանցել են ռուսներին, ապա թվերի միանգամայն այլ հարաբերակցություն են ցույց տալիս 1897 թ. նյութերը, ըստ որոնց՝ ռուսներն արդեն 25448 հոգով գերազանցում էին հայերին, որը հիմնականում պայմանավորված էր ռուսական իշխանությունների քաղաքականությամբ: Ինչ վերաբերում է փոքրաթիվ էթնիկ խմբերի համեմատաբար բարձր տոկոսային աճին, ապա այն հիմնականում պայմանավորված էր նրանց մեխանիկական աճով:

XIX դարավերջին Բաքվի նահանգի էթնոդավանանքային կազմն ուներ հետևյալ պատկերը. 1897 թ. մարդահամարի՝ «Բնակչության տեղաբաշխումն ըստ դավանանքի» աղյուսակի տվյալների համաձայն՝ նահանգում ամենաբազմաքանակը մահմեդականներն էին (676243) մարդ՝ կազմելով ամբողջ բնակչության 82%-ը, որոնց հաջորդել են ուղղափառները (56090)՝ 6,8%, հայ-առաքելականները (52563)՝ 6,4%, հնածիսականները (21912)՝ 2,7%, հուդայականները (12761)՝ 1,5%, հռոմեա-կաթոլիկները (2218)՝ 0,7% և այլ դավանանքի հետևորդները (4929)՝ 0,6%[1494]: Բաքվի նահանգի մահմեդականները բաժանված էին սուննի և շիա դավանանքների միջև[1495]: Վերջիններս թվաքանակով գերազանցել են սուննիներին[1496]:

Ինչպես վերը նշեցինք, Բաքվի նահանգի հայ բնակչությունը հիմնականում կենտրոնացած էր Գյոքչայի, Շամախիի, մասամբ նաև Ղուբայի գավառներում և հատկապես Բաքու քաղաքում: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, նահանգի գավառներում հայ բնակչության աճը համաչափ չի ընթացել: Եթե նախապես հայահոծ խոշոր կենտրոններ էին Շամախի քաղաքն իր հարակից գյուղերով, ապա XIX դարի 60-ական թվականներից Բաքուն՝ կապված նավթարդյունաբերության բուռն զարգացման հետ: Բաքվի նահանգի հայ բնակչության XIX դարի երկրորդ կեսի շարժընթացի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար 1863-1897 թթ. պաշտոնական հաշվառումներից բացի, ներկայացնենք նաև տարբեր աղբյուրներում առկա մի քանի տվյալ. 1855 թ. հունվարի 1-ին 18558 էր[1497], 1869 թ.՝ 25667[1498], 1881 թ.՝ 27791[1499]: Կովկասագետ Պ. Նադեժդինի տվյալների համաձայն 1890-1892 թթ. նահանգի հայ բնակչության թիվը 57459 էր[1500]: «Կովկասյան օրացույցի» 1893 թ. տվյալների համաձայն՝ 784996 (431089 ար., 353907 իգ.) ազգաբնակչությունից հայերի թիվը 66542 էր՝ կազմելով ամբողջ բնակչության 8,48%-ը[1501]: Եթե 1860-ական թվականների սկզբներին նահանգի 45 հայկական գյուղերում ծխերի թիվը կազմում էր 2535[1502], ապա 1895 թ. մարտի կեսերին միայն Գյոքչայի և Շամախու գավառներում այն հասնում էր 4100-ի[1503]: «Նոր-դարի»՝ Շամախիի թղթակից «Մուրադ» ծածկանունով հանդես եկող Առաքել Մուրադյանը «Նշխարներ Շամախուց» հոդվածում գրում է. «Շամախու թեմի... միայն քանի մի գիւղեր բաւական մեծ են, իսկ միւսները միջին թուով 50-60 տուն բնակիչ ունին»[1504]: Նկատենք, որ տարբեր աղբյուրներում 1890-1893 թթ. վերաբերյալ առկա հակասական թվերը բացատրվում են բնակչության ակտիվ տեղաշարժերով: Թերևս հիմնականում այստեղ իրենց դերն ունեին նաև ոչ ամբողջական ու թերի հաշվառումները:

Այսպիսով՝ Բաքվի նահանգի հայ բնակչության թվի շարժընթացը 1863-1897 թթ. պաշտոնական վիճակագրական տվյալներով, ըստ գավառների, ուներ հետևյալ պատկերը[1505].

Աղյուսակ № 20

Գավառներ և գավառ. կենտր.	1863[1506] ար.	1863 իգ.	Բնակչ. ընդ. թիվը	1873 ար.	1873 իգ.	Բնակչ. ընդ. թիվը	1886 ար.	1886 իգ.	Բնակչ. ընդ. թիվը	1897 ար.	1897 իգ.	Բնակչ. ընդ. թիվը
ք. Բաքու	-	-	-	396	351	747	17483	7007	24490	12574	6525	19099
Գավառ	-	-	-	-	-	-	-	-	-	3125	359	3484
ք. Շամախի	-	-	-	2940	2237	5177	2690	1272	3962	1274	1241	2515
Գավառ	4635	3850	8735	5299	4362	9661	6453	5449	11902	5995	5773	11768
Գյոքչա ավան	-	-	-	-	-	-	117	72	189	181	115	296
Գավառ	5202	4496	9698	5631	4936	10567	6880	5910	12790	6559	6139	12698
ք.Լենքորան	-	-	-	111	121	231	151	122	273	139	160	299
Գավառ	-	-	-	-	-	-	-	-	-	136	48	184
ք. Ղուբա	-	-	-	40	22	62	531	302	833	446	361	807
Գավառ	267	261	528	348	333	681	458	407	851	219	165	384
Սալյան ավան	-	-	-	-	-	-	-	-	-	68	40	108
Ջավաթի գ.	-	-	-	-	-	-	-	-	-	507	84	591
Ընդամենը	10104	8607	18711	14.765	12362	27127	34763	20541	55304	31223	21010	52233

1492 Տե՛ս Ասոյան Լ., նշվ. աշխ., էջ 61:
1493 Талышинские тексты. Сообщены учителем Ленкоранского начального училища **Теймур-бек Байрамалибековым**: примечания и заметки к ним **Л. Л.** (СМОМПК, вып. XX, Тифлис, 1894, стр. 23), տե՛ս նաև Ասատրյան Գ., Թալիշներ, էջ 17:
1494 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XII, стр. 50-51.
1495 Տե՛ս СНМ-1859-1864, стр. 85.Այդ երկու ուղղություններից բացի Շամախիի, Գյոքչայի և Ղուբայի գավառների մահմեդականների շրջանում տարածված են եղել նաև մյուրիդիզմ և շեյխյաններ աղանդները (տե՛ս **Сегаль И.**, Мусульманские секты в Закавказском крае, Тифлис, 1893, стр. 38, 53, տե՛ս նաև **Крымский А.**, История мусульманства. Очерки религиозной жизни, ч. III, Москва, 1912).
1496 Տե՛ս СНМ-1859-1864, стр. 80, տե՛ս նաև Энциклопедический словарь, т. XIII^A, стр. 839.

1497 Տե՛ս АКАК, т. X, док. 82, стр. 105, տե՛ս նաև. Иваненко В., նշվ. աշխ., стр. 386.
1498 Տե՛ս СНМ-1859-1864, стр. 92. Հմմտ. **Загруский Л.**, Этнологическая классификация Кавказских народов, стр. 4.
1499 Տե՛ս Исторические записки об управлении Кавказом, сост. **С. Эсадзе**, т. II, Тифлис, 1907, стр. 308.
1500 Տե՛ս **Надеждин П.**, նշվ. աշխ., стр. 244-245, таблица VI. Հմմտ. **Цуциев А.**, Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), Москва, 2006, стр. 42.
1501 Статистическое описание Бакинской губернии за 1893 г. (տե՛ս КК на 1896 г., Тифлис, 1895, стр. 104), տե՛ս նաև ЗКОИРГО, кн. XVIII, Тифлис, 1896, стр. 267.
1502 Տե՛ս **Կաեդանոյ Սոլանեյի**, Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի, «Բազմավէպ», Վենետիկ, № Խ, 1882, էջ 292:
1503 Տե՛ս **Տ. Վարդ.** [**Տիգրան քհն. Վարդանյան**], Մի քանի խօսք Շամախու և Գեօգչայի գաւառների եկեղեցիների մասին, «Արձագանք», Թիֆլիս, 1895, մարտի 29, № 36:
1504 **Մուրադ** [**Առաքել Մուրադյան**], Նշխարներ Շամախուց, «Նոր-դար», Թիֆլիս, 1891, մարտի 2, № 34:
1505 Աղյուսակը կազմված է ըստ СНМ-1859-1864, ч. IV, стр. 27-32; СНМ-1873; ССОК, т. V; ССДНЗКИПС-1886; ПВПНРИ-1897, таблица XII, XIII, XIV, стр. 50-68 տվյալների. հաշվարկը մերն է:
1506 1863 թ. վիճակագրական տեղեկագրում «Նահանգի ազգագրական ակնարկ» բաժնում թվարկված հայկական գյուղերի շարքից դուրս է մնացել Գյուրջաշենը, իսկ թաթարական սաննի Մեյիջեկ գյուղը սխալմամբ տեղ է գտել հայկական գյուղերի շարքում (տե՛ս СНМ-1859-1864, стр. 92): Նշենք, որ տեղեկագիրը չի պարունակում Բաքու քաղաքի, համանուն գավառի և Շամախի քաղաքի հայ բնակչության վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Գավառների հայկական բնակավայրերի տեղաբաշխման, բնակչության թվաքանակի և
աճի դինամիկայի վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ XIX դարի երկ-
րորդ կեսին հայ բնակչությունը մշտապես պահպանում էր իր բնական աճի ընթացքը: Սա-
կայն, համեմատելով 1886 թ. հաշվառումները (55304) 1897 թ. մարդահամարի (52233) տվյալ-
ների հետ՝ պարզվում է, որ նահանգում հայ բնակչության թիվը նվազման միտում ուներ, և
շուրջ 11 տարում այն չէր աճել: Հարցին ժամանակին անդրադարձել է նաև ժողովրդագրութ-
յան մասնագետ Բ. Իշխանյանը, որը տարակուսանքով գրել է. «Թիւրիմացութի՞ւն է սա, թէ կ-
այ մի անբացատրելի գաղտնիք, իբրև պատճառ այդ փաստի: Արդյո՞ք 1886 թ. աղբիւրն է
սխալւում, հաղորդելով աւելի մեծ թիւ հայերի, քան եղել են իրապէս այդ թւականին, թէ՞
սխալւում է 1897 թ. աղբիւրը, հաղորդելով աւելի նւազ թիւ հայերի, քան եղել են իրապէս նոյն
թւականին»[1514]: Այդ տարեթվերի տվյալները համադրելու դեպքում երևում է, որ թե՛ 1886 թ. և
թե՛ 1897 թ. հաշվառումներում առկա են որոշակի վրիպումներ և բացթողումներ: Օրինակ՝
1886 թ. հաշվառումներում Ղուբայի գավառի վիճակագրական տվյալներում առկա են տարբեր
անհամապատասխանություններ, ինչը պարզաբանել ենք նախընթացում: Ռուսական կայսե-
րական աշխարհագրական ընկերության Կովկասի բաժանմունքի վարիչ Ե. Կոնդրատենկոյի
պարզաբանմամբ 1886 թ. «Ընտանեկան ցուցակները» պարունակում են միայն տեղաբնակ
բնակիչների տվյալները. չեն հաշվառվել ժամանակավոր բնակիչները, որոնց թիվը մեծ էր
հատկապես քաղաքներում[1515]: Ըստ Կոնդրատենկոյի՝ «Ցուցակների թերություններից մեկն էլ
այն է, որ բնակչությունը հաշվառվել էր ոչ թե ըստ բնակության, այլ գրանցման վայրի, որի
հետևանքով հաշվառումներից դուրս են մնացել գյուղերում գրանցված և քաղաքներում
բնակվող մեծ թվով տեղացիներ: Այդ իսկ պատճառով ցուցակները չեն արտահայտում գյու-
ղարնակ բնակչության իրական թիվը»[1516]: 1897 թ. մարդահամարի նյութերում թերություն-
ներն ու բացթողումները հատկապես ակնառու են Բաքու քաղաքի հայ բնակչության թվի
հաշվառման առումով:

Այսպիսով՝ ի մի բերելով Բաքվի նահանգի հայերին վերաբերող վիճակագրական
տվյալները, փորձենք ճշտել հայ բնակչության իրական թիվը նահանգում XIX դարավերջին:
Նախընթացում՝ Բաքու քաղաքին նվիրված բաժնում, վիճակագրական տարբեր աղբյուրների
համադրմամբ ցույց տվեցինք, որ 1897 թ. քաղաքի հայերի թիվը ոչ թե 19099 էր, այլ՝ ավելի
քան 45000 (ներառյալ նաև ժամանակավոր բնակիչները): Ընդսմին՝ աղբյուրների տվյալերը
հավաստում են, որ նահանգի հայ բնակչության թիվը, բնական աճից բացի, հիմնականում
ավելանում էր Հայաստանից և հայաբնակ այլ վայրերից XIX դարավերջին Բաքու չարունակ-
վող արտագաղթի հաշվին: Ուստի նկատի ունենալով վերն արված վիճակագրական տվյալների
վերլուծությունները, հանգում ենք այն հետևության, որ XIX դարավերջին Բաքվի նահանգում
հայերի թիվը կազմում էր ոչ թե 52233, այլ ավելի քան 70000 մարդ (այս թվում ներառվում
են նաև Բաքու քաղաքում 1897 թ. մարդահամարի ժամանակ չհաշվառված շուրջ 26000 բնա-
կիչները):

[1514] Իշխանեան Բ., Վիճակագրական ուսումնասիրութիւն Անդրկովկասեան ժողովուրդների, էջ 75:
[1515] Տե՛ս ЗКОИРГО, кн. XVIII. Приложение (Этнографическая карта губерний и областей Закавказскаго края: сост.
Кавказского отд. Императ. Русского Географического общества **Е. Кондратенко**, стр. 1).
[1516] Նույն տեղում:

Աղյուսակ № 20-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ Բաքվի նահանգի հայութ-
յան մեջ տղամարդկանց թիվը ակնհայտորեն գերազանցում էր կանանց թվին, ինչպես նաև
առկա էր կանանց մահացության բարձր ցուցանիշ: Ժողովրդագրական տեղաշարժերում առկա
այս միտումը ընդհանրապես բնորոշ է եղել Արևելքի բոլոր երկրներին[1510]: Ալ. Երիցյանի
հաշվարկներով Այսրկովկասի հայերի շրջանում 100 մահացածի դեպքում 49-ից 55 հոգին եղել
են իգական սեռի ներկայացուցիչներ[1511]: Դա հիմնականում բացատրվում է կանանց վատ կեն-
սապայմաններով, հասարակական կյանքում ունեցած նրանց ցածր դիրքով, ընտանիքում
կյանքի ծանր պայմաններով և վաղաժամ ամուսնություններով[1512]: Նահապետական սովորութ-
յունների համաձայն՝ շատ դեպքերում հայկական գրեթե բոլոր գյուղերում աղջիկներին նշա-
նում էին դեռևս 2-3 տարեկան հասակում. «Երեխաներին, գլխաւորապէս աղջկանց, ծնւած
օրից, դեռ աւելին ասեմ, նախ քան ծնւելը նշանելու տգեղ սովորութիւնը վերջ չունի մեր հայ-
կական, մանաւանդ այս շրջանի գիւղերում»,- գրում է Շամախիի գավառի Բահլիան գյուղից
«Հորիզոնի» թղթակիցը[1513]: Խնդրին հետևյալ բացատրությունն է տվել բժիշկ Բ. Աղասարյանը:
Ըստ նրա՝ «Կանանց այն դժբախտ մասը, որը երեխայ հասակում (12-13 տարիքում) ծնողաց
տգիտութեան և քահանաներից շատերի ագահութեան ու մասամբ էլ նոյնպէս տգիտութեան
պատճառաւ ամուսնանում է՝ ծննդաբերութեան ժամանակ, կամ անժամանակ վախճանւում է,
կամ, ստանալով կանանց հիւանդութիւններ, երբեմն անդամալոյծ է դառնում. շատերը՝ չբերք
և առհասարակ անընդունակ ամուսնական կեանքի համար»[1514]: Ժողովրդագիր Յու. Յանսոնը,
անդրադառնալով այս հարցին, իրավացիորեն գրել է, որ բնակչության կազմում տղամարդ-
կանց և կանանց թիվը որոշող գլխավոր պատճառներն անկասկած բացատրվում են սոցիալա-
կան, ավելի ճիշտ՝ տնտեսական ու իրավական պայմաններով[1515]:
Կնոջ իրավունքները սահմանափակված էին նաև հայ նահապետական գերդաստանում,
ուր տիրապետող էր հայրիշխանության սկզբունքը[1516]: Այդ առումով արևելահայ պարբերա-
կանների էջերը լի են հայ կնոջ իրավազրկությունը ներկայացնող հոդվածներով ու թղթակ-
ցություններով, որոնք միաբերան բարձրացնում էին կանանց և տղամարդկանց իրավահավա-
սարության հարցը: «Մուրճի» խմբագիր Ավ. Արասխանյանը գրել է. «Այս անկասկած ճշմար-
տութիւնից, թէ կինը ընտանիքի մէջ, որպէս ամուսին և մայր, մի առանձին դեր է կատարում,

[1510] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը: Հայաստանի բնակչության վերարտա-
դրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, էջ 55:
[1511] Տե՛ս **Ерицов А.**, Историческое и современное положение армянской женщины в связи с нравственностью
армян, Тифлис, 1874, стр. 113.
[1512] Հասարակական կյանքում կնոջ ցածր դիրքը բնորոշ էր հատկապես մահմեդականների շրջանում, քանի որ կնոջ ար-
ժանապատվությունը նսեմացված է Ղուրանում, դրա օրենսդրական մասում՝ շարիաթում, ուր որոշակիորեն նշված է, որ
կինը երկրորդական էակ է (տե՛ս **Токарев С.**, Религия в истории народов мира, Москва, 1964, стр. 517): Այս առումով
ուշագրավ է հետևյալ փաստը: 1902 թ. հունվարի 31-ին Շամախիում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ, երբ փլա-
տակների տակից դուրս էին բերում մահացածներին, յուրաքանչյուր տղամարդու համար ազգականները փորողներին
վճարել են 20-25ռ., իսկ կանանց համար՝ 12 ռ., շատ դեպքերում վճարել են անգամ դրանից քիչ (տե՛ս Շամախու աղէտը,
էջ 39): Շամախիի գավառի կովկասյան թաթարների սովորույթների և ավանդույթների մասին ավելի հանգամանորեն տե՛ս
Эфендиев М., Из поверий татар Шемахинского уезда (СМОМПК, вып. VXII, Тифлис, 1893, стр 205-218).
[1513] Տե՛ս Նահատակ երեխաներ: Բայլիան (Շամախու գավառ), «Հորիզոն», Թիֆլիս, 1914, մարտի 1, № 45:
[1514] Աղասարեան Բ., Ազգի գոյութեան մեծ խնդիրը, Ս.-Պետերբուրգ, 1908, էջ 19-20:
[1515] Տե՛ս **Янсон Ю.**, Сравнительная статистика Росии и Западноевропейских государств, т. I, СПб., 1878, стр. 80.
[1516] Տե՛ս Սամուէլեան Խ., Հայ նահապետական գերդաստանը (տեսութիւն հայ սովորութական իրաւունքից), «Արարատ»,
1908, № Դ, էջ 401-402:

այդ անկասկած ճշմարտութիւնից, ասում ենք, դուրս բերին այս ոչ լիակատար եզրակացութիւնը, թէ կնոջ կոչումը ընտանիքին ծառայելն է, այսինքն ամուսին ու մայր լինելն ու երեխաներին դաստիարակելն է...և որ ուրեմն դորանից դէն իրաւունքներ նրանց յատկացնելը բնութեան հակառակ է...»[1517]: 1863 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով՝ Նահանգում յուրաքանչյուր 100 հայ արական սեռի դիմաց հաշվվում էր 85,96% իգական սեռի ներկայացուցիչ[1518]: Սեռային խմբերի վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ գյուղերում նկատելի էր կանանց թվի գերակշռություն, ինչը հիմնականում պայմանավորված էր տղամարդկանց՝ արդյունաբերական տարբեր քաղաքներ արտագնա աշխատանքի մեկնելու հանգամանքի հետ: Հարկ է նկատել, որ արդյունաբերական խոշոր քաղաքներում տղաների և գյուղերում աղջիկների գերակշռությունը զարգացող դրամատիրական հարաբերություններին բնորոշ օրինաչափություն էր:

Գավառների հայկական գյուղերի բնական աճի ընթացքի և մահացության ցուցանիշների մասին պատկերացում կարելի է կազմել մարդաշատ Սաղիան, Մատրասա և սակավամարդ Փախրաքուշ գյուղերի օրինակով: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի հաշվումների՝ մեկ տարվա ընթացքում Սաղիանում եղել էր 38 ծնունդ (20 ար., 18 իգ.), 12 ամուսնություն և 12 (6 ար., 6 իգ.) մահ[1519]: Մատրասայում գրանցվել է 165 ծնունդ (88 ար., 77 իգ.), 30 ամուսնություն, 42 (22 ար., 20 իգ.) մահ[1520]: Փախրաքուշ գյուղում տարվա ընթացքում եղել է 5 ծնունդ (3 ար., 2 իգ.), 1 ամուսնություն և 3 (2 ար., 1 իգ.) մահ[1521]: Ուսումնասիրության արդյունքներից պարզվում է, որ ըստ գավառների և գյուղերի՝ մարդկանց երկարակեցությունը զգալի տատանումներ է ունեցել: Հաշվարկներն, ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի վիճակագրության, կատարել ենք տարիքային երեք խմբերով՝ 50-79, 80-99, և 100-ից բարձր տարիքով: Առաջին խմբում բարձր երկարակեցությամբ մարդկանց թիվը մեծ էր Շամախիի գավառի Խանիշեն, Փախրաքուշ, Թալիշ, Նորշեն, Բահլիան և Գյոքչայի գավառի Աղբուլաղ, Նորշեն (Աշղբայրամ), Բզավանդ գյուղերում[1522], երկրորդ խմբում՝ Շամախիի գավառի Քարքանջ, Քալախան, Սաղիան, Դվարի (Դվարիշեն), Քոհլուճ, Բիլիստան և Գյոքչայի գավառի Կարմախան, Թուբիշեն, Գանձակ, Քեշխուրդ, Գիրք, Շուքուրշի, Ռուշանաշեն, Վանքաշեն, Ուշտալ գյուղերում[1523]: Երրորդ խմբում 100-ից 115 տարեկան մարդկանց թիվը մեծ է եղել Շամախիի գավառի Արփառտ, Մատրասա, Մեյսարի, Զարգարան, Քավանտ, Հնդար և Գյոքչայի գավառի Քալբանդ-Ագայիշեն (Նորշեն) և Ղալակա գյուղերում: Ընդ որում, երկարակեցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել էր Հնդարում՝ 125 տարի[1524]: Գյուղական բնակչության դանդաղ աճը հիմնականում բացատրվում է ժողովրդագրական բավարար պայմանների բացակայությամբ, քանի որ նպաստավոր պայմաններ չկային բավարար աճի համար ո՛չ տնտեսական, ո՛չ էլ սոցիալական առումներով: Դեռ ավելին,՝ այս ամենին գումարվում էին զանազան համաճարակներն ու հիվանդությունները՝ խլելով մարդկային բազմաթիվ կյանքեր: Առավել վտանգավոր էր թո-

[1517] Արասխանեանց Ա., Կինը հասարակութեան մէջ, «Մուրճ», Թիֆլիս, 1891, № 6, էջ 680-681:
[1518] Տե՛ս СНМ-1859-1864, стр. 105.
[1519] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 174:
[1520] Տե՛ս նույն տեղում, էջ 167:
[1521] Տե՛ս նույն տեղում, էջ 177:
[1522] Տե՛ս նույն տեղում, էջ 163-209:
[1523] Տե՛ս նույն տեղում:
[1524] Տե՛ս նույն տեղում:

քախտը, որը համարվում էր աղքատության հիվանդություն[1525]: Համաճարակներին ավելի մեծ չափերի զոհ էին դառնում հատկապես մանկահասակ երեխաները[1526]:

Գավառների հայկական գյուղերի բնակչության աճի վրա բացասաբար էր անդրադառնում նաև արտագնացությունը դեպի Բաքու: Նոր զարգացող դրամատիրական հարաբերությունները քայքայում էին հայ գյուղացիության տնտեսության հիմքերը և նա ստիպված թողնում էր հողը, երկրագործությունը, գաղթում էր քաղաք՝ ապրուստ հայթայթելու: XIX դարի վերջերին գրեթե բոլոր հայկական գյուղերից բազմաթիվ հայ երիտասարդների, որոշ դեպքերում նաև ընտանիքների՝ Բաքու արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով զգալիորեն կրճատվեց գյուղաբնակ հայ բնակչության թիվը, որն ազգային-քաղաքական տեսակետից ունեցավ բացասական հետևանքներ[1527]: Գավառների գյուղացիության մի մասն էլ, Բաքվից բացի, գաղթում էր Անդրկասպյան երկրներ, Աշգաբադ և շրջակա քաղաքներ[1528]: Այդ առիթով ժամանակի արևելահայ պարբերականների թղթակցություններն ու գյուղագրական երկերը ահազանգում էին և կոչ անում հայ գյուղացիությանը երբեք չթողնել գյուղը և չկենտրոնանալ Բաքվում[1529]:

Հարկ է ընդգծել, որ վիճակագրական աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում գյուղաբնակ ընտանիքների շնչերի վերաբերյալ, այլ միայն ներկայացնում են ծխաքանակը: Պարզաբանելով այն հարցը, թե մոտավորապես քանի անդամ է ունեցել հայկական յուրաքանչյուր ընտանիք, նշենք, որ ավանդաբար հայ նահապետական ընտանիքի ամենաբնորոշ հատկանիշը եղել է բազմանդամությունը[1530]: Հայ գյուղացին, հիմնականում զբաղված լինելով հողագործությամբ, գյուղատնտեսական տարաբնույթ ծավալուն աշխատանքներ կատարելու համար բազմանդամ ընտանիքի կարիք ուներ: Այս հանգամանքը պայմանավորված էր նաև ազգային ավանդույթներով: Ցավոք, խիստ սակավ են հայկական գյուղական համայնքի ընտանիքի կազմի վերաբերյալ պատմական նյութերը: Միայն մի քանի աննշան փաստեր լույս են սփռում այս հարցի վրա: Գյուղագետ Ներսես Աբելյանի տված տեղեկության համաձայն՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում յուրաքանչյուր հայ ընտանիք բաղկացած էր 5-6 մարդուց[1531], թեև չենք բացառում նրանց առավել բազմազավակությունը: Ընդունենք, որ գյուղերում երդերի կազմը 1-2 մարդով ավելի է եղել քաղաքային ընտանիքներից: Հետազոտվող ժամանակահատվածում ծնողներից և զավակներից կազմված ընտանիքը համատարած երևույթ էր գյուղերում և քաղաքներում[1532]: Վերոգրյալից կարելի՞ է արդյոք եզրակացնել, որ հետազոտվող ժամանակահատվածում գյուղերում մեծ ընտանիք կամ գերդաստան՝ երբև ընտանիքի ձև, գոյություն չի ունեցել: Ամենևին էլ ո՛չ: Ամուսնացած եղբայրների՝ իրենց փոքր ընտանիքներով ծնողների հետ միատեղ ապրելը՝ երբև մեկ միասնական տան անդամներ, այն-

[1525] Տե՛ս «Լոյս» օրացոյց 1918 թւականի, պատկերազարդ յաւելւածով, եօթներորդ տարի, խմբագրեցին Ա. եւ Բ. Թոփչեաններ, Թիֆլիս, 1917, էջ 103:
[1526] Տե՛ս **Зелинский С.**, նշվ. աշխ., стр. 19, տե՛ս նաև «Նոր-դար», Թիֆլիս, 1891, հունվարի 22, № 9:
[1527] Գ. Ե. [**Գեղամյանց Եղիշե**], Ապրելու գաղտնիքը, Բաքու, 1903:
[1528] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 133, թ. 3:
[1529] Տե՛ս **Մելիք-Շահնազարեանց Ս.**, Հայ գիւղացու սեւ օրը, Թիֆլիս, 1890:
[1530] Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Էրզրում. Էրզրումի նահանգի հայ բնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, էջ 109-110:
[1531] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 2, տե՛ս նաև ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 74, տե՛ս նաև **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 219.
[1532] Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 219.

քան էլ հազվադեպ երևույթ չի եղել: Ինչպես օրինակ, Շամախիի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին՝ 1915 թ. հունիսի 16-ի հղած զեկուցագրում տեղեկություններ հաղորդելով Գյոքչա և Շամախի գավառներում բնակվող հայության թվի մասին՝ յուրաքանչյուր տուն հաշվում է 10 անդամից բաղկացած[1533]: Սակայն ծնողների մահով տեղի էր ունենում եղբայրների բաժանում. այդպիսի ընտանիքները, ոչ հազվադեպ, միմյանցից տարրալուծում էին տնտեսապես անկախ փոքր ընտանեկան միավորների:

Բաքվի նահանգի հայության թվի շարժընթացը լուսաբանելուց հետո անդրադառնանք նաև հայ բնակչության շրջանում ընթացած ազգային-լեզվական, եկեղեցական, կրթական ու ազգագրական գործընթացներին վերաբերող հարցերի քննությանը:

1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ նահանգում 826716 ազգաբնակչությունից հայերենն է որպես մայրենի լեզու մատնանշել 52233 մարդ (31223 ար., 21010 իգ.), որից քաղաքաբնակներ՝ 23124 (14682 ար., 8442 իգ.)[1534]: Նույն մարդահամարի տվյալների համաձայն՝ մայրենի լեզուն հայերենը ցույց տված 52233 բնակչությունից առաքելական էր՝ 51777 (30983 ար., 20794 իգ.), ուղղափառ՝ 61 (36 ար., 25 իգ.), հայ կաթոլիկ՝ 199 (92 ար., 107 իգ.), հռոմեա-կաթոլիկ՝ 9 (4 ար., 5 իգ.), լյութերական՝ 127 (74 ար., 53 իգ.), քրիստոնյա այլ դավանանքի հետևորդներ՝ 5 (իգ.), մահմեդական՝ 55 (34 ար., 21 իգ.) մարդ[1535]:

Բաքվի նահանգի շրջանակներում՝ Շամախի քաղաքում և նրան հարակից գյուղերում՝ մինչև Ղուբա ընկած հատվածում, հայությունը խոսել է Շամախիի բարբառով[1536]: «Այս բարբառով,- գրում է Հր. Աճառյանը,- կը խօսուի գլխաւորապէս Շամախի քաղաքին մէջ և անոր մօտակայ քանի մը գիւղերը՝ մինչև Ղուբա»[1537]: Շամախիի և Գյոքչայի գավառների մնացած գյուղերում խոսել են Արցախի, պարսկահայ և Քարքանջի բարբառներով[1538]. «Մնացեալ գիւղերէն մեծ մասը,- գրում է Հր. Աճառյանը,- Ղարաբաղէն, ոմանք ալ Խոյէն ու Սալմաստէն գաղթած ըլլալով, իրենց մայրենի բարբառը կը գործածէն»[1539]: Հարկ է նշել, որ արցախահայերի հաստատումից հետո Շամախիի և Գյոքչայի գավառներում աստիճանաբար գերակշռել է Արցախի բարբառը: Ըստ Մակար եպս. Բարխուտարյանցի՝ «Բնիկ Շամախեցւոց բարբառն թէև տարբեր է Արցախի բարբառից, այսուամենայնիւ հետզհետէ առաջինն տեղի է տալիս երկրորդին»[1540]: Ար. Ղարիբյանը լեզվաբանական քննությամբ ցույց է տվել, որ արցախ-ղարաբաղյան բարբառով «...խոսում են Ղարաբաղի բնակչությունը և բոլոր այն ղարաբաղցիները,

[1533] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1056, թ. 40-41, տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ: Կարապետ **եպիսկոպոս Տէր-Մկրտչեան** (1866-1915), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան, 2006, էջ 423:

[1534] Տե՛ս ПВПНРИ-1897, стр. 3, տե՛ս նաև таблица XIII, стр. 53:

[1535] Տե՛ս նույն տեղում, таблица XIV, стр. 54-57:

[1536] Շամախիի բարբառը պատկանում է «Ում» ճյուղին և, ըստ Հր. Աճառյանի՝ «...կը կազմէ միջին օղակ մը Ղարաբաղի և Ջուղայի բարբառներուն: Իր ձայնական դրութիւնը և ձայնաբանական փոփոխութիւնները, ինչպէս և քերականական շատ ձևեր բոլորովին նոյն են Ղարաբաղի բարբառին հետ: Այս պատճառով կարելի պիտի ըլլար գուցէ Շամախիի բարբառը ինքնուրոյն բարբառ մը չհամարել և Ղարաբաղի բարբառին մէկ ենթաբարբառը կարծել. սակայն դերանուններու այլազան ձևերը, ինչպէս և ներկային կազմութիւնը, որ բոլորովին տարբեր են անկէ, կստիպեն մեզի ընդունիլ զայն իբրև անկախ բարբառ» (**Աճառեան Հր.**, Հայ բարբառագիտութիւն. - Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 76): Ի դեպ, Հր. Աճառյանը Շամախիի բարբառն ուսումնասիրել է Նոր Նախիջևանում 1911-1916 թթ.՝ թատերագիր Ալ. Աբելյանի հետ: Վերջինիս մասին Աճառյանը գրում է. «...բնիկ Շամախեցի է և շատ լաւ ծանօթ իր մայրենի բարբառին, որով գրում էլ է» (Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 21):
(Աճառյան Հր., Հայ բարբառագիտութիւն, էջ 76:

[1537] **Աճառեան Հր.**, Հայ բարբառագիտութիւն, էջ 6-7:

[1538] Տե՛ս **Բաղրամյան Ռ.**, Շամախիի բարբառը, Երևան, 1964, էջ 76:

[1539] **Աճառեան Հր.**, Հայ բարբառագիտութիւն, էջ 295:

[1540] **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 295:

որոնք գտնվում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու շրջանում...»[1541]: Ինչ վերաբերում է Բաքու քաղաքի հայ բնակչության խոսակցական լեզվին, ապա նշենք, որ նրանց բառապաշարում առկա է եղել այստեղ հաստատված արցախցիների, զանգեզուրցիների, շամախեցիների և այլ տեղավայրերի հայության լեզվաբարբառային շերտերի ձուլման գործընթացը[1542]: Նահանգին սահմանակից Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշի գավառների հայ բնակչությունը հիմնականում խոսել է Արեշ-Հավարիկի[1543] բարբառով[1544]:

Պետք է նկատել, որ թեև հայկական մի շարք գյուղերի գործածական լեզուն հայերենն էր, սակայն պատմական հետագա ժամանակաշրջանների ընթացքում հայկական մի շերտ, կրելով լեզվամշակութային փոփոխություններ, դարձել էր իրանալեզու (թաթախոս): Թաթախոս հայերը XIX դարի վերջին հիմնականում ապրել են Շամախիի գավառի Մատրասա, մասամբ նաև Հնզար և Ղուբայի գավառի Քիլվար ու Խաչմաս գյուղերում: Թաթախոս հայերի պատմության հարցերով զբաղվող Ար. Հակոբյանը պատմագիտական, ազգաբանական, մատենագրական, արխիվային սկզբնաղբյուրների, Հայաստանում և Հյուսիսային Կովկասում կատարած դաշտային հետազոտությունների և լեզվագիտական փաստերի համադրմամբ եզրակացնում է, որ թաթախոս հայերը դեռ վաղ միջնադարում Արևելյան Այսրկովկասում հաստատված հայ ռազմական վերաբնակիչների հետնորդներն են, որոնք ենթարկվել են լեզվական ձուլման, սակայն պահպանել են հայկական ինքնագիտակցությունը, դավանանքը և մշակութային նկարագիրը[1545]: Երկրամասի թաթախոս հայերի խոշոր բնակավայրը Մատրասան էր: Գյուղի թաթախոս հայերի մասին Գ. Քաջբերունին գրում էր. «Ժողովուրդը լաւ գիտէ հայերէն լեզուն, բայց իրար հանդիպելիս և շատ տներում խօսում են Թաթի բարբառով»[1546]: Մատրասահայերի բարբառի մասին «Նոր-դարը» գրում էր. «Սովորական բարբառն է աղաւաղուած պարսկերէնը. խօսակցութեանց մէջ գործ են ածում հայկական բառեր՝ բուն գրաբարից. օրինակի համար ռահ, դխի, չիթ, ճանդ, և այլն»[1547]: 1865 թ. սեպտեմբերին գյուղ այցելած Շամախիի հայոց թեմի առաջնորդ Դանիել արքեպ. Շահնազարյանցը մատրասահայերի երկլեզվության մասին թողել է հետևյալ վկայությունը. «...բնակիչք ընդհանրապէս խօսում են երկու լեզուաւ միմեանց հետ Հայերէն և Թաթերէն»[1548]: Մատրասահայերի երկլեզվության վերաբերյալ 1873 թ. ուշագրավ վկայություն է թողել նաև շամախեցի Ալ. Ալեքսանդրյանը՝ գրելով. «Բնա-

[1541] Տե՛ս **Ղարիբյան Ար.**, Հայ բարբառագիտություն (հնչյունաբանություն և լեզվաբանություն), Երևան, 1953, էջ 230:

[1542] Տե՛ս Բաքվի հայոց բանահյուսությունը, էջ 15-16:

[1543] Տե՛ս **Տէր-Պօղոսեան Գր.**, Հաւարիկի բարբառը, ԲՀԳԻ, Էջմիածին, 1921-1922, գիրք Ա. եւ Բ., էջ 160-175, **Լուսենց Ա.**, Արեշի բարբառը, Երևան, 1982:

[1544] Հարցի հանգամանալից քննությունը տե՛ս **Ղարիբյան Ար.**, նշվ. աշխ., էջ 260-262, տե՛ս նաև **Աճառյան Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների), հ. IV, Բ գիրք, Երևան, 1961, էջ 60, 64-66, 178, 187-188,192, 210, 287, **Բաղրամյան Ռ.**, նշվ. աշխ.:

[1545] Թաթախոս հայերի ծագումնաբանության, ձևավորման, անցած պատմական ուղու, մշակութային նկարագրի ու ինքնության խնդիրներին առնչվող հարցերի հանգամանալից քննությունը տե՛ս **Հակոբյան Ար.**, Թաթախոս հայեր, նույնի՝ Татоязычные армяне в Восточном Закавказье, Археология (IV) и этнология (III) Кавказа (международная научная конференция). Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2002, стр. 193-196, նույնի՝ О культурном облике татоязычных армян, Археология, этнология и фольклористика Кавказа (материалы международной конференции), Ереван, 17-18 ноября, 2003, стр. 268-269; **Акопян Ар., Далалян Т.**, О некоторых особенностях идентичности эдессийских армян (Заметки по итогам полевых работ в селе Эдессия Ставропольского края РФ), Археология, этнология, фольклористика Кавказа (Международная научная конференция. Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2004, стр. 160-161; **Акопян Ар.**, Татоязычные армяне 15 веков от «армянства» к «армянству», стр.190-210.

[1546] **Քաջբերունի Գ.**, նշվ. աշխ., p. 21:

[1547] «Նոր-դար», Թիֆլիս, 1886, ապրիլի 1, № 47:

[1548] **Դանիէլ արքեպ.**, նշվ. աշխ., «Արարատ», 1871, № Գ, էջ 352, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 429, ց. 1, գ. 27, p. 3:

կիչները առ հասարակ խոսում են պարսկերենի խառնուրդից մի առանձին լեզու: Գիտեն խոսալ և հայերեն, օրինակ փոխանակ ասելու մեռաւ, ասում են «մերալայ», ծուռ է «ծուրա», գնացել է «կինացալայ»[1549]:

Ինչպես ցույց է տվել Ս. Ղալթախչյանը, Մատրասայի հայ-թաթերեն բարբառի վերաբերյալ կատարած իր ուսումնասիրությամբ, բարբառը, հիմնականում լեզվաբանական չափանիշներով հարելով Կենտրոնական Պարսկաստանի բարբառային համակարգին, զավում է ժամանակակից պարսկերենի բարբառների թվին[1550]: «Մուրճ» ամսագիրը, անդրադառնալով Ղուբայի գավառի հայաբնակ Քիլվար և Խաչմաս գյուղերի թաթախոս հայերի խոսակցական լեզվի հարցերին, գրում է. «Ղուբայի գաւառում հնուց եղած բազմաթիւ հայ գիւղերից (որոնց աւերակներն ու գերեզմանատեղիքը ցայսօր երեւում են) այժմ միայն կանգուն կան երկու հայաղաւան գիւղեր, ընդամենն 150-160 ծուխերով՝ Քիլւար և Խաչմազ անուամբ, որոնք լեզուները փոխած են և խօսում են աղաւաղած պարսկերէնով, որով խօսում են նաև Ղուբայի գաւառում շատ մահմեդական գիւղօրայք և հրէայք անգամ: Այդ լեզուն անւանւում է թաթ-լեզու, թաթերէն»[1551]: Սարգիս արքեպ. Ջալալյանցը նույնպես Քիլվար գյուղի օրինակով գրել է. «Զգիտեն խօսել բնակիչքն զհայրենի բարբառ. այլ Լահիճէրէն, զուցէ Լընէրէն» (իմա՝ թաթերեն - Գ. Ս.)[1552]: Մակար եպս. Բարխուտարյանցը, 1890 թ. այցելելով Քիլվար, գրում էր, որ բնակիչները «...խօսում են ըստ աւուրեան իւրեանց Լինաց բարբառով»[1553]: Ն. Զեյդլիցը այդ հարցի առնչությամբ գրում է. «Բաքվի նահանգի ոչ բոլոր հայերն են պահպանել իրենց լեզուն: Քիլվար գյուղի բնակիչները խոսում են թաթերեն լեզվով, որը տարածված է նաև Շամախիի գավառի հայկական մի քանի գյուղերում»[1554]:

Դեռևս XVIII դ. եվրոպացի ուղեգիրները Շիրվանում կատարած ճանապարհորդությունների ժամանակ հայաբնակ շրջաններում նկատել են հայերի՝ այլ լեզվով խոսելու դեպքեր: Այդ առումով ուշագրավ է XIX դ. վերջի և XX դ. սկզբի ֆրանսիացի աշխարհագրագետ Ժան Ժակ Էլիզե Ռեկլյուի թողած տեղեկությունը. «Շիրվանում կովկասյան շղթայից հարաւ, շատ հայ գիւղեր մոռացել են հայերէնը: Այս տեսակ փոփոխութիւնները անխուսափելի էին ցեղի ցրուածութեան պատճառաւ»[1555]: Ինչպես ցույց են տալիս փաստերը, XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Քիլվար և Խաչմաս գյուղերի թաթախոս հայերի շրջանում տարածված էր եղել թաթերեն-թյուրքերեն երկլեզվությունը[1556]: Թաթերենը գործածվում էր կենցաղում, ներ-

[1549] ՀԱԱ, ֆ. 234, ց. 1, գ. 40, թ. 1:

[1550] Մատրասայի հայ-թաթերեն բարբառի լեզվաբանական հարցերի քննությունը տե՛ս **Калтахчян С.**, նշվ. աշխ.; նույնի՝ Հայ-պարսիկները (հայ-թաթերը) եւ նրանց լեզուն, «Իրան-նամէ», փետրուար, Երեւան, 1995, № 1, էջ 11-14: Հայ-թաթերեն բարբառի մասին տե՛ս նաև Армянско-татские тексты, Записаны учениками Шемахинского городского училища Эфендиевым и Шахвердовым: заметки к ним **Л. Л.** (СМОМПК, вып. XX, стр. 25-30): Թարախոս մատրասահայերի լեզվամշակութային խնդիրների վերաբերյալ հետաքրքիր դիտարկումներ ունի նաև Մատրասա գյուղի դպրոցի պատմության երբեմնի ուսուցիչ Սերգեյ Էֆենդյանը (տե՛ս Մադրասացիների երկլեզվության հարցի շուրջ, ԼՀԳ, Երևան, 2004, № 1, էջ 88-96):

[1551] **Բ.-բ. Մ…եանց**, Տեղեկագիր Ղուբայի հայոց եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցների հինգ ամեայ հաշիւների ($188^{4}/_{5}$-$188^{8}/_{9}$) ուս. տարի, «Մուրճ», Թիֆլիս, 1891, № 5, էջ 685:

[1552] **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 424:

[1553] **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140:

[1554] СНМ-1859-1864, стр. 93.

[1555] **Էլիզէ Ռէկլիւ**, Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը. Ուրմիա լիճ եւ Առաջաւոր Ասիա, թարգմանեց Միաբան, Վաղարշապատ, 1890, էջ 46, տե՛ս նաև «Արարատ», 1887, № Թ, էջ 408:

[1556] Տե՛ս Հակոբյան Ար., Թարախոս հայերի լեզվական մշակույթի շուրջ, էջ 75:

գյուղական միջավայրում, իսկ թյուրքերենը՝ որպես ազգամիջյան հաղորդակցության լեզու[1557]: Մակար եպս. Բարխուտարյանցը Քիլվար գյուղի օրինակով հայտնում է. «...ստիպուած էր տաճկերէն լեզուաւ խօսել, որպէսզի հասկանային»[1558], իսկ Խաչմասի մասին գրել է հետևյալը. «Այժմ տաճկերէն է խօսում ժողովուրդս, վասն որոյ ճարահատեալ մի քանի քարոզներ խօսեցի տաճկերէն լեզուով և մխիթարեցի: Ողորմելի ժողովուրդն չարունակ արտասուք էր թափում, մինչև քարոզների վերջն. փառաբանում էր զԱստուած, որ արժանի արաւ գինքը քարոզ լսելու...»[1559]: XIX դարի 70-ական թվականների սկզբներին Բաքվից Խաչմաս այցելած «Մեղու Հայաստանի» հոդվածագիրներից Ներսես Սարումյանցը խաչմասահայերի՝ մայրենի լեզվով չխոսելու փաստի վերաբերյալ ցավով արձանագրել է. «...կորցրած են վերջապէս եւ Հայոց լեզուն, պահելով մտքներուն միայն մի երկու հայերէն խօսք. «բարի լոյս, բարի օր, բարիրիկուն, օրհնեա տէր, ժամ (եկեղեցի), խաչ, տէրտէր, աւետարան» եւ ուրիշ ոչինչ»[1560]:

Նշված գյուղերի թաթախոս հայերը թեև մահմեդականների կողմից պարբերաբար ենթարկվել են բռնությունների, այնուհանդերձ կարողացել են պահել իրենց ազգային ինքնությունը, կրոնն ու եկեղեցին: Օրինակ՝ քիլվարահայերը համառ պայքարի գնով խույս են տվել բռնի մահմեդականացումից և պահպանել հարազատ եկեղեցին: «Այդ հայերը (քիլվարահայերը - Գ. Ս.) ոչ միայն շատ անգամ մարտիրոսական կեանքով պահել են իրանց կրօնը, այլ և բռնի երբեմն ստիպել են իրանց քահանաներին մոլլա դառնալու դիտաւորութիւնից հրաժարել»[1561],- գրում էր «Արձագանքը»: Այդօրինակ վկայություն է արձանագրել նաև Մակար եպս. Բարխուտարյանցը՝ գրելով. «Քիլվարի հայն բազմիցս զոհ տուած է իւր նիւթական կարողութիւնը, իւր վարելահողերի մի մասը և որ մեծն է՝ իւր զաւակները մահմետականաց բռնութեանց և բռնաբարութեանց, այսուամենայնիւ իւր քաջութեամբ անխախտ պահած է իւր դաւանութիւնը, հաւատը և եկեղեցին»[1562]:

1897 թ. մարդահամարի՝ «Բնակչության տեղաբաշխումն ըստ դավանանքի և մայրենի լեզվի» աղյուսակի տվյալների համաձայն՝ Նահանգում թուրքերենը՝ 5 (2 ար., 3 իգ.) և թաթերենը՝ 75 (44 ար., 31 իգ.) որպես մայրենի լեզու մատնանշած մարդ նշված են հայ առաքելական դավանանքի հետևորդներ[1563]: Նրանք գերակշռել են Բաքու քաղաքում՝ 64 մարդ (33 ար., 31 իգ.)[1564]: Խիստ հավանական է, որ նրանք լեզվական փոխակերպման ենթարկված հայերն են, որոնք թեև ժամանակի ընթացքում անջրպետվել էին իրենց լեզվակիցներից և աստիճանաբար համալրել քաղաքի թյուրքալեզու բնակչության շարքերը, այնուհանդերձ պահպանել էին իրենց դավանանքը: Նկատենք, որ տարածաշրջանում (Նուխիի և Արեշի գավառներ) XIX դարի վերջին կային մի շարք թրքախոս հայկական և ուդիական բնակավայրեր, որոնց բնակչությունը թեև ենթարկվել էր լեզվական փոխակերպման, բայց պահպանել էր իր դավանանքը։

[1557] Տե՛ս նույն տեղում:

[1558] **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 141:

[1559] Նույն տեղում, էջ 133:

[1560] **Ներսէս Սարումեանց**, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1871, հոկտեմբերի 16, № 38, էջ 299, տե՛ս նաև Հակոբյան Ար., Թարախոս հայերի լեզվական մշակույթի շուրջ, էջ 76:

[1561] «Արձագանք», Թիֆլիս, 1893, նոյեմբերի 28, № 139:

[1562] **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 140-141:

[1563] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIV, стр. 54.

[1564] Տե՛ս նույն տեղում, таблица XIV, стр. 60.

նքը[1565]: Միաժամանակ 1897 թ. մարդահամարի տվյալները փաստում են, որ մայրենի լեզուն հայերենը մատնանշած 55 մարդ (34 ար., 21 իգ.) դավանել է մահմեդական կրոնի[1566]: Ընդամին, նրանք նույնպես գերակշռել են Բաքու քաղաքում՝ 42 մարդ (24 ար., 18 իգ.)[1567]: Այս հանգամանքը փաստում է ուշագրավ այն իրողությունը, որ Բաքվում բնակվող մահմեդականացված հայերը թեև խզել էին իրենց կապերը քրիստոնեական եկեղեցու հետ, այնուամենայնիվ չէին ենթարկվել լեզվական այլակերպման: Երևույթ, որ կարող է պատճառաբանված լինել Բաքվի էթնոդավանական միջավայրով և դրանով թելադրված՝ բազմաբնույթ գործընթացներով (միջէթնիկ ամուսնություն, դավանափոխություն և այլն): Չպետք է անտեսել այն իրողությունը, որ XIX դարի վերջերին հատուկենտ վկայություններ են հանդիպում մահմեդականների շրջանում քրիստոնեական հավատն ընդունելու մասին: Այսպես՝ քրիստոնեություն ընդունելու խնդրանքով 1898 թ. հուլիսին և օգոստոսին Կովկասի կառավարչապետին են դիմել Շամախի քաղաքի բնակիչներ Հասան Ղուլի-օղլին և Հասան Ջաբար-օղլին: Կառավարչապետի թույլտվությունից հետո Էջմիածնի սինոդը հրահանգում է Շամախիի հայոց թեմի կոնսիստորիային նրանց «մկրտութեամբ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ծոցն ընդունել»[1568]: Սակայն պետք է նշել, որ դրանք առանձին դեպքեր էին: Թերևս հավանական է, որ նրանք մահմեդականացված հայեր են եղել, քանի որ մահմեդականացող հայերը, որպես կանոն, կոչվում էին նոր՝ մահմեդական բնակչությանը բնորոշ անձնանուններով:

Բաքվի նահանգի հայերի լեզվական փոխակերպման վրա ներազդող կարևոր գործոններից էր միջէթնիկ ամուսնությունը: Փաստերը ցույց են տալիս, որ նահանգի քաղաքաբնակ հայերի շրջանում ազգամիջյան ամուսնությունների թիվն ավելին է եղել, քան գյուղաբնակներինը: Այս հանգամանքը պայմանավորված էր գյուղական շրջաններում նահապետական սովորույթների, ինչպես նաև էթնոգենետիկ ինքնապաշտպան մեխանիզմների առկայության ավելի բարձր մակարդակով, կայուն ներէթնիկ համախմբվածությամբ: Որ նահապետականությունը եղել է գյուղաբնակ հայ ընտանիքների ամենաբնորոշ գիծը, փաստում են 1897 թ. մարդահամարի տվյալները. նահանգում ամուսնալուծվել էր ընդհամենը 22 (8 ար., 14 իգ.), որից քաղաքում՝ 19 (7 ար., 12 իգ.) մարդ[1569]:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ անգամ հայկական այն գյուղերում (Քոհլուճ, Հնդար, Թալիշ, Միրիշեն), որտեղ բնակվել են նաև մահմեդականներ, ազգամիջյան ամուսնությունները հազվադեպ են եղել: Ալ. Շիրվանզադեն «Նամուս» երկում տալիս է Շամախիի հայ կնոջ նահապետական կյանքը պատկերող հետևյալ ուշագրավ դրվագը. «...չափահաս աղջկան արգելվում է օտար տղամարդկանց առաջ բերան բանալն անգամ»[1570]: Հարկ է նշել, որ էթնիկ ներամուսնությունն ամուր հիմքերի վրա է գտնվել նաև թաթախոս հայերի շրջանում: Ազգակցական կապեր հաստատվում էին թե՛ համայնքի ներսում, թե՛ այլ հայկա-

[1565] Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 241, 245, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Նուխի և Արեշ գավառների հայերի պատմական անցյալից, «Իրան-նամէ», Երևան, 1997, № 4-5-6, էջ 28-34, տե՛ս նաև Խառատյան (Առաքելյան) Հ., Ուղիների ոդիսականը 18-20-րդ դդ., էջ 118-170:

[1566] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIV, стр. 57.

[1567] Տե՛ս նույն տեղում, таблица XIV, стр. 61.

[1568] «Արարատ», 1899, № ԺԱ, էջ 420:

[1569] Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XVI, стр.92-93.

[1570] Շիրվանզադե Ալ., Երկեր, Երևան, 1983, էջ 361:

կան գյուղերի միջև[1571]: Թաթախոս հայկական բնակավայրերի միջև խնամիական սերտ կապերի մասին է վկայում Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Քիլվարցիք այնքան նման են մատրասեցւոց լեզուով, սովորութիւններով և ամենայն բանով, որ կարծես ազգականք և բարեկամք լինին միմեանց. ուստի և այնքան հեռաւորութեան վրայ՝ Մատրասայից մինչեւ Քիլվար՝ 3 օրուայ ճանապարհ քարվանի, աղջիկ տալով և առնելով խնամութիւն են անում»[1572]:

Քաղաքաբնակ հայերի ազգամիջյան ամուսնությունները մեծապես պայմանավորված էին նրանով, որ Բաքուն, ուր կենտրոնացված էր նահանգի քաղաքաբնակ հայերի ճնշող մեծամասնությունը, երկրի առավել բազմազգ քաղաքներից մեկն էր, իսկ քաղաքներում էթնիկ գործընթացներն առավել աշխույժ են ընթանում: Բացի դրանից, XIX դարի 80-90-ական թվականներին Բաքվի հասարակական կյանքի հեղաբեկումների պայմաններում տիրապետող դիրք գրաված դրամատիրական հարաբերությունները որքանով նպաստում էին տնտեսական առաջընթացին և ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը, այդքանով տնտեսական դրության փոփոխությունն իր հետ բերում էր նաև բացասական երևույթներ, որոնք առաջին հերթին արտահայտվում էին հասարակական կյանքում սոցիալ-բարոյական հարաբերությունների փոփոխությամբ և նահապետական կյանքի քայքայմամբ: Փողի ամենակարող ուժի ավերածությունները, հասարակական բարքերի, կենցաղի և փոխհարաբերությունների մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունները հիմնովին շրջում էին գյուղից քաղաք տեղափոխված գյուղացու նահապետական-ավանդական պատկերացումները, կտրում նրան էթնիկ ավանդույթներից: «Եւ այդպէս հետզհետէ հեռանալով ու ժամանակի վատ հոսանքով ապրելով օտարութեան մէջ,- գրում էր «Նոր-դարն» իր առաջնորդողում,- մեռնում է և կամ մոռանում է իւր աշխարհը, հայրենիքը, ծնողները և մինչև անգամ ամուսինն ու զաւակները... Ամուսնացածը օտար տեղ գտնում է իւր ընկերուհին ու բաժնում է նրա հետ իւր պատառը և զուարճանում»[1573]: Ժամանակի մամուլում հասարակական հնչեղություն ստացած խնդրո առարկա հարցի առնչությամբ իր մտահոգությունն է արտահայտել նաև Եղիշե ավագ քհն. Գեղամյանցը, գրելով, որ «...Բագուի նման քաղաքում (գուցէ և միւսներում) օտարազգի աղջկերք և այրի կնանիք՝ մեր եկեղեցւոյ գիրկն են գալիս մտնում անդադար: Այդ օրիորդները և այրիները՝ ձևի համար հայանում են, որպէս զի հայերի հետ պսակւին: Եւ մեր երիտասարդները (թէ ինտելիգենտները և թէ վաճառական ու արհեստաւորները՝ անխտիր) նրանց հետ ոչ միայն պսակւում են, այլ և պարծենում, ազգի վրայ դեռ մունաթ էլ են անում, որ նրա թիւը՝ մի օտարականով աւելացրին: Իսկ գալով այն բանին, որ օտարազգի մօրից ծնած զաւակը, նրա հոգւով էլ կը մեծանայ... այս ամենը մեր նոր սերնդի համար արժէք, նշանակութիւն չունի»[1574]: Ալ. Շիրվանզադեի «Քաոս» վեպում կա մի հիշարժան դրվագ, երբ առևտրաարդյունաբերող Մարկոս աղա Ալիմյանը, որն իր բնավորության մեջ պահում էր ազգային հոգեբանության որոշ գծեր, չէր հաշտվում այն փաստի հետ, որ ավագ որդին՝ Սմբատը, խախտել էր իր «պապերի ավանդություններն ու եկեղեցու սուրբ օրենքները» և ռուսական եկեղեցու օրենքներով ամուսնացել ռուս կնոջ հետ: Սմբատն իր բաժին ժառանգությունը կարող էր ստանալ միայն ռուս կնոջից բաժանվելու և հայկական եկեղեցու օրենքներին հավատարիմ մնալու

[1571] Տե՛ս **Акопян Ар.**, О культурном облике татоязычных армян, стр. 269.

[1572] Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 542:

[1573] «Նոր-դար», Թիֆլիս, 1890, հունիսի 6, № 73:

[1574] Գեղամեանց Ե., Հրապարակախօսական մանրունք, գիրք Ա, Բագու, 1915, էջ 81-82:

պայմանով[1575]: Թեև պետք է ասել, որ քիչ չէին նաև դեպքերը, երբ հայերի հետ ամուսնացած ռուս կանայք վերամկրտվում էին որպես առաքելականներ[1576]: Այդ քայլին դիմած հայերի մի զգալի մասի ընտանիքներում աստիճանաբար թուլանում էր կապվածությունը հայերենին՝ որպես մայրենի լեզվի: Նկատենք, որ Բաքվում հայերի ազգամիջյան ամուսնությունները կատարվել են հիմնականում քրիստոնեադավան ժողովուրդների միջև, և աննշան է եղել հայերի և մահմեդականների միջև ամուսնությունների թիվը: Ընդ որում, հիմնական պատճառը, անշուշտ, եղել է դավանական տարբերությունը, որի արմատները տվյալ ժամանակաշրջանում արդեն իսկ բավական խորն էին:

Քննվող ժամանակաշրջանում Բաքվի նահանգի հայ բնակչության հիմնական մասը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ էր: Կային նաև ավետարանական, կաթոլիկ և ռուսական ուղղափառ եկեղեցուն դավանող փոքրաթիվ հայկական համայնքներ: Առաքելական հայերի հոգևոր գործերը տնօրինում էր Շամախիի հայոց թեմը: Այն կարգավորում էր նահանգի հայության ներքին կյանքը՝ իր ակտիվ գործունեությամբ մեծ դերակատարություն ունենալով հայության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային բնագավառներում: Թեմի կառավարումը կենտրոնացված էր թեմակալ առաջնորդի ձեռքում, որը հոգևոր-վարչական սահմանների շրջանակներում տնօրինում էր հասարակական հարաբերությունների կանոնակարգման իրավունքը, լուծում ընտանեկան ու ժառանգական հարցերը (ամուսնություն, ապահարզան, որդեգրում, ժառանգություն, կտակ և այլն), կատարում քահանայական ձեռնադրումներ, ծավալում կրթամշակութային գործունեություն, համայնքը բաժանում ծխերի և այլն:

Սկզբնապես թեմի առաջնորդանիստ կենտրոնն էր Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա վանքը, սակայն, հենվելով 1836 թ. մարտի 11-ի «Պոլոժենիե»-ի սահմանած այն կարգի վրա, որով թեմական կենտրոնները պետք է տեղափոխվեին քաղաք, առաջնորդանիստը Սաղիանից տեղափոխվում է Շամախի, և տեղի Սբ. Աստվածածին եկեղեցին դառնում է մայր եկեղեցի[1577]:

Շամախիի թեմի հոգևոր-վարչական սահմաններն ընդգրկում էին Շամախիի, Գյոքչայի, Ղուբայի, Բաքվի գավառները և Դաղստանի մարզի Դերբենդ քաղաքն իր շրջապատով: Թեմը ներառում էր 4 քաղաք (Բաքու, Դերբենդ, Շամախի, Ղուբա), 3 քաղաքատիպ ավան (Գյոքչա, Սալյան, Աստարա) և հայկական 47 գյուղ[1578]: Անդրկասպյան մարզի Աշգաբադ քաղաքում 1887 թ. հայկական առաջին եկեղեցու կառուցումից հետո Էջմիածնի սինոդի հրամանագրով մարզի հայության հոգևոր իշխանությունը հանձնվում է Շամախիի թեմի տնօրինությանը: Այս կարգը պահպանվեց մինչև 1892 թ., երբ Անդրկասպյան մարզի կառավարիչ Կուրոպատկինի նույն տարվա հոկտեմբերի 16-ի հրամանով Միջին Ասիայի հայկական եկեղեցիները փոխանցվեցին Աստրախանի հայոց թեմական վարչության իրավասությանը[1579]:

1575 Տե՛ս Շիրվանզադե Ալ., Երկեր, հ. 3, Երևան, 1987, էջ 310:
1576 Գ. Ե. [Գևորգյանց Եղիշե], Բագուայ հայ հոգեւորականները, «Հովիտ», Թիֆլիզ, 1910, հուլիսի 11, № 13, էջ 195:
1577 Արիստակէս եպս. Սեդրակեան, Հովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 127-128:
1578 Տե՛ս «Հայկական աշխարհ», Բագու, 1878, № 1-2, էջ 51, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 122, թ. 22, տե՛ս նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 133:
1579 Տե՛ս **Григорянц В.**, К истории армянской церкви в Туркмении (конец XIX-середина XX вв.), ԼՀԳ, Երևան, 1991, № 6, էջ 9, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3939, թ. 4:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Շամախիի հայոց թեմի առաջնորդներից յուրաքանչյուրն առկա հնարավորությունների սահմաններում թեմի շրջանակներում հիմնեցին եկեղեցիներ, միաժամանակ վերանորոգեցին ավերված և կիսաքանդ եկեղեցիներն ու վանքերը: Ըստ 1853 թ. արխիվային մի վավերագրի տեղեկության՝ միայն Բաքվի նահանգի շրջանակներում գործող եկեղեցիների թիվը հասնում էր 35-ի, իսկ քահանաներինը՝ 31-ի[1580]: 1890 թ. թեմում գործում էր 38 եկեղեցի, 2 վանք և ծառայում էր 34 քահանա[1581]: XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին թեմն ուներ 43 հոգևորականներ[1582], իսկ գործող եկեղեցիների թիվն արդեն հասնում էր 40-ի, որից 5-ը՝ Բաքվում (Սբ. Աստվածածին, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս, Սբ. Թարգմանչաց, Սբ. Հովհաննես Մկրտչի)[1583], 14-ը՝ Շամախու, 17-ը՝ Գյոքչայի, 2-ը՝ Ղուբայի գավառներում և 1-ը՝ Դերբենդ քաղաքում[1584]:

Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների՝ մայրենի լեզուն հայերենը ցույց տված 52233 բնակիչներից առաքելական էր 51777 (30983 ար., 20794 իգ.), ուղղափառ՝ 61 (36 ար., 25 իգ.), հռոմեա-կաթոլիկ՝ 9 (4 ար., 5 իգ.), լյութերական՝ 127 (74 ար., 53 իգ.), հայ կաթոլիկ՝ 199 (92 ար., 107 իգ.), քրիստոնյա այլ դավանանքի հետևորդներ՝ 5 (իգ.), մահմեդական՝ 55 (34 ար., 21 իգ.) մարդ[1585]:

Կրթության և լուսավորության գործը նահանգի հայ բնակչության առաջնահերթ և հրատապ խնդիրն էր: Մահմեդական հոծ զանգվածով շրջապատված հայ բնակչության համար ուծացումից խուսափելու և ազգային ինքնագիտակցությունը պահպանելու համար ավելի էր մեծացել ազգային լեզվով գործող դպրոցների դերը: Այդ էր պատճառը, որ Շամախիի հայոց թեմի առաջնորդներն ու բարեգործական ընկերություններն իրենց ուշադրությունը մշտապես բևեռում էին այդ խնդրի վրա: Կրթական գործի հաջող կազմակերպման շնորհիվ, XIX դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. թուրքական արշավանքը, Բաքվի նահանգում գործում էին տարբեր բնույթի 35 դպրոց, որոնցից 9-ը՝ Բաքու քաղաքում, 16-ը՝ Շամախիի, 5-ը՝ Գյոքչայի և 5-ը՝ Ղուբայի գավառներում[1586]: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ Բաքվի նահանգի հայ բնակչության շրջանում գրագիտությունը (տվյալ դեպքում գրաճանաչ) կազմում էր 24,4%, ռուսներինը՝ 37,6%, կովկասյան թաթարներինը՝ 2,5%, թաթերինը՝ 1,9% և թալիշներինը՝ 1,2%[1587]: Ինչպես երևում է բերված թվերից, կրթության բնագավառում կովկասյան թաթարների հետամնացությունն ակնառու էր: Հարցի առթիվ հետաքրքիր եզրակացության է հանգում ականավոր արևելագետ և գրող Ագաֆանգել Կրիմսկին՝ նշելով. «Կովկասում նույն-

1580 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99-104:
1581 Տե՛ս նույն տեղում, գ. 7054, թ. 24-26, 80-84, տե՛ս նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 138-139, տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 156-209:
1582 ՀԱԱ, ֆ. 57, ց. 14, գ. 298, թ. 85-87:
1583 Նկատի ունենալով Բաքվի հայ բնակչության ստվարացումը, Շամախիի հայոց թեմական խորհուրդը ծրագրել էր քաղաքի արվարձաններում ևս կառուցել եկեղեցիներ: Սաբունչի-Բիբի-Հեյբաթ և Բալախանի հատվածներում պետք է կառուցվեր Սբ. Հռիփսիմեի (ի հիշատակ եկեղեցու բարերար նավթարդյունաբերող Արշակ Ղուկասյանի հանգուցյալ մոր), իսկ Բալախանիում՝ Սբ. Սահակ և Սբ. Մեսրոպ անվամբ եկեղեցիները (տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 167, թ. 16, տե՛ս նաև գ. 237, թ. 3, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1914, սեպտեմբերի 26, դ 141, տե՛ս նաև «Արարատ», 1916, № Գ-Դ, էջ 203): Սակայն Առաջին աշխարհամարտի սկսվելու պատճառով եկեղեցիների կառուցման աշխատանքները ընդհատվեցին (տե՛ս **Ստեփանյան Գ.**, Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, էջ 152-170):
1584 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56-62:
1585 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIV, стр. 54-57:
1586 Տե՛ս **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ. (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1987, էջ 443-462:
1587 Տե՛ս ПВПНРИ-1897, таблица XIV, стр. 57, տե՛ս նաև Աստյան Լ., նշվ. աշխ., էջ 65:

պես Թյուրքական ռասան այնքան էլ առաջադեմ չէր...»[1588]: Ա. Կրիմսկու այս բնորոշումը միանգամայն ճիշտ է և ընդունելի: Անառարկելի իրողություն է, որ երկրամասի հասարակական զարգացման օրինաչափությունները, կատարվող դրական տեղաշարժերը նույն չափով չէին ազդում կովկասյան թաթարների զարգացման վրա: Անդրադառնալով վերջիններիս հետամնացության պատճառներին՝ «Մշակն» իր առաջնորդողում գրում է. «Ամբողջ Կովկասի բնակիչների մէջ, ամենաանշարժ և լուսաւորութիւնից յետ մնացած մասը Թուրք ազգաբնակչութիւնն է: Այդ անշարժութեան գլխաւոր պատճառներից մինը և այն է, որ Թուրք ամբոխի մէջ առհասարակ ոչ թէ միայն դժուար է, բայց և անհնարին է գրագիտութիւնը տարածել, որովհետև նրանց մէջ իրանց մայրենի լեզուով գրագիտութիւնը տարածելու համար պէտք է գործածել արաբական տառերը, որոնք շատ անյարմար են այդ նպատակի համար թէ՛ իրանց գրութեան ձևի, թէ՛ կարդալու եղանակի...»[1589]:

Բաքվի նահանգի հայկական գյուղական համայնքների մասին սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները մեզ հնարավորություն են ընձեռում ներկայացնելու նրանց ներքին կյանքը: Ինչպես վերը նշեցինք, հայկական գյուղական համայնքի հիմնական միավորը՝ երդը, ծուխը, ընտանիքն էր: Համայնքի կյանքում մեծ դեր էր խաղում համայնաժողովը, որը սովորաբար գումարվում էր գյուղի հրապարակում կամ եկեղեցու բակում: Համայնաժողովը կարգավորում էր գյուղի ներքին գործերը, հաստատում՝ հողի և ջրի բաժանման կարգը, ընտրում տանուտերեր: Սովորաբար, բացի արտակարգ դեպքերից, համայնաժողովները գումարվում էին տարին երկու անգամ՝ վաղ գարնանը, երբ սկսվում էին դաշտային աշխատանքները, և ուշ աշնանը՝ բերքահավաքն ավարտելուց հետո: Գյուղական համայնքի գլուխ կանգնած էր տանուտերը, որն ուներ լայն իրավունքներ: Նա ընտրվում էր հայտնի տոհմերից և այդ պաշտոնը շատ հաճախ դառնում էր ժառանգական: Տանուտերերի հիմնական պարտականությունն էր. հետևել ու հսկել, որ համայնականները կատարեն իրենց պարտավորությունները, լիազորված էին պատժելու խռովարար համայնականներին, համայնքի ներսում պահպանելու անդորրություն, կարգավորելու հարևան համայնքների հետ ունեցած վեճերը, հսկել և պահպանել ճանապարհները, կամուրջները, ապահովելու հարկերի հավաքումը գյուղում և այլն[1590]: Համայնքներն ունեին նաև դատական մարմիններ, որոնք նույնպես ընտրովի էին: Վերջիններս կիրակի օրերին քննում և կարգավորում էին համայնականների միջև ծագած և չլուծված տարաբնույթ (ջրի հերթի խախտում, ցանքսերի փչացում և այլն) հարցերը: Համայնքի գրեթե բոլոր հարցերը վճռվում էին սովորույթային իրավունքի նորմերի համաձայն[1591]:

Պատմական աղբյուրները վկայում են, որ քննվող ժամանակաշրջանում հայկական գյուղերն իրենց կենսամակարդակով անհամեմատ բարձր էին կովկասյան թաթարների համեմատ, իսկ գյուղացիներն ապրում էին համեմատաբար բարեկեցիկ կյանքով[1592]: «Ամենայն

1588 **Крымский А.**, Школа образованность и литература у российских мусульман (культурно-этнографический очерк), Москва, 1905, стр.16.

1589 «Մշակ», Թիֆլիս, 1877, հունվարի 1, № 10:

1590 Տե՛ս **Абелов Н.**, նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 218, տե՛ս նաև **Егиазаров С.**, Сельская община вь Елисаветпольской и Бакинской губерниях, СМИЭБГКЗК, т. III, ч. II, Тифлис, 1888, стр. 1-16.

1591 Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, նոյեմբերի 3, № 42:

1592 Տե՛ս Քաջբերունի Գ., նշվ. աշխ., բ. 17, տե՛ս նաև «Նոր-դար», Թիֆլիս, 1886, ապրիլի 1, № 47:

վստահութեամբ կարող ենք ասել,- գրում է «Մշակը»,- որ սրանց (գյոքչայեցի և շամախեցի հայերի - Գ. Ս.) հագուստի ընտրութեան ճաշակը արդէն իր զարգացողութեան գագաթնակէտին է հասել. սրանք աշխատում են ամենալաւ հագուստներ հագցնել իրանց օրիորդներին և տղաներին»[1593]: Հայերի տները հիմնականում քարաշեն էին և երկհարկանի[1594]: Դա գլխավորապես բացատրվում էր այն հանգամանքով, որ հայկական գյուղերում դրամատիրական հարաբերությունների զարգացումն ավելի վաղ սկսվեց և առավել ինտենսիվ կերպով առաջ ընթացավ, քան կովկասյան թաթարների շրջանում:

Ըստ Ստ. Զելինսկու՝ Բաքվի նահանգում տարաբնույթ թյուրքալեզու էթնիկ խմբերի մեծագույն մասը XIX դարի երկրորդ կեսին դեռևս նստակյաց չէր և տակավին պահպանում էր քոչվոր կամ կիսաքոչվոր ապրելակերպը: Նրանք զբաղվում էին անասնապահությամբ և թափառախմբերով տեղափոխվում էին տեղից տեղ[1595]: Ավելին՝ վերջիններս նշված ժամանակահատվածում դեռևս պահպանում էին միմյանցից բավականին հեռու գտնվող պատմաազգագրական ու էթնոտարբերակիչ առանձնահատկություններ[1596]: Բաքվի նահանգում կովկասյան թաթարների մոտ քոչվորական ապրելակերպն առավել տարածված էր Շամախիի և Լենքորանի գավառներում: 1856 թ. տվյալներով՝ Շամախիի գավառում քոչվորական տնտեսությունը համեմատած բնակչության ընդհանուր թվի հետ կազմում էր 34,07 %, իսկ Լենքորանում՝ 11,89%[1597]: Ս. Պետերբուրգում լույս տեսած «Հանրագիտարանային բառարանի» հեղինակներ Ֆ. Բրոքհաուզենն ու Ի. Եֆրոնը հետևյալ բնութագրումն են տվել իրանական Ատրպատականից Անդրկովկասյան տարածաշրջան վերաբնակված թաթարներին. «Կիսաքոչվոր կյանքով ապրող Անդրկովկասյան թաթարները վրիժառու են ու տգետ, հակված են խաբեբայության, գողության ու կողոպուտի, հատկապես քոչի ժամանակ: Նկատելի չափով մեղմ են նստակյաց և հատկապես քաղաքաբնակ թաթարների բարքերը, որոնք կրում են պարսկական ուժեղ ազդեցությունը»[1598]: Առավել բնութագրական է ազգային գործիչներից Հոնան Դավթյանի դիտարկումը. «Ատրպատականի Թուրքեր կամ Թաթարներ: Հին Թաթարական եւ Թիւրքական ցեղեր են: Նոքա շիա մահմեդականներ են: Կան նաեւ փոքր քանակութեամբ սիւնիներ: Զափազանց մոլեռանդ են, տգէտ եւ աւազակաբարոյ. Նոցանից շատերը պարապում են խաշնարածութեամբ եւ կիսաթափառական կեանք են վարում»[1599]:

Հայկական գյուղական համայնքներից զարգացման իր աստիճանով աչքի է ընկել հատկապես Շամախիի գավառի Մատրասա գյուղը, որն ապրել է գյուղաքաղաքի կյանքով[1600]: Գ. Քաջբերունու վկայությամբ՝ «Մատրասա գիւղը, իր բնակիչների բազմութեամբ, իր այգեգործութեան և գինեգործութեան բարձր աստիճանի զարգացմամբ, կուլտուրապէս յառաջադէմ, հարստութեան կուտակմամբ և այլն Շամախու գաւառում ամենաառաջին տեղն է բռնում

1593 «Մշակ», Թիֆլիս, 1884, փետրվարի, 4, № 19:

1594 Տե՛ս **Кобычев В.**, Крестьянское жилище народов Азербайджана в XIX в.: Жилище армян, «Кавказский этнографический сборник», № III, отв. ред. **Л. Лавров**, М-Л, 1962, стр. 40.

1595 **Зелинский С.**, Племенной состав, релегия и происхождение государственных крестьян Закавказского края, «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. II, Тифлис, 1887, стр. 29.

1596 Տե՛ս СНМ-1859-1864, стр. 88.

1597 Տե՛ս **Исмаил-Заде Д.**, Из истории кочевого хозяйства Азербайджана первой половины XIX в., «Исторические записки», т. 66, Москва, 1960, стр. 110.

1598 Энциклопедический словарь, т. XIIIА, стр. 838.

1599 Յոնան Դաւթեան, հ. Ա, Աբէնք, 1988, էջ 274:

1600 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1889, սեպտեմբերի 23, № 108:

իրավամբ: Շրջապատ լայնածաւալ կանաչ այգիների մէջ շողացող Մատրասան իւր քարաշէն, շարեշար, բազմայարկ և պատշգամբներով զրահաւորուած և գոյն գզոյն ներկած երկաթածածկ կտուրներով և եւրոպական ձևի շինութիւններով հեռուից քաղաքի տեսք է ցուցանում և բոլորովին ջոկւում է իւր նման գիւղերից…»[1601]: Մատրասահայերի սոցիալական դրության մասին «Նոր-դարում» կարդում ենք. «Տների ներսը բաւական մաքրութեամբ են պահպանում և բոլոր սենեակները գորգերով փռուած են: Մի քանի մարդկանց տների յատակները տախտակամած են և եւրոպական աթոռներով ու սեղաններով զարդարուած…»[1602]: Մատրասայից ոչ պակաս բարեկեցիկ կյանքով էր ապրում նաև Սաղիանը: Գ. Քաջբերունու վկայությամբ՝ «Մատրասայից ոչ պակաս սիրուն գեղեցկաշէն, միյարկանի և երկյարկանի տներ կան Սաղիանում երկաթէ գոյնզգոյն թիթեղով ծածկած»[1603]:

Բարեկեցության մակարդակով պակաս կարևոր դիրքեր չէին գրավում նաև Գյոքչայի գավառի հայկական գյուղական համայնքները: «Գեօկչայի գիւղերը մտնելուց,- գրում է «Յառաջ» լրագիրը,- խկոյն աչքի էր ընկնում այն հանգամանքը, որ հայկական գիւղերը մեծ մասամբ բաղկացած են երկյարկանի, գեղեցիկ, տանիքները կղմինտրով ծածկած տներից, իսկ թրքական գիւղերում հատուկէնտ էին երևում կղմինտրով ծածկւած տներ, այն էլ պատկանում էին այս կամ այն բէկին…»[1604]:

Գավառների հայկական գյուղերի ազգագրական նյութերում արտացոլված է նաև նրանց կենցաղավարությունը[1605]: Մատրասա գյուղի օրինակով ուշագրավ նկարագրություն է թողել Ալեքսանդր Ալեքսանդրյանը: Գյուղի մասին «Մշակի» 1873 թ. փետրվարի 24-ին հղած թղթակցությունում նա գրում էր. «Տեղական աւանդութիւններն ու ապրուստի եղանակը յար ու նման են Շամախուն: Մարդիկ հագնում են արխալուղ, չուխայ, կոշիկ, մասամբ տրեխ և ծածկում մորթեայ գլխարկներ: Կանայք տան մէջ հագնում են հասարակ հագուստ, իսկ հանդէսներում փոխարինվում են թաւշից, մովից, ոսկէթել կերպասից, շրջապատուած ժապաւեններով, այսինքն՝ մանկուլայով, զինջիլայով և բաֆտայով…»[1606]: Դանիել արքեպ. Շահնազարյանցը երկրամասի հայերին բնութագրել է որպես «շատ առողջ, հիւրասէր և արի մարդիկ»[1607]:

